



03.3(0)52

Մ-28

Ա. Զ. ՄԱՆՅՐԵԴ

# ԵՐԵՔ ԴԻՄԱՆԿԱՐ

ՃՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ  
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
ԴԱՐԱՇՐՋԱՆԻ



Ա. Զ. ՄԱՆՅՐԵԴ

# ԵՐԵՔ ԴԻՄԱՆԿԱՐ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ  
ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ  
ԴԱՐԱՇՐՋԱՆԻ



ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1988

Խուսերենից քարգմանեց Ս. Վ. ԱՏԵՓԱՆՅԱՆԸ  
Խմբագիր՝ Վ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ



**Մանֆրեդ Ա. Զ.**

Մ 289 Երեք դիմանկար Ֆրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանի / Թուս. թարգմ. Ս. Վ. Մուկիսույանը: Խմբ. Վ. Ա. Պողոսյան.— Եր.: Հայաստան, 1988.— 531 էջ, Կկ.:

Սովետական նշանավոր պատմաբան Ա. Զ. Մանֆրեդի գիրքը նվիրված է Ֆրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանի երեք խոշորագույն գործիչների՝ Թուսոյի, Միրաբոյի և Լաբուլայի պատմական ճակատագրին: Գրքի ֆրանսիական հասարակության այս երեք վառ ներկայացուցիչների գործունեությունն ստույգ հետազոտվում է արտահայտում այդ թեկնամային դարաշրջանի Ֆրանսիայի հասարակական-քաղաքական զարգացման ամենակական առանձնահատկությունները:

Մենագրությունն արժեքավոր ավանդ է Ֆրանսիայի պատմության և կուլտուրայի ուսումնասիրության գործում:

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ 63. 3 (0) 52

ISBN-5-540-00891-8

Մ 0506000000 142-87  
701 (01)-88

© «Мысль» 1979 г.

© Քարգմանված է հայերեն, «Հայաստան» հրատարակչություն, 1988

Այս գրքի ձեռագիրն ավարտված էր 1976 թվականի ամռանը, բայց այն սպառնալից վիճակում տեսնել հեղինակին այլևս չլիքնակվեց: Այդ նույն թվականի դեկտեմբերի 16-ին սովետական ականավոր պատմաբան Ալբերտ Զախարի Մանֆրեդը հանկարծամահ եղավ:

Ա. Զ. Մանֆրեդը ծնվել է 1906 թվականի օգոստոսի 28-ին: Հասուն պատմագիտական կրթությունն ստացել է ՀԳԻՌԱ-ի (Հասարակական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտների ուսաստանյան ասոցիացիայի) պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում:

ՀԳԻՌԱ-ի ասպիրանտուրա ընդունվելիս Ա. Զ. Մանֆրեդի ընդունելության պարտադիր աշխատանքը նվիրված էր Օգյուստ Բյանկիին: Հիմնվելով սկզբնաղբյուրների և այն ժամանակ Ֆրանսիայում երևան եկած նորագույն գրականության վրա, այն ստացավ մի այնպիսի լրջախոս և պահանջկոտ գիտակի հույժ գրական գնահատականը, ինչպիսին էր Վ. Պ. Վոյզինը, որի սեմինարում էր պարապում Ա. Զ. Մանֆրեդը: Պետք է նշել, որ լիտոգրայում ես, իր ամբողջ կյանքի ընթացքում, ակադեմիկոս Վ. Պ. Վոյզինը բարձր էր գնահատում Ա. Զ. Մանֆրեդին ամենից առաջ որպես հարցախոյզ և սաղանդավոր հետազոտողի:

Ա. Զ. Մանֆրեդի հետագա գիտական գործունեության համար մեծ նշանակություն ունեցավ նրա մասնակցությունը ՀԳԻՌԱ-ի և ակադեմիկոս Ն. Մ. Լուկինի ղեկավարած Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտի ունկնդիրների սեմինարին: Այն նվիրված էր Երրորդ հանրապետության տարիներին ֆրանսիական սոցիալիստական շարժման պատմությանը:

Ա. Զ. Մանֆրեդն ընտրել էր «Սոցիալիստական շարժումը 20-ական թվականներին Փարիզի կոմունայից հետո» թեման: Ավելի ուշ նա այդ պրոբլեմին նվիրեց իր թեկնածուական դի-

սերտացիան: Մասնակցութիւնը այդ երկու խոշորագույն գիտնականների սեմինարներին մեծ դեր խաղաց Ա. Զ. Մանֆրեդի՝ որպէս պատմաբանի ձևավորման գործում:

1928 թվականին Ա. Զ. Մանֆրեդը աշխատանքի ներգրավվեց Լենինի ինստիտուտում (հետագայում Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտ) Կոմունիստական ինտերնացիոնալի պատմութեան խմբի մեջ, որը գլխավորում էր միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչ Բելա Կունը:

Խումբն իր առաջնահերթ խնդիրն էր համարում ուսումնասիրել Վ. Ի. Լենինի դերը միջազգային բանվորական շարժման և ցիմերվալդյան շարժման պատմութեան մեջ: Ա. Զ. Մանֆրեդը ակտիվորեն մասնակցեց այդ պրոբլեմների ուսումնասիրմանը և որպէս իր հետազոտութեան առարկա ընտրեց XX դարասկզբի շվեյցարական սոցիալիստական շարժման պատմութիւնը՝ մի թեմա, որով այն ժամանակ ոչ որ շէր զբաղվում ոչ միայն Մովետական Միութիւնում, այլև Եվեյցարիայում: Հետազոտելով այդ թեման, նա ոչ միայն ուսումնասիրեց Լենինի ինստիտուտի արխիվներն ու այնտեղ հավաքված մամուլը, այլև արժեքավոր անձնական տեղեկութիւններ ստացավ ցիմերվալդյան շարժման մի շարք ականավոր մասնակիցներից, մասնավորապէս Ֆրից Պլատենից, որն այն ժամանակ զտնվում էր Մոսկվայում: 1929 թվականին «Պրոլետարսկայա ակուլուցիա» հանդեսում (Լենինի ինստիտուտի օրգան) հրատարակվեց Ա. Զ. Մանֆրեդի բովանդակային հոդվածը, որը չի հնացել և մեր ժամանակներում<sup>1</sup>:

Այդ աշխատութեան մեջ առաջադրված և մշակված էին ցիմերվալդյան և շվեյցարական սոցիալիստական շարժման մի շարք կարևորագույն պրոբլեմներ և մանրագին մշակված էին բոլոր լենինյան նյութերն այդ հարցերի շուրջ: Այն ժամանակ երիտասարդ պատմաբանին շատ բան ավելց անձնական հանդիպումը Ն. Կ. Կրուպսկայայի հետ, որը ծանոթացել էր այդ ձեռագրին: Հետաքրքրութիւնը Վ. Ի. Լենինի ստեղծագործութեան

նկատմամբ, նրա աշխատութիւնների մշտական և մանրակրկիտ ուսումնասիրութիւնը հատուկ էին Ա. Զ. Մանֆրեդին նրա ամբողջ գիտական գործունեութեան ընթացքում:

1930 թվականին, ասպիրանտուրան ավարտելուց հետո, Ա. Զ. Մանֆրեդը մանկավարժական աշխատանքի ուղարկվեց օկպրոմ Յարոսլավլ, իսկ այնուհետև Իվանովո (1932—1937 թթ.): Այդ տարիներին նա հրատարակեց մի շարք բրոշյուրներ և հոդվածներ՝ նվիրված գլխավորապէս համաշխարհային կոմունիստական շարժման պրոբլեմներին: 1940 թվականին նա վերադարձավ Մոսկվա: Լինելով հիանալի մանկավարժ, տաղանդավոր դասախոս, ուսանողական լսարանի սիրելին՝ նա իր մանկավարժական գործունեութիւնը շարունակում էր զանազան ուսումնական հաստատութիւններում՝ Մոսկվայի մարզային մանկավարժական ինստիտուտում, Մոսկվայի համալսարանի պատմութեան ֆակուլտետում, արտասահմանյան լեզուների ինստիտուտում, միջազգային հարաբերութիւնների և այլ ինստիտուտներում, ինչպէս նաև ղեկավարում էր մի շարք ամբիոններ:

1945 թվականից Ա. Զ. Մանֆրեդը աշխատում է ՍՍՀՄ գիտութիւնների ակադեմիայի պատմութեան ինստիտուտում: Հենց այդ շրջանում լիակատար շափով դրսևորվեց նրա՝ որպէս պատմաբանի, գիտական տաղանդը:

Ա. Զ. Մանֆրեդը շափազանց լայն պրոֆիլի մասնագետ էր: Այդ մասին են վկայում նրա դասախոսական դասընթացները, բազմաթիվ պատմագրական տեսութիւնները, առանձին գլուխները դասագրքերում, մենագրական հետազոտութիւնները, հոդվածները: Սակայն Ա. Զ. Մանֆրեդի հիմնական հետազոտութիւնները նվիրված էին Ֆրանսիայի պատմութեանը: Գծվար էր գտնել Ֆրանսիայի նոր պատմութեան XVIII—XIX դարերի մի սրկ շրջան, որի ուսումնասիրմամբ նա զբաղված չլինէր: Ընդ որում Ֆրանսիայի պատմութեան որոշ պրոբլեմներ նրա մեջ նստուկ հետաքրքրութիւն էին առաջացնում: Այդպիսի պրոբլեմների թվին էր պատկանում ամենից առաջ Ֆրանսիական մեծ լեզոփոխութեան պատմութիւնը: Այդ բնագավառում նա հանրահամառ մասնագետ էր, նրա աշխատութիւնները լավ հայտնի էին ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում:

Հեղափոխութեան պատմութեան վերաբերյալ Ա. Զ. Մանֆրեդի ցրտարակած առաջին աշխատութիւնը 1950 թվականին լույս

<sup>1</sup> Տե՛ս Մանֆրեդ Ա. 3. Циммервальдское движение в швейцарской социал-демократии.— «Пролетарская революция», 1929, № 7, с. 15—47. Այդ թեման հետագայում էլ է հետաքրքրել գիտնականին (անձ նրա գրախոսականը Մ. Պրանգոյի «Լենինը Եվեյցարիայում» գրքի վերաբերյալ— «Коммунист», 1959, № 8):

ընծայված «XVIII դարի վերջի ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը (1789—1794 թթ.)» ակնարկն էր. 1956 թվականին այն լույս տեսավ երկրորդ, լրացված հրատարակությունը<sup>1</sup>: Այդ գիրքը թարգմանվեց գերմաներեն (1952), չինարեն (1954), իսկ նրա երկրորդ հրատարակությունը հունգարերեն (1958), ֆրանսերեն և պորտուգալերեն (1961), իսպաներեն (1963) լեզուներով: Թեև գիրքը կրում էր գիտահանրամատչելի բնույթ, մասնագետի համար ակնհայտ էր, որ հեղափոխության պատմության այդ ակնարկը լայն շրջանակներ ընդգրկող ազբյուրների վրա հեղինակի կատարած մեծ ու երկարատև աշխատանքի արդյունքն էր: Այդ պրքի առավել ստույգ և սպառիչ ղնահատականը տվել է ակադեմիկոս Վ. Պ. Վոլգինը: Խմբագրելով Ս. Լ. Վալյուտինի «Ֆրանսիայի միջին դարերի և նոր ժամանակի պատմության ուսումնասիրումը սովետական պատմաբանների կողմից» հոդվածը «Ֆրանցուզսկի եմեդոգնիկի» առուջին հատորի համար, Վ. Պ. Վոլգինն ինքն այդ հոդվածին ավելացրեց մի պարբերություն, որտեղ ասվում էր. «Սովետական Միությունում Ֆրանսիական մեծ հեղափոխության նկատմամբ հրակայական հետաքրքրության մասին վկայում է այդ թեմայի շուրջ գիտահանրամատչելի աշխատությունների առատությունը, որոնք ի դեպ, շափազանց տարասեռ են իրենց գիտական և գրական արժանիքներով: Առավել արժեքավորը և գիտական տեսակետից ամենարժանողակալիցը Ա. Ջ. Մանֆրեդի աշխատությունն է, որը հիմնվում է ոչ միայն ֆրանսիական հեղափոխության մասին գրականության մանրազնին ուսումնասիրության, այլև աղբյուրների կշռադատված օգտագործման վրա»<sup>2</sup>:

Ա. Ջ. Մանֆրեդին միշտ հրապուրել է պատմական գիտական կարի ժանրը: Պատմական գործիչների վառ բնութագրումներ են պարունակվում նրա գրեթե բոլոր աշխատություններում:

<sup>1</sup> См. Манфред А. З. Великая французская революция XVIII века. М., 1956.

<sup>2</sup> «Французский Ежегодник. 1958». М., 1959, с. 499. Ա. Ջ. Մանֆրեդը նաև հեղինակ է Ֆրանսիական մեծ հեղափոխության վերաբերյալ մի շարք ընդարձակ ակնարկների, որոնք ղեկավարում են «Վսեմիքնայա իստորիա» 6-րդ հատորում (1959 թ.), ՄՄԷ-ում (2-րդ հրատ. հ. 45, 1956 թ.), բարձրագույն դպրոցի «Նովայա իստորիա» դասագրքում (հ. 1, 1958 թ.), «Համառոտ ընդհանուր պատմությունում» (1966 թ.), «Ֆրանսիայի պատմության» երկրորդ հատորում (1973 թ.):

Թայի նրան առանձնապես հետաքրքրել են ֆրանսիական հեղափոխության գլուխ կանգնած պատմական դեմքերը: Ժողովրդի բարեկամ Ժան-Պոլ Մարատին նա նվիրել է մի աշխատություն, որը լույս է տեսել «Նշանավոր մարդկանց կյանքը» մատենաշարով: Վ. Պ. Վոլգինի հետ միասին Ա. Ջ. Մանֆրեդը պատրաստել է Ժան-Պոլ Մարատի «Ընտիր երկերի» եռահատոր ժողովածուն: Այդ հրատարակությունը, որը ղեկուս Վ. Ի. Լենինի խորհրդով մտադրություն ուներ իրականացնել Վ. Ի. Բոնչ-Բրուեիչը, առավել լիակատար էր, քան նախորդ բոլոր ֆրանսիական ու ռուսական հրատարակությունները (Շ. Վելլեի, Գ. Ս. Զրիլյանդի և այլն)<sup>3</sup>: Ժան-Պոլ Մարատի «Ընտիր երկերին» նախակցվել էր Ա. Ջ. Մանֆրեդի ընդարձակ ներածական հոդվածը:

Ա. Ջ. Մանֆրեդի գիտական գործունեության մեջ հատուկ տեղ է զբաղեցրել Մաքսիմիլիան Ռոբեսպիերը: Ըստ էության ֆրանսիական հեղափոխության պատմությանը, և մասնավորապես Ռոբեսպիերի գործունեությանը նվիրված ամբողջ ռուսական և սովետական գրականության մեջ այդ թեմայի մշակման ուղղությամբ Ա. Ջ. Մանֆրեդն ունեցել է միայն մեկ նախորդ՝ Ն. Մ. Լուկինը, որը առաջին անգամ մեր գրականության մեջ գրեց Անկաշառի կենսագրությունը: Ա. Ջ. Մանֆրեդը պատրաստել է Ռոբեսպիերի «Ընտիր երկերի» եռահատոր ժողովածուն, մինչ այդ Ռոբեսպիերի երկերը ոչ մի անգամ չէին հրատարակվել ռուսերեն<sup>4</sup>:

Ա. Ջ. Մանֆրեդը Ռոբեսպիերի մասին սովետական և համաշխարհային պատմագրության մեջ չհանդարտվող վիճարանության ակտիվ ու կրքոտ մասնակիցն էր: 1958 թվականին, այդ նշանավոր հեղափոխականի ծննդյան երկուհարյուրամյակի սովետահատարության ժամանակ, նա հանդես եկավ «Վեճեր Ռոբես-

<sup>1</sup> Տե՛ս Манфред А. З. Марат. М., 1962, с. 352. Գիրքը թարգմանված է սերբերեն (1965 թ.):

<sup>2</sup> Vellay Ch. Les pamphlets de Marat. Paris, 1911; Марат Ж. П. Памфлеты. М., 1933.

<sup>3</sup> Տե՛ս Марат Ж. П. Избранные произведения, т. 1—3. М., 1956. Сост. В. П. Волгина и А. З. Манфред. Вступительная статья А. З. Манфреда «Жан-Поль Марат и его произведения» (վերապաված է՝ Манфред А. З. Очерки истории Франции XVIII—XX вв. М., 1961).

<sup>4</sup> Տե՛ս Робеспьер М. Избранные произведения, т. 1—3, М., 1965.

պիեռի մասին»<sup>1</sup> փայլուն գեկուցումով: Այդ նույն հորեւյանի առթիվ առանձին գրքուկով լույս ընծայվեց Ռոբեսպիեռի մասին համառոտ կենսագրական ակնարկ, որ գրել էր Ա. Զ. Մանֆրեդը: Ճրանսիական մեծ հեղափոխութեան պատմութեան առթիվ 1955 թվականին տեղի ունեցած երկրորդ միջազգային համազրուցում, որն անց էր կացվում պատմական գիտությունների XII միջազգային կոնգրեսի ժամանակ, նա էլույթ ունեցավ «Ռոբեսպիեռը ռուսական և սովետական պատմագրութեան մեջ»<sup>2</sup> գեկուցումով:

Ռոբեսպիեռի գնահատականի շուրջ այս վեճերը անխզելիորեն կապված են յակոբինիզմի գնահատականի շուրջ ծավալված վիճարանութեան հետ: Կասկած չի հարուցում, որ Ա. Զ. Մանֆրեդը անդամաճանորեն պաշտպանում էր յակոբինիզմի այն գնահատականը, որին կողմնակից էր Վ. Ի. Լենինը: Նա լավ էր հասկանում, որ յակոբինյանները միանգամայն հատուկ տեղ են զբաղում համաշխարհային հեղափոխական շարժման մեջ: «Ես նրանց ահավոր շափով բարձր եմ դասում,— ասում էր Ա. Ի. Գերցենը իր գործող անձերից մեկի շուրթերով,— այդպիսի մարդիկ այլևս չկան: Հավանորեն խաղողի նման մարդկանց բերք էլ է լինում: Թվում է, թե պայմանները նույնն են, իսկ մի տարի... գինին ավելի լավն է՝ ասում են, գիսաստղից է: Անզլիալում մարդկանց գիսաստղ է եղել Կրոմվելի ժամանակ, իսկ մեզ մոտ՝ XVIII դարի վերջում: Եվ նկատեցեք, որ այդ երկու ցուս՝ մարդիկ նման են միմյանց: Պուրիտանները (նստակեցութեան կողմնակիցները), սրոնք իրենց դարն ապրեցին Շվեյցարիայում և Հոլանդիայում, խիստ հիշեցնում էին հին յակոբինյաններին... Նրանք տառապում էին, բեռ էին ուրիշների վրին, պարզապես իրենց տեղում չէին: Բանն այն է, որ նրանք ըստ էության ավելի երիտասարդ էին թոռներից... Թե ինչպես էին այդ մարդիկ պահպանել հոգու թարմությունը, յուրատեսակ միամտությունն ու հավատը՝ դա կորսված գաղտնիք է...»

<sup>1</sup> Манфред А. З. Споры о Робеспьере.— «Вопросы истории», 1958, № 7 (վերատպված է՝ Манфред А. З. Очерки истории Франции XVIII—XX вв.).

<sup>2</sup> Տե՛ս «Новая и новейшая история», 1966, № 2; գեկուցման ֆրանսերեն տեքստը տե՛ս «Actes du colloque Robespierre» (XII congrès international des sciences historiques. Vienne, 1965). Paris, 1967.

\* Հոգիի, տեղանքի (ֆրանս.):

Այն էր, դեղնած ծերունին, որ հազիվհազ է շարժում ոտքերը, բայց միևնույն ժամանակ ինչպես սիրահարված տղա պահպանում է իր սրբութունները, ունի... իր նվիրական խոսքերը, որոնցից յոթանասուն, ութսուն տարեկան հասակում նրանց տարերը այրվում են և ձայնը դողում է... Նրանց վտիտ ժառանգները ձանձրանում էին նրանց հետ, կարծում էին, թե նրանք շինծու կեցվածք են ընդունում. իսկ այդ բարձր տոնը պարզապես հետևանք էր այն բանի, որ նրանց ոգին էր բարձր և վարժվել էր հպարտորեն պահել իր համոզմունքը ծանր ժամանակում: Ցակոբինյանների նկատմամբ այդպիսի վերաբերմունքը Գերցենից և XIX դարի ռուս հեղափոխականներից անհավ լենինին և բոլշևիկներին: Այդ ավանդույթին հետևեց և Ա. Զ. Մանֆրեդը, որը հիանալի կերպով զգում էր պատմական գարաշրջանի անթառամ բուրմունքը: Նա երբեք «չէր ձանձրանում» Ռոբեսպիեռի ու յակոբինյանների հետ և մշտապես դիմում էր հեղափոխության պատմութեան էջերին<sup>3</sup>:

Պատմաբանի մեջ միշտ հետաքրքրություն հարուցող մյուս թեման Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունն էր: 1947 թվականին «Վուպրոսի խտորիի» ամսագրում հրատարակվեց նրա «Ճրանս-ռուսական դաշինքի նախապատմությունից» հոդվածը, որը ցույց տվեց, թե որքան է առաջ շարժվել Ա. Զ. Մանֆրեդը Երրորդ հանրապետության՝ XIX դարի վերջին երրորդում վարած արտաքին քաղաքականության ուսումնասիրման գործում: 1950 թվականին նա պաշտպանեց դոկտորական դիսերտացիա «Ճրանսիայի արտաքին քաղաքականությունը ֆրանկֆուրտյան հաշտությունից մինչև դաշինքը Ռուսաստանի հետ (1871—1891)»<sup>3</sup> թեմայով: Պաշտպանութեան ժամանակ որպես

<sup>1</sup> Герцен А. И. Соч., т. 8, М., 1958, с. 497—498.

<sup>2</sup> Տե՛ս Манфред А. З. Великая французская революция XVIII в. и современность (к 175-летию революции).— «Новая и новейшая история», 1964, № 4: տպի՛ք՝ О природе якобинской власти.— «Вопросы истории», 1969, № 5.

<sup>3</sup> Այդ նույն թվականին հրատարակվել է Ա. Զ. Մանֆրեդի «Ռուս-ֆրանսիական հարաբերությունները ֆրանկֆուրտյան հաշտությունից հետո (1870—1872 թթ.) հոդվածը՝ նրա դիսերտացիայի ամենահետաքրքիր դրվագներից մեկը (տե՛ս «Վուպրոսի խտորիի» 1950, № 6, վերատպված է՝ Манфред А. З. Очерки истории Франции XVIII—XX вв.).

ընդդիմախոսներ հանգես կեղծ Ե. Վ. Տարլեն, Ս. Գ. Ակազկինը, Բ. Ն. Շտեյնը՝ արտաքին քաղաքականության պատմության խոշորագույն գիտակաները, խիստ դրական գնահատական տվեցին դիսերտացիային: Ա. Զ. Մանֆրեդի դիսերտացիան առանձին գրքով հրատարակվեց 1952 թվականին<sup>1</sup>: Այդ մենագրությունում հեղինակն օգտագործել է արխիվային եզակի աղբյուրների լայն շրջանակ: Նրանում տրված էր դիվանագիտական հարաբերությունների՝ այն ժամանակվա համար առավել լրիվ շարադրանքը, հարաբերություններ, որոնք հանգեցրին ֆրանսուսական դաշինքի կնքմանը:

Ա. Զ. Մանֆրեդը այդ մենագրության հրատարակումից հետո ևս բազմիցս անդրադարձել է ֆրանսուսական հարաբերությունների պատմությանը: Նրան հատկապես հետաքրքրում էին կուլտուրական կապերը Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև՝ մի թեմա, որը մանրամասնորեն չի լուսաբանվել գրքում: Ա. Զ. Մանֆրեդի կողմից սովետական արխիվներում այդ հարցի մասին հայտնաբերված բազմաթիվ նյութերը նա օգտագործել է «XIX դարի 70—80-ական թվականների ռուս-ֆրանսիական կուլտուրական կապերի պատմության առթիվ» բովանդակալից հոդվածում<sup>2</sup>, որը հրատարակվել է 1961 թվականին:

Ա. Զ. Մանֆրեդը ֆրանսուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրման բնագավառի պիոներներից մեկն էր: Այդ թեմային նա շատ հոգովածներ ու ղեկուցումներ է նվիրել<sup>3</sup>, նրա ղեկավարությամբ նախապատրաստվել են հատուկ ուսումնասիրություններ XX դարի 20—30-ական թվականների ֆրանսուսական հարաբերությունների վերաբերյալ: Ա. Զ. Մանֆրեդի հետազոտություններն ու հոդվածները ռուս-ֆրանսիական պրոբլեմների և սովետա-ֆրանսիական հարաբերությունների վերաբերյալ հրատարակվել են 1967 թվականին «Բա-

բեկամության և համագործակցության ավանդույթները» գրքում<sup>4</sup>:

Ֆրանսիական մեծ հեղափոխությամբ և Ֆրանսիայի արտաքին քաղաքականությամբ ամենևին էլ չէր սպառվում Ֆրանսիայի նոր պատմության այն պրոբլեմների շրջանակը, որոնցով զբաղվում էր Ա. Զ. Մանֆրեդը: Նա մեծ ծառայություն է մատուցել ստալինյան պրոլետարական հեղափոխության՝ Փարիզի կոմունայի պատմության ուսումնասիրմանը: Դեռևս 1941 թվականին հրատարակվել է Կոմունայի պատմությանը նվիրված նրա առաջին նստվածքը: Փարիզի կոմունայի մասին գլուխ էր զետեղվել բարձրագույն դպրոցի նոր պատմության դասագրքում: Փարիզի կոմունայի 90-ամյակի կապակցությամբ Ա. Զ. Մանֆրեդը գրեց մի հետաքրքիր էսույդ՝ նվիրված 1871 թվականի հեղափոխության առաջին տասը օրերին<sup>5</sup>, որտեղ նա առաջիններից մեկը սվից Ազգային զվարդիայի կենտրոնական կոմիտեի գործունեության բովանդակալից և յուրօրինակ գնահատականը:

Նա որպես հիմնական հեղինակներից և խմբագիրներից մեկը ակտիվորեն է մասնակցել Փարիզի կոմունայի 90-ամյակին նվիրված կոլեկտիվ երկհատորանոց աշխատության նախապատրաստմանը: Նա ընդհանրացրել և հանրագումարի է բերել այն ամենը, ինչ սովետական պատմաբանների կողմից արվել է Կոմունայի պատմական փորձի ուսումնասիրման գործում<sup>6</sup>: Ա. Զ. Մանֆրեդը Կոմունայի 100-ամյակի առթիվ 1971 թվականին լույս տեսած կոլեկտիվ աշխատության պատասխանատու խմբագիրը, ինչպես նաև մի շարք գլուխների հեղինակն էր<sup>7</sup>:

Դեռևս 20-ական թվականներին Ա. Զ. Մանֆրեդը սկսեց պրազվել Կոմունայից հետո ֆրանսիական սոցիալիստական և բուրժուարական շարժման պատմությամբ: Այդ թեմայով նա հրատարակեց մի արժեքավոր հոդված՝ «Ֆրանսիական հեղափոխական շարժումը Փարիզի կոմունայից հետո և Ն. Գ. Զենի-

<sup>1</sup> Տե՛ս Մանֆրեդ Ա. Զ. Внешняя политика Франции 1871—1891 годов, М., 1952.

<sup>2</sup> Տե՛ս «Французский Ежегодник. 1959», М., 1961 (վերապահված է՝ «Очерки истории Франции XVIII—XX вв.»).

<sup>3</sup> Տե՛ս Մանֆրեդ Ա. Զ. Некоторые вопросы франко-советских отношений в период 1917—1957 гг.— «Французский Ежегодник. 1958», М., 1959. նայե՛ք՝ К истории франко-советского договора о взаимной помощи 1935 г.— «Французский Ежегодник. 1961», М., 1962.

<sup>4</sup> Տե՛ս Մանֆրեդ Ա. Զ. Традиции дружбы и сотрудничества. Из истории русско-французских и советско-французских связей. М., 1967.

<sup>5</sup> Տե՛ս Մանֆրեդ Ա. Զ. Историческое значение и традиции Парижской коммуны.— «Новая и новейшая история», 1961, № 2.

<sup>6</sup> Տե՛ս Парижская коммуна 1871 г., т. I—II. Под ред. Э. А. Желубовской, А. 3. Манфреда, А. И. Молока, Ф. В. Потемкина. М., 1961.

<sup>7</sup> Տե՛ս История Парижской коммуны 1871 года. М., 1971.

շեակին»<sup>1</sup>: նա այդ պրոբլեմներին վերադառնում էր հաճախակի: «1905—1907 թթ. առաջին ուսական հեղափոխությունը և միջազգային հեղափոխական շարժումը» կոչելով հետազոտության մեջ նրան էր պատկանում Ֆրանսիայում հեղափոխական շարժման վերելքի վրա առաջին ուսական հեղափոխության ունեցած ազդեցության մասին բովանդակալից էությունը:

Բայց ֆրանսիական սոցիալիզմի պատմության մեջ կար մի թեմա, որը Ա. Զ. Մանֆրեդին հրապուրել է նրա ամբողջ գիտական գործունեության ընթացքում՝ Ժան Ժորեսի գերի ու նշանակության մասին: Եթե Ֆրանսիայի XVIII դարի պատմական գործիչներից նրան հետաքրքրում էր Մաքսիմիլիան Ռոբեսպիերը, ապա XX դարում նրան գրավում էր Ժան Ժորեսի կերպարը: 30—40-ական թվականներին սովետական պատմագրության մեջ տարածվել էր Ժորեսի մասին զուտ ժխտական գնահատական: Երկրորդ ինտերնացիոնալի «համատարած օպորտունիզմի» մասին թեզիսին համապատասխանում էր Ժորեսի «համատարած ուժորմիզմի» մասին հիմնադրույթը: 1944 թվականին, Ժորեսի սպանության երեսնամյակի առթիվ, «Եստորիշեակի ժուռնալ»-ում հրապարակվեց Ա. Զ. Մանֆրեդի առաջին էությունը, որի մեջ նա վիճարկում էր այդ տեսակետը: Մորիս Թորեզն այդ հոդվածը կարգաց ձեռագիր վիճակում և հավանություն տվեց:

Հետագա տարիներին Ա. Զ. Մանֆրեդը բազմիցս, դարձյալ նույն համոզվածությամբ վերադառնում էր այդ թեմային<sup>2</sup>: Այն ժամանակ, երբ ֆրանսիական շատ քաղաքական գործիչներ, այդ թվում և այն շրջանի սոցիալիստական շարժման գործիչները, իրենց կյանքի ճանապարհին էվոլյուցիայի էին ենթարկվում ձախից աչ, Ժորեսը, պնդում էր նա, եղակի բացառություն էր՝ նա գնում էր աչից ձախ: Այդ գիծը հատկապես վառ կերպով դրսևորվեց նրա կյանքի վերջին տարիներին, երբ Ժորեսը ասես իր մեջ էր մարմնավորում ոչ միայն ֆրանսիական, այլև եվրոպական

յանվորական շարժման կամքը՝ միլիտարիզմին և պատերազմին հակազդելու իր ձգտումով: Ժորեսի ձայնը, որ այնպես համոզված էր հնչում Բազելի տաճարի կամարների տակ II ինտերնացիոնալի վերջին, նախապատերազմյան կոնգրեսում, շարունակում է հնչել և մեր օրերում: Այդ մասին էր խոսում Ա. Զ. Մանֆրեդը Ժորեսի հիշատակին նվիրված և նրա սպանության ինսնամյակի կապակցությամբ հրապարակված տպավորիչ հոդվածում<sup>3</sup>:

Ա. Զ. Մանֆրեդին վաղուց է գրավել նապոլեոնի թեման, բայց մինչև որոշ ժամանակ պատմաբանը ինչ-որ շրջանցում էր այն: Մեկ անգամ միայն նա Պատմական հանրագիտարանում<sup>4</sup> հրապարակեց մի փոքր ակնարկ նապոլեոնի մասին: Հնարավոր է, որ նրան տվյալ թեմայով հրապարակումից հետ էր պահում Ե. Վ. Տարլեի հանրահայտ գիրքը: 1969 թվականին «նովյա ի նովեյշյայա իստորիա» ամսագրի վերջին համարներում, ինչպես նաև «Ֆրանցուզակի եժեգոդնիկ»-ի հատորում տպագրված էին զուխներ նապոլեոնի մասին Ա. Զ. Մանֆրեդի պատրաստած մենագրությունից<sup>5</sup>, իսկ 1971 թվականին լույս տեսավ «Նապոլեոն Բոնապարտ» գիրքը<sup>6</sup>: Սովետական պատմագիտության մեջ Ա. Զ. Մանֆրեդը միանգամայն արժանի կերպով ճանաչված էր որպես պատմական թեմատիկան զեղարվեստորեն ներկայացնող տաղանդավոր վարպետ: Այդ աշխատության մեջ լիակատար շափով դրսևորվեց պատմաբանի ամբողջ բացառիկ վառ գիտական և գրական ձիրքը: Հափըշտակությամբ, կրքով, սովետական պատմագիտության լավագույն անվանողներից զրված այդ մենագրությունը անտարբեր չէր լինեց ընթերցողին: Այն վիթխարի համբավ բերեց հեղինակին: Ըստ սովետական և արտասահմանյան գիտական մատուցի, դա Ա. Զ. Մանֆրեդի ամենափայլուն աշխատանքն էր:

<sup>1</sup> Տե՛ս Գոլոս Զորես, — «Новый мир», 1964, № 8.

<sup>2</sup> Այդ հանրագիտարանում, ինչպես նաև Գիվանագիտական բառարանի կրկու հրատարակություններում (1948 և 1960 թթ.) տպագրված են Ա. Զ. Մանֆրեդի մի շարք հոդվածներ:

<sup>3</sup> Տե՛ս Մանֆրեդ Ա. Զ. Итальянский поход Бонапарта в 1796—1797 гг. — «Новая и новейшая история», 1969, № 5 և 6. նույնի՝ Египетский поход Бонапарта. — «Французский Ежегодник. 1969». М., 1971.

<sup>4</sup> Տե՛ս Մանֆրեդ Ա. Զ. Наполеон Бонапарт. М., 1971 (1-е изд.); М., 1973 (2-е, дополненное изд.). [Տե՛ս նաև՝ М., 1980 (3-е изд.)]. — նմբ.:

<sup>1</sup> Տե՛ս «Из истории социально-политических идей». М., 1955; վերապրված է՝ Манфред А. 3. Очерки истории Франции XVIII—XX вв.

<sup>2</sup> «Исторический журнал», 1944, № 9.

<sup>3</sup> Տե՛ս Манфред А. 3. Жан Жорес — борец против реакции и войны. — «Новая и новейшая история», 1959, № 5; տե՛ս նաև նրա ներածական հոդվածը հետևյալ հոդվածում. Жорес Жан. Против войны и колониальной политики. М., 1961.

Գրա վկայությունն այն մեծաքանակ նամակագրությունն է (500-ից ավելի նամակ), որ ստացել էր գիտնականը և որը պահպանվել է նրա արխիվում: Հեղինակի ստացած արձագանքների թվում էին մեր խոշորագույն գրողների, նշանավոր գիվանագետների, գիտնականների, պատմաբանների, շարքային ընթերցողների՝ մանկավարժների, բժիշկների, բանվորների, ռազմիկների, ուսանողների նամակները, որոնք պարունակում էին ամենահիացական կարծիքներ գրքի մասին: Այդ գիրքը լայնորեն է հայտնի և արտասահմանյան ընթերցողին՝ այն թարգմանված է եվրոպական շատ երկրներում:

«Նապոլեոն Բոնապարտ» մենագրությունը ասես նոր էջ բացեց Ա. Չ. Մանֆրեդի կենսագրության մեջ: Այդ գիրքը և Ա. Չ. Մանֆրեդի հետագա աշխատությունները վկայում էին նրա գիտական ստեղծագործության վառ ծաղկման մասին: 1975 թվականին երևան եկավ Ա. Չ. Մանֆրեդի «Ռուս-ֆրանսիական դաշինքի կազմավորումը» մեծարժեք մենագրությունը: Նրանում Ա. Չ. Մանֆրեդին յուրահատուկ մանրակրկիտությամբ և իր նկատմամբ պահանջկոտությամբ հանրագումարի էին բերված XIX դարի վերջին երրորդում Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ուսումնասիրության ուղղությամբ նրա երեսնամյա աշխատանքի արդյունքները: Գրքում օգտագործված են հարուստ նյութեր Ռուսաստանի արտաքին քաղաքականության պոլիտիկա: Նա օգտագործել է նաև, իսկ այդ գործում նրան աջակցեց միջազգային հարաբերությունների պատմության խոշորագույն մասնագետ Պիեր Ռենուվենը, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության արխիվները և նույնիսկ մի այնպիսի դժվարամատչելի ֆոնդ, ինչպիսին է ֆրանսիական Գլխավոր շտաբի երկրորդ բաժնի արխիվը: Երեք տասնամյակ տևած համա որոնումների ընթացքում Մանֆրեդի ձեռքով անցել են հազարավոր, իսկ հնարավոր է նաև տասնյակ հազարավոր դիվանագիտական փաստաթղթեր: Զի կարելի չնշել նաև այն վարպետությունը, կարելի է ասել, այն վայելչագեղությունը, որով գիտնականը կարողացել է շարագրել՝ XIX դարի վերջի միջազգային քաղաքականության ամենաբարդ, խճճված պատմությունը, բնավ չձանրաբեռնելով իր շարադրանքը և պարզորոշ, հստակորեն ի հայտ բերելով զարգացման հիմնական գծերը: Ս. Գ. Սկազկինի և Վ. Մ. Խվոստովի հետազոտությունների կողքին այդ գիրքը մտավ միջազգային հարաբերությունների պատ-

մության գծով սովետական լավագույն հետազոտությունների սակե ֆոնդը:

Կենտրոնանալով Ֆրանսիայի XIX դարի վերջի պատմության վրա՝ Ա. Չ. Մանֆրեդը չէր դավաճանում իր նախընտրելի, Ռուսիայի խոսքերով, «տասնութերորդ դարին»: Ֆրանսիայի պատմության մասնագետները հաճելիորեն զարմացան, երբ 1974 թվականին Ա. Չ. Մանֆրեդը հանդես եկավ երիտասարդ Ռուսոյի մասին փայլուն զեկուցումով, իսկ հետո նաև հողվածներով: Ժան-ժակ Ռուսոն վաղուց էր գրավել պատմաբանի ուշադրությունը, և դա միանգամայն բնական էր: Զ է որ Ռուսոն XVIII դարի առաջավոր մարդկանց և հատկապես նրա սիրելի հերոսի՝ Մաքսիմիլիան Ռոբեսպիերի, մտքերի տիրակալն էր: Ա. Չ. Մանֆրեդի գրասեղանին հաճախ կարելի էր տեսնել Ռուսոյի ստեղծագործությունները: Ֆրանսիա կատարած իր մի ուղեվորության ժամանակ նա այցելեց էրմենոնվիլ, որտեղ թաղված էր Ռուսոն, և այդ այցելությունը նրա վրա ամենախորին տպավորությունը գործեց<sup>2</sup>: Հենց նոր ավարտելով Նապոլեոնի մասին ամենաբարդ հետազոտությունը, Ա. Չ. Մանֆրեդը կարողացավ ամենակարճ ժամկետում անցնել նոր կարևոր թեմայի մշակմանը՝ Ռուսոյի մասին, ընդամենն գրանորելով և՛ խորագիտակություն, և՛ յուրօրինակ մոտեցում: Ռուսոյի մասին աշխատությունը գրվեց նույնպիսի փայլով ու վարպետությամբ, որպիսին հատուկ էին «Նապոլեոն Բոնապարտ» մենագրությանը: Ռուսոյի մասին Ա. Չ. Մանֆրեդը մտադիր էր գրել մեծ գիրք, բայց այդ մտադրությունը իրականացնել նա արդեն չկարողացավ:

Ֆրանսիական մեծ հեղափոխության մի գործիչ էլ կար, որի կենսագրությունը պատմաբանի մշտական խորհրդածությունների առարկան էր: Նա չէր թաքցնում Միլոբրոյի մասին գրելու իր ցանկությունը: Մա մի դժվարին խնդիր էր, առավել ևս, որ մինչև օրս ուսական և սովետական գրականության մեջ ոչ ոք չի համարձակվել ձեռնամուխ լինել այդ թեմայի ուսումնասիրմանը:

<sup>1</sup> Տե՛ս Մանֆրեդ Ա. Չ. Молодой Руссо.— «Новая и новейшая история», 1974, № 4 և 5.

<sup>2</sup> [Տե՛ս Մանֆրեդ Ա. Չ. Посещение Эрменонвилля.— «Французский Ежегодник. 1978». М., 1980]— Խմբ.:

Այսպես առաջացավ նոր գրքի մտահղացումը: Սկզբում Ա. Զ. Մանֆրեդը պատրաստվում էր նրա մեջ մտցնել նաև սակավ հայտնի գործող անձանց դիմանկարները, օրինակ, առաջին գեներալ-պլեբեյի, 1789—1792 թվականներին Փարիզը ցնցած, բոլոր մեծ հեղափոխական օրերի մասնակից, բանվոր-ոսկերիչ ժան Ռոսինյոյի դիմանկարը: նրա հետաքրքրությունն էր շարժել նաև Պիեր-Ֆրանսուա Ռեալը, հավանաբար իր ճակատագրի տարիմաստով: Փարիզի 1793 թվականի դատախազ-փաստարան Շոմետի օգնականը, Վանդոմի դատավարության ընթացքում Բաբլոֆի դատապաշտպանը դարձավ նապոլեոնի սիրելին, կայսրության կոմս և բոնապարտիստական ոստիկանության ղեկավարներից մեկը: Բայց հետզհետե մտազրույթունը ճշգրտվում էր: Գրքում պետք է մնային միայն այն գործիչները, որոնք մարմնավորում էին հեղափոխությունը նրա վաղ, անպարզ արշալույսին, նրա վերելքի և, վերջապես, նրա ծաղկման ու ճգնաժամի շրջանում: Այդպես ծնվեց «Ֆրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանի երեք դիմանկար» գիրքը, որի հետ ընթերցողը ծանոթանում է արդեն հեղինակի մահվանից հետո:

Գրքի առաջին մասը նվիրված է երիտասարդ Ռուսոյին, մի մարդու, որը խոր ազդեցություն է թողել հեղափոխության առաջացման, նրա առավել նշանավոր դեմոկրատական գործիչների գաղափարախոսության վրա: Գրքի երկրորդ մասը՝ հեղափոխության վերելքը, պատմում է Միրաբոյի մասին: Ընթերցողը կհամոզվի, թե ինչպիսի փայլով է գիտնականը վերակերտել պատմական դիմանկարն այն մարդու, որի որոտալից ձայնին ունկնդրում էր ամբողջ Ֆրանսիան 1789 թվականին, և որը երկու տարի անց ցնցվեց և դալորացավ «կոմս Միրաբոյի մեծ դավաճանությունից» (la grande trahison du comte Mirabeau): Պատմարանը իր շարադրանքում ոչինչ չի թաքցրել, ոչինչ գաղտնի չի պահել «վայրենի աղաչի» երիտասարդ տարիների մասին, ինչպես նա շափաղանց գիպուկ բնորոշել է Միրաբոյին, կիրառելով տուրգենևյան մականունը (Տուրգենևն, ի դեպ, պատկանում էր Ա. Զ. Մանֆրեդի ամենասիրելի գրողների թվին, որին նա հաճախ և հաճույքով էր վերընթերցում): նա կարողացավ բացատրել և այն դերը, որ Միրաբոյին վիճակվեց խաղալ և՛ Դյուսվոր շտատների բացման ժամանակ, և՛ Ազգային ժողովի գոյության առաջին ամիսներին: նույնպիսի վար-

պետությունը նա շարադրել է և Միրաբոյի «անկումը»: «Ֆրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանի երեք դիմանկար» գրքի երկրորդ գլուխը, մեր խորին համոզմամբ, պատկանում է Ա. Զ. Մանֆրեդի գրական ժառանգության լավագույն էջերին:

Այս գրքի երրորդ մասը՝ հեղափոխության ծաղկումը և ողբերգական մայրամուտը, բնականաբար, կապված է Մաքսիմիլիան Ռոբեսպիերի անվան հետ, որի գործունեությունը նա ոչնչացեց երկար և այնպիսի խոր ըմբռնումով էր ուսումնասիրում: Ահա արդեն երկու դար է, ինչ անզգար կատաղի վեճեր են գնացել և գնում Ռոբեսպիերի շուրջը: Մենք արդեն նշել ենք, որ այդ վեճերի մեջ Ա. Զ. Մանֆրեդը Ռոբեսպիերի համոզված պաշտպանների առաջավոր գծում էր, առաջին շարքերում:

Գրքի երրորդ մասում գիտնականը հանրազուգամարի է բերում Ռոբեսպիերի կենսագրության և պատմական դերի բազմամյա հետազոտությունների արդյունքները, միաժամանակ մտցնելով շատ նոր բաներ: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Ռոբեսպիերի մասին գլխի եզրափակիչ բաժինը: Անսովոր բարդություն ներկայացնող խնդիր է՝ թափանցել Ռոբեսպիերի հոգևոր աշխարհը, մտնել նրա կերպարի մեջ, հասկանալ այն պատճառները, որոնք ստիպել են նրան գործել: Գուցե միայն Ռոմեն Ռոլանն է մյուսներից լավ հասկացել Ռոբեսպիերի ողբերգությունը, երկար ժամանակ սիրտ շանելով գրել հեղափոխությանը նվիրված իր պիեսների շարքի վերջին մասը: Ա. Զ. Մանֆրեդն առաջարկեց Ռոբեսպիերի կյանքի վերջին շրջանի վարքագծի նոր մեկնաբանում: Այդ մեկնաբանումը գեղեսցուն էր ճանաչում չի գտել, հնարավոր է, որ նրա մասին վեճեր կլինեն: Բայց, մեր կարծիքով, այն խիստ ճշմարտանման է, հիմնված բազմամյա խոր մտորումների վրա այն զրգապատճառների շուրջ, որոնք բնորոշում էին Ռոբեսպիերի վարքը:

Այստեղ մենք հնարավորություն չունենք բնութագրել Ա. Զ. Մանֆրեդի ամբողջ գիտական և ժողովրդականացնող մեծ գործունեությունը, որի եզրափակումը հանդիսացան «Համառոտ համաշխարհային պատմության» երկհատորյակը և եռհատոր «Ֆրանսիայի պատմությունը», որոնց պատասխանատու խմբագիրն էր նա, ինչպես նաև պատմագրության բնագավառի նրա

1 См. Мотылева Т. А. Трагедия Ромена Роллана «Робеспьер». — «Французский Ежегодник. 1972». М., 1974.

աշխատությունները՝ Մեր ակնարկը թերի կլիներ, եթե մենք չհիշատակեինք գիտնականի ակտիվ կազմակերպչական աշխատանքը և գիտական կազմերի դաստիարակության ուղղությունը նրա գործունեությունը՝ Մի շարք տարիների ընթացքում նա եղել է ընդհանուր պատմության գծով գիտխորհրդի նախագահ՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում և արևմտաեվրոպական երկրների նոր պատմության սեկտորի վարիչ, որի աշխատանքը նա հասցրեց մեծ բարձրության:

Ա. Զ. Մանֆրեդը խոշորագույն ծառայություններ ունի սովետական և ֆրանսիական պատմաբանների մեջ գիտական կապերի հաստատման ու ամրապնդման գործում: Նա եղել է երկու երկրների պատմաբանների գրեթե բոլոր համազրույցների (1958 թվական՝ Փարիզ, 1961 թվական՝ Մոսկվա, 1965 թվական՝ Փարիզ, 1969 թվական՝ Երևան, 1973 թվական՝ Մոսկվա, 1976 թվական՝ Փարիզ և Դիժոն) ամենաակտիվ մասնակիցը: Ա. Զ. Մանֆրեդը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտին առընթեր ֆրանսիայի պատմության գծով խմբի (1963 թվականից, Վ. Պ. Վոլգինի մահվանից հետո, նա այդ խմբի նախագահն էր) և «Ֆրանսիական տարեգրքի» ստեղծման նախաձեռնողն էր: Ա. Զ. Մանֆրեդը 1969 թվականին Մոսկվայում հրավիրված՝ «Լենինը և Ֆրանսիայի պատմությունը» կոնֆերանսի կազմակերպիչներից մեկն էր, կոնֆերանս, որին սովետական պատմաբանների հետ միասին մասնակցեցին Ժ. Գյուկլոն, Ժ. Բրյուան, Ա. Մորսլը, Կ. Վիլարը և ուրիշներ: Նրա ակտիվ մասնակցությամբ պատմաբանների միջազգային XIII կոնգրեսի առթիվ հրատարակվեց (Փարիզում և Մոսկվայում) երկու ժողովածու՝ «Լուսավորության դարը» և «Ֆրանսուսական տնտեսական կապերը»<sup>2</sup>, որոնց աշխատակցում էին սովետական և ֆրանսիական պատմաբաններ: Այդ ժողովա-

մունքի խմբագրական կոլեգիայում էին ֆրանսիական կողմից՝ Ֆերնան Բրոդելը, Ռոժե Պորտայը և Մարկ Ֆերոն, Սովետական Միության կողմից՝ Ա. Ա. Գուբերը և Ա. Զ. Մանֆրեդը: Ա. Զ. Մանֆրեդը «ՍՍՀՄ—Ֆրանսիա» ընկերության պրեզիդենտական խորհրդի ամենաակտիվ անդամն էր: Միջազգային XIV պատմագիտական կոնգրեսում նա ընտրվեց Ֆրանսիական մեծ հեղափոխության պատմության հանձնաժողովի (Միջազգային պատմական կոմիտեին կից) երեք պատվավոր նախագահներից մեկը:

Լինելով Կլեմոն-Ֆերրանի համալսարանի պատվավոր դոկտոր, Ա. Զ. Մանֆրեդը մեծ հեղինակություն էր վայելում ֆրանսիացի պատմաբանների լայն շրջաններում:

Ա. Զ. Մանֆրեդը երբեք զուտ կարիքնետային գիտնական չի եղել: Նրա կրթող հրապարակախոսական հոդվածները հաճախ են երևացել կենտրոնական կուսակցական մամուլում:

Բաղձակողմանի գիտելիքներն ու շափազանց բարձր հոգեվար կուլտուրան, սերը պատմական գիտության նկատմամբ, գիտնականի նուրբ ու ըննախույզ միտքը զրական վառ տաղանդի գուլպակցությամբ Ա. Զ. Մանֆրեդին բացառիկ պատվավոր տեղ ապահովեցին մեր գիտության մեջ:

«Երեք դիմանկարի» տասնյակ և հարյուր հազարավոր ընթերցողներ մեկ անգամ ևս սիրելի հեղինակի հետ հանդիպման հաճույք կվայելին: Բայց նրանք նաև դառը տգիտանք կզգան այն մտքից, որ այս գիրքը փայլուն և արտասովոր տաղանդի տեր պատմաբանի վերջին ստեղծագործությունն է:

Վ. Գալին

1977 թվականի փետրվարի 16-ին:

<sup>1</sup> Բացի նախկինում թվարկած աշխատություններից, նշենք նաև Ե. Վ. Տարլեի ազանդավոր բնութագիրը («Из истории общественных движений и международных отношений», М., 1957). Տե՛ս նաև Манфред А. З. Академик Евгений Викторович Тарле (1875—1975).— «Вестник Академии наук СССР», 1976, № 3. Խոյնի՛ Թալանտ историка (К столетию со дня рождения Е. В. Тарле).— «Комсомольская правда», 12 ноября, 1975 г.  
<sup>2</sup> «Века Просвещения» и «Франко-русские экономические связи», М., 1970. (Au siècle des lumières; La Russie et l'Europe du XVI au XX siècles, Paris, 1970).

<sup>2</sup> Ա. Զ. Մանֆրեդի խմբագրությամբ և նախաբանով լույս տեսան ֆրանսիացի պատմաբանների մի շարք նշանակալից մենագրություններ, այդ թվում. А. Собоуль. «Парижские санюлоты во время якобинской диктатуры» (М., 1966) և «Первая республика» (М., 1974), К. Виллар «Социалистическое движение во Франции 1893-1905 (Гедисты)» (М., 1969), М. Шури «Коммуна в сердце Парижа» (М., 1970), ինչպես նաև է. Երիոյի հիշողությունները «Անցյալից» (Մ., 1958): Ա. Զ. Մանֆրեդի մահվանից քիչ առաջ լույս տեսավ Ժան Ժորեսի «Ֆրանսիական հեղափոխության սոցիալիստական պատմության» առաջին հատորը (Մ., 1976) նրա խմբագրությամբ և առաջաբանով:

Հավանաբար, առաջին բանը, որ կհիշի ընթերցողը, աչքի անցկացնելով այս գրքի վերնագիրը, կլինի Ի. Ս. Տուրգենևի «Երեք գիմանկար» պատմվածքը: Ես ստիպված եմ հիասթափեցնել և վշտացնել ընթերցողին՝ գիրքը, որին նա կծանոթանա, թե՛ իր բովանդակությամբ, և թե՛ գրությունը հետո է գեղարվեստական արձակի անգերազանցելի վարպետի այդ դյուբիշ պատմը-վածքից:

Գրքում խոսք կզնա ուրիշ բաների մասին: Վաղուց ի վեր, պատանեկության տարիներից սկսած, և իմ ողջ կյանքի ընթացքում ես միշտ մեծ ու կարելի է ասել, տարիների հետ աճող հետաքրքրություն եմ ցուցաբերել 1789—1794 թթ. Ֆրանսիական մեծ հեղափոխության պրոբլեմների նկատմամբ: Ինձ վիճակվել է տարբեր ժամանակ այդ պրոբլեմների շուրջ տարբեր բնույթի երկեր գրել՝ և՛ հատուկ աշխատություններ, և՛ առավել ընդհանուր, կոնցեպտուալ բնույթի աշխատություններ, և՛ այդ դարաշրջանի պատմության սուանձին էջերին նվիրված գրքեր:

Եթե ընթերցողի մոտ հարց առաջանա, թե ինչպիսին է իմ նոր մենագրության բովանդակությունը, ապա նա պատասխանը կգտնի վերնագրում՝ այս գիրքը XVIII դարի Ֆրանսիական մեծ հեղափոխության մասին է:

Բայց չէ որ հեղափոխության թեման ես կարելի է տարբեր ձևով բացատրել:

Վերջին ժամանակներս իմ մեջ հակում գրսևորվեց (ինձ համար դժվար է ասել՝ լավ է դա, թե վատ, ևս չեմ գտելու) մեծ հասարակական պրոցեսների ներքին բովանդակությունը, որոնց թվին են պատկանում և հեղափոխությունները, բացահայտել դրանց առանձին գործիչներին պատկերելու միջոցով: Հավանաբար այդ թեման հավասար իրավունքով լուսաբանել առանձին

մարդկային ճակատագրերի օրինակով կարելի է, խոսելով և այն մարդկանց դերի մասին, որոնք գլխավորում էին հեղափոխական պրոցեսը, և նրանց դերի մասին, որոնք այդ պրոցեսի շարքային մասնակիցներն էին: Թե՛ մեկը, և թե՛ մյուսները ուշադրության հավասար իրավունք ունեն: Սակայն պետք է խոստովանել, որ երկրորդների՝ շարքային հեղափոխականների մասին ավելի դժվար է գրել, քան նրանց, ովքեր դասվում են ղեկավարների թվին: Ու թեև էրկաման-Շատրիանի, Վիկտոր Զյուգոյի, Օնորե դը Բալզակի, Անատոլ Ֆրանսի, Թոմեն Թոլանի հայտնի վեպերի ժամանակներից սկսած արդեն գոյություն ունի նշանակալից գրականություն հեղափոխության շարքայինների մասին, արդարությունը պահանջում է հավաստել, որ այդ գրականությունը լուծված է գլխավորապես գեղարվեստական պատկերման տեսակետից: Վիպագիր-գեղագետը անսահմանափակ մտածական ենթադրությունների ավելի մեծ իրավունքով է օժտված, քան պատմաբանը: Եվ այդ նույն պրոֆեսիոնալ մոտեցումը այն պատմաբանի, որն իր աշխատության մեջ սահմանափակված է վավերագրական նյութով, նրան թույլ չի տալիս կանգնել գեղարվեստական երեակայության արգասիքի հողի վրա: Պատմաբանը միշտ կաշկանդված է այն անհերքելի, ստույգ վավերագրական նյութով, որի վրա նա կարող է հենվել: Հետազոտողի տրամադրության տակ գտնվող պատմական նյութերի հետ հաշվի նստելու անհրաժեշտությունն էլ հենց կանխորոշում է հերոսների ընտրությունը: Հեղափոխության շարքայինների մասին շափազանց քիչ տեղեկություններ, շափազանց քիչ վավերագրական հավաստի աղբյուրներ կան: Պատմական մեծ պրոցեսի գլուխ անցած մարդկանց մասին նյութերն անհամեմատ ավելի շատ են: Այստեղ պատմաբանը ավելի շատ տրտնջում է փոստաթղթերի առատությունից, քան դրանց սահմանափակ լինելուց:

Իսկն ասած, միայն դա բավական կլինի արդարանալու և բացատրելու, թե ինչու պատմաբանները, մեր նախորդները, մեր ժամանակակիցները սովորաբար գրում են աստիճանների, գեկավարների և ոչ թե շարքայինների մասին: Ասվածին պետք է ավելացնել, որ լիդերի, կամ առաջնորդի, կամ վեկավարի, անվանեցեք նրան, ինչպես կհամենք, դա չի փոխում բանի էությունը, գիրքը ևս որոշ առավելություններ է տալիս Երբեմն

Այն անհատի մեջ ասես անձնավորվում են առավել ընդհանուր պրոցեսներ: Ժամանակ առ ժամանակ դարաշրջանի բուռն իրադարձությունները քննարկելով «ներքևից» և միաժամանակ «վերևից»՝ այն աշտարակից, որի վրա է դրել այս կամ այն մարդան իրադարձությունների ընթացքը, դուք սկսում եք ավելի լավ բնութենել դարաշրջանի բովանդակությունը:

Հավանաբար, կարելի է բերել և այլ փաստարկներ հօգուտ այդ մեթոդի: Բայց, թերևս, հարկավոր է ընթերցողին հնարավորություն տալ, որպեսզի ինքը դատի նրա առավելությունների կամ թերությունների մասին, նախապես նրա վզին շփաթաթելով հեղինակային կարծիքը: Ուստի ես կսահմանափակվեմ ընդհանուր համառոտ նկատառումներով և միայն կբացատրեմ, թե ինչու է գրքում ներկայացված միևնույն պատմական դարաշրջանը լուսարանող երեք դիմանկար:

Այդ տրիպտիխը պատահական չէ: Առաջին դիմանկարը նվիրված է երիտասարդ Ժան-ժակ Ռուսոյին: Սա հեղափոխության արշալույսն է, նրա նախակարապետը. այն դեռ չի եկել, սոսկ լուսաբացն է նշմարվում: Երիտասարդ Ռուսոյի կերպարում, այն Ռուսոյի, որը դեռ չի դարձել ոչ նշանավոր, ոչ էլ իմաստուն գրող, ես կուզենայի տեսնել, թե ինչպես էր իր համար ճանապարհ հարթում վրա հասնող վաղվա օրը: Հարկ է նաև բացատրել, թե ինչու Ռուսոն լրիվ ցուլց չի տրված այնպիսին, ինչպիսին նա մտավ պատմության մեջ: Այդ թեման այնքան մեծ է, բազմակողմանի ու բարդ, որ պահանջում է հատուկ, միմիայն Ռուսոյին նվիրված երկեր: Այս աշխատության շրջանակներում այդ բանն անել անհնարին է շատ պատճառներով, սկսած տեղի ու ժամանակի նկատառումներից: Հետագա պատմումն Ռուսոն գործում է արդեն կարծես թե բեմի հետևում, բայց գլուխներից յուրաքանչյուրի մեջ ընթերցողը կզգա Ռուսոյի կողմնակի, այդ թվում և հետմահու ազդեցությունը:

Երկրորդ դիմանկարը նվիրված է հեղափոխության ամենավիճելի կերպարներից մեկին՝ Գարրիել Օնորե Միրաբոյին: Մտացվել է այնպես, որ մեր նրկում Միրաբոյի մասին ինչպես հարկն է երբեք չեն գրել: Այդ վառ, ներքնապես հակասական կերպարն առավել լիակատար չափով է ներկայացնում հեղափոխության վաղ ժամերը: Միրաբոն պատմության մեջ մտավ որպես հեղափոխության սկզբնական փուլի գործիչ: Նրա անունն

անբաժանելի է հեղափոխության առաջին օրերից: Միրաբոն 1789 թվականի հերոս է. այդ տարվանից հետո նշանավոր տրիբունի փառքը սկսում է նսեմանալ, խամբել: Միրաբոյի անժամանակ մահը 1791 թվականի ապրիլին շկարողացավ կանխել նրա գաղափարաբանը հաջորդ սերունդների կողմից: Եվ այնուամենայնիվ, շնայած նրա արտասովոր ճակատագրի բոլոր ազդատու մեթոդին, Միրաբոն մնաց պատմության մեջ և այդ անունը պահանջում է իր բացատրությունը:

Եվ վերջապես, երրորդ դիմանկարը՝ Մաքսիմիլիան Ռոբեսպիերի դիմանկարը: Մաքսիմիլիան Ռոբեսպիերը՝ դա կեսօր է, դա հեղափոխություն է, որը հասել է իր հասունությանը, զենիթին և նրա կործանումից հետո ընթացել անկման թերթիք ուղիով: Ռոբեսպիերի մասին գրվել են հարյուրավոր գրքեր, հազարավոր հոդվածներ: Նրա անվան շուրջ ծավալված վեճերը չեն հանդարտվում գրեթե երկուհարյուր տարի: Եվ այնուամենայնիվ, երեսուկվեց տարի ապրած մարդու բուն նկարագրի մեջ այնքան շատ նշանակալից, կարևոր, բարդ բան է մնացել, որ նա մինչև օրս շարունակում է ուշագրություն գրավել:

Հեղինակը ձգտել է այդ երեք դիմանկարների մեջ տալ XVIII դարի Յրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանի իր ըմբռնումը: Այդ դարաշրջանը ողբերգական էր: Ողբերգական՝ ամենից առաջ նրա ղեկավարների ու հերոսների համար, որոնք հուսով էին, թե իրենք իրագործում են մեծ հեղափոխություն, որը վերափոխում է մարդկային ցեղը, կոչված է հասարակությունը հասցնել արդարության, ազատության և հավասարության իդեալական, ոսկե դարին: Իսկ իրականում, անկախ նրանց գիտակցությունից ու կամքից, այն դարձավ բուրժուական հեղափոխություն, որի իրական բովանդակությունն էր՝ անցում իրեն սպառած ֆեոդալական սրտաղբական եղանակից դեպի նոր, այն ժամանակ առավել առաջադիմական կապիտալիստական արտադրանգանակը և համապատասխանաբար դեպի նոր, բուրժուական կարգերը:

Կարո՞ղ էին, արդյոք, այն ժամանակ նրա հերոսները հասկանալ այդ պատմական պրոցեսի ունալ բովանդակությունը: Նրանց համար այդ բովանդակությունը մնում էր անմատչելի: Նրանք ապրում էին իդեալական և իդեալականացված պատկերացումների աշխարհում, և բիրտ անհամապատասխանությունը

ալն սպասելիքներին, որ կապված էին այդ ապագա կարգերի հետ, հասարակական իդեալի այս մարդկանց անկասելիորեն տանում էր դեպի խորտակում և կործանում:

Այդ գարաշրջանի երեք պատմական գործիչների կերպարների միջոցով բացահայտվող XVIII դարի բուրժուական մեծ հեղափոխության բովանդակության, նվաճումների, ողբերգության մասին է պատմվում այս դրբում:



ԵՐԵՎԱՆԻ  
ՌԻՍՏԻՆ

Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Գ  
Ռ Ռ Ի Ս Ո Ն

I

Երբ արտասանում են ժան-ժակ Ռուսոյի անունը, սովորաբար մեր աչքի առջև հասնում է այնհեր, խոտվահույզ մի թափառաշրջիկ, որը նեղվում է իր համար ոչ մի արժեք չունեցող համաշխարհային փառքից, մենակյաց ու ճգնաժողով, մարդկության վաղվա օրով մտահոգված միայնակ երազող, այսօր անօթեան մնացած և զրկված բարեկամներից, որոնց կարող էր վստահել:

Տեսանելիորեն մեր հիշողության մեջ է հասնում ժան-ժակ Ռուսոյի կերպարն այնպիսին, ինչպիսին նրան վառ կերպով պատկերել էր Բեռնարդեն դը Սեն-Պիերը բազմիցս վերահրատարակված գրական դիմանկարում: Այն մարդուն, որին նա համարում էր իր ուսուցիչը, հանդիպեց վերջինիս մահվանից քիչ առաջ նա դեռ կորովի, նիհար, կարճահասակ ծերուկ էր. նրա մի ուսը բարձր էր մյուսից, հավանաբար ձեռագրերի ընդօրինակման ուղղությամբ կատարած երկարատև աշխատանքի պատճառով. նրա դեմքը գունատ էր. հոգնատանջ, խոր կնճիռներով ծածկված ճակատը բարձր էր՝ նույնպես ամբողջովին կնճռապատ, և այդ հիվանդագին ծերունական դեմքի վրա փայլում էին խոշոր աչքերը: Հավանաբար, Բեռնարդեն դը Սեն-Պիերը ճշմարտությանը մեծապես մերձենալով է վերարտադրել իր ուսուցչի կերպարը:

Բայց չէ որ անցյալում է մնացել այն ժամանակը, երբ Ղաչին ոչ կնճիռներ, ոչ էլ փառք. ոչինչ չկար. բացվում էր առավոտը. կար միայն վաղվա օրը. ամեն ինչ սկսվում էր: Եվ կենսական ուժերով աղկեցուն, դյուրահավատ, ծիծաղկոտ երիտասարդ Ռուսոն ամենևին նման չէր անհանգիստ իր շուրջը նայող, մարդկանցից հեռացած ճգնաժողովին՝ հալածական եղջերվին,

որը տաղնապահույզ ուշադրությամբ զննում է բոլոր կողմերից իրեն դարանակալած խավարը: Իսկ ի՞նչ տեղի ունեցավ: Ինչպիսի կատարվեց այդ դարմանալի, ինչպես կախարդված արքայազնի մասին հեքիաթում, կերպարանափոխությունը: Ինչո՞ւ այդ երիտասարդ, անհոգ կերպով շարունակ ուրախ երգեր երգող թափառականը դարձավ թավախիտ անտառում մարդկանցից թաքնվող կախարդված եղջերու:

Տարակուսանքով լի այդ հարցերը կարելի է շարունակել: Ժան-ժակ Ռուսոյի իրական կենսագրության մեջ ամեն ինչ շատ ավելի բարդ էր: Չէ որ աշխարհից հեռանալը, մարդկանցից փախչելը տեղի ունեցան ոչ այն պատճառով, որ ժամանակակիցները չեն հասկացել կամ դրանից էլ վատը՝ մերժել են նրան: Ընդհակառակն, թերևս ոչ մի Ֆրանսիացի գրող կենդանության օրոք չի վայելել այդպիսի լայն ժողովրդականություն: Հնարավոր է, որ միայն Վոլտերը կարողանար Ռուսոյի հետ վիճարկել փառքի դափնեպսակը: Բայց պետք է խոստովանել, որ կյանք մտնող երիտասարդ սերունդների, քսան տարեկանների համար մեծատառով Ռուսոցիլ է եղել ոչ թե ֆերենյան նահապետը, այլ «մեր ժան-ժակը», ինչպես նրանք սիրով անվանում էին «Հասարակական դաշինքի» հեղինակին:

Արդեն XVIII դարում ոչ մի ուրիշ անուն երիզված չի եղել փառքի այնպիսի լուսապսակով, ինչպես Ռուսոյի անունը: Նա Ֆրանսիայի, Եվրոպայի, աշխարհի ամենանշանավոր գրողն էր: Այն բոլորը, ինչ դուրս էր գալիս նրա գրչի տակից, անհապաղ հրատարակվում և վերահրատարակվում էր, թարգմանվում բոլոր հիմնական լեզուներով՝ նրան կարգում էին Փարիզում և Պետերբուրգում, Լոնդոնում և Ֆլորենցիայում, Մագրիզում և Հաագայում, Վիեննայում և Բոստոնում: Բոլորը ծանոթություն էին փնտրում փառաբանված գրողի հետ՝ պետական գործիչները, գիտնական այրերը, բարձր հասարակության տիկնայք: Դա համաշխարհային ճանաչման փառք էր, և արդեն ոչինչ չէր կարող սասանել կամ նվազեցնել այն:

Իսկ նա քամահրում էր այդ փառքը՝ դա նրա համար ոչինչ չարժեք: «Ինձ զգվեցրել է գրական փառքի ազմուկ-աղաղակը», — իր կյանքի վերջում ասում էր նա: Ուրիշները փառքը վերածում էին զրամի, կալվածքի, ազնվական տիտղոսների. հիշեցեք Բոմարշեին, նույն Վոլտերին: Ռուսոյի համար ոչ գրամը, ոչ կալվածքները, ոչ տիտղոսները արժեք չունեին՝ դրանք

պետք չէին նրան: Փառքն էլ նրան պետք չէր. միգուցե նա նույնիսկ այն չէր նկատում, չէր զգում, նա խորասուզված էր իր տխուր մտքերի մեջ:

Հապա էլ ինչո՞ւ Ռուսոն, շնայած համընդհանուր ճանաչմանը, կոնֆլիկտի մեջ մտավ իր համակրանքին արժանացրած այդ հասարակութեան հետ: Ինչո՞ւ նա փախավ նրանից, դարձավ ճգնաժողով:

Հարկ չկա ոչ փոքրացնել, ոչ էլ մեղմացնել կոնֆլիկտի սրութիւնը: «Կարելի՞ է, արդո՞ք, մոռանալ կյանքի վերջին տարում Ռուսոյի գրած տողերը խաղաքարտի դարձերեսի վրա. «Նրանք իմ և իրենց միջև փորեցին մի հսկայական վիճ, որն արդեն ոչ մի բանով չի կարելի ոչ լցնել, ոչ էլ հաղթահարել, և այժմ ես, իմ կյանքի ամբողջ մնացորդի ընթացքում, նրանցից բաժանված եմ այնպես, ինչպես մեռյալները ողջերից»<sup>2</sup>:

Իսկ սրանք տողեր են Ռուսոյի «Միայնակ երազողի զբոսանքները» վերջին գրքից, որն անավարտ մնաց, — մահն ընդհատեց աշխատանքը նրա վրա: «Եվ ահա ես մենակ եմ երկրի վրա, առանց եղբոր, առանց մերձավորի, առանց ընկերոջ՝ առանց ուրիշ զրուցակցի, բացի ինքս ինձնից»: Մա Ռոբինզոնի ողբերգութիւնն է անմարդաբնակ կղզում, — կհարցնի ընթերցողը: Դանիել Դեֆոյի ստեղծած բախման նոր տարբերակը Ամենեկին, ընդհակառակն: Ժան-ժակի մենակութեան ողբերգութիւնն առաջացել է մարդկանցով խիտ բնակեցված երկրի վրահենց մարդիկ դատապարտեցին նրան մենակութեան: Առաջին իսկ տողերից Ռուսոն լիակատար պարզութիւն է մտցնում դրա մեջ. «Մարդկանց մեջ ամենամարդամտոն ու սիրողը միահամուռ համաձայնութեամբ արտաքսվեց նրանց միջավայրից...

Ինձ համար ամեն ինչ ավարտված է երկրի վրա: Այստեղ ինձ ոչ բարիք, ոչ էլ շարիք կարող են պատճառել: Ես այլևս ոչ մի բանի վրա հույս զնե չեմ կարող և ոչնչից չեմ վախենա այս աշխարհում, և ահա ես հանգիստ եմ անդունդի խորքում, խեղճ մահկանացու՝ թշվառական, բայց անվրդով, ինչպես ինքն աստվածը»<sup>3</sup>:

Այս վշտախառն խոսքերին ավելացնելու ոչինչ չկա: Դրանք լոկ պահանջում են բացատրել, թե ինչու մարդը կարող էր այդ աստիճանի հուսահատութեան հասնել: Ասենք, սրանով շեն սպառվում Ռուսոյի կենսագրութեան դժվար բացատրելի տար-

իմաստութիւնները: Բնականաբար ծագում են տարակուսելի նոր հարցեր:

Ինչպե՞ս բացատրել, որ այդ անհատապաշտը, մենակյացը, որը մի կողմ էր քաշվել մարդկանցից, թաքնվում էր նրանցից: զաղտնի թաքստոցներում, իր երկրորդ, հետամահու կյանքում դարձավ ֆեոդալական աշխարհի դեմ ապստամբած ժողովրդական զանգվածների առաջնորդն ու ուսուցիչը: Ինչպե՞ս համատեղել միայնակ, մարդկանցից խորշող աստանդականի կերպարը, ինչպիսին ճանաչում էին Ռուսոյին կենդանութեան օրոք, և այն դարաշրջանի հեղափոխութիւններից ամենամեծագույն՝ Էնղափոխութեան գաղափարախոսի, այդ հեղափոխութեան ամենաանվեհեր, ամենավճռական մարտիկների՝ յակոբինյանների անառարկելի հեղինակութեան գրեթե տիտանական կերպարը:

Մակերեսի վրա գտնվող այս հակասութիւններն ակնհայտ են բոլորի համար: Կան և այլ հակասութիւններ, որոնք կապված են նրա ստեղծագործութեան, նրա գաղափարական ժառանգութեան հետ: Հավանաբար, դրանք պակաս նկատելի են, բայց արժանի են նույնպիսի ուշադրութեան:

Ռուսոյին համարում են, պատշաճ հիմքով, գեղարվեստական գրականութեան մեջ սկզբնավորողը կամ, ասենք ավելի զգուշորեն, հիմնադիրներից մեկն այն ուղղութեան, որն ընդունված է անվանել սենտիմենտալիզմ: Այս տերմինի տակ սովորաբար հասկանում են այն հրապուրանքը զգայունութեամբ, որը ընդունել էր XVIII դարի մի շարք գրողների՝ Անգլիայում Գոլդսմիտին, Թ. Գրեյին, Լորենց Մտերնին, Տրանսիայում արքա Պրենցին, Ժան-ժակ Ռուսոյին, Բերնարդեն դը Սեն-Պիերին, Ռուսաստանում Ն. Մ. Կարամզինին, Ի. Ի. Դմիտրիևին և ուրիշների:

Բայց չէ որ Ռուսոն, որին իսկապես հատուկ էր բարձր զգայունութիւնը և՛ ստեղծագործութեան մեջ, և՛ առօրեական կյանքում, որի մասին նա ինքն է հաղորդել «Նոստալանանքում», — Ռուսոն միևնույն ժամանակ տարօրինակ հակասութեան մեջ լինելով այդ մեղմացած և մեղմացնող, հաճախ արցունքներով մաքրված զգայունութեան հետ՝ այն գրողն ու մտածողն էր, որը 93 թվականի խոստաշունչ մարդկանց ոգեշնչում էր անօրինակ սխրագործութիւնների, գործելու անսանձ եռանդի: Գրականութեան մեջ սենտիմենտալիզմի հանրաճանաչ ղեկավարը և ամենահեղինակավոր ներկայացուցիչը դարձավ յակոբինյանների հեղափոխական դիկտատուրայի գաղափարական և հոգևոր առաջ-

նորը, երկաթե ձեռքով անգոյություն մեջ նետելով բոլոր նրանց, այլնք փորձում էին կանգնել նրա ճանապարհին: Արող հեղինակներն նույնիսկ նակիւմ էին ամեղացնել իրազրութեան գրամատիգը: Այսպէս, Այրերս Մենին փորձում էր, ըստ հակադրութեան, այդոմ անմեղարեն ծաղիկ պոկող ժան-ժակին համադրել դահիճ Սանտոնի հետ, որը կարում էր գիլիստինի գահերի գլուխները: Ինքը այդ համադրությունն իսկ բռնի է և միտումնաւոր: Բայց հակասությունն իսկապէս ակնբախ է:

Ինչպէ՞ս բացատրել դա: Ինչպէ՞ս համատեղել այդ երկու այդուափ տարբեր սկզբունքները: Դատողությունների տրամաբանությունը օրինաւորութեն թելագրում է և այլ տարակուսելի հարցեր:

Չէ որ Ռուսոյի գաղափարական ժառանգությունը, նրա մշտեբը, նրա պատգամները քաղաքական հուշատախտակներ դարձան ոչ միայն յակորինյանների, այլև նախահեղափոխական Միրաբոյի, իսկ այժեյն ուշ՝ ժիրոնդիստների համար, — ոչ բոլորի, բայց համենայն դեպս, նրանցից ոմանց, առավել նշանաւորների՝ Մանոն Ռուանի, այդ «ժիրոնդիզմի ժյուլիի», նրա ընկեր և ազգեցիկ քաղաքագետ Բյուզոյի, ժիրոնդալի լիդեր Պիեր Բրիսոյի համար: Իսկ չէ որ այդ երկու խմբավորումները, որոնք սկզբում հանդէս էին գալիս որպէս զաշնակիցներ ընդհանուր հակառակորդի դեմ, շուտով դարձան այնչափ անհաշտ թշնամիներ, որ նրանց թշնամանքը միայն մահը կարող էր հազցենել: Եվ՝ ժիրոնդիստները, որոնք շնայած դեպուտատական անձնամխելիութեանը, հեղափոխական տրիբունայի էին հանձնել ժան-Պոլ Մարատին, իսկ այնուհետև նրան դաշույնով սպանող Շապուտա Կորգէին, և՛ յակորինյանները, որոնք կառավարան էին ուղարկել ժիրոնդիստական զեպուտատներին, թէ՛ մեկը, թէ՛ մյուսները հիշողության էին կոչում և իրենց գործողություններին որպէս պաշտպան վերցնում մեծ ուսուցիչ ժան-ժակ Ռուսոյին:

Ինչպէ՞ս բացատրել և՛ իրեն իսկ՝ կյանքից, և՛ Ռուսոյի գաղափարական ժառանգութեանից ծնված այս հակասությունները: Եվ մի՞թե դրանք սրանով վերջանում են: Արդոյս ինքնաբերաբար չէ՞ն ծագում տարակուսելի նոր հարցեր: Վերջապէս, և դա երկի թե, ամենից կարևորն է, հարկաւոր է խորհել այն մասին, թե ինչու ոչ միայն Ռուսոյի կենդանութեան օրոք, այլև մահ-

փունից տանամայակներ, նույնիսկ հարյուրամյակներ անց նրանունը շարունակում էր կատաղի վեճեր հարուցել:

1781 թվականին, գրողի մահվանից քիչ անց, երբ Բարդուկյում, էրմենովիլում գտնվող նրա գերեզմանի վրա դրվեց բարե ստալանագիր, դեռևս բոլորին անծանոթ քանամայա նրիդրիս Շիլլերը գրեց գաղտնի տետրում.

Արդ, բարձրագոյ մի կոթող՝ որպէս կծու կշտամբանք  
Ֆրանսիո համար, նաև մեր օրերին, անարգանք,  
ես խոնարհվում եմ դագաղի առջև Ռուսոյի...

Բանաստեղծը դատապարտում էր «դահիճների» և «Քրիստոսի ստրուկների» աշխարհը, որոնք կործանեցին իմաստունին. «նրանց մարդ դարձնելու ետանդի համար»: Եվ դա հասկանալի է. Շիլլերը ներքաշվում էր ժան-ժակի գերեզմանի մոտ դեռևս կուսցող կրքերի հորձանուտի մեջ:

Բայց երբ շատ տարիներ անց ևս, 1912 թվականին, Երրորդ Լանբրադետութեան ժամանակներում, Ֆրանսիան պաշտոնապէս անունում էր «Հասարակական դաշինքի» հեղինակի ծննդյան երկուհարյուրամյակը, այս իրադարձությունն անսպասելիորեն անակցիալի համբարում խելահեղ կատաղութեան մի այնպիսի պայթյուն տուալ բերեց, որ անհարին էր նախատեսել: Նույնիսկ զեպուտատների պալատում ամենանշտանաւոր պառլամենտականներին մեկը՝ Մորիս Բարեսը՝ նայիոնալիստական կուսակցութեան պարագլուխը, որ կուսակցութեան ռալմաշունը ծրագիրը պաշտպանում էր ոչ այնքան ճշտերով, որքան նրան Ֆրանսիայի ատաջին ոճարանի համբավ բերող վեպերով, հրապարակաւ իր անհամաձայնութեանը հայտնեց Ռուսոյի մեծարման առթիւ: Ետ անցյալ դարաշրջանի այդ գրողի մեջ տեսնում էր բոլորին իր անբավարարվածութեամբ վարակող վտանգավոր խառնակչի, ազատութեան քարոզչի, խռովարարի, հեղափոխական խմորումների նախահորը: Լուսավորութեան մինիստր Ստեգը առարկելով Բարեսին, պատշաճ հիմքով նկատեց, որ «Le culte de Moï» (— Իմ Ես-ի պաշտամունքը) ետերգութեան հեղինակը որպէս անհատապաշտութեան երգիչ շատ բանով է պարտական, ընդհուպ մինչև բառացի կրկնվող արտահայտութեանները, «եստատվանների» և «Նոր էլիդիլ» արարչին:

Բայց զեպուտատների պալատի պատերից դուրս ալ ուժերի անհաղեքած բացահայտ ատեցողական կամպանիան Ռուսոյի

գեմ նրա հորելյանի կապակցութեամբ ամենասանձարձակ ձե-  
վերն ընդունեց: Գրգովելով Հիպոլիտ Տենի կամ ժյուլ Լեմետրի  
տիպի գրական քննադատութեան գրեթե դասական մետրերի շա-  
քակամ լուսանքներից, որոնց սատարում էին «Matin», «Le  
Temps» թերթերը և Մեծ բուլվարների ամբողջ մամուլը, այդ  
թշնամանքը XVIII դարի արդեն մոռացված թվացող գրողի  
նկատմամբ պոսթիկաց սպառնալից բացորոշութեամբ ու կոպ-  
տութեամբ: Ռուսոյին հարգանք մատուցելու համար հանրապե-  
տութեան պրեզիդենտ Պալիերի պաշտոնական այցը Պանթեոն  
առաջ բերեց ռեակցիոն նացիոնալիստական խառնամբոխի հա-  
կացույցը, որը պատրաստ էր խախտել սահմանադրական լեզա-  
լութեան սահմանները:

Ժամանակակիցներն ապշած էին այն բանից, որ երկու հար-  
յուր տարին քիչ դուրս եկավ հանգցնելու համար երկար տաս-  
նամյակների մոխրի տակ մարմրող կրթերի, թշնամանքի խան-  
ձառը, որ մնացել էր ինչ-որ ժամանակ աղքատ «ժննի բա-  
ղաքացու» տկարացած ձեռքով փետուրն մեծ գրչով գրված թղթի  
կտորներից:

Ես կանգ եմ առնում այստեղ, որպեսզի շոշափեմ մեզ  
բոլորովին մոտ 250-ամյա հորելյանը, որը նշվեց 1962 թվա-  
կանին և նորից վեճեր ու կրքեր բորբոքեց: Դա մեզ շափազանց  
հեռու կտաներ...

## II

1742 թվականի\* ուշ ամռանը Փարիզի Կորդիե փողոցում  
գտնվող «Մեն-Կենտեն» հյուրանոցում, Սորբոնի մոտակայքում  
(ներկայումս ոչ հյուրանոցն է պահպանվել, ոչ էլ նույնիսկ փո-  
ղոցը) բնակություն հաստատեց մի երիտասարդ, որը փոստային  
դիլիթմանսով եկել էր գավառից: Նրա ուղեբեռը մեծ շէր, եկ-  
վորն աղքատ էր ու ջահել՝ այս երկու պարտադիր հատկանիշները  
հատուկ են բոլոր այն երիտասարդներին, որոնք ամեն աշուն  
ժամանում էին մայրաքաղաք, նվաճելու մեծ քաղաքը: Ասենք,  
նրա երիտասարդությունը, XVIII դարի պատկերացումներով,

\* Ռուսոն «Խոստովանանքում» գրում էր 1741 թվական, բայց նրա  
նամակները և կենսագրական ուրիշ նյութեր ապացուցում են, որ նա սխալ-  
վում էր:

այդին վերջանալու վրա էր՝ լրացել էր նրա քսանինը տարին,  
լավագույն շրջանը մնացել էր հետևում: Բայց այդ թերութունը  
լրանում էր ուրիշ բաներով՝ նա ուներ հաճելի արտաքին, դեմքի  
լավ գույն, հավասար, կայուն արևայրուկ, ամեն ինչ նկատող  
սրտոտեա աչքերի ուշադիր հայացք, լավ շարժուններու նա հագնե-  
ված էր համեստ, բայց ամեն ինչ նրա վրա նստում էր վայելուշ  
և կանանավոր: էլ ի՞նչ է պետք:

Նա վատը չէր այն մյուս երիտասարդներից, որոնք ձգտում  
էին դուրս պրծնել կարիքի և անհայտութեան ճահճուտից,  
միայն թե հնարավոր լիներ կառչել ինչ որ բանից: Կառչելու  
տեղեր մեր եկվորը քիչ ուներ՝ գրպանում կար ընդամենը տասներ-  
հինգ լուիդո, փոքր սնդուկի մեջ կար նոտաների տետր՝ մի  
բանի երաժշտական ստեղծագործությունների գրառումներով:  
Թղթերի մեջ էր երաժշտական նշանների համակարգի արմա-  
տական վերակառուցման մի համարձակ նախագիծ, և, վերջա-  
պիս, մի քանի հանձնարարական նամակներ Լիոնի ըստ ամե-  
նայնի պատվավոր անձանցից՝ Փարիզի նույնքան պատվավոր  
անձանց:

Վերջիններն էլ հենց, հանձնարարական նամակները,  
գավառից եկած երիտասարդի գլխավոր արժեքներն էին: Դրանց  
օգնությամբ ժան-ժակ Ռուսոն (քանզի խոսքը, ինչպես հասկա-  
նալի է, նրա մասին է), բաց արեց փարիզյան երևելիների՝ իրեն  
ունեմաշնչի գոները: Պարոն զը Բոզը՝ Արձանագրությունների  
ակադեմիայի քարտուղարը և թագավորական մեղալիների հա-  
վաքածուի պահապանը, որին նա ներկայացավ աբրա զը Մար-  
լիի նամակով, նրան բարեհամբույր ընդունեց, հրավիրեց ձաշի  
և ծանոթացրեց իր ընկերների հետ: Դրանց թվում էր պարոն  
զը Ռեոմյուրը՝ Ֆրանսիացի հանրահայտ ֆիզիկոսը, դիտու-  
թյունների ակադեմիայի անդամը, որն իր անունը փառաբանեց  
մեր օրերում ևս օգտագործվող ջերմաչափի՝ հայտնագործումով:

Ամեն ինչ հաջող էր դատավորվում: Ռուսոն առաջին ելույթ-  
ներն էր ունենում Փարիզի վերնախավի հյուրասենյակներում  
որպես երաժիշտ, նրա համար հեշտությամբ կոմպոզիցիայի  
երկու դաս հաջողեցրին ձանձրացող հարուստ պարոնների մոտ:  
Դա որոշ ժամանակ կայուն աշխատավարձ էր ապահովում  
նրան: Լինելով ինքնուս, նա ինքն էլ ուժեղ չէր տեսություն մեջ,  
բայց նրա աշակերտներն ավելի քիչ էին նախապատրաստված

իրենց կողմից ուսումնասիրվող առարկային, և երաժիշտ մանկավարժի հեղինակությունը մնաց անասան:

Ռեժիսորը Ռուսոյին մտքրեց ակադեմիա և նրան հնարավորություն տվեց հասկապես այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի առջև շարադրել իր երաժշտական ռեֆորմի նախագիծը: Հանձնաժողովի մեջ էին հայտնի գիտնականներ դը Մեբանը, էլլոն և դը Փուշին: Նրանցից առաջինը ֆիզիկոս և երկրաչափ էր, երկրորդը՝ քիմիկոս, երրորդը՝ աստղագետ: Իրենց ողջ գիտականությամբ հանդերձ նրանք երաժշտությունից ոչինչ չէին հասկանում: Ռուսոն նույնպես իր բարձրության վրա չէր նա ինքն էր խոստովանում, որ հեղինակավոր հանձնաժողովի առջև իր վեհերոտության պատճառով իր հայացքները շարադրում էր կցկտուր կերպով և անհասկանալի<sup>5</sup>: Այն նախագիծը, որը նրան թվում էր անհերքելի, իրականում ծայրաստիճան կասկածելի էր. Ռուսոն առաջարկում էր նոտային նշանները փոխարինել թվային նշաններով:

XVIII դարում համարձակ հայտնագործության նախագծով դժվար էր դարձանել որևէ մեկին՝ այդ դարում բոլորն էին ինչ-որ բան հայտնագործում և առաջարկում: Այնուամենայնիվ, գիտական հանձնաժողովի անդամները, թեպետև քիչ բան էին հասկանում երաժշտությունից, բավականաչափ առողջ դատողություն ի հայտ բերեցին նախագծին քննադատաբար վերաբերվելու համար: Երկու կողմերը չէին լսում և խորամուխ չեղան առարկությունների մեջ: Կողմերի մտքերի փոխանակությունը հիշեցնում էր խուլի երկխոսությունը համրի հետ: Բանք վերջացավ նրանով, որ Գիտությունների ակադեմիան հայցորդին տվեց հայտնագործության վիճազգիր, որը, Ռուսոյի խոսքերով, չի էր «ամենագովասանական հաճույխոսություններով» որոնցից այնուամենայնիվ կարելի էր հասկանալ, որ ըստ էության նա համակարգը չի ընդունում... ոչ իբրև նոր, ոչ էլ օգտակար»: Գլուխտարարը չհանձնվեց: Մ'չ առանց զխացավանքի և ո՛չ առանց ծախսի նա հրապարակեց իր աշխատությունը՝ «Գիտերոտացիա ժամանակակից երաժշտության մասին» վերնագրով: Այն հաջողություն չունեցավ:

Այն ժամանակ Ռուսոյի երիտասարդական ավյունը դեռ այնքան ուժեղ էր, որ, շնայած պարտությունը, նա անմիջապես առանց ընդմիջման, իր ողջ եռանդը կենտրոնացրեց միանգամայն այլ առարկայի՝ շախմատային խաղի արվեստի տիրա-

պետման վրա: Նա բազմիցս հանդիպել էր Ֆիլիդորի և այն ժամանակվա ուրիշ փառաբանված վարպետների հետ, համբերատարությամբ և համառությամբ հաշվում էր տարբերակները, ձգտում էր հասու լինել շախմատի տեսության գաղտնիքներին: Նա ուզում էր առաջնության հասնել այդ իմաստուն արվեստի մեջ և դրա համար ո՛չ ժամանակ, ո՛չ էլ ջանք էր խնայում: Պարզվեց, որ այդ ամենը իզուր էր: Այդպես էլ նա շտվորեց հաղթել վաթսունչորս վանդականոց խաղատախտակի վրա:

Նորից Ռուսոյին էր մոտենում պատանեկությունից այնքան սովորական դարձած աղքատությունը: Աշակերտները վերացան, վատակած դրամը ծախսվեց: Գրպանները դատարկ էին: Ի՞նչ միջոցներով ապրել: Ի՞նչ անել: Ինչի՞ վրա հույս դնել: Ռուսոն պատասխան չէր գտնում անխուսափելիորեն վրա հասնող այս հարցերին: Նա դարձյալ իրեն զգում էր ավազահատիկ՝ մոլեգնող օվկիանոսի հորձանուտում: Նա անզգայացման մեջ էր: Նա թափառում էր մայրաքաղաքի նեղլիկ փողոցներում, այնտեղ, որտեղ նա իրեն կարող էլ զգալ աննկատելի ու անհայտ՝ պատահական անցորդ, թափառաշրջիկ ճանապարհորդ վիթխարի բաղաքում: Նա կարող էր ժամերով նստել Նոտր-Գամ դը Պարի տաճարի մոտ գտնվող փոքրիկ պուրակում և նայել, թե ինչպես են աննկուն ճնճուկները թռչկոտում փոշոտ, ավազե շավիղների վրա, ինչպես են կարճիկ, կարմիր թաթիկներով դանդաղ շարժվում ծուլ աղավնիները, միայն իրենց տեսանելի ինչ-որ բան փնտրելով ճամփակողքի փոշու մեջ...

Իսկ ի՞նչ է լինելու հետո:

Նրա փարիզյան նոր մտերիմներից մեկը, տարեց մի մարդ՝ հիզվիտ հայր Լուի Բերտրան Կաստելը, տարօրինակություններ տնեցող երաժիշտը, որն ստեղծել էր մի յուրօրինակ տեսություն, համաձայն որի երաժշտական գամայի յոթ նոտաները համապատասխանում են սպեկտրի յոթ գույներին, տազնապով էր հետևում երիտասարդ դերբուտանտին, մի անգամ Ռուսոյին ասաց. «Քանի որ երաժիշտները, քանի որ գիտնականները միաբերան չեն երգում ձեզ հետ, անցեք մյուս կողմը և սկսեք այցելել կանանց... Փարիզում միայն կանանց միջոցով կարելի է հասնել ինչ-որ բանի»:

Կաստելը իր երիտասարդ ընկերոջը ներկայացրեց բարոնուհի դը Բեզանվալին և նրա դստերը՝ մարկիզուհի դը Բրոլլին: Ժամեփակր ուրիշ ընտրություն չունեի: Նա հետաձգում էր իրեն ճըն-

շող ալոյ այցելութիւնը, բայց ի վերջո, իր վրա ուժ գործադրելով գնաց երկելի տիկնանց մոտ:

Ռուսոյին ընդունեցին բարեհամբույր, նրա նկատմամբ ուշադրութիւն ցուցաբերեցին: Ակնհայտ էր, որ Կաստիլը նրան ներկայացրել էր ամենաձեռնառու ձևով: Բայց երբ մոտեցավ ճաշի ժամը, որին սիրալիք կերպով հրավիրեցին Ռուսոյին, նա հասկացավ, որ ուզում են նրան տեղ տուլ բուֆետային սենյակում, ազախնու հետ միասին: Նրա պլեբեյի հպարտութիւնն ընդզկեց, բայց նա չսկսեց բացարձեւ: Պատճառաբանելով անհետաձգելի գործերը, նա վեր կացավ, որպեսզի հրաժեշտ տա: Բարոնուհի դը Բեգանվալի դուստրը հասկացավ թույլ տված սխալը՝ տիկնայք սկսեցին մտնել Ռուսոյին համառորեն խնդրել ճաշելու իրենց հետ: Վերջիվերջո նա համաձայնվեց, բայց սեղանի շուրջը, գետ շնացնելով ուշքի գալ ապրած ստորացումից, լուսկաց էր, մտալլ, ոչ սրամիտ:

Բայց և այնպէս նա ճաշից հետո կարողացավ վերականգնել ոչ իր սգտին խախտված հավասարակշռութիւնը և մի որոշ ժամանակ ուշադրութիւնը գրավեց իր վրա՝ գրպանում էր կրօնում գրած մի բանաստեղծութիւն, որը նա կարգաց բարձրաձայն. վարպետորեն էր կարդում: Տիկնայք հուզված էին, նրան նույնիսկ թվաց, թէ նրանք լալիս են:

Մի քանի օր անց նրա մասին ամբողջ Փարիզը դիտեր: Այդ հաճելի երիտասարդի մեջ իսկույննեթ հայտնաբերեցին բազում տաղանդներ՝ բոլորն ընդունեցին, որ նա հիանալի պոետ է, ոգեշունչ երաժիշտ, շնորհալի կոմպոզիտոր, որ նա խելացի է, շատ բան գիտէ, որ նա գեղեցիկ աչքեր, ուժեղ ձեռքեր ունի: Նրանում միայն արժանիքներ էին նկատում:

Ժան-ժակ Ռուսոն դարձավ Փարիզի 1742 թվականի մոդան, հիմա արդեն նրան ձեռքից ձեռք էին խլում: Նրան հրավիրում էին Փարիզի լավագույն տները:

Շուտով Ռուսոն դարձավ տիկին Դյուպենի սալոնի հաճախելի հյուրը: Այդ ջահել տիկինը Փարիզի ամենահարուստ կանանցից մեկի համբավ էր վայելում: Լյուդովիկոս XV-ի ֆինանսական սիրեցյալ խոշորագուն հարուստի՝ Սամյուել Բերնարի մորգանատիկ դուստրը՝ Լուիզ-Մարի-Մագդենն Ֆոնտենը դարձավ թագավորական խորհրդական և գլխավոր կապուլառու Կլոդ Դյուպենի կինը, նրա, ով իր կարողութիւնը կրկնապատկել էր այն բանից հետո, երբ այն միացրեց իր կնոջ օժիտին:

Դյուպենների անունը հայտնի էր ոչ միայն Փարիզում: Դեռ հիմա էլ Լուարայի և նրա վտակների երկայնքով գրոսնոդ ճանապարհորդը, դիտելով իր ճանապարհին հանդիպող հոյակերտ գլխակները, չի կարող չզմայլվել ասես ջրի հարթութիւնն ընդ կախված՝ իր մոնումենտալութիւնը և միենույն ժամանակ թեթևութիւնը: Մայրցնոդ Շենտենո դղյակով: Դեռևս XVI հարյուրամյակում կառուցված այդ հնամենի շէնքի թնդունով արձագանքող պատշգամբարտահներով ու զահլիճներով ճանապարհորդներին ուղեկցող զիդը, թվարկելով նրա նախկին տերերին ու լնակիչներին, ակնածանքով կտա նաև տիկին Դյուպենի անունը: Երկու հարյուր տարի առաջ, ամուսն ամիսներին, էա սրտի ու լուսնի մեջ, ասես քարացած այդ հակալական դաշլաններ կենդանացնում էր իր գրնգուն ձայնով, կլավեսինի բնութայ ճնշումներով:

Բայց վերագոհանք անցյալին, XVIII դարին: Տիկին Դյուպենի ազդեցութիւնը նրա հարստութիւնից չէ, որ գալիս էր: Ռուսոն «Նոտաումաններում» նրան անվանել է Յրանսիայի ամենագեղեցիկ կանանցից մեկը: Ըստ երևույթին, դա ճշմարիտ էր: Այն ժամանակվանից պահպանված՝ Նասիեի վրձնի դիմանկարը պատկերել է ցայտունորեն բաց շիկահեր, բարձր ճակատով, մեծ, մթին, ուշադիր աչքերով, նուրբ ձվաձև, գրեթէ մանկական գնդով ջահել կնոջը՝ ապեցուն բնորոշումից սպրդող այն թովչանքով, որի մասին մի ժամանակ, հասկանալի է այլ տիկնով, գրել է Մ. Յու. Լերմոնտովը: Բացի այդ, տիկին Դյուպենի գեղեցկութիւնն ու հարստութիւնը հաշու կերպով դուրսկցվում էին կարգացածութիւնն ու բնատուր խելքի հետ: Նա չինք տարով մեծ էր Ռուսոյից, և նրա տարիքն ու համեստ եկվոր երաժշտի նկատմամբ հասարակական գերազանցութիւնը թույլ տվեցին նրան պահպանել գործվալից-հովանակորական տուր իր հյուրի հանգեպ:

Այն պահից ի վեր, երբ տիկին Դյուպենը ճաշի սեղանի մոտ իր կողքին նստեցրեց երիտասարդ երաժշտին, խրախուսական-բնքազին լուսեր փոխանակելով նրա հետ, ժան-ժակն իրեն պարտաված ճանաչեց: Նա գերված էր տիկին Դյուպենի թովչանքով: Նրան էին ուղղված նրա բոլոր մտքերը: Չհանդգնելով նրան արտահայտել իրեն հուզող զգացմունքները (որը բացի գրանից այնքան էլ հեշտ չէր, տիկին Դյուպենը թագուհու նման էր հայտնվում՝ շրջապատված իր երկրպագուների շրու-

խմբով), ժան-ժակը սրտի արագազարկ բարախյունով նրան հանձնեց մի նամակ, որը սիրո խոստովանություն էր: Նամակին պատասխան չհետևեց, Ռուսոյի հետ սկսեցին խոսել սառը և շոր. հետո Ֆրանկեյ Դյուպենը՝ տիկին Դյուպենի խորթ զավակը, Ռուսոյին հայտնեց, որ լավ կլինի, եթե Ռուսոն այլևս չհամախի այս տունը: Վերավորված Ռուսոն պատրաստ էր կատարել այդ դաժան կարգադրությունը, բայց նրան զսպեցին՝ բաց թողնել Ռուսոյին, նրանք նույնպես չէին ուզում: Այդպես սկսվեց կանացի այս բարդ խաղը: Բայց այդ սիրավեպի շարդարանքը մեզ հետո կտաներ:

Տիկին Դյուպենի սալոն համախիսն ունեցավ և այլ կարևոր հետևանքներ: Ճաշի սեղանի շուրջ գավառից եկած անհայտ երամիշար կարճ ծանոթություն հաստատեց զարի շատ նշանավոր անձանց հետ: Այստեղ անկաշկանդ գրույցներ էին վարում արտաքին գործերի մինիստր, երիտասարդ պրելատ (բարձրատիճան կաթոլիկ:— Թարգմ.) Ֆրանսուա-Իռախիմ դը Պիեր դը Բերնին, որը մեծ ազդեցություն ուներ պալատում. արդեն այն ժամանակ նշանավոր, համաշխարհային փառքի լուսապսակով շրջապատված Ֆրանսուա-Մարի Վյուտերը. հրապուրիչ աբբա դը Սեն-Պիերը, որն իր անունը փառաբանել էր հավերժ խաղաղություն հաստատելու պլանով. այն ժամանակ դեռ երիտասարդ, բայց արգեն ճանաչում նվաճած բնախույզ Ժորժ-Լուի դը Բյուֆոնը՝ «Բնագիտության պատմության» ապագա հեղինակը. հայտնի փիլիսոփա և բարոյախոս, Գիտությունների ակադեմիայի անփոփոխ գիտական բարտուղար Բերնար դը Բովիե դը Ֆոնտենելը. տիկնայք, որոնց ատջև բացվում էին Փարիզի սալոնների ղոները՝ արքայադուստր դը Ռոզանը, կոմսուհի դը Ֆորկալկեն, լեդի Հերվեյը, տիկին դը Միրենուան, տիկին դը Բրինյոլը և շատ ուրիշներ:

Կարո՞ղ էր, արդյոք, երբևէ նախկինում անտուն թափառակունը, պարոններ դը վերսիլիաների երեկվա սպասավորը երազել այն մասին, որ ինքը շուտով Դյուպենների՝ Փարիզում գտնվող հոյակապ առանձնատան շքեղազարդ հյուրասենյակում, ինչպես հավասարը հավասարի հետ, զրուցելու է Ֆրանսիայի և Եվրոպայի ամենանշանավոր մարդկանց հետ: Այնուամենայնիվ, 1742 թվականի վերջից սկսած Ռուսոյի ճակատագրի կտրուկ շրջադարձը պետք է քննել ավելի ուշագիտ:

Մեկ դարանակալում է Փարիզի բարձր հասարակությունում Ռուսոյի սրբնթաց հաջողության աղավաղված, գոհակություն աստիճան սխալ մեկնաբանության վտանգը: Զի կարելի վիճարկել՝ իրոք որ նա արագորեն և առանց որևէ նկատելի բաների գործադրելու ճանաչում նվաճեց 1742—1743 թվականների Փարիզի սալոններում:

Արդյոք Ռուսոյի հաջողությունը Փարիզի արտնչյալ հասարակությունում գրեթե դատական դարձած «դեպի վեր ասանող ուղու, ավանդական կարիերայի տարբերակներից մեկը չէ՞ր գավառից եկած այն երիտասարդի, որն արագորեն բարձրանում է մեղսալից և միշտ գայթակղիչ Փարիզի փառքի աստիճաններով: Ակամայից ինքնաբերաբար պահանջ է առաջանում զուգահեռ անցկացնել կամ համեմատել XIX դարի նշանավոր գրական հերոսների՝ Ստենդալի Ժուլիեն Սորելի, Բալզակի Ռաստինյակի կամ Մարսիմ դյու Թրայի հետ:

Նման համադրությունների կամ աննվազն 1742—1743 թթ. Փարիզում Ռուսոյի ունեցած հաջողությունների՝ իբրև կարիերայի ավանդական ճանապարհի մի մասնակի դեպքի, սոցիալական հիերարխիայի աստիճաններով դեպի վեր բարձրանալու մեկնաբանության գայթակղությունը այնքան մեծ է, որ դրանից շիտասափեցին նույնիսկ Ռուսոյի ստեղծագործության որոշ յուրյ հետազոտողներ: Օրինակ, «Ժնևի հանրապետության քաղաքացու» ժառանգության մի այնպիսի նուրբ գնահատող, ինչպիսին է Ի. Ս. Վերցմանը, Ռուսոյի մասին հետաքրքիր գրքում գրում էր, որ Փարիզում այդ պլեբեյը ստիպված էր լինում հանդուսնալ անսովոր միջավայրին «ամենից առաջ իր իսկ առաջ գնալու նպատակով»<sup>8</sup>: Է՛լ ավելի ուղղամտորեն և կտրուկ, որպես «մայրաքաղաքային կարիերայի հեռանկարով» հափշտակություն է բնորոշել Կ. Ս. Գերթավինը Ռուսոյի ժամանումը Փարիզ 1742 թվականին<sup>9</sup>:

Այսպիսի մեկնաբանությանը դժվար է համաձայնել: Ըստ երևույթին, հարցը պետք է ավելի խորությամբ դրվի: Երիտասարդ Ռուսոյի յուրաքանչյուր մերձեցում կամ համեմատություն Ռաստինյակի կամ Լյուսիեն Ռյուրամպրեի, կամ Մարսիմ դյու Թրայի, կամ Բալզակի «Մարդկային կատակերգության» այլևայլ հերոսների հետ, որոնք մարմնավորում էին փայլուն կարիերա, բոս երևույթին սխալ է: Եվ ոչ միայն այն պատճառով, որ XVIII դարում, Լյուդովիկոս XV-ի ֆեոդալաբսոլյուտիստական միա-

պետութեան ժամանակ, մի շարք պատճառներով դեռևս պայ-  
մաններ չէին հաստենացել Ռասսիայակի աիպի հերոսների  
ծննդյան համար: Այն, որ Ռասսիայակի կերպարը ստեղծվել էր  
դրամի անսահման իշխանութեան դարաշրջանում, իհարկե, պա-  
տահականութիւնն չէր: Եվ, այնուամենայնիվ, եթե ռասսի-  
յակների ժամանակը դեռ չէր եկել, ապա XVIII հարյուրամյակի  
Փարիզի իրական կյանքում, նրա բարքերի ժամանակագրու-  
թեան մեջ դժվար չէր գտնել փառքի, դրամի, պաշտոնների,  
շքանշանների սիրահարների, այսինքն «կարիերայի մարդկանց»:  
Որինակների հետևից հեռու գնալ պետք չէ՝ բավական է հիշեց-  
նել բուրբին հայտնի անունը՝ Ֆրիդրիխ-Մեյսիոր Գրիմմ:

Հիմնականը, սակայն, դրանում չէ: Հիմնականն այն է, որ  
Ռուսոն ընդհանրապես չէր պատկանում «կարիերայի մարդ-  
կանց» թվին: Նա չէր փնտրում հեշտութեամբ դեպի «վեր տանող  
ուղի»: Գեո ավելին, նա գիտակցաբար մերժում էր այդ ուղին.  
Նրան չէին գայթակղում ոչ հարստութիւնը, ոչ շքեղութիւնը,  
ոչ փառքը: Ինչի՞ են պետք դրանք:

Փոքր ինչ առաջ անցնելով ասենք ավելի որոշակի. երի-  
տասարդ Ռուսոն XVIII դարի 40-ական թվականների Փարիզի  
հյուրասնեյակներում՝ Բալզակի «Մարդկային կատակերգու-  
թեան» Ռասսիայակի գլխավորութեամբ նշանավոր հերոսների  
նախորդը չէ. սա հակոտնյա է, սա Հակա-Ռասսիայակ է: Բայց  
այս բանն, բայց երեւոյթին, պարզաբանում է պահանջում:

### III

Ժան-ժակ Ռուսոյի ստեղծագործական ժառանգութեան հե-  
տադրոտողների մեծ մասը, — այստեղ ևս հարկ կլինի թվարկել  
գրեթե բոլոր հայտնի անունները՝ Լուի Գյուլյոն, Գանիել Մորնե,  
Ռոբեր Գերատե, Վ. Պ. Վոլգին, Ի. Ե. Վերցման, Ժան Ստարո-  
բինսկի և շատ ուրիշներ, — որպես կանոն իրենց վերլուծութիւնը  
սկսում են 1749 թվականից, այսինքն Գիժոնի «ակադեմիայի  
առաջարկած՝ «Նպաստե՛լ է, արդյոք, գիտութեաննայի և ար-  
վեստների զարգացումը բարքերի մարմանը» թեմայով տրակ-  
տաւը նրա կողմից ստեղծվելու ժամանակվանից:

Շատ բաներում նման որոշումը գիտնականներին թելադրել  
էր ինքը՝ Ժան-ժակ Ռուսոն: 1762 թվականի հունվարի 12-ին  
Մալզբերին ուղղված նամակի մեջ, իսկ այնուհետև «Խոստո-

վաններում» նա վառ և տպավորիչ կերպով պատմել է, թե  
ինչպե՞ս մի անգամ հուլիսյան շոգ օրերից մեկում՝ Վենսենի ռզակ  
տանոց ձանձրալի ճանապարհին, որտեղ նա ուղում էր այցելել  
կոպտավորված Գիդրոլին, նա, հանգստանալով, «Մերկուր դը  
Ֆրանս»-ում կարդաց հաղորդում՝ նշված թեմայով Գիժոնի ակա-  
դեմիայի հայտարարած մրցանակաբաշխութեան մասին: Հա-  
կարծակի կարծես նրա միտքը պայծառացաւ. նրան «Եւրպային  
լույսի հեղեղները, պայծառ մտքերի շարանը», որ հորպցին  
նրա վրա. նա ցնցված էր. նա անմեկնելի հուզմունք էր ապ-  
րում. «ապշեցուցիչ պարզութեամբ նրա առջև հասնեցին հասո-  
րակական սիստեմի բոլոր հակասութեանները»: Նա այնպես  
պղկածված էր, որ կարծես որոշ ժամանակ գրկվեց գիտակ-  
ցութեանից<sup>10</sup>:

Ավելի ուշ Ռուսոն Ռուանը այդ պատմութեանն առաջիկ մեծ  
գրամատիկական համոզութեան տվեց. «և հանկարծ, միան-  
գամայն անսպասելի, հանճարը փայլատակեց ճիշտ ինչպես  
կայծակ, մոլորեցրեց նրան ինչպես Պողոս սուրբայլին, ջեր-  
մացրեց և նրա ձեռքի մեջ դրեց շիկացած սուրը՝ նրա գրչա-  
ծայրը»<sup>11</sup>:

Ռուսոն հաիշտակվելով հեղինակ էր, և 12—17 տարի անց իր  
պատկերած իրադարձութեանը, բայց երեւոյթին, նա այդպես էլ  
պատկերացնում էր: Ոչ մի հիմք չկա կասկածի տակ վերցնելու  
նրա պատումը: Սակայն պետք է նկատել, որ նման ակնթար-  
թույին պայծառացումը առանց նախնական խորհրդածութեան-  
ների, առանց նախորդող մտքի երկարատև աշխատանքի, առ-  
նտարակ անհնարին կլիներ:

Այնուհետև, պետք է ուշադրութեան անել Ռուսոյի ավելի  
վաղ շրջանի ստեղծագործութեանները, իհարկե, ոչ փոխափա-  
տական-բաղաբական տրակտատները, — այդպիսիք իսկապես  
որ չկային, դրանք երևան եկան 1749 թվականից հետո, — բայց  
նրա բանաստեղծական փորձերը՝ նրա բանաստեղծութեանները,  
նրա «Ուղերձները»՝ ստանավորների ձևով, թվագրված 1739—  
1742 և ավելի ուշ տարիներին, շատ կարևոր են Ռուսոյի դա-  
դափարտական ձևավորումը հասկանալու համար: Դրանք անհեր-  
բիլորեն ապացուցում են, որ Ռուսոյի հիմնական գաղափարա-  
բանական հայացքները կազմավորվել են արդեն 1740—  
1743 թթ., ամենից առաջ կենսափորձի ազդեցութեան ներքո.  
ամբողջ հաջորդողը եղել է շարունակութեան, զարգացում:

Եվ վերջապես, վերջին դիտողությունն այս կապակցությամբ: Հետազոտողները նշանավոր գրողի գրական ժառանգությունն ավելի հաճախ կարծես մասնատում են բաղկացուցիչ տարրերի՝ Ռուսոն որպես սոցիալական մտածող, Ռուսոն որպես հեղափոխական, Ռուսոն որպես բուսաբան, Ռուսոյի մանկավարժական գաղափարները, Ռուսոյի տնտեսագիտական հայացքները, Ռուսոյի էգալիտարիզմը, Ռուսոյի ռացիոնալիզմը, Ռուսոյի ումանտիզմը և այլն:

Անվիճելի է, հետազոտության այդ մեթոդն էլ է հարկավոր և օգտակար: Բայց այն ամենն էլ չի վերացնում և չի փոխարինում ամբողջությամբ վերցրած Ռուսոյի կերպարի սինթետիկ վերստեղծմանը, ինչպես նաև նրա կյանքի ուղուն, նրա գաղափարական էվոլյուցիային (վերջինիս ամբողջ բարդությունը և հակասականությունը հանդերձ) հետևելու անհրաժեշտությունը: Առանց սրե՛լ ջանքերի դեպի իրեն ընթացող փառքից, փողերից, պատվից հրաժարվող և հանուն ապագա սերունդների երջանկության՝ իր ժամանակակիցների հետ գծոված հանճարեղ մենակցաց մասձեղի այդ տարօրինակ ճակատագիրը կարող է հասկանալի դառնալ, եթե կարդացվի էջ առ էջ, ինչպես վեպը:

Եվ այսպես, մենք վերադառնում ենք ընդհատված պատմությանը:

Փարիզ գալուց մոտավորապես կես տարի առաջ «Ուղերձ պ. րն Բորդին» ստեղծագործության մեջ՝ գրված 1741 թվականին կրոնում, Ռուսոն գրում էր.

*Բայց ես, համառ կողմնակիցս հանրապետության, Չեմ խոնարհվի հանցախմբի առջև արքունիքի, Փարիզի վարքը չեմ ընդօրինակի, Հարուստին բնավ չեմ շողորթի...<sup>12</sup>*

Այս տողերում ձևակերպված է մի ամբողջ ծրագիր: Այն ամենից առաջ ուշադրավ է նրանով, որ Ռուսոն իրեն հայտարարում է ոչ միայն պալատական հանցախմբի բացահայտ հակաակորդ (թագավորական իշխանության հեղինակության արդեն սկսված անկման այդ շրջանում դա այնքան էլ հազվագեպ չէր), այլև հարուստների թշնամի: «Փարիզյան կանոնադրությունը»՝ հարուստների տիրապետության կանոնադրությունն

էր, և հենց այդ պատճառով այն ընդունելի չէ բանաստեղծի համար:

Միզուցե, կասի ոմն ընթերցող, դա միայն գրչածայրից պատահականորեն պոկված բառե՞ր են, գրական կեցվածք, զրնգուն ֆրաղով թոուցիկ հրապուրա՞նք:

Բայց այդ մոտիվը, ավելի ստույգ, այդ թեման համառ կերպով կրկնվում է այն ժամանակվա բանաստեղծական ուղերձներում: Երիտասարդ Ռուսոն՝ XVIII դարի առաջին կեսի ֆրանսիական սակավաթիվ գրողներից մեկը, բաց ճակատով համարձակ մարտի մեջ մտավ հարստության զորավոր տերերի հետ:

*...Քամահրանքով է հարուստը վճարում ինձ,  
Բայց մենք քվիտ ենք արել ու պարտ չենք միմյանց:*

Ռուսոն «Ուղերձ պ. րն Բորդին» ստեղծագործության մեջ ցույց է տալիս խորությունն ու անհաղթահարելիությունը այն անզունդի, որը բաժանում էր նրանց, «ովքեր առաքինության են դաստիարակվել աղքատությանը», և «ստոր կրեզներին», որոնց խնկարկել նա չի ուզում<sup>13</sup>:

Նման մոտիվներ են զարգանում և «Ուղերձ պ. րն Պարիզյին» ընդարձակ ստեղծագործության մեջ, որը գրված է նույն 1741 թվականին:

*Մեծատհմիկին չէի հանգզնի ես բնավ առել,  
Եթե լինեին նրանք հարգարժան...*

Կամ էլ.

*...Մի՞թե ձեանալ մի կեղծ բարեպաշտ,  
Մի կտոր հացի  
Եվ հանուն տաքուկ մի տեղի համար  
Խնկարկել այդպես ի փառս երկնի...<sup>14</sup>*

## IV

Եվ այսպես, մենք կրկին վերադառնում ենք ավելի վաղ մեր առաջադրած հարցին՝ իսկ ո՞րն է հաջողության գաղտնիքը, ինչն՞ով է բացատրվում Ռուսոյի անսպասելի ճանաչումը Փարիզում 1742—1743 թվականներին:

Այն ժամանակ նա դեռ ոչ գրող էր, ոչ փիլիսոփա՝ ոչ միայն Փարիզի աղնվակիր լյա՛մ ինտելեկտուալ հասարակության աչ-

քում, այլև սեփական գնահատմամբ: Իհարկե, նա կարող էր հորինել և՛ կանցսն, և՛ եղևբերդ, և՛ շափածո փիլիսոփայական ուղերձ, վերջապես, խայթող էպիգրամներ, բայց ի՞նչ օղուտ դրանից: Ո՞վ չէր կարողանում դա անել XVIII դարում: Նա ինքն էլ այն ժամանակ, ինչպես դա պահճալու է դառնում նրա նամակներից, նրա ուշ շրջանի ինքնակենսագրությունից, չէր էլ եկեղևորում գրողի աշխատանքի, առավել ևս գրողի փառքի մասին: 40-ական թվականների սկզբին ժան-ժակ Ռուսոն որպես պրական անուն գոյություն չուներ:

Ամենաշատը, որ կարելի էր ասել երիտասարդ ժնեյու մասին՝ ընդունակություններից ոչ դուրկ երամիշտն էր. նա հորինել է մի քանի խիստ հաճելի երաժշտական պիեսներ, որոնք ոչ ոք չէր ուզում ընդունել բեմադրության համար. նա հմուտ երաժշտական մանկավարժի և նույնիսկ երաժշտության տեսության գիտակի համբավ ուներ:

Փարիզի քառասնական թվականների բարձր հասարակության մեջ Ռուսոյի հաջողության գաղտնիքը սպասում է իր բացատրությանը: Բայց որպեսզի փորձենք գտնել այդ հարցի հիմնավորված, համոզիչ պատասխանը, բնականորեն մեր շարադրանքը և վերադառնանք Ռուսոյի կենսագրության նախորդ փուլերին: Առանց ժան-ժակ Ռուսոյի կյանքի ուղու համառոտ, թեկուզև ընդհանուր գծերով բնութագրության դժվար է հասկանալ նրա հետագա ճակատագիրը:

Ընդունված է համարել, — այդպես են ենթադրում մեծ գրողի կյանքի և ստեղծագործության հետազոտողները, — որ Ռուսոն ողբերգական կյանք է ապրել: Դա այդպես է և այդպես չէ:

Հիշեցնենք նրա կենսագրության հայտնի փաստերը: Ժան-ժակ Ռուսոն ծնվել է 1712 թվականի հունիսի 28-ին, ժնեյում, «բաղաբացի Իսահակ Ռուսոյից և քաղաքացուհի Սյուզան Բերնարդից»: Ծնողները հայրական և մայրական դժերով ֆրանսիացիներ էին, նրանց մայրենի լեզուն ֆրանսերենն էր, և ժան-ժակը նույնպես իրեն ֆրանսիացի էր համարում: Բայց նա երբեք չէր մոռանում, որ ծնվել է սրպես ժնեյի ազատ քաղաքացի և ձևականորեն իրեն պատկանող «ժնեյի հանրապետության քաղաքացի» կոչումը անհամեմատ բարձր էր դասում Ֆրանսիայի թագավորի հպատակի՝ իր պատկերացումներով ստորացուցիչ դրավժանից: Ժան-ժակ Ռուսոն ամբողջ կյանքում իզեպլակա-նացնում էր ժնեյը: Այդ նահապետական-պահպանողական պատ-

րիտկան հանրապետությունը ամենևին էլ տղամուտքյան և հավասարության օաղիս չէր ֆեոդալական բանապետության անպատում, ինչպիսին այն պատկերանում էր Ռուսոյի երեսակայության մեջ: Սթափեցուցիչ դաժան դասերը, որ նա ավելի ուշ բազմիցս ստացել է իր համաքաղաքացիներից, աչպես էլ շխարողացան նրան լիովին բուժել պատրանքներից:

Ժան-ժակը լիակատար իրավունքով կարող էր իրեն համարել մոլորվորդի զավակ: Նա դուրս էր եկել ժողովրդի ցածր խավերից: Ռուսոյի առհմը ուներ վաղեմի ծագումնաբանություն՝ հիշվում էին գյուղացիներ, կաշի դաբաղողներ, ժամագործներ, մահադագործներ: Նրա հայրը՝ Իսահակ Ռուսոն, ժամացույցի վարպետ էր. ժնեյի արհեստավորական աշխարհում դա առավել որակյալ և լավ վարձատրվող մասնագիտություններից մեկն էր. րնտանիքը կարողանում էր ապրել հոր վաստակով՝ համեստ, բայց նյութապես տպահով:

Ժան-ժակը չգիտեր իր մորը՝ նա մահացել էր սրգու ծնվելուց անմիջապես հետո: Սկզբում հայրը շատ էր կապված մայրական գուրգուրանքից զրկված երեխայի հետ: Ըստ երևույթին, նա պրապտավոր մարդ էր՝ ընդունակ, կարգացած, լայն մտահորիզոնի տեր: Նա համոզված հանրապետական էր և վաղ տարիներից որդուն ներշնչում էր հանրապետական անհողդողության սգի և հպարտության զգացում հանրապետության նկատմամբ, որտեղ նրանք ծնվելու և ապրելու բախտ էին ունեցել: Բայց հանրապետական առաքինությունները ավագ Ռուսոյի մեջ տարորինակ կերպով զուգակցվում էին արկածների նկատմամբ չակվածության հետ: Տարբեր հրապուրանքները ստիպում էին սրգու դաստիարակությունը վերալստահել մորաբույր Սյուզանին, իսկ այնուհետև քեռի Բերնարին: Երբ լրացավ ժան-ժակի տասը տարին, նրա հայրը սուր կոնֆլիկտի մեջ էր մտել սպաներից մեկի՝ ոմն կապիտան Գոտիեի հետ: Նորագույն հետադոտողները պատշաճ հիմքով հակված են ընդունել, որ այդ ընդհարումը տեղի է ունեցել քաղաքական հողի վրա: Ինչպես էլ որ լինեք, հավանորեն ավագ Ռուսոյին բանտային կալանք էր սպանում, և նա խոհեմ համարեց թողնել ժնեյը: Ավելի ուշ Իսահակ Ռուսոն ամուսնացավ երկրորդ անգամ. հայր և որդի Ռուսոների ճանապարհները գնալով ավելի էին բաժանվում միմյանցից:

Ժան-ժակը մեծանում էր ինչպես բոլորովին որբը: Նա ամբողջովին հանձնված էր ինքն իրեն. մյսամբ դա նրա օգտին էր: Մտողներն ունեին մեծ գրադարան՝ վեպեր, պոեզիա, պատմական աշխատություններ: «Նոստովանանքում» Ժան-ժակը թվարկում է այդ շրջանում իր կարգացած գրքերից մի քանիսը: Դրանք իրենց դադափարական նկրտումներով տարբեր հեղինակներ էին: Նրա համար միևնույն շարքում են կանգնած այնքան պահպանողական գրողներ, ինչպես Բոսյուեն՝ արտլուստիզմի և մարտնչող կաթոլիկության կատաղի պաշտպանը, կամ ինչ որ շափով սրտամոտ կեսյուները: Այդտեղ էին և դարի առջևից ընթացող գրողներ Լաբրյուսերը, Ֆոնտենելը, Մոլիերը: Այդ անունների կողքին էին անտիկ գրողներ Պլուտարքոսը, Օվիդիոսը<sup>15</sup>: Ըստ երևույթին, այդ վաղ տարիքում Ժան-ժակը (և դա բնական է) գեռ չէր կարող լրիվ գլուխ հանել կարգացածից, բայց ամենակարևորն այն էր, որ նա տարվել էր ընթերցանություն, նա կլանում էր գիրք գրքի հետևից:

Ժան-ժակին խղճում էին. նրա ամենամոտ բարեկամները, հարևանները, բոլորը գիտեին, որ տղան որք է և աշխատում էին նրան գործվալից խոսքեր ասել: Ավելի ուշ «Նոստովանանքում» Ժան-ժակը քնքշանքով, խանդաղատանքով էր հիշում իր որբ մանկությունը. կեսդարյա հեռավորությունից այդ մանկությունն իրեն թվում էր որպես իր կյանքի ամենաերջանիկ շրջանը:

Երբ լրացավ Ժան-ժակի տասներեք տարին, խնամակալ հարազատները սթափվեցին՝ ժամանակն է տղային արհեստ սովորեցնել: Սկզբում նրան որպես աշակերտ հանձնեցին գրագրին, իսկ այնուհետև, գրասենյակային աշխատանքին լրիվ անընդունակ լինելու պատճառով, տեղավորեցին փորագրիչ Դյուկոմենի արհեստանոցում:

Վերջինս կոպիտ, անբարյացակամ մարդ էր: Երբ Ժան-ժակը մտավ այդ մութ, ցածրիկ արհեստանոցը, նա հասկացավ, որ շեմի այն կողմում մնաց անվրդով մանկությունը: Այստեղ ոչ մեկին չէր հետաքրքրում, որ տղան որք է մեծացել. ոչ ոք նրան գործվալից խոսք չէր ասում, նրա վրա բղավում էին, նրան շտապեցնում էին. «Ավելի՛ արագ, ավելի՛ արագ»: Արհեստանոցի տիրոջ ծանր ձեռքը չէր զլանում հարվածել նրա վզակոթին:

Այդպես սկսվեց կյանքի առաջին աշխատանքային դպրոցը: Ժան-ժակը չէր հաշտվում. նրան չէր կարելի ոչ ահաբեկել, ոչ էլ հյու հնազանդ դարձնել: Բայց շուտով նա հասկացավ՝ մտրակով կացնահոնակը շես ջարդի: Այս ատելի տիրոջ դեմ այլ կերպ պետք է պայքարել՝ պետք է կեղծել, խորամանկել, նրա դեմ գաղտնի, անհաշտ պատերազմ մղել: Ժան-ժակը դիտավորյալ կերպով գլուխ էր պահում աշխատանքից, ձևացնում, թե իբր կատարում է տիրոջ հրամանը, իսկ իրականում ձգձգում կամ դիտավորյալ վատ էր կատարում հանձնարարությունը: Բայց դա քիչ էր, Ժան-ժակը, ինչպես նա ինքն է այդ մասին պատմել «Նոստովանանքում», սկսեց գողանալ տիրոջից: Նա գողանում էր ոչ այն պատճառով, որ նրան գայթակղում էր գողությունը, հեշտ ու արագ հարստանալու հնարավորությունը. դա ատելի տնօրենի դեմ տարվող գաղտնի պատերազմի ձևերից մեկն էր: Ժան-ժակը գողանում էր խնձոր, տանը եղած ինչ-որ մանր-մունր բաներ՝ ամեն ինչ, բացի փողից, արդեն այն ժամանակ փողը նրա մեջ զզվանք էր առաջացնում: Տասներեք տարեկան տղայի՝ դեռահաս աշակերտի մեջ այդպես արթնացավ խոտովության ոգին, պայքարի ոգին:

Արդեն պատանեկան տարիքում Ժան-ժակի բնավորության մեջ ի հայտ եկավ հակում դեպի անսպասելի համարձակ որոշումներ կայացնելը: Մի անգամ, երեկոյան ուշ ժամին վերագառնալով կիրակնօրյա զրոսանքից, Ժան-ժակը քաղաքային դարպասները փակ տեսավ: Դրեթե առանց մտավարանման կայացրեց մի որոշում, որը նրան փրկարար թվաց՝ ընդմիջ լքել իրեն այնքան զզվեցրած Դյուկոմենի արհեստանոցը, ճնշման ու բռնության այդ մտալլ, շարակամ աշխարհը: Դա պատահեց 1728 թվականին, Ռուսոն այն ժամանակ տասնվեց տարեկան էր: Միայն պատանեկան հանակում կարելի էր այդպիսի համարձակ քայլի դիմել: Ինչպիսի՞ վստահություն պետք էր տածել մարդկանց նկատմամբ, ինչպիսի՞ հավատ՝ երջանիկ ճակատագրի, որպեսզի համարձակություն ունենալ մենակ գնալու հսկայական, առեղծվածային աշխարհը: Սկսվում է մի նոր, ազատ, վտանգներով, անհայտություն միջուկ կյանք: Սկսվում են թափառումների տարիները:

Իր ամուր, քայլելու վարժված ոտքերով այդ պատանյակը, անհոգ սուլելով աստված գիտե, թե որտեղից վերցրած մի երգ,

անշտապ գնում է Սափոյայի՝ անտառների միջով գալարվող ճանապարհներով: Ինչո՞ւ շտապել: Ո՞ւր ահապարել:

1728 թվականի մարտին դա միայն սկիզբն էր: Ճանապարհը ժնկից մինչև Վերին Սափոյայի մայրաքաղաք Աննեսի, որն այն տարիներին մտնում էր Սարդինիայի թագավորության մեջ, այնքան էլ մեծ չէր: Այնուհետև պատանի ժան-ժակը Աննեսից ոտքով գնում է Քուրին. ավելի ուշ, նույնպես ոտքով, նա Քուրինից վերադառնում է Աննեսի, 1730—1731 թվականներին երկար ճանապարհորդություն է կատարում Շվեյցարիայով՝ ժնկից Լոզան, այնուհետև Նեվշատել, այնուհետև Բեռն, հետո Սուլեր: Նա սիրտ է անում Շվեյցարիայից ոտքով գնալ Փարիզ՝ երկարատև, անսահման թվացող ճանապարհ: Որքա՞ն կտևի դա: Իրեն համար դժվար էր հաշվել անցած օրերն ու գիշերները: Փարիզում 1731 թվականին նա համեմատաբար կարճ է մնում: Եվ նորից՝ ճանապարհ: Նա Փարիզից, դարձյալ ոտքով, գալիս է Լիոն. Լիոնից, նորից թափառական անցորդի անշտապ քայլերով, Սափոյա, Շամբերի:

Ո՞վ է իր պատանեկության տարիներին այդքան շրջագայել Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Իտալիայի ճանապարհներով: Ո՞վ է իր հետևից թողել ոտքով անցած այդքան լի:

Մածկակառքի կամ փոստային հանրակառքի պատուհանից չէ, որ Բուսոն ճանաչեց իր ժամանակի կյանքը: Նա այն տեսնում էր ամենամոտ տարածությունից, ցուպը ձեռքին օտարականը, որ երկարատև օրվա ընթացքում, արևածագից մինչև մայրամուտ, անշտապ անցնում էր գյուղից գյուղ: Ո՞վ կարող էր նրանից ավելի լավ իմանալ, թե ինչպե՞ս է սկսվում օրը գյուղացու հյուղակում, ի՞նչ ողբերգով են անցկացնում ծերացած մայրերն այդ օրը:

Պատանի օտարականը ոչինչ չունի. ո՛չ փող, ո՛չ զենք այս աշխարհում, արևոտ ու մոռյլ, պայծառ ու ամպամած, հարուստ ու աղքատ, մեղմ ու դաժան,— նա ոչ մի բանի տեր չէ: Նա չի հարցնում՝ իսկ ինչ կլինի վաղը: Որովհետև վաղը՝ դա այսօրն է, դա անհայտն է, որ շրջապատել է նրան ամեն կողմից: Ո՞ւր ես գնում:— Զգիտեմ:— Ճաշելո՞ւ ես:— Զգիտեմ:— Ընթրելո՞ւ ես:— Զգիտեմ:— Որտե՞ղ ես գիշերելու:— Զգիտեմ:

Նա չէր կարողանա պատասխանել այս հարցերից և ոչ մեկին, եթե որևէ մեկը հանկարծ ուզենար տալ դրանք: Բայց նրան այդ հարցերը չեն էլ տալիս. ո՞ւմ ինչ գործն է, թե ով է գյուղա-

կան ճանապարհներով ճամփորդող անցորդը: Նա ինչն էլ իրեն չի տալիս այդ միանգամայն ավելորդ հարցը՝ ինչի՞ են պետք դրանք:

Իսկ ի՞նչն է նրան առաջ մղում: Ինչի՞ վրա է նա հույս դնում: Ինչպե՞ս է ապրում, ինչո՞վ է իր գոյությունը պաշտպանում:

Պետք չէ խտացնել գույները, ընդհանուր առմամբ ամեն ինչ բավական պարզ է: Նա չի է վստահություն մարդկանց նկատմամբ, և այդ դուրահավատությունը, այդ բաց ժպիտը զինաթափ է անում ամենաանբարեհամբույր մարդկանց: Նա ջահել է, ուստի և առանց պատճառի ուրախանում է կյանքով, այս գունեղ աշխարհում այնքան շատ է անծանոթը, հանելուկայինը, և ամեն ինչ նրան հափշտակում է, ամեն ինչ նրան հետաքրքիր է. նա հրգում է, նա ծիծաղում է, ինչպե՞ս նման մի պատվական սողայի մերժել մի բաժակ կաթ, մի կտոր հաց:

Այդ վաղ թափառումների տարիներին նա հասու է լինում համոզելու վսեմ արվեստին: Թուսոյի կեֆեսագիրները, նրա գրական ժառանգության հետազոտողները գրեթե միահամուռ համաձայնության են գալիս նրա պերճախոսության, ինչպես ասում էին XVIII դարում և XIX դարի սկզբին՝ պերճաբանության (էլոկվենցիա) վարմանալի ձիրքի հարցում: Մարդկանց իր նկատմամբ տրամադրելու այդ անտարակուսելի ընդունակությունը, նրանց համոզելու կարողությանը պատանի ժան-ժակը տիրապետեց կատարելապես: Հնարավոր է, որ նշանավոր գրողի գրական ժառանգության մեջ ոչ մեկի կողմից գրի շառնված այդ երկխոսությունները, կյանքի անհրաժեշտությամբ թելադրված այդ հանպատրաստից ստեղծագործություններն էլ հենց եղել են բանահյուսական ստեղծագործության ամենաարժեքավոր կամ համեմայն դեպս ամենահետաքրքիր հուշարձանը:

Ինչպես էլ լինի, պատանի ժան-ժակը հաջողությամբ դիմացավ կյանքի այդ առաջին և, հավանաբար, ամենադժվարին փորձություններին: Նա չվերադարձավ հարազատ ժնկ գլուխը հետ խոնարհած, որպեսզի մեղա գա և ներում հայցի ատելի Դյուկոմենից: Նա ավելի ու ավելի հեռու էր գնում քաղաքից, սրի հետ նրան ոչ մի բան չէր կապում, բացի հիշողություններից՝ վաղուց հեռացած մանկության մասին:

Այդ առաջին՝ գրեթե երկու տասնամյակ տևած թափառումների գպրոցը շատ բան որոշեց նրա հետագա ճակատագրում:

Նա ուսումնասիրում էր շրջապատող աշխարհը, նա կյանքը ճանաչում էր ոչ թե գրքերից, ոչ թե գրողները վերացական դատողություններից, որոնց նա մինչև դեպրոմաններն ու զրանից հետո այնքան շատ էր կարդում: Նա ինքը տեսավ կյանքը, զգաց, լսեց այնպիսին, ինչպիսին այն կա:

Քափառումների այդ դպրոցը պատանի ճանապարհորդին սովորեցրեց ամենակարևոր և դժվար ըմբռնելի գիտությունը՝ կյանքի գիտությունը: Ռուսոն ունեւր կանխատես հայացք և նուրբ, ամեն ինչ հիշող լսողություն: Երբ ժան-ժակը, հետևում թողնելով ժնկի հանրապետությունը, հասավ մինչև Սարդինական պետության, իսկ այնուհետև ֆրանսիական թագավորության տիրույթները, նրա ուշադրությունը կրկնապատկվեց՝ նա գնում էր նշանավոր պետությունների ճանապարհներով: Եվ ի՞նչ: Լյուդովիկոս XV թագավորի ասածն ողորմածությունը հպատակներն ավելի աղքատ, ավելի վատ էին ապրում, քան ժնկի հանրապետության բնակիչները: Գյուղացիների ցածրիկ, կարծես հողի մեջ խրված հյուղակիներ, թշվառ գյուղացիներ, սաստիկ հյուծված անասուններ, դալուկ ցանքեր: Ինչպիսի՞ աղքատ, մուրացիկ երկիր:

Նա տեսնում էր նաև մեծահարուստ երևելի անձանց հոյակերտ, հայելազարդ պատուհաններով փայլող պալատներ, զրդյակներ. պատկերազարդ պալատների ամբարտաձան տերերի ներշնչած վախը գյուղացիական խղճուկ հյուղակիների բնակիչներին՝ փոխանցվում էր և զրանց պատահական կենվորին: Նա ևս վախենում էր հարուստներից ու երևելիներից, նա շրջանցում էր այդ գեղեցիկ, այնքան վտանգներ թաքցնող դղյակները: Արտոնյալ դասերի այդ բարձր կաստան գլխավոր շարիքն էր ժողովրդի գիտակցության մեջ. նրանից էին ելնում բոլոր աղետները, բոլոր դժբախտությունները:

Այսպես, աստիճանաբար, օր օրի ժան-ժակը հասկանում էր հորիզոնի գծից այն կողմ ընկած աշխարհը, որը դեռ մինչև վերջերս էլ նրան այնպես հանելուկային ու սքանչելի էր թվում:

Ուրիշ հետազոտողներ, գնելով «Հասարակական դաշինքի» հեղինակի հայացքների ծագման հարցը, դրանց ակունքները փնտրում են այս կամ այն գրական ազդեցությունների մեջ<sup>16</sup>: Ռոբեր Գերատեն՝ Ռուսոյի ժառանգության լավագույն գիտակներից մեկը, գտնում էր, որ նրա հասարակական հայացքների ձևավորման վրա առավել մեծ ազդեցություն են ունեցել Պու-

ֆենգորֆը, Հուգո Գրոցին և ուրիշներ: Ֆիկկերտը ենթադրում էր, որ Ռուսոյի վրա առավել մեծ ազդեցություն է ունեցել Մոնտեսքյուն: Կան «Հասարակական դաշինքի» հեղինակի ուղղակի խոստովանություններն այն մասին, որ նա կարդացել է թվարկված բոլոր հեղինակներին: Միգուցե կարդացած գրքերը Ռուսոյի վրա ինչ-որ տպավորություն գործել են էլ՝ նման ենթադրությունը լիովին թույլատրելի է, սակայն անտարակուսելի է մնում այն, որ Ռուսոյի հասարակական-քաղաքական հայացքների սիստեմը սնող հիմնական, գլխավոր աղբյուրը ամենից առաջ եղել է բուն կյանքը, նրան շրջապատող դասային անհավասարության, գյուղացիական կարիքի, ժողովրդական աղետների աշխարհը:

Ըթե էտրեպիսյիի աղքատ ծխական համայնքի փոքրիկ ինքնամիտի աշխարհը բավական էր կյուրե ժան Մելիեին խոսվարար մտքեր ներշնչելու համար, որոնք ավելի ուշ նրա կողմից սիստեմավորվել են հետմահու նշանավոր դարձած «Կտակում»<sup>17</sup>, ապա կարելի՞ է, արդյոք, կասկածել, որ այդչափ հարուստ, բազմազան տպավորությունները, որ ազահորեն յուրացրել էր պատանի Ռուսոն Ֆրանսիայի ճանապարհներով իր անվերջ թափառումների ժամանակ, պետք է անընչելի հետք թողնեին անհավասարության ծագման մասին տրակտատի ապագա հեղինակի աշխարհընկալման, աշխարհըմբռնման վրա:

Ճիշտ է, ոչ ամեն ինչ էր ծանր, ողբերգական այդ թափառումներում: «Խոստովանանքում» այդ շրջանի նկարագրության մեջ Ռուսոն գրեթե չէր դիմում մոռյլ գույներին: Բայց գրեթե քառասուն տարի անց գրված այդ ուշ հիշողություններին պետք է մոտենալ քննադատաբար: Նախամայրամուտի տարիներին կյանքի սկիզբը հաճախ պատկերանում է մեղմացած տոներով. ամեն բան, ինչ վատ է, դժվար՝ քաշվում է հետին պլան կամ բոլորովին է շքանում. պատանեկության տարիներն ավելի հաճախ գեղեցիկ են թվում:

Պետք է խոստովանել՝ թափառումների ժամանակ պատանի ճանապարհորդի բախտը բերեց: Մի անգամ նա օգտվեց հարյարժան, միջին տարիքի արբա դը Պոնվերի հյուրընկալությունից. վերջինս հոգալով երիտասարդի «հոգու փրկություն» մասին, քիչ ջանքեր շուրջաբերեց հյուրին կաթոլիկական հավատքի բերելու համար:

Այն ժամանակ կալվինիստ և հուգենոսների հետնորդ ժան-  
ժակը լիակատար անտարբերությամբ էր վերաբերվում կրո-  
նին: Հյուսիսային արբայի ճաշկերույթի ժամանակ նա  
կրթությունը չվիճարկեց տանտիրոջ փաստարկները և շղաշա-  
պանեց իր նախնիների հավատը: Ըստ էության նրա համար  
միևնույնն էր, թե երկու մրցակցող եկեղեցիներից որն է ավելի  
լավը՝ կալվինիստականը, թե կաթոլիկականը: Առանց երկար  
վեճերի նա թույլ տվեց իրեն համոզել՝ փոխել հոր հավատը,  
ընդունել կաթոլիկություն:

Այսպես ճակատագիրը պատանի ժան-ժակին կապեց մի կնոջ  
հետ, որը նշանակալից զեր խաղաց նրա կյանքում: Խոսքը տի-  
կին զը Վարանսի մասին է:

Աբբա զը Պոնվեյր կարևոր աստվածաճան առաքելությունը՝  
մոլորյալ բողոքականին «ճշգրիտ», կաթոլիկական հավատքի  
բերելը հանձնարարեց այդ լուսավորյալ տիկնոջը: Նա ապրում  
էր Աննեսիում որպես սարդինական թագավորի թոշակառու և  
օգտվում էր Հոտմի սլավի հատուկ հովանավորությունից:

Ռուսոն սպասում էր տեսնել կուսանոցի մի պառավի, բա-  
րեպաշտ մայրապետի, նրա առջև կանգնեց երիտասարդ, գեղե-  
ցիկ մի աշխարհիկ տիկին, որը հրաշալիորեն կրթված էր, հակ-  
ված դեպի ազատախոհությունը: Տիկին զը Վարանսը պատանի  
օտարականին բնորոշեց աշխույժ կարեկցանքով, գրեթե մայ-  
րական հոգատարությամբ: Նրանք արագ մտերմացան: Զիմա-  
նալով ինչ է մայրը, գրկված լինելով կանացի հոգատարությու-  
նից, պատանի ժան-ժակը զգացված էր ուշադրությունից և  
շուտով նրան սկսեց «մայրիկ» անվանել. իսկ նա հիրավի այն  
ժամանակ փոխարինում էր նրա մորը:

Հետո տիկին զը Վարանսը, կատարելով արբայի կամքը, մի  
նամակով ժան-ժակին ուղարկեց Քուրիսի մենաստան, որտեղ  
նա հաղթահարելով սահմանված ողջ փորձությունները, պետք  
է կաթոլիկ եկեղեցու գիրկն բնորոշվեր:

Ժան-ժակը հնազանդորեն կատարեց բոլոր սլավորները:  
Նա ճանապարհորդեց դեպի Քուրիս, անցավ կաթոլիկ եկեղեցի  
մասնելու գործողությունը նախապատրաստվելու երկարատև ու  
բարդ ճանապարհը: Սահմանված ժամկետին հանդիսավոր արա-  
րողությունը կատարվեց: Ժան-ժակ Ռուսոն դարձավ կաթոլիկ:  
Բայց «ճշմարիտ» հավատքն ընդունելը նրան չտվեց խոստա-  
ցած բարեբեր վիճակը: Նա լիովին անտարբեր մնաց կրոնի

նկատմամբ: Գեռ ավելին, ուշադիր տնտղելով իրեն շրջապատած  
կաթոլիկ եկեղեցականներին, նրա մեջ է՛լ ավելի ամրապնդվեց  
անբարյացկամ զգացումը հոգևորականների նկատմամբ, որոնց  
գործերն այնպես քիչ էին համապատասխանում նրանց բարե-  
պաշտ խոսքերին<sup>10</sup>:

Ժան-ժակը շցանկացավ խաղալ օրինակատար սուտ ճգնա-  
վորի դեր: Առաջին իսկ բարեպատե՛հ առիթով նա փախավ նրան  
տողտկություն պատճառող եկեղեցական այդ ինքնապարփակ  
աշխարհից: Այնքան էլ հեշտ չէր նրա համար խորթ ու անծա-  
նոթ խալալական քաղաքում գոյություն ունեցող գտնելը: Նա  
փորձեց մի շարք մասնագիտություններ՝ որպես սպասավոր  
ժուռայեց կոմսուհի զը Վերսիլիոսի մոտ, հետո քարտուղարի  
նման ինչ-որ բան դարձավ արբա Գուվոնի մոտ: Այս բոլոր պա-  
տահական զբաղմունքները բավարարություն չտվեցին ո՛չ  
մտքին, ո՛չ հոգուն:

Ամեն ինչ ավարտվեց նրանով, որ մի անգամ նա նորից ձեռքը  
վերցրեց ցուպը և անշտապ քայլերով բռնեց Քուրիսից ավելի  
ու ավելի հեռու տանող ճանապարհը. նա գնում էր դեպի նա-  
խալեոներ, որոնելով հյուսիսում գտնվող հեռավոր տան ճանա-  
պարհը՝ այն միակ տունը այս հսկայածավալ երկրի վրա, որ-  
տեղ նրան չէին բնադատում, որտեղ նրան կղիմավորեն, նա  
Նամբլված էր գրանում, վաղաքրշական խոսքերով և որտեղ նրան  
է սպասում բարի, մայրական ուշադրությունը:

Ժան-ժակ Ռուսոն Քուրիսից դնաց Աննեսի:

V

Ժան-ժակը Աննեսիում գտնվող տիկին զը Վարանսի տուն  
էր գնում տաղնապի և հուլյսի մի անբող զգացումով: Նա գիտեր,  
որ վերադառնում է, շարդարացնելով նրա սպասումները՝ խղճա-  
լի, աղքատ, ոչ մի բանում չառաջագիմած, ոչ մի բանի չհասած:  
Նա գիտեր, թե այդ բանը որքան կվշտացնի նրան: Բայց բոլոր  
սպասումներից հետո նա ուզում էր տեսնել այն էակին, որին և  
մտքում, և դիմելիս «մայրիկ» էր անվանում: «Խոստովանան-  
քում», երեսուն տարի անց, նա գրեց այնպիսի բառեր, որոնց  
ճշմարտացիությունը կասկած չի հարուցում. «այս ամբողջ հրա-  
կայական աշխարհում ես տեսնում էի միայն նրան, ես չէի կա-  
րողանա ապրել, եթե նա երես թեքեր ինձնից»<sup>10</sup>:

Այսպես բազում արարիներ ժան-ժակի ճակատագիրը կապված մնաց տիկին դը Վարանսի հետ:

«Նոստովանանքում» Ռուսոն տիկին դը Վարանսի տանն ապրած կյանքի և տարօրինակ, որպեսզի այլ կերպ շտանք, դաշինքի մասին այն կնոջ հետ, որին նա մայր էր անվանում, պատմեց այնպիսի անկեղծությամբ ու այնպես անողոր ինքն իր նկատմամբ, որ ապշեցրեց նրա բնթերցողներին ու երկրպագուներին: Նրանցից ոմանք նույնիսկ հակված էին կասկածել, որ հրապարակված ինքնակենսագրությունը կեղծիք է՝ հորինված Ռուսոյի թշնամիների կողմից, որպեսզի ժամանակակիցների աչքում արատավորեն «ժնեի հանրապետության քաղաքացու» պայծառ կերպարը:

Ինչպես հայտնի է, առաջին երկու տարիներին՝ 1730—1732 թթ., ժան-ժակը իր ժամանակի մեծ մասն անցկացրեց տիկին դը Վարանսի անկից դուրս, բայց միշտ նրա բարի ու հուսալի հսկողության ներքո: Սկզբում «մայրիկի» ջանքերի շնորհիվ նա տեղավորվեց լազարականների\* սեմինարիայում, որը ղեկավարում էր ռեկտոր Գրոն: Չնայած դասատուների փութաշանությանը, ժան-ժակն այնքան քիչ հակումներ դրսեվորեց աստվածաբանական գիտությունների նկատմամբ, որ գասընթացն այդպես էլ մնաց անավարտ: Նրանից կյուրե շատացվեց:

Տիկին դը Վարանսը սիրում էր զբաղվել երաժշտությամբ և իր պատանի աշակերտին ծանոթացնելով մի քանի երաժշտական պիեսների, ապա էր մնացել, թե որքան արագ է նա առաջադիմում այդ բարդ արվեստի մեջ: Պատանեկության տարիներից, նույնիսկ մանկուց, ի հայտ եկավ ժան-ժակի բացառիկ երաժշտական օժտվածությունը. նա օժտված էր անվիճելի տարերային երաժշտական ստեղծագործական ձիրքով. նա երաժշտություն էր հորինում զարմանալի թեթևությամբ, գրեթե առանց ջանքերի: Երաժշտությունը նրա համար պահանջմունք էր, անհրաժեշտություն: Հասկանալի է, որ անտեղի կլինեք Ռուսոյին համեմատել Մոցարտի հետ: Ոչ միայն այն պատճառով, որ Մոցարտը, ինչպես և Բեթհովենը, մնում է իբրև այն ժամանակվա համար շգեբազանցված գագաթ, այլև առաջին հերթին այն

պատճառով, որ Ռուսոն կես դարով մեծ էր «Գոն-ժուանի» և «Ռեքվիեմի» հանճարեղ արարչից. նա մինչև սոցարտյան դարաշրջանի կամպոզիտոր էր: Եվ այնուամենայնիվ, բոլոր այս անհրաժեշտ վերապահումներով հանդերձ, արդարացի կլինի խոստովանել, որ երաժշտական ստեղծագործության նկատմամբ ժան-ժակի բուն իսկ անզսպելի ձգտման մեջ ինչ-որ մոցարտյան բան կար:

Տիկին դը Վարանսը ճիշտ գուշակեց իր աշակերտի հակումը, իսկ ավելի ստույգ՝ հակումներից մեկը: Այդպիսի շրջահայեցությունը նրա կողմից նախապատրաստված բոլոր ձեռնարկումներում ժան-ժակը մինչ այդ անհաջողություններ էր կրել: Բայց տիկին դը Վարանսը չէր կորցնում հավատը նրա նկատմամբ, նա զգում էր ժան-ժակի օժտվածությունը, տաղանդավոր լինելը: Նրա թախանձանքով ժան-ժակն սկսեց պարապել երաժշտական և երգեցողության դպրոցում, որը գլխավորում էր տաճարի ռեգենտը՝ ոմն Լեմետրը, մի ուրախ մարդ, որն իրեն, թեև նույնիսկ որոշ հիմքով, կամպոզիտոր էր համարում:

Այս անգամ տիկին դը Վարանսի հույսերը լիովին արդարացան: ժան-ժակի հաջողություններն անվիճելի էին: Լեմետրի դպրոցում ու նրա ղեկավարությամբ տաղանդավոր աշակերտը արագորեն կատարելագործվեց և՛ երաժշտության գործնական պարապմունքներում, և՛ անգամ տեսության լեռնագլուխում, համենայն դեպս այն սահմաններում, որոնք ընդունակ էր տալ դպրոցի ղեկավարը: ժան-ժակն ուներ զարմանալի, գրեթե բացարձակ լսողություն, հեշտությամբ էր սովորում նվագել կլավեսինի վրա, հասու եղավ նոտագրությանը, երաժշտական տեսության հիմունքներին և շուտով սկսեց ինքը հորինել և՛ թեթև, և՛ առավել բարդ երաժշտական ստեղծագործություններ:

1730—1731 թվականներին, ճանապարհորդելով Շվեյցարիայի քաղաքներով, Լոզանում, Բուրգոնում, Քենոնում ժան-ժակը շարանհիությունից կամ զգուշությունից առաջնելույթ կատարելով՝ Վոսոր դը Վիլեն կեղծանունով, սկսեց հանդես գալ կոմպոզիտորի և երաժշտության գասատուի դերում: Առաջին ելույթները տեղիք էին տալիս գրեթե աղմկոտ վիճաբանությունների, բայց ստախճանաբար դժվարությունները հաղթահարվում էին: Ավելի ուշ Ռուսոն խոստովանում էր. «Տալով երաժշտության գասեր, ինքս էլ աննկատելիորեն սովորում էի այն»<sup>20</sup>,

1732 թվականին, տիկին դը Վարանսին երկար որոնելուց

\* Լազարականներ— մեկը կաթոլիկական այն դպրոցներից, որոնք պատրաստում էին միսիոներներ (բարոզիներ):

հետո (նա անսպասելիորեն Աննեայից մեկնել էր Փարիզ, իսկ այնտեղից էլ Լիոն), ժան-ժակը, որն ամբողջ Ֆրանսիական թագավորությունով մեկ նրա հետքերով ճանապարհորդություն կատարեց ոտքով, գտավ նրան Շամբերիում, մութ և անհրապույր մի տանը:

Նա այդ տանը մնաց ոչ պակաս քան տասը տարի:

Անհրաժեշտություն չկա այստեղ այլ խոսքերով վերապատմել այն բոլորը, ինչ ասված է «նոստոլիանանքում»: Առավել ևս քիչ պատշաճ կլինի գատողարանություն անել կամ ճգնաբանական կատույցներ կերտել, ինչպես դա անում էին որոշ հեղինակներ, որոնք այդ ոչ հասարակ պատմությունը հաճույքով էին մեկնաբանում, իհարկե, ամեն մեկը չարովի:

Իրադրությունը, որ այնպիսի ազնեցուցիչ ճշմարտացիությունը պատմել է Ռուսոն, իր ամբողջ բացառիկությամբ հանդերձ այնուամենայնիվ երբեք չպատահած ինչ-որ բան չէր: Եթե հավատանք հին հունական դիցաբանությանը և համապատասխանաբար հին հունական ողբերգուհիներին, ասյա դրա նման ինչ-որ մի բան ցայտունորեն պատկերել է Սոֆոկլեսը «էդիպ արքա» ողբերգության էջերում: Ծիշտ է, այնտեղ խոսքը որդու և ծոր խորհրդավոր ուղղակի մերձավորության մասին է, Ռուսոյի նկարագրած դեպքում խոսքը ոչ թե ուղղակի, այլ ավելի շուտ հոգևոր մերձավորության մասին է: Հունական ողբերգության մեջ ոչ մայրը, ոչ էլ որդին չգիտեին, թե ինչ բարեկամական կապ կա միմյանց միջև, և երբ այդ բանը հաշտելի դարձավ, ապա Բոկաստան որպես ինքնահատուցում, ակամայից թույլ տված մեղքի՝ զրկեց իրեն կյանքից, իսկ էդիպ արքան նրա գոտու ճարմանդով կուրացրեց իրեն և դատապարտեց կամավոր արտաքսման Թեբեից:

XVIII դարում բարոյականությունն ու բարբերը փոխվել էին, և այն, ինչ հին աշխարհում ներկայանում էր որպես անուղղելի ողբերգություն, Լյուդովիկոս XV-ի ժամանակների ֆրանսիական հասարակության մեջ ընդունվում էր ավելի հանդիստ, նույնիսկ իրեն՝ հերոսին, հուշագրությունների հեղինակին, ստեղծված հարաբերությունների, ասենք այսպես, ուրտասովորությունը չէր շփոթեցնում. նրան շփոթեցնում էր, պիտք է ասել, այն էլ պատշաճ հիմքով, մեկ ուրիշ բան:

Բայց հաղիվ թե ճիշտ կլինի խորանալ այդ խիստ տնձանկան պատմության մանրամասնությունների մեջ, պատմություն,

որ արել էր հիշողությունների հեղինակը այդպիսի բժախնդիք ճշմարտացիությամբ, որը երբեմն տարակուսանքի մեջ է դրում լինիքը ողններին. իսկպես պե՞տք է, արդյոք, այդպիսի ճշմարտություն:

Բնական է, որ բարոյաէթիկական կարգի ամեն տեսակ դատողություններ, որ հաճույքով դարգացնում են գրողներից սմանք, առավել ևս քիչ պատշաճ կլինեին: Բացի այդ, չի կարելի ուշադրության շուռնել պատկառելի ակնածանքով և ամենախորին հարգանքով լի այն տոնը, որ Ռուսոն պահպանում էր տիկինը Վարանսի նկատմամբ:

Ինչպես էլ որ դասավորվեին Ռուսոյի հարաբերությունները տիկինը Վարանսի հետ, երկարատև բնակությունը նրա տանը, ավելի ստույգ, նրա բնկերակցությունը ժան-ժակի համար, գրողի, փիլիսոփայի, կոմպոզիտորի նրա տաղանդի ձևավորման համար ուներ հակայական նշանակություն: Արդեն լոկ սրա համար հաշորդ սերունդները երախտապարտ պետք է լինեն այդ տիկնոջը:

Ինչպես արդեն ասվեց, տիկինը Վարանսը համակողմանի կրթված և կարգացած կին էր: Նա կարողացավ պատահականորեն իր տուն եկած պատանու մեջ գուշակել արտասովոր ընդունակություններ: Նա ոչ ուժ, ոչ էլ ժամանակ էր խնայում այդ բնույթականություններն արթնացնելու ու զարգացնելու և իր աշակերտին հաղորդակից դարձնելու գիտելիքների և կուլտուրայի ժամանակակից, XVIII դարի մակարդակին: Նրա տանը հիանալի գրագրարան կար. այնտեղ կարելի էր գտնել և՛ հին շրջանի հեղինակների, և՛ ժամանակակից գրողների, մասնավանդ արդեն այն ժամանակ մոզայի մեջ մտած ընդդիմադիր լագերի գրականագետների, նրանց, ում ավելի ուշ սկսեցին անվանել «Լուսավորության դարի» ներկայացուցիչներ:

Ռուսոյի՝ իրրև գրականագետի, իրրև մտածողի ձևավորման գործում կարևոր փուլ էին տիկինը Վարանսի բնկերակցությամբ օնցկացված սարխները: Նրա տունը, եթե կուզեք, տիկինը Վարանսի դպրոցը, Ռուսոյի համար դարձավ չարտեսակ երկրորդ համալսարան: Առաջինն, անկասկած, Շվեյցարիայի, Իտալիայի, Ֆրանսիայի գյուղական ճանապարհներով այն թափառումների ուղին էր, որից սկսվեց նրա գիտակցական կյանքը:

Այսպես, ուրեմն, մենք նորից ենք վերադառնում այն հար-

ցին, որի մասին արգեն խոսվել է: Ո՞րն էր առաջնայինն ու հիմնականը ժան-ժակ Ռուսոյի գաղափարական ձևավորման գործում: Հազիվ թե կարելի է կասկածել այն բանում, որ կյանքի հետ ուղղակի շփումից առաջացած սոսցին տպավորությունները, ֆրանսիական ժողովրդի հետ ամենօրյա հաղորդակցումը որոշակի, մեծական նշանակություն ունեցան Ռուսոյի հասարակական-քաղաքական հայացքների ձևավորման համար:

Այդ հարցի մեջ պետք է լիակատար պարզություն մտցնել: Պուքս դը Սեն-Սիմոնի՝ Լյուդովիկոս XV-ի զարաշրջանի վերաբերյալ նշանավոր հուշագրության հեղինակի, իր անունը «Աֆորիզմներով և մակսիմներով» փառաբանած գուրս Ֆրանսուա դը Լարոշֆուկոյի, «Օրենքների ոգու» և «Պարսկական նամակներին» արարիչ Շառլ դը Մեկոնզա Մոնտեսքյոյի, բարոն դը լա Բրեդի, Ֆրանսուա-Մարի-Արուե Վոլտերի, կոմսնիստական ուտոպիաներով հանդես եկող արքա Քարլիել Բոննո դը Մարիի, այս նշանավոր գրողներից, ֆրանսիական Լուսավորության կոնֆեկցներից, ֆեոդալական հին աշխարհի քննադատներից չուրաքանչյուրի համար «ժողովուրդը» (peuple, nation), որի մասին նրանք այդքան շատ ու հաճույքով էին պրում, որի մասին հոգում էին, միշտ էլ եղել է գրքային, վերացական հասկացություն: Դա ինչ-որ մի պայմանական տերմին էր, որով կարելի էր ցույց տալ երրորդ դասի որևէ մասը. այստեղ կործինները բաժանվում էին, բայց XVIII դարի առաջավոր մտածողների մեծ մասի համար ըստ էության ժողովուրդը, այսինքն հասարակ մարդիկ՝ գյուղացիները, արհեստավորները, բաղաբային շրջավորությունը, նրանք, ում այդ մտածողները ավելի շուտ անվանում էին «խաժամոժ» (populace, canaille) քամահրական արտահայտություններում «ժողովուրդը», որի մասին յուրաքանչյուր պատեհ ստիժով նրանք պատրաստակամությամբ էին հիշում, իրականում նրանց բոլորովին անհայտ էր. նրանք չգիտեին ժողովրդին. գյուղերը, որտեղ ապրում էին գյուղացիները, նրանք միայն տեսնում էին հպանցիկ, ծածկակառքի պտտահանից. ամենաշատը, որի վրա նրանք կարող էին հենվել սեփական կենսափորձում՝ դա նրանց սպասավորների կամ մյուս ծառաների վարքն էր:

Առաջին իսկ գիտակցական քայլերից ժան-ժակ Ռուսոյի համար ժողովուրդը դարձավ նրա սեփական կյանքը, նա ինքն

այդ ժողովրդի մի մասն էր, անբաժանելի նրանից: Ի տարբերություն գրական արտադրանքի գծով նրա սպառա եղբայրակիցներին՝ ժան-ժակի համար «ժողովուրդը» երբևէ չի եղել զրքային կամ վերացական հասկացություն. ժողովուրդը՝ դա ինքն էր, նրա հայրը, նրա հարազատները, դա իրական կոնկրետ անձանց այն շարանն էր, որոնց ամեն օր հանդիպում էր իր թափառումների ժամանակ, և որոնք մեծահոգաբար նրա հետ կիսում էին ն՝ ապաստանը, ն՝ հացը:

Անորոշությունից խուսափելու համար պետք է իսկույնեթ տակ, որ խոսքը, անշուշտ, «էմիլի» և «Հասարակական դաշինքի» ստապա հեղինակի ծագման մասին չէ: Քսան տարի առաջ Բ. Մ. Բերնարդինը Ռուսոյի մասին իր շատ հետաքրքիր գրքում որոշել է նրա սեզր գրականության մեջ որպես մանր արհեստավորների և տեսչագործների գաղափարախոսության արտահայտչի, ընդամին վկայակոչելով այն, որ նա ժամադրոծի դավակ է: Սա, անկասկած, զուեհիկ սոցիոլոգիզմի գրսևորում էր: Թող անհամեստություն չհամարվի, եթե ես ինձ թույլ տամ վկայակոչել այն, որ մի քանի տարի առաջ անհամաձայնություն կմ արտահայտել նման տեսակետներին:

Երբ Ռուսոն տիկին զը վարանսի տանը սկսեց իր ընթերցումների երկրորդ ցիկը (առաջինը մանկության տարիներին էր, հայրական տանը), նա արդեն ձևավորված հայացքների տեր մարդ էր, որը լավ էր հասկանում աղքատության և հարըստության սոցիալական և բարոյական հակադրությունները: Նա գիտեր, որ հարուստները և ազնվականները անգործության են մատնված, երթեկում են ծածկակառքերով կամ պաճուճազարդ հեծելախումբ կազմած սլանում թանկարժեք ցեղական նժույգներով, իսկ շրավորները դաշտում մեջքերը ծռած աշխատում են վերջալույսից մինչև արշալույս և, վերադառնալով իրենց աղքատ խրճիթը, շեն կարող անգամ կուշտ կերակրել ոչ իրենց ընտանիքը, ոչ էլ իրենք իրենց:

Այս պարզ ճշմարտությունները, որոնք ամուր կերպով արմատացել էին պատանի Ռուսոյի գիտակցության մեջ, նրան հասան ոչ թե կողբից, ոչ թե զրքերից, այլ սեփական կենսափորձից: Նրա կենսափորձը, եթե այն չափելու լինենք տարիներով, հավանաբար մեծ չէր, բայց անվիճելի էր, անառարկելի ժան-ժակը կարիք շունեք ճանաչելու ժողովրդին, նա ինքը ժողովրդի արյունից ու մարմնից էր:

ժողովրդի հետ հենց այդ ընդհանրությունը, սոցիալական հարազատությունը, նույնիսկ ավելի ճիշտ կլինենք ասել, ժողովրդի հետ նրա կապերի անխզելիությունը, ժողովրդի կարիքներն ու ակնկալություններն էլ հենց ժան-ժակ Ռուսոյի աշխարհընկալման հիմքն են կազմում:

Կարող են ասել, որ Ռուսոյի նախնական կենսագրությունը իրենից ոչ մի բացառիկ բան չի ներկայացնում, որ, ասենք, Ռուսաստանում Մարտիմ Գորկու, Ամերիկայի Միացյալ Նահանգներում Զեկ Լոնդոնի կամ Դանիայում Մարտին Անգերսեն Նեքսեի ուղին թիչ բանով է տարբերվում Ռուսոյի ուղուց: Կարելի էր տալ և ուրիշ անուններ: Արտաքին նմանությունը գծերը, և ամենից առաջ այն բանում, որ բոլոր նշված գրողները պատկանել են ժողովրդի օտարին խավերին, իրենց կյանքի ուղին սկսել են սոցիալական անզուգրի ամենաստորին աստիճաններից՝ նմանությունն այդ արտաքին գծերն անկասկած են:

Սակայն պետք է նկատի ունենալ և լիովին դնահատել մի էական տարբերություն: Ե՛վ Գորկին, և՛ Զեկ Լոնդոնը, և՛ Նեքսեն, և՛ ժողովրդի ամենաստորին խավերից ելածները, որոնք դարձան հայտնի գրողներ, իրենց կյանքի ուղին անցնում էին զարգացած և արդեն դեպի անկում գնացող բուրժուական հասարակության պայմաններում, հարյուր տարի անց Ֆրանսիական մեծ հեղափոխությունից, որը վճռական հարվածներ հասցրեց գասային մեկուսացածությունը, 1830, 1848, 1870 թվականների բուրժուական և բուրժուազեմոկրատական հեղափոխություններից հետո, 1871 թվականին բանվոր գասակարգի իշխանություն հաստատելու առաջին փորձից հետո, Ռուսաստանում 1905—1907 թվականների հեղափոխությունից հետո: Հարկ կա՞, արդյոք, թվարկել մնացած բոլորը:

Ռուսոն առաջինն էր: Մինչհեղափոխական ժամանակների, այսինքն դեռևս շատանված ֆեոդալաժիտայինական կարգերի տիրապետության օրոք՝ նրանց բնորոշ գասային-հիերարխիկ խիստ մասնատումով, ֆյանսիական հասարակական մտքի (խկեթի հաճեր, զգալի շափով և եկրոպական) պատմության մեջ ժան-ժակ Ռուսոն առաջին գրողն էր, որն արտահայտում էր ճշգրիտ և իրավագուրկ ժողովրդի մտքերը, զգացմունքներն ու ակնկալությունները:

Պե՞տք է, արդյոք, ապացուցել, որ առաջինը լինելը միշտ ավելի դժվար է:

Բայց ժողովրդի սոցիալական ակնկալությունների արտահայտիչը դառնալու համար բավական չէ իմանալ նրա ցավերն ու ձգտումները: Հարկավոր էր նաև իմաստավորել դրանք, դրանց համար գտնել հարմար գրական ձև. հարկավոր էր կարողանալ իրեն լսել ստիպել:

Այս բոլորի կարևորագույն նախապայմանը պետք է լինել կրթվածություն, կարգացածության որոշակի աստիճանը: Առանց գիտելիքների, առանց ծանոթ լինելու թե՛ բնական, թե՛ հասարակական գիտությունների փիճակին, XVIII դարի կեսերին պիտություն ձևը բերած մակարդակին, վերջապես, առանց գրական որոշ հմտությունների տիրապետելու ժան-ժակ Ռուսոն չէր կարող դառնալ այն, ինչ դարձավ՝ նշանավոր գրող և մտածող, որը հավերժ մտավ համաշխարհային գրականության պատմության մեջ:

Հուսով եմ, որ ընթերցողը ճիշտ կհասկանա ինձ՝ ինքնին հասկանալի է, ո՛չ ինքը ժան-ժակը, ո՛չ տիկին զը Վարանսը 1732 թվականին, երբ Ռուսոն երկրորդ անգամ օտարից նրա տան շեմին, ո՛չ էլ ավելի ուշ չէին մտածում նրա սոցիալական դործունեության մասին, առավել ևս որ և՛ նրան, և՛ նրա խնամակալ բարի կնոջը լիակատար կերպով խորթ էին ինչ-որ մեսիական գաղափարներ կամ թեկուզև որոշակի փոստասիրական պլաններ:

Խոսքն այլ բանի մասին է:

Ինչպես էլ որ վերաբերվելու լինեն տիկին զը Վարանսին, նրա արժանիքներին ու թերություններին (այսօր, ավելի բան երկուհարյուր տարի անց, ամեն տեսակ բարոյախոսություն անպատեհ և նույնիսկ ծիծաղելի կլինեն), չի կարելի արժանին չհատուցել նրա խորաթափանցությունը, որը հնարավորություն տվեց նրան հասարակ ժողովրդից ելած անտաշ տղայի մեջ նկատել տաղանդավոր աշակերտին:

Տիկին զը Վարանսի տանը նրա ղեկավարությամբ և անմիջական օգնությամբ ժան-ժակը հասու եղավ այն ամենին, ինչի պակասը զգում էր: Տիկին զը Վարանսն իր աշակերտին ծանոթացրեց պոեզիային: Նա սկսեց ազահուլությամբ կարդալ և՛ հին շրջանի պոետներին, և՛ գասականներին՝ Մոյսերին, Ռասինին, Կոսնեյին, և՛ ավելի մոտ շրջանի բանաստեղծներին, ընդհուպ մինչև այն ժամանակ արդեն նշանավոր Վոյտերին:

Շուտով նա ինքն էլ սկսեց իր ուժերը փորձել բանաստեղծական արվեստում: Հավանաբար սկզբում դրանք խիստ պարզունակ ձևով թխված բանաստեղծություններ էին: Բայց նա համար կերպով աշխատում էր, կատարելագործում իր վարպետությունը, հղկում շափածո տողը և շուտով հասավ իրեն ժամանակակից ֆրանսիական պոեզիայի մակարդակին: Համենայն դեպս այն, ինչ հասել է մեզ, խոսում է XVІІІ դարի ֆրանսիական պոեզիայի լիովին հասուն վարպետի մասին:

Հենց Աննեսիում և Շամբերիում ժան-ժակն ըստ էության ճանաչեց և հասու եղավ այն բոլոր նշանակալից արժեքներին, ինչ ստեղծվել էր ֆրանսիական, ասենք զգալի շափով նաև համաշխարհային գրականության և գիտության կողմից: Հետագայում զրուցակիցներին ապշեցնող Ռուսոյի զարմանալի կարգացածությունը տիկինը վարանսի տանը համատեղ կամ առանձին կազմակերպվող մշտական ընթերցումների արդյունք էր:

«Նոստովանանքում» Ռուսոն հիշատակում է Պիեր Բեյլի, Լաբրյուերի, Լարոշֆուկոյի, Վոլտերի, ներկայումս գրեթե մոռացված հեղինակների, ինչպես օրինակ կատակերգակ Մենտեվրեմոնի և ուրիշների<sup>21</sup> այն գրքերը, որ նրանք կարգացել են միասին: Բայց «Նոստովանանքը», որ գրված է նրանում պատկերված իրադարձություններից ավելի քան երեսուն տարի անց, ինչպես բազմիցս արդարացի կերպով ընդգծվել է<sup>22</sup>, թեկուզև հենց միայն այդ պատճառով իր նկատմամբ խիստ քննադատական վերաբերմունք է պահանջում: Անցած տասնամյակների ընթացքում «Նոստովանանքի» հեղինակը շատ բան է մոռացել, ասենք վաղուց անցած գնացած տարիների իրադարձություններն էլ նրան շատ բանով այլ կերպ էին պատկերանում, քան իրականում եղել են: Սա, մասնավորապես, վերաբերում է և տիկինը զր վարանսի տանը կազմակերպված ընթերցումների շրջանակների հարցին:

Բարսեղի զր վարանսը՝ միշտ հափշտակված ինչ-որ ձեռնարկումներով և գործնական ծրագրերով (որոնք մեծ մասամբ ողբալի վախճան էին ունենում), հաճախ էր մեկնում տնից: Ժան-ժակը էլ ավելի մեծ հաճույքով էր հանձնվում իր սիրասուն գրադմունքին՝ ընթերցանությանը մեկուսյան մեջ: Անհարմարավետ Շամբերից տարվա տաք եղանակներին, գարնանն ու ամռանը, տիկինը զր վարանսը և ժան-ժակը մեկնում էին

Շարմետ, որը Ռուսոյի հիշողության մեջ մնաց որպես բնության օրհնյալ անկյուն: Առաջին իսկ ամռանը նա հիվանդացավ ստույգ ձևակերպման շնթարկվող և տարբեր ձևերի մեջ պահպանվող հիվանդությամբ (մերթ ավելի ուժգին, մերթ ավելի թույլ) ամբողջ կյանքի ընթացքում: Ըստ երևույթին, և թե հետևյալ լինենք մեր օրերի տերմինաբանությանը, նա ունեցել է բարձր զարկերակային ճնշում և սրտանոթների հազորդականության խրոնիկական խանգարում: Սկզբում նրան երկար ժամանակ պառկեցրին անկողնում և հոսկացնել տվեցին, որ նա չի խուսափի վերահաս մահից: Ինչպես մենք գիտենք, Ռուսոն շմահացավ, բայց նրա առողջական վիճակն իսկապես որ վատացավ:

Հարկադրական ժամանակավոր անգործունեությունը օգտակար դարձավ նրա մտավոր պարապմունքների համար: Այժմ արդեն նա էլ ավելի շատ ժամանակ էր հատկացնում ընթերցանությանը, որը նա կանոնակարգեց: Ժան-ժակը հիմնավորապես զրազվեց փիլիսոփայությանը՝ խնամքով ուսումնասիրում էր յանսենիստների երկերը, Զոն Լոկի «Փորձ մարդկային բանականության մասին» երկը, Նիկոլ Մալբրանշի երկերը, Դեկարտի, Լայբնիցի և մյուսների աշխատությունները: Հետո նա զբաղվեց մասթեմատիկայով՝ երկրաչափությամբ և հանրահաշվով, ջանասիրությամբ ուսումնասիրում էր ֆիզիկան և նույնիսկ փորձեր էր կատարում: Մի անգամ, երբ նա փորձում էր շահագած կրի օգնությամբ ծծմբային մկնդեղի և օդու միջոցով պատրաստել անգույն թանաք, շշի մեջ նրա կողմից թափահարվող խառնուրդը պայթեց և ցայտեց նրա դեմքին. մեկ ու կես տարի Ռուսոն համարյա թե կույր էր: Վերջիվերջո տեսողությունը վերականգնվեց, բայց փորձերին նա սկսեց ավելի զգուշ վերաբերվել:

Այդ նույն տարիներին Ռուսոն ուսումնասիրում էր աստղագիտություն, քիմիա, բուսաբանություն, լատիներեն, բայց, ինչպես ինքն էր խոստովանում, նրա ամենասիրած առարկաներն էին պատմությունը և աշխարհագրությունը: Վերընթերցեք նրա «Տրակտատները», շատ ավելի ուշ գրված փիլիսոփայական-բազաբական երկերը: Որքան հաճախ, որքան հեշտ է դրանց հեղինակը գիմում պատմության փաստերին, հիմնավորում պատմական աշխատություններից բաղված փաստարկումներով: Այս ամենը պատմության գրքերի՝ պատանեկության շրջանում սկսված և Շարմետում երջանիկ օրերին լիովին գիտակ-

ցարար շարունակվող սիստեմատիկաբար, խնամքով ուսումնասիրութեան պատուներն էին:

Ամբողջ կարդացածը ոչ միայն հարստացրեց նրա գիտելիքներն ու կարգավարժեց նրա միտքը, այլև թույլ տվեց նրան համակարգել նախկինում նրա գիտակցութեան մեջ անորոշաբար թափառող գիտումները, զգացումները, մարերը: Արդ զրանք ձևեր էին բերում հստակ ու պարզ ձև: Ռուսոյի մեջ առաջացան ու ամրապնդվեցին այն համոզմունքները, որոնք նա շուտով ձևակերպում է որպես նվիրվածություն հանրապետութեանը և հրամարումն գլուխ խոնարհելուց «պալատական խառնակչախմբի» և մեծագոր հարուստների առջև:

Այսպես աննկատելիորեն Աննեսիում, Շամբերիում և Շարմետում Ժան-ժակ Ռուսոն աստիճանաբար դարձավ ժամանակի ամենակարգացած և ամենակրթված մարդկանցից մեկը:

Իսկ ո՞վ էր նա, այդ երիտասարդ Ռուսոն, իրեն իմացող մարդկանց աչքում: Իսկն ասած, ոչինչ՝ տիկին ղը Վարանսի քարտուղարը կամ կալվածքի կառավարիչը, մի հաճելի երիտասարդ, մի քիչ երաժիշտ, մի քիչ կղերական. քսանհինգ տարեկան հասակում նա ոչ կարողություն ուներ, ոչ պիտք. էլ ի՞նչ ապագայի մասին կարող է խոսք լինել:

Այնինչ Ֆրանսիայում այդ ժամանակ, XVIII դարի 30-ական թվականներին, արգեն ձեռվորվում էր երկրի ամենախնքնատիպ և ամենաուժեղ մտածողներից մեկը:

Ռուսոն տիկին ղը Վարանսի տանն անցկացրած ժամանակն անվանում էր իր կյանքի ամենապայծառ, ամենաերջանիկ ժամանակը: Բայց «երջանկություն» բառը ոչ պատահաբար և՛ ուսերեն, և՛ Ֆրանսերեն լեզուներում ստուգաբանորեն կապված է սահմանափակ անողությունը ժամանակի՝ ժամի հետ: Երջանկությունը չի կարող հարստե րինել: Եկավ նաև Ժան-ժակին սկզբնական շրջանում հավերժական թվացող դաշինքի վախճանը: Ե՛վ Ռուսոյի, և՛ տիկին ղը Վարանսի համար, կողմերից յուրաքանչյուրի համար յուրովի, վրա հասավ այն ժամանակը, երբ նրանք հասկացան, որ ամենալավագույնը միմյանց հրաժեշտ տալն է:

Նվ ահա կիոնում համեմատաբար ոչ երկար ժամանակ մնալուց հետո Ժան-ժակ Ռուսոն՝ ղեռես ոչ մեկի կողմից չճանաչված, բայց ծրագրերով և հույսերով լեցուն երաժիշտը, 1742 թվականի աշնանը հայտնվեց Փարիզում:

Անհրաժեշտությամբ ընդհատված պատմությունը, որպեսզի լիեկուզև լայն վրձնախազերով վերականգնվի Ռուսոյի կյանքի սուր նախորդող պատկերը, վերագտնում է իր հունը:

Գարձյալ մեր առջև է Ժան-ժակ Ռուսոն, որը ղեռ ոչ մի մեծ գործ չի կատարել, ղեռ ոչինչ չի ստեղծել: Բայց այնուամենայնիվ շրջապատված է հարգանքով, մեծարանքով, ցանկալի հյուր է Փարիզի ինտելեկտուալ ազնվականության վերնախավի և բարձր դասի սալոններում:

Գովառից եկվորը զուսպ էր և անկեղծ իոսակցություններ չէր վտրում: Բայց նրա ղրուցակիցները՝ խելոք մարդիկ, որոնք կարողանում էին անկաշկանդ ազնվակիր ղատարկախոսության նեաևում թաքցնել ներքին անհանգստությունը վաղվա անորոշ օրվա հանգեպ՝ ղգում էին, որ այդ ղափազանց սակավախոս երիտասարդը գիտե ինչ-որ բաններ, որ ղգիտեն իրենք՝ բազմափորձ, ղատ բան տեսած մարդիկ:

Եվ իսկպես, նա գիտեր այն, սրի մասին այդ երեկի պարունները գիտի ղէին ընկնում: Նրանք այնքան էին թաղված ստորյա ազնվակիր ղոփողունի, պալատական մանր խարդավանքների, մրցակցող փառասիրությունների, ընդհարումների, մանրախնդիր բամբասանքների մեջ, որ վաղուց էին դազարել լսելու ժամանակի ձայնը, իրենց երկրի ձայնը:

Հեռատես աչքը և նուրբ, ամեն ինչ հիշող լսողությունը Ռուսոյին պարզեեցին հատուկ ընկալունակություն իր տեսած ուշխարհի գույների, ժամանակի աղմուկի նկատմամբ: Նա կարողացավ դարաշրջանի բազմաձայնության մեջ լսել առաջատար և ավելի ու ավելի սաստկացող լեյտմտաիվը՝ ժողովրդի մոտալուտ ա՛նեղ ղայրույթը, մերձեցող հսկայախոն ուժի հեղափոխական պայթյունի վերահաս պրղղունը:

Ռուսոյի ղիջում ղնանաչող անհաշտելիությունը այս աշխարհի ղորեղների նկատմամբ, նրա համոզված ղեմոիրատիղմը և ղանրապետականությունը ղալխա էին ոչ այնքան ղրքերից, որբուն սեփական կենսափորձից, այն ամենից, ինչ նա տեսնում էր ու լսում: Նա ոտքով շրջագայել է գրեթե ամբողջ թագալորությունը, ղիշերել գլուշայցիների հյուղակներում և ղրավորների աղբատ խրճիթներում: Նրա սրատես հույացքը նկատում էր ամեն ինչ, լսողությունը որսում էր բոլոր սրտանձրիկ նստաները:

ժողովուրդը տնքում էր ֆեոդալական ճնշման դաժան լծի տակ, սենյորները: կամայականություններից, ուժից վեր հարկերից և պարհակներից, բեդյարից, թագավորական շինությունների անօրինականություններից, կապալառուի ազահույությունից, դատական քաջքուղիներին անգիտություններից: Աստվածային երանությունը օժված այդ երկրում նորին մեծություն բոլոր ստորին հոգատակները, թագավորի աստվածային ողորմածությունը, արդեն գիտեին, որ այդ «ծուռ հայելիների թագավորությունում» ոչ արգարություն, ոչ էլ ճշմարտության կհասնեն:

1741—1743 թվականներին Փարիզի հյուրասենյակներում Ռուսոյի հաջողության գաղանփը թաքնված է ամենից առաջ այդ սայունների մյուս մշտական հաճախորդներին՝ երիտասարդ երաժշտի նման շինելու մեջ: Լա՞վ էր դա, թե՞ վատ: Դո՞ւր էր գալիս դա, թե՞ ոչ: Դատեցեք ինքներդ: Հավանաբար, կարծիքները շեղին համընկնում: Եվ այնուամենայնիվ բոլոր կարծիքների մեջ եղած տարբերությունը հանդերձ այդ սակավախոս երիտասարդի մեջ ավելի շուտ զգացին, քան թե հասկացան ինչ-որ նոր, և միզուցե, նույնիսկ նշանակալից բան:

Բայց կար և մեկ ուրիշ բան:

Մենք երբեմն մոռանում ենք XVIII դարի առաջին կեսի լեզվի մասին: Ինչպիսի՞ տրհեստականորեն վերամբարձ, շափաղանցված նրբակերտ, պաճուճազարդ լեզվով էր ընդունված խոսել այն ժամանակ: Իհարկե, Մոլիերի «Միծաղելի սեթևեթողներից» հետո այսպես կոչված ճշգրիտ ոճը իր նրբակիրթ ավելորդություններով, իր ճստմ հաճոյախոսություններով, սոնետներով ու ոսնդոսնդով արդեն անցյալի գիրկն էր անցել: Բայց նրան փոխարինելու եկած նույն, է՛լ ավելի ճզճիտացած, անմտության աստիճան վայելչագեղ թեթևաոյկությունը, որին հետո սկսեցին անվանել ոչ այնքան պարզ «տոկոկո» տերմինով, ըստ էության այնքան էլ շատ չէր տարբերվում նրանից: Եվ դա միայն Լյուդովիկոս XV թագավորի պալատական միջավայրի բողոքարարյին բամբասանքների ոճը չէր: Այն ժամանակ երրորդ գասից ոչ ազնվական ծագում ունեցողների համար գրամեն արդեն ճանապարհ էր հարթել դեպի արտոնչալ դասերի անհաղորդ աշխարհը: Բայց «ազնվականացած քաղցրներին», բուրժուաները որոնք լիքը քսակի օգնությունը մուտք էին բացում դեպի ազնվավազարմ դաս, շտապեցին յուրացնել ազնվականության վերնախավի շարժումները, բարբերը, ոճը և ամենից առաջ խոսքը:

սա բոլորից հեշտն էր: Բոլորը ձգտում էին ընդօրինակել Սեն-ժերմեն արվարձանի նորածնությունների օրենսդիր կանանց: «Բախտի և սիրո խաղը», ինչպես ընդունված էր ասել այդ հարյուրամյակում, տիրել էր բոլորի մտքերին, կամ համենայն դեպս ներկայացվում էր իրեն ինչ-որ ամենակարևոր բան: Բոլորն աշխատում էին խոսել շափաղանցված զգացմունքների սեթևեթ լեզվով: Կարդացեք XVIII դարի նույնիսկ ամենասրամիտ, ամենածաղբասեր հեղինակի՝ Վոլտերի նամակները: «Ուղարկում եմ ձեզ, թանկագին պահապան հրեշտակ, իմ նուշագրությունը...», «Ի՞մ սքանչելի պահապան հրեշտակ...», «Ֆաղաբքական խոսքերի այսպիսի զուգահեցումները գերազանց է օգտազործում վոլտերը դ՛Արժանատալի, Պան դյու վելլի և ուրիշների հետ իր նամակագրության մեջ: Իսկ նրա թղթակիցները՝ նրանք է՛լ ավելի մեծ փութաջանություն են հանդես բերում. «Յ՛հ դուք, Պյուաուս Իպոկրենա, սիրելի հմայելի Գեյոն, դուք, որի դահլիճը միշտ լեցուն է ամենաընտրյալ հասարակության հյուրերով...», այսպիսին է թմնական-վերամբարձ ճոտմ գիմելաոճը հռչակավոր գրողին:

Դա էր հարյուրամյակի լեզուն:

Ռուսոն խախտեց այդ սալոնային ճշվոցը, այդ «թուշնային լեզուն», ինչպես ավելի ուշ, մեկ այլ առիթով, կասի Գերցեներ իր պարզ ու ճշգրիտ խոսքով: Նրբ նա առաջին անգամ հայտնվեց մոլայնիկ սայուններում, ամենևին էլ չէր մտածում իր ուսուցիչների, հարցերին տված իր պատասխանների գրական կողմի մասին: Նա պարզապես աշխատում էր ճշգրիտ հաղորդել իր միտքը: Երևի ավելի:

Նա կատարելապես տիրուպետում էր իր մտքերը, զգացմունքները, ցանկությունները ճշգրիտ, նույնական, ինչպես հիմա մենք կասեինք, բառերով արտահայտելու ուղի, թվում է թե հասարակ, բայց միևնույն ժամանակ ամենևին էլ ոչ շատերին մատչելի ընդունակությունը: Դա, եթե կողեր, հատուկ ձեռք է: Ռուսոյի մեջ այն, ըստ երևույթին, զարգանում էր աստանդական կյանքի պայմանների թելադրանքով. այն ծնվել էր կենսական անհրաժեշտությունից: Այդ նույն պատճառներով նրա խոսքը ևս մի առանձնահատկություն ձեռք բերեց՝ այն պարզ էր, ազատ աճին տեսակ սեթևեթությունից, դա հասարակ մարդկանց ազդված խոսք էր:

Ինչպես արդեն ասվել է, ժան-ժակը իր ժամանակի ամենա-

կարգացած մարդկանցից մեկն էր: Բայց, իր խոսքը հարստաց- նելով ամբողջ կարգացածով, ամբողջ լսածով, նա կարողացավ պահպանել այն, ինչը նրա անդիմադրելի ուժն էր՝ բառերի պար- դությունը և արտահայտչականությունը, ֆրագի կառուցման լիակատար համապատասխանությունն այն մտքին, որը նա ցանկանում էր արտահայտել:

Ըստ էության Ռուսոյի ամբողջ երկարատև կյանքի ընթացքում բարձր մնում էր նրա միակ զենքը: Անօթևան պատանեկությունը շրջանում լատը նրա առջև բացում էր գլուղացիական խրճիթ- ների նիգով փակված դռները, ավելի ուշ նույն բուռը պետք է նրա համար բացեր մարդկության սրտերը:

Բառին տիրապետելու այդ դարձանալի ձիրքն անգամ Ռու- սոյի գրական ժառանգության մեջ նշմարվել է շատ վաղ: Դյու- ֆուրը իր ժամանակ կազմեց և քսան հատորով հրատարակեց Ռուսոյի նամակների և նրա մի քանի թղթակցությունների՝ պատ- րաստման ճշգրտությունը և մանրազննությունը աչքի ընկնող հիանալի մի ժողովածու:

Կարգացր Թուսոյի վաղ շրջանի նամակները: Որքան պարզ, թեթև, բնական է արտահայտում նա իր մտքերը:

Նույնիսկ նրա պատանեկան նամակներն ուշագրավ են կար- ծիրների, ցանկությունների պարզությամբ ու որոշակիությամբ: Հնարավոր է, որ չհիմնավորված, արհեստական կհամարվի այն պնդումը, որ զենես Ռուսոյի վաղ ստեղծագործություններում, նրա պատանեկան նամակագրության մեջ ինչ որ շարժով արդեն նշմարվում էին նրա զրակյան սճի դժերը: Իհարկե, Ռուսոյի գրական սճը զարգանում, նույնիսկ փոխվում էր տարիների հետ: Եվ այնուամենայնիվ, անգամ նրա սմեռվադ աշխատու- թյուններում, նրա նամակներում, նրա խոսակցական լեզվում արդեն հատակորեն նշմարվում է միմիայն նրան հասուկ ասաց- վածքային խոսքի բացառիկ ձիրքը:

Ժան-ժակ Ռուսոն ֆրանսիական թագավորության բնակիչ դարձավ զժվարին ժամանակներում: Միապետությունը գնում էր գեպի անկում, դրանում չէր կարելի կասկածել: Լյուդովիկոս XIV-ի՝ «արև-թագավորի» դարաշրջանի անփառունակ մայրա- մուտից հետո սմեռ մի նոր միապետի օրոք թագավորական իշխանության բարձրական հեղինակությունն ավելի ու ավելի էր ընկնում: Բայց այնուամենայնիվ միտոպետության բուն իսկ սկզբունքը, թագավորության ժառանգական իշխանության ինս-

տիտուսը ֆրանսիացիների մեծամասնության համար զենես անփրճելի էր թվում: Ժողովրդի՝ և՛ սպեռ, ծեծկված դուրացի- ների, և՛ քաղաքային շրավորության, և՛ ունեւոր բուրժուազիայի շրջանում, երրորդ դասի սահմաններից այն կողմ ևս, արտոն- յալների՝ գաղափարական ազնվականության, հոգևորականության շարքերում զենես ավանդական միամիտ հավատ էր ապրում բարի, արգարամիտ թագավորի նկատմամբ:

Երբ Լյուդովիկոս XV-ը 1715 թվականին պաշտոնապես հրո- շակվեց թագավոր, նա ընդամենը հինգ տարեկան էր: Ֆիլիպ Ապիանցու ռեգենտության ժամանակը ֆինանսական սկան- դալներով, շարաշահումներով, Ջոն Լոուի ավանտյուրաներով, արքունիքի (իբ՝ Ֆիլիպի, նրա դուստր, դքսուհի Բերրիի և նրանց պինարբուքների մասնակիցների) սանձարձակ ցոփությունը, բարքերի նեխվածությունը հանդերձ, որը ցուցադրվում էր սրպես կյանքի վատնում խրախճանքների ու անառակության մեջ, նպատեց ուպագա միապետի հանրաճանաչությանը: Բուր զմպահների, — իսկ դրանք բանին էին, — փայտայած լավագույն, ավելի արգարացի ժամանակների հույսերը կապվում էին ապա- գա թագավորության հետ...

1723 թվականի հոկտեմբերին Լյուդովիկոս XV-ը հայտարար- վեց շափահատ, և Ռեյմսում տեղի ունեցավ նոր միապետի թա- գավորության հանդիսավոր արարողությունը: Բայց թագավորն ընդամենը տասներեք տարեկան էր, արդյոք նա կարո՞ղ էր կիսամանակական տարիքում պահել կառավարման զեկը: Պետա- կան իշխանությունը նորից հայտնվեց պատահական ձեռքերում: Ակզրում դա Բուրբոնյան դուքսն էր, ավելի ճիշտ, նրա սիրուհի մարկիզուհի դը Պրին, որն անսահմանափակ ազդեցություն աներ դքսի, իսկ նրա միջոցով և պետական մեխանիզմի բոլոր սպակների վրա: Որպես խոշոր ֆինանսիստի դուստր, սերտ կա- պեր պահպանելով դրամական ազդեցիկ անձանց հետ, նա կա- ստարական շքասենյակների դռները լացն բաց արեց նրանց տոջն: Բուրբոնյան դքսի անունը բողաբկում էր ֆինանսական մեծ գործարարների՝ Բերնարի, Պարի եղբայրների և փոփոխ- վող դրամական կուրսի հետ բարձր ու կասկածելի խաղերի մյուս մասնակիցների իսկական իշխանությունը:

Բուրբոնյան դքսի կառավարման երեք տարիների ընթաց- բում մարկիզուհի դը Պրին և նրան շրջապատող ֆինանսական գործարարների ու խարդախների սճմակը կարողացավ թագա-

վորութիւնը հասցնել ծայրահեղ ձգնաժամային վիճակի: 1725 թվականի ամռանը ընդհանուր դժգոհութիւնը, որ խորացել էր հացի և մյուս սննդամթերքների գների անընդհատ աճից, հասցրեց ժողովրդական լայն ելույթներին: Հուլիս-օգոստոս ամիսներին Սեն-Անտուան արվարձանի արհեստավորների և շրավորների ամբոխները սպառնալից բացականչութիւններով բազմիցս դուրս էին գալիս մայրաքաղաքի հրապարակները: Զայրացած ժողովուրդը գրավեց նաև Ռուանի, Կանի, Ռենի փողոցները: Կառավարութիւնն ստիպված էր շտապ անցկացնել հացի գների իջեցում. միաժամանակ նա խոտովարարների գեմ ուղարկեց զինված հեծելազոր: Սեն-Անտուան արվարձանում ահաբեկելու համար պատրաստեցին կախաղաններ. խոտովարարների երկու պարագուխների կախաղան բարձրացրին:

Բռնութիւններով և մասնակի զիջումներով ժողովրդական ցատումը զաղարեցվեց: Բայց Բուրբոնյան դուքսը, որը բացի այդ երկարատև ու սուր կոնֆլիկտի մեջ էր մտել պառլամենտի հետ, ստիպված էր իր տեղը զիջել Ֆրեժյուսի դը Ֆլերի եպիսկոպոսին: Լյուզովիկոս XV-ի նախկին դաստիարակը, որն առաջվա նման պահպանել էր անդրիտիսյան վիթխարի ազդեցութիւնը իր աշակերտների վրա՝ սկզբում եպիսկոպոս, իսկ հետո կարդինալ, շնայած իր զառամյալ հասակին (1726 թվականին, երբ սկսվեց նրա կառավարումը, նա արդեն յոթանասուններեք տարեկան էր), կարողացավ ամուր կերպով վերցնել իշխանութիւնը և տասնյոթ տարի շարունակ այն պահել իր կառույն ձեռքերում: Նուրբ շրթունքների վրա թափառող բարեկամական, կարեկցալից ժպիտով, բաց երկնագույն աչքերի պարզ հայացքով, շնչոված, համեստ, միշտ սև հագած այդ, թվում է թե, աննկատելի բարձրաստիճան կաթիլիկ հոգեորականը հսկայական ազդեցութիւն ձեռք բերեց թագավորութիւնում: Նախընտրելով մնալ ստովերում, հարվածներ հասցնել թիկունքից կամ կողքից և գերազանցապես ուրիշի ձեռքերով, հաշվենկատ, համբերող իր շափից դուրս փառասիրական պլանների իրականացման մեջ՝ կարդինալը աստիճանաբար, քալ առ քալ ուժեղացնում էր իր գլխիցը պալատում:

Սկզբում կարդինալ դը Ֆլերին օգտակար էր համարում բարեկամութիւն հաստատել Բուրբոնյան դքսի և Ֆրանսիայի փառաւան տիրակալ մարկիզուհի դը Պրիի հետ: Նա կարողացավ շահել նրանց լիակատար վստահութիւնը: Նրանց ընդհանուր

բանքերով Լյուզովիկոս XV-ին ամուսնացրին Մարիա Լեշչինսկայալի՝ չեհական նախկին թագավոր Ստանիսլավի դստեր հետ: Ֆլերին հույս ուներ, որ այդպես անսպասելի կերպով դառնալով Ֆրանսիայի թագուհի, այդ կինը կդառնա իր ցանկութիւնների հլու կամակատարը: Արդ ժամանակ անց նա համոզվեց, որ նոր թագուհին բացահայտորեն նախընտրութիւնը տալիս է ոչ թե իրեն, այլ Բուրբոնյան դքսին:

Շրջահայաց կերպով, առանց շտապելու, ոչ սքի շհայտնելով իր մտադրութիւնները, Ֆլերին նախապատրաստեց և վարպետութեամբ անցկացրեց Բուրբոնյան դքսի ակնթարթային անկումը: Նրան ոստիկանութեան հսկողութեան տակ ուղարկեցին Շանտիյէ, իսկ մարկիզուհի դը Պրիին՝ Նորմանդիայի իր կալվածքը: Եթե հավատանք դ՛ Արժանսոնին, երիտասարդ կինը, չկասկածելով անգամ, որ թագավորութիւնում այդպիսի հափշտակութեամբ խաղացած իր առջին գերը այդպես հանկարծակի կընդհատվի՝ վշտից շուտով ինքնասպան եղավ<sup>23</sup>: Պալատական այդ հեղաշրջումը Լյուզովիկոս XV-ին ներկայացվեց որպես հոգատարութեան ակտ թագավորի անսահմանափակ իշխանութեան ամրապնդման համար: Ֆլերին ամեն կերպ ընդգծում էր, որ այսուհետև երկիրը պետք է կառավարի միայն միապետը: Կարդինալը թագավորի հետ խոսում էր խոնարհ գլուխ տալով. նա միշտ մնում էր որպես միապետի կամքի հնազանդ, հարգալից կատարող: Բայց շուտով շտտերն զգացին, որ, թեև թագավորում է Լյուզովիկոս XV-ը, թագավորութիւնն իրականում կառավարում է զառամյալ կարդինալ Անդրե-Գերկյուլ դը Ֆլերին:

Զառամյալը՝ Որբան մարդիկ են հատուցել կարիերայով, հարստութեամբ, նույնիսկ գլխով բնութեան օրենքների հետ միամիտ հույսեր կապելու համար: Այդ շորացած, տկար մարմինը, թվում էր, թե ենթակա չէ ժամանակին: Դա մի մարդ էր առանց տարիքի: Կարդինալը արդեն «մանրում էր» ութերորդ տասնյակը, իսկ կարծես թե մնում էր միշտ նույնը, պահպանելով մտքի պարզութիւնը և հեռառես հայացքը: Նա ամեն ինչ նկատում էր, ամեն ինչ լսում: Դը Ֆլերիի հետ զրուցյունների ժամանակ վտանգավոր էր շոշափել տարիքի թեման: Բայց եթե այդ թեման կողմնակի կերպով շոշափվում էր, նա աշխատում էր զրուցակցին ներշնչել, որ պահեստում դեռ շատ տասնամյակներ ունի: Մի անգամ համեմատաբար երիտասարդ, եկեղեցու բարձրաստիճան մի պաշտոնյա Ֆլերիին խնդրեց պաշտպանել

իր բարեկամին, ինչին կարգինալը վստահորեն պատասխանեց. «Մի՛ անհանգստացեք: Ձեր մահվանից հետո ես կհոգամ նրա մասին»: Ասենք, երբեմն նա իրեն ձևացնում էր հոգնած, գառամշալ, հիվանդուտ: Բայց վա՛յ նրան, ով վստահելով այդ կարծեցյալ թուլությանը սկսում էր հաշիվներ կառուցել, առաջին տեղում շտապագրելով կարդինալին: Նրան սպասում էր ակնթարթային, ավելի հաճախ մահացու հարված: Թվում էր, թե այդ գառամշալ ձերուներին փակ աշխերով անգամ ամեն ինչ տեսնում է:

Ժամանակակից ֆրանսիական պատմագրության մեջ աչուղղության ֆրանսիացի պատմաբանների ջանքերով փորձ ձեռնարկվեց «ունարիլիտացիայի ենթարկել» Լյուդովիկոս XV-ին, վերանայել նրա գործունեության և անձնավորության ավանդական դարձած խիստ բացասական գնահատականը և նրան ներկայացնել բոլորովին այլ լույսի տակ՝ իմաստուն, բարի, չորրի կողմից սիրված միապետի դերում: Այդ պատմական մեկնակերպի (այն ուներ ցայտուն կերպով արտահայտված միտումնավոր-ջատագովական բնույթ և տրամաբանորեն տանում էր դեպի հեղափոխության դատապարտում, որը, իբրև թե, շունեք որևէ հիմք) նախաձեռնող Պիեր Գալիտոն էր: Լյուդովիկոս XV-ին նվիրված և կարճ ժամանակամիջոցում շատ հրատարակություններ ունեցած գրքում Գալիտոն պնդում էր, որ «Լյուդովիկոս XV-ին դատեցին միմիայն նրա հակառակորդների ցուցմունքների հիման վրա»<sup>24</sup>: Ընդ ազատ մեկնաբանելով այդ հասկացությունը, անտեսելով ժամանակակիցների վկայությունները կամ վարկաբեկելով դրանք, նա փորձում էր թագավորի «վեհությունը» հիմնավորել այն բանով, որ նա իբրև թե ամրապնդեց ֆրանսիական պետության ուժն ու համախմբվածությունը: Գալիտոնի մատնանշած ուղին հաճույքով շարունակեցին Պիեր Լաֆոն, Ժակ Լերոնը և զգալի չափով Ռոլան Մունիեն<sup>25</sup>: Լյուդովիկոս XV-ի «ունարիլիտացիան» անխուսափելիորեն առաջ բերեց և կարդինալ Ֆլերիի «ունարիլիտացիան», — այս մեկնակերպի կողմնակիցները հանգիստ սրտով պատրաստ էին և՛ թագավորին, և՛ կարդինալին բարձրացնել պատմության ամենավերին պատվանդանին: «Նրանք երկուսով համատեղ ջանք էին թափում ի բարբորություն պետության»<sup>26</sup>, — պնդում էր Լերոնը:

Սակայն այդ նորագույն պատմական կառուցումները, որոնք հիմնված էին ծայր աստիճան խախուտ հիմքի վրա, հազիվ թե կարող են մեկնումեկին համոզել: Պատմաբանին հայանի բոլոր կարևորագույն ազդեցությունները նրանց դեմ են վկայում: Ինքնին հասկանալի է, որ դա չի նշանակում, թե կարելի է անտեսել XVIII դարի Ֆրանսիայի սոցիալական պատմության ուղարկության արժանի փաստերը: Այսպես, օրինակ, չի կարելի ժխտել երկրի ազգաբնակչության աճի նշանակությունը: Բայց ակնհայտ է զանուն, որ այդ երկարատև պրոցեսները, որոնք Պիեր Գուրբերը հակված էր անվանել «ժողովրդագրական հեղափոխություն»<sup>27</sup>, իհարկե բացատրվում էին ոչ այնքան Ֆլերիի կամ Լյուդովիկոս XV-ի վարչական ընդունակություններով (եթե անգամ այդպիսիք նրանք ունենային), որքան շատ ավելի կարևոր գործոնների ազդեցությամբ՝ XVIII դարում ժանտախտի համաճարակի դադարումով, մանուկների մահացությունից նվազումով, հողի մշակության աստիճանական բարելավմամբ, գյուղատնտեսական տեխնիկայի կատարելագործմամբ և այլն: Հավասարապես այնպիսի պրոցեսներ, ինչպես, ասենք, ցորենի և մյուս հացահատիկների գների իջեցումը 1726 թվականից մինչև 1737 թվականն ընկած ժամանակաշրջանում, նույնպես չեն կարող վերագրվել կարդինալ դը Ֆլերիի տաղանդին թեկուզև այն պատճառով, որ նմանօրինակ երևույթներ նկատվեցին և ավելի ուշ, երբ կարդինալի աճյունն արդեն հանգչում էր (ի թեթևություն բոլորի) խոնավ հողում<sup>28</sup>:

Ճիշտ է միայն այն, որ Լյուդովիկոս XV-ի թագավորության բարձրաձայն ազդարարման առաջին տարիները, այսինքն սկսած 1726 թվականից, ծնեցին որոշ պատրանքներ: Թագավորի հպատակների մեծամասնությունը, որն անտեղյակ էր վերսայան պալատի գաղտնիքներին, տեսնում էր միայն ամբողջ երկրի վրա վեր հասնող երիտասարդ թագավորի վայելչակազմ իրանը, ստտի և միապետի հանդեպ՝ մոր կաթի հետ ընդունած ավանդական խոնարհությամբ, նրանից սպասում էր միայն բարիք, միայն լավ բան և իմաստություն: Իսկ կարդինալ դը Ֆլերիի չարգալից խոնարհված կիսաթեք սև ուրվապատկերը արբուհիրին խորթ ժամանակակիցները բոլորովին չէին նկատում կամ էլ նշանակություն չէին տալիս նրան. նրա մեջ տեսնում էին լոկ թագավորի հնազանդ ծառաներից մեկին:

Քսան տարվա բնթացքում, Լյուդովիկոս XIV-ի մահվանից հետո, ավելի ստույգ 1714 թվականի Ռաշտատի հաշտության պայմանագրից մինչև 1733 թվականի Ավստրիայի դեմ լեհական ժառանգության համար պատերազմը, Լյուդովիկոս XV-ի հպատակներն օգտվում էին աշխարհի անսովոր, գրեթե անճշմարտանման թվացող բարեբեռներից: Նախորդ թագավորության գրեթե անընդհատ շարունակվող պատերազմներից հետո երկու տասնամյակ տևած խաղաղությունը Ֆրանսիացիներին մեծ երջանկություն էր թվում: Մարդկանց անվերջ չէին սնանկացնում և չէին սպանում. արգարև, արժեք փառաբանել երիտասարդ իմաստուն թագավորին:

Բայց ժամանակն անցնում էր, և ամեն ինչ աստիճանաբար էր աեղն էր գտնում: Թագավորության գործերի խնկական վիճակին, արքունիքի կյանքին մոտիկից ժանոթ մարդիկ համոզվում էին այն բանում, որ պատրանքների համար, նույնիսկ ներկայի ու ապագայի քիչ թե շատ նպաստավոր գնահատականի համար ոչ մի հիմք չկա: Երիտասարդ թագավորը, որ Բուրբոնյան դքսի անկումից հետո տաքացած հայտարարել էր, թե այստուհետև ինքն է լինելու իր առաջին մինիստրը, շուտով անտարբեր դարձավ պետական գործերի նկատմամբ և սկսեց հետզհետե այդ գործերը վերազատահել իր նախկին դաստիարակին: Կարգինալ զր Ֆլերին դիտավորյալ կերպով խուսափում էր մինիստրի պաշտոնական կոչումից, այնպես, ինչպես և առհասարակ պաշտոնական մեծարանքից: Հենց որ թագավորը երևում էր, նա անհապաղ իրեն կորցնում էր, խոնարհվում էր նրա առջև և վերածվում նրա շարժուն, երերուն տատանվող սովերի: Չար լեզուները (իհարկե, շշուկով և շորս դին նայելով) պնդում էին, որ թագավորի ներկայությունը նույնիսկ կարգինալի հասակն էր կարճանում,

Յուր տիրակալը դարձած օգոստոսական սանի նկատմամբ տաժած «սիրուց» կարգինալ զր Ֆլերին ահաճություններ էր վրա էր վերցնում պետական գործերի կամավոր բեռը և զովարությունները: Աստիճանաբար, աննկատելիորեն նա միապետին գրեթե լրիվ ազատեց բոլոր ձանձրացնող հոգսերից: Ֆլերին շնորհալի թագուհու գրեթե անհրաժեշտ զգացմունքները իր երեխի անձին նկատմամբ: Պաշտոնեկով արտաքուստ մեծագույն ակնածանք թագուհու հանդեպ, կարգինալը միաժամանակ խիստ ջանասիրությամբ (թեև, հասկանալի է, ամենավախելու և բավականա-

յալի քողարկված ձևով) թելադրում էր թագավորին, թե ինչպես կարելի է որոշ դեպքերում չլա գնալ առանց թագուհու: Միապետը խիստ դյուրընկալություն հանդես բերեց այդ բնույթի տկանակների նկատմամբ, նա ամեն ինչ հասկացավ կես խոսրից: Մինչ այդ գերազանցապես սրտաբախյալ զվարճաբուրդ երիտասարդ թագավորի ուշադրությունը գրավեցին երիտասարդ տիկինները, սրտնք պատրաստ էին միապետի հետ կիսել ցանկացած արկածների վտանգը: Այդպես Լյուդովիկոս XV-ի թագավորության տարեգրության էջերում ի հայտ են գալիս նրա մտորանքների (տարիուհիների) անունները՝ տիկին զր Մելլի, լետո նրա կրտսեր քույրը՝ տիկին զր Վենտիլի և, վերջապես, երրորդ քույրը՝ տիկին զր Տուրնել, որը զլխ էր բնկել, որ իրեն հարմար է միայնակ օգտվել օգոստոսական երկրպագուի ուշադրությունից, չկիսելով այն իր քույրերի հետ: Այդ հարամությունը ստաշաճ կերպով վարձարվեց՝ Մարի-Աննի զր լա Տուրնելը սրպես պարզև օտացավ Շատորու գրությունը (80 հազար լիվր սևետաշով), ինչպես հայտարարվեց, ի հատուցումն թագուհու նկատմամբ նրա նվիրվածություն<sup>29</sup>: Լյուդովիկոս XIV-ից և ուրիշներ Թուրանյան դքսից հետո Ֆրանսիական բարձր հասարակությանը, այսինքն պալատական շրջապատին զովար էր որևէ բանով զարմացնել, և նշանավոր մեծագործիկ աստիճանավորները հարգանքով խոնարհվում էին: զր Շատորուի սոյն, որի ճկույթի մի շարժումը ավելի մեծ կշիռ ուներ, քան նորին մեծության մինիստրների ընդարձալ: զր լեզուները:

Այն ժամանակ, երբ «աստծո ողորմածությամբ Ֆրանսիայի լեզուները» իր ազատ ժամանակն անց էր կացնում զր շրջապատին իրախճանքների մեջ Ռամբուլեում, Շուազիում կամ հեռավոր սրտաբախական զգալիներում, կարգինալ զր Ֆլերին խաղաղ, գրեթե վանականի մեղություն մեջ մեթոդիկ կերպով գործում էր իր ստրգոսայնը, որը պատել էր ամբողջ թագավորությունը: Կարգինալը ծեք էր ու թուլ, և ից մաադրությունն իրագործելու համար նրան հարկավոր էին նվիրված օգնականներ: նրա հենարանը զարձան ճիզվիտները: նա կառավարում էր երկիրը՝ հենվելով ոչ միայն և ոչ այնքան միապետության բուրգերտական սպարտոսի, որքան ճիզվիտների աներևույթ իշխանության վրա: Կարգինալի կառավարման տարիներին ճիզվիտները վերստին նկալական ուժ ձեռք բերեցին: Թագավորական սրալատում, լապուհու ննջասնյակում, բարձր գոսի և սպաների ուրախ

խնջուղքների ժամանակ թաքնվում էին անձայն սև սավերնեղը, շարժվելով վարազույրների հետևում:

Բայց ճիզվիտները կարգինալին չէին ծառայի նրա բարեպաշտության համար՝ նրանք ոչինչ ձրի չէին անում: Եվ Ֆլերին վճարում էր ճիզվիտներին մասնակիորեն նրանց հետ կիսելով իշխանությունը և վարելով նրանց շահերին լիովին համապատասխանող կրոնական անհանդուրժողականության քաղաքականություն: Գաղտնի ոստիկանությունը և ճիզվիտները Ֆլերիի սև կառավարության երկու ձեռքերն էին, կաշուն շոշափուկներով ձեռքերը, որոնք հասնում էին թագավորության բոլոր անկյունները: Ո՞վ կկարողանար դրանցից թաքնվել: Արդյոք կարո՞ղ էր որևէ մեկը կանգուն մնալ աստծո անունով քողարկված այդ սատանայական գաշիքի դեմ:

Այսպիսով, Դեկարտից և Պիեր Բեյլից հետո ֆրանսիական հասարակությունը հետ շարժվեց դեպի համարյա թե Բարթոլոմեոսյան գիշերվա ժամանակները: Անընդհատ կոնֆլիկտներ Փարիզի պառլամենտի հետ, յանսենիստների հետապնդումներ, անօրինական ձերբակալություններ, խայտառակ դատավարություններ, ոստիկանական լրտեսումներ՝ ամեն ինչ գործի էր գրվում աշխարհիկ հոգևորից վերացած, իրեն տեր աստծու ողորմածությանը հանձնած կարգինալ զբ Ֆլերիի ծառաների ամենօրյա պրակտիկայում: Ամբողջովին կլանված իր իրական կամ կարծեցյալ հակառակորդների դեմ ոչ մի վայրկյան շղաղարող պայքարով՝ կարգինալը բոլորից քիչ էր մտածում թագավորի հպատակների վիճակի մասին: Գյուղացիները լիովին հանձնված էին սենյորների, կապալառուների և համբարակների իշխանությանը, որոնք նրանցից քամում էին բոլոր հյուսիսը և հասցնում լիակատար քայքայման:

Լյուդովիկոս XV-ի և Ֆլերիի փառաբանության նորագույն կողմնակիցները կարգինալի ծառայությունն են համարում նրա խնայողությունը, հաշվենկատությունը, նրա հոգացողությունը երկրի հարստության մասին: Նա իսկապես որ հոգում էր հարստության մասին՝ միայն ոչ թե երկրի, այլ իր գաղտնախմբերի և ֆինանսական գործամուխների, գլխավոր կապալառուների, խոշոր արմատորների և մեծածախ առևտրականների նեղ խմբի համար: Բուրբոնյան դքսի ռեզենտության և կառավարման շՐՐ-չանից դրամատեր բուրժուազիան շարունակում էր արագորեն ուժ հավաքել: Մարկիզուհի զբ Պրին, ֆինանսիստների «աստ-

վածամայրը», որը արտաքսվել էր Փարիզից, իր վրա ձեռք բարձրացրեց, բայց խոշոր դրամատերերը բարեպաշտ կարգինալի օրոք և ճիզվիտների ամենահաս ականջների առկայությամբ շարունակում էին հարստություն դիզել է՛լ ավելի արագ, քան առաջ: Հավանաբար, նրանք հարկադրված էին բաժանել իրենց եկամուտների ինչ-որ մասը, բայց նրանք արդեն դրանք ընտելացել էին՝ կարո՞ղ էր, արդյոք, այլ կերպ լինել: Ամեն ինչ իր կարգով էր դնում՝ փողերը ճանապարհ էին հարթում դեպի ազնվական կոշտան ու տիտղոսները: Տիտղոսավոր վերնախավը, իր շարքերն ընդունելով հարստությունների տերերին, իր ներողամտության համար ինչ-որ բաժին էր պահանջում այդ հարստությունից:

Իսկ հասարակ ժողովուրդը, որ նյութապես քայքայվում էր և՛ միապետության, և՛ եկեղեցու, և՛ ազնվականության, և՛ բուրժուա կապալառուների կողմից, հասավ ծայրահեղ աղքատության: Մարկիզ դ'Արժանսոնը 1739 թվականի փետրվարին հավաստում էր. Ֆլերիի կառավարման ժամանակաընթացքում «աղքատությունն ամենուրեք արտասովոր շափերի հասավ: Այն պահին, երբ ես գրում եմ խաղաղության եթե ոչ լիառատ, ապա բավական լավ բերքի պայմաններում, մարդիկ մեռնում են մեր շուրջը՝ աղքատությունից և ստիպված են սնվել խոտով: Մեն, Անգժուա, Տուրեն, Վերին Պուատու, Պերիգոր, Օսլեան, Բերրի գավառները զտնվում են ամենածանր դրության մեջ»<sup>30</sup>: Ո՞ւմ մեղքով էր դա տեղի ունենում: Գ'Արժանսոնը ուղղակի պատասխան չի տալիս, բայց մատնանշում է, որ ֆինանսիստ կապալառուները և համբարակները սնանկացնում են երկիրը, իսկ կառավարությունը խրախուսում է այդ: «Թագավորության հետ վարվում են ինչպես թշնամի երկրի հետ, որի վրա ռազմատուգանք են դրել»<sup>31</sup>:

Կարգինալին շրջապատողների կողմից երկրի աղետալի դրության, քաղցի մատնված գյուղացիների մասին հազորդումներն ընկալվում էին որպես կառավարության հակառակորդների շարամիտ հերյուրանքներ, թեև Լյուդովիկոս XV-ը լավատեղյակ էր սովյալ գյուղացիների ողբերգական դրությանը: Շարտրի եպիսկոպոսը իր թեմում տիրող դրության մասին թագավորի հարցմանը պատասխանել էր, որ այնտեղ «տիրում է սովն ու մահացությունը, որ մարդիկ ոչխարների նման դարձել են խոտակերներ և որ շուտով բոլորին կախտահարի ժան-

տախտը»: Հասարակ ժողովրդի տառապանքների ու թշվառ վիճակի մասին թագավորին ակնածանքով զեկուցում էին Օուլեանյան դուքսը, դուքս և զքսուհի Ռոշելուարները և շատ ուրիշներ: Ասենք, թագավորին վիճակվել է անձամբ համոզվել այդ բանում: 1739 թվականի սեպտեմբերի կիրակիներից մեկին Իստյոլ անցնող թագավորական կորսեժը կանգնեցվեց և շրջապատվեց մեծ ամրոխի կողմից: Մարդիկ չէին բղավում ինչպես առաջ՝ «Կեցցե՛ թագավորը», այլ աղաղակում էին. «Եժրախտով՞ յո՞ւն է, սո՞վ է: Հա՛ց, հա՛ց տվեք»:

1739, 1740, 1741 թվականներին հացահատիկի և համապատասխանաբար հացի գներն աճեցին ավելի քան մեկ երրորդով: Մեծաբանակ գնորդները, խոշոր հողատերերը գների բարձրացումից հակաչական փողեր էին շահում: Գյուղացիները, հատկապես սովի դատապարտված գյուղական և քաղաքային շրջափռությունը մեծազույն տառապանքներ էին կրում: 1740 թվականի նոյեմբերին դ՛ Արժանսոնը նորից զրի առավ. «Աղքատների թիվը շուտով կգերազանցի այն անձանց թվին, որոնք կարողանում են ապրել առանց ողորմություն խնդրելու»: Նա նշել է, որ Շատելյոյում, օրինակ, քաղաքային բնակչության շուրջ հազար հոգուն ընկնում է 1800 չունևոր և եղբակացրել է. «Կասկածից դուրս է, որ վերջին երկու տարում ավելի շատ ֆրանսիացի է զոհվել քաղցից, քան Լյուդովիկոս XIV-ի բոլոր պատերազմների ընթացքում»<sup>32</sup>:

Գիշերային և նույնիսկ երեկոյան ժամերին Փարիզի փողոցներ դուրս գալը վտանգավոր էր: Մութն ընկնելուն պես բոլոր ճեղքերից, նկուղներից, դարպասատակերից դուրս էին սողուկում մորուքավոր աներեույթ մարդիկ, հաճախ դիմակներով, մինչև ատամները դիմված: Կրունք դիշերային Փարիզի սիրահալչներն էին: Թագավորության կառուցի ճանապարհներով գնալը նույնքան վտանգավոր էր, որքան մայրաքաղաքի գիշերային փողոցներով: Երեկոյան անձինք կառքերով սլանում էին գինված թիկնապաճ խմբի պաշտպանության ներքո: Բոլոր տեղերից տազնապալի լուրեր էին գալիս ավազակային հրոսակախմբերի հանդուգն հարձակումների մասին: Ովքե՞ր էին այդ առեղծվածային ավազակները: Ավելի ուշ, 50-ական թվականների սկզբին, բոլորի շուրթերին «վեհանձն ավազակ» ևուի Մանդրենի անունն էր, որը սարսուփ էր ազդում ազնվական դաստակերտներին<sup>33</sup>: Բայց Մանդրենի նախորդները ևս, 40-ական

թվականների «ավազակները», նույն հասարակ, աղքատ մարդիկ էին, գյուղական շրջափռությունը, որին կարիքը հասցրել էր գեների դիմելու անհրաժեշտությունը:

Իսկ ի՞նչ կլինի հետո: Թագավորության բոլոր ծայրերից ստացվող տազնապալի լուրերը քիչ էին անհանգստացնում թագավորին: Նա ղվարձանում էր: Խրախճանքներ, որս, դիմակահանդեսներ, պարահանդեսներ, շաղուցիչ ներկայացումներ: Թագավորական մտրեաները հնարամիտ էին ղվարձություններ սարքելու մեջ, և միայեաք հաճույքով հետևում էր այն բոլոր հնարանքներին, որոնք թելադրվում էին նրանց անզուսպ երևակայությամբ: Երկիրը քայքայվել էր, ժողովուրդը քաղցի էր մատնված, մարդիկ շրջափռության մեջ էին, իսկ թագավորական արքունիքը շարունակում էր ղվարձանալ: Իսկապես որ խրնջույք ժանտախտի ժամանակ: Լյուդովիկոս XV-ը հավատարիմ էր մնում նշանավոր դարձած ասացվածքին. «Մեր մի կյանքի համար բավական է: Մեզից հետո՝ թեկուզ ջրհեղեղ»:

Բայց փորձված մարդիկ, որոնք լավատեղյակ էին թագավորության իրական կացությանը, կիսաձայն հարցնում էին. «Իսկ հի՞նք մի կյանքի համար բավական չլինի՞: Եթե ջրհեղեղն ավելի շուտ հորդի՞: Այնժամ ինչպե՞ս կլինի»: 1743 թվականի հուլիսին դ՛ Արժանսոնը գրում էր. «Մի այսպիսի պետության մեջ հեղափոխությունը լրիվ հավանական է». նա խորհում էր այն մասին, թե ուր փախչի Երկրից<sup>34</sup>: Միայն նա չէր այդպես մտածում: Տիկին ղը Տենսենը՝ կարդինալ ղը Տենսենի (վերջինս փորձում էր, թեպետև առանց հաջողության, փոխարինել ղը Չլերիին) կինը մտաավորապես նույն ժամանակ գրում էր. «Եթև մեզ շօգնի ինքը՝ աստված, ապա անկարելի է, որ պետությունը չկործանվի»<sup>35</sup>: Կրա հասավ տազնապալի ժամանակը՝ կրկինն ընդատաջ էր գնում ցնցումներին:

## VII

Անցավ յոթ տարի: Ժան-ժակ Ռուսոն առաջվա նման ապրում էր Փարիզում, գրական հավաքույթների և բարձրաշխարհիկ երեկոների հաճախակի հյուրն էր, յուրօրինակ մարդ, խենթավուն դանդաղկոսի մեկը, որին, այնուամենայնիվ, հաճությամբ ներում էին նրա բոլոր անշնորհքությունները: Ծիշտ է, այժմ արդեն դժվար էր նրան երիտասարդ համարել՝ երեսուն-

հինգ-երեսունվեց տարեկան հասակում երիտասարդությունը փոխարինվում է հասունությամբ: Բայց պարոն Ռուսոն հասուն տարիքում էլ ձեռք չբերեց ոչ դիրք, ոչ տարիքին համապատասխանող ժանրաբարոյություն:

Նրան հետապնդում էին անհաջողություններ:

Նրան հովանավորող տիկնանց, և առաջին հերթին բարոնուհի դր Բեզանվայի գործադրած ցանքերի շնորհիվ Ռուսոն քարտուղարի տեղ ստացավ Վենետիկի Ֆրանսիական դեսպանատանը: Ենթադրում էին, որ այդ պաշտոնը ժան-ժակին հնարավորություն կընձևեր բացահայտելու նրա մեջ թաքնված սաղանդները և նրա առջև ճանապարհ կբացի դեպի դիվանագիտական գործունեություն: Միգուցե այդ ստաջին համեստ պաշտոնական տեղը փայլուն պետական գործունեության լոկ սկիզբը կլինի:

Ռուսոն արդյոք համաձայն էր այս պատրանքներին: Այնքան էլ հեշտ չէ պատասխանել այդ հարցին: Նա սիրում էր ճանապարհորդել, նա տեղը փոխելու հակում ուներ: Բացի դրանից, նրա առջև բացվում էր բոլորովին նոր, անծանոթ ճանապարհ՝ դիվանագիտություն՝ դա խոստովանւոյից էր հնչում. նա ինչ-որ հույսեր էր կապում դրա հետ, չէ՞ որ անբջիւտ սովորություն ուներ:

Համենայն դեպս, Վենետիկ ժամանելուն պես նա եռանդով գործի կպավ: Ֆրանսիայի թագավորի դեսպանը՝ կոմս դը Մոնտեզյունը՝ գվարդիայի կապիտանը, անհավասարակշիռ և քմահաճ մի մարդ, ամենևին չէր ուզում իրեն նեղություն տալ ամեն օր ծագող բազմաթիվ հարցերով ու հոգսերով և դեսպանատան գործերի պրակտիկ ղեկավարությունը փերավտաճեց ժան-ժակ Ռուսոյին:

Սկզբում ամեն ինչ լավ էր ընթանում: Գեսպանատան քարտուղարն աստիճանաբար սկսեց հաճույք ստանալ իր բազմազան և թվոցյալ հետաքրքիր աշխատանքից. «Ուս ամեն ջանք գործադրում էի, որպեսզի պահպանեմ լիակատար կարգ ու կանոն, և ամեն բանում, ինչ վերաբերում էր իմ գլխավոր պարտականություններին, միանգամայն հիշա լինեմ», — հետագայում գրում էր Ռուսոն «Խոստովանանքում», անկեղծորեն խոստովանելով, որ դա իր համար այնքան էլ հեշտ չի եղել: Բայց, ըստ երևույթին, նա իր պաշտոնում այնքան նշանակալից հաջողությունների հասավ, նվաճելով Վենետիկյան իշխա-

նությունների հարգանքն ու համակրանքը, որ ինչ որ ժամանակվանից դեսպանին այդ բանը սկսեց դուր չգալ:

Դեսպանատան քարտուղարի և դեսպանի միջև առաջ եկան տարաձայնություններ: Կոմս դը Մոնտեզյուն, որը սովոր չէր բաշխել արտահայտություններից, սկսեց բացահայտ դժգոհություն արտահայտել իր ենթակայի չափից դուրս ջանասիրության համար. Վենետիկում Ռուսոյի նվաճած հեղինակությունը նրա սրտովը չէր: Ռուսոն, որ մանկուց անհնազանդ բնավորության տեր էր, իր պետի ցանկություններին բնդառաջ զնալու նշույլ անգամ չցուցաբերեց:

Կոնֆլիկտը զնալով մեծանում էր և շուտով սուր ձևեր ընդունեց: Անուպասելիորեն ծագած բուռն ընդհարումից հետո Ռուսոն, դուրը շրխկացնելով, ընդմիջա թողեց Ֆրանսիական դեսպանատան շենքը Վենետիկում: Ետագայուց նա նույնիսկ չհասցրեց օտանալ իրեն հասանելիք աշխատավարձը:

Վերադառնալով Փարիզ, Ռուսոն քիչ ջանքեր չգործադրեց, որպեսզի ճշմարտացիորեն ներկայացնելով վերականգնի դեսպանի հետ իր կոնֆլիկտի իսկական պատմությունը և հասնի արդարացի որոշման: Արտաքին գործերի մինիստրության փաստացի կառավարիչ դժու Տեյլին 1744 թվականի աշնանը գրած նրա նամակները ցույց էին տալիս, թե որքան մեծ նշանակություն էր տալիս Ռուսոն Վենետիկում իր գործողությունների արդարացմանը<sup>30</sup>:

Ամեն ինչ անտեղի անցավ: Առաջվա նման նրան բնզունում էին բարյացկամորեն և նույնիսկ քնքշաբար, նրան կարեկցում էին, գովարանում, բայց խոսքերը մնում էին լոկ խոսքեր: Ռուսոն չկարողացավ օրինական բավարարվածության հասնել դեսպանի հետ ունեցած վեճում, նա շատցավ նաև իրեն հասանելիք աշխատավարձը: Նրան մերժեցին այն պատրվակով, որ նա ոչ լի Ֆրանսիացի է, այլ օտարերկրացի և, հետևաբար, չի կարող նուսայ Ֆրանսիայի հովանավորությունը:

Դա ծանր հարված էր: Այն ժամանակ նա դեռ լիովին չէր սպասվել պատրանքների նկատմամբ իր ունեցած գլուրահավատությունից, նույնիսկ նախահակվածությունից, որոնք այնպես հատուկ էին նրան երիտասարդության շրջանում: Արդարությունը, իրավունքը, օրենքը նրա կողմն էին: Գրանում համոզված էր նա ինքը, այդ բանը հաստատում էին և նրա բոլոր մտերյունները, որոնք պակաս չէին գայրացած, քան նա: Ժիշտ է,

Ռուսոն նրանց հետ էլ է ընդհարվել: Բարոնուհի զը Բեզանվայր որը ժամանակին նպաստել էր վենետիկում նրա նշանակմանը, Ռուսոյի և դեսպանի միջև ծագած կոնֆլիկտի հարցում անվերապահորեն կանգնեց Մոսկովայի կողմը ամենից առաջ այն պատճառով, որ նա գեսպան էր՝ ավագ աստիճանով և կաշու-մով: Ռուսոն տիկին զը Բեզանվային գրեց խայթիչ նամակ. «Ես սխալվել եմ, տիկին... Ես պետք է հիշեի, պետք է զգայի, որ ինձ օտարերկրացուս և պրեբեյիս, վայել չէ հանդես գալ ազնու-վականի դեմ»<sup>27</sup>: Եւ այդ տիկնոջ հետ ընդմիշտ խզեց կապերը: Բայց իր իրավացիության մեջ լրիվ համոզված լինելով, մտերիմների ու Փարիզի արտոնյալ հասարակության աջակցու-թյամբ հանդերձ, հասարակություն, որը պատրաստ էր երկու-երեք երեկոների ընթացքում կարեկցանքով (Ռուսոյի ներկա-յություններ) քննարկել վենետիկում տեղի ունեցած անցքը, նա չէր կարողանում օրեկ օրան ստանալ պաշտոնական իշխանու-թյուններից:

Այն ժամանակ, ինչպես նա հետագայում հանձն առավ «Խոստովանանքում», նրա մեջ առաջին անգամ երեսն եկտն կասեկածներ, դեռ ավելին՝ ուժեղների կողմից թուլերին նեղելն օրինականացնող քաղաքացիական օրենքների, հասարակա-կան կարգի զայրայից պատարակում:

Ռուսոն նահանջեց: Ասենք, նա չէր կարող ընտրություն կա-տարել:

Հոր մահից հետո, ոչ առանց զխացալուների, նրան ժառան-գությունից ինչ որ բաժին հասավ: Մեծ չէր այն, բայց հնարա-վորություն ավեց սրտ ժամանակ ապրել, ըմտածելով այն մա-տին, թե ինչպես հացի փող վաստակել:

Չէր բերելով ազատություն, Ռուսոն սրտից իրեն ամբող-ջովին նվիրել երաժշտությանը: Այն ժամանակ նրան թվում էր, թե երաժշտական ստեղծագործությունն է հենց նրա իսկական կոչումը:

Փարիզում Ռուսոն տրդեն սրտ հռչակ ուներ: Նա ընդունակ երաժշտի, շնորհալի կոմպոզիտորի համբավ էր ձեռք բերել: Նրա մտերիմները, — իսկ այն ժամանակ Ռուսոն շատ մտերիմներ ուներ, — գտնում էին, որ ժան-ժակը վճռական հաջողություն-ների շեմին է: Նրա երաժշտական-գրական ստեղծագործություն-ները բարեհաճորեն բնդունվեցին ոչ միայն արվեստի աշխար-հում (զրանք գովաբանում էր այն ժամանակ նշանավոր Մա-

րիվան), այլև վայելչագրության բարձրաշխարհիկ գնահատող-ների շրջանում: Նա վերսկսեց «Երբեպեղ մուսաներ»: օպերայի վրա ընդհատված աշխատանքը, որ նա սկսել էր դեռևս վենետիկ գնալուց առաջ: Նրա օպերան որոշ տեսակետից նորոշվ էր՝ հե-ղինակին էր պատկանում ոչ միայն երաժշտությունը, այլև նրա տերսար՝ լիանունը, գրնդուն և ճշգրիտ հանդով ուժեղ ապա-վորություն գործող բանաստեղծությունները: Ի տարբերություն այն ժամանակ լայնորեն ընդունված աշխատանքի բովանան անվագն երկու հեղինակների՝ կոմպոզիտորի և բանաստեղծ-լիրքեպիստի միջև, Ռուսոն ամբողջ օպերան, սկզբից մինչև վերջ, ստեղծեց մենակ: Միասնական հեղինակային մասհոացումն ապահովեց բանաստեղծությունների և երաժշտության այնպիսի միաձուլություն, որը մինչև օրս այնքան էլ հաճախ չի հանգի-ւյում:

Բայց ինչպե՞ս հասնել նոր ստեղծագործության ներկայաց-մանը թատրոնի բեմում: Պարզվեց, որ դա ավելի դժվար է, քան օպերա գրելը:

Մտերիմները Ռուսոյին ստանում են Փարիզի նոր սալոններ՝ պարտն դր լա Պոպլինների՝ գլխավոր կապալաուսի, խոշորա-գույն հարուստներից մեկի, հոյակերս առանձնատան տիրոջ, մեկենասի, այն ժամանակ Ֆրանսիական երաժշտության ամե-նահեղինակավոր և բմահաճ կորիֆեյ Ռամսյին աջակցողի ստեղծ:

Ժան-ժակին այդ հասարակությունը նողկունք էր պատճա-տում. արդեն վաղ, երաժշտության մասին դրած դիսերտացիայի ժամանակներից, նա տարածություններ սենք Ռամսյի հետ, և նրան շղաչնացնում է այդ սահմ թաղավորող երկրպագու-թյան պաշտամունքը մի կոմպոզիտորի, որին նա հակված չէր գնահատել: Նրան վստում է և այդ ի ցույց դրված հարստու-թյունը: Բայց կյանքը նրան սովորեցրել էր թաքցնել իր զգաց-մունքները՝ մինչև կհասնի ժամանակը: Պոպլինիերների հյուրա-սենյակում նա հնազանդորեն լսում է Ռամսյի ամբարտավա-նություն շափ սնսուլով ձևով աված խրատները՝ դեռ չէր եկել սարք մերկացնելու, նշանավոր կոմպոզիտորի հետ բացահայտ պաշարի մեջ մտնելու ժամանակը: Իլխավորը, որին նա ձրգ-տում է՝ իր օպերան թատրոնում բեմականացված տեսնելն է. հետագայի համար նա չի անհանգստանում:

Բայց տիկին զը լա Պոպլինիերի սուր աչքից,— այդ փոքրիկ թագավորութունում հենց այդ տիկինն էր իսկական գերիշխանը,— չեն սպրդում Ռուսոյի հնազանդ պատասխաններում խեղճված ձայնով հնչող քննադատական նոտաները: Տիկին զը լա Պոպլինիերը, որ մեծ Ռամոյի աշակերտուհին, երկրպագուն և հետևորդն էր, հեշտությամբ է կոահում շվեյցարացու իսկական զգացմունքները իր ուսուցչի նկատմամբ: Քմահած տիկնոջ բարեհաճությունը նվաճելու ուղղությամբ Ռուսոյի թափած բոլոր ջանքերը դառաւայարժան էն անհաջողության: Իսկ չէ որ մի ժամանակ նա կարողանում էր «աչքեր կապել» իսկ այստեղ նրա բոլոր ջանքերը չկարողացան հանգեցնել ոչ ավելի շատ բանի, քան տիկին զը լա Պոպլինիերի արտաքին զսպվածությունը: Տիկնոջ թիկունքին աներևույթ կերպով կանգնած էր մեծ ժան-Ֆրիսպ Ռամոն. արդեն յոթերորդ տասնամյակը թևակոխած հռչակավոր կոմպոզիտորին պետք չէր այդ երիտասարդ և հանգուզն մրցակիցը, որն անձնապաստանորեն հույս ուներ երաժշտության մեջ գնալ իր ինչ-որ ուղիով՝ ո՛չ նման այն ուղուն, որը զեպի ֆրանսիական արվեստի առավելագույն փառքն էր հարթել ինքը՝ Ռամոն:

Այնուամենայնիվ, Պոպլինիերինի սալոն հաճախելը անհետևանք չանցավ: Տիկին զը լա Պոպլինիերը, ամենայն հավանականությամբ հակառակ իր կամքի, Ռուսոյի օպերայով շարժեց դուքս զը Ռիշելյոյի հետաքրքրությունը: Այդ նշանավոր սենյորը, որ խիստ ազդեցություն ուներ արքունիքում, ինչ-որ շափով հովանավորում էր Պոպլինիեր զույգին (չար լեզուները հավատացնում էին, որ այդ շափը որոշվում էր տիկին զը լա Պոպլինիերի հետ նրա մտերմության աստիճանով, քանի որ ֆրանսիական երաժշտության կորիֆեյը կատարում էր միայն տիկնոջ երաժշտական պահանջները):

Ինչպես էլ լինի, Ռիշելյոն պնդեց, որպեսզի ժան-ժակ Ռուսոյի «Նրբագեղ մուսաներ» օպերան թագավորի հաշվին բեմադրվի բոլոր կանոններով՝ ևրգիչների, նվագախմբի, երգչախմբի հետ, պալատական բեմերից մեկում: Գուքսը հույս ուներ օպերան թագավորական արքունիքին ցույց տալ Վերսալում, եթե այն իրեն դուր գար:

Ռուսոյի օպերայի կատարումը դուքս Ռիշելյոյին հիացմունք պատճառեց: Ռուսոն հետագայում խոստովանում էր, որ օպերան գրված էր անհամաշափորեն, նրանում թույլ տեղեր շատ կային:

Ըստ երևույթին դա հենց այդպես էլ եղել է, ստեղծագործությունը շմնաց ֆրանսիական օպերային երաժշտության խաղացանկում: Բայց «Նրբագեղ մուսաներն» ունեին իրենց գրավչությունը՝ նրա փափուկ, անհոգ, ուրախ երաժշտությունն արտացոլում էր երիտասարդության լավատեսությունը, որն այն ժամանակ հատուկ էր Ռուսոյի ստեղծագործությանը:

Գուքս Ռիշելյոն բուռն կերպով ծափահարում էր. նա գմայլված էր ձայների գեղեցիկ ներդաշնակությունից և հեղինակին հավատացնում էր, որ օպերան կրեմագրվի արքունիքում: Նա միայն նկատեց, որ երկրորդ ակտը՝ նվիրված Տորկվատո Տասոյին, պետք է փոխարինվի ինչ-որ մեկ ուրիշով: Մնացած ամեն ինչ հիանալի էր համարում:

XVIII դարում յուրաքանչյուր գրան-սենյոր իրեն համարում էր արվեստի իսկական գնահատող: Գուքս Ռիշելյոյի կարծիքը գրեթե հավասարազոր էր հրամանի: Ռուսոն փակվեց իր տանը, և երեք շաբաթ հետո երկրորդ ակտը նորից էր գրված: Տորկվատո Տասոն փոխարինվել էր Հեսիոզով:

Փարիզում ոչինչ անհայտ չի մնում: Գուքս զը Ռիշելյոյի համար կատարված «Նրբագեղ մուսաները», ժան-ժակ Ռուսոյի օպերայի հաջողությունը մեկ օր անց քննարկվում էր մայրաքաղաքի բոլոր սալոններում:

Ռուսոն սկսեց առաջարկություններ ստանալ, որոնք նրան հետաքրքիր ու շահավետ թվացին: Վոլտերը նրան ուղարկեց մի նամակ, որը գրված էր ամենագովասանական արտահայտություններով. «Գուք մի անձի մեջ միավորում եք երկու տաղանդ, որոնք ցօրս միշտ առանձին են եղել: Դա ինձ կրկնակի հիմք է տալիս բարձր գնահատել և սիրել Ձեզ»<sup>38</sup>: Նա Ռուսոյին խնդրեց իր վրա վերցնել «Ռամիրայի տոնախմբությունները» օպերայի ուղղումն ու խմբադրումը, որն իր ժամանակին գրել էր Ռամոյի հետ միասին: Ռուսոն հետագայում Վոլտերի սիրալիրությունը և նրա նամակի բարեկամական տոնը բացատրում էր նրանով, որ Ռուսոն, ինչպես ենթադրում էր նշանավոր գրողը, օգտվում էր դուքս Ռիշելյոյի հատուկ բարեհաճությունից:

Շուրված Վոլտերի խնդրանքից, ժան-ժակը, մի կողմ նետելով «Նրբագեղ մուսաներ» օպերայի կատարման հոգսերը, ձեռնամուխ եղավ Վոլտերի և Ռամոյի օպերան կարգի բերելու զբժվարին աշխատանքին: Հարկ եղավ մեծ ջանքեր գործադրել՝ նա գրեց օպերայի նախերգանքը, ուղիտատիվը, գրեց վերջապրեց և

ձևափոխեց բազմաթիվ պասսաժներ. ըստ էություն նա դարձավ օպերայի երրորդ հեղինակիցը:

Բայց ավարտված աշխատանքը ժան-ժակին ոչինչ չբերեց բացի դանուբյուններից: Տիկին զը լա Պոպլինիերը, որն իրեն համարում էր ժան-Ֆլիխա Ռամոյի լիազոր ներկայացուցիչը, դժգոհություն հայտնեց աշխատանքի մեկ մի, մեկ մյուս մասի առթիվ և ստիպում էր անվերջ ձևափոխել այն: Իսկ երբ վերջապես բոլոր պահանջները բավարարված էին և օպերան բեմադրվեց թագավորական բեմում, հանդիսականներին բաժանված լիբրետոյի մեջ Ռուսոյի անունը նույնիսկ չէր հիշատակված:

Նույնքան ապարդյուն և աննպատակ դարձան «Նորագեղ մուսաներ» օպերայի վրա աշխատելու հետ կապված հսկայական ջանքերը, անքուն գիշերները, բերկրալից սպասումները: Այդ տաղանդավոր գրական-երաժշտական ստեղծագործությունը բուլոնը հավանություն էին տալիս, բոլորը հիանում էին նրանով... Իսկ օպերան այնուամենայնիվ չէր բեմադրվում:

Ավելի ուշ, 1747 թվականին, Ռուսոյի ընկերոջ, բացի այդ նրա ծառայությունների կարիքն զգացող Ֆրանկեի գործուն միջամտության շնորհիվ, «Նրբագեղ մուսաներ» օպերան վերջապես բեմադրության ընդունվեց ֆրանսիական օպերայի բեմում: Հնարավոր է, արդյոք, այնքան մեծ պատիվ կոմպոզիտորի համար: Օպերայի արիանները սովորում էին փառաբանված երգիչներն ու երգչուհիները, նվագախումբը, երգեցիկ խումբը. բազում փորձեր կատարվեցին: Բանը հասավ զլխավոր փորձին... և գրա վրա էլ կանգ առավ:

Մտաւորապես նույն բախտին արժանացավ և Ռուսոյի «Նարցիս» օպերան: Դա Փարիզ տեղափոխվելուց դեռ շատ առաջ Ռուսոյի հորինած տառչին երաժշտական կոմեդիան էր: Թագավորության մայրաքաղաքում ապրած շատ տարիների ընթացքում հեղինակը համոտորեն ձգտում էր բեմադրել այն թատրոնի բեմում: Բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Մի ժամանակ թվում էր, թե երիտասարդ կոմպոզիտորը մոտ է հաջողության: Փարիզի իտալական թատրոնը վերջապես նրա ստեղծագործությունն ընդունեց բեմադրության: Ընդունեց, բայց չբեմադրեց: Միակ վարձատրությունը, որ ստացավ հեղինակը իր շարժարանքի գիմաց... իտալական թատրոն ձրի հահախելու իրավունքն էր:

Արդյո՞ք Ռուսոյի երաժշտական պիեսներն այնքան վատ էին, որ հնարավոր չէր դրանք բեմ բարձրացնել:

Ամենայն հավանականությամբ (ես հանձն չեմ անում որոշակիություններ դատել՝ տվյալ բնագավառը հեռու է իմ մասնագիտությունից) երիտասարդ կոմպոզիտորի և բանաստեղծի այդ վաղ ստեղծագործությունները գերծ չէին թևրություններից, հնարավոր է նույնիսկ հույժ զգալի: Ինքը՝ Ռուսոն, հետագայում խոստովանում է, որ երբեմն իր ստեղծագործությունները շատ տեսակեաներից իրեն թույլ են թվացել: Միզուցե այդպիսի ընկալումը հոգևոր ուժերի անկման ցավալի ապրումների արգասի՞ք էր, դա բնական կլիներ:

Արվեստի յուրաքանչյուր ստեղծագործության գեղարվեստական արժեքի ամենախստիվ՝ ժամանակի միջոցով ստուգումը ցույց տվեց, որ Ռուսոյի երաժշտական ստեղծագործությունները չեն բռնել այդ քննությունը: Բայց XVIII հարյուրամյակի կեսերի երաժշտությունն ընդհանրապես չի ապրել մինչև մեր օրերը: Այդ դարաշրջանի ո՞ր հանրահայտ կոմպոզիտորն է պահպանվել ժամանակակից երաժշտական երգացանկում: Երաժշտության մեջ Ռուսոն Գլյուկի նախորդներից մեկն էր միայն, միզուցե նույնիսկ ամենանշանակալից նախորդը: Բայց չէ՞ որ Գլյուկն էլ մեր օրերում կոմպոզիտոր է ընտրյալների համար, նրա ծառայությունը երաժշտագետների, երաժշտական արվեստի պատմաբանների ու տեսաբանների նեղ շրջանի սեփականությունն է, բայց ոչ ամենևին երաժշտության սիրահարների լայն շրջանների:

Պետք է հարցն այլ կերպ դե՞լ՝ Ռուսոյի երաժշտական ստեղծագործություններն արդյոք ավելի ցածր, ավելի թո՞ւյլ էին նրա ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններից, այն ստեղծագործություններից, որ կատարվում էին թագավորական և մյուս թատրոնների բեմերում: Ռուսոյի օպերաներն ավելի թո՞ւյլ, ավելի վատն էին նրա հակոտնյանների և հակառակորդների օպերաներից:

Այդ հարցին պետք է տալ բացասական պատասխան: Ո՛չ, իհարկե, Ռուսոյի երաժշտական պիեսները թույլ չէին այն պիեսներից, որին ծափահարում էր ֆրանսիական հանդիսատեսը: Ռուսոն ապրել էր անհայտության ու աղքատության մեջ, այն գեպքում, երբ, օրինակ, Ռամոյի անունը թնգում էր ամբողջ

Ֆրանսիայով մեկ: Քայց չէ՞ որ Ռամոն էլ շրոնեց և չէր կարող բռնել այդ նույն ժամանակի քննաթյունը:

Ռուսոյի տողերի վշտալիութունը, երբ նա գրում կամ պատմում է իր երաժշտական փորձերին հետապնդող անհաջողութունների մասին, հասկանալի ու լիովին բացատրելի է: Նա տեսնում էր, նա զգում էր այդ կամայական ընտրութեան անարդարացիութունը: Նա ուրիշներից վատ չէր գրում, միզուցե նույնիսկ ավելի լավ: Իտալիայում դանված ժամանակ նա ուշադիր ունկնդրում էր (եթե կուզեք, մասնագիտական բժախնորակա-նութեամբ՝ չէ որ նա մի շարք կոմպոզիցիաների հեղինակ էր) իտալական երաժշտութիւնը և չէր կարող արժանին շնատուցել նրան: Իտալական երաժշտութիւնը հետո էլ զնացել ֆրանսիականի համեմատութեամբ՝ նա ավելի բնական էր, պարզ, ավելի մոտ էր ժողովրդական երաժշտութեանը:

Ժան-Ժակ Ռուսոն ամենից քիչ էր պատճենող: Նա արվեստագետ էր, իր ներքին կերտվածքով միշտ մնալով ինքնօրինակ՝ պոեզիայում, փիլիսոփայության, երաժշտութեան, մտածողութեան մեջ, աշխարհի բուն իսկ ընկալման մեջ: Նա չէր բնորոշ-նակում իտալական դպրոցի արտաքին առանձնահատկութուն-ները: Քայց իտալական երաժշտութեան հետ ժանտութեանը նրա համար անհետևանք չանցավ: Նրա ստեղծագործութեան մեջ այդ երաժշտութեան ուժեղացրեց այն տարերային, շարճճի, ուրախ, ախորժալուր ժողովրդական նվագը, որը միշտ հատուկ էր նրան:

Նա զգվանք էր տածում մոդայիկ, միապետի բարեհաճ ողորմածութեամբ օժված կոմպոզիտորների սեթեթեթ, արհեստական կամ, ընդհակառակը, կոպիտ, պաթետիկ հանդիսավոր կեղծ-դասական երաժշտութեան նկատմամբ: Ժան-Ժակ Ռուսոն չի դառնա արքունիքի սպասավորների և նրա կամակատարների ներքողագիր: Նա չէր ուզում դառնալ և կանացի պարզասենյակ-ների երգիչ, ստեղծել շքեղ սալոնների մշտական հաճախորդների ձանձրութեամբ ցրող կայտառ, թեթե մեղեդիներ:

Կարգացեք նրա «նամակներ ֆրանսիական երաժշտութեան մասին» գիրքը ոչ այն բանի համար, որ ընդունեք նրա հիմնա-դրույթները՝ դրանք վիճելի են և նրանցում կան մի շարք հիմ-նավորումներ, որոնք այսօր էլ նույնպիսի վճռական առարկու-թյուններ են հարուցում, ինչպես և երկու հարյուր տարի առաջ: Այլ, այդ «նամակները» ուշագրավ են այլ կողմից՝ դրանք ցույց են տալիս, թե ինչպիսի սկզբունքային անհաշտութեամբ է Ռու-

սոն պաշտպանում երաժշտութեան վերաբերյալ իր հայացք-ները<sup>39</sup>:

Ահա թե ինչու Ռուսոյի բոլոր երաժշտական ձեռնարկումնե-րում կրած անհաջողութիւնները նրա համար որոշ բան ավելի էին նշանակում, քան ամբողջ շարք անձնական կորուստները: Այդ աներևութ, գաղտնի պատերազմում՝ ձեռնոցներով, առանց կոպիտ ժեստերի, առանց կոպիտ խոսքերի մղվող պա-տերազմում, երաժշտութեան, արվեստի մեջ պարտվում էր այն ուզույթները, որը նա համարում էր միակ ճշմարիտը կամ տոնվազն առավել առաջավորը, լավագույնը, քան թե այն, որին ձափահարում էին վերստի թագավորական թատրոնի օթ-լակները և պարտերները:

## VIII

Յոթ տարի անց այն ժամանակվանից, երբ մենք 1743 թվա-կանին բաժանվեցինք Ժան-Ժակ Ռուսոյից, Փարիզի հասարա-կութեան մեջ նրա դրութիւնը չփոխվեց: Առաջվա նման նա Փարիզի լավագույն հյուրասենյակների ցանկալի հյուրն էր: Նա ձեռք բերեց ինքնատիպութեան անսասան համբավ: Ռուսոն կա-րողանում էր նկատել ու ասել այն, ինչ չէին ասում մյուսները: Նա միշտ գիտեր ինչ-որ մի բան, որ չգիտեին մյուսները: Նա խելացի մարդու համարում ուներ: Վերջապես, դա համար-վում էր ընդհանուր ճանաչում գտած, Ռուսոն հույժ շնորհալի կոմպոզիտոր և բանաստեղծ էր: Նա դեռ չէր հասել ճանաչման ու լիակատար հաջողութեան: Նրա օպերաները չէ՞ն բեմադրվում: Մի՞թե քիչ բաներ են պատահում աշխարհում: Ռուսոյի երաժշ-տական ստեղծագործութիւնները հաճույքով կատարվում էին փակ սալոններում, մասնավոր թատրոնների բեմահարթակների վրա: Իսկ ճանաչումը, կգա այն, եթե ոչ այսօր, տպա մեկ տարի անց, տասը տարի անց կամ ավելի ուշ: Չէ որ բավական ժա-մանակ հետո Ժան Ռուսինը հասավ ճանաչման... Արվեստի աշ-խարհում այդպես լինում է...

Անցած յոթ տարիների ընթացքում նա ինքն էլ փոխվեց: Մեկը մյուսին հետևող պարտութիւնները՝ ղիվանագիտութեան ասպարեզում վեհեռիկում, Մոսկովայի հետ կոնֆլիկտի արդա-րայի լուծման որոնումների մեջ Փարիզում, «Նրբագեղ մուսա-ներ» օպերան վերստի կամ Փարիզի բեմերում բեմադրելու

ապարդյուն ջանքերի, իտալական թատրոնում «Նարցիսի» քիմադրութեան անհաջողութեան, Վոլտերի և Ռամոնի օպերայի վրա նրա խափած ջանքերի աննրբանկատ քամահրանքի մեջ՝ անհետևանք շանցան, դրանք շատ բան սովորեցրին:

Ժան-Ժակ Ռուսոն, այդ մասին ասել է ավելի վաղ, յոթ տարի առաջ Փարիզի սպաններ մտավ ոչ իբրև միամիտ տղա, որ հիացած էր իր հայացքի առջև բացվող ամեն ինչով, այլ որպես մի մարդ, որ բարձրացել է բուն հատակից, անցնելով կյանքի դժվարին դպրոց՝ նրա ամենաստորին աստիճաններից սկսած: Նա այդ շքեղ բարձրաշխարհիկ դահլիճները մտավ խորունկ լեռքերով, բայց անհաղթահարելի, թափառումների երկար տարիներից ծնված գաղտնի նախատրամադրվածությամբ, հարստության նկատմամբ արգահատանքով, դժվարությամբ քողարկված անվստահությամբ զեպի այդ տիկնանց կուրացուցիչ ժպիտներն ու թանկագին զարդերը և միշտ սիրալիր, անհողորեն սիրալիր պարոնները:

Սկզբում, երբ այդ ամենն անսովոր էր, երբ ամեն ինչ արթնացնում էր երեկվա թափառաշրջիկի (որը քայլելով էր ըմբռնել երկրի աշխարհագրությունը) հետաքրքրասիրությունը, նրա մեջ ծնվում էին ինչ-որ պատրանքներ՝ իսկ միգուցե այդ պերճաշուք, շքեղ հագնված, այդքան սրամտորեն, այդան թեթևությամբ գրույց վարող ազնվատոհմ տիկիներն ու պարոնները իրո՞ք բարի ու լավ մարդիկ են: Միգուցե նրա նախատրամադրվածությունը սխալ է: Միգուցե Փարիզի այդ բարձր դասը իսկապե՞ս արժանի է լիակատար վստահության: Ըստ երևույթին, նա սրտը ժամանակ տատանվում էր, միգուցե նույնիսկ երկրնորանքի մեջ էր՝ ինչի՞ն հավատալ, ո՞ր կողմը դնալ:

Ռուսոյի ստեղծագործական կենսագրության մեջ ուշադրության է արժանի մինչև օրս չբացատրված այն դադարը, որ վրա է հասել 1741—1742 թվականներից հետո: Այդ տարիներին ստեղծվեց քաղաքացիական պոեզիայի երկու մեծ ստեղծագործություն՝ «Ուղերձ պ-րն Բորդին» և «Ուղերձ պ-րն Պարիզիին»: Իսկ հետո վրա է հասնում ընդմիջումը և շարունակվում ոչ մեկ կամ երկու ամիս. այն ձգվում է տարիներ:

Դա Ռուսոյի ստեղծագործության մեջ դադար չէ ընդհանրապես. նա այդ տարիներին գրում է աշխատություններ երաժշտության անսովոր հարցերի շուրջ, ստեղծում երաժշտական ստեղծագործություններ, «Նրբագեղ մուսաներ» օպերայի ամբողջ

շափածո տեքստը (կրկնակի վերամշակված), 1743 թվականին գրում է «Ռազմագերիներ» պիեսը (որից մնում է չբավարարված և որը խնամքով պահում է կողմնակի աչքից<sup>40</sup>): Այնուհետև աշխատում է երեք գործողությամբ «Համարձակ ձեռնարկում» նույնպես շափածո կոմեդիայի վրա, որի մասին ինքը «Նախաբանում» գրում էր. «Այդ պիեսը ամենատափափանքից մեկն է»: Մի խոսքով, դրանք ստեղծագործական լարված աշխատանքի տարիներ էին: Բայց Ռուսոյի մշակած բոլոր թեմաների ու սյուժեների ամբողջ բազմազանությամբ հանդերձ քաղաքացիական թեմատիկան լիովին բացատրված է:

Ինչո՞վ բացատրել այդ Ռուսոյի այն ժամանակվա նամակագրությունը պատասխան չի տալիս հարցադրմանը: «...Վերջիվերջո նախագծերը շատ են, հույսերը՝ քիչ...»<sup>41</sup>, — գրում էր նա 1745 թվականին տիկին զը Վարանսին ուղարկած նամակներից մեկում: Այդ մի քանի բառերն արտահայտում են նրա զրացմունքների դառնությունը, բայց ոչ ավելին: Ամենից հավանականը, թեմատիկայի, որին հակված էր Ռուսոն ամբողջ կյանքում, մշակման գործում այդ ձգձգվող դադարը պետք է բացատրել հենց այն կասկածներով ու տատանումներով, որ նա ունենում էր Փարիզում ապրած առաջին տարիներին:

Ռուսոն շուրջն էր նայում, ականջ դնում, դիտում: Նա ինչ-որ շափով բնախույզ էր, մի քիչ բուսաբան. նա չէր աճապարում, չէր շտապում: Բացի այդ, սկզբում նրան շորս կողմից այնքան հեշտ ու համույրով էին խոստումներ տալիս, բոլորն էլ այնքան բարի էին, այնքան առատաձեռն, թվում էր թե, հավանության անկեղծ խոսքեր ստելու մեջ, — էլ ինչպե՞ս չպատվեր գովեստներին անսովոր գլուխը:

Բայց ժամանակն անցնում էր, և ժան-ժակն իր առանձնահատուկ բուռն տենչով, նույնիսկ կտրելի է տեսել՝ դիտողականության տաղանդով, սկսեց ավելի ու ավելի հստակորեն նկատել այն, ինչը նախկինում ծնում էր ինչ-որ վաղանցիկ, անսրտը տպավորություններ: Ռուսոն նկատեց, որ այն հմայիչ ժպիտը, որով իրեն դիմավորում էր տիկին Դյուպենը և որը նա (ա՛յ ժիամիտ գավառական) համարում էր իր անձնական նվաճումը և վերագրում միայն իրեն, այդ ժպիտը նա շուտով նկատեց, երբ նա, տիկին Դյուպենը, իր սալոնում ողջունում էր պարոն զը Բյուֆոնին, և ծերունի պարոն զը Սեն-Պիերին, և ան-

գամ տիկիններին, հատկապես նրանց, ովքեր չէին օգտվում նրա բարեհաճությունից:

Նա սկսում էր ըմբռնել և՛ բառերի, և՛ ժպիտների, և՛ խոստումների իսկական գինը: Նա վաղուց էր ընտելացել այն բանին, որ եթե նրան կարեկցական տեսքով հարցնում էին «Comment allez vous?» («Ինչպի՞ս եք ապրում»), այս միակ հնարավոր պատասխանը կարող էր լինել միայն «Merci. Et vous-même?» («Շնորհակալություն: Իսկ դո՞ւք»), որովհետև ոչ հարցնողին, ոչ էլ պատասխանողին դա ամենևին էլ չէր հետաքրքրում. դա սոսկ քաղաքավարության ծիսակատարային ձևակերպում էր և ոչ ավելին:

Ամեն ինչ կեղծիք էր, խարևություն: Պատրանքները ցրվեցին: Որքան շատ էր Ռուսոն մնում ֆրանսիական թագավորության մայրաքաղաքի այդ ընտրյալ հասարակության մեջ, այնքան պարզորոշ կերպով էր գիտակցում, թե որքան արդարացի էին այն անվստահությունն ու ներքմբռնողական թշնամանքը, որ նա աածում էր հարստության այդ երեկոյաների նկատմամբ, առաջին անգամ ոտք դնելով Փարիզի սալոնները:

Այո, նա սկսեց աստիճանաբար ըմբռնել, որ այդքան փայլուն, հեռվից այդքան գրավիչ թվացող աշխարհը ներսից քայքայված է փառասիրության սև մրցակցություններով, նախանձով, փոխադարձ գաղտնի պայքարով, թաքնված խարդավանքներով, դավերով, խաբեություններով:

Նա գիտեր, որ սրախոսների այդ հասարակությունում, որը հոխորտում է իր ցուցադրական անկախություններով, ուղղարարում իր ընդդիմությունը պաշտոնական իշխանություններին, առատաձեռն է արքունիքին պատճառած բորոցային ծակոցներով, որ դատողությունների համարձակությամբ պարծեցող այդ ամենափայլուն խելքի տեր մարդկանց հավաքածուն մշտապես թաքուն նայում է անտեսանելի արքունիքին, ականջ է գնում տիկին զր Պոմպադուրի գարգահանայից դուրս եկած բոլոր բամբասանքներին, համաշափում նրա այս կամ այն կամակատարի ուղեցությունների, համաշափում նրա այս կամ այն կամակատարի ուղեցությունների ուժը: Ինքնուրույն խելքի տեր մարդկանց այդ հասարակությունը իրականում գործամոլների ու կարիեռիստների մի խառնամբղ էր, որոնք արտաբուսա կիրթ ու սիրալիր շարժուձևի և բարեհամբույր ժպիտի տակ թաքցնում էին ստոր հաղվե՛նկատությունը, գաղտնի շար ստաղորությունները, անողորմությունը իրենց հակաուսկողմների ու մրցակիցների նկատմամբ:

Բարձրաշխարհիկ տիկնայք սագում էին իրենց ամուսիններին ու սիրեկաններին: Կարգացեք Սեն-Պրեի նամակները Փարիզից ժյուլիին. «Միբու՛նիկ կանանց անցանկալի է բարկանալ, ուստի նրանց ոչ մի բան էլ չի բարկացնում. նրանք սիրում են ծիծաղել, իսկ հանցագործությունը չի կարելի կատակով ծաղրել: Սուտի խարդախները բոլորի նման կարգին մարդիկ են»<sup>32</sup>: Նույնիսկ կանանցից ամենալավագույնները՝ ամենագեղեցիկները, ամենախելացիները, նրանք էլ զերծ չեն իրենց միջավայրի սրատենքից ու թիրուխոնները:

Ռուսոն երկար ժամանակ հափշտակված էր հրապուրիչ տիկին Դյուպենտով: Նա պատշաճն էր հատուցում նրա գեղեցկությունը, հրապուրչին, խելքին: Տիկին Դյուպենին է նվիրված այսպիսի մի բառչակ.

Մի վստիցիր միտք՝ դու նվազելով  
Չես մարի նրա լույսի շողերում,  
Իմաստուն, ի՞նչ քեզ անգամ կորցնես,  
Նորից կգտնես նրա խոսքերում<sup>33</sup>.

Տիկին Դյուպենի նկատմամբ տածած այդ նույն անեղծ հիացմունքի ու խորին հարգանքի մասին է վկայում և Ռուսոյի նամակագրությունը այդ նշանավոր ու հետաքրքիր կնոջ հետ<sup>34</sup>: Եվ այնուամենայնիվ, իր ողջ հափշտակությամբ հանդերձ, ժանժակը սկսում էր աստիճանաբար դլխի ընկնել:

Տիկին Դյուպենը ժանժակի հետ խաղում էր ինչպես կատուն մկան հետ: Նա ընդառաջ չէր գնում նրա զղացմունքներին, բայց չէր էլ ուղում նրան բաց թողնել: Դա միայն կանացի պշրանք չէր, դրան էին միախառնված և շահադիտական հաշիվները: Տիկին Դյուպենը իր կենսունակ-գործնական խելքով գնահատեց ժանժակի ընդունակությունները և գտավ, որ նա կարող է իրեն օգտակար լինել: Նա ինքն էլ էր երազում գրական փառքի, հանրաճանաչության մասին, մտադրվել էր, իսկ միդուցե, սկսել էր գիրք գրել: Ժանժակ Ռուսոն նրա համար խիստ արժեքավոր օգնական կարող էր լինել, գրական բարտուղարի նման ինչ-որ մի բան: Բայց Ռուսոն համաձայնվելով այդ գերին, միաժամանակ միշտ նկատում էր, որ տիկին Դյուպենը այնպես, ինչպես և նրա խորթ դավակ Ֆրանկեյը, հանդես գալով իր հոգատար բարեկամների գերում, ամենևին էլ չէին ձրգատում նպատակ այն բանին, որ նա հասարակության մեջ որոշ

Ճանաչում ձեռք բերելու: Խնչն էր դրա պատճառը: «Նոստովանանքում» Ռուսոն այսպես էր բացատրում այդ: «Միգուցե, երկուսն էլ ղգուշանում էին, հանկարծ ուրիշները շկասկածեն՝ տեսնելով իրենց գրքերը, թե նրանք պատվատուել էին իմ տաղանդը իրենցին»<sup>45</sup>:

Այսպե՛ս է եղել, իրականում, թե ոչ, բայց հիասթափված սիրահարի համառությունը, որ լարված ուշադրությամբ հետևում էր մի կնոջ, որին դեռ մինչև վերջերս ուղղված էին նրա բոլոր մտքերը, Ռուսոն նրա մեջ բացահայտեց նոր անհրապույժ գծեր՝ ակնդժավորություն, երկդիմություն, մանր շահախնդիր հաշվենկատություն: Որքան ավելի երկար ու ավելի ուշադիր էր նա հետևում այդ խելացի ու գեղեցիկ տիկնոջը, այնքան նրա մեջ ավելի շատ էր նկատում այնպիսի բնորոշ մանրամասներ, այնպիսի գծեր, որոնք օրը օրին ապաքինում էին նրան սկզբում անհաղթահարելի թվացող սիրուց:

Իսկ չ՞ որ տիկին Դյուպենը, — հիշեցնենք ևս մեկ անգամ, քանզի դրան է պարտավորեցնում բարեկամական հարգալից այն տոնը, որ Ռուսոն պահպանել է «Նոստովանանքում» այդ տիկնոջ նկատմամբ, — լավագույնն էր «բարձր դասի» այն կանանցից, որոնց հետ նա հանդիպում էր Փարիզում: Իսկ տիկին դը լա Պոպլինիե՞րը: Իսկ բարոնուհի դը Բեզանվա՞լը: Իսկ տիկին ղ՛էպինե՞ն, որը հետագայում այնքան դառնաղետ բուպեներ ու ատանջալից ապրումներ է պարգևել ժան-ժակին:

Միգուցե այդ անսպասելի, ուստի և հիվանդագին ու սուր հիասթափությունը պետք է բացատրել այդ տարիներին առաջացող կապը երիտասարդ (քսաներեքամյա) Քերեզա Լեասերի՞ օւլիանցի սպիտակեղեն կարող կնոջ հետ: Այդ կինը, որին Ռուսոն պետք է անվաներ սահմանափակ և բթամիտ, տարօրինակ կերպով դարձավ նրա ընկերուհին ամբողջ կյանքի ընթացքում: «Սկզբում ես ուզում էի զարգացնել նրա միտքը: Չոր քանքեր: Նրա խելքը մնաց այնպիսին, ինչպիսին այն ստեղծել էր բնությունը. կրթությունը, կուլտուրան չէին կալում նրա մրտքին: Չկարմրելով պետք է խոստովանեմ, որ նա այդպես էլ չկարողացավ ճիշտ կարգալ սովորել, թեպետև կանոնավոր գրում էր»:

Ուրեմն էլ Խնչն է գրավել նրա մեջ Ռուսոյին:

Նրա հեղուկությունը, նրա անպաշտպան լինելը, նրա դյուրահավատությունը:

Այդ նույն «Նոստովանանքում», պատմելով Քերեզա Լեասերի հետ առաջին հանդիպման մասին, Ռուսոն խոստովանում է, որ ինքը ապշած էր նրա համեստությունից և ամենից շատ — «նրա աչքերի հեղ ու աշխույժ հայացքից՝ հայացք, որին նա կյանքում երբեք չէր հանդիպել»:

Եթե այն ժամանակ Ռուսոն ներքին երկպառակություն չունենար Փարիզի արտոնյալ հասարակության հետ, չհիասթափվե՞ր մի կնոջից, որին նորերս միայն աստվածացնում էր, եթե նա չզգար խուլ, բարձրաձայն շարահայտված թշնամանք բարձր հասարակության այդ բոլոր ինքնավստահ, շքեղազարդ տիկնանց նկատմամբ, միգուցե անցներ սպիտակեղեն կարող համեստ գավառական կնոջ կողքով, ուշադրություն չգարձներ նրա հեղարարո հայացքին, որը նրան այդպես սրտառու ու արտահայտիչ էր թվացել:

Ամենահավանականն այն է, որ Քերեզա Լեասերը նրա ուշադրությունն է գրավել ամենից առաջ իր հակադրությամբ Փարիզի սալոնների այդ կրթված, սրալեզու տիկիներին հետ: Նա արդեն գերհագեցած էր այդ անդադրում բուրժուաշխարհիկ դատարկարանությամբ, այդ արհեստական լեզվով, այդ շար բամբասանքներով, դիտավորյալ շարախոսություններով, վտանգավոր ակնարկներով, բերանից պատահական թոցրած խոսքերով, որոնք այդ փափկասուն հրեշտականման տիկնայք շող էին տալիս ինչպես առատության եղջյուրից: Հասարակ, երկչուտ, միամիտ, հիմարալուս-գյուրահավատ Քերեզան այնպի՛ն նման չէր այդ բարձրաշխարհիկ կանանց, որոնց ընկերակցությամբ Ռուսոն պետք է առապակր գրեթե ամեն երեկո: Առաջին անգամ երկար տարիների ընթացքում նա հանգիստ շունչ քաշեց:

Կրոն Ծեյխթվանգերը իր հայտնի վեպում անարզարացի էր այդ հասարակ կնոջ նկատմամբ, որը դարձել էր ժան-ժակ Ռուսոյի ընկերուհին, իսկ ավելի ուշ և կինը: Գրողի ստեղծած՝ Ռուսոյի սպանության մասին մեկնակերպը, որում Քերեզային հատկացված էր թեպետև անուղղակի, բայց հանցակցի դեր, մնում է գրական երևակայության արգասիք, որը չի հաստատված Ռուսոյի կենսագրության հայտնի փաստերով: Բայց Ծեյխթվանգերի կողմից վեպի վերջում Քերեզային տրված շարագույժ դերը մոռալ ցույք է գցում նաև ժան-ժակի ու Քերեզայի միության առավել վսուլ շրջանի վրա:

Միամտություն և անպատեհ կլիններ այսօր դատել այն կնոջ

արժանիքների կամ թերությունների մասին, որը դարձել է Ռուսոյի ընկերուհին և կյանքից հեռացել գրեթե երկու հարյուր տարի առաջ: Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ Ազգային կոնվենտը հարգանք մատուցեց Ռուսոյի այրուն և դրանում տրամաբանություն կար՝ ֆրանսիական ժողովրդի բարձրագույն ներկայացուցչական ժողովը իր հարգանքը հավաստեց մի կնոջ, որին մեծ ժան-ժակ Ռուսոն ընտրել էր իր կյանքի ուղեկից:

Ինքը Ռուսոն «եռասուղանանքին» ներհատուկ անխնա ճրջմարտացիությամբ ներկայացրել է Թերեզա Լևասերին այնպիսին, ինչպիսին ինքը տեսնում էր՝ նա առանց թաքցնելու պատմել է նրա թերությունների, հետամնացության, անկրթության, ուսման նկատմամբ անընդունակ լինելու մասին: Բայց հենց Ռուսոն էլ գրել է նրա մասին այն, ինչ չէր գրի և ոչ մի սրիչ կնոջ մասին՝ Թերեզան նրան երջանկություն է ավել:

Ըստ էության, այդ մի հատիկ կարճ արտահայտությամբ Ռուսոյի կյանքում Թերեզա Լևասերի թեման մինչև վերջ սպառվեց:

Այդ արտահայտությունից հետո մնում է սոսկ ենթադրությունների, հոգեբանական կառուցումների, վարկածների ասպարեզը:

Կարելի է ենթադրել, որ ժողովրդից ելած այդ հասարակ կնոջ հետ ժան-ժակը զգում էր ինչ որ ներքին հարազատություն: Նա գրում է «Սրտերի նմանության, բնավորությունների համապատասխանության» մասին: Հավանաբար, ներքին հարազատությունը որոշվում էր ոչ միայն դրանով. ժան-ժակը իրեն թեթևացած էր զգում Թերեզայի հետ: Վերադառնալով կնոջ մոտ հարուստ առանձնատներում իր համար տանջալի դարձած երեկոներից, նա կարծես իր վրայից հանում էր ծանր լուծը: Նա վերադառնում էր աստանդական պատանեկության հասարակ, երջանիկ աշխարհը. նա վերադառնում էր սիրելի, հասարակ աղջկա մոտ, որը նրան դիմավորում էր հեղահամբույր, դյուրահավատ հայացքով:

Թերեզա Լևասերի հետ միությունը ժան-ժակի համար մի տեսակ հոգու հանգստություն էր Փարիզի նրա ծանր կյանքում: Առանց այդ զաղարների, առանց այդ լիցքաթափման, առանց Թերեզայի հետ այդ երկրորդ, օտար հայացքներից թաքուն առանձնացած փոքրիկ աշխարհի, սրտեղ նա ավելի ազատ էր

չնչում, նա, միգուցե, չէր դիմանա այն տարիների լարվածությունը:

Թերեզա Լևասերի հետ միությունն այն միակ խաղաղ օջախը չէր, որտեղ նա կարող էր խոնջանալ իրեն կաշկանդող աշխարհիկ կյանքի կապանքներից: Նա ուներ մտերիմներ, որոնց առջև այն ժամանակ իրեն հատուկ դյուրահավատությամբ կարող էր բացել հոգին:

Նրա համար ամենամտերիմ մարդը երիտասարդ իսպանացի Իգնացիո էմանուիլը դը Ալտունան էր, որը հրապուրված էր գիտության գաղտնիքներն ըմբռնելով: Նրանք վիճում էին դրույցի ընթացքում ծագած գրեթե բոլոր հարցերի շուրջ. նրանց կարծիքները գրեթե ոչ մի բանում չէին համընկնում, բայց ժան-ժակն իր փարիզյան բարեկամներից ոչ մեկի նկատմամբ այնպիսի համակրանք չէր տածում, ոչ մեկի հետ այնպիսի կասկածություն չուներ, ինչպես Իգնացիո դը Ալտունայի: Նրանք նույնիսկ իրար հետ առհասարակ ապրելու պլան ունեին: Բայց Ալտունան մեկնեց, նա ընտանիք ուներ, և շվեյցարացի դոկտորները հետո շուտով նա մահացավ:

Ռուսոյի այն ժամանակվա ընկերներն էին և այնպիսի երիտասարդներ, որոնց հետ նրան մտերմացրել էր գաղափարական ընդհանրությունը: Նրանք, ինչպես և ինքը, այն մարդիկ էին, որոնք ավելի համարձակ, ոմանք էլ ավելի զգույշ քննադատությամբ էին հանդես գալիս գոյություն ունեցող կարգերի դեմ: Ոմանք այդ բանը զրույցների ընթացքում բավականաչափ բացահայտ էին արտահայտում. մյուսները նախընտրում էին իրենց մտքերը շարադրել շատերի համար զժվար ըմբռնելի փիլիսոփայական աշխատությունների խրթին լեզվով, հաճախ բողբոջված կամ ալլաբանական ձևով, որպեսզի չենթարկվեն իշխանությունների հետապնդումներին:

Այդ մարդկանց՝ ինչ որ շահով Ռուսոյի համախոհների մեջ էին Գենի Գիգրոն, Կոնդիլյակը, նրա եղբայր արքա Գարրիել-Ռոննո դը Մարիին, Ֆոնտենելը, Մելիսիոր Գրիմմը, Դյուկլոն և Թրիշներ, որոնց բոլորին այնքան էլ դուր չէին գալիս գոյություն ունեցող կարգերը:

Այն ժամանակ Ռուսոն ամենից ավելի մտերմացել էր Գիգրոյի հետ՝ նրանք գրեթե հասակակիցներ էին, նրանց կենսապայմանների մեջ նման գծեր շատ կային: Կանգրա փոքրիկ բաղաթի դանակագործի որդի Գիգրոն նույնպես ժողովրդի ծո-

ցից էր ելել: Փարիզում նա ծանր կյանքով էր ապրում՝ դժվարությամբ էր սնվելու փող վաստակում անգլիերենից կատարած թարգմանությունների միջոցով, բացի այդ նա վաղ ամուսնացավ սպիտակեղեն կարող մի աղքատ կնոջ աղքատ հետ և ծախսերն է՛լ ավելի շատացան: Բայց նա արդեն որոշ համբավ էր ձեռք բերել Փարիզի գրական առաջավոր շրջաններում, նրա «Փիլիսոփայական նամակները» մեծ տպավորություն գործեցին: Գիդրոյին արդեն համարում էին, և պատշաճ հիմքով, «լուսավորչների» կրտսեր սերնդի ականավոր ներկայացուցիչներից մեկը:

Ռուսոն իր դյուրահավատ, հափշտակվող խառնվածքով այն ժամանակ շատ էր կապված Գիդրոյի հետ, նա վերջինիս համարում էր իր ամենամոտ բարեկամը: Երբ Գիդրոյին նրա՝ իշխանություններին դուր չեկած «նամակ կույրերի մասին որպես խրատ տեսնողներին» ակնարկների համար կալանավորեցին Վենսենի բանտում, Ռուսոն այդ ընդունեց որպես անձնական դժբախտություն: Նա խոտվահույզ նամակ գրեց տիպին ղը Պոմպադուրին, աղաչելով նրան փոխել իր ընկերոջ վիճակը: Երբ նրան տեսակցություն թույլատրեցին, նա ոտքով կտրեց ամբողջ Փարիզը և նրա ծայրամասերը՝ մինչև Վենսենի բանտը, որպեսզի այցելի Գիդրոյին:

Գիդրոն, որքանով որ կարելի է դատել նրա գրական ժառանգության մեջ հանդիպող՝ Ռուսոյի մասին հիշատակություններից, իր բարեկամին վերաբերվում էր ավելի զուսպ, ավելի հանգիստ. Ռուսոյի մասին նրա կարծիքներում սուվեր անգամ չկա այն խանդավառության, որը ղղացվում է «նոր էլոիզի» ապագա հեղինակի մոտ:

Այդուհանդերձ այն ժամանակ, 40-ական թվականներին, նրանց միացրել էր է՛լ ավելի սերտ բարեկամությունն ու ընդհանրությունը հիմնական հարցում՝ դադափարական դիրքերում:

Ռուսոն այն ժամանակ բարեկամացել էր նաև Կոնդիլյակի հետ, որը զեռես այն նույն անհայտության մեջ էր, ինչպես և ինքը, և մասնակիորեն համանման դժվարություններ էր կրում կյանքում: Կոնդիլյակն այդ տարիներին իր ջանքերը կենտրոնացրել էր «Փորձ մարդկային դիտելիքների առաջացման մասին» աշխատությունն ավարտին հասցնելու վրա: Այդ թեման հետաքրքրում էր և ժան-ժակ Ռուսոյին և կարող էր տեսական աշխույժ վեճերի ու մտքերի փոխանակության առարկա լինել: Կիրակի օրերին երիտասարդ ընկերները (Կոնդիլյակը մի քիչ էր

միայն ջահել Ռուսոյից) ճաշում էին միասին, ինչպես Ռուսոն է յազդրում, «փսնոսով»:

Ռուսոն Կոնդիլյակին ծանոթացրեց Գիդրոյի հետ, իսկ վերջինս իր հերթին նրանց ծանոթացրեց ժան դ'Ալամբերի հետ: Այսպես ձևավորվեց երիտասարդների այդ համագործակցությունը՝ երիտասարդներ, որոնք շատ բաներում նման չէին միմյանց, բայց միավորված էին տարիբային մտախկնվածք, և գլխավորը, այն բանով, որ նրանց բոլորին դուր չէր դալիս շրջապատի աշխարհը, ավելի ստույգ, նրա բաղաբական ինտուիտիվները և հասարակական կարգերը: Ինչպե՞ս ավելի լավ գործնել այդ աշխարհը: Ինչպե՞ս փոխել այն:

Երիտասարդները զեռես շունեկին ոչ ձևավորված գաղափարներ, ոչ էլ ձևակերպված պլան: Սկզբում Ռուսոյի մեջ «Մադրասեր մարդ» պարբերական թերթիկ հրատարակելու միտք չգալով, որն արժանացավ Գիդրոյի պաշտպանությունը: Այո, նրանց մեջ զեռ մնացել էր երիտասարդության ավելցուկ և ծիծաղելու դատրաստակամություն: Իսկ ինչո՞ւ շժանակել այս աշխարհի սմբարտավան ոչնչությունների արատներն ու այլանդակ գծերը: Ինչո՞ւ հակառակորդի զեռ չպայքարել ծիծաղի մահացու զենքով:

Գիդրոն այդ պլանի մասին պատմեց դ'Ալամբերին, բայց չարագլխած մնացած պատմառներով այդ մտահղացումից ոչինչ չստացվեց: Գրա փոխարեն ծնվեց այլ մտահղացում:

Գիդրոյի և դ'Ալամբերի մտահղացմամբ ձեռնարկվեց «Հանրագիտարանային բառարան» կաղմելու և հրատարակելու գործը: Սկզբում պլանը համեստ էր՝ այն ժամանակ Չեմբերսի հայանի բառարանի թարգմանության նման մի բան, որի լույս ընծայումը դատրաստ էր իր վրա վերջնել գրահրատարակիչ Լեբրեռոնը:

Բայց հրատարակության նախագիծը կշոտդատելու ընթացքում Գիդրոն և դ'Ալամբերը, — և զա նրանց անանցողիկ մատայությունն էր, — հղացան ինչ-որ սկզբունքորեն մեկ այլ բան: Երանք որոշեցին հրատարակել բազմահատոր «Գիտությունների և արհեստների հանրագիտարան»՝ իրենց դարի առաջավոր գիտելիքների համապարփակ ժողովածու, իր գաղափարական սկզբունքներով միասնական և ամբողջական մի հրատարակություն: Այդ վիթխարի կուլեկտիվ հրատարակության հեղինակներ պեռ է զառնային գրականագետներ, որոնք շատ բաներում սուրբեր էին իրենց հեղինակային չուրաձեռվածք, անձնական

ճաշակով և աշտութեամբ, բայց պետք է համապատասխանեին հիմնական պահանջին՝ «Հանրագիտարանի» աշխատակիցներ պետք է լինեին ֆեոդալական կարգերի և գավանութեւոյնների, ֆեոդալական գաղափարախոսութեան հակառակորդները:

Գ Ալամբերի և Դիզրոյի «Հանրագիտարանը» դարձավ իրեն սպառած, բայց համատրեւն պահպանվող ֆեոդալաբարսոյուն-տիրտական կարգերին փոխարինելու եկած երրորդ դասի նոր առաջավոր աշխարհայացքի առաջին ծրագրային արտահայտութեւոյնը: Այդ հաստատոր, դանդաղորեն լույս աշխարհ եկող հատորներում վիթխարի հեղափոխական ուժի լիցք էր ամփոփված: Դա հին աշխարհի գաղափարական դիրքերի ամենագործուն, ամենարդյունավետ զնդակոծութեւոյնն էր:

XVIII դարի «Հանրագիտարանը» մեկ կարևոր դեր ևս խաղաց: Նա դարձավ առաջին ընդարձակ գաղափարական այն պլատֆորմը, որը միավորում էր, թող որ ժամանակավորապես, հակաֆեոդալական, լուսավորչական մտքի բոլոր ուղղութեւոյնները, բոլոր նրբերանգները: «Հանրագիտարանը» մի ինչ-որ շքրջան նպաստեց ստեղծելու, ժամանակակից տերմինաբանութեամբ ասած, լուսավորչական մտքի բոլոր ներկայացուցիչների միանական ճակատ ֆեոդալիզմի, նրա ինստիտուտների, նրա հիմնարկների, նրա բարոյախոսութեան և զոգմանների դեմ:

Գ Ալամբերը և Դիզրոն «Հանրագիտարանի» գլխավոր կազմակերպիչներն ու խմբագիրներն էին: Բնականաբար, նրանք այդ հրատարակութեանը մասնակցելու հրավիրեցին և ժան-ժակ Թուսոյին՝ իրենց ընկերոջն ու համախոհին: Թուսոյին առաջարկեցին «Հանրագիտարանի» երաժշտութեան բաժինը:

Այդ առաջարկութեւոյնը լիովին հիմնավորված էր ու հասկանալի: Այն ժամանակ Թուսոն հայտնի էր (այն էլ փարիզյան համեմատաբար նեղ միջավայրում) միայն որպես երաժիշտ, եթե կհաճեք, նույնիսկ որպես երաժշտութեան տեսաբան: Նա ինքն էլ այն ժամանակ որն է այլ բանի չէր հավակնում և այդ հրատարակութեան համար հանուրով գրեց մի շարք հոգովածներ երաժշտութեան ընդհանուր և մասնավոր հարցերի վերաբերյալ:

Սակայն նրա մասնակցութեւոյնը «Հանրագիտարանում» ուներ և առավել ընդհանուր, սկզբունքային նշանակութեւոյն: Մասնակցելով «Հանրագիտարանին», ժան-ժակ Թուսոն կարծես միանում էր հրաձիգների այն շղթային, որը նշանառու կրակ էր վառում թշնամական հին աշխարհի մարտական դիրքերի վրա: Նա

նույնպես դարձավ «էնցիկլոպեդիստ», ինչպես անվանում էին այդ խիզախ մարտական շոկատին, որը համարձակ մարտ էր սկսել հին աշխարհի ուժերի դեմ:

Կասկածի ենթակա չէ, որ մասնակցութեւոյնը «Հանրագիտարանին», բարեկամութեւոյնը Դիզրոյի, Կոնդիլյակի, դ'Ալամբերի, իր ժամանակի առաջավոր մարդկանց հետ, սրբուկի ազդեցութեւոյն ունեցան Թուսոյի գաղափարական հայացքների հասունացման, ինչպես ուրիշ առիթով Ստենդալն էր ասում, «բյուրեղացման» վրա:

Ժան-ժակ Թուսոն 40-ական ընկալաններին անցավ հրասթափութեւոյնների ղեկարիւն դպրոց. նա Փարիզի արտոնյալ հասարակութեան հետ հաղորդակցման անձնական փորձով ճանաչեց այն, ինչի մասին առաջ կարող էր լով կոհանել: Նախկինում ասվածից երևում է, որ դա մարդկային ցեղից հրասթափութեւոյն չէր ընդհանրապես: Այդ տարիների նրա գննադատութեւոյնն ունի խստորեն ուրվագծված ուղղութեւոյն՝ անձնական դիտումները, անձնական կենսափորձը նրան համոզում էին այն բանում, որ հարուստների ու երեւելիների այդ ինքնապարփակ, կոլմնակի անձանց համար անմատչելի աշխարհը, որ նա մտալ, է՛լ ավելի վատն է, քան նա ենթադրում էր առաջ, երբ այն տեսնում էր հեռվից, դրսից:

«Խոստովանանքում» Թուսոն պատմել է, որ նա համառոտեւն հրոժարվում էր բարոն Զոյրախի սայլերը հաճախելու բազմիցս արված հրավերքներից: Միջնորդը Դիզրոն էր. Զոյրախի մոտ էին հանդիպում նրանց ընդհանուր մտերիմներից շատերը: Բայց ժան-ժակը չէր կարողանում հաղթահարել իր տաժած զգվանքը բարոնի տան նկատմամբ: Մի անգամ Զոյրախը նրան ուղղակի խորհրդեց մշտապես հրամարվելու պատճառի մասին: «Դուք յափից գուրս հարուստ եք», — պատասխանեց Թուսոն:

Իմ դա ճշմարտութեւոյն էր: Փարիզում ապրած տարիներին ժան-ժակի մեջ զգվանքը հարստութեան նկատմամբ չպակասեց, յիսուցացավ, այլ ընդհակառակը, մեծացավ ու սրվեց:

40-ական ընկալանների Լրկորդ կեսին Թուսոյի ստեղծագործութեան մեջ նորից են սկսում հնչել բաղաբացիութեան մոտիվները:

«Միլվիայի ծառուղին» (1747 թ.) բնարափիլիսոփայական բնագրական բանաստեղծութեան մեջ հարստութեան մերկացումը, որ այնքան բնորոշ է Թուսոյի վաղ ստեղծագործութեւոյններին,

հանդես է գալիս առավել ընդհանուր, ծրագրադեկլարատիվ ձևով:

Ցավ քեզ, անհազ մահկանացու,  
Որ թաղվել ես ամոթի մեջ  
Նվ բռնվել տենդով ոսկու:  
Տանջվիր արդար տառապանքով  
Գարշաթյունից, որն իրենում  
Քաբցնում է զանձերը քո<sup>45</sup>:

Այն միտքը, թե «գանձերը», «ոսկին» ապականություն են և ոսկու ծարավը խայտառակություն է, որ այնպես հստակորեն է ձևակերպված «Միլվիայի ծառուղին» բանաստեղծության մեջ, կանա որպես գաղափար, որին Ռուսոն հավատարիմ կլինի ամբողջ կյանքում:

Այս բանաստեղծության մեջ Ռուսոն արտահայտում է մեկ ուրիշ՝ միգրացի միջին վերջ շփտակցված միտք, որ հատուկ էր նրան և նախկինում:

Քիչ բան է պետք իմաստունին,  
Քչով էլ է սիրտն իր ուրախ,  
Քչով էլ է նա հագնեում<sup>47</sup>...

Գիտենալով Ռուսոյի բոլոր նախորդ փիլիսոփայական-քաղաքական տրակտատները, այս երեք տողը կարելի է ընդունել որպես ազրատության առաքինության սկզբունքի հռչակում, որպես հավասարապաշտության դադարների սաղմնային ձև կարելի էր զրանցում նաև ուրիշ մտքեր գտնել: Բայց ավելի լավ է մնալ խստապահանջ փաստերի հողի վրա: «Միլվիայի ծառուղին» բանաստեղծության երեք տողում արտահայտված այդ գաղափարը արժանի է ուղղորդության: Ոչինչ պետք չէ ավելացնել:

Երկու տարի հետո, «Ուղերձ պարոն դը լ'էտանին, Մարկուսի փոխերեցին» ստեղծագործության մեջ, որը սովորաբար թվագրում են 1749 թվական, Ռուսոն արդեն տալիս է Փարիզի ամբողջ արտոնյալ հասարակության ծավալուն քննադատությունը: Բ. Ե. Վերցմանը ենթադրում էր, որ «Ուղերձ պարոն դը լ'էտանին» ստեղծագործությունը իրենից ներկայացնում է ռատ էություն իսկական երգիծանք»<sup>48</sup>: Այս պնդումը վիճելի է: «Ուղերձը» Ռուսոյի լավագույն ստեղծագործություններից չէ՝ իմ կարծիքով չի բարձրանում, հասնում երգիծանքի մակար-

դակին, ինքը բանաստեղծն էլ (ինչպես այդ մասին ինքն էր նշում) իր առջև այդպիսի նպատակ չէր դրել: Բայց իմաստ չունի վիճել ստեղծագործության ժանրի անվան շուրջ, ավելի կարևոր է նրա էությունը:

«Ուղերձ պարոն դը լ'էտանին» ստեղծագործությունը Փարիզի զայրալից մերկացումն է. հեղինակը չի համբերում հաշիվները մաքրելու այն քաղաքի հետ, որն իր մեջ է ներծծում մամանակակից հասարակության բոլոր արատները, բոլոր թեթևությունները, բոլոր թերարժեք գծերը: Ընդարձակ բանաստեղծության առաջին տողերից Ռուսոն ազդարարում է իր զզվանքը Փարիզի նկատմամբ:

Փախել անարկու հարևանությունից,  
Որ պարզևում է Փարիզը մեզ:

Նվ այնուհետև բացահայտում է նրա արատները:

Փարիզը օթևան է ամբարտապանության,  
Որտեղ ընկնում է ամեն քնակիչ  
Ազդեցության տակ այն խորգախների,  
Որոնցից Ֆրանսիան է վախենում անգամ:

Ֆրանսիայի այս հավաղումը Փարիզին չափազանց բնորոշ է այն ժամանակվա Ռուսոյի մտածողությանը: Ինքը Ֆրանսիան, երկիրը (այս հասկացությունների տակ ենթադրվում է ժողովուրդը)՝ հրաշալի են, առաքինի. նրանց խորթ են մայրաքաղաքին հատուկ արատներն ու հանցագործությունները:

Բայց դրա փոխարեն Փարիզում ամեն ինչ վատ է, ամեն ինչ հեղինակի զայրույթն է հարուցում: Այնտեղ ազնվությունը «լոկ ժողրանքի առարկա է», այնտեղ «շառլատանական խորամանկույտներ են», «ամբարտապանություն, անպատկառ տոն», այնտեղ ճնշում և հետապնդում են իսկական տաղանդներին, այնտեղ «բահայոս շանը վիճակված է երբեմն հայտնի քաղաքագետ դառնալ»...

Փարիզաբնակ պորտաբույծը գարշ  
Գիտական մտքի ծաղիկն է հանում  
Վաճառասեղան՝ մի շնչին ճաշով,  
Դատապարտված է ու դժբախտ է նա,  
Ով որ ապրում է Սենայի վրա...

Փարիզից փախչելով, նեաժելով զեպի իր բարի ընկերը, «հոգեհարստացատ տունը», հեղինակը հույս ունի, որ հենց այստեղ կգտնի իսկական հանգստություն. «...խաղաղություն ձեռք կբերենք, դեռ հնուց ծանոթ, շինականների ու տնեցիների շրջապատում»:

Այստեղ երկրորդ անգամ կրկնվում է նույն հակադրումը՝ արատավոր, դիշատիչ, անխնա և ողորմելի Փարիզին հակադրվում է «անտառներում և սար ու ձորերում» ընկած սիրելի տունը, շինականների ու տնեցիների սիրելի միջավայրը:

Ըստ էության սա այն նույն գաղափարն է, որն առաջին անգամ, կարծես հայանցիկ, դեռ սաղմնային ձևով արդեն ձևակերպված էր «Սիլվիայի ծառուղիներում» ստեղծագործության մեջ: «Ուղերձ պարոն զը լ' էտանին» ստեղծագործության մեջ այն արդեն հնչում է ամբողջ ձայնով: Թերաբեք Փարիզին հակադրվող «շինականների ու տնեցիների» իդեալական (և, ավելացնենք, իդեալականացված) աշխարհի գաղափարն այն ժամանակվանից գաճում է Ռուսոյի հասարակական-քաղաքական հայացքների ամբողջ համակարգի անկյունաքարը:

Բանաստեղծության մեջ հեղինակն այնուհետև զիմում է տիրոջն այս խնդրանքով.

Որ և հասկանա մեր դարձն ու ցավը  
եվ փակի շամփան տհաճ հյուրերի՝  
Բամբաստղների, ստախոսների,  
Սրիկաների, անխելքների զեմ,  
Նաև փարիզյան այն խավի հանդեպ,  
Որոնք հարուստ ապուշի համար  
Բացում են հաճախ քնդարոնության  
Մի մեծ առտուր..

Սա միայն սկիզբն է: Այս հնարանքը՝ տանախրոջն ուղղված խնդրանքը դուր չբացել Փարիզից եկած օտարականների առաջ՝ հեղինակը կրկնում է բանաստեղծության ամբողջ երկրորդ կեսում, որը մոտավորապես երկու հարյուր տող է: «Ուղերձի» այդ մասն ըստ էության թվարկություն է, հեղինակը մասհոգված է ոչ այնքան Փարիզի բացառական գործող անձանց գեղարվեստական պատկերմամբ, որքան գարշելի կերպարների այդ պատկերաշարանք հնարավորին չափ առաջել լիակատարությամբ ներկայացնելու ցանկությամբ՝ ոչ ոքի շնորհակալ, ոչ մեկին բաց չթողնել:

Այդ թվարկության ցուցակում (այլ կերպ այն չես անվանի) կտրծես հերթագայվում են և՛ բարոյագետ գարշելի տիպերը, և՛ մայրաքաղաքի սոցիալապես անհանդուրժելի ներկայացուցիչները: Նա տանախրոջը խնդրում է դուր չբացել շոգորորթների առաջ, «որոնց խնկարկումը թույն է սրտի համար», ներս չթողնել տնտեսական պահանջներին, աղնվականներին, որոնք պարծենում են իրենց նախնիներով՝ նույնքան ողորմելի, որքան և իրենք, հղճղան, «կեղծ բարեպաշտ-փնթիփնթան կանանց», որոնք սեփացնում, բամբասում են բոլորին:

Պետք չէ հանաչել ոչ հարուստներին,  
Ոչ խարդախներին,  
Հատկապես և այն սրիկաններին.  
Որ ձևանում են աղնվականներ,  
Անխելք ու չկտի այն մոտեցիներին,  
Որ ենթարկում են ծաղր ու ծանակի  
Պարկեշտությունն ու հավատամքն անգամ  
Ու բոլոր նրանց,  
Որոնք շորթում են՝ շտալով ոչինչ...

Ես ինձ թույլ տվեցի բերել բանաստեղծությունից այս հատվածը, ցույց տալու համար, որ այստեղ էս, ինչպես և առաջին, մինչև արիզյան «Ուղերձ պարոն Բորդին» ստեղծագործության մեջ, Ռուսոն նորից նվազում է կրեդիտներին, այսինքն հարուստներին: Բայց եթե 1741 թվականի «Ուղերձ պարոն Բորդին» ստեղծագործության մեջ բանաստեղծը սահմանադատվում էր հարուստից, մերժում նրան որպես հարստության մարմնացում, ապա 1747 թվականին «Ուղերձ պարոն զը լ' էտանին» ստեղծագործությունում հարուստներին ուղղված քննադատությունն անհամեմատ ավելի որոշակի, կոնկրետ և վայրալից է:

Հնարավորություն և, հավանաբար, անհրաժեշտություն չկա այլևայլ քաղվածքներ բերել այն տարիների Ռուսոյի բանաստեղծական փորձերից: Դրանց ընդհանուր ուղղվածությունը, ինչպես ինձ է թվում, լիովին ակնբախ է: Երիտասարդ բանաստեղծին ոգեշնչում են քաղաքացիության մոտիվները: Բայց միայն դա առել բավական չէ: Նրա պոեզիան և՛ իր բովանդակությամբ, և՛ իր տրամադրությամբ, իր տոնով մերկացնող ու հարձակողական է:

Չեմ թաքցնում, մինչև օրս ես զարմացած եմ, թե ինչու Ռուսոյի գրական ժառանգության ուսումնասիրողները՝ լրջմիտ

ուսումնասիրողներ, որոնց աշխատությունների նշանակությունը ես ամենևին էլ չեմ ուզում նսեմացնել, շրջանցել են երիտասարդ Ռուսոյի վաղ շրջանի այդ շափածո ստեղծագործությունները: Չէ՞ որ Բորդին, Պարիպոյին հղված ուղերձներում՝ Ժան-Փակիր ստեղծագործության այդ ստաջին գրական հուշարձաններում են հենց բացահայտվում նրա գաղափարական հայացքները, եթե կհաճեք, նրա հետագա դադափարակուն էյուլյուցիայի ակունքները:

Իհարկե, ճիշտ է այն, որ այն ժամանակ Ռուսոն դեռ փիլիսոփա, սոցիալական մտածող, առավել ևս բաղաբական գրող չէր: Բայց նա արդեն դեպի այդ տանող ուղու վրա էր. որպես սոցիալական մտածող և դրույ նրա ձևավորման պրոցեսն արդեն սկսվել էր: Մի՞թե «Խոստովանանքում» նա չի պատմել այն մասին, որ դեռևս 30-ական թվականներին, Շամբրիում, տիկին դը Վարանսի տանը, նրա գլխում արդեն խմորվում էին դեռևս մշտադուր, ոչ հստակ գրական և փիլիսոփայական գաղափարներ և որ պարոն գը Կոնվիկի հետ ունեցած պրուցյաները նպաստեցին գրանց ձևավորմանը: Մի՞թե մինչև արիզյան շրջանի բաղաբացիական, մերկացնող բանաստեղծություններն այդ նույն բանը չէին վկայում: Հոսկանալի է, այստեղ անհարկի կլինեն ծայրահեղությունները: Չպետք է մոռանալ՝ ինքը Ռուսոն դեռ լի էր երկչափությամբ ու կասկածներով. նա որպես բանաստեղծ էլ նանաչված չէր. սեփական աչքում նա միայն որոնող երաժիշտ էր:

Եվ այնուամենայնիվ, մինչև արիզյան շրջանի երիտասարդ Ռուսոյի հայացքները ինչ-որ հիմնական բանում նշանակալից չափով արդեն որոշված էին: Ինքն իր հետ մեկուսի, բարձրաձայն խորհելով շափածո տողերով, նա արդեն պարզորոշ ուրվագծում է թշնամիների ճամբարը և բարեկամների ճամբարը: Պոեզիայի լեզվով նա պայքարի մեջ է մտնում այն ժամանակվա զորավոր տիրակալների դեմ և լի է այն մինչև վերջ տանելու վճռականությամբ, շանհով գիշումներ ու համաձայնություն չգալով հակառակորդների հետ:

Կարելի՞ է, արդյոք, նշանակություն չտալ Ռուսոյի վաղ շրջանի ստեղծագործության այս գրական հուշարձաններին:

Հետազոտողն իրավունք չունի անտեսելու դրանք, քանզի առանց դրանց, առանց այդ վաղ բանաստեղծական փորձերի, անհասկանալի կմնան թե՛ 1749 թվականի հուլիսին Ռուսոյի

«ակնթարթային պայծառացումը», թե՛ այդ «պայծառացումը» նախապատրաստած գաղափարական հասունացման ամբողջ պրոցեսը, եթե միայն այդ «պայծառացումը» եղել է իրականում, այլ ոչ թե գրողին թվացել 17 տարի անց:

Այդ քաղաքացիական բանաստեղծությունները խիստ կարեւոր են և հասկանալու համար Ռուսոյի մտքերի, զգացմունքների համակարգը, երբ Փարիզում նա առաջին անգամ ոտք դրեց Գյուպենների առանձնատան շեմին, իսկ հետո գարձավ նրա մշտական հաճախորդը:

Իհարկե, պետք չէ ամեն ինչ պատկերել հասարակացված, շխտակոթյամբ. երբեք դա օգտակար չի լինում: Հետազոտողների տրամադրության տակ չկան Ռուսոյի այդ տարիների նամակները, որոնք բացահայտում են նրա ներքին, հոգեկան աշխարհը: Բայց նրանք ունեն նախորդող և հաջորդող շրջանների ստեղծագործություններ, և ըստ այդ թերի տվյալների, դիմելով որոշակի դեպքերում անհրաժեշտ գիփինացիայի՝ կոահումների, ըստ այդ կողմնակի հայտանիշների հետազոտողը պետք է կարողանա լսել մասնակիորեն վերականգնել, վերակառուցել անհայտը կամ հայտնին:

Արդ ուրեմն, Ռուսոն, ստաջին անգամ հայտնվելով տիկին Գյուպենի հոյակապ առանձնատանը, Ֆրանսիայի ամենանշանավոր մարդկանց շրջանում, ամենից առաջ պետք է զգար երկչափություն, շփոթություն, անճարակոթյուն: Խուլ գավառական Մավուլայի փոքրիկ բնակավայրի աղքատ կլերկը, անհաջողակ երաժիշտը, երեկվա թափառաշրջիկը, մարդ, որը շուներ ոչ մի տեղ, — նա պետք է որ, բնականաբար, ունենար ազոտ, հակասական զգացումներ՝ ուշագիտ տնտղելով այդ շքեղությունը, այդ վառ, ամնական աշխարհը, որը նա երբեք չէր տեսել:

Իհարկե, սկզբում նա միայն ուշագիտ տնտղում էր. ամեն ինչ բորբոքում էր նրա հետաքրքրասիրությունը: Նա աշխատում էր լուռ մնալ, պատասխանում էր կարճ, միավանկ բառերով. նա ուրիշների ասածը լսում էր սպահորեն, բայց ուշադրությամբ: Նա Փարիզ եկավ հարուստների, երեկի անձանց, կրեստների նկատմամբ հաստատուն, կայուն թշնամանքով ու անվստահությամբ: Բայց ահա այժմ ինքը հայտնվեց հարուստ, շատ հարուստ մարդկանց տանը: Նրանց մշտական հյուրերն էին երեկի մարդիկ՝ մինիստրներ, բարձրաստիճան պաշտոնյաներ կամ ամենանշանավոր, արդեն ամբողջ Ֆրանսիայում փառա-

բանված գրողներ ու գիտնականներ: Մինչ այժմ կրեզները՝ հարուստները, երևելի անձինք, նրա համար վերացական հասկացություններ, հավաքական անուններ էին: Նա երբեք նրանց մոտիկից չէր տեսել, առավել ևս նրանցից ոչ մեկին չէր կարող ճանաչել անձամբ: Միայն հազվադեպ, քաշվելով դեպի ճամփեգրք, նա կուլ էր տալիս իր կողքով սլացող հոյակապ կառքի բարձրացրած փողին: Միզուցե նա սխալվում էր: Միզուցե իրական կյանքում ամեն ինչ ա՞յլ կերպ է: Զէ որ մարդիկ, որոնց նա հանդիպում էր Դյուպենների տանը կամ մարկիզոսի դը Բրոյլի մոտ, գոնե արտաքինից լավ վարվեցողության տեր, սիրալիր պարոններ էին:

Միզուցե այդ պատրանքները կամ կասկածները, տատանումները տեղ են մի բանի շարա՞թ: Միզուցե նույնիսկ մի բանի ամի՞ս:

Բայց չի կարելի մոռանալ՝ նա կյանքի բուն իսկ հատակից ելած մարդ էր, նախատրամադրվածությունը, լի անվստահություն մարդկությանը ու երևելիների այդ տոնական, պաճուճազարդ աշխարհի նկատմամբ: Եվ նա ուներ սուր լսողություն ու զգոն հայացք և արագ, ինչպես կասեր Լե Տոյստոյլը, գեղջկական հնարամտություն: Ելնելով ժողովրդի ծոցից, նա, իհարկե, ուներ մի փոքր խորամանկություն, նա լսում էր մինչև որոշ ժամանակ, նա ստեղծ-ստեղծ հայացք էր դրում շուրջը. նա ամեն ինչ տեսնում էր, ամեն ինչ լսում. նրան ոչինչ աննկատ չէր մնում:

Կանցնի ժամանակ և աստիճանաբար, օրավուր, գուցե և նույնիսկ ավելի դանդաղ, քան կարելի կլիներ սպասել, նա ամեն ինչից գլուխ կհանի:

«Քաբուն սարսափով ես մուտք եմ գործում մի ընդարձակ անապատ. որ կոչվում է աշխարհ...»

Բայց չէ որ ինձ դիմավորում են հույժ բարեկամաբար, պատրաստակամորեն, ընդունում են, շոյալիլով ուշադրության ապացույցներ... Սկզբում, ընկնելով այստեղ, հիացմունք ես ապրում իմաստությունից ու խելքից, որոնք քաղում ես ոչ միայն գիտնականներից ու ստեղծագործողներից, այլև մեծ կարողության տեր մարդկանց և նույնիսկ կանանց հետ ունեցած զրույցներից՝ զրույցի տոնը սահուն է ու բնական. նրանում ոչ ծանրություն կա, ոչ անպարկեշտություն. այդ զրույցն աչքի է ընկնում գիտունությամբ, բայց մանրախնդիր չէ, ուրախ է, բայց ոչ աղմկատ, բարեկիրթ է, բայց ոչ սեթևեթ, նրբակիրթ է,

բայց ոչ գունդիկ, զվարճալի է, բայց ոչ երկիմաստ: Դրանք ոչ գիտերտացիաներ են և ոչ էլ էպիգրամներ. այստեղ դատում են տոնաց հատուկ ապացույցների, այստեղ կատակում են շխալալով բառերի հետ. այստեղ սրամտությունը վարպետորեն զուգորդում են լրջմտության հետ, խորիմաստ ասույթները կայծափյուն կատակի հետ, խայթիչ ծաղրանքը, նրբին շողոքորվությունը բարձր բարոյական գաղափարների հետ: Այստեղ խոսում են ամեն ինչի մասին, ամեն մեկին ասիթ ներկայացնելով ասելու ինչ-որ բան...»<sup>49</sup>:

Մրանք բազմաթեքներ են Փարիզ ժամանած երիտասարդ շվեյցարացու՝ Ժյուլիին ուղղված նամակից: Այդ նամակին հետևում է երկրորդը, երրորդը: Եկվորը պատմում է իր սուպերբությունների մասին. որքան շատ է նա շփվում մայրաքաղաքի հասարակությանը. այնքան նրա համար ավելի պարզ է դառնում, թե որքան բազմազան է աշխարհը և որքան դժվար է այն ուսումնասիրել: Նրա համար այս նոր հասարակության մեջ օտարերկրացին. որը շունի ոչ մեծահոշակ անուն, ոչ դիրք՝ պետք է իրեն պահի այնպես, որպեսզի կարողանա դուր գալ: «Ես աշխատում եմ, որքան դա հնարավոր է, լինել հարգալից առանց երկդիմության, պատրաստակամ առանց բծնողության...»: Լինելով խելամիտ ու դիտունակ, նա տոնաց հատուկ ջանքերի հասու եղավ դուր գալու այդ արվեստին և այժմ նրանից՝ այդ օտարերկրացուց, այլևս ոչինչ չի պահանջվում, նա գլուխն աղաթեց խարդավանքներից ու դժտություններից. և «եթև նա ինչ որ կանանց նկատմամբ չի արտահայտում անուշադրություն կամ, ընդհակառակը, հատուկ նախապատվություն, պահում է այն միշտավայրի դադունիքը, որտեղ նա ընդունված է, մի տանը ծաղրի չի ենթարկում մյուս տունը, խուսափում է վստահափառ զրույցներից, ամենուր իրեն պահում է արժանապատվությամբ՝ նա կարող է հանգիստ զննել աշխարհը, պահպանել իր բարոյական հիմքերը, պատիվը...»:

Եվ ահա նա ավելի ու ավելի է բարձրանում թագավորական մայրաքաղաքում գոյություն ունեցող գաղտնի հիերարխիայի աստիճաններով: «Այսպիսով, ինձ սկսեցին ընդունել ոչ այնքան բողոքող, բայց դրա փոխարեն ընտրելու հասարակության մեջ... Այժմ ես իրազեկ եմ առավել նվիրական գաղտնիքների: Ընդ ներկա եմ լինում հրավիրովի երեկոներին՝ այն տներում, որի պոետները փակ են ինքնակոչ հյուրի առաջ...»: Այստեղ, նեղ շրջա-

նում, կանայք իրենց ավելի նվազ հաշվենկատորեն են պահում, և սմբարտավան պարոնայք շարախոսում են ավելի սուր և ավելի թունոտ. այստեղ ոչ ոք չի բարկանում, չի վրդովվում՝ բոլորն են ծաղրում ու ծանակում:

Եկվոր հրիտասարգը, որ բոլորի նկատմամբ է ուշադիր, բոլորի հետ սիրալիր, աստիճանաբար ըմբռնում է այդ յուրահատուկ խորամանկամիտ լեզուն, որով, «իբրև թև ձգտելով մթաղենի ծաղրի իմաստը, այն ավելի թունոտ են դարձնում»: Նա սկսում է հասկանալ, որ այդ ընտրյալների հասարակությունում «խնամքով սրում են դաշույնը այն պատրվակով, որ մեղմ են ցավը, իսկ իրականում որպեսզի ավելի խոր վերք հասցնեն»: Նա սկսում է ըմբռնել արտասրտա հրապուրիչ այդ աշխարհի գաղտնիքները:

Դրանք բազմաթիվ են Փարիզից Ռուսոյի գրած նամակներից, — կհարցնի տարակուսած ընթերցողը: Ո՛չ, իհարկե Սեյդախի նամակներ հայտնի չեն գիտությունը: Բայց նամակներից բերված բոլոր հատվածները պատկանում են Ժան-ժակ Ռուսոյի գրչին: Դրանք «Նոր էլոիզի» նշանավոր հերոսի՝ Սեն-Պրեի նամակներն են Փարիզից իր սիրելի ժյուլի դ՛ էտանժի<sup>50</sup>,

ի սերն աստծո, կրացականչի ոմն սրտնեղած ընթերցողը Ինչպե՛ս կարելի է Ժան-ժակ Ռուսոյին համեմատել նրա սեփական ստեղծագործության հերոսի հետ:

Եթե նման համեմատություններն ընդհանրապես ինչ-որ միտք ունեն, ուղա մահնամեծ շափով գրանք արդարացված են հենց ավելի գեղարվեստ: Երիտասարդ Ռուսոյի մասին նախկին բոլոր պատմածները, կարելի է հուսալ, լիովին բացառում են նրան ռաստինյակների գաղափարական նախորդների թվին դասելու ամեն մի ենթադրություն: Եվ եթե 40-ական թվականների Ռուսոյի համար որոնենք ինչ-որ համեմատություն հասարակ անունների դարձած հայտնի գրական հերոսների հետ, ապա, հավանաբար, ավելի ճիշտ կլինի նրա մերձեցումը XVIII դարի նշանավոր գրական հերոս, գրողի սիրասուն դավակ Սեն-Պրեին «Նոր էլոիզից»:

Դեռ ավելին: Ինչպես այդ մասին ինքն է պատմել «Խոստովանանքում», ինչպես դա արգարացի կերպով նշել են նրա ստեղծագործության ուսումնասիրողները՝ «Նոր էլոիզը» նշանակալից շափով ինքնակենսագրական վեպ է: Ռուսոն, իհարկե, հնարամիտ գրող էր. նա կարողանում էր հորինել, գլխի բնկ-

նել, Լերնակայել. առանց դրա նա չէր դառնա սենտիմենտալիզմի շիմնադիրը գրականության մեջ: Դրա հետ միասին, — և դա հեշտ է հավաստել նրա ստեղծագործությունների վերլուծությունը. — իր սուր հիշողության շնորհիվ նա դարձանալիորեն անխալ էր, զրեթև բժախնդիր իր պատկերած սյուժեների բնորոշ մանրամասնությունները վերարտադրելիս, լինի դա բնություն կամ գրույց սեղանի շուրջը հավաքված հյուրերի հետ: Այն մի օրինակ: 1789 թվականին Շվեյցարիա ուցելիս Ն. Մ. Կարամզինը լինելով Կլարանում և այն մուս վայրերում, սրտը նկարագրված են «Նոր էլոիզում», զարմացած էր այն բանից, թե սրբան հավաստի էր Ռուսոն վեպի մեջ վերարտադրել բնությունը, անտառային այն տեղանքի նշանները, սրտեղ տեղի էր ունեցել Սեն-Պրեի և Ժյուլիի սիրո սրտաշարժ պատմությունը:

Իհարկե, պետք է ուշադրության առնվի այն, որ «Նոր էլոիզը» գրողն ստեղծել է 1756—1758 թվականներին և անցած տասներկու-տասնհինգ տարիների կնիքը չէր կարող հետք չթողնել Փարիզի բարձր հասարակության կյանքի նկարագրի վրա, հասարակություն, որտեղ մուս գործեց Շվեյցարիայից եկած երիտասարդը: Իհարկե, սխալ կլինի վեպում պատկերվածն ընդունել որպես Փարիզում 40-ական թվականների առաջին կեսում Ժան-ժակ Ռուսոյի վարքի արձանագրային ստույգ գրառում:

Բայց արված բոլոր վերապահություններով հանդերձ կարելի է արդյոք բամահրել ուշ ժամանակների գրական այդ հուշարձանը քառասնական թվականների Փարիզի բարձր հասարակության մեջ Ռուսոյի տեղն ու դերը հասկանալու համար: Չէ՞ որ Սեն-Պրեի բերանով խոսում է ինքը Ռուսոն: Եվ, դիմելով տասնհինգ տարի հետո գրողի ստեղծած գրական հերոսի նամակներին, մենք տվելի լավ ենք հասկանում երիտասարդ Ռուսոյի՝ սկսնակ, անհայտ երաժշտի գաղափարական դիրքերը, այն մարդու, որն այդպես անսպասելի հեշտությամբ նվաճեց 1742 թվականի փարիզյան սալոնների ճանաչումն ու համակրանքը: Քառասնական թվականների վերջին Ժան-ժակ Ռուսոն արդեն ավելի քիչ էր նման այն միտմիտ, հույսերով ու պատրանքներով առկցուն երիտասարդին, որը բոլորովին վերջերս երկշոտությունով ու անվստահ ներս մտավ տիկին Դյուպենի շեմից: Փարիզի բարձր հասարակության էլիտայի հետ շփման սթափեցնող փորձը շատ բան սովորեցրեց նրան: Ռուսոն արդեն

1747—1749 թվականներ եկավ իր ժամանակակից հասարակության գիտակցված քննադատական գնահատականով: Ռուսոն գաղափարական զարգացման մեջ անցավ մի կարևոր փուլ: Նա արդեն բնոչույ մտտեցավ այն գաղափարներին, ամենևին էլ ոչ իբրև ակնթարթային «պայծառացում», այլ իբրև նախորդ ուղու օրինաչափ հանրագումար, որոնք նրա կողմից ձևակերպվեցին գիտության ու արվեստի ազդեցության և անհավասարության առաջացման վերաբերյալ տրակտատներում, մեծ հռչակ բերելով դրանց հեղինակին:



**Մեյսոն**

ՄԵՐԱՐՈ

I

...Ահա նա դանդաղ բարձրանում է վեր, թեթևակի գլուխը խոնարհած, փոքր ինչ կոացած, և հարյուրավոր, ո՛չ, հազարավոր աչքեր անթարթ հեռում են, թե ինչպես է նա ծանր ու մեծ քայլում գեպի ամբիոն տանող թեք սանդղիկներով:

Նա բարձրացավ, անշտապ շունչ քաշեց, հանգիստ, ջինջ, ասես շահանող աչքերի գրեթե անտարբեր հայացքով նայեց մինչև վերջ մարդկանցով լցված զվվացող դահլիճին և բարձրացրեց ձեռքը: Իսկույն ամեն ինչ հանդարտվեց: Յածրաձայն, գրեթե անվրդով, հազիվ որսալի խոպոտությունը, սովորական բառերով նա սկսեց իր ճառը երկրի քաղաքական դրություն մասին:

Մեծ, ծաղկատար դեմքը տգեղ էր: Գիմափոշով ծածկված, փարթամ, խնամքով խոսրոպված կեղծամբ և օձիքի ժանեկազարդ, հավանաբար լավ օսլայած եզրակարի սպիտակաթույր բրիժները ջլային կարճ վզի վրա լոկ ընդգծում էին երեսի մուգ կարմրավուն, անառողջ գույնը և անկանոն դիմազոծերը: Ասենք նա ինքն էլ ամբողջապես, լինելով պնդակազմ, ծանրաբաշ, ասես լայնությունը տարածված, հատկապես հեռվից կարող էր թվալ գիշերվա միջից եկած ինչ-որ հեքիաթային, սարսափելի հրեշ:

Դահլիճում լուսվում էր: Հակված բազրիքներին, լարելով լսողությունը, մարդիկ աշխատում էին լսել ամբիոնից արտասանվող ցածրաձայն, անշտապ ձայնը: Բայց ահա սահուն ճառն ընդհատվեց... վրա հասավ դադարը... Եվ դադարից անմիջապես հետո անտարբեր ու միապաղաղ թվացող այդ ձայնը հնչեց կարուկ, բարձր, ընդհատ-ընդհատ:

Կարծես սրբնթաց բարձրանալով աստիճաններն ի վեր, հոետորի ձայնը ձեռք էր բերում անընդհատ աճող հզորություն:

Ավելի ու ավելի ուժգնանալով, ձայնը թնդում էր դահլիճում, սսկված, ասես այդ հրաշագործությունը կախարդված լսարանում: Անճշմարտանման էր թվում, որ այդ հզոր, սրբնթաց, ամենակործան լավայի նման սլացող ձայների հոսանքը բխում է ամբիոնի մոտ կանգնած այդ սեղազեստ պնդակազմ մարդուց:

Այդ շառաչուն օկտավան, ձայնի որոտալից հզորությունը, որ, թվում է թե, ընդունակ է հնչյունների ուժով մարել մոմերը, աննկատելիորեն իր կամքին էր ենթարկել հավաքվածներին: Երբ մետաղի նման դգրացող ձայների հոսանքը կանգնում էր մի ակնթարթ՝ հոետորը շունչ էր առնում կամ կարճ ժամանակով անցնում փափուկ, սահուն, նվազող ինտոնացիայի (դա բաղմափորձ քաղաքական տրիբունի հոետորական վարպետ հնարանք էր): Կարճատև դադարների ժամանակ լսվում էր, թե ինչպես ծանր են շնչում մարդիկ, որոնք այդ զարմանահրաշ կախարդանքի ակամա մասնակիցներն էին:

Իհարկե, դա հանպատրաստից ստեղծագործություն էր: Այդպիսի ճառ ո՛չ կարելի էր պատրաստել, ո՛չ նախապես գրել, ո՛չ էլ առավել ևս կարգալ գրածը: Նույնիսկ կարևոր էլ չէր, թե, իսկն ասած, ինչի մասին էր խոսում հոետորը: Հավանաբար այն նույն բանի, ինչի մասին խոսում էին ամենքը, այն արտասովոր ժամանակ՝ մեծ մասամբ ստույգ շմտանանշված, բայց միշտ խարդավանական ու անողոր բռնակալության, նրա հրեշավոր շարագործությունների մասին, թե ինչպես անմեղ, առաքինի մարդիկ տառապում էին Բաստիլի ամրոց-բանտի սարսափելի մենախցիկում ու զնդաններում, այն մասին, թե ինչպես արգարամիտ, ինչպես մեծ ու ազնիվ է ժողովրդի սրբազան պոթկումը, որը հիմնահատակ կործանեց այդ ատելի ամրոցը: Հոետորը ժողովրդին նախազգուշացնում էր տարբեր կողմերից սպառնացող վտանգի մասին՝ հեղափոխության գաղտնի թշնամիների անշեղ ռիսակալության, ազատության թշնամիների մասին. չէ որ նրանք շանհետացան, շողորշիացան վառ, ամեն ինչ պայծառ լուսավորող արևի ճառագայթներից: Նրանք թաքնվում են անկյուններում և այստեղ, ինչպես սև սարդեր, հյուսում լավադրությունների սարդոստայնը: Հանուն ինչի՞: Թե՞ դուք մուռացել եք երեկվա օրվա, ժողովրդի տառապանքների, աղետների մասին, մինչև շողորշացին ազատության ճառագայթները:

Նա մեկը մյուսի հետևից հարցեր էր առաջադրում հավաքվածներին, հարցեր, որ հաճախ հեռուորական էին, ընդհանուր, պատասխան չպահանջող, բայց ձևակերպված խիստ, կարծես թե անմիջականորեն ուղղված դահլիճում գտնվող յուրաքանչյուրին, այդ պահանջից հարցերով, ճառի հուզականությամբ նա բուրդին ներգրավում էր ստեղծագործական աշխատանքի մեջ. դահլիճում չկային անտարբեր ու անվրդով մարդիկ:

Անսխալ բնազդը հետաքրքիր հուշում էր լայն, բուրբաձև, ասես ամեն ինչ միավորող շարժումը՝ ձեռքի հզոր թափահարում. այդ շարժումները կարծես թե համախմբման, միասնության էր կոչում ժողովրդին, ազատության բուրբ բարեկամներին: Ձայնի արդեն իջնող, դեպի նվազում գնացող հզորությունը հանկարծ նորից ձեռք էր բերում ապշեցուցիչ, արտահայտությունից արտահայտություն անող ուժ: Դա հազվագյուտ, միգուցև հարյուր տարին մեկ անգամ ծնվող հեռուորական ձիթ էր՝ տրիբունի ձիթը, որը տիրում էր լսողների սրտերին ու մտքերին:

Նվ երբ հետադուր, մինչև առավելագույն լարվածության աստիճանի հասցնելով ձայնի հզորությունը, անմիջապես կտրուկ ընդհատեց իր ճառը և, ծանր շնչելով ու բատիստե թաշկինակով սրբելով քրտնատար դեմքը, սկսեց գանգաղ, ինչպես լուսնոտ, իջնել սանդուղքի աստիճաններով, դահլիճում մեկ բոպե, գուցե և երկու, տիրեց գրեթե անշարժ լուսնություն, որն այնուհետև պայթեց խելահեղ, խանդավառ օվացիայից:

Դա անմոռանալի 1789 թվականի օգոստոսի սկիզբն էր:

Հետոքը, որն այդպես ցնցել էր լսարանը, Պրովանսի երրորդ գասի դեպուտատն էր Գլխավոր շտատներում, իսկ այնուհետև Սահմանադիր ժողովում՝ կոմս Օնորե Գաբրիել Ռիբետի դը Միրաբոն:

## II

Օնորե Միրաբոն ծնվել է 1749 թվականի մարտի 9-ին Գատինում, Ֆրանսիայի հարավում, Բինյոն գոյակում, որը նրա հորն էր անցել որպես նրա կնոջ՝ Մարիա Փեննելեայի, ծննդյամբ դը Վասսան, օժիտի մի մասը: Մինչև օրս հաբավային ավտոճանապարհներից մեկի մոտ պահպանվել է մի դյուղ «Բինյոն Միրաբոն» հին անվանումով:

Մենդաբերությունը ծանր է ընթացել, և մոր կյանքը հազիվ է փրկվել: Երեխան ծնվել է ծամուլած ոտքով և անհամաշարժորեն մեծ գլխով: Վաղ մանկության տարիներին նա հաճախ էր հիվանդանում, երեք տարեկան հասակում տարել է ծաղկախտ, որը դեմքի վրա անհնչելի հետքեր է թողել: Բայց այս բուրդով հանդերձ տղան պնդակալով էր, նրա ումեղ օրգանիզմը հաղթահարում էր փորձանքները և սաստիկ տկարությունները. նա արագ զարգանում էր ֆիզիկապես ու մտավորապես, վաղ ի հայտ բերելով դաստիարակների մեջ կասկած չհարուցող մտավոր օժտվածություն:

Ապագա նշանավոր տրիբունը XVIII դարի Ֆրանսիայի ամենալուսավորված և ինքնատիպ մարդկանցից մեկի զավակն էր: Մարկիզ Վիկտոր-Ռիբետի դը Միրաբոն ծնվել է «արև-թագավոր» Լյուդովիկոս XIV-ի մահվան օրը, այսինքն 1715 թվականին, Պրովանսի հին արիստոկրատական և հարուստ ընտանիքում: Այն ժամանակվա սովորությունների համաձայն, ինչպես և բոլոր երիտասարդ ազնվականները, նա տասնչորս տարեկան հասակում անցավ զինվորական ծառայության՝ ազնվականությունն իր թագավորին ծառայում էր սուսերով և խաղաղ ժամանակ դա այնքան էլ ծանրացուցիչ չէր: Բայց մարկիզ Միրաբոն չէր բավարարում շափազանց դանդաղ վերելքը զինվորական հիերարխիայի աստիճաններով. նա կնախքնարի սկսել գնդի հրամանատարությունից, բայց դրան հարկավոր էր ծառայություն մտնել: 1737 թվականին նրա հայրը վախճանվեց, և Վիկտոր Միրաբոն քսաներկու տարեկան հասակում վիթխարի հարստության տեր դարձավ: Նա իսկույն գտավ այդ հարստությունը տնօրինելու և իր սեփական կյանքը փոխելու ելքը: Զինվորական ծառայության հոգսերը, ավելի ստույգ զինվորական կարիերան դադարեցին հափշտակել նրան. լինելով անզուսպ, սանձարձակ իր ցանկությունների մեջ, նա այժմ գործնականում անսահմանափակ հնարավորություն ստացավ անհապաղ և իրեն նեղություն շտալով հաշվենկատ լինել իր բոլոր քմահաճույքները բավարարելու ծախսերի մեջ: Ինչպես և նույնքան հարուստ ու երևելի նրա սակավաթիվ հասակակիցները արտոնյալ դասից, նա ժամանակը կարճում էր խրախճանքներում, գինարբուքներում, անհաշիվ փողեր ծախսելու մեջ, այդ բանում հետևելով արքունիքի օրինակին:

Աստված գիտե, թե որքան հեռու կգնար նա կյանքն այդպե՛ս անմտորեն վատնելու մեջ և որքան արագ կմխտեր իր հարբստությունը, եթե օրերից մի օր (հավանաբար տանջալից խումարի) մարկիդ Միրաբոն արգահատանք չզգար այդ անմիտ ապրելակերպի նկատմամբ և չհիշեր, որ պատանեկության տարիներին նա ուրախություն էր գտնում մեկ այլ բանում՝ նա հորինում էր ողբերգություններ, բանաստեղծություններ, թատերական պիեսներ, մի խոսքով, նրան նորից ձգեց գրականությունը:

Պատահականությունը նրան ծանոթացրեց Եառլ-Լուի գր Մոնտեսքյոյի հետ: «Պարսկական նամակների» ապագա հեղինակը այդ ժամանակ որոնումների շրջան էր ապրում: Նրանք արագ ընդհանուր լեզու գտան, շատ բաներում նրանց հայացքները համընկնում էին: Մոնտեսքյոն Միրաբոյի ուշադրությունը հրավիրեց քաղաքական և սոցիալական պրոբլեմների, տնտեսական քաղաքականության, փիլիսոփայության վրա: Այդ հարցերը հուզում էին այն ժամանակվա Ֆրանսիայի ամբողջ առաջավոր երիտասարդությանը:

Միրաբոն խաչ քաշեց ամբողջ նախկին կյանքի՝ զինվորական կարիերայի, գիշերային խրախճանքների, շաշլուկյան, շվալտ կյանքի վրա: Նա առանձնացավ Ֆրանսիայի հարավում գտնվող իր հայրական կալվածքում և նույն հափշտակութամբ, նույն կրակոտությամբ հանձնվեց նոր կրքերի: Նա իրեն ամբողջովին նվիրեց փիլիսոփայությանը, տնտեսական գիտություններին, գրականությանը: Նա ազահորեն և հափշտակությամբ կարողում էր, պատվիրում նորագույն հոնտորների գրքերը՝ հասարակայնության ուշադրությանն արժանացած աշխատություններ, Անգլիայում, Հոլանդիայում, Եվեյցարիայում հրատարակվող ամսագրեր: Նա աշխատում էր հասկանալ ու իմաստավորել կարգացածը՝ ոչ միայն հանուն այն բանի, որ հասնի դարի գիտելիքների մակարդակին, այլ որպեսզի ստեղծի ինչ-որ բան, իր խոսքն ասի: Նրա գործունյա ստեղծագործական խառնըվածքը չէր հաշտվում գրական սպառողի պասիվ դերի հետ:

1747 թվականին նա ավարտեց իր առաջին հասուն աշխատությունը՝ «Քաղաքական կտակ» տրակտատը: Որտեղի՞ց այդ վերնագիրը: Արդյոք այն չի՞ ձայնակցել այն ժամանակ ձեռքից ձեռք անցնող՝ էտրեպիսյի հանգուցյալ արբա ժան Մելիեի «Կտակ» աշխատության կրճատ կամ լրիվ ցուցակների վերնա-

գրին: Դժվար է սրան որոշակի պատասխան տալ: Միրաբոյի առաջին աշխատությունը չհրատարակվեց նույնպես անբավարար լուսաբանված պատճառներով: Ամենից ավելի հավանականն այն է, որ հեղինակը ինքը չի շտապել հրատարակելու այն: Աշխատության բովանդակությունը մասնավորապես հայտնի է ըստ Լոնի դը Լոմենիի շարադրանքի, որը գեոես անցյալ դարում հետազոտել է Միրաբոյի տան արխիվները: Նրա աշխատությունը, համեմայն գեպս փաստական կողմով, այժմ էլ, հարյուր տարի անց, մնում է Միրաբո ավագի և կրտսերի կյանքի ու գործունեության ամենալիակատար ու հավաստի հետազոտությունը: Եթե հավատանք Լոմենիին, — իսկ նրան, որպես կանոն, հավատալ կարելի է, — դա մի ստեղծագործություն էր, որը և՛ արտաքին ձևով (կառուցվածքով ու հեղինակային խոսքով), և՛ բովանդակությամբ լիովին համապատասխանում էր ժամանակի ոգուն: Իհարկե, դա քննադատություն էր, թագավորությունում գոյություն ունեցող կարգ ու կանոնի զուսպ, զգույշ քննադատություն, որի թերություններն այնքան ակնբախ էին, որ հասարակության ուշադրությանը հավակնող ոչ մի հեղինակ չէր կարող չմերկացնել: Բայց երիտասարդ գրողը հասկանում էր, որ գոյություն ունեցող թերություններին և արատներին պետք է հակադրել ինչ-որ դրական որոշում: Նա տեսնում էր այն ոչ այնքան առաջ շարժվելու, փրկարար փիլիսոփայական քարի որոնումների, որքան դեպի անցյալ՝ ինչ-որ իդեալական, կամ, ավելի ստույգ, գեպի հեղինակի կողմից իդեալականացված շափավոր ֆեոդալական կարգերը վերադարձի մեջ:

Հինավուրց ֆեոդալական բարձր դասի շառավղի համար, գրան-սենյորի համար, որը շնայած խրախճանքներին զեռ հըսկայական ունեցվածքի տեր էր և իր ընտանեկան տիրույթներում իրեն զգում էր որպես լիակատար անկախ ու անսահմանափակ գերիշխող անձ, այդպիսի հասարակական իդեալը ինչ որ շափով հասկանալի ու բացատրելի էր: Բայց մարկիդ դը Միրաբոն բավականաչափ լուսավորված ու կարգացած գրան-սենյոր էր, որպեսզի զգար, որ իր անձնական շահերին և հինավուրց արժեքականական տոհմի ընտանեկան ավանդույթներին համապատասխանող հասարակական իդեալը հազիվ թե հարմար լինի իր այլ ժամանակակիցների ճաշակին:

Հաշորդ ստեղծագործության՝ «Գավառական շտատների մասին» հուշագրության մեջ, որը տպագրվել է 1750 թվականին

առանց հեղինակի ստորագրության (որը նույնպես դարի սովորույթներից էր՝ այն դաժան ժամանակներում հանդես գալ առանց իսկական մտադրությունները թաքցնելու շափից դուրս վտանգավոր էր), հեղինակն արել է աներկբայելի և միաժամանակ նշանակալից քայլ առաջ:

Հուշագրության անանուն հորինողը ժամանակակից կարգերի թերութուններին արդեն չէր հակադրում վառ գույներով պատկերվող վաղ ֆեոդալական կարգերի վերացական-իդեալականացված մոդելը. նա առաջարկում էր ինչ-որ կոնկրետ ու գործնական մի բան: Յրանսիայի վերածնունդը հեղինակը կապում էր գավառական շտատների դերի ու նշանակության վերածնունդի հետ: Ըստ էության դա նախորդ ստեղծագործության գաղափարի շարունակությունն էր: Գավառական շտատները հին ֆեոդալական դարաշրջանի պահպանված ինստիտուտներից մեկն էր, երբ գավառները, որտեղ գերիշխում էին խոշոր ֆեոդալները, գրեթե անկախ էին ամենազոր միապետ-ինքնակալի իշխանությունից, բացարձակ միապետության իշխանությունից: Գավառական շտատները, այսինքն արտոնյալ դասերի մշտական ժողովները, որոնք Լյուդովիկոս XIV-ի և Լյուդովիկոս XV-ի օրոք բարձր էին տալիս իրենց խղճուկ, գրեթե խաբուսիկ գոյությունը և հուշագրության հեղինակի ըմբռնումով պետք է վերածնվեին ու զորեղանային, կոչված էին դառնալու գավառների կառավարման գլխավոր մարմինները և որպես այդպիսիք փոխարինելու այժմ գործող մեծագոր ինտենդանտների իշխանությունը:

Այդ վերջին կետի՝ ինտենդանտների կառավարման սխտեմի սուր քննադատության և այն կառավարման ուրիշ սխտեմով՝ շտատերին վստահություն ներշնչող գավառական շտատներով փոխարինելու առաջարկված գործնական հանձնարարագրի մեջ է անհայտ հեղինակի հուշագրության գլխավոր ձգողական ուժը:

Քանի որ ինտենդանտներին ատում էին նրանց անշափ ազահությունից, կաշառակերությունից, շափազանց մեծ հարկերից, կամայականությունից, օրենքի անունով քողարկված անօրինականություններից բոլոր տուժածները, «Գավառական շտատների մասին» հուշագրությունը իսկույն նկատվեց առաջավոր ընթերցող հասարակության շրջանում, նրա համար լայն հաջողություն էր ապահովված:

Հորինողը, որի անունը ժամանակակիցների մեծամասնությանը մնում էր անհայտ, քաշալերված իր առաջին տպագիր աշխատության բարեհաճ գնահատականից, ոգևորությամբ շարունակում էր իր ուսումնասիրությունները: Նա շատ էր կարգում, շատ էր գրում, շատ էր ձանապարհորդում, դիտում, համեմատում, խորհում:

1756 թվականին նա, նույնպես անստորագիր, հրապարակեց մի աշխատություն, որը վերնագրված էր «Մարդկանց բարեկամը կամ Տրակտատ աղգաբնակչության մասին»: Գիրքն ունեցավ մեծ հաջողություն, դուրս գալով Յրանսիայի սահմաններից հեռու. այն քննարկում էին առաջավոր դադափարների բոլոր կողմնակիցներն ամբողջ եվրոպայում: «Մարդկանց բարեկամը» դասողությունների լիակատար որոշակիությամբ ու վստահությամբ աղյարարում էր, որ մարդկային հասարակության բարեկեցության հիմնական աղբյուրը եղել է, մնում է և կլինի հողագործությունը: Անձամբ ծանոթ ըլինելով ոչ Յրանսուս Կենեին, ոչ նրա աշխատություններին, Վիկտոր-Միքեռի դը Միրաբոն լրիվ ինքնուրույն և Կենեից անկախ տարօրինակ կերպով հանգեց այնպիսի հայացքների, որոնք շատ բաներում, իսկ գլխավոր կետում՝ հողագործության դերի մասին՝ գրեթե լիովին համապատասխանում էին ֆիզիոկրատների դպրոցի հիմնադիրը համարվող հեղինակի հայեցակետին: Գիտության պատմության մեջ այդ ոչ հաճախ հանդիպող՝ տարբեր ուղղություններով դատող գիտնականների հայացքների համընկնումը, ըստ երևույթին, կարող է բացատրվել այդ դարաշրջանի որոշ օրինաչափություններով: Վ. Պ. Վոլգինը իր ժամանակին առաջարկել է այդ օրինաչափությունների բացատրությունները<sup>2</sup>:

Պատահական չէ, որ ընթերցողներն այդ դիրքը սկզբում վերագրում էին Կենեին: Բայց ժամանակի ընթացքում ամեն ինչ պարզ դարձավ: Որպես աղմուկ հանած ստեղծագործության հեղինակ, մարկիզ Միրաբոնի անունը այնպիսի լայն համբավ և ժողովրդայնություն ձեռք բերեց, որ նրան սկսեցին նույնացնել նրա գրքի անվան հետ: Մարկիզ Միրաբոնին այժմ սկսեցին անվանել ոչ այլ կերպ, քան Մարդկանց բարեկամ: Բնականաբար, հեղինակը շատ էր հպարտանում ավելի շատ պատվավոր, քան արգարացի այդ մականունով:

Ինչևիցե, «Մարդկանց բարեկամին» բաժին ընկած աղմկոտ հաջողությունը բացատրվում էր ոչ այնքան ստեղծագործության

գրական գաղափարներով. ֆիզիոկրատները դպրոցը (իսկ ավագ Միրաբոն, ինքն այդ բանը շեմադրելով, դարձավ նրա առաջին քահանայապետներից մեկը) ոչ միայն կարեկցանքի, այլև առարկության էր հանդիպում: Այդ գրքի հաշտությունը գլխավոր աղբյուրը պետք է փնտրել Լյուդովիկոս XV-ի մարտը դարի, բացարձակ միապետական վարչակարգի գեղադանսի դարաշրջանի այն կտրուկ, սուր և սրամիտ քննադատության մեջ, որն արտաքին քառասյունությունից, նույնիսկ հեղինակի գրելաձևի խառնաշփոթությունից դուրս ընթերցողները մե՛րթ այստեղ, մե՛րթ այնտեղ բավականությունը գտնում էին այդ ինքնատիպ աշխատության էջերում:

«Մարդկանց բարեկամն» իսկույնեթ Վիկտոր-Ռիքետի դը Միրաբոնին մտքրեց Ֆրանսիայի առավել նշանավոր, կարգացվող և հարգարժան գրողների շարքը:

Շուտով նա մտերմացավ Կենեի հետ. նրանց միավորում էր որոշ հարցերում նույնիսկ այն հայացքների հարազատությունը, որոնց յուրաքանչյուրը հանգել էր ինքնուրույն կերպով: Ավելի ուշ Միրաբոն լավ հարաբերությունների, իսկ հետո նաև գործարար համագործակցության մեջ մտավ տնտեսագետ Պոլ-Պիեր Մերսիե դը լա Ռիվիերի հետ, որը ևս հարում էր ֆիզիոկրատները դպրոցին: Կենեի և Մերսիե դը լա Ռիվիերի հետ նրանք աշխատակցում էին «Journal de l'agriculture, du commerce et finances»-ի («Գյուղատնտեսության, առևտրի և ֆինանսների ամսագիր») էջերում, որի հրատարակիչն էր Դյուպոնը: Բանը վերջացավ նրանով, որ 1765 թվականին մարկիզ Միրաբոն Դյուպոնից որպես մասնավոր սեփականություն գնեց ամսագիրը, և նրա ղեկավարությամբ ու Կենեի և Մերսիե դը լա Ռիվիերի գործուն մասնակցությամբ ամսագիրը դարձավ ֆիզիոկրատները գլխավոր խոստովողը:

Միայն կլիներ ենթադրել, թե «Մարդկանց բարեկամը», լայն հույսի և ճանաչում գտած գրող-տնտեսագետը, Կենեի հետ միասին ֆիզիոկրատների դպրոցի ամենահեղինակավոր ղեկավարներից մեկը ապրում էր որպես աշխարհիկ հետաքրքրություններից ու հոգսերից հեռացած, մաքուր գիտության կամ հոգիի ու սիրտը վեհացնող մտորումների մեջ խորացողված կարեկցատալիս գիտնական, ճգնավոր: Իրական կյանքում ամեն ինչ այլ կերպ էր:

Գիտական զբաղմունքը ամենին շփոթեց մարկիզ դը Միրաբոնի ո՛չ բնավորությունը, ո՛չ հակումները. ճիշտ է, այդ զբաղմունքը փոքր ինչ ձևափոխեց դրանք: Երիտասարդ տարիներին նա փողերը քամուն էր տալիս առանց հաշվելու՝ դրանք շատ էին և ոչ մի արժեք չունեին նրա համար: Արգահատանք դգավով «ցրված», ինչպես մեղմորեն ասում էին այն ժամանակ, խրախճալից կյանքի նկատմամբ և առանձնանալով իր տոհմական կալվածքում, ավելի մոտ հողին, որի նշանակությունը նա տեսականորեն այնպես բարձր էր գնահատում, Միրաբոն սկսեց այլ կերպ վերաբերվել և փողի նկատմամբ: Նա լիովին բմբունեց նրա գործնական օգուտը. արդ նրան մտահոգում էր ոչ թե այն, թե ինչպես ծախսի, այլ ինչպես բազմապատկի փողը:

Հարստությունները դարի և դասի սովորությունների ոգով բազմապատկելու առավել ապահով միջոցը «համապատասխան» ամուսնությունն էր: «Մարդկանց» ապագա «բարեկամին» թվում էր, որ այդպիսի միջոց գտնվել է, և նա, երկար շնտաժելով, սիրտն ու ձեռքը առաջարկեց բարոն դը Վասսանի միակ զբոստերը: Հարսնացուն արտաքինով գեղեցիկ չէր, որպեսզի շատե՞ր ավելի որոշակի, բայց այդ թերությունը փեսացուի աչքում լիովին փոխհատուցվում էր նրանով, որ հարսնացուն ժառանգելու էր ամենամեծ կարողություններից մեկը (այդ թվում տարածքով վիթխարի կալվածք Լիմուզենում, որն առանձնապես հրապուրիչ էր ֆիզիոկրատի համար):

Փեսացուն սխալվեց իր հաշիվների մեջ: Իհարկե, նա ստացավ երկու նշանավոր բնտանիքների դիրքին պատշաճ ո՞՞ժիտ, բայց նրա տենչանքների գլխավոր առարկան՝ Լիմուզենի հոյակապ կալվածքը և հսկայական կապիտալները սպրդում էին ազահորեն առաջ մեկնած ձեռքերից: «Մարդկանց բարեկամի» օրինավոր կնոջ հայրը՝ բարոն դը Վասսանը, շնայած հաճախակի տկարությունը և խաբուսիկորեն հիվանդատ արտաքինին, բավական երկարակյաց դուրս եկավ: Մարկիզուհի Միրաբոն իր ծնողներից վիթխարի ժառանգություն ստացավ Վիկտոր Միրաբոնի հետ ամուսնական պայմանագիր կնքելուց գրեթե երեսուներե տարի անց: Ամուսիններն այդ ժամանակ այնքան հեռու էին գնացել խայտառակ դատաքննությունների հասնող փոխադարձ թշնամության մեջ, որ այդքան ուշ ստացած հարստությունն արգեն հագիվ թե հուզեր որևէ մեկին:

Մարկիզ Վիկտոր-Ռիքետի զը Միրաբոն առանց կնոջ սպաս-  
վելիք ժառանգութեան էլ մնում էր որպէս շատ ունևոր մարդ:  
Բայց նա դարձավ ժլատ՝ կնոջ, երեսնների, Պրովանսի ազնւ-  
վականութեան շարքում իր աստիճանին ու տեղին պատշաճ ըն-  
դունելութեաններ զրա կատարվող ծախսերի մեջ:

Կինելով բռնկուն, դուրսբորոք, բռնակալ, խիստ ու կըտ-  
րուկ ենթակաների, տանեցիների, կալվածքների հարևանների  
հետ վարվեցողութեան մեջ, նա ապրում էր որպէս շրջապատող-  
ների վախ ներշնչող քմահաճ «վայրենի ազա»: «Մարդկանց  
բարեկամը» մտտիկից բուրովին նման չէր այն կերպարին, որ  
կարող էր երևան գալ նրա ստեղծագործութեաններն ընթերցե-  
լիս: Ինչպէս նրա կենսագիրներից մեկն է հաջող ասել, միզուցե-  
նա իսկապէս սիրում էր մարդկանց, բայց նախապատվորեն  
հեռվից և գերադանցապէս միայն գրքերում:

Կովարար բռնակալի, իր տիրութեան բացարձակ կամա-  
յականութեան ռեժիմ հաստատած անզուսպ գրան-սենյորի,  
որին նա սրամտորեն պատկազերծել էր իր ստեղծագործութեան-  
ներում, շրջապատի համար շատ ծանր բոլոր անձնական  
գծերի առկայութեամբ հանդերձ, մարկիզ զը Միրաբոն մնում էր  
XVIII հարյուրամյակի ֆրանսիական առաջավոր հասարակա-  
կան մտքի ուժեղ, ստեղծագործական մեծ խելքի տեր մարդ-  
կանցից, ֆրանսիական Լուսավորութեան ականավոր ներկայա-  
ցուցիչներից մեկը:

Գիտութեամբ հրապուրվելու մեջ նա նույնքան մոլագար էր,  
ինչպէս և անձնական հակումներում: Սովորաբար նա շատ էր  
աշխատում, և հասուն տարիներին նրա տաղանդը հասավ լիա-  
կատար ծաղկման: 1760-ական թվականներին նա երեք-չորս  
տարի ընդմիջումներով հրապարակեց մի շարք աշխատութեան-  
ներ՝ «Հարկերի տեսութեան», «Հողագործութեան փոխտնտես-  
ութեան», «Նամակներ հացահատիկի առևտրի մասին»<sup>3</sup>: Դրանք,  
Կենեի և Մերսիե զը լա Ռիվիերի հետ մեկտեղ, արժանավորա-  
պէս Միրաբոնի համար ապահովեցին ֆիզիկորատների դպրոցի  
ղեկավարի և տեսաբանի փառքը:

Բայց Միրաբոնի մոլեգին խառնվածքը, կրակոտութեանը,  
նրան թույլ չէին տալիս բավարարվել գիտնական-հետազոտողի,  
տնտեսագետ-տեսաբանի դերով: Նա անհամբերութեամբ մարտի  
մեջ էր մտնում, գոտեմարտի բռնվում հակառակորդի՝ Լյուդովի-  
կոս XV-ի (որին, ի դեպ ասած, իր անձնական կյանքում շատ

բաներում էր ընդօրինակում) արքայազնութեան միապետու-  
թեան հետ բաղադրական հողի վրա: Արդեն «Հարկերի տեսու-  
թեանում» նա կտրուկ հարձակումներ գործեց հարկերի և, դեռ  
ավելին, թագավորական կառավարութեան ամբողջ ֆինանսա-  
կան քաղաքականութեան վրա: Նա իրեն թույլ էր տալիս հան-  
դըգնութեան, որը մեկ ուրիշի համար անպատիժ չէր անցնի:

Արքունիքի քաղաքականութեան վրա իր հարձակումների մեջ  
մարկիզ զը Միրաբոն հանդես էր գալիս ժողովրդի պաշտպանի  
դերում: Նա ունեւր սուր գրիչ, և, պատկերելով ժողովրդի աղե-  
տալի վիճակը, հակառակորդին շոշափելի հարվածներ էր  
հասցնում: Լյուդովիկոս XV-ը վերջի վերջը լուրջ կերպով բար-  
կացավ: Նա հրամայեց ձերբակալել Միրաբոնին և կալանավորեց  
Վենսենի զղչակում: Միրաբոնի ժողովրդականութեան անմի-  
ջապէս բավականաչափ աճեց: Նրա գրքերը, որ խրտնեցնում էին  
իրենց շոր, խիստ ակադեմիական անուններով, այժմ ընդհանուր  
հետաքրքրութեան էին հարուցում: Մարկիզ զը Միրաբոն դառ-  
նում էր ֆրանսիացի ամենամոդայիկ գրողներից մեկը:

Այն ժամանակ դեռ պահպանվում էր մարկիզուհի զը Պոմ-  
պադուրի ազդեցութեանը Լյուդովիկոս XV-ի վրա: Թագավորի  
բոլոր շնորհընկալ կանանցից նախկին օրիորդ Պուասսոնը, ան-  
կասկած, ամենակրթված և խելացի կինն էր: Ժամանակի ոգուն  
համապատասխան նա գտնում էր, որ արքունիքը պետք է հո-  
վանավորի դիտութեան և արվեստի մարդկանց: Նրա սուղունե-  
րում ընդունելութեանների ժամանակ կարելի էր հանդիպել դա-  
րի ամենանշանավոր հեղինակներին: Երիտասարդ հեղինակնե-  
րը, սկսած Վոլտերից, առաջ անցնելով միմյանցից, շտապում  
էին հիացական մաղրիզալներ հորինել ի պատիվ սքանչելի և  
զորեղ տիկնոջ:

Մարկիզուհի զը Պոմպադուրը արագ գլխի ընկավ, որ նշա-  
նավոր գրողի կալանավորումը Վենսենի զղչակում ամենևին էլ  
չի լինի հօգուտ արքունիքի, այլ ավելի շուտ ձեռնառու կլինի իրեն՝  
կալանավորին: Բացի այդ էլ մարկիզ զը Միրաբոն, մեկ անգամ  
լինելով տիկնոջ սաղնում, որի մասին կիսածայն խոսում էին  
որ հենց նա է Ֆրանսիայի ճակատագրի իսկական տնօրենը,  
նրա վրա ամենանպաստավոր տպավորութեանն էր թողել: Նա  
հեշտութեամբ ձեռք բերեց թագավորի համաձայնութեանը ազա-  
տամիտ գրողին Վենսենի զղչակից ազատելու մասին. նրան  
զրավոր կարգադրութեան արվեց մշտակաց ապրել Բինյոնի իր

կալվածքում: Միրաբոն վաղուց արգեն ընտելացի էր ժամանակի մեծ մասն անցկացնել իր կալվածքներում: Նա հեշտութեամբ ու հաճուքով հաշտվեց միապետի պատժին:

Այս միջադեպը իր ամբողջ անմեղութեամբ հանդերձ նպաստեց «Մարդկանց բարեկամի» ժողովրդայնության է՛լ ավելի բարձրացմանը: Նրա անվան հետ սերտաճած այս մականունը այժմ, երբ նրա ճակատին դրոշմվել էին մարտիրոսական պսակի տատակները, նրա ժամանակակիցներին թվում էր է՛լ ավելի արդարացի ու հիմնավոր: Արդյոք էլի ինչ-որ բան հարկավո՞ր էր «վայրենի աղայի» փառասիրության ծարավը հաղեցնելու համար, նրա, ով չվստեցավ հակամարտության մեջ մտնել ամենազոր միապետի հետ:

### III

Իր հոր տանը Օնորե Միրաբոն մանկության, իսկ այնուհետև պատանեկության տարիներին մեծանում էր մտավոր զարգացման համար բացառապես նպաստավոր և միևնույն ժամանակ զժվարին, նույնիսկ ծանր պայմաններում:

Հոր զրադարանը Ֆրանսիայում ամենալավագույն անձնական գրադարաններից մեկն էր, և փոքրիկ Օնորեն, որ վաղ տարիներից տարվել էր ընթերցանությամբ, օրուգիշերներ էր անցկացնում գրքերի առաջ: Կասկածի ենթակա չէ, որ նրա հանրազիտական կրթվածությունը, որ այնպես ապշեցրել էր ժամանակակիցներին, սկսել էր ձևավորվել դեռևս հոր տանը: Բարենպաստ դեր խաղաց և ընդհանուր ինտելեկտուալ մթնոլորտն ընտանիքում, որը խոր հարգանք էր ներշնչել փոքրիկ Միրաբոնին գիտության, գրքերի, լավ սրված փետուրն մեծ գրիչների նկատմամբ:

Բայց մեկ այլ բան էլ կար: Հայրը իր ավագ որդու հսկայական գլխի, տղեզ դիմազծերի համար առաջին իսկ հայացքից շսիրեց նրան: Իրեն հատուկ կտրականությամբ նա վճռեց, որ որդին բոլոր գարշելի հատկությունները, ընդհուպ մինչև արտաքինը, ժառանգել է իրեն ատելի Վասսանների ընտանիքից, որ նա նման է իր մորը, նրա հորը՝ ծերունի բարոն Վասսանին, որ նրանում ոչինչ չկա Միրաբոնների հինավուրց տոհմից:

«Մարդկանց բարեկամը» սխալվում էր, սխալվում էր մարդկանց մեջ ամենահարազատի նկատմամբ: Նրա որդին ընդօրին-

նակել էր իր հոր բոլոր գլխավոր, տարբերիչ գծերը՝ մտավոր օժտվածությունը, տաղանգավորությունը, հակումը ստեղծագործաշխատանքի նկատմամբ, անսանձելի, անզուսպ բնավորությունը, մոլեգին հափշտակվածությունը: Ամեն ինչում՝ և՛ ուժեղ կողմերում, և՛ թերություններում ու արատներում՝ ամեն ինչում, բացի արտաքինից, նա ոտքից գլուխ մնում էր Միրաբոն:

Ընտանիքը բազմազավակ էր. Օնորե-Գաբրիելը առաջնեկն էր, բացի նրանից կար ևս տասը երեխա: Հայրը նրանց համեմատում էր ավագի հետ. նրանք բոլորն էլ համեքաշխ էին, լավ կաղապարված, գեղեցիկ՝ իսկական Միրաբոններ, որոնք նման չեն այդ Վասսանների գարշելի ցեղին:

Թեև Մարիա-Ժենեվիկան նրա համար ծնել էր տասնմեկ երեխա, ամուսինների միջև հարաբերություններն օրավուր ավելի ու ավելի էին վատանում: Թշնամանքը վերաճեց փոխադարձ ատելության: Մարկիզուհի դը Միրաբոն նույնպիսի անզուսպ բնավորություն ուներ, ինչպիսին նրա ամուսինը: Երեխաները, առանձնապես ավագը, ընչին չափով անզամ չէին հետաքրքրում նրան. մայրն անտարբեր էր նրանց նկատմամբ, նրան ամբողջապես կլանել էր ատելությունը ամուսնու հանդեպ, որը չէր թաքցնում ոչ իր գարշանքը նրա նկատմամբ, ոչ էլ իր ամուսնական անհավատարմությունը: Բիչյուն գոչակում մթնոլորտն անտանելի էր դառնում:

«Մարդկանց բարեկամը» գտավ, ինչպես իրեն էր թվում, պարզ որոշում: Մարիա-Ժենեվիկայի մոր հիվանդության և հիվանդին խնամելու անհրաժեշտության մարդասիրական պատրուկով նա կնոջն ուղարկեց Լիմուզեն, իսկ որոշ ժամանակ անց նրան նամակ գրեց, որով տեղեկացնում էր, որ նա չպետք է շտապի հետ վերադառնալ Բիչյուն՝ ինչպես ցույց է տվել երկար ուարիների փորձը, նրանց համատեղ կյանքը մի հարկի տակ անհնարին է:

Մարկիզ դը Միրաբոն այն ժամանակ դեռ չգիտեր, որ իրեն այդպիսի անհաղթահարելի ատելություն ներշնչող կնոջից չի կարելի հենց այնպես՝ մեծ-մեծ տառերով գրված նամակով ազատվել: Նրան դեռ շատ փորձություններ էին սպասում:

Բայց «Մարդկանց բարեկամն» առայժմ բարեգութ թեթևություն էր զգում: Արդ նա կարող էր վերադառնալ իր սիրելի գրական զբաղմունքին, ամեն օր շունենալով մոռալ զգացումներ,

որոնք պզտոր ալիքի պես բարձրանում էին մարկիզուհի զք Միրաբոյի հետ անխուսափելի հանդիպումների ժամանակ:

Ազատվելով կնոջից, նա շտապեց իր աչքից հեռացնել և ավագ որդուն: Տասնհինգ տարեկան հասակում ուսումը շարունակելու համար նրան ուղարկեցին Վերսալ, իսկ հետո Փարիզ: Որպես ազնվական ընտանիքի ավագ, նա պետք է սուսերով ծառայեր թագավորին, բայց գրա համար պետք է պատրաստվեր ինչպես հարկն է: Այդ փաստարկի դեմ զժվար էր որևէ կերպ առարկել: Օնորե-Գարրիելը, պատանեկութիան տարիներին սուր կերպով զգալով հոր թշնամական խորաթափանցությունը, այնուամենայնիվ նրա նկատմամբ ակնածական շիացմունք էր տածում: Քաջածանոթ Լուսավորության դարի նորագույն գրականությունը, նա հպարտ էր այն բանով, որ հայրը այդ գրականության շարքում առաջին տեղերից մեկն է գրավում: Լինել նշանավոր «Մարզկանց բարեկամի» որդի՝ կարելի՞ էր, արդո՞ք, դրանից ավելի մեծ պատվի հավակնել:

Հանգիստ սրտով նա հաշտվեց այն բանի հետ, որ հայրը, որդուն ուղարկելով մայրաքաղաք, նրան ոչ թե իսկական, իրավամբ նրան պատկանող ամբողջ երկրում հայտնի կոմս զք Միրաբո անունը շնորհեց, այլ նրա համար հայթայթեց թղթեր, որոնցում Օնորե-Գարրիելը կոչվում էր Պիեր Բյուֆիեր: Որտեղի՞ց գտնվեց այդ անունը: Կիմուզենում վաստանների բազմաթիվ կալվածքներից մեկը կրում էր «Պիեր-Բյուֆիեր» անունը: Իր որդուն շնորհելով, թեկուզև մի որոշ սահմանափակ ժամանակով, այդ անունը, հայրը լուելյայն ավագ որդուն կարծես հասկացնել էր տալիս, որ դեռ պետք է արժանի լինել Միրաբո կոչվելու իրավունքին:

Եվ ահա պատանի Պիեր Բյուֆիերը ուսուցման դպրոց է անցնում հարազատ ոչախից հեռու: Նա հայրական տնից բաժանվեց առանց արցունքների, առանց թախծի: Վերսալում պաշտոնաթող հեծելազորային կապիտան Միգրեի տանը, որը նրան պետք է զինվորական գիտություն առաջին դասերը տար, նա ամենահյուրընկալ ընդունելության հանդիպեց: Բայց Միգրեի բարությունը դուր չեկավ մարկիզ զք Միրաբոյին, որը հեռվից իրեն հավատարիմ մարզկանց միջոցով ուշադիր հետևում էր որդուն: Հայրը պնդում էր, որպեսզի Օնորե-Գարրիելին փոխադրեն արքա Շոկարի զեկավարած զինվորական փակ դպրոցը:

Այդ արքան «ամուր ձեռքի» և խստիվ կանոնների մարդու լամարում ուներ, և հենց այդ արժանիքները, «Մարզկանց բարեկամի» կարծիքով, պետք է կարգապահության վարժեցնեին նրա որդուն: Բայց արքան հազիվ թե կարողանար լուծել իր վրա դրված խնդիրը. դպրոցի նոր սանն ուներ անհնազանդ բնավորություն, և բացի այդ էլ նա հեշտությունը արդենություն ձեռք բերեց դպրոցի իր ընկերների վրա: Տարիներն անցնում էին, լրացավ կրտսեր Միրաբոյի տասնութ տարին, նա պետք է ծառայեր անմիջաբար բանակում:

Որոշումը նորից ավագ Միրաբոյի ձեռքում էր: Նա իր որդու լամար ընտրեց զինվորական ծառայության ամենաանախաձեռնի տեսակը՝ նրան ուղարկեցին Սենտա փոքրիկ քաղաքի կալոդորը՝ հեծելազորային զնգապետ, խստապահանջ Լամբերի հրամանատարության ներքո, որտեղ միայն մեկ տարի հետո Օնորե Գարրիելին պետք է շնորհեին կրտսեր լեյտենանտի կոչում:

Իհարկե, մարկիզ զք Միրաբոյի ավագ որդին, կոմս Օնորե Միրաբոն, կարող էր հավակնել ավելի շատին՝ իսկ ինչո՞ւ, որինակի համար, տասնութ տարեկանում չսկսել զնդի հրամանատարությունից: Լյուդովիկոս XV-ի օրոք այդպիսի նշանակումը հազվագեղ էր. դա զգուշ չափով համարվել, կապերի կամ փողի հարց էր:

Բայց նա զեռ լիովին վստահում էր իր հորը և անվերապահորեն ենթարկվում նրա կամքին:

Ինչպես և նրա ժամանակի կրթված երիտասարդների մեծամասնությունը, կրտսեր Միրաբոն Լուսավորության և ամենից առաջ ժան-ժակ Ռուսոյի սոցիալ-քաղաքական հայացքների լամուզված կողմնակիցն էր: 60-ական թվականները Ռուսոյի ամենամեծ փառքի ժամանակներն էին: Ամբողջ Ֆրանսիան տարված էր նրա «Նոր էլոիզը» կարդալով, և պատանի Միրաբոն նրա ամենախանդավառ երկրպագուներից մեկն էր:

Լինել Ռուսոյի հետևորդը՝ նշանակում էր թշնամի լինել բոնապետությունը, ճնշմանը՝ նրա դրսևորման ցանկացած ձեռնարկով, լինել ժողովրդի պաշտպանն ու բարեկամը, մարտնչել հանուն արդարացի գործի, մոտ լինել բնությունը: Երիտասարդ Միրաբոն պատրաստ էր հաճույքով հեռանել մեծ ուսուցչի յուրաքանչյուր պատվիրանին, նա պատրաստ էր ընդօրինակել նրան:

Միևնույն ժամանակ նա ալեկոծված էր խելահեղ ցանկություններով ու կրքերով. և բացի այդ էլ հավասարության մեծ սկզբունքի առջև խոնարհվելը նրա մեջ տարօրինակ կերպով համատեղվում էր իր ազնվականական ծագման, Ֆրանսիայի ամենահին մեծատոհմիկ ընտանիքներից մեկին պատկանելու թաքուն հպարտության հետ: Ինչպե՞ս է այդ բոլորը իրար միանում: Գրանից զեռ գլուխ չէր հանում. կգա ժամանակը, և ամեն ինչ իր տեղում կլինի:

Կայազորային ծառայությունը Սենտում այնքան էլ դժվար չէր և բավականաչափ ազատ ժամանակ էր մնում, շնայած Լամբերի խստություններին, որն իր խնամարկչալին տասնյակ անգամներ ուղարկել էր զինվորական կալանատուն: Գավառական փոքրիկ քաղաքի «բարձր հասարակությունը» շափազանց հաճույքով էր ընդունում Ֆրանսիայի ամենանշանավոր ընտանիքներից մեկին պատկանող երիտասարդին: Բացի այդ, բարձրահասակ և ուժեղ պատանին, շնայած ծաղկատար անկանոն դիմագծերին, օժտված էր մարդկանց իր կողմը տրամադրելու ինչ որ հատուկ շնորհքով: Նրա ապրումը, անընկճելի ինքնավստահությունը, սրամիտ խոսքը, դիպուկ զննականությունը, քաղաքավարությունը և միևնույն ժամանակ անկաշկանդությունը նրան ցանկալի հյուր և զրուցակից էին դարձնում:

Այդ փոքրիկ գավառական քաղաքում Միրաբոն արագորեն ընդհանուր համակրանք նվաճեց: Նա չէր ձանձրանում: Այստեղ ամեն ինչ կար՝ և՛ կրթված ազնվականների հաճելի ընկերություն, և՛ երեկոյան թեթև խնջույքներ, և՛ գիշերային խրախճանքներ, և՛ թղթախաղ, և՛ կանայք: Սկզբում նա դժվարություններ էր կրում: Հայրը տարեցտարի ավելի ժլատ էր դառնում, նա որդուն փողը տալիս էր հազիվ բավականացնելու շափ:

Ինչ-որ մեկը հուշեց, որ կարելի է գտնել ազնիվ մետաղի պակասը լրացնելու ամենապարզ միջոցը, և պատանի կոմսին հարկ չեղավ երկար համոզել: Ո՞վ կհամարձակվի հրաժարվել Պրովանսի ամենահարուստ հողատերերից մեկի՝ մարկիզ դը Միրաբոնի ավագ որդուն փող պարտք տալուց:

Այն ժամանակից ի վեր, երբ գտնվեց այդ պարզ որոշումը, ամեն ինչ հեշտ ընթացք ստացավ: Փողերն իրենք էին ընկնում նրա ձեռքը: Նա նույնիսկ իրեն նեղություն չէր պատճառում հաշվել դրանք: Իսկ արդյո՞ք դրա կարիքը կար: Նա ապրում էր

այնպես, ինչպես մի ժամանակ և նրա հայրը, շմտածելով վաղվա օրվա մասին:

Սենտում նա ծանոթացավ տեղացի ինչ-որ մի ժանդարմական պետի կամ կիսապետի աղջկա հետ: Առանց հատուկ ջանքերի նա գայթակղեց նրան, անշրջահայացորեն խոստանալով ամուսնանալ հետը: Օրիորդը լըշորեն ընդունեց նրա խոստումը և շտապեց այդ մասին պատմել ընկերուհիներին: Նորությունը բոլորին անհանգստություն պատճառեց: Մի մտածեք, է՛, տեղացի ինչ-որ մանր շինողների դուստրը կգառնա կոմսուհի դը Միրաբոն:

Սենտում քաղաքի բոլոր նորությունները հայտնի էին դառնում ակնթարթորեն: Բնականաբար դրանք հասան և հեծելագորային գնդապետին: Նա իր ենթակալի վարքն ընկալեց իրեն հատուկ խստությամբ, կատարվածի մեջ տեսնելով համարյա զնդի դրոշի պատվի անարգում և Պիեր Բյուֆիերին սպառնաց բանտարկել ամբողջում: Կատարվածի նկատմամբ անսպասելի հետաքրքրություն ցուցաբերեցին և Միրաբոնի պարտատերերը՝ նրանցից ոմանք կոմսին առաջարկում էին նոր խոշոր պարտքեր (բնականաբար, բարձր տոկոսներով), իբրև թե հարսանիքը մեծ ծախսեր կպահանջի. մյուսները, ղեկավարվելով առաջին հայացքից, դժվար ըմբռնելի տրամաբանությամբ, քաղաքավարի, բայց համառ ձևով պահանջեցին մարել նախկին պարտքերը:

Վերջ անհոգ, թեթև կյանքին: Պատանի կոմս դը Միրաբոն դժվարին կացություն մեջ ընկավ: Նա ամենից քիչ մտադրություն ուներ ամուսնանալ իրեն ձանձրացնող այդ գավառական օրիորդի հետ: Նա մտադիր չէր և վճարել իր պարտքերը. վերջինը լացումով էր թեկուզե անցնում, որ գրպանում մի դրոշ անգամ չունեն:

Ստեղծված պայմաններում նա շատ արագ գտավ մի գուցե ոչ լավագույն, բայց միակ փրկարար վճիռը. մի անգամ գիշերը նա աննկատ հեռացավ քաղաքից: Երբ առավոտյան քաղաքն արթնացավ, և նրա լուսավորյալ բնակիչները վերադարձան քաղաքի հասարակությանն այդպես շափազանց զբաղեցրած բամբասանքին, նոր, է՛լ ավելի ապշեցուցիչ լուրը բուրբին սաստիկ հուզեց՝ անսովոր եղելության գլխավոր հերոսը խորհրդավոր կերպով անհետացել էր:

Այնինչ Սենտից անհետացած փախստականը նույն 1768 թվականին հայտնվում է Փարիզում, իր հոր հին մտերիմ բարեկամ դուքս Նիվեբրիեի, որին նա լավ գիտեր մանկական տարիներից, առանձնատանը:

Շնորհ-Վարդիկը իրեն հաշիվ էր առել, որ ինքնագլուխ փախուստը գնդից զինվորական կանոնադրությունների լիզվուունի լիավին ստույգ որակավորում՝ դասալքություն: Բնականաբար նա իր խոսքի մեջ չէր օգտագործում այդ անհեղ արտասանվող բառը: Չմտնելով մանրամասնությունների մեջ, նա ընտանիքի վաղեմի բարեկամին ինզորեց միջնորդել մարկիզ Միրաբոյի առաջ որդուն ուրիշ կայազոր փոխադրելու համար: Դուքս Նիվեբրիեն կրտսեր Միրաբոյին թողեց իր մասը և գրագրություն սկսեց նրա հոր հետ:

«Մարդկանց բարեկամը» ցույց տվեց, որ ինքը չի պատկանում մարդկային ցեղի զգայուն բարեկամների շարքին: Որդու խնդրանքը նրա վրա մեծ ազդեցություն չգործեց: Նրա գործողություններում նա տեսավ զինվորական պարսրի ուղղակի խախտում, թեև ավելի շատ նրան գրգռում էին որդու մասնավոր պարտքերը, որոնք կամաց-կամաց ստիպված էր վճարել: Ընդհանուր առմամբ սրդին մեղավոր էր, իսկ մեղքը պետք է պատմվեր: Մարկիզը դր Միրաբոն թագավորի անունից ստացավ lettre de cachet— գաղտնի կարողություն կրտսեր Միրաբոյին Ռե կզգու ամբողջում բանտարկելու մասին:

Տասնութ տարեկանում բանտարկվել ամբողջում որպես պետական հանցագործ՝ արդյոք դա շատ չէ՞ր սկզբի համար: Բայց «Մարդկանց բարեկամը» ենթադրում էր, որ նա մեծահոգաբար է վարվել. նրա սկզբնական մտադրությունն էր որդուն աքսորել Սուամորու կղզի՝ հեռավոր հոլանդական գաղութները, որտեղից ոչ ոք դեռ չի վերադարձել:

Սվ ահա Սնորհը դր Միրաբոն Ռե ամբողջի կալանավորն է: Հավանաբար, նրա զգացումները երկակի են ու հակասական: Նա թեթևություն է դրում: Նա այլևս ոչ մի բանի համար պատասխանատու չէ՝ ոչ զինվորական կարգապահությունը խախտելու, ոչ չվճարված պարտքերի, ոչ էլ ամուսնանալու խոստումը չկատարելու համար: Նա բոլոր կողմերից ջրային տարածությունը շրջ-

ջատառված ամբողջի գերին է. նա չի տնօրինում իր ճակատագիրը:

Միևնույն ժամանակ նրա մեջ ծնվում ու ուճում է բողոքի ու գայությունի զգացումը աշխարհում տիրապետող անարդարության, դաժանության, կամայականության հանդեպ: Առանց գառի, առանց հրապարակային հետաքննության մարդուն սահել ամբողջում նույնքան հեշտ է այս յուսավորյալ թագավորությունում, ինչպես նեկատերինա Մեդիչիի օրոք: Նրա մեջ կասկած է արձնանում, առայժմ միայն կասկած հոր գործողությունների ճշմարտացիության, բարի մտադրությունների եկամտամբ: «Մարդկանց բարեկամ»՝ Արդյոք այդպիսի՞ն է բարեկամը, երբ խոսքը սեփական որդու մասին է:

Բայի դ՛ Օլանը, Ռե կզգու նահանգապետը, որը սպասում էր տեսնել վասնդավոր, գողազամ հանցագործի, ժայռատիճան գաղմացած էր, հանդիպելով խելացի, կրթված, հոճելի վարվեցողության տեղ երիտասարդի, որը բարենորոգյալ մեծագուճ էր անսպասելիորեն իր վզին փաթաթված պետական հանցագործի գերի վրա: Նա արագ նվաճում է ամբողջի ամենագոր նահանգապետ-պարետի, նրա տեղակալ դր Մալմոնի, պարետի տեղակալի սղջկա համակրանքը: Հիմա նա ավելի հեշտ է սպրում, նրան այլևս է կղզում տեղաշարժելու լիակատար սպատություն. ժամանակ առ ժամանակ դ՛ Օլանը նույնիսկ թույլատրում է ուղևորություն կատարել մտակա կա-Ռոշել բաղարը:

Այնուամենայնիվ ամբողջի հին, բազմափորձ պարետին մի բիշ շփոթության մեջ է դրում այն անսովոր իրողությունը, որի մեջ հայտնվել էր իր պատանի գերին: Այդ պատճառով, երբ Միրաբոն, լսելով, որ սազմական էքսպեդիցիա է պատրաստվում դեպի Կորսիկա կղզի, սուշարկում է մասնակցել նրան սրպես կաճավոր, դ՛ Օլանը հաճույքով պաշտպանում է նրա տառաբկությունը: Օլանի միջնորդության շնորհիվ Միրաբոյին բնգունում են Այաչչու մեկնող լաթարիեզյան դուստր և նրան շնորհում լեյտենանտի կոչում:

Երեկվա կալանավորը նորից թագավորի մաս ծառայության մեջ գունվող սպա է: Նա մեկնում է գունը: Հրաժեշտ տեղի է անենում ամենաբարեկամական մթնոլորտում՝ արից հեռացող նավակին երկար ժամանակ թափահարում են թաղիկնակով և բոլորից երկար՝ օրիորդ դր Մալմոնը, որն արցունքներն աշքերին

դեռ հաճախ պետք է հիշի այն կարճատև երջանիկ ժամանակը, երբ կյանքն այդ սակավարճակ կղզում այնպես պայծառ ու հետաքրքիր էր թվում:

Իսկ երիտասարդ լեյտենանտ Միրաբոն, Կորսիկայում մասնակցելով ազգական գործողություններին կարողացավ արագ աչքի բնկնել: Նա համարձակ էր, խիզախ ու հնարամիտ, այդ արժանիքները Կորսիկայի համեմատաբար կարճատև պատերազմում նրան բերեցին գրագույնների կապիտանի կոչում:

Պառլիի գլխավորությամբ գործող կորսիկացիների դեմ պատերազմի ընթացքում Միրաբոն աստիճանաբար հասունացավ ըմբռնելու համար այն, որ արդարությունն ու իրավունքը Կորսիկայի ժողովրդի կողմն էր: Բայց երբ նա այդ բանը լրիվ գիտակցեց, պատերազմն արդեն այնպես էր: Կարո՞ղ էր, արդյոք, փոքրիկ Կորսիկան, շնայած նրա հայրենասերների քաջությանը, դիմադրել հզոր Ֆրանսիային:

Ավելի ուշ Միրաբոն հրապարակախոսներն խոստովանեց, որ իր մասնակցությունը կորսիկացիների դեմ մղված պատերազմին կուպիտ քաղաքական սխալ էր: Նա ձգտում էր իր մեկը կորսիկացիների հանդեպ բավել նրանով, որ իր տառջին գրական ստեղծագործությունը նվիրեց նրա քաջարի և տաղանդավոր ժողովրդին: Նա այդ ստեղծագործությունը հանձնեց հոր՝ իր համար ամենահեղինակավոր գրողի գատին: Ավագ Միրաբոն հավանություն չտվեց իր որդու աշխատությունը՝ այն կոմս Միրաբոնի կենդանության օրոք այդպես էլ չսպառվեց:

Պատերազմն ավարտված է, և գրագույնների կապիտան կոմս դը Միրաբոն արժանիորեն արձակուրդ է ստանում: Նրան, բնականաբար, ձգում է հարազատ Պրովանսը. նա միշտ թախժում է արևի լույսով ողողված, փարթամ, վառ կանաչի մեջ թաղված ծովամերձ շրջանի մասին: Բայց ողջ կատարվածից հետո նա չի շտապում հանդիպել իր նշանավոր հոր հետ, դեռ ամեն ինչ չի հարթվել: Նրան տանջում են կասկածները՝ արդյո՞ք նա ըստ արժանվույն է կրում «Մարդկանց բարեկամ» փառահեղ անունը: Նա իջևանում է իր կրտսեր հորեղբոր՝ նախկին ծովային սպա, Կանադայում մղված պատերազմի մասնակից, Գվադելուպայի նախկին նահանգապետ, Մալթայի շքանշանի ասպետ, վիթխարի և գեղեցիկ, ինչպես բոլոր Միրաբոնները, հին ամուրի բայի Միրաբոնի մոտ, որն իր կյանքն ավարտում էր որպես մեծագույն հայրական հնամենի զոհակոմ:

Ժան-Անտուան-Փոպեֆ-Ռիքետի դը Միրաբոն իր շնորհի հետ՝ նույնքան վիթխարի, ինչպես և ինքը, իրեն գերազանց է գրում այդ անմատչելի զոհակոմ:

Ըստ էության դա ոչ թե զոհակ է, այլ հին ումրոց վեցանկյուն բոլորաձև աշտարակներով, հրակնատներով, որմածքներով, սվեյթերով լինելու պատճառով չգործող բարձրացող կամբոցով: Գոյակի պատերը շարված են ժամանակի ընթացքում և անձրևներից սեպած շժակվող բարերով: Քանի՞ տարի է այն կանգնած: Հարյուր, երկու հարյուր, երեք հարյուր, չորս հարյուր՝ ոչ ոք ստույգ չգիտե. զբոսայգում պահպանված հսկայական բարերը ծածկված են գորշ սպիտակավուն մամուռով: Օնորեն հունապարհորդ-նախակարապետի բավականություն է ճաշակում, յուրաքանչյուր օր զոհակում հայտնաբերելով խորհրդավոր ստորդեմանյա անցումներ, նախկինում անհայտ գաղտնամուտքեր, լաբիրինթոսներ: Նա բացում է ժանգոտված դռները դժվարությամբ և շքող երկյուղով՝ միգուցե հիմա նա հանկարծ կհանդիպի պատի մեջ զմռսված Կապույտ Մորուքի յոթ կանանց աճյուններին: Օնորեն իրեն հպարտ է զգում: Միրաբոնի զոհակը իր նախնիների ամբոցն է, դա իրենց բնատանեկան բույնն է, և ինքը պատկանում է այդ փառահեղ տոհմին՝ Ֆրանսիայում ամենահին տոհմերից մեկին:

Մերկոյան հսկայական դահլիճում, որ ծսույում էր որպես ճաշարան, հորեղբայրը և եղբորորդին երկար գրուցում էին: Նրանք վատ գիտեին միմյանց: Ժան-Անտուանը իր ավագ եղբորից ամենաանբարենպաստ դատողություններ է լսել որդու մասին: Այժմ յուրաքանչյուր գիշեր նա պարմանքով ու հարածուն հետաքրքրությամբ համոզվում էր այն բանում, որ իր փոտաբանված եղբայրը կատարելապես ոչինչ չի հասկացել իր ավագ որդուց: Այդ «ծովային գայլը», ինչպես սկզբում վիկտոր դը Միրաբոն քամահարանքով անվանում էր կրտսեր եղբորը, ոչ միայն շատ բան տեսած, այլև շափազանց խելոք մարդ էր: Նա արագ նամաչեց իր զբուցակցին, գնահատեց նրա սուր միտքը, կենդանի, արտահայտիչ խոսքը, հարցերին տված ղիլյուկ պատասխանները, նրա գինամիկ խոսնվածքը: Ավագ եղբորն սողած նամակներում Ժան-Անտուանը առանց ակնարկության նայտարարեց, որ նա խորապես սխալվում է իր որդուն բնութագրելու հարցում: Մղբորորդու հետ ունեցած մի քանի գրուցներից հետո նա ավագ եղբորը գրում էր. «Եթե նա ավելի վատը

չլինի ներոնից, նա ավելի լավը կլինի, քան թե Մարկոս Ավրե-  
լիոսը, քանի որ ես երբեք չեմ հանդիպել այսպիսի ուժեղ խել-  
քի... Կամ սա կլինի տիեզերքի մեծագույն խարեբան, կամ Եվ-  
րոպայի ամենամեծ գործիչը, որն ընդունակ կլինի դառնալ  
Հոռմի պապ, մինիստր, ցամաքի կամ ծովի գեներալ, կանցլեր  
կամ հիանալի գյուղական տնտես»<sup>1</sup>:

Այդ բնութագրին չի կարելի չհամաձայնվել համենայն դեպս  
մի հիմնական՝ պատանի Միրաբոյի ձիրքի նշանակալիությունը  
և նրա ներքին հակասականությունն ընդունելու հարցում: Հոր-  
եզբայր և եղբորորդին արագ բարեկամացան: Օնորեն մինչև  
օրս ծնողական ուշադրության, բարության կարիք ուներ: 1770  
թվականի ամռանը նա տուաչին անգամ զգաց դրանք:

Շուտով դրան միացավ մեկ այլ բան ևս: Այդ ամառ Միրա-  
բոների զոչակ, իր հորեզբորը տեսության եկավ Լուիզան՝ Օնո-  
րեի կրտսեր քույրը, որը մոտ ժամանակներս, ամուսնությունից  
հետո, կրում էր մարկիզուհիի դեր Կարբի ազգանունը:

Երբտասարդ, գեղեցիկ, կենսախինդ Լուիզան այդ հին զրդ-  
յակի, որտեղ թվում է թե միայն տեսիլքներ են թափառում,  
թնդյունով արձագանքող լուսնյակներ խախտեց իր աշխույժ կա-  
նացի ձայնով, փափուկ ծիծաղով, կլավիկորդների շոյիչ հրն-  
չյուններով:

Եղբայր ու քույր չէին տեսնվել մոտ տասը տարի: Նրանք  
միմյանց պատմելու շատ բան ունեին, ամեն մեկը շտապում  
էր կատարվածի մասին պատմելով թեթևացնել հոգին: Նրանց  
միավորում էին ոչ միայն մանկական տարիների հիշողություն-  
ները, այլև ընտանիքում հոր դերի մասին կարծիքների ընդհան-  
րությունը: Լուիզան Լոռորը պատմեց, թե հայրը որքան դաժան  
վարվեց իր սեփական ազջկա հետ, որին նա երբեք չէր կա-  
րող մեղադրել այն բանում, որ նա նման է իրեն առելի վաստա-  
ների տոհմին: Նա Լուիզային կնություն տվեց մարկիզ դը Կար-  
բիին, շնորհակցելով ոչ նրա համաձայնությունը, ոչ էլ նույնիսկ  
կարծիքը, մինչև հարսանիքը նրան ցույց չտալով փեսային, դե-  
կավարվելով իրեն միայն հայտնի հաշիվներով: Պարզվեց, որ  
նրա ամուսինը քսան տարեկանում կիսախելագար էր, կենսա-  
զուրկ. նա կնոջ մեջ սարսափ ու զզվանք էր հարուցում:

Եղբայրը շտապեց քրոջը պատմել այն մասին, թե որքան  
դաժան, որքան անողոր էր հայրն իր ավագ որդու, Միրաբո-  
ների կալվածքի ժառանգի նկատմամբ: Լուիզան շերմորեն կա-

րեկցում էր նրան, նրանց հայացքները հիմնականում համընկ-  
նում էին՝ դա մինչև վերջ շարտահայտված, բայց փոխադարձ-  
րեն համաձայնեցված օպոդիցիա էր հոր տիրակալական դե-  
պոտիզմի դեմ: Մնում էր ևս մեկ ուրիշ, նույնքան դժվարին  
բնտանեկան թեմա՝ վերաբերմունքը մոր նկատմամբ, հոր զրծ-  
տությունը նրա հետ, նրանց բաժանումը: Եղբոր ու քրոջ այդ  
աշխույժ, անբնագրոսիկ գրույցները թեթևացնում էին յուրա-  
բանչյուրի հոգին: Նրանք դարձան բարեկամներ: Նրանց մշտա-  
պես տեսնում էին աշխույժ գրույցի բռնված կալվածքի հսկա-  
յական զբոսայգում, այն շրջապատող դաշտերում, երբեմն հոր-  
եզբոր և նրա շների հետ միասին:

1770 թվականի երջանիկ ամառը մոտենում էր ավարտին:  
Այն ընդհատվեց օգոստոսի վերջին օրերին, երբ ծեր մարկիզ  
դը Միրաբոն շտապ նամակով ավագ որդուն կանչեց իր մոտ:

## V

«Մարդկանց բարեկամը» Օնորե Գարբիելին հրավիրում էր  
առաջնորդվելով ոչ թե բարեկամության զգացումներով ուղղակի  
հարազատությունը ամենամտերիմ մարդու հանդեպ, այլ միան-  
գամայն այլ, առավել պրոզայիկ դրդապատճառներով: Նրան  
հարկավոր էր ավագ որդու աշակցությունը, դեռ ավելին, նրա  
օգնությունը:

Պիեր-Բյուֆիեր զոչակում մահացավ (մարկիզը քիչ էր մնում  
ասեր՝ «վերջապես») մոր կողմից Օնորեի տատը՝ բարոնուհի դը  
Վասսանը: Լիմուզենում գտնվող հսկայական «կալվածքները»  
մարկիզ դը Միրաբոյի տենչանքը, այժմ պետք է անցնեին ժա-  
ռանգներին: Կտակն այնքան անորոշ էր, որ ամենատարբեր  
մեկնաբանությունների առիթ էր տալիս: Դժվար չէր նկատել, որ  
տեից վոնդված մարկիզուհի Միրաբոյի տեսակետը հօգուտ մար-  
կիզի չի լինի: Մարիա-Ժենեվկան լավատեղյակ էր այն մասին,  
թե ինչ էր կատարվում Բիսյոն զոչակում, որտեղ մարկիզը  
ստանց քաշվելու պահում էր իր մետրեններին, և որտեղ վեր-  
ջին տարիներին լիիրավ իշխում էր նրա սիրուհին՝ խորամանկ  
սիկին դը Պեյին և որտեղ մարկիզուհու օրինական ամուսինը  
իրեն այնքան ազատ էր պահում, կարծես թե Մարիա-Ժենեվկան  
վաղուց արդեն հանգչելիս լիներ հողում:

Մարկիզուհի դը Միրաբոն ուժեղ բնավորութեան տեր կին էր: Կրտսեր եղբայրը՝ բայի Միրաբոն, որ լավ գիտեր և չէր սիրում իր հարսին, 1780 թվականի փետրվարի 7-ի թվակիր նամակում նրա մասին գրում էր. «Դա մի կին է, որի մեջ վերին աստիճանի մարմնավորված են ինչպես իգական, այնպես էլ արական սեռի բոլոր արատները»:

Ժառանգությունը բաժանելու մասին բանակցություններ էլքը, բանակցություններ, որոնք պետք է անցկացվեին ընտանեկան նեղ շրջանակներում և ենթակա չէին հրապարակման, շատ բաներում որոշվում էր ավագ որդու գիրքորոշմամբ: Խճճված և բարդ այն իրադրության մեջ, որում գտնվում էին ամուսինները, երկրի օրենքներով ու սովորույթներով ամենամեծի ժառանգորդը, բնականաբար, ավագ որդին էր: Բանակցությունների էլքը, ըստ էության, կախված էր այն բանից, թե նա ում կողմը կանցնի՝ հոր, թե մոր:

Հայրը որդու հետ գրուցում էր զուսպ, բարեհաճ տոնով: Ըստ երևույթին, նա չէր ուզում ստեղծել տպավորություն, թե հաճոյանում է որդուն: Բայց, միգուցե, դատավոր Միրաբոն՝ նրա ավագ եղբայրը, իսկապես իրավացի էր Օնորե Միրաբոնյի տված իր բարձր գնահատականի մեջ: Երկու կողմերն էլ անցյալի մասին ոչ մի խոսք չսասցին: Հայրը խնդրեց որդուն աշակցել իրեն, Օնորե-Գարրիելը իսկույնեւթ համաձայնվեց:

Եվ ահա ամբողջ ընտանիքը հավաքվում է Պիեր-Յուֆիեր դոլյակի դահլիճներից մեկում, մեծ սեղանի շուրջ: Օնորեն հետաքրքրությամբ էր զննում դոլյակը, որի անունը նա պետք է մի քանի տարի կրեր որպես սեփականը: Ոչինչ, Պիեր-Յուֆիերը հրաշալի դոլյակ է: Բայց նա, այնուամենայնիվ, գերազասում է հարազատ Պրովանսում գտնվող Միրաբոնների դոլյակի հնարույր, մամուապատ քարերը:

Ինչպես և կանխատեսում էր մարկիզ դը Միրաբոն, հարցի առաջին իսկ քննարկումը, նույնիսկ արտահայտությունների դիտավորյալ զսպվածությամբ ու զգուշությամբ հանդերձ, իսկույն գրսևորեց ամուսինների դիրքերի անհաշտությունը: Նրանց հարազատացնում էր լոկ մի ընդհանուր զգացում՝ ատելությունը անհաղթահալի փոխադարձ ատելությունը, որը չէին կարող թաքցնել ո՛չ հարգալից խոսքերը, ո՛չ էլ այլ կողմ թեքած հայացքները:

Օնորե-Գարրիելը, ինչպես և խոստացել էր հորը, հանդես եկավ նրա կողմից:

Ընտանեկան առաջին քննարկումը զործնական արդյունքներ չտվեց: Բանակցությունները պետք է շարունակվեին:

Որոշ ժամանակ անց մարկիզուհի դը Միրաբոն իր աշխատասենյակ հրավիրեց ավագ որդուն:

Օնորեն իր մորը չէր տեսել մոտ տասը տարի, և նա ապշած էր մնացել այն բանից, թե ինչպիսի անուղղելի ավերածություններ է կատարել ժամանակը: Նրա առջև ելավ մի փոքրիկ ծեր կին՝ ասես շորացած, թուլակազմ մարմնով, երկար կնճռապատ մատներով՝ կախարդի ձեռքերով ու փոս ընկած այտերով, անատամ, խորն ընկած բերանով, սև, մանրագույն կնճիռների ցանցով, աչքատակի փոսով, և այդ սարսափելի, իր այլանդակությամբ ահաբեկող դեմքի վրա՝ ինչ որ տարօրինակ սպիտակ փայլով լուսավորված աչքերով:

Ըստ երևույթին, նրա դեմքի վրա արտացոլվեց սարսափի զգացում. նա չկարողացավ թաքցնել այն. մայրը նկատեց այդ, և շրթունքների անկյունները ցնցվեցին:

— Ուրեմն դու հորդ հետ իմ դե՛մ ես, — խոպոտած ձայնով հարցրեց նա, և նրա աչքերի սպիտակ փայլը է՛լ ավելի նկատելի դարձավ:

Նա ինչ-որ բան շարժեց իր վտիտ ձեռքերով, որոնք չէին երևում սեղանի եզրի հետևում:

Օնորեն սկսեց մանրամասնորեն բացատրել, աշխատելով լինել մեղմ և պահպանելով բարեկամական տոնը: Ինքը չի կարող դեմ լինել իր մորը, բայց կարո՞ղ է հանդես գալ և հոր դեմ: Պետք չէ ինչ-որ բանի համար գծովել, այդքան էլ դժվար չէ գտնել այնպիսի լուծում, որը հարմար լինի բոլորին:

Մայրը նրան լսում էր անուշադիր, նրան, ըստ երևույթին, ինչ-որ այլ բան էր զբաղեցնում: Որդին նորից սկսեց բացատրել, թե ինչու իր՝ հարգարժան որդու կարծիքով, պետք է բոլորի համար ընդունելի համաձայնություն գտնել: Նա խոսում էր, աշխատելով չնայել մորը, որպեսզի իր դեմքի վրա նորից չարտացույլի այդ կնոջ ներշնչած սարսափը:

Բայց եբբ նա բարձրացրեց գլուխը և հայացք գցեց մոր վրա, տեսավ բոլորովին մոտ, իր դիմաց, դեպի իրեն ուղղված ատրճանակի փողը:

Դա այնքան անսպասելի էր, այնքան անհավանական, որ նա բարձրաձայն ծիծաղեց:

— Կեք, ինչի՞ համար է դա: Չէ որ դուք շեք համարձակվի կրակել ձեր որդու վրա:

Ի պատասխան որոտաց կրակոցը: Մայրը համարձակվեց: Գնդակը մի փոքր քսվեց մազերին: Ըստ երևույթին, այդ ծերունական ձեռքը դողում էր կամ շափեց դուրս թույլ էր՝ ատրճանակը պահանջվող մակարդակի վրա պահելու համար: Բայց նա նշան էր բռնել ուղիղ նրա ճակատին: Մայրն ուզում էր փշուրփշուր անել նրա գանգը:

Նա սևեռուն նայեց մորը: Վերջինիս աչքերը բոլորովին սպիտակ էին, սպիտակ՝ ատելությունից:

Որդին դանդաղ բարձրացավ, շարտասանելով ոչ մի բառ, և նույնպես դանդաղ, հետ շնայելով, դուրս եկավ սենյակից: Թող նորից լիցքավորի ատրճանակը կամ կրակի մեկ ուրիշից, երևի ներքևում, սեղանի եզրի տակ, մի ամբողջ տասնյակ ատրճանակ կա, թող կրակի իր թիկունքին: Թող ինչ ուզում է անի, նա հետ չի նայի: Նրա համար միևնույն էր:

Բայց մայրը չկրակեց:

Նա նույն դանդաղ ձևով սանդուղքներով իջավ այգի, քայլեց արահետներով, հետո նստեց սավերոտ, սազարթով պաշտպանված նստարանին:

Է՛հ, այս սոսկալի աշխարհը: Մոսկալի աշխարհ, որտեղ մայրը նշան է բռնում որդու ճակատին, աշխատելով ջարդուփշուր անել նրա գլուխը, որտեղ հայրը, ոչ մի բանի մասին չհարցնելով, որդուն կալանավորում է ամբողջ-բանտում:

Նա ձեռքով շոշափեց գլուխը, մատները տարավ մազերի վրայով: Ձեռքերի վրա մնաց այրվածքի թեթև, հազիվ զգացվող հոտը:

Նա բոլորում էր քսաներկուերորդ տարին: Ի՞նչ պատրանքների մասին կարող էր խոսք լինել: Ա՛յ թե ինչպիսին է այս Պիեր-Բյուֆիեր դոլակը, որի անունը նա երկար ժամանակ կրել է:

## VI

Օնորե-Գաբրիելը կատարվածից հետո Պիեր-Բյուֆիեր դոլակում մնալ չէր ուզում: Նրա հայրը նույնպես հասկացավ, որ ապրել նույն տանը նրա հետ, ով կրում է մարկիզուհի դը Մի-

րաբո անունը, բայց մնում է իր ամենաանհաշտ թշնամին, հնարավոր չէ: Հոժարակամ համաձայնությունը, իսկ դա միանգամայն ակնհայտ դարձավ մի քանի օրվա ընթացքում, բացառվում էր: Մարկիզ դը Միրաբոն երկարատև, իր ամբողջ հոգեկան ուժերը կլանող և վերջիվերջո իրենց պայքարը շլատող դատավեճի մեջ էր ներքաշվում իր կնոջ հետ:

Բայց այն ժամանակ նա դեռ չգիտեր այդ դատավեճի կլթը, բոլոր Միրաբոններին հատուկ ինքնավստահություններ լի էր լավատեսական հույսերով և, որպեսզի «ծանր մտքերից ազատվի», որդուն առաջարկեց գնալ Վերսալ:

Մարկիզ դը Միրաբոն, իսկ դա նրան պատիվ էր բերում, Լյուդովիկոս XV-ի արքունիքին վերաբերվում էր անսքող դատապարտումով և նույնիսկ արգահատանքով: Կինեյով հին ազնվական ընտանիքի ավագը, Պրովանսի առաջին սենյորը, նա իրեն զգում էր (իր բոլոր լիբերալ հայացքներով հանդերձ) որոշ իմաստով մի ինչ-որ փոքր, իհարկե, բայց լիովին ինքնուրույն պետության ղեկավար: Մարկիզ դը Միրաբոն բազմիցս կրկնում էր իր լսել հնարած խոսքը. «Նա չի ստորանա այն աստիճան, որպեսզի «վերսալացվի» («s'en versailer»),— և այդ բանը խորհուրդ չէր տալիս իր անդրանիկ որդուն: Բայց թագավորը մնում է թագավոր, արքունիքը մնում է արքունիք, և Միրաբոնները չեն կարող հաշվի շտանել նրանց:

Օնորե-Գաբրիելը, ինչպես սահմանված է, ուրիշ բարձրաշխարհիկ երիտասարդների՝ կավալերների հետ միասին ներկայացվեց Լյուդովիկոս XV-ին: Դրանք նրա երկարատև թագավորության, նրա կյանքի վերջին տարիներն էին, կյանք, որն իզուր վատնվել էր խրախճանքներում, գիշերային գինաբուքներում, լիովին ամայացնելով նրան: Նա վաթսուներից մի փոքր անց էր, բայց թվում էր խոր ծերունի՝ ուժասպառ հիվանդություններից և կյանքի նկատմամբ ճաշակը կորցրած: Նա գունաթափ, ամայի աչքերի հոգնած, անտարբեր հայացքը սահեցրեց երիտասարդ կավալերների վրայով և ողջույնի որևէ խոսք ասելու նեղություն անգամ չպատճառեց իրեն:

Միրաբոն հուզված, նույնիսկ վիրավորված էր միապետի այդ անտարբեր քամահրանքից, բայց ավելի ուշ, ըստ երևույթին, հասկացավ այն ամենն, ինչ կատարվում էր Վերսալում:

Նրա վաղեմի մտերիմը, երիտասարդ դուքս Լոզենը նրան մտքեց բարձր հասարակության՝ թագավորի պալատական մի-

չափաչարը Այն ժամանակ Վերսալը բաժանված էր երկու մըր-  
ցակցող մեծ կուսակցութիւններին: Այսօրվա օրով ապրող մար-  
դիկ աշխատում էին շահել թագավորի վերջին, ամենագոր Ֆա-  
վորիտունու՝ կոմսուհի ժաննա Դյուբարիի բարեհաճութիւնը, հո-  
վանավորութիւնը կամ, ավելի լավ է, համակրանքը: Այդ գորավոր  
տիկինը՝ վաղ պատանեկութիւն շրջանում ժաննա Քեկլուն,  
պանդոկային պոռնիկը, որը հանգամանքների երջանիկ զուգա-  
գիպութիւն շնորհիվ նկատվել էր թագավորի կողմից, իսկ հետո  
էլ դարձել նրա մտերիմը և պատշաճութիւն համար կեղծ կնու-  
թիւն տրվել կիսախելագար կոմս Դյուբարիին, աստիճանա-  
բար հսկայական ազդեցութիւն ձեռք բերեց միապետի վրա:  
Լինելով գրավիչ, կանացի, բնութիւնից օժտված գործնական  
խելքով ու հնարամտութիւնով, որոնք փոխարինում էին կրթու-  
թիւնը, նա, այն ժամանակից ի վեր, երբ սկսեց պաշտոնապես  
անվանվել կոմսուհի Դյուբարի, արագ հարմարվեց իր համար  
միանգամայն նոր իրադրութիւնը և իր համար նոր գերին:

Անսխալ, գրեթէ կատվային բնազդը նրան առավել հարմար  
գործողութիւններ էր հուշում այդ անսովոր պայմաններում: Թա-  
գավորին վազուց պետք է որ խիստ ձանձրացրած լինելն Վեր-  
սալի հսկայական պալատի մեծ դահլիճները, հանդիսավոր տո-  
նականութիւնը, և կոմսուհի Դյուբարիի ցանկութիւնով նրա  
համար կառուցվեց ոչ մեծ, բնդամենը հինգ սենյակից բաղկա-  
ցած առանձնատուն՝ հարմարավետ, շքեղազարդ, խաղաղ, փա-  
փուկ գորգերով, հանգստի արամաչրոզ հարմար ու ներազեղ  
կահույքով, մեղմ լույսով: Առանձնատունը կառուցվեց ոչ շատ  
մոտ Վերսալի պալատին, որպեսզի ուշադրութիւն չգրավի և ոչ  
չափազանց հեռու, որպեսզի այնտեղ գնալը հոգնեցուցիչ չլինի:

Թագավորին հաճելի էր այստեղ գալը. պալատի պաշտո-  
նական վազվզոցի ստուր տոնական հանդիսավորութիւնից հետո  
այստեղ խաղաղ էր, հարմարավետ, ամեն ինչ թվում էր ման-  
րագեղ, փափուկ, հանգստավետ. թագավորը փնտրում էր ան-  
գորրութիւն և ինքնամոռացում:

Երբեմն այս ջահել, կյանքով լի, նախկին արհեստի հետ  
կապված շարժումների մեջ պարզամիտ-կոպտալուն, բայց խոն-  
ջացած թագավորին անսահմանորեն նվիրված կիներ (օրբստօրե  
թագավորն ավելի ու ավելի շատ էր մտերմանում նրա հետ)  
հարմարավետ ճաշասենյակում հավաքում էր ոչ բազ-  
մամարդ մի հասարակութիւն՝ պետական գործերի համար

կարևոր մի քանի բարձրաստիճան պաշտոնյաների: Ճաշին ար-  
նաժոր, բայց միշտ զարմանալիորեն փափուկ միսը և Պրովանսի  
յուղով պատրաստված սալաթը ճաշակելու արանքում կարճա-  
ռոտ, երկու-երեք նախադասութիւնով նախապես հանվում էին  
կարևորագոյն պետական որոշումներ. պահիրը ճաշակելիս  
գործերի մասին խոսել արդեն չէր թույլատրվում. տիկին Դյու-  
բարին վարդագոյն մատիկը հպում էր բերանին, և բոլորը  
հասկանում էին՝ այժմ պետք էր խոսել ինչ-որ բոլորովին այլ,  
թագավորին հաճելի բաների, օրինակ, ավստրիական կայսրուհի  
Մարիա-Թերեզայի ֆինանսական դժվարութիւնների կամ իս-  
պանական թագավորի բնտանեկան գծութիւնների մասին:

Էյուզոփիկոս XV-ին դա զվարճացնում և ուրախացնում էր.  
նա ձեռքի ափը դնում էր ականջին և բարձրաձայն նորից հարց-  
նում:

— Ի՞նչ, ի՞նչ: Ուրեմն կայսրուհին քի՞չ փող ունի: Ի՞նչ, գան-  
ձատունը դատա՞րկ է:

Կոմսուհի Դյուբարին իր թարմ, փոքր ինչ խոնավ շուրթերը  
հպում էր նրա ականջին և քաջատեղյակ մարդու համոզվեք ձայ-  
նով հաստատում.

— Նա պարզապես մտրացիկ է: Ոչ ոք հարկ չի վճարում:  
Հայտնի չէ, միգուց նա նույնիսկ ստիպված լինի վաճառել Շեն-  
բրունի պալատը...

Խիստ գոհ մնացած թագավորը ծիծաղում էր,— միայն իր  
գանձատունը չէ որ դատարկ էր,— և, փոքրիկ կոմերով խմե-  
լով սուրճը, բավականութիւնով կրկնում էր.

— Վաճառելու է Շենբրունը: Հա՛-հա-հա: Ա՛խ, ուրեմն, նրա  
համար էլ ծանր ժամանակներ են: Հա՛-հա-հա:

Հետո բոլորը խոնարհաբար հրածեղա էին տալիս: Ոչ ոքի  
չէր թույլատրվում երկար նստել:

Խոնջացած թագավորը (այնուամենայնիվ նա հասցնում էր  
լուծել մի քանի կարևոր պետական գործեր) հեռանում էր իր  
աշխատասենյակը: Այնտեղ նրան սպասում էր հարմար հան-  
գրատավետ ցածրադիր օթոցը. նա արձակում է բաճկոնի կո-  
ճակները, հարմար տեղավորվում և աննկատելիորեն հետճաշյա  
հաճելի նիրհի մեջ բնկնում:

Կոմսուհի Դյուբարին աստիճանաբար, առանց ձանձրացնե-  
լու թագավորին համոզում էր, որ նա հոգնել է պետական հոգ-  
սերից, որ նա շափից ավելին է վերցրել իր ուսերի վրա, որ

այժմ պետք է ավելի զգուշ լինել՝ նրա ահագին գիտելիքները, երկարամյա փորձը անհրաժեշտ են թագավորութեանը, ուստի և հարկավոր է ուժերն օգտագործել խնայողաբար, չափից ավելի նեղութեան շտապով իրեն, պահպանելով սեփական անձը գալիք տարիների համար:

Եվ իսկապես թագավորին սկսեց թվալ, որ ինքը շատ ուժեղ է նվիրաբերել պետական գործերին. կատակ բան չէ, ինքն արդեն թագավորում է գրեթե կես դար, բոլոր պետական հոգսերը, դժվարությունները, շարշարանքները՝ բոլորը միայն իր վրա է ընկած: Այժմ նա երբեք չէր հիշում նախկին խրախճանքների, գիշերային շվայտությունների մասին, որոնք քայքայեցին նրա առողջությունը: Նա երբեք չէր հիշում տիկին Շատորուի, մարկիզուհի դը Պոմպադուրի մասին: Իսկ եթե այնուամենայնիվ նրա հիշողության մեջ հայտնվում էին ինչ որ կանայք, ապա միայն ջղայնություն էին պատճառում, որովհետև նրանք խանգարում էին պետական գործերին, չէին թեթևացնում նրա միապետ-ինքնակալի ծանր հոգնեցուցիչ աշխատանքը:

Թագավորն այդ փոքրիկ Ռյուբարիին ավելի ու ավելի էր կապվում այն պատճառով, որ նա կարողանում էր հասկանալ, թե ինչպես է ինքը հոգնել պետական գործերից: Նա հասկացավ, որ թագավորը նույնպես մարդ է, որին պետք են հանգիստ, անդորր, լուսություն. Ռյուբարին ազատում էր նրան դժվարությունների պատճառող և, հազիվ թե անհրաժեշտ, տհաճ պարտականություններից:

Այսպես աստիճանաբար, աննկատելի, այնպես, ինչպես եթե դա կատարվեր ինքնին հակառակ իր կամքին ու ցանկություններին, տիկին Ռյուբարին իր ձեռքը վերցրեց թագավորության կառավարման թելերը: Սկզբում նրա համար դժվար էր կողմնորոշվել այդ բարդ ու վատ կարգավորված պետական մեխանիզմից, առավել ևս որ ազդեցիկ բարձրաստիճան պաշտոնյաներից յուրաքանչյուրն իր կողմն էր քաշում (այդ բանը Ռյուբարին բավական շուտ հասկացավ), բայց նրա օգնականը, սիրեցյալն ու մտերիմն էր դուքս Էգիշոնը: Նա բոլոր հարցերի շուրջ ուներ որոշակի դատողություններ, և սկզբնական շրջանում տիկին Ռյուբարին լսում էր նրա խորհուրդները: Հետո նա իր շուրջը տեսավ բազմաթիվ երիտասարդների (և ոչ միայն երիտասարդների), որոնք պատրաստ էին հաճույանալ և ծառայություն մատուցել, բոլորը խոնարհաբար իրենց ծառայություններն էին առա-

ջարկում՝ ինչպիսին էլ որ լինի: Առաջ տղամարդիկ էին նրան ընտրում, այժմ նա ինքն սկսեց ընտրել նրանց, ովքեր ավելի շատ էին հարմար իրեն. նա արագ գլխի ընկավ, որ այնքան էլ դժվար չէ մեկին փոխարինել մյուսով, շատ ավելի համապատասխան անձով, և, ուշադրության ու հարգանքի բոլոր անհրաժեշտ նշանները ցուցաբերելով թագավորի նկատմամբ, հոգալով նրա հանգստի, նրա առողջության մասին, փաստորեն դարձավ թագավորության ճակատագրի տնօրինողը:

Այդ «թագավորի կուսակցությունը», կամ «Ռյուբարիի կուսակցությունը»՝ Վերսալի բարձր հասարակության մեծ մասը, փաստորեն կառավարող կուսակցություն էր: Այսօր նրան էր պատկանում իշխանությունը թագավորությունում, և երիտասարդ ազնվականները, առաջ գնալու հույսեր փայփայող պետական բարձր պաշտոնյաներն ու շինովնիկները, արկածներ բռնողները, ձեռներեց գործամուխները, գրականության մեջ աչքի ընկնելու ապացույցներ փնտրողները՝ մի խոսքով արքունիքը շրջապատող ամբողջ հասարակության այս խառնաբեղ, տարատեսակ մասն էր կազմում ամենազոր կոմսուհի Ռյուբարիի շախմատը, որը շտապում էր թագավորական իշխանությունից ստանալ «ամեն ինչ և միանգամից»:

Այս կառավարող կուսակցությանը, «այսօրվա կուսակցությանը» հակադրվում էր «վաղվա օրվա կուսակցությունը»՝ մարդիկ, որոնք կազմում էին «փոքր արքունիքի» դոֆինի՝ ապագա թագավոր Լյուդովիկոս XVI-ի և նրա կնոջ՝ Մարիա-Անտուանետի շրջապատը: Քանակապես այն փոքր էր առաջին կուսակցությունից և քաղաքականապես ավելի պակաս ազդեցիկ: Բայց «փոքր արքունիքը» միայն ավելի երիտասարդ չէր. նա ավելի շատ հայտնի էր իր պերճաշքությամբ, նրբագեղությամբ, ավելի արդիականությամբ: Նրան համարում էին, միգուցե նույնիսկ սոսնց դրա համար պատշաճ հիմքերի, առավել լիբերալ, առաջադիմական: Այստեղ մոդայիկ էին ոչ միայն նորագույն պալերը, բռնեց աննկուն սիրահարներից էր Մարիա-Անտուանետը, այլև գրական երեկոները, հանդիպումները երիտասարդ, հանրաճանաչ փիլիսոփաների և գրողների, էլ ավելի հաճախ երաժիշտների հետ. Մարիա-Անտուանետը սիրում էր երաժշտությունը և համարվում էր նրա խոստապահանջ գնահատողը: Այստեղ թույլատրելի էին, իհարկե, չափավոր, քողարկված, բայց բավականաչափ հասկանալի քննադատական գիտողություններ

«մեծ արքունիքի» գլխավոր գործող անձանց մասին՝ ընդհանուր, փոքր-ինչ վերացական ձևով: Ընդունելի էր համարվում որոշ բարենորոգումների օգուտը և նույնիսկ անհրաժեշտությունը: Մի խոսքով, «փոքր արքունիքի», «Մարիա-Անտուանետի կուսակցությունը» ապագա Ֆրանսիայի կուսակցության համբավ ուներ:

Այս մրցակցող խմբավորումներից դուրս ու լիովին անկախ նրանցից և նրանց նկատմամբ նույնիսկ անսքող քամահրանքի վերաբերմունքով արքունիքում նկատելի դեր էր խաղում «ոսկի երիտասարդություն» ամբարտավան խումբը, որը գլխավորում էին թագավորական արյունակցական կապիտոլոնացող արքայազներ՝ կոմս դ'Արտուան, արքայազն Կոնտին և թագավորական տան մյուս կրտսեր զարմիկները:

Նրանք իրենց կոչումը տեսնում էին այն բանում, որպեսզի պահպանեն կամ նույնիսկ բազմապատկեն վերջին Բուրբոնների, հատկապես Լյուդովիկոս XV-ի համար արդեն ավանդական դարձած կյանքը վատնելու հատուկ ձիրքը: «Ոսկի երիտասարդությունը» ժամանակի հաշիվը արագացնում էր խրախճանքներում ու գինարուքներում, անառակության մեջ, այն բոլոր արատներում, որոնց մեջ այնքան հնարամիտ էր XVIII դարի բարձր հասարակությունը:

Կոմս Օնորե դը Միրաբոն հետաքրքրությամբ էր դիտում Վերալի բարձր հասարակության՝ հեռվից այնքան էֆեկտիվ թվացող և մոտ տարածությունից այնքան վանող փայլը: Տիկնայք, ինչպես դա սովորաբար լինում էր, նրան բարեհաճ էին վերաբերվում: Բայց այդ ամբարտավան, մեծամիտ երիտասարդ երեւելիները փորձում էին նրան նայել վերից վար և, եթե դա նրանց հաջողվեր՝ արհամարհանքով վերաբերվել որպես թշվառականի: Միրաբոն իրեն պահում էր ինչպես հավասարը հավասարների հետ և կարողանում էր նրանց տեղը դնել: Անպատկառ, հանդուգն արքայազն դը Կոնտին՝ զրգոված Միրաբոնի անկախ վարքից, մոտեցավ նրան և բոլորի ներկայությամբ մարտական տեսքով հարցրեց:

— Իսկ ի՞նչ կանես դու, եթե քեզ ապտակեն:

Լայնաթիկունք, ծանրաքաշ, դեռաքար փշրելու ընդունակ հզոր բուռնցքներ ունեցող Միրաբոն հայացքով շափեց իր համեմատությամբ թուլակազմ դը Կոնտինի մարմինը: Բայց նա

իրեն զսպեց և, երկար շնտածելով, սառն ու հանգիստ պատասխանեց.

— Այդ հարցը կարող էր դժվարին լինել միայն մինչև ատորճանակի գյուտը և երկու կրակոցների փոխանակումը:

Դը Կոնտին, ոչինչ չասելով, փութով հեռացավ Միրաբոնից: Նա հասկացավ՝ ավելի լավ է սրա հետ գործ շունենալ:

Վերսալում երեք ամիս գտնվելը Օնորե-Գաբրիելի համար առավել քան բավական էր: Շքեղազարդ տիկնանց, կարմիր լարձրակրունկ տոնական կոշիկների, սնապարծ շեվալիենների, սլալատական բարձր ծառայություն կրող ծանրաբարո բարձրաստիճան պաշտոնյաների, դեմքի անթափանց արտահայտությամբ բարձրաստիճան կաթոլիկ հոգևորականների այդ պայծառ, բազմազույն աշխարհը, երկարատև հոգնեցուցիչ հանդիսավոր արարողությունների, պարտագիր ժամերգությունների, երեկոյան երաժշտական ներկայացումների, ախուր, գրեթե հարկադրական դիմակահանդեսների աշխարհը, հարթ, անտարբեր շափոնների, քնքշալի բառերի հեռևում թաքնված բանասարկությունների, քաղաքիկած խարդավանքների, մրցակցող ազդեցությունների պայքարի աշխարհը, պալատական կարուսելի այդ գունազարդված անդադար պտույտը նրա համար անտանելի էին դարձել: Նա դրանցով հագեցած էր. նա փախչում էր այդ զգվանք հարուցող, հեռվից այնքան գայթակղիչ, իր փայլով կուրացնող վերսալյան աշխարհից:

Բացի այդ էլ արքունիքում ապրելու համար շատ փող էր պահանջվում: Մարկիզ դը Միրաբոնին դուր էր գալիս թագավորական պալատում իր ավագ որդու գրաված անկախ դիրքը, բայց ֆիզիոկրատների պարոցի տեսաբանը տարեցտարի ավելի ու ավելի ժլատ էր դառնում:

Օնորե-Գաբրիելին, որը տառապում էր երիտասարդ երեկելի ազնվականի համար անտանելի տրատով՝ միջոցների սղուլլյամբ, շրջապատի մարդկանց վաղուց հայտնի միայն մի էջ էր մնում՝ ձեռնտու ամուսնություն:

Որոշ ժամանակից սկսած նա ավելի ու ավելի հաճախ էր այցելում Պրուվանսի ամենահարմար հարսնացուներից մեկի՝ էմիլի դը Մարինիանի տունը: Օրփորդ դը Մարինիանը կրթված էր, խելացի, ալրուսատես. նա հաճելի ձայն ուներ, մի քիչ երգում էր, մի քիչ նվագում:

Բայց Օնորե-Գաբրիելին այն ժամանակ էմիլիի անձնական արժանիքները չէին գրավում՝ երկու տարուց ավելի նա բոլորի կողմից հարգված տիկինը կիմե-Կորիոլիսի մտերիմ ընկերն էր. նա մեծ կալվածք ուներ Պրովանսում, ութ տարով մեծ էր իր սիրելիներից, ծաղկման վերջին շրջանն էր ապրում, և Միրաբոն շտապում էր այցելել տիկինը կիմե-Կորիոլիսի հարմարավետ տունը՝ մղված ոչ թե շահադիտական հաշիվներից, այլ հանուն նրա:

Օնորեի բաղմափորձ սիրեցյալին դժվար չէր հասկանալ, որ ժամանակն աշխատում է իր դեմ և որ շուտով առավել երիտասարդ հակառակորդունհին հետ կմղի իրեն: Օնորեին ավելի երկար պահելու ամենավստահելի միջոցը օրիորդը Մարինիանի հետ նրա ամուսնությունը նպաստելն էր. նա ենթադրում էր, որ հետագայում կկարողանա մրցակցիլ էմիլիի հետ:

Իր մետրեսայի դրդամբ Միրաբոն սկսեց եռանդով այցելել Մարինիանների տուն, բայց շուտով համոզվեց, որ ուշացել է: Կամ այն է ի սեր էմիլիի անձնական արժանիքների, կամ այն է ի սեր նրա ապագա հարստությունների, բայց էքսում գտնուվող զր Մարինիանի շքեղ առանձնատան լույսի վրա հավաքվեցին հարսնացուի ձեռքի ու սրտի րազմաթիվ հավակնորդները: Դրանցից մեկը, էքսի մագիստրատի ղեկավարի որդին՝ կավալեր դ'Ալբերտան, օգտվելով էմիլիի հոր հատուկ բարեհաճությունից, մյուսներից ավելի հաջողակ դուրս եկավ. հասարակական կարծիքը նրան անվանեց օրիորդ զր Մարինիանի պաշտոնական փեսացու:

Միրաբոն անձնատուր չեղավ: Այն մոլեգնությունը, ճնշման այն ուժը, որոնք նրան օգնում էին կյանքում հաղթահարել այդքան խոչընդոտներ, ապահովեցին նրա հաղթանակը հակառակորդի նկատմամբ: Դրագունների կապիտանը իր կողմը թեքեց էմիլիին, բայց մնում էր ևս մի դժվար հաղթահարելի արգելք՝ պարոն զր Մարինիանի աննկուն վճռականությունը աղջկան տալու իր ընտրած փեսացուին:

Հարկ չկա այստեղ պատմել իր ապագա աներոջ համակրանքը շահելու ուղղությամբ կոմս զր Միրաբոնի թափած հնարամիտ ջանքերի մասին: Բոլոր ջանքերն ապարդյուն անցան:

Այնժամ Միրաբոն, միգուցե նույնիսկ տիկին զր կիմե-Կորիոլիսի խորհրդով, որը նրա անտեսանելի դաստիարակն էր այդ

անսպասելի դժվար գործում, որոշեց դիմել ծայրահեղ միջոցներին:

Նա իր կառքը ամբողջ գիշեր, մինչև ուշ առավոտ, թողեց զր Մարինիանի տան շքամուտքի մոտ: էմիլին վարկարեկվեց, և նրա հորը ոչինչ չէր մնում, քան իր մեջ խեղդելով կատաղությունն ու գայլույթը, տալ համաձայնություն այդ ամուսնությանը, որն անհրաժեշտություն էր դարձել:

Ամուսնական պայմանագրի պայմանների վերաբերյալ բանակցություններն իր վրա վերցրեց մարկիզ զր Միրաբոն. այն ժամանակների սովորության համաձայն ավագ որդին իրավունքների լիակատարությունը ձեռք կրեբեր քսանհինգ տարեկան դասնալուց հետո միայն, հետևաբար, կրտսեր Միրաբոնին, որն այն ժամանակ զեռ չէր հասել չափահասության, հայրը լրիվ հեռացրեց ամենից առաջ հենց իրեն՝ Օնորեին վերաբերող հարցերի լուծումից:

Բանակցությունները դժվար էին: Նորապսակների ծնողները պարզարանումներ չպահանջող շարժառիթներով համակրանք չէին տաժում միմյանց նկատմամբ: Պարոն զր Մարինիանը հարկադրված էր, իր վրա ուժ գործադրելով, աղջկան բավականաչափ օժիտ տալ, իսկ ինչ վերաբերում է գլխավոր հարստություններին, ղեպի ինչը աղահորեն ձգվում էին Միրաբոն ավագի և կրտսերի ձեռքերը, ապա պարոն զր Մարինիանը ամենևին թեկուզ մեկ ակր հող տալու հակում չցուցաբերեց:

Մի խոսքով, կրկնվում էր այն իրադրությունը, որ ծեր մարկիզ զր Միրաբոնին քաջ ծանոթ էր Մարիա-Թենեվա զր Վասսանի հետ իր սեփական տխուր փորձից: Հսկայական հարստությունների միակ ժառանգորդունհին լինելը ինչ-որ բոլորովին այլ բան էր նշանակում, քան զրանց տիրակալունհին լինելը:

1772 թվականի հունիսի 23-ին էքսի Սուրբ հոգի եկեղեցում տեղի ունեցավ կոմս Օնորե զր Միրաբոնի և էմիլի զր Մարինիանի հանդիսավոր պսակադրությունը: Հարսանիքն ուրախ չէր և ոչ բերկրալից: Հարսնացուի հայրը չէր կարողանում իր ջղայնությունը թաքցնել այն բանի առթիվ, որ իրեն այդ ամուսնությունը հարկադրել էին հակառակ իր կամքի: Փեսացուի կողմից ոչ հայրը կար, ոչ մայրը՝ տարբեր շարժառիթներով նրանք շքանկացան մասնակցել արարողությանը: Միրաբոնի ընտանիքը ներկայացնում էր նրա բույրը՝ Լուիզա զր Կաբրին:

Եկեղեցական ծիսակատարությունների թերությունները Օնորեին

րե-Քարբիէին աշխատում էր փոխհատուցել հետհարանեկան հանդեսներով: Հայրը ավագ որդուն հանձնեց Միրաբոնների ընտանեկան դղյակը, հորեղբայրը՝ դատավոր Միրաբոն, տեղափոխվեց ընտանիքի մյուս դղյակը Թուրքում: Աշխատում էին նորապսակներին շխանգարել:

Բայց Օնորե-Քարբիէին ուզում էր Պրովանսին հիշեցնել, որ ինքը երկրամասի ամենաերեկելի ու հարուստ ընտանիքի ավագ որդին է, ապագա գլխավորը: Նա թարմացրեց ու վարդաբեց հին դղյակը, զլխավոր սենյակների ներքին պատերին քաշեց նոր վառ գործվածք, բացեց դեպի դղյակ տանող լայն ճանապարհներ, վարդերով ու ծաղիկներով պատեց դրանք:

Մի քանի շաբաթ շարունակ Միրաբոնի հին դղյակում ճոխ ընդունելություններ էին կատարվում: Երիտասարդ Միրաբոն հրավիրում էր երկրամասի գրեթե բոլոր բնակիչներին, հրավիրվածներից շատերը նույնիսկ ոչ իրեն էին ծանոթ, ոչ էլ դղյակի հին ծառաներին: Հստ երևույթին, նա ուզում էր բոլորին զարմացնել, շքեցնել՝ ահա թե ինչպես է իր հարսանիքը տոնում կոմս դը Միրաբոն: Զվարճացեք և ուրախացեք: Կոմս Միրաբոն ոչինչ չի խնայում իր հյուրերի համար: Նա գնեց կառքեր ձիերի հետ մասին, կահույք, զգեստներ, թանկարժեք իրեր էմիլիի համար. նա ուզում էր նրան ցնցել՝ ահա թե ինչքան հարուստ են Միրաբոնները: Նրանք փողը շին հաշվում. այստեղ ծախսերը ոչ ոքի չեն մտահոգում:

Բայց էմիլին, որ դաստիարակված էր բարեկեցության մեջ, էմիլին, որ դիտունակ էր, լրջմիտ՝ իր քսանամյա տարիքում, տարակուսանքով ուսերն էր թոթվում: Նրան հասկանալի չէին ոչ այդ անիմաստ շտապությունը, ոչ այդ գիշերաչին խրախճանքները աչնպիսի մարդկանց հետ, որոնց ամուսինը չի ճանաչում ատերես, նույնիսկ անունով, ոչ այս տարօրինակ, իրեն կասկածելի թվացող պարոնները, որոնք միմյանց հրելով շտապում էին ամուսնուն դրամ առաջարկել, պետք է ենթադրել, հսկայական տոկոսներով: Նրան դուր չէր գալիս այս տոնական թվացող դղյակն իր ծաղիկներով, որոնք այնպես շուտ են թառամում այստեղ, գեղեցիկ գործվածքներով ծածկված իր սառը, լպրծուն պատերով, որոնց անկյուններում խիտ սևավուն ոստայնն են գործում սարդերը, որտեղ գիշերը ատենաների ծվծվոց, ինչ-որ տարօրինակ խշշոցներ են լսվում: էմիլին վախենում էր մենակ քալել այդ անթիվ անհամար միջանցքներով ու հսկայական

ժանգաճար կողպեքներով փակված սենեկաշարքերով, որոնք, հավանաբար, արգեն հարյուր տարի ոչ ոք չէր բացել:

Այդ հին դղյակում նրան վախեցնում էր նույնիսկ սեփական ամուսինը: Էքսում նա այնպես բարեսիրտ, հասարակ, հասկանալի էր թվում: Այստեղ էմիլին չէր կարողանում հասկանալ նրան՝ Օնորեի գեմքը միշտ մտահոգ արտահայտություն ունի. աչքերն անհանգիստ են, նա միշտ վատ տրամադրության մեջ է, հուզված, և, նույնիսկ երբ նա քնքուշ խոսքեր է ասում էմիլիին, դրանք միայն արտաբուստ, առերևույթ են ուղղված նրան. նա բոլորովին այլ բաների մասին է մտածում:

Ո՛չ, կյանքը Միրաբոնի դղյակում՝ երիտասարդ, միմյանց սիրող ամուսինների անվրդով երջանկություն չէ: Արդյոք այդպե՞ս էր պատկերացնում ինքը՝ էմիլին մեղրամիսը տոնական կապույտ համազգեստ կրող դրագունների այդ ուրախ կապիտանի հետ:

Գեո մեկ տարի էլ չէր անցել, կրք անխոհեմ շտապությունը Օնորեին հասցրեց ֆինանսական կատարյալ անանկություն: Մեկ տարում նա հասցրեց, փողերը քամուն տալով, վատնել և՛ կնոջից որպես օժիտ ստացած խոշոր կարուլությունը, և՛ հոր տրամադրած միջոցները, և՛ վերջապես, Մարսելի վաշխառուներից ստացած բոլոր փողերը: Միրաբոնի անունը սուաչինն է Պրովանսում, եվ ո՞վ կհամարձակվի պարտք չտալ կոմս դը Միրաբոնին: Բայց դրա փոխարեն ի՞նչ տոկոսներ նա պետք է վճարեր՝ 100, 200, 300: Տոկոսները գնալով աճում էին, որքան որ պարտատերերի համար ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում երիտասարդ կոմսի՝ իր պարտքերը ժամանակին վճարելու անընդունակությունը: Երբ կնոջ ամբողջ օժիտը ծախսվեց խրախճանքների վրա և արվեց 120 հազար ֆրանկի պարտք, հին մարկիզը ռոտեց, որ կրկին հասել է իր միջամտության մամանակը:

1773 թվականի հոկտեմբերին նորապսակների քնտանիքում տեղի ունեցավ կարևոր իրադարձություն՝ ծնվեց որդի, փառահեղ անվան ժառանգորդը: Նրան շնորհեցին պապի անունը՝ Վիկտոր, և Օնորեին հույս ուներ, որ որդիական ակնածանքի այդ ակտով ինքը կվերագործնի հոր բարեհաճությունը:

Բայց «Մարդկանց բարեկամի» վրա դրանով չես ազդի՝ նա հայտնվեց ավագ որդու պարտքերը վճարելու անհրաժեշտության առաջ, որպեսզի քնտանիքի անունը չպատվազրկվի, և նա լի էր սյղ շտապությունը վերջ տալու վճառականությունը:

1773 թվականի զեկտեմբերին կոմս Միրաբոյնի իշխանությունները ներկայացնում են թագավորի նոր lettre de cachet. առայժմ այն դեռ ողորմած է՝ պետական հսկողության տակ գտնվող կոմսին արգելվում է թողնել տոհմական կալվածքը. հին մարկիզը հույս ունի, որ իր ավագ որդին չի կարողանա ճանապարհորդել Մարսել և վաշխառուների հետ կնքել նոր փոխառվական գործարքներ ստրկական պայմաններով:

Բայց որդուն անհնար է ընտելացնել հաշվենկատության, ծախսերը եկամուտներին համապատասխանեցնելու կարողության: Նա սիրում է, որ գրպաններում միշտ ծնգծնգա ոսկին: Նա ծառաներին հրամայում է այսուհետ պարտատերին ղղջակ շթողնել. եթե խոսքերը նպատակին չեն հասնում, նրանց հալածել շնորով: Նա գտնվում է թագավորական իշխանության հսկողության տակ, նա ազատ չէ տնօրինելու իրեն, թողնելու զրդյակը: Եթե պարտատերերը համբերություն չունեն, թող դիմեն մարկիզ զր Միրաբոյնի: Նրա ջղայնությունը հոր նկատմամբ ավելի ու ավելի էր աճում՝ մի մտածեք է՝ «Մարդկանց բարեկամը» չկամեցավ նույնիսկ նայել իր թոռան երեսին:

Հորը ահաճություն պատճառելու համար, իսկ որ զխաղձորն է՝ որպեսզի միշտ ծնգծնգա ոսկին, նա դռնում է մի հասարակ որոշում՝ Միրաբոյնի ղղջակում շատ կան հին թանկարժեք նկարներ, ընտանեկան շատ թանկարժեք իրեր:

Նա սկսեց սկզբում ղզուշորեն, հետո ավելի համարձակ ծախծիսել զրանք: Թանկարժեք մետաղի նկատմամբ զուտ ազնվականական քամահրանքով նա չէր խորանում հաշիվների մեջ, թե գինը որքանով է համապատասխանում արժեքին, միայն թե գրպանում զրնգա ոսկին:

Բայց Ֆրանսիայի առաջին տնտեսագետներից մեկը՝ մարկիզ զր Միրաբոն, չկամեցավ հաշտվել տնտեսական օրենքների նման ստնահարման հետ, որը բացի զրանից շոշափում էր նաև նրա բուն նյութական շահերը: Մարկիզն ուներ հավատարիմ մարդիկ, նրանք միշտ ժամանակին նրան էին տեղեկացնում հին ղղջակում կատարվող ամեն ինչի մասին: Պետք է վերջ գրվի ընտանիքի սնանկացմանը:

Եվ ահա մարկիզ զր Միրաբոն ավագ է լցնում այն նամակի վրա, որ նա գրել էր հեշտ և արագ մայրաքաղաք ուղարկելու համար. մարկիզը ազդեցիկ շրջաններում շատ բարեկամներ ուներ. քանի նա կենդանի է, կմնա Միրաբոնների տան բոլոր

տիրույթների ու սեփականության գլուխն ու կարգադրիչը: Օնորեն այլևս չի վաճառի ընտանեկան արժեքները:

Կոմս Օնորե-Գաբրիել զր Միրաբոյնի մնում էր միայն ենթարկվել թագավորական իշխանության կարգադրությանը: Համաձայն նոր կարգադրագրի, նա սխառ է կնոջ ու որդու հետ տեղափոխվելը Ալպերում կորած Մանտուկ փոքրիկ քաղաքը. նա մինչ այդ չէր չսել նրա մտին, բայց իշխանությունների կարգադրագրով նա պարտավոր է Մանտուկում ապրել մշտական:

1774 թվականի ապրիլից Օնորե-Գաբրիել զր Միրաբոն Մանտուկի բնակիչն է: Ի՞նչ ժամկետով է նա մեկուսացվել ընտներում կորած այդ անհայտ փոքրիկ քաղաքում: Նորից նրան ոչ ոք չհարցաքննեց, ոչ ոք ոչ մի բանում չմեղադրեց, ընդհանրապես ոչ ոք չհատարարվեց, բն ինչ է ուզում նա, ինչի է ձգտում, ինչին է համաձայն և ինչին՝ ոչ. նա՝ շտիահաս դարձած քանհինգամյա տղամարդը, ընտանիքի հայրը, գրագունների կապիտանը, կալվածքները՝ տերը, կոմս զր Միրաբոն, Ֆրանսիայի անվաղարմ վերեօթալի ամենահին և փառահեղ ընտանիքներից մեկի ավագ որդին, ապառա գլուխը:

Աստված իմ: Ի՞նչ է կատարվում այս երկրում: Եթե իր՝ կոմս զր Միրաբոյնի հետ են այդպես վարվում, ապա ի՞նչ բախտ է վիճակված հասարակ գյուղացուն, աղքատ քաղաքացուհիին, թագավորի ուզածը հպատակին երրորդ դասից:

Նա դարձյալ աղահորեն, բախտահանությամբ, հոգու գործակցությամբ վերսնթերցում է մեծ Ռուսոյի, Դիդրոյի, Վոլտերի մեղկացուցիչ տողերը:

Ո՛չ, բաժանելով կարծիքները, քիչ է կարող այս կրակով լիցուն «փիլիսոփաների կուսակցության» ստեղծագործությունները, մտքով գնալ նրանց շարքերում: Ինքզ պետք է գրես Պետք է մտախ մեջ մտնել, մերկացնել սուրբ, պետք է գրոհել հակասակորդներին:

## VII

Մանտուկում Միրաբոն, — վերջապե՛ս, — գործի է անցնում: Նա սրում է փետուրե մեծ գրիչները և հապճեպորեն գրում, հապճեպորեն այն պատճառով, որ զգացմունքներն առաջ են լինկում մտքերից: Նա այնքա՛ն անհամբեր է շտապով թղթին հանձնելու իր ողջ գայությունը, երկար տարիների ընթացքում

կուտակված դժգոհությունը, իր ողջ վիրավորանքը, վրդովմունքը, կատաղությունը, որ ի վիճակի չէ այդ փոթորկվող զգացմունքներին տալ պատշաճ, տրամաբանական, խստիվ գրական կանոններին ենթակա ձև:

Բուրբից շուտ գալիս է անունը. այն պարզ է ու որոշակի՝ «Փորձ բռնակալության մասին»: Այս անվան մեջ չկա ավելորդ, անպատեճ զգացմունքայնություն և միանգամայն ճիշտ է նշված հակառակորդը: Բռնակալություն՝ ահա թշնամին: Ահա զլխավոր հակառակորդը, որի վրա տեղը է նշանառու կրակ վարել:

Այդ նույն 1774 թվականին Լոնդոնում անցյերեն լեզվով լույս տեսավ մի գիրք, որի հեղինակը հայտնի պատճառներով կամեցի էր անհայտ մնալ: Բայց, չնայած անգլերեն հրատարակությանը և հեղինակի ուղղակի նշումներին այն մասին, որ երկը գրված է այն ժամանակ աղմուկ հանած «Ռիլկսի գործի» կապակցությամբ, երկի բովանդակությունը հարկադրում էր ենթադրել, որ անանուն հեղինակը ամենայն հավանականությամբ, ֆրանսիացի է և կրել է ֆրանսիական լուսավորական մտքի ուժեղ ազդեցությունը: Գիրքը կոչվում էր «Ստրկության շղթաները» («The chains of slavery»): Երկն իր վրա ուշադրություն գրավեց. ավելի ուշ, 1793 թվականին, այն ֆրանսերեն լեզվով հրատարակվեց Ֆրանսիայում: Այդ, ծավալով համեմատաբար ոչ մեծ, բայց խնայողաբար և եռանդուն ոճով գրված գրքում տրված էր բռնակալության հետևողական և համակարգված քննադատությունը անցյալի բազմաթիվ օրինակների և արդիականության որոշ, ոչ միշտ ստույգ նշված փաստերի հիման վրա:

Հեղինակը որպես իր երկի անվանում կրկնել է XVII դարի անգլիական հեղափոխության դարաշրջանի՝ Ջոն Լիլբերնի հայտնի քաղաքական պամֆլետի վերնագիրը: Թեև նախաբանում ասվում էր, որ գիրքը թելադրված է ընտրական կամպանիայի խնդիրներով, երկը ոչ այնքան անգլիական, որքան ֆրանսիական հասարակական մտքի ստեղծագործություն էր:

1774 թվականի «Ստրկության շղթաների» հեղինակը ելնում էր ժան-ժակ Ռուսոյից: Նա ոչ միայն բացահայտ կերպով իրեն հռչակում էր նրա հետևորդը, այլև լիովին ընդունում էր Ռուսոյի փաստարկումը, կրկնում ու շարունակում զարգացնել այն: Մասնավորապես, նա, անկասկած կարեոր, նշանակալից բայց կատարեց Ռուսոյից առաջ, անվիճելիորեն ընդունելով բռնակալության կամայականությունը ժողովրդի դիմադրության, հա-

կազդեցության իրավունքի մասին թեզիսը: Հեղանակը, տեսականորեն և պրակտիկայի տեսանկյունից, կոնկրետ քրեանարկման էր ենթարկում բռնակալության յժի դեմ ժողովրդի զինված պայքարի կամ նույնիսկ զինված ապստամբության հարցերը:

«Ստրկության շղթաներ» երկը իր վրա հրավիրեց ժամանակակիցների ուշադրությունը հենց այն պատճառով, որ այդ գրքում առաջին անգամ այն ժամանակվա քաղաքական գրականության մեջ բռնակալության դեմ պայքարի պրոպեդանդա բարոյական դատապարտման մոտեցումից սեղափոխվում էին իրական, կոնկրետ պրակտիկ գործողությունների ոլորտը: Մա նշանակում էր, այլ կերպ ասած, որ գրքում առաջադրվում էր ոչ միայն այն հարցը, թե ինչ են «ստրկության շղթաները», ինչու էր զրսնորվում և ինչ ձևեր է ընդունում բռնակալությունը, այլև թե ինչպե՞ս այն ոչնչացնել, ինչպե՞ս ջարդել «շղթաները»:

Երկի հեղինակը, սբբ ևս մի բանի տարի մնաց հանելուկային, այն ժամանակ Անգլիայում ապրող բժշկական շրջաններին հայտնի էղինբուրդի սուբբ էնդրյուսի համալսարանի բժշկագիտության դոկտոր, բնախույզ, կենսաբան և ֆիզիկոս, Շվեյցարիայի նեշատեղի կանտոնի Բուզրի քաղաքում ծնված Ժան-Պոլ Մարատն էր, որը հետագայում պատմության մեջ մտավ ժողովրդի բարեկամ՝ Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին: Նրա կողմից հրատարակված թերթի անունով:

Օնորե-Գարբիել Միրբոն գիտե՞ր, արդյոք, «Ստրկության շղթաների» անանուն հեղինակին: Դժվար է լիակատար որոշակիություն պատասխանել այս հարցին, բայց կարելի է հավանականության մեծ բաժնով պնդել, որ, երբ նա սկսեց սեփական երկը բռնակալության մասին՝ 1774 թվականի դարձանը, նրան այդ ստեղծագործությունը ծանոթ չէր: Նա չէր էլ կարող իմանալ, թեկուցև այն պատճառով, որ «Ստրկության շղթաները» լույս է տեսել 1774 թվականի վերջում<sup>3</sup>, իսկ Միրբոն իր «Փորձ բռնակալության մասին» երկն սկսել է նույն տարվա ապրիլ-մայիս ամիսներին: Միզուցև նա դրա հետ ծանոթացել է ավելի ուշ: Հնարավոր է, որ այդպես լինի, բայց դա էական նշանակություն չունի:

Մարատի «Ստրկության շղթաների» համեմատումը Օնորե զբ Միրբոնի «Փորձ բռնակալության մասին» երկի հետ ուշադրության է արժանի առաջին հերթին այն պատճառով, որ երկու

հեղինակներն էլ, ժանոթ չլինելով միմյանց, ինքնուրույն կերպով հանգեցին շահագրանց մոտ, եթե շասենք նույնանման, եզրակացությունները:

«Փորձ բունակալության մասին» երկում Միրաբոն գրում էր. «Պարտքը, շահը և պատիվը թելադրում են դիմադրել միապետի բարձր կարգադրություններին և անգամ խլել նրանից իշխանությունը, եթե նրա շարաշահումները կարող են ոչնչացնել ազատությունը և այլ միջոցներ չեն մնում այն փրկելու համար»<sup>10</sup>: Բաժական է այս տողերը համեմատել Մարատի «Ստրկության շղթաների»<sup>11</sup> համապատասխան էջերի հետ համոզվելու համար, որ երկու հեղինակները միաժամանակ և բոլորովին անկախ միմյանցից հանգել էին ընդհանուր, սկզբունքորեն կարևոր և XVIII դարի ֆրանսիական հասարակական մտքի պատմության զարգացման մեջ նոր եզրակացության: Ժան-Պոլ Մարատի և Օնորե-Գաբրիել զբ Միրաբոնի՝ տարբեր խոսքերով արտահայտած հիմնադրույթները կայանում էին այն բանում, որ եթե իշխանության (միապետի) բունակալությունը ոտնահարում է ազատությունը, ապա ժողովուրդը ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է դիմադրություն ցույց տալ ազատության դեմ հանցափորձին, ընդհուպ մինչև միապետի իշխանության տապալումը, եթե դա անհրաժեշտ լինի:

Դա մեծաթեք կարևորություն ունեցող քաղաքական հետեւություն էր:

Առաջին հաջաքից պատահական թվացող տարիների համընկնումը, և՛ Ժան-Պոլ Մարատը, և՛ Միրաբոն, որոնք այն ժամանակ ոչինչ չգիտեին միմյանց մասին, այդ եզրակացությանը հանգեցին միաժամանակ, 1774 թվականին, իրականում որոշակի բացատրություն ունի և ինչ-որ չափով օրինաչափ է: Ժան-Ժակ Ռուսոյի կողմից «Հասարակական դաշինքը» գրելու ժամանակից անցած տարիների ընթացքում, մի աշխատություն, որն արդարացիորեն համարվում էր ամենաառաջադիմականը XVIII դարի համաշխարհային առաջադիմական մտքի մեջ, անցած տասնմեկ-տասներկու տարիների ֆեոդալաբար-սոցյուտիստական սիստեմի ճգնաժամը Ֆրանսիայում այն աստիճան սրվեց, հասարակական դժգոհության մթնոլորտն այնքան շիկացավ, որ Ռուսոյի վերացական-տեսական հետևություններն արդեն բավարար չէին համարվում: 1774 թվականը՝ այսպես կոչված ալյուրային պատերազմի, իշխանությունների

համար լայն, սպառնալից բնույթ ընդունած, շատ դեպքերում գինված, գրեթե ամբողջ թագավորությունում դրդալով անցնող գյուղացիական լայնաթափ ելույթների նախադրան թվականն էր:

«Ալյուրային պատերազմը» բորբոքվեց 1775 թվականին, բայց այն հասունանում էր ավելի վաղ: 1775 թվականի գյուղացիական ապստամբությունների ու ելույթների նախադրյալները՝ հաց և կենսականորեն անհրաժեշտ այլ բարիքներ արտադրողների մեծամասնության շրջանում առաջադիմող աղքատացումն ու սովն էին: Սենյորների, կալվածատերերի, ինտենդանտների, կապալառուների, տեղական հարկահավաքների, դատական իշխանությունների, եկեղեցու՝ իր «տասներորդի» հետ միասին, ոստիկանության և ժանդարմերիայի՝ իրենց բոլոր ճյուղավորումներով հանդերձ, գյուղացիության անխնա շահագործման հաշվին գոյատևող ու հարստացող ֆեոդալաբար-սոցյուտիստական միապետության և արտոնյալ դասերի հրեշավորության հասնող վիթխարի ապարտի շափից ավելի, հարաճուն ազահությունը 60-ական թվականների վերջին, 70-ականի սկզբներին գյուղացիությանը հասցրեց լիակատար քայքայման:

Շատ տարիների ընթացքում անընդհատ աճող և խորացող վարչակարգի ճգնաժամն արմատացավ ամենից առաջ ագրարային հարաբերություններում, գյուղատնտեսության աղքատացման, գյուղացիների քայքայման, գյուղացիության և նրան ճնշող, շահագործող ֆեոդալաբար-սոցյուտիստական միապետության բոլոր մակարուժական խմբերի միջև դասակարգային հակասությունների ծայրահեղ սրման մեջ: Գյուղացիների ազատագրումը ֆեոդալական կոռ ու բեզարից, ծանր տուրքերից և ճնշման բոլոր այլևայլ ձևերից, որոնք ֆեոդալական «հին կարգերի» վարչակարգի ծնունդն էին, դրա գոյատևման պայմանն էր դառնում:

Այս ամենն, իհարկե, հանրահայտ ճշմարտություններ են, և հեղինակը պետք է դրա համար ներողություն խնդրի ընթերցողներից: Բայց այս վաղուց ժանոթ, մեղ սովորական թվացող հիմնադրույթները վերջին տասնամյակներում (ինչպես ասենք, և նախկինում) որոշ պատմաբաններ և հրապարակախոսներ կասկածի տակ են առնում, ճգնելով մեղ հավատացնել այն բանում, որ Ֆրանսիական մեծ հեղափոխությունն ըստ էության պետք չէր, քանի որ հին մինչհեղափոխական Ֆրանսիայում ոչ մի ոեալ հակասություն գոյություն չի ունեցել:

Ահա թե ինչու ես անհրաժեշտ եմ համարում ավյալ ենթա-տեքստում մեկ անգամ ես կրկնել որոշ հեղինակների հնարձ թվացող ճշմարտությունները: Չէ ոչ միայն այս աքսիոմայի հիմնադրություններից էլնելով կարելի է բացատրել ավյալ պատ-մական ակնարկի երեք գլխավոր հերոսների մտածելակերպը և դորձելակերպը:

Քայց եթե դասակարգային հակասությունները գյուղում հիմ-նականն էին վարչակարգի խորացող ճգնաժամում և ագրարային հարցը զարձակ էր գլխավորը հասունացող բուրժուական հեղափո-խությունում, ապա դա ամենևին էլ չէր նշանակում, որ գրանք միակն էին, և որ ճգնաժամային երևույթները միայն գրանց էին հանգում: Ո՛չ, իհարկե: Այս հիմնական հակասությունների վրա շերտադասվում էին ուրիշ շատ հակասություններ, որոնք եր-բեմն ոչ պակաս սուր էին, և այն ժամանակվա մարդկանց գի-տակցության մեջ ալլեայլ կոնֆլիկտային իրադրությունները հա-ճախ ավելի նշանակալից, ավելի կարևոր էին թվում, քան առա-ջինները: Կասկածի ենթակա չէ, օրինակ, այն, որ լիբերալ ազնվականական և բուրժուական օպոզիցիայի համար էյուզո-վիկոս XV-ի արքայազնության կառավարության պատերազմը պատլամենտների դեմ, ինչպես և նրա թագավորության վերջին տարիների ամբողջ բացահայտ հետադիմական քաղաքակա-նությունը, որը սովորաբար կապված էր Մոպուի և Տերնի անունների հետ, ներկայանում էր որպես գլխավոր շարիք և առավել մեծ շահով դժգոհություն ու զայրույթ առաջացնում:

Այդ պատճառով էլ պատահական չէր, որ էյուզովիկոս XV-ի, «էյուզովիկոս սիրելի» (le bien aimé), ինչպիսին կուզենային նրան ներկայացնել մեր ժամանակներում Գակստոր և աջ ուղ-ղության այլ պատմաբաններ<sup>12</sup>, այդքան երկար թագավորած այդ միապետի 1774 թվականին վրա հասած մահը թեթևու-թյամբ ընդունվեց: Ոչ ոք, միգուցե բացի կոմսուհի Գյուբարիից, շողբաց այդ շնախատեսված վախճանը (թագավորը մեռավ ջրծաղկից): Բոլորը անպարկեշտության շափ բացահայտ ուրա-խանում էին նոր, երիտասարդ միապետի՝ էյուզովիկոս XVI-ի գահ բարձրանալու առթիվ. նրա հետ էին կապվում բոլոր հույ-սերը:

Դեսպոտիզմի վնասի մասին գրեթե միաժամանակ երևան եկած երկու գրքերի հեղինակները՝ Օնորե-Գաբրիել դը Միրբոն և Ժան-Պոլ Մարատը, որոնք ամեն ինչում մնացել էին խորա-

ղես, նույնիսկ ես կասեի սկզբունքորեն միմյանցից տարբեր-բացի ընդհանուր, ամբողջ լուսավորական մտքին հատուկ մո-տիվներից, ունեին և դրող խթանիչներ՝ կապված յուրաքան-չյուրի անձնական կենսագրության հետ:

Խոսքն այստեղ Մարատի մասին չէ\*:

Ինչ վերաբերում է Միրբոնին, ապա նա քսանհինգ տարե-կանում արդեն ղուտ անձնական լիովին բավարար պատճառ-ներ բնեք ափերից ղուրս եկող զայրույթով փրփրալու բռնա-կալության դեմ: Իր հասուն կյանքի կարճատև տարիներին նա կարողացավ լիակատար շահով ճանաչել հոր բռնակալությունը, սոր բռնակալությունը, միապետության և նրա ինստիտուտների բռնակալությունը: Անպիճելի է, երիտասարդ կոմս Միրբոնի այդ անհաշողովությունները բռնակալության կամայականության դեմ ուղղված նրա մեղադրական ճառերին առանձնահատուկ անկեղծ համոզվածություն էին հաղորդում: Քայց, իմ կարծի-բով, սխալ կլինեք, ինչպես դա անում են նրա որոշ կենսագիր-ներ, Միրբոնի առաջին գրական ելույթները արքայազնության վարչակարգի դեմ բացատրել միայն բռնակալ հոր ճնշող ձևերի տակ, նրա երիտասարդության ապերջանիկ դասավոր-ված տարիներով:

Ո՛չ, Միրբոնի հակաարքայադատական ելույթների հիմքը և ավելի խորն էր, և ավելի լայն: Այն ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան ծնունդ էր XVIII դարի լուսավորական գրականության, որով դաստիարակվում էր նրա ժամանակակից ամբողջ սե-բունդը, այլ և իրականության հետ ուղղակի շփման, ընդհանուր դժգոհության այն տրամադրությունների, մոտեցող ամպրոպի մթնոլորտի, որոնք չէր կարող չզգալ յուրաքանչյուր ուշադիր դի-տող: Միրբոնն գրանց թվում էր, նա կարողանում էր նկատել իր ժամանակի նախանշանները: Լինելով կրթված, խելացի և, անկասկած, տաղանդավոր մարդ, նա ընկալունակ էր դարաշըր-ջանի ոչ միատեսակ, շատ բաներում զանազանվող, բայց տար-բեր ղողանջումների դեպքում միշտ ինչ-որ բանից անհանգստա-

\* Ժամանակին ես փորձել եմ «Մարատ» գրքում (Մ., 1962, մշակամար-մարդկանց կյանքը՝ մատենաշար) բացատրել այդ բանը, բայց պետք է դրան ավելացնեմ, որ եթե ես այն գրեի այժմ, տասնհինգ տարի անց, ապա կգրեի փոքր ինչ այլ կերպ:

ցած ձայների նկատմամբ: Միրաբոն մեկն էր նրանցից, ովքեր մյուսներից վաղ էին զգում ամպրոպի մոտենալը:

Իհարկե, Միրաբոնի գեռևս ոչ մեծ կենսափորձը նպաստել է նրա դադափարական հատունացմանը: Նա մոտիկից, իր կողքին տեսել էր թագավորին, նրա շրջապատը, Վերսալի պալատը, և նրանք զզվանքի զգացում էին առաջացրել նրա մեջ: Նա լավ գիտեր իր դասի, իր միջավայրի մարդկանց՝ Ֆրանսիայի բարձր, տոհմական վերնախավին՝ հորը, մորը, աներոջը, իր հասակակիցներին. այն ամենը, ինչ նա գիտեր, խոսում էր ոչ նրանց օգտին: Նա տեսնում էր, թե Ֆրանսիայում որքան դժվար են ապրում հասարակ մարդիկ՝ սերմնացանները, գյուղացիները, նրանք, ովքեր իրենց աշխատանքով կերակրում են արտոնյալ դասերին: Այս բոլոր անձնական դիտումները ամբողջում էին նրա քննադատական դատողությունները գոյություն ունեցող կարգերի մասին: Բռնության, ապօրինության, անօրինականության, անարդարության այս աշխարհը, դաժան աշխարհը պետք է փոխվի: Խուստն իրավացի էր. գոյություն ունեցող հասարակական ինստիտուտները հակասում են մարդու բնական իրավունքներին: Չարիքի զլխավոր սողոլուրը բռնակալությունն է և նրա դեմ պետք է ուղղվեն մահացու հարվածներ:

Միրաբոնին այսպես ընդհանրաօրված, սխեմատիկ կերպով և պարզունակ էին պատկերանում այն խիզախ մարտիկի խրնդիրները, որն ասպետական ղենք ու զրահով, սուրը ձեռքին մահացու գոտեմարտի էր ելել հզոր հակառակորդի դեմ:

Ինքնին հասկանալի է, որ պետք է խուսափել ամեն տեսակ շափազանցություններից: «Փորձ բռնակալության մասին» երկը «Ստրկության շղթաների» հետ որոշ նմանության գծերով հանդերձ ունի և էական տարբերություններ: Թեև Մարատի այդ վաղ շրջանի ստեղծագործության մեջ նրա հասարակական քաղաքական հայացքները ղեռ չէին հասել լիակատար հասունության (որը լիովին հասկանալի էր), այնուամենայնիվ, կարգալուծ այդ անստորագիր հրապարակված ստեղծագործությունը, կարելի է անսխալ կերպով պնդել, որ այն գրել էր հեղափոխական դեմոկրատը: Երկը ասես լուսավորված էր ժողովրդական խոռովության հեռավոր հրդեհների արտացոլանքով: Անցյալում, թե ապագայում: Դրանք անցած ապստամբությունների արձագանքներն էին, թե՛ գալիքների կոահումը: Այդ հարցերին դժվար է պատաս-

խանել: Բայց կարդալով «Ստրկության շղթաները», չի կարելի չզգալ աշխարհի վրա սլացող կատաղի քամիների շունչը:

Ըստ էության Միրաբոնի այդ նույն թեմային նվիրված գրքում դա չի զգացվում: Դա ոչ հեղափոխական է գրել և ոչ էլ գեմոկրատ: Ինչ-որ անորսալի նրբերանգներ, ստույգ բնորոշման լինթարկվող տարատեսակություններ. թե՛ խոսքի դարձվածքները, թե՛ առաջին դեմքով խոսելու հակումը, երբեմն պոթկացող աղայական երանգը՝ այս ամենը ձեզ զգացնել կտան, որ խելացի, իրագրության մեջ լավ կողմնորոշվող այդ խոռովարար, անկեղծ զգացմունքներով տոգորված ստեղծագործությունը գրված է գրան սենյորի կողմից: Դա, անկասկած, վերևներին պատկանող սրատես դիտողի քննադատություն է: Այնպես, ինչպես կարդալով դուքս Սեն-Միմոնի «Լուշագրությունները» կամ Լարոշֆուկոյի «Ասացվածքներ և մաքսիմներ» գիրքը դուք չեք կարող սխալվել դրանց հեղինակների դասային պատկանելության հարցում, այնպես էլ, կարդալով Միրաբոնի հիանալի, խայթոզ «Փորձ բռնակալության մասին» երկը, դուք իսկույն կզգաք, որ այդ ստեղծագործությունը գրել է ոչ ժողովրդի ծոցից ելած մարդը:

Իհարկե, դա այստեղ ասվում է ոչ ի պախարակումն Միրաբոնի. էթիկական գնահատականներն անպատեհ ու ծիծաղելի կլինեին: Եվ տվյալ դեպքում բանը ոչ դասային պատկանելության և ոչ էլ ծագման ու դաստիարակության մեջ է: Այս հավատումը, ազատ լինելով բարոյական քարոզի ցանկացած ձևից, ստովել ևս քարոզներ կարդալու փորձերից, ինքնին կարևոր է: Միրաբոնի՝ որպես անձնավորության և որպես քաղաքական գործչի, լեքնատիպությունը հետագայում պետք է նկատվի, ուշադրության աննվի:

Ավելի ուշ, երբ Միրաբոն պետք է կատարի (մինչև 1789 թվականը) իր էլոլուցիան դեպի ձախ, և հեղափոխության սկզբով, որը նրան մղեց (մինչև որոշ ժամանակ) առաջին շարքեր, քաղաքական լիդերի այդ ներքին հակասությունը կամ երկատվածությունը, ինչպես կամենաք, որը պայքարում է արտոլուտիզմի դեմ հանուն ազատության և «վայրենի աղայի», երևս առած ու սանձարձակ ազնվականի, որն ընդունակ չէ հաղթահարել շոալլության հակումը, մոր կաթի հետ ծծած, ասես թե լուսածին՝ զլխավորելու, առաջինը լինելու բոլոր սովորույթները,

հետագայում այս ներքին երկատվածությունը ողբերգական, ճակատագրական կլինի նրա համար:

Մենք այստեղ նշանակեցինք կետագծերով կամ ամենաընդհանուր նորագծերով, երբ խոսքը «Փորձ բունակալություն մասին» էր, այդ վտանգավոր միտումների միայն առաջացումը, առաջին հայտանիշները:

Բայց այս բոլորը լիակատար չափով նկատելի կդառնա ավելի ուշ: Իսկ այժմ ժամանակն է ընդհանուր դատողություններից վերադառնալ մեր հերոսի գծվարին կենսագրության իրական անցքերին:

### VIII

Մանուկը, որ Միրարոյի բորբոքված երնակալությունը պատկերանում էր գրեթե որպես արսուրավայր աշխարհի ծալքին, գեղասքանչ փսբրիկ քաղաք էր, որի մի քանի լավ, դարի բզով լուսավորված ազնվական ընտանիքները մեծագույն սիրալիրությամբ ընդունեցին ոչ իրենց կամքով ժամանած եկվորներին:

Կոմս դը Միրարոյի մեծահամբավ անունը ցանկացած ազնվականական կալվածքի կամ առանձնատան ղոնները բացում էր երիտասարդ ամուսնական գույգի առջև: Մանուկում էր էմիլիի բավական մտերիմ բարեկամների տունը՝ պարոնները դը Գասսոների հյուրասեր ընտանիքը: Բարեկամ ընտանիքները մտերմացան Միրարո ամուսինների ժամանելուց հետո հայրական տուն սկսեց հաճախակի այցելել այդ ընտանիքի օրդին՝ կալվածքի կորան դը Գասսոն, որը թաղաքից ոչ հեռու տեղավորված կայազորի հրացանակիրների ջոկատի հրամանատարն էր: Վաղ մանկության տարիներին կորանն ու էմիլին միմյանց հետ խաղաղեց են ավաղի հետ, սրժև՝, արգոթ, դարմանալ, որ մորաբույժը սրդին և մորաբույժը աղջիկը աշխույժ դրույցի ժամանակ հաճույքով էին վերհիշում այդքան մոտ և այդքան հեռու մյուս կուսությունը:

Գրաստում, Մանուկից ոչ շատ հեռու, գտնվում էր մարկիզ դը Կարբրի կալվածքը: Այդ վիժվածքի, այդ մշտապես լուռ քմծիծաղ սովող երիտասարդ մարկիզի, ինչ-որ տարօրինակ, իսկ միզուց և սարսափելի դեր խաղացող խելագարի կամ ինչպես քան ձևացողի նկատմամբ Միրարոն անտարբեր էր, իսկ ավելի ստույգ՝ հակակրանք էր տածում: Բայց մարկիզուհի դը Կարբրին,

նրա բույրը, միշտ դեպի իրեն էր ձգում Օնորին: Միասին նրանք երբեք չէին ձանձրանում:

Ճիշտ է, մարկիզուհի Լուիզա դը Կարբրի հասցեին երբևէ, տեսն հարևանցի, նկատում էին, որ վերջին ժամանակները նրան ամառուհուհու վերահազուստով հաճախ են հանդիպում կասկածանքից իրենց ընկերակցությանը Ալյաբրի գեղատեսիլ նախապեսներում ձիերով հեռավոր ճանապարհորդություններ կատարելիս:

Միրարոն դրանից ամենևին էլ չէր սրտնեղում: Նա հավանություն էր տալիս Լուիզայի գործողություններին: Վերջիններքո նա մի վանդակի մեջ հո չէր մնալու այդ շորացած օրանգուտանի՝ մարկիզ դը Կարբրի հետ: Եվ երևակայեցեք, թե ինչպես է իր երեխաների՝ օրդու և դստեր կյանքը փշացրել նրանց հայրը, որին դյուրահավատ ֆրանսիացիները շարունակում են փառասնել որպես Մարդկանց բարեկամի:

Առավել ևս Օնորեն հաճույքով էր ուզում հանդիպել Լուիզային, սրովհետև նա դարձյալ իրեն միայնակ էր զգում: Նա խղեց իր այգքան երկար ձգվող կապերը տիկինը կամ Կոմսի Կոմսի հետ: Այդ տիկինը ծնեց մի տղա, որն ապշեցնում էր կոմս Միրարոյի հետ պատկերների զարմանալի նմանությամբ: Իսկապես աննկատ ոչինչ չի մնում: Մեծ զլխով այդ տղայի մասին, որ այնպես ապշեցուցիչ չափով նման էր բոլորին հայանի երիտասարդ ազնվականին, սկսեցին խոսել բոլոր ազնվական կալվածքների հյուրասենյակներում:

Հասկանալի է, որ Օնորեն-Կարբրիքը չէր կարող առարկել ոչ բուն փաստի, ոչ էլ դրան տրված մեկնարանություն դեմ: Բայց երբ տիկինը, որի մեջ նա մինչև այժմ ավելի շատ արժանիքներ էր գտնում, քան թիկուններ, հակում դրսեորեց ավելորդ տեղը մեծ նշանակություն տալ հոր և որդու միջև եղած նմանությունը, Օնորեն հեշտությամբ առիթ գտավ նրա հետ ընդմիջադարձությունները խղելու համար:

Միրարոն տիկինը դը Կոմս-Կորիոլիսի մասին երբեք այլևս չէր իշխում:

Գա նրա համար այնքանով հեշտ եղավ, որ սեփական տանը նրան դարանամուտ էին անսպասելի բարգուծություններ: Պատասխանորեն իր ձեռքն ընկած անծանոթ ձեռագրով գրված մի նամակից՝ հասցեագրված էմիլիին, որի վրա նա Մանուկ տեղափոխվելուց հետո դադարել էր ուշադրություն դարձնել, կորան

դը Գասսոյի նամակից, ինչպես դա պարզվեց տեքստից, նա իմացավ, որ իր կինը, այդ հանդիստ, աննկատելի էմիլին, անհավատարիմ է իրեն: Ինչպե՞ս, ե՞րբ դա տեղի ունեցավ: Նա չէր կարողանում պատասխանել այդ հարցին, ոչինչ չէր կարողանում հիշել, թեկուզև այն պատճառով, որ իսկապես ամբողջ զարնանը և ամուսնը Մանուսիում նա պարզապես չէր նկատում իր կնոջը: Օնորեն տեսնում էր նրան ամեն օր, ըստ երիվույթին ասում ինչ-որ բաներ, լսում նրա պատասխանները, այլ կերպ չէր կարող լինել. բայց նա հայացքը առանց կրկար պահելու սահեցնում էր կնոջ վրայով: Հավանաբար, այդպես են նայում սովորական զարձած դոանը, հատուկին, բաժակին, որով ամեն առաջուտ սուրճ են խմում: Կոմսուհի դր Միրաբոն, էմիլին, Օնորենի կինը, ոչ նրա մտքերում, ոչ էլ զգացմունքներում տեղ չէր զբաղեցնում:

Նա ամենից ավելի քիչ էր հակված դատապարտել կամ մեղադրել իրեն ինչ-որ բանում: Նա հավատարիմ չէր կնոջը, և դա բնորոշված կարգ էր: Բայց որ կինն իրեն զավանաներ... Օնորեն կատաղության մեջ էր: Նա մոլեգնամ դուրս նետվեց, որպեսզի ծեծի, ոչնչացնի իրեն սուսիկ-փուսիկ ձևացնող այդ սապևս դը Գասսոյին: Ի երջանկություն երկուսի էլ, Օնորեն չգտավ նրան՝ թագավորի հրացանակիրն իր զորամասում էր: Ամուսնու անզուսպ վայրույթից անակնկալի եկած էմիլին անկեղծորեն խոստովանեց և հետո արցունքն ուղեկրին հեղությամբ ամուսնուց ներումն հայցեց: Նա զղջում էր գործած մեղքի համար, երզմունավոր հավաստիացումներ տալիս, որ այդ բանն այլևս երբեք չի կրկնվի: Նա այնքան ամուսնական հնազանդություն, այնքան զղջում, վշտալի հնազանդություն զրուսրեց, այնքան արցունք թափեց, որ վերջապես ներումն ստացավ ամուսնու կողմից, և խաղաղությունը, համենայն դեպս առերևութ, վերականգնվեց բնականիբում<sup>13</sup>:

Խաչատուակությունը սաղմնային վիճակում կառնցնելու, ամբողջ օկրուզում բամբասանքի տարածվելը կանխելու համար կենսափորձով իմաստնայած ավագ դը Գասսոնները Լորան-Մարի դը Գասսոյին հապշտապ ամուսնացրին: Հարսնացուին վաղուց արդեն աչքի առաջ ունեին, դա մարկիզուհի դր Տուրեստաի աղջիկն էր՝ խաշոր կարողության ժառանգորդուհին: XVIII դարում ամուսնացող երիտասարդների համաձայնությունը չէր պահանջվում: Նրանց փոխարեն ամեն ինչ ծնողներն էին որոշում:

1774 թվականի ամուսնը տալիս դը Գասսոյի և օրիորդ դը Տուրեստի հարսանիքը առանց հապաղելու տեղի ունեցավ:

Կոմսուհի և կոմս դը Միրաբոնների պատիվը լիովին վերականգնված էր: Արդ ո՞վ կհամարձակվեր, երիտասարդ դը Գասսոյի հարսանյաց հանդիսավոր արարողությունից հետո, կրկնել անհեթեթ, կեղծ բամբասանքները:

Բայց փշրված ձեռնապակին վատ է վերականգնվում: Ետերս պատահած ցնցումից հետո Միրաբո ամուսինների տան խաղաղությունն անկայուն է: Ամուսնու և կնոջ միջև հաճախ են գրծություններ ծագում: Հազիվ թե երիտասարդ դը Գասսոյի հարսանիքը կարողանար ուրախություն պատճառել էմիլիին: Նա այնքան էլ միամիտ չէր, ինչպիսին նրան պատկերացնում էր ամուսինը: Նա ամեն ինչ տեսնում էր, ոչինչ չէր սողսկում նրա ուշադրությունից: Վեճերից մեկի ժամանակ նա ամուսնուն ստոր և չոր կերպով հաղորդեց, որ վաղուց է տեղյակ այն ամենին, ինչ խոսում են տիկին դը Լյամե-Կորիոյիսի սրգու հետ իր, կոմսուհի դը Միրաբոյի օրինական ամուսնու տարօրինակ նմանություն կուպուկցությամբ: Օնորեն վճռակոնսություն շունեցավ հերթել բոլորին հայտնի իրողությունը և պետք է խոստովաներ, որ կինը սրբատուրե ավելի ու ավելի է դառնում անհնազանդ: Զղջումի հեղաբարո տանը մոռացություն էր սրվել: Եթե էմիլին ինչ-որ բանում պատրաստ էր զղջալ, ապա սոսկ այն բանում, որ այն ժամանակ, այն շարաբաստիկ նամակից հետո այդպես ստորացավ, այդպես հնազանդորեն ներում էր հայցում իր անարժան ամուսնուց: Այժմ արդեն կինը ավելի հաճախ, ավելի համարձակորեն էր հակադրուհի ենթարկում ամուսնուն. հայտնի չէ, թե ինչ հանապարհով, բայց նա հիսունալի կերպով իրապեկ էր նրա բոլոր մեղանշումներին:

Գնալով ավելի ու ավելի սուր և կուպիտ դարձող վեճերից մեկի ժամանակ էմիլին ջղադրգին վիճակում նրան մեղադրեց ամուսնական անհավատարմության մեջ: Օնորեն նրան ապուսկեց. նա ծանր ձևեր ուներ: Էմիլին ամբողջ կյանքում չմոռացավ գեմրին ստացած այդ հարվածը:

Միրաբոյի տան խաղաղությունը խզվեց, նորից պատերազմ սկսվեց:

Չկամենալով հաշվի նստել այն բանի հետ, որ ինքը Մանուսիում գտնվում է ուստիկանություն հակողություն տակ, որ իրեն

արգելված է քաղաքից դուրս դալ, Միրաբոն ինքնակամ մեկնեց Գրասս. նա անհամբերությամբ ուզում էր հանգիպել Լուիզային:

Գրեթե մի ամբողջ ամիս, մտապնդման տալով բոլոր ծախորդություններն ու հոգսերը, ամեն բան այս սոսկալի, մոռյլ աշխարհում, նա Լուիզա դը Կարբիի և կապիտան դը Բրիանսոնի հետ ժամերը սպանում էր Ալպերի լեռնաձյուղավորումների հեքիաթային խուլ ճանապարհներում կատարած ուրախ, անհոգ հեծչալ գրասանքներում: Հաճախ հարկ էր լինում գնալ զգուշ, իբար հետեից, իծաշարուկ: Երբ օրը միջում էր, և արագ, գրեթե ակնթարթորեն իջնում էր թանձր, անթափանց, սև թանաքագույն խավարը, նրանք գտնում էին հեռվում աղստ առկայծող մի օրնէ փոքրիկ հյուրանոց, և սկսվում էր արբեցուցիչ թեթև խնջույքը:

Կանգ առած ժամանակի օրեր, առանց երեկվա ու առանց վաղվա օրեր, առանց մտորումների, երջանիկ, երանելի ժամեր, կր ոչ ոք չի նկատում հեռացող բուպենների համբանքը:

Բայց ամեն ինչ իր վերջն ունի: Ձիավորների այս փայլուն գրասախումբը (պարոնների հետեից պատշաճ հեռավորությամբ նրանց էին հետևում ձիավարծները), որ այդպես անհոգ և ուրախ թափառում էր զավառի ճանապարհներում, նկատվել էր և գրավել պառավ ու խստաբարո տիկնանց՝ եկեղեցու բոլոր կոնսենները սրբորեն պահպանող կալվածքների տիրուհիներին. համեմատաբար ջանել բամբաստել կանանց, որոնք միշտ պատրաստ են մի քիչ շարտիտուել ուրիշի հաշվին. կարգուկանոնի պահպանմանը հետևող ծեր, խստաբարո պարոնների, բարեխոսների, ամեն տեսակ գիպվածների սիրահարների, արհածներ օրնուղները՝ մի խոսքով, իրենց քիթը ուրիշի գործերի մեջ խոփելու սիրահարների ուշադրությունը: Քաղաքությունն ո՞ր դավաճան է բարձրաշխարհիկ բամբասողների կարիք զգում:

Ակազից դատափետությունը: Հետո մի կիրակի օր կրպակներէ, խանութների, հյուրանոցների, պաշտոնական հիմնարկների դռների վրա, նույնիսկ եկեղեցիներում ի հայտ եկան աչքի զարնող տեղում փակցված ոչ մեծ, բայց մի տեսակ վառ պլակասներու Գրանցում գիտավորյալ կերպով ճոռոմ, բայց շարախինոց սրամտությունից ոչ զուրկ տոնով հազորգվում էր երկու աղամարդկանց՝ իր եղբոր, անաստվածի ու ցոփակյացի, և աստվածի ընկերակցությամբ բարձրաստիճան տիկնոջ անամոթ ար-

կածների մասին, որոնք երեքով, ի ցույց, ծանակում էին տեր տառն, եկեղեցու և թագավորի սրբազան օրենքները:

Չբպարտուղազիրը հորինված էր փորձառու, գրական արհեստում հմտացած ազնվականի կողմից. դրանում կասկած լինել չէր կարող: Բայց ո՞վ էր նողկալի զրպարտուղազրի հեղինակը: Ընկերախմբի բոլոր երեք անդամները, որ ծանակված էին պարսավագրում (նրանք չէին կարող չկարգալ այն. ամենուրեք նրանք տեսնում էին պարսավագիրը), գլուխները կորցրել էին եկեղեցու լույսում: Ասենք, զրպարտուղազիրն ինքը նրանց վրա մեծ տպավորություն չգործեց՝ երիտասարդները արհամարհում էին գավառային, արքավայրերի խուլ անկյունների այդ հեռամտաց բնակիչների կարծիքը:

Պատահեց այնպես, որ գեղեցիկ, անհոգության շափ զվարձույի օրերից մեկում ճանապարհին նրանց հանգիպեց տեղացի երեւի սենյոր, Մուանա կալվածքի սեփականատեր պարոն Ժիլլեր դը Վիլլեն-Մուանը: Ընկերախումբը փերադառնում էր կոնձած վիճակում: Ծեր խստաբարո պարոնը մարկիզուհի դը Կարբիի և նրա ազատ ապրելակերպի երկրպագուի համբավ չէր վաշելում: Բայց աստված գիտի, թե ինչու Միրաբոն կասկածեց, որ նա է զրպարտուղազրի հեղինակը և գրգռել կոպիտ տոնով սկսեց ներողություն կամ մեծամարտ պահանջել: Իր Վիլլեն-Մուանը նվազագույն հակվածություն անգամ չցուցաբերեց բավարարության տալ բոի մարդու ոչ առաջին, ոչ էլ երկրորդ պահանջին: Այնժամ Միրաբոն ծեր պարոնի ձեռքից խլելով հովանոցը, բարդեց այն, խփելով նրա զլխին, իսկ հետո, շքավարարվելով դրանով, բարձրացրեց նրան օդի մեջ, պեց գետնին և համաքոված գլուղացիների աչքի առաջ սկսեց գլորել, ոտքով խփելով նրան:

Նրբ որոշ ժամանակ անց ծեծված, կիսամեռ պարոն դը Վիլլեն-Մուանը մի կերպ հասավ տուն, նա հագիվ միայն ուղքի գուլով, դատական ինստանցիաներին ներկայացրեց բոլոր կոմս Միրաբոնի կողմից իրեն սպանելու փորձի մասին:

Օնորե-Գարբիելի համար պարզ էր, որ եղելությունը անպատիվ չի մնա: Այս ամբողջ անհեթեթ ցատմությունը առավել ևս առան էր այն բանով, որ շուտով պարզվեց, թե ով էր Լուիզա դը Կարբիի և նրա ուղեկիցների դեմ ստոր հորինվածքի իսկական հեղինակը: Դա Լուիզայի օրինական ամուսինն էր՝ մարկիզ դը Կարբին: Այդ տարօրինակ, բնդհանուր կարծիքով մեռած,

ասես ոչ մի բան շտեմնող աչքերի սառած հայացքով երիտա-  
սարդը, ցնորվածը, որ նա հաստատում էր իր ողջ վարքով,  
իրականում ամեն ինչ տեսնում էր, ամեն ինչ նկատում. լինելով  
չար և վրիժառու, նա թաքուն, աննկատ բոլորից աննահանջ  
գնում էր իր կնոջ հետքերով:

Միրաբոն վերադարձավ Մանուկ: Մնում էր սպասել, թե երբ  
է նրա ուսերին իջնելու արդարադատության սուրբ: Բացի այդ  
էլ, ինչպես միշտ, նա դարձյալ փոյ շուներ: Նա ստիպեց իրեն  
մոտանալ իր գառամյալ մոր ձեռքով բարձրացրած ատրճանակը  
որդուն սպանելու համար, և նրան գրեց ակնածալից-որդիական,  
խնդրողական նամակ: Նա մորն աղաչում էր,— չէ որ նա այն-  
քան հարուստ էր, իսկ ինքը, մոր առաջնեկը, աղքատ է ու դժ-  
բախտության մեջ,— օգնել որդուն փողով: Նա գտնում էր բա-  
ռեր, որոնք թվում է թե, կարող էին քարն անգամ զթաշարժել:

Պատասխանը սպասեցնել չտվեց: Մոր նամակը կարճ էր՝ նա  
որդու համար փող չունի: Նա չէր պնդում, թե ընդհանրապես  
փող չունի. այն չկա Օնորե-Գարրիելի համար:

Այնժամ նրա մեջ գրեթե մի ակնթարթում մեկ այլ գաղա-  
փար ծնվեց՝ հարկավոր է էմիլին բարի կամքի առաքելությանը  
ուղարկել Բինյոն, իր հոր՝ մարկիզ զը Միրաբոնի մոտ: Էմիլին իր  
սիրալիր, քնքուշ շարժումներով, ախորժալուր ձայնով միգուցե  
կարողանա իր կողմը թեքել «Մարդկանց բարեկամին»: Հայրը  
հզար կապեր ունի Փարիզում՝ երիտասարդ թագավոր Լյուդովի-  
կոս XVI-ի գահ բարձրանալու ժամանակից ի վեր Ֆիդիոկրատները  
մոզա դարձան: Հոր համար դժվար չէ սքողել, անուշադրության  
մատենել զը Վիլեն-Մուանի բողոքը: Եվ հետո Էմիլին կկարողա-  
նա իր սկեսրայրին համոզել, որ նրա որդին, կամ զը Միրաբոն,  
որը, ի դեպ ասած, դարձել էր շափահաս, չի կարող գոյությունը  
պահպանել առանց փողի:

Հարկ չեղավ Էմիլին երկար համոզել: Նա արագ համա-  
ձայնեց ամուսնու առաջարկությանը:

Պոմսուհի զը Միրաբոն խելացի կին էր: Հավանաբար, նա  
խնդրեցնեթ հասկացավ, որ ամուսնու առաջարկած հրաժեշտ  
տալու եղանակը ընտանիքում ստեղծված հարաբերությունների  
պայմաններում ամենալավագույն, ամենավայելուչ էլքն է ան-  
հաղթահարելի ճգնաժամից: Հավանաբար, Օնորե Գարրիելը մտա-  
ծում էր այնպես, ինչպես և կինը, բայց հասկանալի պատճառ-  
ներով նա չէր ուզում բարձրաձայն արտահայտել մտքերը:

Պատրաստությունները երկար չսեպեցին: Նայելով կողքից՝  
Միրաբոնի ընտանիքում հաստատվել էր բարենպաստ հաշտու-  
թյուն, հաղթանակել էր ընտանեկան անխող, ջերմ մտերմու-  
թյունը: Բաժանվելով, ամուսինն ու կինը հավաստիացնում էին  
միմյանց, որ դա կլինի ժամանակավոր, բոլորովին կարճ ան-  
չատու:

Բայց հոգու խորքում (այդ մասին ևս չէր կարելի բարձրա-  
ձայն ասել) հավանաբար երկունս էլ զգում էին, որ բաժան-  
վում են երկար ժամանակով, միգուցե և ընդմիշտ:

Միրաբոն իր հաշիվների մեջ իրավացի դուրս եկավ: Էմիլին  
խկապես առանց ջանքերի կարողացավ իր օգտին տրամադրել  
սկեսրայրին: Մեր մարկիզը չէր կարող անշափ շտախանալ իր  
հարսի համար՝ նա խելացի էր, կարգացած, լավ դաստիարակ-  
ված. նա ուներ հաճելի շարժումներ, սքանչելի ձայն: Իսկ զլխա-  
վորը, որ նա առանձնապես գնահատում էր հարսի մեջ, այն էր,  
որ Բինյոնի տունը դուր էր եկել նրան: Էմիլին իրոք որ մարկիզ  
զը Միրաբոնի արիստոկրատական լավորակ, փոքր-ինչ ճնաճ  
դրչակում իրեն զգում էր ինչպես ձուկը ջրում: Դժպակը նրան  
հիշեցնում էր իր երջանիկ մանկության տունը:

Փոքրիկ թռչնիկը, պատվիկ Վիկտոր զը Միրաբոն գործավ  
ձերպացած պապի սիրելին ու սփոփանքը: Միրաբոնների հինավուրց  
փառահեղ սոհճը արժանավայել կերպով կշարունակվի. պապը  
պատրաստ էր իր վրա վերցնել թռան դաստիարակության  
հետ կապված բոլոր հոգսերը: Մի խոսքով, բոլորն էլ դո՛ւ ու  
երջանիկ էին:

Բինյոնից Մանուկ էին դալիս քնքուշ, հանգստացուցիչ նա-  
մակներ: Թվում էր, թե Օնորե-Գարրիելի պլանը մոտ է իրա-  
կանացման: Վերջապես նա իրեն մի փոքր ավելի հանգիստ  
զգաց: Նա կրկին վերադարձավ իր ընդհանրված գրական գրադ-  
մունքներին. նորից հափշտակությունը սկսեց աշխատել «Փորձ  
րունակություն մասին» երկը եղրափակելու վրա:

Աշունը մոտենում էր: Հիմա նա սպասում էր ամեն օր, ան-  
համբերությամբ հաշվելով ժամերը, թե երբ ևն հնչելու երկձի  
փոստային սայլակառքի գանգակները: Փոստը նրան պետք է  
լերեր փող, որը նրա հորից կստանա սիրասուն Էմիլին, որն այն-  
քան լավ է կատարում փափկանկատ դիվանագիտական առա-  
քելությունը, զը Վիլեն-Մուանի բողոքը բեկանող թագավորական  
հրամանը, իսկ միգուցե նոր, բարի թագավոր Լյուդովիկոս XVI-ի

հրամանը, որով կոմս զը Միրաբոյի ին էր վերադարձվում լիակատար ազատութիւնը, որ այնպես անարգարացի կերպով նրանից խել էին նախորդ թագավորութեան օրոք:

Ամեն օր մեկ-երկու ժամ նա փոքրիկ սնակի մոտ սպասում էր փոստին, ակա՛նչ դնելով հեռվից լավող փոստային զանգակների անընդհատ զրնգոցը: Օրերն անցնում էին՝ ամեն ինչ ապարդյուն. այդպես էլ նա շտապեց աչն, ինչին սպասում էր:

Միրաբոյի հաշիվների մեջ, որոնք նա կապում էր էմիլիի առաքելութեան հետ և որոնք, նրան թվում էր, թե մոտ են երջանիկ իրականացման, իրոք ինչ-որ մի մասով արդարացան, կար միայն մեկ, բայց առաջնահերթ կարեւորութեան սխալ: էմիլիին հերավի հաջողվեց մտերմանալ սկեսրայրի հետ և ընդհանուր լեզու գտնել: Նա դարձավ ծեր մարկիզի ամենաազդեցիկ դաշնակիցը: Բայց հարսի և սկեսրայրի դաշինքը ուղղված էր ոչ թէ հօգուտ ամուսնու և որդու, այլ նրա՝ Օնորե-Փարբիելի դեմ:

Մինչև օրս Միրաբոն Բինյոնում ուներ մեկ հակառակորդ՝ որդու շփոթ հայր. հիմա դարձան երկուսը. հայրը և նրա հետ միավորված, ամուսնուն շփոթող, նրան ոչ մի բանում չներող, խելացի, շարակամ կինը:

Մի երեկո, արդեն փոստը գալուց հետո, որը նորից խաբեց նրա սպասելիքները, Միրաբոյի տան դուռը թակեցին: Ժանդարմներն էին: Նրանք ներկայացրին թագավորի գաղտնի կարգադրութիւնը Օնորե-Փարբիել Ռիբեստի զը Միրաբոյին առանց կալանքի սրոշակի ժամկետի Իֆ կղզու ամրոց-բանտում մեկուսացնելու մասին:

Մարկիզ և կոմսուհի զը Միրաբոնների համատեղ ջանքերն ապարդյուն չանցան:

## IX

Շուրջը ծով է, ծով, ծով... Ինչ-որ տեղ, հետևում Մարսելի խարսխակայանն է, բայց կղզին բոլոր կողմերից շրջապատված է ջրային հարթութեամբ, որը հեռու-հեռու առջևում, հորիզոնի գրեթե անշարժելի գծի վրա, միախառնվում է սառը, միգամած երկնքին:

Շնորհ Միրաբոն Իֆ ամրոցի կալանավորն է: Այդ ամրոց-բանտը, որ ցամաքից անջատված է լողորդի համար անհաղ-

թա՛ւրելի ջրային տարածութեամբ, միշտ շրջապատված է եղել խորհրդավոր առասպելներով: Ո՞վ էր պահված, թաղված նրա բանտախցերում: Ըստ ավանդութեան, այստեղ ողջ-ողջ թաղված էր նա, ում անվանում էին խորհրդավոր «երկաթի դիմակ»: Իֆ ամրոցի գետնահարկում տառապում էին ամենավտանգավոր պետական հանցագործները: Հետագայում, XIX դարում, Արիքսանդր Պյուման աշխարհով մեկ փառարանեց սարսափելի Իֆ ամրոցը, շար ուժերի կամրով իր սիրելի հերոսին՝ ապագա կոմս Մոնտե-Քրիստոյին պահելով նրա կործանարար զենաներում: Բայց՝ և XVIII դարում Իֆ ամրոցը վատ համբավ ուներ: Իֆ կղզուց շեն վերագառնում՝ այդպես էին ստում արդեն Միրաբոյի երիտասարդութեան օրերին:

Նա ամրոցում կալանավորված էր առանց հոր, մոր, բույրերի, որի մեկ ուրիշի հետ նամակագրութեան իրավունքի, բացի կնոջից: Նա իր կալանավայրն էր դնում ծանր զգացումներով: Քսանվեց տարեկան հասակում ճակատագրի այդքան հարվածներ, այդքան պարտութիւններ: Իսկ առջևում բանտային կալանքն է շարագույժ ամրոցում՝ կտրված աշխարհից, առանց մեկուսացման ժամկետների որոշման: Դու ծովահենների, ավազակների, անտեսանելի շարագործների իշխանութեան տակ ես, բո գեմ է բռնակալութեան այս սարսափելի հողի իշխանութիւնը, ամբողջ երկիրն ընդգրկող պետական հարկագրանքի այս անխնա, անհաղթահարելի մերենան, ի՞նչ կարող է դրան հակադրել միայնակ, ազրատ ու անզոր մարդը:

Այս տրամադրութիւնների մասին կարելի է միայն կուսակալ Ռոզակի աղբյուրներ, այսինքն իրեն իսկ Միրաբոյի այն ժամանակվա նամակները շեն պահպանել: Բայց մնացել են անուղղակի վկայութիւններ՝ էմիլի Միրաբոյի նամակներն ամուսնուն, որոնցով կարելի է ինչ-որ շափով վերստեղծել Իֆ ամրոցի կալանավորի նամակներն ու տրամադրութիւնը (նամակները խնամքով հավաքել և ուսումնասիրել է կրտսեր կոմենսին<sup>1)</sup>), և այնուհետև հետագա տարիներին իրեն իսկ՝ Միրաբոյի հիշողութիւնները կամ դատողութիւնները կատրված Իֆ ամրոցում կալանավորվելու հետ: Հարկ է նաև հիշեցնել, դանդաղորեն մոտենում էր աշունը մոռալ երկնքով, սառը քամիներով, երկար գիշերներով: Բնական էր, որ փորձութիւններից այդ ամենաանուպար, որին ենթարկվում էր Միրաբոն իր կարճատև և բուռն կյանքի ընթացքում, նրա մեջ ծնեց րնկճվածութեան զգացում:

Անօգնականութեան, մնացյալ ամբողջ աշխարհից՝ ազատ աշխարհից, անկախ կյանքից խորթացման գիտակցումը հաստատուում է նաև կենց հետ նրա աշխույժ գրասրբութեամբ: Վերջին շրջանում ամուսինները չէին փնտրում փոխադարձ հազարակցում: ամիլի շուտ ընդհանրապէս: Էմիլիի Բիւնյոն մեկնելուց հետո Միքայելն նրան գրում էր հազարակցեալ, կարծառեւ և խիստ դժբախտ հարցերի շուրջ: Ի՞նչ կըզում նրա կինը, նրա փոքրիկ էմիլին, նրան պատկերանում էր որպէս լուսի շուրջ անթափանց մշուշում, արտաքին աշխարհի հետ կապող վերջին պատուհան: Հեռավոր, անտեսանելի, անհասանելի, նրա համար կորսված աշխարհը, որ հեռվից այնպէս պայծառ, բազմերանգ, նրաշալի է թվում՝ իր բոլոր խնդրութիւններով ու գառնութիւններով, միգուցէ կորսված է ընդմիջու: Միայն մեկը՝ էմիլին է մնում այն բարակ, թույլ թելը, որը կապում է նրան նախկին, երջանիկ, ազատ կյանքի հետ, ուր շուրարանչուք որ անկախ է անելու այն, ինչ ինքն է ուզում: Օնորեն կենցը գրում է հաճախակի, ամիլիի հաճախ, քան երբեք կյանքում: Նա դարձելով պիտում է նրան գտով, ինչպէս հարսանիքից հետո առաջին երջանիկ օրերին, նա էմիլիին գրում է քնքշալից, մտերմիկ նամակներ, նա իսկապէս կարտում է նրան, փոքրիկ որդակին: Օնորեն սիրում է նրանց, այդ քարե կղզին առանց նրանց ամայի է: Աքսորավայրում գտնվող ամուսնուն էմիլիի գրած նամակները ազաւնու ընթուշ դունդունոց են: Այժմ, երբ այդքան հեռու, այդքան ամուր է նա փակված ամբողջ անմատչելի քարե պատերի ներսում, էմիլին նրա համար գտնում է ամենաջերմ, սիրտ թափանցող բառեր: Ամուսնուց զրկված հաւատարիմ կինը մտածում է միայն նրա մասին. կենց համար ոչինչ այլևս գոյութիւն չունի, նրա բոլոր մտորումները, զգացմունքները՝ բոլորն ուղղված են նրան: Միակ հոգսը, որ զբաղեցնում է նրան օր ու գիշեր՝ դա այն է, թե ինչպէս օգնի ամուսնուն, ինչպէս թեթեւացնի թանկագին Օնորենի՝ իրենց փոքրիկ որդակի հոր ճակատագիրը:

Միքայելն ինչպիսի մարդ է, և նրան պետք չէ երեք պարտիա բերլան՝ խաղալ, որպէսզի պատկերացում կազմի իր խաղընկերոջ մասին: Սկզբում նա ուրախացավ, զգացվեց էմիլիի այդ քնքշանքից, նրա անկեղծ սիրտ հաւատարացումներից: Միգուցէ

խիստապէս Ի՞նչ ամբողջում բանասրկութիւնը, որին հասավ հայրը, բարիք էր, ինչպէս բացահայտորեն գրում էր էմիլին, այն պատիմների համեմատ, որոնք Վիլյեմ Մուսիի բողոքի համաձայն պատրաստել էր Գրասրբի դատարանը: Եթէ հաւատար էմիլիին՝ և՛ հայրը, և՛ նա Օնորենին որպէս բանասրկչալ ուղարկելով այն ամբողջը, որտեղից ոչ ոք չի վերադառնում, հոգացել են միայն նրա բարօրութեան մասին:

Բայց որոշ ժամանակ անց Ի՞նչ ամբողջում կայանավորվածին, որն ուրախանում էր իր միակ թղթակցուհուց ստացած յուրաբանչուք նամակի համար, սկսեց թվալ, որ կենց նամակներում մեկըր շափից դուրս շատ է: Միքո հաւատարացումների, նրա շարչարանքների, նրա հոգսերի, նրա անրուն գիշերների մասին մշտական շիշկույունների համարութեան մեջ նա զգում էր զգացմունքների ինչ-որ շափաղանցում, ինչ-որ ոչ անկեղծ բան, որը նարաճուն անհանգստութեան ազատ զգացմունք ծնունդ էր տալիս:

Օնորենի նամակներն ավելի հազարակցեալ ու շուր էին գտնում: Կոմսուհի էմիլի զը Միքայելն իրոք որ ամենեին միտմիտը չէր: Սեր ժարկիզը հիացած էր նրանով. էմիլիի ազդեցութիւնը նրա վրա օրամայր աճում էր: Ճշմարիտ է, նա երբէր չկարողացավ մինչև վերջ պոլիս հանել, թե նա իրականում ինչպէս է վերաբերվում իր ամուսնուն, որտեղից է անցնում սահմանն անկեղծ զգացմունքների և այն դերի միջև, որ խաղում է այնպէս հմտորեն, այնպէս նրբորեն, որ երբեմն թվում է, թե դա բոլորովին էլ դեր չէ, այլ իսկութիւն:

Էմիլին ցույց էր տալիս, որ չի նկատում ամուսնու նամակների աճող անախտահարութիւնն ու շուրութիւնը: Որոշ ժամանակ անց նա սկսեց կենցը գրել դուրով՝ նախկին վստահալից դուր փոխարին, ինչպէս բնդունված է ամուսինների միջև: Կինը առաջվա նման նրան գրում էր դուով և չէր խնայում քնքշալից բառեր: Բայց ուղղակիորեն զրկված հարցերին, ինչպէս օրինակ, արդյոք կգա՞ նա իր մոտ Ի՞նչ կըզի՞ պատասխանում էր մշուշուտ և խուսափողաբար:

Միքայելն արդեն կարծիք կազմեց բերլանի իր խաղընկերոջ մասին: Նա այլևս չէր վստահում իր կնոջը: Պատրանքները, որ ծնունդ էին աճող զգացմունքների ու նրան սպասանացող վտանգների՝ ցրվում էին: Կոմսուհի Միքայելի կողմից պետք էր սպասել քաղցրանուշ ժպիտներով ու ճառերով քողարկված սկիւնդաշունի շեշաակի հարված:

\* Բերլան— կուրովիկոս XV-ի և կուրովիկոս XVI-ի ժամանակներում լայնորեն տարածված թղթախաղ:

Մոր, հոր, կնոջ թշնամություն՝ արդյոք շատ չէ՞ մարտկապիւն-  
թուլլ ուսերի համար:

Ասենք, մեր հերոսն ինքն էլ ոչ միայն առաքինութեան օրի-  
նակ չէր, այլև անհոգութեամբ հակառակորդներին հաղթանակի-  
ութեան գրավական էր տալիս իր դեմ:

Ի՞նչ ամբողջ, այն բանից հետո, երբ նա մի փոքր ընտելացավ  
նոր տեղին, պարզվեց, որ այնքան էլ դժոխք չէր. ինչպես աս-  
տիճանաբար պարզվեց, այստեղ ևս կարելի էր գոյութիւնը  
սահպանել:

Ինչպես միշտ, Միրաբոյին անհաշտութիւնները դեպքում  
օգնում էին նրա մեծահոշակ անունը և մարդկանց իր կողմը  
գրավելու, նույնիսկ նրանց հմայելու հատուկ ձիրքը: Ամբողջ ծեր  
պարեալ դ'Ալեգրը, որ աղքատ ազնվական էր, շանադիր ծա-  
ռայող, սկզբում չգիտեր, թե ինչպես պահի իրեն իր նշանավոր  
գերու հետ: Նա ոչ մի ուղղակի ցուցում չէր ստացել կալանա-  
վորի նկատմամբ հատուկ խիստ ուժեղ կիրառելու մասին: Բայց  
Պրովանսում, ըստ երևույթին, չկա ավելի նշանավոր և հարգար-  
ժան անուն, քան կոմս Միրաբոյի անունը: Մեր պարեալը հիա-  
նալի գիտեր, որ գավառի քոլոր մեծ պետերը կոմս Միրաբոյի  
մերձավոր ազգականներն են կամ մտերիմները: Այսօր նա ԻՖ-  
ամբողջի կալանավորն է, իսկ վաղը նա կարող է դառնալ մի-  
նիստը՝ մի այնպիսի բարձր վերադաս, որին գավառական խրդ-  
ճուկ ծառայողը չի հասնի: Պարեալ դ'Ալեգրը խելամիտ համարեց  
գերուն հրավիրել իր ճաշատեղանին: Իսկ հետո ինքը Միրաբոյ  
իր հմայելու ձիրքով կարողացավ այնքան շահել պարեալի հա-  
մակրանքը, որ դարձավ նրա տան ամենացանկալի հյուրը: Մի  
խոսքով, ԻՖ կղզում ևս, նույնիսկ մնալով որպես կալանավոր,  
կոմս Միրաբոյ կարող էր լիովին ազատ ապրել:

Բայց անսպասելիորեն բարդութիւններ առաջացան: Ամբողջի  
սակավաթիվ ազատ բնակիչների մեջ կար ոմն Լազարի Մուրն՝  
կրտսեր ծառայողներից մեկի կինը: Մի անգամ Միրաբոյ հարե-  
վանցիորեն նրան աննշան սիրալիր խոսք ասաց, և դա բավա-  
կան էր, որպեսզի կղզում «վայրենացած» երիտասարդ կինը,  
աստված գիտե թե ինչ երևակայելով, շտապեր իրեն դնել ամբողջի  
գերու լիակատար տնօրինութեան տակ: Այս պատահական բան-  
ստրկուն չէր գրավում Միրաբոյին, բայց համենայն դեպս նա  
հնարավորութիւն ստացավ հնազանդ և ճշտակատար Լազարիի  
միջոցով գրագրութիւն ունենալ ում հետ կամենար:

Բայց փոքր կղզում ոչինչ չի կարող երկար ժամանակ գաղտ-  
նիք մնալ, և Լազարին գտավ, որ ավելի խոհեմ կլինի շտապել  
ամուսնու հատուցմանը: Մի երեկո, Միրաբոյից կանխապես  
ստանալով նամակ՝ ուղղված մարկիզուհի դը Կարբիին և նախա-  
պես հափշտակելով ամուսնու երկար տարիների խնայողու-  
թիւնները՝ մտավորապես 4 հազար լիվր, նա անհետացավ  
կղզուց:

Խարված և վիրավորված ամուսինը, զրկվելով և՛ կնոջից, և՛  
փողից (որը, երևի, նրան ցնցեց հավասարապես), բողոք ներ-  
կայացրեց պարետին՝ ընտանեկան երջանկութեան հանդուգն  
խաթարողի դեմ, և որպեսզի վիրավորանք հասցնողին տհաճու-  
թիւն պատճառի՝ գանգատն ուղարկեց իրեն միակ հայտնի  
հուցեով՝ կոմսուհի էմիլի դը Միրաբոյին:

Բողոքը սարեալի վրա մեծ տպավորութիւն չգործեց: Ինչ-  
դատարկ մի կնոջ պատճառով նա մտադիր չէր փշացնել հարա-  
բերութիւններն իր բարձրաստիճան գերու հետ: Երբ ավելի ուշ  
նրանից պահանջեցին պաշտօնական կարծիք ԻՖ ամբողջում  
կոմս Միրաբոյի վարքի մասին, նա տվեց ամենադրական և գո-  
վասանական բնութագիրը:

էմիլին ամուսնու հետ նամակագրութիւնում գործը ներկա-  
յացրեց այնպես, իրեն թե նրան ոչինչ հայտնի չէ: Ոչինչ չփոխ-  
վեց նրա նամակների ոչ տոնի, ոչ էլ բովանդակութեան մեջ:  
Բայց նա, իհարկե, գնահատեց իր ձեռքն ընկած փաստաթղթի  
նշանակութիւնը: Այն նրան պետք կդառնար պապայայտում: Իսկ առայ-  
ժրմ նա փութաց ծեր մարկիզին ծառայացնել ստացված բողոքի  
հետ, ցուց շտալով իր վերաբերմունքը դրա նկատմամբ: «Մարդ-  
կանց բարեկամի» համար այդ ամբողջ պատմութեան մեջ կարե-  
վոր էր թվում այն, որ Օնորեն կապ է պահպանում իր ջրոջ՝  
Լուիզա դը Կարբիի հետ, որը ծնողների միջև միանգամայն  
բացահայտ ձևեր ընդունած պաշքարում անցել էր մոր կողմը:

Այդ ժամանակ մարկիզ դը Միրաբոյ մտադրվել էր դատա-  
կան գործ հարուցել կնոջ դեմ: Նա հույս ուներ, որ իրեն կհա-  
ջողվի հեշտութեամբ շահել այն, նրան խելագար հայտարարե-  
րով: Բայց այդ ամենը այնքան էլ հեշտ չէր: Պատավարութիւնը  
կյանեց նրա ուշադրութիւնն ու ուժերը: Նա առանձնատուն գնեց  
Փարիզում և երկար ամիսներ մայրաքաղաք էր գալիս իր հարսի  
ուրեկցութեամբ, որպեսզի հնարավորութիւն ունենար անմիջա-  
բար ազդել գործի ընթացքի վրա: Բայց դատը ձգձգվում էր և

ընթացում փոփոխակի հաջողություններ, քանի որ մարկիզուհին իր դուստր Լուիզա դը Կարբրի եռանդուն աջակցությամբ բավականաչափ հմտորեն էր հակախաղ վարում ստելի ամուսնու գեմ:

«Մարգկանց բարեկամը», հափշտակված հարազատներէ դեմ մղած պատերազմով և ենթարկվելով նրա ստրատեգիական խնդիրներին այնպես, ինչպես դրանք ինքն էր պատկերացնում, առավել մեծ վտանգ էր համարում այն, որ որդին քրոջ թելադրանքով անցնի մոր կողմը:

Բացի այս, պարետ դ'Արեպը բոլոր հարցումներին այնքան գովեստով էր արտահայտվում իր գերու մասին, որ ծեր մարկիզը ստեղծված հանգամանքներում խելամիտ համարեց բարեյազակ որդու կալանքի պայմանները, ճիշտ է, նրան ավելի հեռու տեղափոխելով Գրասսից, այսինքն Լուիզա դը Կարբրից:

Նրան հաջողվեց մտերիմների օգնությամբ ձեռք բերել թագավորական դազտնի կարգադրություն իր աղջկան վանքում մեկուսացնելու մասին:

Իսկ նրա ավագ որդին, կոմս Օնորե-Գարբիել Լիբեռտի դը Միրաբոն, նույնպես թագավորական գազտնի կարգադրությամբ Իֆ ամրոցից տեղափոխվեց Փու բերդամաս, Յուրի ամենաբարձր լեռնային մասում, Ֆրանշ-Կոնտեի և Շվեյցարիայի սահմանագլխին:

1775 թվականի գարնանը, պահակամբի ուղեկցությամբ, երկարատև ճանապարհորդությունից հետո Միրաբոն ժամանեց իր բանտարկության նոր վայրը՝ Փու ամրոց\*:

## X

Էմիլի դը Միրաբոն, ամուսնուն նախօրոք տեղեկացնելով Իֆ ամրոցից առաջիկայում Փու տեղափոխվելու մասին, այդ նորությունը հրամցրեց որպես յուրատեսակ բարեհաջող սկզբի հաղթանակ շարի նկատմամբ, որպես կարևոր փուլ ազատության լիակատար վերադարձի ճանապարհին: (Սա պետք էր հասկանալ այնպես, ինչպես հիշեցումն այն մասին, որ դեպի լավը

\* Փու ամրոց Միրաբոնի ժամանելու ժամանակի մասին տեղեկությունները չեն համընկնում. բայց որոշ տվյալների նրան Փու են բերել 1775 թվականի աշնանը:

կատարվող փոփոխությունները տեղի են ունենում սուսկ այն պատճառով, որ նա՝ հավատարիմ, նվիրված կինը, շարունակում է հոգալ ամուսնու մասին):

Այս անգամ կոմսուհի Միրաբոնի հաղորդածը իր հիմնական մասով ճիշտ էր:

Անանցանելի անտառներում կորսված արծվի բույն հիշեցնող ժու ամրոց հասնելուն պես Միրաբոն սրտարաց և նույնիսկ բարեհամբույր ընդունելության արժանացավ ամրոցի պարետ, կոմս Սեն-Մորիսի կողմից, որ գինվորական ծառայության մեջ ծերացած, հնականոն, լուսավորյալ, հարգալից ու սիրալիր արիստոկրատ էր: Նա հայտարարեց, որ ամենին էլ մտաւիր չէ կոմս Միրաբոնի պահակը դառնալ, նրան տառապեց իր ճաշանկանի հյուրը լինել և գործողությունների լիակատար ազատություն տվեց՝ մեկնել մոտակա Պոնտարլիե փոքրիկ քաղաքը, որսի գնալ, ճանապարհորդել, մի խոսքով, անել այն ամենը, ինչ նա կկամենա՝ չհեռանալով կոմս Սեն-Մորիսին վստահված տարածքից:

Միրաբոնի և Սեն-Մորիսի միջև հաստատվեցին բարի, նույնիսկ բարեկամական հարաբերություններ: Նրանք միեւնույն միջավայրի մարդիկ էին, հարցերի լայն մեկնաբանության մեջ բավականաչափ մոտ իրենց գազափարական պիրոբոլոյումներում. երկուսն էլ Լուսավորության կողմնակիցներ էին ու, թեև նրանց բաժանում էր տարիքային զգալի տարբերությունը, ճաշատեղանի շուրջ նրանց զրույցներն ընթանում էին աշխուժորեն և հաճելի ու հետաքրքիր էին երկու զրուցակիցներին:

Միրաբոն լիովին օգտվեց իրեն շնորհված ազատությունից: Նա շատ էր որս անում և հաճախ մեկնում Պոնտարլիե՝ լեռնեքում պատսպարված փոքրիկ քաղաքը. այնտեղ կար բնջամենը. շուրջ երկու հազար բնակիչ, որոնց թվում էին Սեն-Մորիսի երաշխավորած մի քանի ազնվական լավ սներ, այսինքն լուսավորյալ, բարեկիրթ և նուրբ ճաշակի տեր մարդիկ:

Պոնտարլիեի Միրաբոնին դիմավորեց վերին աստիճանի բարյացակամորեն: Պարզվեց, որ նա արդեն որոշ համբավ վաչկությամ էր սղնջվականական շրջաններում, թեև այդ նույն փառքի մեջ ի հայտ էր եկել ինչ-որ երկիմաստ բան: Ոչ միայն նախնիներից ժառանգած հարգանք վաչկոջ մեծահույսկ սնունդը, այլև երիտասարդ կոմսի կարճատու, անսովոր կենսազրույթունը նրա վրա ուշադրություն էին հրավիրում: Հետապնդումները, որոնց

նա ենթարկվում էր հոր, ինչպես նաև կառավարության կողմից (այդ մասին խոսում էին շշուկով), նրա մեկուսացումը Միրաբոյի սեփական ամբողջում, Մանուկում, ԻՖ, ժու ամբողջներում, նրա համար միայն ոսմանտիկության լուսապատկ չէ, որ ստեղծում էին. նրան քաջուն կարեկցում էին որպես անսնկ տուժածի, որպես դժման ժամանակների զոհի: Կանայր (հենց նրանք էին ձևավորում այսպես կոչված հասարակական կործիրը), ղեկ շտեպած երիտասարդ կոմսին, նրա նկատմամբ հետաքրքրություն և ուշադրություն էին ցուցաբերում: նրա սիրային արկածների մասին պատմում էին ամենաանհավանական պատմություններ, ճշմարտությունը խառնվում էր մտայածինի հետ. ամեն ինչ շափաղանցվում էր՝ նրա դրեթի սատանայական տղեղությունից մինչև հատուկ, հավանաբար նույնպես սատանայական, գույթակզություն ձիրքը: Մի խոսքով, նրան ուղեկցում էր XVIII դարի ծայրաստիճան վտանգավոր Դոն ժուանի փողը:

Երբ նա՝ հաղթանակով, ծանրամարմին, տղեղ, բայց երիտասարդ, քաղաքավարի, սրամիտ, ինքնավստահ այդ տղամարդը վերջնական երևաց Պոնտարիեի հյուրասենյակներում, տիկնայք անմիջապես եզրահացրին, որ նա հարյուր անգամ ավելի լավն է, քան նրա մասին պատմում էին: Միրաբոն Պոնտարիեի տրիստոկրատական վերնախավի ձեռքից ձեռք խլվող հյուրը դարձավ:

1775 թվականը երիտասարդ թագավոր Լյուդովիկոս XVI-ի թագադրման տարին էր, նրա, որն այն ժամանակ այնքան հույսեր էր արթնացրել և անսահման տոնախմբությունների առիթ տվել: Դրանցից ոչ մեկն առանց կոմս Միրաբոյի չէր անցնում: Դավառային փոքրիկ քաղաքում, ուր ամեն ինչ հայտնի է միմյանց, ամեն ինչ՝ ընդհուպ մինչև իրար հետ մրցակցող տիկնանց աշխատակի կնճիռների նկարագրների քանակը, խելացի, բարյացակամ այդ երիտասարդը, որ կարողանում է ինչ-որ կերպ բոլորին ծառայեցնել իր շահերին՝ նույնիսկ ծեր, մաղձոտ պարոններին, իսկույն դարձավ ընդհանուրի սիրելին:

Ճշմարիտ է, ոչ ժու ամբողջը, ոչ Պոնտարիե, ըստ երևույթին, արժանի չեն այն իդեալականացված, հիացական նկարագրություններին, սրտնց կարելի է հանդիպել գրեթե բոլոր այն ստեղծագործություններում, սրտնք շոշափում են Միրաբոյի կյանքի կարևոր փուլը՝ կապված աշխարհագրական այդ կետերի հետ: Բերդամաս ժուն այնուամենայնիվ ամբողջ էր, այլ ոչ թե հնա-

մենի գեղեցիկ դրչակ, և ամբողջ էր այդ բառի ամենադժամանակատու. արժե հիշեցնել, որ 1803 թվականին ժուում է դահվել այնտեղ բանտարկված Տուսսեն-Լուվերյուսը՝ 1791 թվականին Հաիթի կղզում ապստամբած նեգրերի ղեկավարը:

Բայց անվիճելի է, որ Միրաբոյի համար լիակատար աշխատությունը, որ նրան շնորհված էր ժուում և Պոնտարիեում, նախկին ԻՖ կղզում զրոսանքների համար նեղ, բերքապտրիստներով սահմանափակված շրջանից հետո, պետք է որ գրեթե անսահման թվար:

Միրաբոն դա հասկացավ չորսովի, նորից ձեռք բերված աշխատությունը ոգեբերեց նրան որոշակի գործելակերպի, և Պոնտարիեին իսկապես շրջադարձային սահման եղավ Միրաբոյի կյանքում:

Միրաբոյի բոլոր կամ գրեթե բոլոր կենսագրիչները, պատմելով Պոնտարիեում մեր հերոսի նեղ կատարված անցքերի մասին, խոսում են ամենից առաջ, իսկ մեծ մասամբ բացառապես, լակ Սոֆի Մոնիեի հետ ազմուկ հանած սիրավեպի մասին: Մա վերաբերում է և՛ մեր դարասկզբի այնպիսի ծանրակշիւ հեղինակների, ինչպիսին է փայլուն Լուի Բարտոն<sup>15</sup>, և՛ ախտեմիական Rouss-ին<sup>16</sup>, և՛ Միրաբոյի ամենավերջին կենսագրեւերին՝ Անտոնինա Վալենտինին<sup>17</sup> և Աննա ու Կյոզ Մանսերոններին<sup>18</sup>:

Միրաբոն իր ողջ նկարագրով, իր խառնվածքով, գրեթեակերպով շատ ավելի համապատասխանում էր նախահեղափոխական դարաշրջանին, այսինքն XVIII դարում հաճախակի նանդիսող այն մարդկանց տիպին, սրտնց այն ժամանակ նշում էին զովար թարգմանվող libertein բառով: Մա նշանակում էր, որ նա ամենին էլ ոչ սքեմավոր էր, ոչ պարկեշտ մարդ, որ նա սպրում էր այսօրվա կյանքով՝ չըրածարվելով և ոչ մի երկրային հաճույքներից, որ պատրաստակամությամբ, առանց խոտտրանություն տրվում էր ցանկացած սիրային ավանտյուրայի, չէր վախենում դիմել ոխակի, հեշտությամբ էր ներգրտվել մոտիվուս և վտանգավոր խաղի մեջ:

Այդ պատճառով նրա համեմատաբար կարճատև կյանքը (նա չորսից լրիվ մարդկային կյանք և մահուցով քառասուներկու տարեկան հասակում) յեցուն է անսահման ոսմանտիկ պատմություններով և տարաբնույթ, հաճախ շափաղանց վտանգավոր սիրային ավանտյուրաներով: Միրաբոյի դրանց մանրակրկիտ ոստմնափրություն մեջ կամ էլ, նույնիսկ, թեկուզև թվարելել Մի-

բարոյի «գոնծուանական» ցուցակները, որով զբաղվել են ոչ քիչ թվով հեղինակներ<sup>19</sup>, կնշանակեր նսեմացնել և աղավաղել Միրաբոյի գերբ որպէս քաղաքական գործչի: Լուսթյամբ շրջանցել զբանք, համարել դրանք որպէս թե գոյութիւն չունեցածներք՝ նույնպէս սխալ կլինեն, քանի որ առանց այդ արկածախնդրական պատմութիւնների Միրաբոն կրողարեք ինքն իրեն նմանվելուց և զբանցից մի քանիսը, ավելի ճիշտ, նույնիսկ շատերը, ուղղակի ազգեցութիւն գործելով նրա անսովոր ճակատագրի վրա, դրանով իսկ անտղղակիորեն ինչ-որ բանում բնորոշում էին նաև նրա քաղաքական զարգացումը:

Այսպէս ուրեմն, վերագառնալով 1776 թվականի առաջին կեսին Պոնտարլիեում իրադարձութիւնների ընթացքի անսպասելի շրջադարձի ընդհատված պատմութիւնը, պետք է, թեկուզև համառոտակի, վերականգնել գործի փաստական կողմը:

Ինչպէս արդեն ասվել է, Միրաբոն մինչև 1775 թվականի վերջը ամենաբարեկամական հարաբերութիւններ էր պահպանում ժուրի և Պոնտարլիեի պարետ կոմս Սեն-Մորիսի հետ, զգուշում էր նրա լիակատար վստահութիւնից և ժամանակի մեծ մասն անց էր կացնում ամբողջից դուրս:

Ո՞ւր էր գնում նա: Միայն Պոնտարլիե՞: Միայն որսի՞:

Ոչ, կարելի է ներկայումս լրիվ պարզված ու հաստատված համարել, որ խախտելով 1775 թվականի աշնանը Սեն-Մորիսի կողմից նրան տրված ուղղակի հրահանգները, նա մի քանի անգամ անլեզու անցել է սահմանը և ինչ որ ժամանակով մեկնել էվեյցարիա:

Ինչո՞ւ: Մենք այդ հարցին կանդրագառնանք փոքր-ինչ ուշ:

Այնուամենայնիվ, երբ Միրաբոյին հնարավորութիւններ էին տրվում լեզու կերպով հեռանալ ժուր ամբողջից, նա Պոնտարլիեի նահանգապետ Սեն-Մորիսի թուլտվութիւնամբ և անգամ, եթե կամենար, քաջալերանքով ազատ ժամանակն անց էր կացնում այդ փոքրիկ քաղաքում:

Հայտնի էր, որ նա բարեկամութիւն էր հաստատել թագավորական դատախազ Միշոյի հետ, հաճախ էր եղել նրա տանը: Ասեկոսեներ են վերագրվել և, միզուցե, ոչ առանց հիմքի, որ նա մոտ հարաբերութիւններ է հաստատել դատախազի երիտասարդ քրոջ, ոմն ժանետոնի հետ, որը մեծ նշանակութիւն էր ավել այդ եղելութիւնը՝ չգրավելով Միրաբոյի ո՛չ մտքերը, ո՛չ զգացմունքները: Պոնտարլիեի երեւելիների տներից մեկում, որ-

տեղ իրար խոսք կարելով կիսաբանտարկչային հրավիրել էին երեկույթների ու տոնախմբութիւնների, Միրաբոն ծանոթացավ դր Մոնիէ ամուսինների՝ խիստ տարեց (նա մոտ յոթանասուն տարեկան էր) մարկիզի, հարգարժան սենյորի, Գուլ քաղաքի հաշվիչ պալատի նախագահի և նրա երիտասարդ կնոջ Սոֆի դը Մոնիէի՝ ծննդյամբ դը Մյուլֆելի հետ: Միրաբոն մեծ տպավորութիւն գործեց ամուսինների, առանձնապէս սուր միտքն ու աշխույժ խոսքը գնահատող մարկիզ դը Մոնիէի վրա. նա եկվոր երիտասարդին համառորեն հրավիրում էր այցելել իրենց տուն:

Միրաբոն հրավերն ընդունեց՝ ոչ այնքան ի սեր ամուսնու, որքան ի սեր նրա կնոջ:

Սոֆի Մոնիէն, թեև արդեն չորս տարի ամուսնացած էր, 1775 թվականին, Միրաբոյի հետ ծանոթանալու ժամանակ ընդամենը բասնելիու տարեկան էր: Մարի-Թերեզ-Սոֆի Ռիշար դը Ռյուֆելը ծնվել ու դաստիարակվել է Բուրբոնդիայի ազնվականութեան թիկնոցի ամենալուսավորչալ և պատվարժան ընտանիքներից մեկում: Նրա հայրը՝ Դիժոնի հաշվիչ պալատի նախագահ, դը Բրոսսի, Բյուֆոնի մտերիմ ընկերը, որը հաճախ է այցելել «իրեն իսկ»՝ Վոլտերին, նպաստել է, ինչպէս ինքն էր ասում, Դիժոնի ակադեմիայում ժան-ժակ Ռուսոյին մրցանակ շնորհելուն, իր տանը ստեղծել էր գրական սալոն: Նրա սալոնում էին լինում երկրամասի բոլոր նշանավոր մարդիկ, որոնց շարքն էր դասում, բնականաբար, և իրեն՝ որպէս հեղինակ բազմաթիվ բանաստեղծութիւնների ու պոեմների, որոնք բարեկիրթ հյուրերն ի վիճակի էին լսել, բայց ամենայն ջանք ու եռանդ գործադրելով հանդերձ անկարող էին հիշել: Մի խոսքով, դա խիստ բարեկիրթ և լուսավորչալ տուն էր, որտեղ Սոֆին, հինգ երեխաներից կրտսերը, այն ժամանակվա ըմբռնումներով գերազանց կրթութիւն էր ստացել: Նա գրեթե անգիր գիտեր ժյուլիի և Մեն-Պրեի նամակները Ռուսոյի «Նոր էլիզբեց» և մեծ ժան-ժակի խանդավառ երկրպագուներից էր: Այս ամենով հանդերձ նա բնատուր խելք ուներ, ուժեղ բնավորութիւն, ամուր հոգու տեր էր՝ հատկութիւններ, որոնք նրա մեջ ննջում էին այնքան ժամանակ, քանի դեռ նա ապրում էր այնպիսի պայմաններում, երբ առօրյա կյանքի հանդիատ ընթացքը թույլ չէր տալիս նրան զանազանել, թե որտեղ է վերջանում ժան-ժակ Ռուսոյի վեհասքանչ, իղեալական կամ իղնալականացված աշխարհը և սկսվում ճղճիմ կյանքի առօրյան:

Նրա մայրը, հպարտ նրանով, որ ինքք ծննդյամբ և Ֆորե դր Մոնֆոր էր և պատկանում էր հին արիստոկրատական ընտանիքի, նույնպես պարծենում էր իր սկզբունքների խառնվածքը և այդ պատրվակով իր ձեռքն էր հավաքել ամբողջ տունը, ամուսնուն թողնելով պոեզիայի ցնորական ասպարեզը՝ ըստ էության կուլարար, թիչ բան հասկացող կին էր: Նա իր գլխավոր կոշումը տեսնում էր այն բանում, որ փառաբանի իր տունը և հանուն դրա իր ազդիկներին խաբեությամբ տալիս էր բոլոր նշանավոր ծերունիներին: Մոֆին գեռ տասնհինգ տարեկան էլ չկար, երբ մայրը ճգնում էր նրան կնության տալ ամուրի Բյուֆոնին: Բայց նշանավոր բնախույզը բավականաչափ խելամուռն էր ցուցաբերեց նրան արված պատիվը չընդունելու համար:

Տիկին զր Ռյուֆեյ-Մոնֆորը, ինչպես նա սիրում էր երբեմն իրեն անվանել, հավատարիմ մնաց իր սեեռուն գաղափարներին և շուտով կրտսեր ողջկան (բնականաբար, շնորհներով նրա կարծիքը) ամուսնացրեց մարկիզ զր Մոնիեի հետ: Հիսուն տարի մեծ լինելով Մոֆիից և շունենալով այնքան նշանավոր անուն, ինչպես Բյուֆոնը, վերջինիս համեմատ նա ունեւր այն առավելութունը, որ անհամեմատ ավելի հարուստ էր բնախույզից և աչքի էր ընկնում առավել համակերպվող բնավորությամբ:

Մոֆիի և Միրարոյի միջև մերձեցումն այնպես արագ շերնթանում, ինչպես նախկին բոլոր նման դեպքերում: Նրանք հաճախակի և երկար զրուցում էին, նամակներ փոխանակում, խոսում ինչ-որ դատարկ բաների մասին: Սա միմիայն սիրահարվածներին հասկանալի խոսակցութուն էր, առաջին հայացքից աննշան թվացող բաների՝ թիկու տերևի այնքան նման և ամեն անգամ այնքան տարրեր հինգանկյունների կամ էլ ինչ-որ նման, իրական նշանակութուն չունեցող, բայց զրուցակիցների համար հատուկ իմաստ ստացած երևութների մասին: Որոշ նախանշաններից, այն բանից, թե ինչպես կենդանանում և պայծառանում էր նրա ղեմքը, երբ ինքք մտնում էր սենյակ, այն բանից, թե ինչպես դանդաղ, աստիճանաբար փայլատակում էին նրա աչքերը՝ Միրարոն հասկացավ, որ սա կլինի ոչ թե պարզապես ճանապարհային պատահար, այնպիսի խարդավանիչ, որի մասին հետո, հորանջելով հանրակազմում նա կհիշի մեկ վայրկյան, որպեսզի այնուհետև ընդմիշտ մոռանա, այլ

ինչ-որ բռնորովին ուրիշ, նրա կյանքում նմանը չեղած, շպատառած մի բան:

Ձգալով այդ, Միրարոն վախեցավ և, միգուցե, առաջին անգամ կյանքում, փորձեց խուչս տալ վերահաս սիրուց:

Նա դադարեցրեց իր այցելութունները Մոնիեների տուն, խուսափում էր նրանց հետ հանդիպելուց: Նա սկսեց որոնել փրկարար որոշումներ իրեն դարանակալած վտանգներից, թվում է թե, ամենահասարակ և բնական ճանապարհի վրա: Չէ որ նա տեի կլին, որդի, ընտանիք: Ասաված իմ, ինչո՞ւ իրենք նորից չմիանան: Անցյալի վրա խաչ է բաշված: Ինչո՞ւ հիշել նրա մասին:

Նա էմիլիին բնքշալից նամակ գրեց: Նա հրավիրում էր նրան գալ Պոնտարիեի, իր մոտ, փոքրիկ որդյակի հետ միասին: Կամ, միգուցե, միասին մեկնեն արտասահման: Գլխավորը կըրկին ընտանիքը վերականգնելն էր: Կյանքը կարելի էր նորից վերսկսել:

Էմիլիին ամուսնուն պատասխանեց արագ, բայց չոր և սառը, ինչպես միշտ խուսափելով ուղղակի պատասխանից: Այնուամենայնիվ նա հասկացնել տվեց, որ հակում չի ցուցաբերում ընդունելու նրա առաջարկութուններից և ոչ մեկը: «Սա պետք է խոստովանեմ, որ Ձեր վերջին նամակում պարունակված առաջարկութունը ինձ այնքան դժվարին կացության մեջ դրեց, որ ես չգիտեմ ինչպես պատասխանել Ձեզ, որպեսզի բացատրեմ դրա իրականացման անհնարինութունը: Սա Ձեզ չեմ թվարկի այն բոլոր անթիվ անհարմարութունները, որոնք առավել քան բավական են Ձեր պլանների գործնական իրականացմանը խոչընդոտելու համար»<sup>20</sup>:

Եվ հետո այդ նույն սառը խրատական տոնով նա բացատրում էր, որ նա լուր առաքինի կյանքի ճանապարհին կանգնելով կարող է իրեն վերագործնել հոր բարեհաճութունը:

Կարգալով իր կնոջ, ավելի ճիշտ, իր նախկին կնոջ նամակը, Միրարոն արտասանեց մի նախադասութուն, որը հետո հաճախ էին բրտնամած կրկնում. «Իմ սխալն այն էր, որ ես պտուղ էի սպասում մի ծառից, որն ընդունակ էր միայն ծաղիկներ տալ»: Էմիլին ընդմիշտ պետք է ջնջվի իր կյանքից:

1775 թվականի հոկտեմբերին պարոն զր Մոնիեի հրավերով Միրարոն նորից այցելեց նրանց տուն և վերստին տեսավ Մոֆիին:

Գեկտեմբերին, մեկ և կես ամիս անց, այն, ինչի ներանք Երկուսով ձգտում էին և որից, թեև տարբեր շարժառիթներով երկուսն էլ վախենում էին, կանխատեսելով անհամար Բռնչն-դոտների դեպի իրենց երջանկություն տանող ճանապարհին՝ կատարվեց:

Բայց պատահեց այնպես, որ միաժամանակ կամ գրեթե միաժամանակ երկու երեք շաբաթ անց Սոֆիի հետ մտերմանալուց հետո կատարվեց Միրաբոյի և Սեն-Մորիսի կապերի խզում, իսկ այնուհետև փախուստ ժու ամբողջից: Կարճ ժամանակվա ընթացքում Միրաբոն երկու անգամ կուստորեն խախտեց թագավորության օրենքները և բոլորի կողմից հարգված Պոնտարիևի լավագույն տներին համար ցանկալի նշանավոր Հյուսիսի վերածվեց փախստականի, ոստիկանության կողմից որոնվող հանցագործի:

Սոֆի դր Մոնիեն ճաշակեց ո՛չ միայն տարանջատ սիրո հաճույքը. նրա կանացի անզոր ուսերի վրա առաջին իսկ օրից ընկավ և ամենաղաժան փորձությունների անողոր ծանր բեռը:

## XI

Օնորե դը Միրաբոյի և Սոֆի դը Մոնիեի նշանավոր սիրավեպն իրադարձությունների իր անսովոր շրջադարձերով, անհավանական արկածներով, բախումների դրամատիզմով, վերջապես, վաղուց արդեն չհանդիպած փոխադարձ սիրո ուժով, որ հաղթահարել էր բազում խոչընդոտներ, այնպես ցնցեց XVIII դարի Ֆրանսիան, որ ռեալ, շատերին հայտնի անձնավորությունների այդ իրական պատմությունը ժամանակակիցներին միգուցե ավելի շատ էր գրավել, քան սուպետ դը Գրեի և Մանոն Լեսկոյի պրական պատմությունը՝ արբա Պրեվոյի այն ժամանակ բացառիկ հռչակ ձեռք բերած վեպում:

Այդ սիրավեպի նկատմամբ Միրաբոյի ցուցաբերած անսովոր հետաքրքրությունը որոշ շափով բացատրվում է և նրանով, որ նշանավոր արիքունը իր բուռն կյանքի և ոչ մի այլ իրադարձության վրա աչքբան ուշադրություն չի դարձրել: Սոֆի Մոնիեի սիրավեպին են նվիրված հեռամահու հրատարակված նրա երկերի ժողովածուի<sup>21</sup> երեք հատորը և մի շարք ժողովածուներ: Վերջապես, այդ մասին բազմաթիվ երկեր են դրված:

Բայց երկու սիրող էակների այդ անվեհեր պայքարի գերադասեապես ուժանակի և մեծ մասամբ արտաքին կողմի նկատմամբ առանձին ուշադրության հետևում աննկատելիորեն սովերիտակ անցան, իսկ հետո գրեթե լիովին անհետացան շատ բաներում անսովոր այդ պատմության մի քանի կարևոր կողմեր:

Զե՞ որ Սոֆի Մոնիեի հետ սիրավեպը շուտով երկու հերոսների համար էլ ծայրաստիճան սուր բնույթ ընդունեց ո՛չ ինքնին. մի՞թե ամուսնացած տիկնանց հետ անհավատարմության բիշ գիպեր են երկար տարիներ շարունակվել XVIII դարի Ֆրանսիայում (և, միգուցե, ոչ միայն XVIII), էպպես յսախտելով այդ յուրօրինակ Լուանկյունու մասնակիցների ոչ երջանկաթյունը, ոչ էլ հանգստությունը: Սիրավեպը դրամատիկական դարձավ այն պահից (այն վրա հասավ, ճիշտ է, բավականին շուտ), երբ կոմս Սեն-Մորիսը 1776 թվականի հունվարի 1-ին սեղի ունեցած բուռն ընդհարման ժամանակ Միրաբոյին հայտնեց, որ վերացնում է բանտարկյալին շնորհած բոլոր արտոնություններն ու ազատությունը և նրան պարտավորեցնում է հնթարկվել կալանավորի ռեժիմին: Միրաբոն Սեն-Մորիսից խոնարհաբար թույլտվություն խնդրեց վերջին անգամ ներկա գտնվել թաղավորի պատվին հունվարի 14-ին կազմակերպված դիմակահանդեսին: Նա հանդապետը ողորմածաբար բնդառաջեց նրան:

Հունվարի 14-ի դիմակահանդեսը իսկապես Միրաբոյի համար զարձավ վերջինը, բայց լոկ այն պատճառով, որ նա չվերադարձավ ժու ամբողջ. նա փախավ:

Այստեղ մենք ընդհուպ մոտենում ենք այն հարցին, թե ի՞նչն էր կոմս Սեն-Մորիսի և նրա գերու պառակտման պատճառը, որի նկատմամբ նա առաջ բարեհաճ էր, և ի՞նչը ստիպեց Միրաբոյին փախչել ժու ամբողջից:

Ինքը Միրաբոն հետագայում շատ անգամ է բացատրել ժուի և Պոնտարիևի պարետի հետ պառակտման և այնուհետև դրան հաջորդած ամբողջից փախուստի պատճառները, համառորեն կրկնելով, որ երկու փոխադարձորեն բարեկամաբար տրամադրված մարդկանց պառակտման միակ իրական պատճառը եղել է Սեն-Մորիսի հայտնի դարձած նրա գերու սիրավեպը մարկիզի Սոֆի դը Մոնիեի հետ: Կոմս Սեն-Մորիսը, բայց Միրաբոյի մեկնակերպի, իբրև թե վաղուց ի վեր անտարբեր չի եղել

տիկին զը Մոնիեի նկատմամբ, և նրան համակած խանդի զգացումն է հուշի սկզբում շարակամ, թշնամական նամակներ գրելու նրա հորը՝ մարկիզ զը Միրաբոյին, իսկ հետո, 1776 թվականի հունվարի սկզբին պատժիչ, խիստ սահմանափակող սեփմի դատապարտելու իր գերուն ժու ամբողջի նեղ սահմաններում<sup>22</sup>:

Բայց այս մեկնակերպի անկայունությունը, հիմնավորված չլինելը լիովին ակներև է: Շուրջ հարյուր տարի առաջ դրա վրա ուշադրություն է դարձրել Շառլ զը Լամենին, հաջողությամբ շարունակելով իր հոր գործը:

Միրաբոն մատնացույց էր անում կոմս զը Սեն-Մորիսի՝ իր կիսագերու նկատմամբ վերաբերմունքի մեջ կարուկ փոփոխությունն այս ոչնչով չհաստատվող փոփոխությունների շարժառիթները ոչ թե մուրրություն պատճառով, ոչ թե այն պատճառով, որ ինքն էր ենթադրում այդ հավանականությունը, այլ այն բանի համար, որպեսզի թարցնի ժուի և Պենարլիեի պարետի ծայրահեղ դժգոհության իսկական պատճառը. այս իրական պատճառի հրապարակումը նրա՝ Միրաբոյի համար այն ժամանակ, այսինքն մինչև հեղափոխությունը, շափազանց անցանկալի էր:

Արդ վերադառնանք նախկին հարցադրմանը՝ ինչո՞ւ, հանուն ինչի՞ խախտելով օրենքները, Միրաբոն 1775 թվականին մեկնեց Շվեյցարիա:

Ժամանակն է, վաղուց ժամանակն է էսկան ճշգրտումներ մտցնել մեր հերոսի այն կերպարի մեջ, որը մինչև այժմ ձևավորվել է փաստերի գումարից, նրա մասին բոլոր պատմածներից՝ անսանձ, սահմաններ չունեցող մարդու, շուայիչի ու անխնա մսխողի, անառակի ու տրկածներ որոնողի, լուսավորչալի, կրթվածի ու լկտի սրամտությունից ոչ գուրկ էպիկուրականի կերպարի՝ մի խոսքով, երիտասարդ արխատոկրատի, որն առավել լիակատարությամբ է մարմնավորում իր կաստայի բոլոր դասային գծերը:

Պե՞տք է, արդյոք, փնտրելի այն կերպարը, որն ակամայից ձևավորվում է մեր պատկերացման մեջ Միրաբոյի մասին: Հավանաբար, ոչ նշված թերությունները հատուկ էին նրան, ինչպես և ֆեոդալական ավագանու շատ ուրիշ ներկայացուցիչների: Ճիշտ է, չպետք է մոռանալ, որ չուրաքանչյուրն այդ թերությունների մեջ մտնում էր իր սեփական, անկրկնելի գծերը:

Բայց կերպարն իր ամբողջ հակասականությամբ հանդերձ ճիշտ հասկանալու, Միրաբոյի հետագա դերը ճիշտ գնահատելու համար չպետք է աշքաթող անել և մոռանալ, որ բացի կոմս Օնորե Կաբրբել Ռիքետտի զը Միրաբոյի նույնիսկ որոշ խորխտանքով իր ցույց դրված ազատ և, ավելացնենք, թեթևասլիկ կյանքից կար նաև նույն Միրաբոյի երկրորդ, գաղտնի, կողմնակի աչքից խնամքով թաքնված, ընդհատակյա, անլեզալ կյանքը:

Ո՞ր ժամանակվանից է այն սկսվել: Իր տեղում դա նշված էր ստույգ՝ 1774 թվականից, այն օրվանից, երբ նա սկսեց գրել «Փորձ բնակալության մասին» երկը:

Մեր պատումի մեջ, այն բանից հետո, երբ շարադրված էր, թե երբ և հանուն ինչի Միրաբոն գրեց իր առաջին քաղաքական աշխատությունը, մենք պրա՛ մասին այլևս չհիշեցինք: Իսկ Միրաբոն՝ Չէ որ նա չէր կարող մոռանալ այն:

«Փորձ բնակալության մասին» երկը Միրաբոյի համար ոչ թե գրական զվարճանք էր և ոչ էլ գրելու փորձ ազատ թեմայով, դա քաղաքական սյալքարի ակա էր:

Միրաբոն (իր տեղում արդեն այդ մասին խոսվել է) միանգամայն գիտակցաբար, համոզմունքով պալքարի մեջ մտավ բուն ալալության դեմ: Իր երկում, վատ թե լավ, նա իր համաքաղաքացիներին համոզում էր դործուն կերպով պալքարել բրունապետության դեմ, կանգ չառնել բունության առաջ, որպեսզի իշխանությունը խլեն բունակալներից:

Այս ամբողջ հայացքները, փաստարկների ամբողջ համակարգը ժողովրդին հասցնելու, որն է մեկին պալքարի դրդելու համար՝ անհրաժեշտ էր, որ ձեռագիրը փոշով չծածկվեր հեղինակի գրասեղանի գաղտնի արկղում, հարկավոր էր, որ այն կարդացվեր և, հետևաբար, ավելի շուտ տպագրվեր:

Բայց ինչպե՞ս աներ այդ: Չէ որ դա դժվար էր, հասկապես մի մարդու համար, որը գտնվում էր ոստիկանության հսկողության տակ:

Արդյոք Միրաբոն փորձե՞լ է նախկինում հրատարակել իր ձեռագիրը: Արդյոք նա ձևանարկե՞լ է որևէ կոնկրետ քայլ:

Այս հարցերին ստույգ պատասխան չկա և հավանաբար չի կարող լինել, բանի որ պատմաբաններն իրենց տրամադրություն տակ աղբյուրներ չունեն:

1775 թվականին ընկնելով ժու ամբողջ և Պենարլիե, Շվեյցարիայի սահմանագլխին, և օգտվելով Սեն-Մորիսի կողմից

իրեն տրված բավականաչափ լայն ազատութունից, Միրաբոն, բնականաբար, պետք է փորձեր օգտվել այդ հնարավորութուններից: Շվեյցարիա նրա գաղանի ուղևորութուններին նպատակն էլ հենց հրատարակիչների հետ բանակցութուններն էին՝ իր «Փորձ բռնակալության մասին» ձեռագրի հրատարակման մասին:

Արդոյք այդ մասին գիտե՞ր Սեն-Մորիսը: Սկզբում, իհարկե, ոչ: Բայց, որպես սահմանաչին գոտու նահանգապետ, նա ուներ իր գործակալութունը, և, ըստ երևույթին, դեկտեմբերի վերջին նա սկսեց տեղեկութուններ ստանալ Միրաբոնի Շվեյցարիա կատարած ուղևորութունների մասին (որը բուրբ հանգամանքներում արդեն իսկ անլեզալ, անօրինակուն գործողութուն էր), իսկ հետո, հունվարի սկզբներին, ստացավ ուղղակի վավերացված փաստաթղթեր այն մասին, որ այդ ուղևորութունների նպատակը հակակառավարական աշխատությունների հրատարակումն էր:

Սեն-Մորիսը չիրերալ էր և լուսավորչալ մարդ. նա հաճույքով էր մի բաժակ սուրճի սեղանի առջև Միրաբոնի հետ միասին հիանում ժան-ժակ Ռուսոյով և սկզբունքորեն դատապարտում բռնակալութունը: Ժամանակակից կրթված մարդու համբավ ունեցող ո՞ր ազնվականը կհանդգնեք բռնակալության կողմնակից հայտարարել իրեն:

Կոմս Սեն-Մորիսը թագավորության սահմանաչին մասի նահանգապետն ու զորապետն էր. նա այստեղ ներկայացնում էր թագավորի իշխանությունը և կոչված էր պաշտպանել նրա շահերը: Նա չէր կարող հանգուրժել, որ իր խնամքին վստահված հսկողության ենթակա անձը իր քթի տակ գաղտնի, Տրանսիայի սահմաններից դուրս գլուխ բերեր հակակառավարական գրքերի հրատարակումը:

Այդպիսի բաների համար ինքը՝ նահանգապետ Սեն-Մորիսն էր առաջին պատասխանատուն: Տիկին դը Մոնիեն նրան, իհարկե, ոչ մի կողմով չէր հետաքրքրում: Բայց ծառայության գծով ունենալ տույժ կամ որևիցե մեկից բարոզներ լսել և ըստ որում լույ, որովհետև նա իրոր որ շափազանց շատ ազատություն էր տվել իր կիսակալանավորին, նա նույնպես չէր ուզում:

Երբ նա ակտիվորեն միջամտեց և փորձեց կանխել Միրաբոնի «հանցավոր գործողությունները», արդեն ուշ էր:

«Փորձ բռնակալության մասին» երկի հեղինակն արդեն հասցրել էր պայմանավորվել հրատարակիչների հետ: 1776 թիվականին գիրքը (հասկանալի է, անստորագիր) լույս տեսավ: Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան ՄՍՀՄ պետական գրադարանում պահպանվում է 1776 թվականի հրատարակությունը՝ Լոնդոնի նշանով<sup>23</sup>: Արդոյք դրան նախորդե՞լ է շվեյցարական հրատարակությունը, թե՞ Լոնդոնը նշված է եղել միայն քաղաքից: Համար, ինչպես դա հաճախ կիրառվում էր այն ժամանակ՝ առայժմ ինձ պարզել չի հաջողվել:

Բայց սա արդեն մասնավոր հարց է, որը հետաքրքրություն է ներկայացնում հետազոտողների համար և հազիվ թե փոխի ընդհանուր իրազրութունը:

Հենց այստեղ, Միրաբոնի ընդհանուր կենսական էվոլյուցիայի բնորոշման մեջ, առավել կարևորը միանգամայն անվիճելի հավաստումն է այն բանի, որ բեկումն ապագա արիբունի կենսագրության մեջ, նրա պառակտումը Սեն-Մորիսի հետ, փախուստը ժու ամբողջից, անցումն անլեզալ դրության և այլն, պայմանավորված էին ոչ թե Սոֆի դը Մոնիեի պատճառով առաջացած մրցակցությամբ, ինչպես Միրաբոն էր փորձում հավատացնել իր ժամանակակիցներին (և ինչպես դա ընդունեցին նրա շատ կենսագիրներ), այլ ավելի խոր՝ քաղաքական պատճառներով, որոնք իրենց բուն բնույթով անհաղթահարելի էին:

Այդ անփույթ ու անհոգ իվացող խրախճասերը գործնականում ավելի բարդ էր, քան թե նա ներկայանում էր իրեն ճանաչողների մեծ մասին: Արկածները, գծաութունները, կանաչք, սրսը, թղթախաղը, պարտքերը՝ ամեն ինչ մնում էր: Բայց այս ամենի հետևում, ինչ-որ տեղ ընդհատակում, հուսալիորեն թաքնված անիրագրեկ մարդկանցից, նշողվում էր միզուցե նրա համար ամենակարևոր հույսը՝ շարունակել այն ուղին, որին զինվորագրվել էր, բռնակալության ուժերի դեմ քաղաքական պայքարի ուղին:

## XII

Երբ մարկիզ դը Միրաբոնին հասան կոմս Սեն-Մորիսի զայրույթից նամակները նրա ավագ որդու նոր արարքների մասին, նա իր մտերիմների և անգամ պաշտոնատար անձանց հետ խոսակցությունների ժամանակ փորձում էր նրան ներկայացնել որպես

խելագարի Շատ հնարավոր է, որ դա ոչ միայն հետադարձական հնարք էր, այլև մտածված տակտիկական քայլ՝ նախանշված հետոն գնացող հետևանքներով. ինչպես և կհուշ դեմ ուղղված դատի ժամանակ, նա ձգտում էր իրավաբանական որակագրկման ենթարկել, ինչպես իրեն էր թվում, վտանգավոր դարձած անձնավորություններին:

Երկու դեպքում էլ նա անհաջողություն կրեց:

Մտորհ Միրաբոյի փախուստն ամբողջից ամենևին էլ խելահեղություն կամ ծայրահեղ թեթևամտության ակտ չէր, որը հասնում էր խելագարության: Արժև խորհել այն հարցի շուրջ, թե ինչո՞ւ երիտասարդ Միրաբոն ժու ամբողջի փոխազ 1776 թվականի հունվարին, այլ ոչ թե ավելի առաջ՝ ԻՖ ամբողջից, կամ Մանտակից, կամ Միրաբոյի ղզյակից: Զէ՞ որ ժու ամբողջում լիբերալ Սեն-Մորիսի հսկողության ներքո նա ապրում էր լիովին ազատ-արձակ: Նա զրգոնց պարենոի դժգոհությունը, ցանկության դեպքում կարելի էր նորից հաշտվել նրա հետ, շահել նրա վստահությունը: Իսկ ինչո՞ւ այդ ոչ այնքան ծանր և անհեռանկար իրադրության մեջ նա վճռեց զիմել անյեզայ դրության սխեմին ու վտանգներին:

Միրաբոյի կենսագիրները համախա այդ քայլը բացատրում են Սոֆի դը Մոնթեի նկատմամբ ունեցած նրա ամենակույ սիրով: Անվիճելիորեն հնարավոր չէ բացառել նրա հափշտակվածությունը Սոֆիով. առաջին անգամ կնոջ նկատմամբ սերը նրան կլանել էր ամբողջովին: Բայց ամենապարզ հաշվարկն անգամ ցույց էր տալիս, որ, պահպանելով բոլորի կողմից հարգված կիսաբանտարկյալի դրությունը և գազանի կամ թեկուզև կիսագազանի պահելով իր ժառանգությունը Սոֆիի հետ, նա վերջինիս ազատում էր անհամար գծավորություններից ու ստորացումից և նույնիսկ հնարավորություններ էր ստեղծում հանդիպումների համար: Նա անսխտում էր այդ ամենը և նետվում անթիվ-անհամար վտանգներով հզի անհայտության գիրկը: Ի՞նչն էր նա հնարավոր համարում, ինչի՞ վրա էր հույսը դրել:

1774 թվականի ամռանից Ֆրանսիան թեկուզեց խոշոր փոփոխությունների ժամանակաշրջան: Լյուդովիկոս XVI-ի գահ բարձրանալը միապետների սովորական փոխադրում չէր: Նոր թագավորը Երկրում ամենալայն հույսեր արթնացրեց ոչ թե այն պատճառով, որ նա երիտասարդության իսկական ժառանգումն էր (նրա երեսուն տարին էլ զեռ չէր լրացել), այլ այն պատ-

ճառով, որ իր առաջին քայլերով ապագայում դեպի լավը կատարվելիք փոփոխությունների վստահություն էր ներշնչում: 1774 թվականի մայիսի 30-ի առաջին հրամանագրով նա հրամարվեց թագավորության ավանդույթով իրեն հասանելի քանչուս մելիոնից: Գրանից անմիջապես հետո Մարիա-Անտուանետ լազուհին ևս հրաժարվեց իրեն հասանելի խոշոր գումարից:

Վաղուց արդեն ոչ մի պետական փաստաթուղթ նման համբողջանուր հավանության չէր արժանացել: Բոլորը փառաբանում էին նոր, մեծահոգի և արդարամիտ միապետին և սպասում վաղուց հասունացած ռեֆորմների, ամենից առաջ նախկին թագավորության ատելի կառավարիչների՝ վարչապետ Մոպոտի և մինիստր պրբա Տերեի վոնդամնը իրենց պաշտոններից: Թագավորը չէր շապարտ. արդեն թագավորելու առաջին օրերից ի նախ եկան նրան հատուկ դանդաղիտությունն ու անվճարակաությունը: Բայց շուտուրի 25-ին հրապարակվեցին հրամանագրեր Մոպոտին և Տերեին պաշտոնազրկելու մասին: Այդ շուրջ բնորոշվեց ժողովրդական ցնծությունը: Փարիզում, Ռեանում, մյուս բազմաքնի հրապարակներում աչրում էին Լյուդովիկոս XV-ի, թագավորության ատելի մինիստրների և ամենազոր Գյուրարիի խրովիլիաները:

Գրեթե միաժամանակ ֆինանսների պետական հսկիչի պաշտոնին հրավիրվեց տնտեսագետ ֆիզիկոստեների դպրոցի ամենահեղինակավոր լիդերներից մեկը՝ Անն-Ռոբեր-ժակ Տյուրգոն: Պետական նոր հսկիչը տնտեսագետների դպրոցի ղեկավարներից (Ֆ. Կենեից, Միրաբո ավագից և մյուսներից) տարբերվում էր ոչ միայն նրանով, որ նրա տեսական աշխատություններում անհամեմատ ավելի հետևողականորեն էին նշմարվում զուտ բարձրական հայացքները, այլև իր բուն խառնվածքով. նա ոչ միայն, ավելի ճիշտ, նույնիսկ ոչ այնքան տեսարան էր, որքան պետական գործիչ, գործունյա անձ: Համարյա տասնինեղ տարի նա ինտենդանտ էր Լիմուզենում և այդ տարիներին գավառում սուսագործական բնույթի այնքան ռեֆորմներ անցկացրեց, որ դրանց մասին խոսել սկսեց ամբողջ երկիրը: Գրավելով ֆինանսների ղլխավոր հսկիչի պաշտոնը, նա այդ նույն անսպասուհանդով տարվեց պետական լայն վերակառուցումներով: Մարբը նրա մասին գրել է. «Տյուրգոն հանդես եկավ որպես բազմակալ բարձրական մինիստր, որի գործունեությունը ֆրանսիական հեղափոխության ներածությունն էր»<sup>24</sup>:

1774 թվականին Տյուրգոն դեռևս հիսուն տարեկան չկար, նա սգևորված էր լայն վերակառուցումների գաղափարներով և տիրապետում էր հսկայական դինամիկ ուժի: Նրա հայտնվելը ֆինանսների գլխավոր հսկիչի պաշտոնում պահանջում էր կառավարական ղեկավարության փոփոխություն ամբողջությամբ վերցրած: Իշխանության գլուխ անցան նոր մարդիկ: Ամենաազդեցիկ մինիստրներից մեկը զարծավ հայտնի լուսավորիչ և Ռուսոյի բնկեր Կրետիեն-Դիյոմ Մալերբը զը Լեմուանիոն, որը, ինչպես և Տյուրգոն, լի էր ֆրանսիական թագավորության սոցիալական արձատրության անելու վճռականությամբ: Երկրում սկսվեց նոր, լիբերալ դարաշրջան:

Օնորե զը Միրբաբոն տեղյակ էր այս նոր հասարակական փոփոխություններին: Դրանում ամենաանընչան կասկած անգամ չի կարող լինել: Սոցիալական և քաղաքական պրոբլեմների նկատմամբ սուր շահագրգռության պարագայում «Փորձ բնականության մասին» երկի հեղինակը պետք է որ սևեռոն ուշադրությամբ հեռուներ ֆրանսիայում տեղի ունեցող իրադարձությունների զարգացմանը: Նա իրեն, և որոշակի հիմքով, «Լուսավորության կուսակցության» շարքն էր դասում: Գաղափարապես այդ կուսակցությունը մոտ էր իրեն, նրան պետք է որ իմանային և՛ Տյուրգոն, և՛ Մալերբը (Մալերբի հետ նա ուղղակի կապ հաստատեց): Միրբաբոն կարող էր հուսալ նրանց աջակցությանը:

Մի խոսքով, նրա փախուստը ժու ամբողջից բոլորովին էլ խելահեղության, անխոհեմության, շմտածված, ինքնաբերական քաջ չէր: Ավելի շուտ, բնդհակառակը, այն մտածված և ժամանակի տեսակետից որոշ չափով կանխամտածված քաջ էր: Գործելով այդպես, Միրբաբոն անկասկած հույս ուներ հասնել lettre de cachet («գաղտնի հրամանի») վերացմանը, որը նրան բաղահայտորեն անհամատեղելի էր թվում Տյուրգո-Մալերբ և ֆորմների կառավարության լիբերալ-բուրժուական, լուսավորյալ, ինչպես այն ժամանակ էին ասում, կուրսի հետ:

Նույնիսկ այդ մանրամասնություններում Միրբաբոն գրեթե քաղաքական միջոցառման ճիշտ հոտառություն: Մալերբն իսկապես, պրաիկով պետական քարտուղարի պաշտոնը, որոշեց առաջին հերթին արմատախիլ անել որպես անսահմանափակ կամայականության խայտառակ մնացուկ, ամեն մի օրինական հիմքից զուրկ lettre de cachet-ի պրակտիկան: Նա իր աշխա-

տակիցներին հրամայեց իրեն ներկայացնել ըստ «գաղտնի հրամանների» բոլոր կայանավորների կամ ուստիկանություն հսկողության սակ գտնվողների լրիվ ցուցակը և մանրակրկիտ քննության ենթարկել յուրաքանչյուր գործ: Վերջին հաշվով նա նկատի ուներ ազատել բոլորին, իսկ «գաղտնի հրամանների» բուն համակարգը լիովին բացառել թագավորության պետական պրակտիկայից՝ որպես անհամատեղելի նոր, լուսավորյալ դարին:

Միրբաբոն Պոնտարլիեի նման հեռու ու հեռ ընկած տեղում լուրիվ թե կարող էր իմանալ մինիստրի այս կոնկրետ գործողությունների մասին: Բայց նա ճիշտ ենթադրեց, որ Մալերբը պետք է թշնամի լինի կամայականության քաղաքականությանը, որ տիրում էր նախկին թագավորության ժամանակ: Նա Մալերբին ուղարկեց մի ընդարձակ ուղերձ, որում թվարկելով այն բանությունները, անօրինականությունները, որ իր գլխին էին թափվել պատանեկան տարիներից, պահանջեց վերականգնել սրբարությունը:

Միրբաբոնի հաշիվները ելակետային գրություններում ճիշտ էին: Բայց նա չէր կարող կանխատեսել, թե դրանցում ինչ ուղղումներ կմտցնի կյանքը:

Իրադարձությունները զարգանում էին սրենթաց: Մոտավորապես մեկուկես ամսվա ընթացքում Միրբաբոնի հաշուվեց թարնվել մարկիզ զը Մոնիեի տանից ոչ հեռու գտնվող մի փոքրիկ սենյակում: Նրա վիճակը աննախանձելի էր: Նա ամբողջապես կախման մեջ էր Սոֆիի ծառաներից, որոնք նրան սնունդ էին բերում և պահպանում կողմնակի աչքերից: Սոֆիին հազվադեպ էր հաշուվում հանգիպել նրան:

Բայց այդ փոքրիկ սենյակը միակ խաղաղ կղզյակն էր փոխարկված ծովում: Պոնտարլիեն վրդովված էր աննախադեպ թվացող սկանդալից: Բամբասանք կանայք առավոտից մինչ կրկն միմիայն քննարկում էին անհավանական անցքը, որ կատարվել էր իրենց պարկեշտ քաղաքում: Կոմս զը Միրբաբոն անհետացումը բացահայտ աղգարարված կապի հետևանքով մարկիզուհի զը Մոնիեի հետ, որը չէր կարողացել և չէր ցանկացել թարքնել իր մտերմությունը ժու ամբողջի նշանավոր բանաստեղծի հետ, ամենաանհավանական մեկնություններ ու անլիոն ենթադրություններ էր ծնում: Վերջիվերջը սիրահարների գուպտի ժամագրությունների վայրը ծառաների միջոցով այ-

նուամենայնիվ իմացվեց: Մարկիզուհի դը Մոնիեի առջև փակվեցին Պոնտարլիեի բոլոր ազնվականական տների ղոները: Նա հայտնվեց լիակատար մենսեֆյան մեջ՝ շրջապատված բնդհանուր ատելութեամբ: Արիստոկրատական երեսպաշտութունն իր օրենքներն ուներ: Եթե ամուսնացած մարկիզուհու կապը ամուսնացած կոմսի հետ պահպանվեր արտաքին պաշաճութեան սահմաններում, բուրյն էլ զու կհամարեին որպես ընդունված կարգ: Բայց տվյալ դեպքում բոլորի կողմից ընդունված վարքագծի խախտումը կատարվել էր բացահայտ: Սոֆի Մոնիեի համար սկզբիցին ծանր ժամանակներ:

Ինչպես լինում է նման դեպքերում, ամբողջ քաղաքն անհանգստացնող անցքերի մասին մերթի իմացողը խաբված ամուսինն էր: Մի քանի շաբաթների բնթացքում մարկիզ դը Մոնիեն դանդաղած հոգոց էր հանում՝ այդ ինչու՞ աչքան երկար ժամանակ հարգարժան կոմս դը Միրաբոն մեզ մոտ չի գալիս: Սոֆին տարակուսանքով ուտերն էր թռթկում:

Միրաբոն, որին ձանձրացրել էր հարկադրական մեկուսացումն անհրապույր սենյակում, օրերից մի օր հանդգնեց բացահայտ կերպով երևալ պարոն դը Մոնիեի տանը: Իր պերճախոսություն ուժով նա կարողացավ ձեր մարկիզին շեղել բուն նյութից. և նա, սրտաշարժված, առաջարկեց նրան լիակատար հյուրընկալություն սեփական տանը:

Բայց ամեն ինչ իր մերթն ունի: Զգալիորեն ուշ, քան կարելի էր ենթադրել, հարգարժան մարկիզն այնուամենայնիվ գիտակցեց, որ ինքը հանդես է գալիս կոստյակի աննախանձելի դերում, և նա կատաղի բարկությունը թափեց իրեն խայտառակած կնոջ պիսին:

Սոֆին ուժեղ բնավորություն ուներ: Նա չկամեցավ լսել շփրած ամուսնու երկարաշունչ մերկացուցիչ ճառերը և Պոնտարլիեից մեկնեց Դիժոն իր ծնողների մոտ: Միաժամանակ նախօրոք պատրաստված դադտնի բնակարան տեղափոխվեց և իր սիրեցյալը:

Բայց Դիժոնում դրությունն ավելի ծանր էր, քան Պոնտարլիեում: Նրա մայրը՝ տիկին դը Ռյուֆեյ դը Մոնֆորը զլխավորապես մտահոգված էր նրանով, որ իր տունը պահպաներ Բուրգունդի առաջին սալոնի համբավը: Դատեր զգացմունքները նրան ամենից քիչ էին հետաքրքրում, և պատահարը (որի մասին նա արդեն բազատեղյակ էր, ներառյալ կանացի բորբոքում

երևակայությամբ ստեղծված անհիմն ենթադրություններն ու աստապելները) համարելով ծայրաստիճան վարկարեկող, նա Սոֆիի նկատմամբ անխոնջ և անդադար հակողութուն հաստատեց:

Ե՛վ Սոֆիի, և՛ Օնորեի համար Դիժոնում կյանքը շատ դժվարացավ:

Բայց մի անգամ Օնորեն իր ընդհատակյա բնակարանում նկզվելով հարկադրված անգործությունից և մենակությունից, հունգզնեց երևալ Բուրգունդիայի բարձր ազմինխտրատիվ իշխանության ղեկավար պարոն դը Մոնտերոյի մոտ կաղմակերպված գիմակահանգեսին՝ մտացածին ու տարօրինակ հնչող մարկիզ դը Լանսեֆուրա անվան տակ: Հրավիրվածներին մեջ էր նսեկ դը Ռյուֆեյ ընտանիքը: Սոֆին, որ չէր սպասում այդ հանդիպմանը, որոշ ժամանակ ուշաթափվեց և դրանով իսկ մատնեց իրեն: Տիկին դը Ռյուֆեյը հակողութուն սահմանեց Սոֆիի վրա: Միրաբոն-Լանսեֆուրան նրան ներկայացավ մարմնացած գեի կերպարանքով: Հաջորդ օրը տիկին դը Ռյուֆեյը նրա դեմ պաշտոնական բողոք ներկայացրեց և նրան բանտարկել տվեց: Բայց նույնիսկ սրանից հետո էլ նա շարունակում էր աջակցեց զգուշանալ Միրաբոյից, որ գիշերը Սոֆիի ոտքը կապում էր նրա սենյակում քնած քրոջ ոտքին, որպեսզի իր գուտորը չփախչի գե-գալթակղիչի մոտ:

Միրաբոն նորից կալանավորվելով այս անգամ արդեն Դիժոնի դղյակում, այնուամենայնիվ գերազանց տրամադրության մեջ էր:

Դրա պատճառը ո՛չ միայն այն էր, որ նա արագ և առանց նոտուկ ջանքերի նվաճեց պարոն դը Մոնտերոյի համակրանքն ու վատահուստները: Բուրգունդիայի բարձր ազմինխտրատիվ իշխանության ղեկավարը լիակատար ըմբռնողություն ցուցաբերեց դժուրիտ սիրահարների զգացմունքների նկատմամբ: Մարկիզ դը Մոնիեն, որն ամուսնացել էր իրենից հիսուն տարով ջահել աղջկա չեա, պետք է արժանի պատիժ կրեր: Մոնտերոն իր բանտարկչայի համար ստեղծեց ամենանպաստավոր պայմանները Դիժոնի դղյակում: Բուրգունդիայի իշխանությունների բանտարկչայի գերում Միրաբոն ավելի աղատ ու լավ էր ապրում, քան երբևիցե:

Բայց ազդուհանդերձ նրա զվարթ տրամադրությունը դրանով չէր բացատրվում: 1776 թվականի սկզբին նա Մալերբից

լուր ստացավ այն մասին, որ նրա գործը շուտով դրական լուծում է ստանալու:

Միրաբոն հույս ուներ շուտափույթ ազատվել Տյուրգո-Մալերրի կառավարության կազմավորման առաջին օրերից: Բայց նա չէր կարող կանխատեսել նրա ճանապարհին ծագած բոլոր խոչընդոտները:

Նոր կառավարությունը բավականին լուրջ հոգսեր ուներ: 1775 թվականի ամռանը թագավորության մի շարք գավառներում ծավալվեց բողոքի ժողովրդական լայն շարժում, որը պատմության մեջ մտավ «այլուրի պատերազմ» անունով: Այդ ժողովրդական հուզումները ցույց տվեցին, թե ինչպիսի լարվածության են հասել սոցիալական հակասությունները թագավորությունում: Մեծ դժվարությամբ միայն աշխան կողմ Տյուրգոյի կառավարությանը հաջողվեց հաղթահարել ճգնաժամը:

Բայց ծագեցին նաև առավել մասնակի բնույթի խոչընդոտներ, որոնք դժվարացրին Օնորե դը Միրաբոյի գործի արագ լուծումը:

Տյուրգո-Մալերրի իշխանության գլուխ անցնելն ուրախացրեց ոչ միայն օստիկանության հակողության տակ տառապող կոմս դը Միրաբոյին: Նոր կառավարությունը շատ ավելի վստահություն էր ներշնչում նրա հորը՝ մարկիզ դը Միրաբոյին: «Մարդկանց բարեկամը», ֆիզիոկրատների դպրոցի ամենահեղինակավոր լիդերներից մեկը, ոչ առանց հիմքի այսուհետ իրեն համարում էր դեկավար «կուսակցության» ներկայացուցիչ: Որպես այդպիսին ներկայանալով Մալերրին, նա մինիստրից պահանջեց նոր խիստ և արդյունավետ միջոցներ իր անհնազանդ որդու նկատմամբ:

Մալերրն ընկավ դժվարին կացության մեջ: Նա չի էր կոմս դը Միրաբոյին ազատ արձակելու վճռականությամբ, բայց միևնույն ժամանակ չէր կարող հաշվի չնստել տնտեսագետներին կուսակցության տեսաբաններից մեկի հետ: Ինչպես արգարացիորեն պնդում է Միրաբոյի նորադույն կենսագիրներից մեկը՝ Անտոնինա Վալենտենը, իրադրության տարիմաստությունը կայանում էր նրանում, որ կուսակցության տեսաբանը և թագավորական մինիստրը իրար հակառակորդ՝ ստազիներ պաշտպանում էր դուռ ֆեոդալական պահանջներ, այն դեպքում, երբ Մալերրը հակադրում էր լիբերալ-բուրժուական փաստարկումը<sup>25</sup>: Վերջիվերջո Մալերրը ելքը գտավ: Նա մարկիզ դը Մի-

րաբոյին տվեց ինչ-որ հանգստացուցիչ խոստումներ և միաժամանակ Փարիզ կանչեց կոմս դը Միրաբոյին, որպեսզի բարձր իշխանությունների ներկայությամբ հանգես գար նրա դեմ գործադրված բռնությունների անարգաբացիությունը հիմնավորող նստով: Մալերրը գիտեր և՛ Տյուրգոյի կառավարության տրամադրությունները, և՛ երիտասարդ Միրաբոյի պերճախոսության ուժը: Օնորե Գաբրիելը նաև չի էր հավատով իր հոետորական ստղանդի ուժի նկատմամբ: Նա կանխավայելում էր մոտիկ ու լիակատար հաղթանակը:

Բայց այն պահին, երբ, թվում էր, թե, ընդմիջա խաչ էր քաշվում նրա կյանքի բոլոր մոլթ էջերի վրա, երբ Միրաբոն արդեն իր ձառի կառուցման պլանն էր մտորում, որը պետք է լիներ ոչ այնքան պաշտպանական, որքան բռնակալական վարչակարգը մեղադրելու ակտ, այդ օրերին Փարիզից եկավ բոլորին ցնցող լուր՝ Տյուրգոյի կառավարությունը 1776 թվականի մայիսին լնկել էր: Տյուրգոյի հետ միասին Մալերրը ևս պետք է թողներ իր մինիստրական պաշտոնը: Վերջին բանը, որ նա հասցրեց անել Միրաբոյի համար՝ կալանավորին խորհուրդ տալն էր Ֆրանսիայից փախչել արտասահման:

### XIII

Այստեղ հնարավոր չէ քննարկման ենթարկել Տյուրգոյի կառավարության անկման պատճառներն ու հետևանքները<sup>26</sup>: Ըստ էության Տյուրգոյի լիբերալ ռեֆորմների կառավարության բուն անկումը միանգամայն օրինալի էր «հին կարգերի» համար. նրա կործանումը կանխորոշված էր նրա ծննդյան պահից: Տյուրգոյի անկումը պայմանավորված չէր ո՛չ շուտով Մարիա-Անտուանետի, և ո՛չ էլ միապետի եղբոր, ոչ մի սահմանափակում չհանդուրժող կոմս դ'Արտուա-կրտսերի աճող ազդեցությունը թուլակամ և անվճռական Լյուդովիկոս XVI-ի վրա, ինչպիսի դա երբեմն բացատրում են պատմաբանները: Այն պայմանավորված էր ֆեոդալաբսոլյուտիստական միապետության բուն էությամբ, տիրապետող ֆեոդալական հանցախմբի՝ այսպես կոչված արտոնյալ դասերի, ֆեոդալական ընտրախումբի շահերով, որոնք չէին ցանկանում թեկուզև չնչին շափով հրամարվել իրենց շնորհված արտոնություններից ու օգուտներից:

Տյուրգոս-Մալերբրի կառավարության անկումը նշանակում էր արքայազնության անկումը և հակահարձակման: Տյուրգոսի շատ կարևոր առաջադիմական ռեֆորմները վերացվեցին: Նրա մերձավորագույն օգնական, նախաձեռնող և շնորհալի Դյուպոնը դր նեմուրը արքայազնի: Ֆինանսների մինիստրի պաշտոնը վստահվեց Բորգոսի նախկին ինտենդանտ, ուղղմելի ու խարդախ Կլյունիին, որը կարծում էր, թե այդ պաշտոնն ստեղծված է ամենից առաջ այն բանի համար, որպեսզի լցնի սեփական անհատակ գրպանները և սլաշտական կամարիլիայի նույնանման գրպանները: Նա հույս ուներ ահարեկիչ արագությամբ անձամբ պետական պարտքերը վերացնել ամենահասարակ միջոցով՝ Ֆրանսիան հայտարարել սնանկացած:

Կլյունիի անսպասելի մահը 1776 թվականի հոկտեմբերին երկիրն ազատեց նրա՝ իշխանության գլուխ դանվելու կործանարար հետևանքներից:

Կլյունիի անխոհմտությունն ու ցինիկ գողությունը այնպիսի սարսափ էին ազդել, որ անկայուն, տատանվող Լյուդովիկոս XVI-ը նորից փորձեց վերագառնալ ռեֆորմների քաղաքականության: Այս անգամ հույսեր էին կապում բանկիր ժակ Նեկկերի հետ: Չնայած այն բանին, որ նա բողոքական էր, ուստի և կարող էր նշանակվել պետական գանձարանի գլխավոր, այլ ոչ մինիստր, նա ուներ երկու առավելություն, որոնք նրան հասարակական լայն համակրանք էին ապահովել: Նա ֆիզիոկրատների գյուրոցի հակառակորդն էր, հետևաբար, և Տյուրգոսի, որը հաճելի էր տապալված ռեֆորմատորի բոլոր հակառակորդներին, իսկ որ գլխավորն է, որպես բանկիր այնքան հաջողությամբ էր վարում իր գործերը, որ դարձավ Փարիզի ամենահարուստ մարդկանցից մեկը:

Լինելով գործնական խառնվածքի տեղ մարդ, Նեկկերը, ձեռնամուխ լինելով թագավորության քայքայված ֆինանսների ղեկավարմանը, դառավ դրանց ապաքինման միակ միջոցը՝ ամենախիստ տնտեսումը: Նա փորձում էր սահմանափակել թագուհու և թագավորի եղբայրների շռայլությունը, ինչպես նաև պալատականներին բաժանվող ամեն կարգի թողարկները, որոնց տարեկան ծախսը կազմում էր 28 միլիոն լիվր: Միայն սա բավական էր, որ Նեկկերի գեմ հարուցվեր բոլոր արտոնյալների վրդավունքը: Նրա ճակատագիրը կանխորոշված էր: 1781 թվականի մայիսին նա սլաշտոնաթող եղավ՝ տեղն ազատելով

պալատական ընտրախաճի դրածո ժուլի դը Ֆլերիի համար, որը հանգիստ սրտով ամաչացնում էր գանձարանը, փողերն աչ ու ձախ բաժանելով սլաշտական սենյուրներին, համոզված, որ նրանց բոլոր քմահաճություններն անհապաղ բավարարվում են սահանջում թագավորական գանձարանի հաշվին:

Այս փոփոխությունները նշանակում էին, որ ֆրանսիական թագավորությունում ժամացույցի սլաքը հեռ էր շքեղ և ժամանակն անցնում էր հին, դեռևս Լյուդովիկոս XVI-ի ժամանակներում սահմանված հաշվով. միապետությունը, արտոնյալ դասերն ապրում են այսօրվա օրով, չնայելով ապագայի անհայտ, հանելուկային թերթիկներին: «Մեր կյանքի համար բավական է»,-- գրեթե հազար տարի գոյատևած միապետությունը վաղվա օրն էլ կապրի:

Միրաբոն, չենց որ նրան հասան ճակատագրական լուրերը, որոնք կործանեցին նրա բոլոր վարդազույն հույսերն ու սլանները, անհապաղ օգտվեց Մալերբրի վերջին խորհրդից՝ նա փախավ Ֆրանսիայից: Դա ավելի հեշտ ստացվեց, քան նա սպասում էր. նրա տրամադրության տակ էին դրված նույնիսկ փոստային կառքեր: Բուրգունդիայի գավառի լուսավորչալ տիրակալ պարոն դը Մոնտերոն նույնպես ցնցված էր այնքան հույսեր արթնացրած կառավարության անկումից և խզճի պարտքն էր համարում ինչով հնարավոր է օգնել խեղճ կոմս Միրաբոնին: Վերջվերջ արդարությունը պետք է հաղթանակի: Ռուսոյի և էնցիկլոպեդիստների երկրպագուներն անդրդիվիորեն հավատում էին մարդու բնական իրավունքների վերջնական հաղթանակին:

Եվ ահա Միրաբոն նորից ազատություն մեջ է: Որքան հեշտ է շնչելը, նա այլևս չի ճաշակում շորս կողմից շահալից ազվեսի անտանելի դարձած զգացումը: Նա Շվեյցարիայում է. նա աղատ մարդ և քաղաքացի է:

Միրաբոն լիովին վստահ է իր ուժերին՝ բնությունը նրան օժտել է պերճախոսության ձիրքով, և նա տիրապետում է զորյին: Այդպիսի հզոր զենքով վազուց ժամանակն է բացահայտ գոտեմարտի մեջ մտնել բռնակալության հետ:

Կոմս Օնորե-Գարբիել Ռիքետտի դը Միրաբոն ֆրանսիական արիստոկրատիայի արյունից ու մարմնից է: Բայց ոչ ոք նրանից լավ չգիտե անքաղաք արիստոկրատիայի բոլոր արատները, բոլոր սուտությունները, բոլոր այն հանցագործությունները, որոնց բնույթնակ է նա: Այդ ամենը նա ճաշակել է իր սեփական կաշվի

վրա. նրանք հալածում էին Միրաբոյիին, նրանք պատրաստ էին ծվեն-ծվեն անել նրան: նրա հայրը՝ «Մարդկանց բարեկամը», լուսավորչալ լիբերալը, առաջավոր հայացքների տեր մարդը, վրեժխնդիր շարութեամբ էր հետապնդում հարազատ որդուն: Ֆետդալական lettres de cachet-ի օգնութեամբ աշխատում էր նրան կորստյան մատնել բանտային ստորերկրյա այրերում: նրա մայրը սառնասրտորեն նշան էր բռնում իր անդրանիկ զավակի ճակատին. նա երբեք չի մոռանա այդ րոպեները Պիեր-Բյուֆիեր զոյակում: նրա կինը՝ բարեհամբույր էմիլին, որը քաղցր ժպիտի հետևում թաքցնում էր օձային շարութեանը և նրբագեղ վայելութեամբ սպասում հարմար պահի, որպեսզի մահացու խայթոց հասցնի, իր թուլնով թունավորի նրան: Մարկիզը դր Մարինիանը՝ էմիլիի հայրը, իր աները ազահ շահամուլ, խրդ-ճից, պատվից զուրկ, անհոգի մարդ է, վաշխառու և բռնակալ. տիկինը դր Ռյուֆելլը Մոնֆորը՝ պարծենկոտ ամբարտաձանը (խսկն ասած ինչո՞վ էր պարծենում) մանրախնդիր փառամոլութեան և հիմարութեան մեջ կարծրամիտ պատավ է, պատրաստ հանուն ողորմելի պատվասիրութեան խաբեութեամբ ում վրա ասես սազացնել իր աղջիկներին...

Այսպիսիք էին նրա ամենամտերիմները, հարազատները, նրա շրջապատը, իսկ այնուհետև այդ ամբողջ ամբարտաձան, գոռոզամիտ բարձր դասը, թագավորութեան այդ բոլոր առաջին դեմքերը...

Կոմս Միրաբոյի համար վաղուց էր հասել ժամանակը հաշվահարգար տեսնելու իր հարազատների՝ գայլերի այդ ոճակի հետ, որոնք ատելութեանից այլովոչ աչքերով և ժանիքները բաց գնում էին նրա հետքերով: Միրաբոն, ավելի լավ քան մեկ ուրիշը, հասկանում է, որ արտոնյալ դասերի այդ ամբողջ հասարակարգը նեխված է ծայրեծայր:

Գայլեր գառան մորթիներով, ազոսափներ սիրամարգի փետուրներով՝ նա լավ գիտե, թե իրականում ինչ արժեն այս բոլոր ժպտադեմ, խոսքը սրամիտ կատակներով համեմող շքեղ կոստյումներով, խնամքով խոպուպած կեղծամներով, մետաքսե գուլպաներով և բարձր կարմիր կրունկներով կոշիկներ կրող պարոնները: նա գիտե, թե այդ քնքշաբար պարոնները ինչպես են կարողանում բանասրկութեան գրեթե աննկատ սարգոստայն հյուսել, որը վերջում միահյուսվելով դառնում է վիշապ օձի օղակ, ինչպես նրանք հմայիչ ժպիտով կարողանում են

փայլող բյուրեղային անկուններով գավաթը մատուցել թափանցիկ գինով լի, որի մեջ լուծված են մահացու թուլնի կաթիլներ: Ժամանակն է հաշվահարգար տեսնել: Չափից դուրս երկար են ստիպել նրան լսել: նա չի կարող, չպետք է, իրավունք չունի լուելու:

Կոմսը Միրաբոն, որ եռում էր անզուսպ զայրույթից իր դասի դեմ, այդ բթամիտ, սահմանափակ, ամբարտաձան արխատոկրատիայի դեմ, բռնակալութեան խարխիւված, պահպանողական վարչակարգի դեմ, ուժեղ է իր ժխտման մեջ, այն ամենի՝ ինչը հակառակ է: Բայց արդո՞ք նա կարող է նույնպիսի համոզվածութեամբ և ուժով այդ հին, իրեն սպառած աշխարհին դրական ծրագիր հակադրել:

Սրանում է նրա աքիլեսյան գարշապարը: Այս բոլոր տարիներին, երբ ընթանում էր նրա ձևավորումը որպես քաղաքական գործչի, որպես վարչակարգի հակառակորդի, նա մնում էր միայնակ, արխատոկրատիայի կողմից հետապնդվող և նրա միջավայրից վտարված, բանտախցերից և ամբոցից ամբոց թափառող, աշխարհից հեռացված բանտարկյալ, անսահմանորեն հեռու ժողովրդից: Սրանում է Միրաբոյի հիմնական թուլութեանը: նա բռնակալութեան թշնամին է, նրա մերկացնողը, բայց նա չէր կարողանա, ինչպես Ժան-Պոլ Մարատը, իրեն անվանել ժողովրդի բարեկամ: Ժողովուրդ: նա չգիտե նրան՝ նա ծանոթ է ժողովրդին սոսկ որպես դրական հասկացութեան, որը փոխ է առել Ժան-Ժակ Ռուսոյի երկերից:

Ընդունված է համարել, և դրա համար ծանրակշիռ հիմքեր կան, որ լիբերալ օպոզիցիայի լիդերի և արքայապետական վարչակարգի հակառակորդի ձևավորումը տեղի է ունեցել XVIII դարի առաջավոր լուսավորական գրականութեան ազդեցութեան ներքո: Ինչ-որ շափով իրոք դա այդպես է: Բայց միաժամանակ Միրաբոյի հակաֆետդալական, հակաարքայապետական հայացքների ձևավորման գործում զգալի դեր է խաղում նրա անձնական ճակատագիրը, նրա կենսագրութեանը՝ տասը, ո՛չ, տասնհինգ տարիների հետապնդումներն ու հալածանքները, սրտնց նա ենթարկվել է այս աշխարհի գորեղների կողմից: նա ոչ թե գրքերից, այլ սեփական փորձից, անգթաբար տրորված կրիտասարգութեան դառնաղետ փորձից գիտեր, թե որքան ծանր է ֆետդալական ավագանու ձեռքը, որքան դաժան, բռնակալա-

կան, անօրինական է մարդու իրավունքները ոտնահարող թագավորական իշխանություն անսահմանափակ ուժը:

Բայց այն կարճատև երջանիկ օրերին, երբ Միրաբոն լիաթոք շնչում էր ազատության քաղցրաբույր օդը, երբ նա մտորում էր, թե ինչ ջախջախիչ հարվածներով պետք է սկսել բացահայտ պատերազմը բոնակալությունն սխտեմի դեմ, նրան խոցում էր ամբողջ սաստիկությամբ ու անդիմադրելիությամբ նրա առջև ծառայած երկրնորանքը՝ իսկ Սոֆիին: Ի՞նչ կլինի Սոֆիի հետ:

Մոռանա՞լ նրան: Խա՞նք քաշել այդ բուն սիրավեպի վրա: Համարել այն անցողիկ սիրաշին դիպված, որպիսիք այնքան շատ են եղի նրա կյանքում: Չհիշե՞լ, հեռանա՞լ առանց հետնաշելու: Ամեն ինչ կանցնի, ամեն ինչ անցնում է, նա կվշտանա, լաց կլինի, իսկ հետո աստիճանաբար (ժամանակն ամեն ինչի սպեղանին է) կմոռանա և՛ Դարբիելին, և՛ իրենց կարճատև կրակոտ սերը: Այդպե՞ս վարվել:

Այդ որոշումը ամենահասարակն ու հեշտն էր թվում: Այն ասես թե ինքնին ենթադրվող բան էր՝ մի՞թե քիչ կանայք են հանդիպել նրա ճանապարհին:

Բայց ինչ-որ առավել զորեղ մի բան, բան, ինչպես իրեն էր թվում, անվիճելի փաստարկներով տրամաբանությունը, նրան հարկադրում էր կրկին ու կրկին անզրոգառնալ իրեն տանջող այդ հարցերին:

Նա իրեն հաշիվ էր տալիս, որ Սոֆիի հետ Ֆրանսիայից փախուստը կստեղծի իր համար միանգամայն այլ, անսահմանորեն ավելի զովարին ու վտանգավոր պայմաններ: Բանը միայն նրանում չէր, որ նա իր վրա էր վերցնում Սոֆիի ճակատագրի պատասխանատվությունը և որ նա՝ էմիլի Մարինիանի, կոմսուհի Միրաբոնի օրինական ամուսինը, չի կարող Սոֆիին ներկայացնել որպես իր կինը: Այն ժամանակվա օրենքներով ամուսնացած կնոջ, մարկիզ դը Մոնիեի օրինավոր ամուսնուն ատանգելը կորակվի որպես պետական հանցագործություն: Տրոյական պատերազմի, Մենելաոս արքայի կնոջ՝ գեղեցիկուհի Հեղինեի ատանգեման մասին համերոսյան էպոսի ժամանակներից սերունդները դաստիարակված էին տեր սատծու և եկեղեցու կողմից սրբազործված ամուսնությունների վերաբերյալ օրենքների անհաղթահարելիության նկատմամբ հարգանքի ոգով...

Իսկ ինչպե՞ս վարվել:

Չէ որ նա առաջին հերթին քաղաքական գործիչ էր և Մայրբի խորհրդով հարազատ Ֆրանսիայից փախչում էր ոչ թե հանուն անձնական բարօրության, այլ այն բանի համար, որպեսզի այնտեղից, ազատ երկրից, իր գրչով գրոհի շարի մութ ուժերի դեմ, որոնք նորից գլուխ էին բարձրացնում թագավորությունում... Բայց այս բանական փաստարկները տապալվում էին. նա չի կարող լքել Սոֆիին, չի կարող դավաճանել իրենց սիրուն:

Գաբրիելը կապ է հաստատում Սոֆիի հետ: Հավատարիմ, իսկ մտածար զնված մարդկանց միջոցով նրանք գաղտնի նամակագրություն են պահպանում: Միրաբոն իմանում է, որ հուսահատության պոռթկման պահին Սոֆին թույնի մեծ բաժին է բնորոնել (լատուգանում): Բայց նրա երիտասարդ օրգանիզմը ավելի ուժեղ է գտնվել՝ նա տանջվել է մի քանի օր, բայց ողջ է մնացել: Այն ժամանակ նա վճռել է փախչել Ֆրանսիայի սահմաններից և այնտեղ միանալ իր սիրեցյալին: Մայրը սպառնացել է Սոֆիին փակել վանքում, բայց դուստրը նրան պատասխանել է, որ եթե մայրը համարձակվի այդ անել, ապա նա կայրի վանքը և կամ կզոհվի հրդեհի մեջ, կամ կփախչի: Տիկին դը Մյուֆեյն արդեն համոզվել է իր դատեր անզուսպ բնավորության մեջ, արդեն նա վախենում էր նրանից. կրթով համակված այդ կնոջից ամեն ինչ կարելի է սպասել:

Սոֆին Դիոնից տեղափոխվում է Պոնտարիե, Եվեյցարիայի սահմանին ավելի մոտ: Երկու անգամ, մայիսի 31-ին և հունիսի 12-ին նա փորձում է փախչել, բայց սահմանի վրա բռնրվում է:

Երիտասարդ կնոջ այս անդիմադրելի, ամենահաղթ կիրքը վերջ է դնում Միրաբոնի տատանումներին: Նա չի կարող խաբել Սոֆիի սպասումները, դավաճանել իրենց սիրուն: Հունիսի 15-ին նա իր քրոջը գրում է. «Ծն ամեն ինչ ղոհաբերեցի հանուն սիրու: Ըն կրքեք այլևս չեմ կարողանա վերադառնալ իմ հայրենիքը, նույնիսկ եթե գա ժամանակը, երբ ես այդ կամենամ»: Այս վշտալի տողերը ցույց են տալիս, որ նա պարզորոշ հասկանում էր, թե որքան մեծ է իր ուսերին դրված պատասխանատվության ծանրությունը:

Այսուհետ նա մտահոգված է մի բանով, թե ինչպես կազմակերպի Սոֆի դը Մոնիեի անցումը Եվեյցարիայի սահմանով: Իյուֆեյն ամուսինները միավորվում են մարկիզ դը Մոնիեի և

նրա հարազատների հետ, որպեսզի ընդհանուր ջանքերով խոչընդոտեն անհավատարիմ կնոջ և անհնազանդ դատեր փախուստը: Միրաբոն իր կողմից օգնության է կանչում քրոջը՝ Լուիզա դը Կարբիին: Նա ժամանում է աչքից հեռու մի վայր շվեյցարական սահմանի մոտ:

Լուիզան ուղղակի կապ է հաստատում (միջնորդների միջոցով) Սոֆիի հետ, ամենայն մանրամասնությամբ մշակելով փախուստի պլանը: Կանաչի անսխալ բնազդը Սոֆիին դրդում է խնդրել իր սիրեցյալին փոքր-ինչ մանրամասն պատմելու նրա քրոջ մասին: չէ որ Սոֆին նրան երբեք չի տեսել:

Միրաբոն նրան պատասխանում է ընդարձակ նամակով: Հոգեբանորեն դա նրա ամենազգժվար բացատրելի արարմունքներից մեկն է: Հայտնի չէ, թե ինչու նա զուգահեռ է անցկացնում Սոֆիի և Լուիզայի միջև: Նա այնպիսի մանրությունների, ինտիմ մանրամասների մեջ է մտնում, որոնք չեն վերաբերում երկու կանանց բնավորություններին կամ արժանիքներին, որ դա երկիմաստ, ծայրաստիճան տարօրինակ տպավորություն է գործում: Ի՞նչ հարկ կար այդպես գրել քրոջ մասին: Այս հարցը մնում է անբացատրելի:

Լուիզայի մասին նամակի այս կիսահանելուկային պատմության վախճանն առավել ևս անսպասելի էր: Այդ նամակը շահասավ հասցեատիրոջը, Սոֆին (ի բարեբախտություն նրա) այն երբեք չկարդաց: Նամակը կես ճամփին բռնեց տիկին դը Ռյուֆեյին ծախված աղախինը և հանձնեց նրան: Անհրաժեշտ գրական պատրաստություն չունեցող ծեր տիկինը չկարողացավ պուխ հանել նամակի բովանդակությունից և այն ուղարկեց իր դաշնակից մարկիզ դը Միրաբոյին: «Մարզկանց բարեկամը» զմայլվեց անսպասելիորեն ձեռքն բնկած ավարից: Վերջին տարիներին նա ամբողջապես կլանված էր իր կնոջ դեմ ուղղված դատավարությունը: Մասամբ Բինյոն զղյակի ամենագորտիբուն հարձած տիկին գյու Մայիի ազդեցության տակ, որը երազում էր իրավաբանորեն ամրապնդել իր փաստացի ստատուսը, ախկոծվում Վասանների անբավ հարստություններին (ինչի՞ են պետք դրանք ծերուկին և առհասարակ դրանք պահպանվե՞ն են) տիրանալու մոլական գաղափարով, մարկիզն աշխատում էր ապացուցել, որ մարկիզուհի դը Միրաբոն խելագար է և, հետևաբար, իրավաբանորեն ոչ լիարժեք անձ: Այդ դատավարությունը նրան սնանկացրեց և հոգեպես ամալացրեց, այն

խղեց նրա ողջ ուժերը, մտքերն ու ժամանակը. նրա տեսական պարապմունքները բարձիթողի արվեստին հանուն քաղաքականության նոր բանաձևերի հորինման: Օնորեն և Լուիզան պաշտպանում էին իրենց մորը, և դա բավական էր, որ նա նրանց իր սխեմիմ թշնամին համարի: Եվ ահա նրա ձեռքում է մի անգին փաստաթուղթ՝ նրա որդին և դուստրը այդ նամակով մերկացված են ծանր մեղսագործության՝ արյունապիղծ կապի մեջ: Արդ նա կշնջի նրանց իր ճանապարհից՝ որդուն մինչև կյանքի վերջը կփակի բանտում, իսկ դուստրը՝ վանքում: Մեյրունին, ատելության մենագարության մեջ նախկին կնոջ նկատմամբ, կորցնելով մարդկային զգացմունքները, անգամ սերը հարազատ զավակների նկատմամբ, բավականություն չէր վիշտ ստոր, վատ ծալվող մատները: Նա իրեն թանկարժեք թվացող փաստաթուղթը կպահի հատուկ կարևորության փաստաթղթերի գաղտնի արկղում, այն կպահի որոշ ժամանակ, իսկ հարկավոր մասին կհարվածի այդ մանրագնդակով...

Ո՛չ, Օնորեն, ո՛չ էլ Լուիզան առայժմ ոչինչ չգիտեն նամակի շարաքաստիկ ճակատագրի մասին: Հետագայում և մինչև իր կյանքի վերջին օրերը Օնորեն վճռականորեն կժխտի այն իմաստը, որ նամակին ուղում էր վերագրել հայրը: Լուիզան, երբ նրան հայտնի կդառնա բոլորովին անհասկանալի այդ նամակը, սաստիկ զայրացած ընդմիջում կխղի կապերը եղբոր հետ, և նրանց երեքմսի բարեկամությունը կփոխարինվի լիակատար պառակտումով: Օնորեի բոլոր փորձերը, նորից ընդհանուր լեզու գտնել նրա հետ՝ կհանդիպեն անսասան անհաշտելիության... Բայց այս ամենը կլինի հետո... Իսկ առայժմ դեռ միաբան դաշինքը ժնկի լճի ափերից եռանդազին նախապատրաստում է Սոֆիի փախուստը...

Վերջապես հասնում է ցանկալի օրը: 1777 թվականի օգոստոսի 27-ի երեկոյան կայծակ ու որոտի ժամանակ, հորդառատ անձրևի և ամպրոպի որոտմունքի տակ, մարկիզուհի դը Մոնիեն տղամարդու կոստյումով և իր ամուսնու լայնեզր գլխարկով, որը թուրցնում էր նրա դեմքը, Միրաբոյի կողմից Պոնտարիե ուղարկված նրա գաղտնի գործակիցների պաշտպանությամբ, բազմաթիվ արկածներով անցնում է պետական սահմանը: Այնուհետև անհայտ ուղեկիցների հետ, որոնց ձեռքում էր նրա ճակատագիրը, նա սուրում է շվեյցարական Ալպերի լեռնային ճանապարհներով, և, վերջապես, Վերիերե փոքրիկ քաղաքում նրանք

կանգ են առնում լուսավորված պատուհաններով փոքրիկ մե- նավոր մի տնակի մոտ: Այստեղ շեմի վրա, թեթևակի ծածկված զոան հետևից նրան գրկում է բոլոր ձայներին վաղուց համբե- րությամբ ականջ դնող Օնորեն, նրա Միրաբոն:

Պարզվում է, որ այդ մթին, անձրևից ողողված, ամպրոպից դգրգացող, յուրաքանչյուր անկյունում անթիվ անհամար վտանգներ թաքցրած սարսափելի աշխարհում, այնուամենայնիվ, հնարավոր է գանել լիակատար, անեզր, պարզ երջանկու- թյուն:

#### XIV

Երջանկություն: Որքա՞ն կարող է այն տևել:

Կեսօրն արդեն անցել էր, երբ Սոֆին և Օնորեն արթնացան... Պատուհանից այն կողմ պայծառ լուսավորում էր արևը, դեպի վեր էին ձգվում մուգ կանաչավուն ծառերով ծածկված լեռները: Դա Շվեյցարիան էր, նրանք երկուսով էին, նրանք ազատ էին, նրանց ոչ մի տեղից վտանգ չէր սպառնում: Հավանաբար նրանք երկուսով ծիծաղեցին բերկրանքի թեթև, անհոգ ծիծաղով, եր- ջանկության ծիծաղով:

Հետո եկավ բարձրաձայն մտորումների ժամանակը:

Սոֆին շրջահայաց գամվեց: Միզուցն նույնիսկ ավելի շատ, քան հարկավոր էր: Նա իր հետ բերել էր ոչ միայն բարձր հա- սարակության արկնոջ բոլոր անհրաժեշտ արդուզարդերը, այլև իր պաշտոնական ամուսնու գաղտնատուփից վերջերի էր երկու հազար լիվր: Նա Օնորենին միամտորեն հավատացնում էր, որ այդ դումարը նույնիսկ քիչ է այն բաժնից, որին նա իրավունք ուներ հավանելու: Օնորեն նրան հաճույքով հավանություն էր տալիս. այսուհետ նրանք միացած էին մի ճակատագրով, և երջանկու- թյան ու ազատության այդ առաջին օրերին նա չէր ուզում խոր- հել սպառնացող վտանգների մասին: Բայց նա, իհարկե, լավ էր հասկանում, թե ինչպես կարող է իր դեմ, Սոֆիի դեմ շրջվել վերջինիս նախկին, ավելի ճիշտ, պաշտոնական ամուսնու հետ ֆինանսական հաշիվները մասնակիորեն կարգավորելու նրա ընտրած միջոցը:

Օնորեն թեթևամիտ էր, կարողանում էր ապրել այսօրվա օրով: Նրանց երազանքն իրականացավ, նրանք միասին էին ու երջանիկ. նրանք քթից բռնած ման էին ածում բոլոր այդ ծեղ

Նրանք երին՝ Մոնիեին, Սեն-Մորիսին, Ռյուֆեյ ամուսիններին, բացի դրանից՝ այդ փոզերը հայտնվեցին խիստ հարմար ժա- մանակին: Միրաբոն Շվեյցարիայում մնացել էր դատարկ գրք- պաններով, հիմա գրանք լիքն են և սկզբում կարելի է ապրել անհոգ, շտաածելով վաղվա օրվա մասին:

Բայց այնուամենայնիվ, լուրջ խորհրդածելով, շուտով նրանք եկան այն եզրակացություն, որ Պանտարիիին այդքան սպառ- նալից մոտիկությունը բավական վտանգավոր է: Կորած, ավելի ճիշտ, գողացված նամակը Օնորեի վրա էծան շնտեց: Նրա թշնամիների ձեռքերը երկար են, դրանում նա արգին հա- մոզվել էր: Կորցնելով հետքերը, կարվելով իրենց հետապնդող- ներից, որոնց նրանք ավելի շուտ գզում են, քան տեսնում, տեղափոխվելով մերթ Բազել, մերթ Բեռն, նրանք հասնում են Հոենս և մի փոքրիկ, հրաշալի նավով դանդաղ բարձրանում դեպի վեր:

Փախստականներն սպաստան են գտնում Հոլանդիայում, Ամստերդամում: Չորս կողմից ծավոյ պաշտպանված այս քա- րորը՝ ասես կիսով շափ սուզված ծովաչին կոճակների մեջ, նրանց ամենաճուստալի թաքստոցն է թվում:

Միրաբոն ներից է վերցնում գրիչը: Թշնամիների հետ հաշ- վեհարար դեռ չի տեսել: Բայց կյանքի դաժան դուսերը նրան շատ բան են սովորեցրել. նա դարձել է զգույշ, հաշվեհեկատ: Չի կարելի սկսել գլխավոր նշանակետին հարվածելով՝ առաջին նորվածները պետք է հասցնել թևերին: Ամստերդամում նա գրամ է ձեռք բերել Հեսսենի ժողովրդին: Չեականորեն դա սուր բննադատական երկ է՝ ուղղված գերմանական տիրակալ իշխան- ներին, մասնավորապես Հեսսենի դքսի դեմ, որը վաճառում էր իր հողատակներին: Բայց արդյո՞ք նա միայն Հեսսենի միապե- տին նկատի ունի: Արդյո՞ք միայն Հեսսենի ժողովուրդն է տա- սույում բռնակալության կամայականությունից: Դա էլի նույն թշնամին է՝ անխիղճ ու անխնա բռնակալությունն իր բոլոր տարբերակներով ու երանգներով, որոնք մնացել են նույնը՝ ազատության խեղդիչներ, շարունակում ու կամայականության մոլորանացում, բնությունից մարդուն պարգևած իրավունքները ամուսնարողներ:

Սոֆին անսահման երջանիկ է: Այն բոլորը, ինչի մասին երազել էր, կատարվել է: Նրա հետ է իր Օնորեն, նա իրեն բարձրանում է վերաբերվում, նրանք շուտով երեխա կունենան:

Այնպես տարօրինակ հնչող Կալվեբրաստա փողոցի նրանց փոքրիկ տնակում անդորր է: Ուրիշ ի՞նչ կարելի է ցանկալ այս աշխարհում: Ահա նա լիակատար, կաթի նման մաքուր ու տաք, կանաչի, մարդկային երջանկությունը:

Երջանկությունը ժամանակի հաշիվը չգիտե: Սոֆիին թվում է, թե այն անսահման է: Քայց այդ պատրանքները...

Միրաբոն որոշ ժամանակից ի վեր նկատում է, որ տանից ոչ այնքան հեռու հանդիպում է միևնույն դեմքին: Նրանից խուսափում են, աշխատում են արագ հեռանալ, բայց հաջորդ օրը ամեն ինչ վերստին կրկնվում է: Օնորեն պատուհանից որսում է այդ նույն սևեռուն հայացքը: Կասկած չիսել շի կարող, որ նրանց կրկին հետապնդում են, նրանց հետքով խուզարկում են գալիս:

Միրաբոն չէր սխալվում իրենց սպառնացող վտանգի գնահատման հարցում: Մարկիզ դը Մոնիեն բոլոր խաղմերուկներում գոռում էր, որ այդ շարագործն իրենից հափշտակել է ոչ միայն կնոջը, այլև իր բոլոր խնայողությունները: Ոչ միայն Պոնտարլին, այլև ամբողջ Ֆրանսիան էր ցնցված ամուսնու իրավունքների, թագավորական օրենքների, սուրբ եկեղեցու օրենքների այդ աննստադեպ ոտնահարումից: Այդ դժոխքի ծնունդները, այդ հանցագործները, քողարկվելով կոմս դը Միրաբոն և մարկիզուհի դը Մոնիե բարձր ազնվականական անունների տակ, պատվազրկեցին, միրավորեցին ամբողջ ազնվագարմ դասը: Մայրաքաղաքի արխատկրատական հյուրասենյակներում և գավառական ազնվականական կալվածքներում զայրացած տիկնանց վառ երևակայությամբ լրացված եղելությունն ընդունում էր շափազանցված ուրվագծեր: Ասեկոսները մարկիզ դը Մոնիեից հափշտակված երկու հազար լիվրը հեշտությամբ վերածում էին քսան, երկու հարյուր հազարի: Այդ սարսափելի հանցագործը, որ խայտառակել էր իր գծաբախտ հոր պատկանելի լուկահեր մազերը, ամեն ինչի՞ սպանություն, կողոպուտի, ցանկացած սրբապղծության ընդունակ ավազակ էր:

Հասարակական վրդովմունքը գլխավորում և հարկավոր հունով ուղղություն էր տալիս առավել սուժած կամ շահերը շոշափված մարդկանցից ձևավորված հզոր կուլիցիան: Մարկիզ դը Մոնիեն, որ վեհ ղզացմունքները միրավորված տիկնանց քանքերով բարձրացվել էր գրեթե ազգային նահատակի կամ նույնիսկ ազգային հերոսի մակարդակին, կոմս Սեն-Մո-

րիսը՝ Ժու ամբողջի պարետը, որից սրիկան համարձակվել էր փախչել, պարոններ դը Ռյուֆեյները, որոնք պատվազրկվել և կողոպուտվել էին հանցագործ դասեր կողմից, մարկիզ դը Միրաբոն՝ «Մարդկանց բարեկամը», որն ամբողջ կյանքում տանջվել էր իր հրեշ-որդու ձեռքից, մարկիզ դը Մարինիանը, որ ի սկզբանե դեմ էր իր սուրբ աղջկա ամուսնությունը այդ միվաղի հետ՝ հարավային Ֆրանսիայի իսկապես որ ամենաերեվելի, հարուստ և ազգեցիկ պատրիկների կուլիցիան էր, որն իր ձեռքն էր վերցրել պատժող արդարադատության կշեռքը:

Փախստականների դատը տեղի ունեցավ Պոնտարլինում: Այն հապճեպ էր ու արդարացի: Օնորեն-Գաբրիել դը Միրաբոնին «կողոպուտի ու գալթակողության համար» դատապարտեցին մահապատժի. նրան պետք է գլխատեին: Սոֆի դը Մոնիեն ցմահ պետք է սափրված գլխով իր պատիժը կրեր անառակ կանանց տանը:

Գատարանի որոշումը հանձնվեց լայն հրատարակման: Այժմ արդեն մնում էր դատավճիռն ի կատար ածել:

Ինչպիսի փոփոխություններ էլ որ կատարվեին Նյուդոլիկոս XVI-ի թագավորության կառավարական վերնախավերում, կառավարության գլուխ կանգնած լիներ լիբերալ Տյուրգոն կամ անառակ Կալոններ, թե նրանց հաջորդները՝ ոստիկանությունն անդամաճան էր մնում. նա լավ գիտեր իրեն հանձնարարված գործը: Հետապնդել փախստականներին՝ պետական հանցագործներին, որոնք միամտորեն ենթադրում էին, որ էթե իրենք չըջանց ճանապարհով մեկնեն Ամստերդամ, սպա իրենց շուտ լին դտնի, գովար խնդիր չէր: Ոստիկանությունը արագ գտավ փախստականների հետքերը: Եվ էթե Միրաբոն ու Սոֆին չոթ ամսվա ընթացքում ապրում էին թեթև ու տաք, չկասկածելով, թե որքան փխրուն է իրենց երջանկությունը, ապա ոչ այն պատճառով, որ ոստիկանությունը նրանց չէր դատում առաջ. շարափներ էին պետք որոնվող պետական հանցագործներին: Ֆրանսիական ոստիկանությանը հանձնելու հարցը հուանդական իշխանությունների հետ կարգավորելու համար:

1778 թվականի մայիսին Միրաբոն, որը պարզորոշ գտում էր, թե ինչպես է իրենց շուրջն օղակը սեղմվում, որոշում կառուցի և Սոֆիին համոզեց, որ անհրաժեշտ է անապարանքով նստանալ Ամստերդամից: Սոֆին չէր կամենում բաժանվել այն

անգործ անհից, ուր նա այնքան երջանիկ էր. նա հապաղում, օր օրի ձգձգում էր մեկնումը:

Մայիսի 14-ին Միրաբոյին հաջողվեց աննկատ դուրս գալ տունից: Նրանք Ամստերդամում բարեկամներ ունեին, որոնց մոտ կարող էին որոշ ժամանակ թաքնվել: Քայց Սոֆին ուշացրեց, չետ ընկալլ, և, երբ երեկոյան նա վերջապես պատրաստվում էր ընդմիջտ թողնել իրեն սիրելի դարձած տունը, պարզվեց, որ արդեն ուշ է: Տունը շրջապատված էր, և ոստիկանութունը ներխուժեց դռնից:

Միրաբոյի առջև երկրորդ անգամ ճանապարհները երկատվեցին: նա կարող էր խույս առլ ճետապնդողներից, և բարեկամները կօղնեին նրան թաքնվել խոր ընդհատակում կամ աշխարհի ծայրին, որտեղ նրան ոչ ոք չէր գտնի: Խոսքը նրա գլխի մասին էր, այդ բանը նա հասակորեն հասկանում էր: Քայց արդյոք նա կարող էր մենակ թողնել Սոֆին ոստիկանության՝ իրենց սխերիմ թշնամիների ճանկերում:

Միգուցե մնալով ազատության մեջ, նա առավել ևս օգտակար կլիներ նրան: Քայց նա, հավանաբար, պատկերացրեց նրա սարսափից, հուսահատութունից մահացու գունատ զեմքը, նրա հանգած աչքերը, թուլաթափ ձեռքերը, և նա հաստատուն, հանգիստ բայլերով ուղղություն վերցրեց զեպի Կալվերսաատ փողոցի տնակը: Այդ վճռական ժամին, որը, հավանաբար ընդմիջտ ջարդում էր նրանց ճակատագիրը, նա չէր կարող դաժանանել, չէր կարող միայնակ թողնել Սոֆին:

Երջանկություն: Արքա՞ն կարող է այն տեսլ:

Մ՛չ Օնորին, ո՞չ Սոֆին այլևս չէին կրկնում այդ հարցը:

Նրանք գժբախտ են, նրանց վիշտն անընդդրկելի է և առջևիւմ հույսի նշույլ չի երևում:

Սոֆին շտեղավորեցին Սեն-Պիլատի բանտում՝ սյունիկների, մարդասպանների, պիշերային կախարգների հետ: Բժիշկը հաստատեց, որ նա երեխա է ունենալու, և Սեն-Պիլատին ողորմածաբար փոխարինեցին Փարիզի խնամակալության անհյուրընկալ տներին մեկով, որտեղ փոքրիկ խոնավ խցիկում, երեք միջուկների և զբնդայուլ շլիֆաներով երկաթյա մահճակալին դամված մի խելագար կնոջ հետ պետք է անցնեին նրա օրերն ու պիշերները: Երբ երեխան՝ աղջնակը ծնվեց, նրան անվանեցին Սոֆի-Փարբիել: Սոֆիի մեջ նորից արթնացավ կապվածութունը կյանքին, բայց մի բանի շարաթ կերակրելուց հետո աղջնակին խլիցին

մորից և ուղարկեցին ինչ-որ մի հեռավոր գյուղ: Որոշ ժամանակ անց երեխան, որին նա այնպես կարտում էր, մեռավ: Այնժամ, երեխ, որպես փոխհատուցում, Սոֆին տեղափոխեցին Գիեն, կանանց մեհուստան: Ֆիզիկայիս այստեղ ավելի թեթև էր, բայց առաջվա նման ոչ մի հույս:

Միրաբոն մահապատժի չենթարկվեց: նրա հայրը, ապրելով իր երկարատև կյանքի վերջին ժամերը, չկամեցավ ձեռքերն ուղարակել հարազատ որդու արշուճով: Մեր մարիկը դր Միրաբոն դասույին միտպետության մեջ աղնվականության փրկախափի բավականաչափ աղոցելի ներկայացուցիչն էր և առանց դժվարության հասավ այն բանին, որ մահապատժի փոխարինվի ցմահ բանտարկությամբ: Միրաբոյին տեղավորեցին Վենսենի դղյակի աշտարակի մեհավոր զնդանում:

Ես տեսել եմ Վենսենի դղյակը. այսօր էլ անմատչելի ահեղ սմբոց թվացող այդ բոլորածև պահպանական աշտարակներ, սյունանցքեր, հրակնատներ, չորս կողմից ամբողջ շրջապատող խոր փոսեր ունեցող շինության անպաճույճ գծերի խստաշունչ վեհությունը մեր ժամանակներում ևս ճնշում է իր մուսլլ զուլթյամբ:

Քարե պատեր, քարե հատակ ու առաստաղ, լույսի նեղ շերտ, որը մանուշակագույն էր դառնում վաղ առավոտյան և ավելի արագ հանգչում, քան որևէ այլ տեղ, վեց բայլ առաջ, վեց բայլ չետ, և այսպես ամեն օր, օր օրի, շարաթներ, ամիսներ, տարի, տարիներ՝ ահա և Օնորե-Փարբիել դր Միրաբոյի կյանքը:

Առաջին օրերը նա անկյունից անկյուն էր նետվում, ինչպես ժողովր վանգակում: Հետո նա սովորեց քայլել լուս, սպիկի դանդաղ. նա սկսեց նստել փայտե փօքրիկ սեղանի տոչև, ականջ գնել իրեն հսկող սմբոցի աշտարակի լուսթյանը:

Որոշ ժամանակ անց նա թուղթ, գրիչ, թանաք ձեռք բերեց: Սկզբում նա զրոյում էր նամակներ՝ բույրքներ, խնդրագրեր, աղերսագրեր թագավորին, մինիստրներին, հորը, մաերիմներին. բույրքին խնդրում էր միևնույն բանի մասին՝ իր նկատամար ցուցաբերել արգարության թեկուզ մի չնչին մասնիկ, մի փոքր մարդկայնություն, փոխել իր ճակատագիրը, որպես հասարակ պիժուր պատերազմ ուղարկել Ամերիկա, սմենուր, միայն թե իրեն շիտոնեն այստեղ. չէ որ նա ողջ-ողջ թաղված է գերեզմանում: նրա բոլոր նամակներն անպատասխան էին մնում:

Նա լի էր շհանձնվելու, պայքարը շարունակելու վճռակա-

նությամբ: Վենսենի զնդանում Միրաբոն ավելի շատ է գրել, քան երբևէ: Այստեղ է ստեղծվել նրա ամենահասուն և ուժեղ քաղաքական աշխատությունը՝ «Գաղանի հրամանների և պետական բանտերի մասին»: Գրված պարզ, սուույզ, երբեմն արձանագրային շոր, բայց առավել ևս տպավորիչ լեզվով, երկը վերստեղծում է անձի նկատմամբ այն հրեշավոր կամայականություն, անօրինականություն, ապօրինություն, բռնության պատկերը, որոնք կազմում են պետական իշխանության վարչակարգի գործելակերպի հիմքը: Եթե անօրինականության պետության մեջ կա էլ ինչ-որ մտածված ու տրամաբանորեն հիմնավորված մի բան, ապա դա մարդու ծանակման ու ստորացման, նրա բնական իրավունքների ոտնահարման սատանայական սխտեմն է, որի նպատակն է կարճ ժամանակում ֆիզիկապես և բարոյապես ոչնչացնել մարդուն:

Մարդկային անհատի դեմ, մարդու բնական իրավունքների դեմ բռնության ու կամայականության վարչակարգի բազմապիսի հանցագործությունների, գրեթե սառնասիրտ ձևակերպված հավաստումների այս զուսպ, հակիրճ թվարկումից հետո հեղինակը կատարում է համառոտ, բայց խոտվարար ոգով առեցուն եզրակացություններ: Գրանցից ամենակարևորը երկուսն են: Առաջինը ձևակերպված է այսպես. «Ես միշտ ենթադրում եմ և պետք է այսուհետ ևս այդպես ենթադրեմ, որ անտարբերությունը անարդարության նկատմամբ՝ դավաճանությունն ու ստորությունն է»: Այս եզրակացությունը, եթե կամենար, բարոյախոսական բնույթի է: Գործնականում այն նշանակում է, որ ոչ մի կարգին մարդ չի կարող չմասնակցել պետության մեջ գոյություն ունեցող՝ մարդու նկատմամբ բռնության սխտեմի, այսինքն անարդարության դեմ մղվող պայքարին: Այդ դրույթով հաստատվում է բոլոր ազնիվ մարդկանց ոչ միայն բարոյական իրավունքը, այլև ուղղակի բարոյական պարտքը, բարոյական պարտականությունը՝ պայքարի մեջ մտնել ճնշման և բռնակալության անարդարացի վարչակարգի դեմ:

Երկրորդ ընդհանրացնող եզրակացությունն ավելի հեռուն է գնում և արդեն ունի պարզորոշ հեղափոխական բնույթ. «Իր շղթաները փշրելու համար մարդուն թույլատրելի են առանց բացառության բոլոր միջոցները...»:

Խոսելով թույլատրվող միջոցների մասին, Միրաբոն, անկասկած, նկատի ունի դեռևս առաջին անգամ «Փորձ բռնակա-

լության մասին» երկում ձևակերպված ճնշման սխտեմին դիմված դիմադրություն ցույց տալու իրավունքի, կեղեքիչներին իշխանությունից բռնությունը գրկելու իրավունքի ճանաչումը:

Ըստ էության Միրաբոն այս ծայրահեղ եզրակացություններով ձանաչում և մարդու բնական իրավունքների պաշտպանության տեսակետից հիմնավորում է բռնության սխտեմի դեմ գինված պայքարի իրավունքը, հեղափոխության իրավունքը:

Միրաբոնի քաղաքական հայացքների ձևավորման, նրա որպես հեղափոխականի՝ բուրժուական հեղափոխականի կազմավորման գործում Վենսենի զնդանում ստեղծված տրակտատը կարևոր, որոշիչ նշանակություն ունի:

Այն լրացուցիչ բնորոշումը՝ բուրժուական հեղափոխականի, որ մենք անհրաժեշտ համարեցինք իսկույն մացնել, խոսելով արդեն Միրաբոնի կենսագրության վենսենյան փուլի մասին, լեզվադրված չէ հակվածությամբ կամ խիստ ձևակերպումների նկատմամբ ունեցած պարզունակությամբ: Այն բխում է Միրաբոնի գաղափարաքաղաքական հայացքների բուն էությունից:

Միրաբոնի կողմից ֆեոդալաբուրժուատիստական ինստիտուտների սխտեմի զննադատությունն ամբողջությամբ սահմանափակվում էր քաղաքական մերկացումների շրջանակներում: Միրաբոն ավելի հեռու չգնաց, և հակաֆեոդալական պայքարի սոցիալական կողմերը նրան զգալի չափով ավելի պակաս էին պրավում, քան քաղաքական կողմերը: Մեկ անգամ ևս հիշեցնենք, որ Միրաբոնի խոտվությունը արտոնյալ դասի դեմ, որին նա պատկանում էր իր ծագումով, ծնունդ էր առել ամենից առաջ լայրական բռնակալության դեմ նրա ընդվզումից: Ընտանեկան կոնֆլիկտը օրինաչափորեն վերածեց կոնֆլիկտի կառավարական իշխանության ամբողջ սխտեմի հետ: Բռնությունները, անօրինականությունները, իրավական նորմերի ամեն տեսակ ոտնահարումները, որոնք սեղացին պատանի, այնուհետև երիտասարդ Միրաբոնի վրա, տրամաբանորեն նրան հանդեգրին բռնակալական վարչակարգի ամբողջ սխտեմի զննադատությունը:

Բավական էր, որ Միրաբոն մեկ անգամ հաղորդակցվեր օրենքին, պրակտիկային անհամատեղելի կամայականության սխտեմի հետ, որպեսզի նրա կողմից քվեեր ինչպես ավագանուսիկն անապատում:

Եթե վերանանք բացականչություններից ու խրատամու-

թյունից և իրերին նայենք գշանց դաման իրականության մեջ, տպա պետք է ասենք, որ Միրաբոյի բոլոր ջանքերը հասնելու որևիցև օրինական իրավունքի կամ ինչ-որ կարգի, մնում էին զուտ որպես դոնքիշոտություն: Իր իսկ բնույթով, իր էությունով ու իսկությունով թագավորական իշխանությունը չէր կարող գործել, չճշելուով ու չկեղեքելով մարդու իրավունքների միաժամանակ ամբողջ սխտեմբ: Դասային միապետությունը գործում էր իրավունքների բազմակողմանի և, այսպես ասած, անընդհատ խախտման հիման վրա:

Արդյո՞ք դա թեկուզև ինչ-որ չափով շփոթեցնում էր պետության ղեկավարներին: Ոչ մի չափով, դա առհասարակ պրոսպեկտ չէր:

Իսկ Միրաբոյի՝ իրեն ֆեոդալաբուրժուազիստական կամայականությունից տուժած և տառապող անձնավորություն համար, դա, բնականաբար, գլխավոր պրոբլեմն էր: Իր մասնավոր դեպքից նա անցավ գոյություն ունեցող վարչակարգի բննադատությունը ամբողջությամբ վերցրած: Օրյենդիմոսն այդ բննադատությունը նշանակում էր իրավադրկություն և բնականության ֆեոդալաբուրժուազիստական սխտեմին հակադրել բուրժուական իրավակարգի սխտեմը, որը հիմնված է ամբողջ բնական իրավունքների՝ հակադասային ուսմունքի վրա:

Բայց պետք է կանգ առնել ևս մի տեսակետի վրա, որը Միրաբոյի համար լրացուցիչ նշանակություն ուներ: Միրաբոյն կարևոր նշանակություն էր տալիս յիբերայ, առաջադիմական, ներկայացուցչական միապետության սկզբունքներին: Նրա իդեալների տեսանկյունից ամենապլավազույնը կլինեք այն միապետությունը, որն ավելի շատ կնմանվեք բրիտանականին: Բայց առաջին և հիմնական պահանջը, որ նա ներկայացնում էր այդ միապետությանը, այս էր՝ այն պետք է լինի միապետություն բնոհանրապես:

Միապետության օգտին համակրանքը թեև պարզված չէր ակամայոր քաղաքական գործչի ճաշակով: Դեռ ավելին, դրանում չկա և նրա ինչ որ մի ինքնատիպություն: XVIII դարում Յրանսիայում միապետության գաղափարը տիրապետող էր, այն կարելի էր հանդիպել և՛ առավել ձախ, և՛ առավել սոջ հայացքների տեր քաղաքական մտածողների մոտ: Դա հասարակական կեցության ոլորտն էր. անխոհեմ, ոչ զբոծնական, անհիմուստ էջ համարվում վերացական վեճեր տանելը: Անսպասույց չլինելու համար

բավական է վկայակոչել Երեք առավել ապավորիչ օրինակ: Հեղափոխությունը նախորդող տարիներին չակորինյանների ապագա փառաբանված հետորդներ և հեղափոխական կառավարության ղեկավարներ Մարսիմիլիան Ռոբեսպիերը, Ժորժ Դանտոնը և Ժան-Պոլ Մարատը, Երկրորդական նշույլ անգամ չըրսեվսելով, միապետության համոզված կողմնակիցներն էին: Ըստ էության զրեթե ամբողջ ֆրանսիական առաջադիմական պրակտիկությունը հեղափոխությունից առաջ վերջին տասնամյակում ելնում էր միապետության անսասանության մասին դրույթի անառարկելի ճանաչումից:

Հազիվ թե իմաստ ունի խորամուկս լինել այդ յուրօրինակ պարադոքսի պատճառների հետազոտման մեջ. բոլորն են դժգոհ միապետությունից, բայց ոչ մեկի մտքով չի անցնում կասկածի տակ առնել այն: Ավելուոր չի լինի հիշեցնել, որ նախահեղափոխական տարիների ամբողջ ֆրանսիական քաղաքական գրականությունը, միգուցև, բացառությամբ Կամիլ Դեմուլենի, և այն էլ, հավանաբար, շատ ավելի շարահանությունից, լիովին մերժում էր հանրապետական հիմնարկությունները: Ըստ Երևույթին, դեռ ավելի վաղ տարածում էր ոտացել այն գաղափարը, թե հանրապետությունը արխատկրատական է: Միապետությունը հակադրվում էր հանրապետությանը: Ոչ այն պատճառով, որ սխտի խելը ունեցույների կողմից այն խիստ կշռվում էր հանրապետության համեմատ և նրա արժանիքները գերակշռում էին հանրապետությունից երկյուղ էին կրում և պատրաստ էին նրա մեջ ուղղակի տեսնել սպառնալիք սուպագա սոցատություններին:

Յնորև Միրաբոյն ամբողջովին համաձայն էր իր հայրենակիցների բոլոր նախապաշարումներին կամ, Լթե կամենաք, բոլոր մոլորություններին: Նրան հախշտակել էր ոչ թե հեռավոր, մշուշոտ, վերացական հանրապետությունը, այլ իրական աշխարհը, որում նա սուրում էր: Դա միապետությունն էր՝ վատ, արտոնյալ դասերի կողմից վշույլված միապետությունը, այն գասերի, որոնք նրան տալիս էին բնակալական վարչակարգին բնորոշ վանող գծեր: Բնակալությունը պետք է ոչնչացնել, և այնժամ շրջապատող աշխարհը՝ հին ֆրանսիական միապետությունը, կդառնա ավելի լավը, առավել արդարամիտը:

Այսպիսիք էին, փոքր-ինչ սխուլաստիկ ձևով, Միրաբոյի այն մամանակվա հայացքները:

Բայց Միրաբոյի կյանքը, ինչպես մենք դիտենք, երիտասարդական տարիներից խոտորվեց: Եվ որքան ժամանակն անցնում էր, այնքան այդ շեղվածքն ավելի ու ավելի էր մեծանում:

Եվ այսպես, վերաբառնանք այն հարցին, որից մենք մինչև այժմ հետևում էինք: Օնորե Միրաբոյի գրական ժառանգության մեջ «Փաղտնի հրամանները և պետական բանտերը» տրակտատը որոշիչ, առավել ևս տիրապետող տեղ չէր զբաղում: Ընդհանուր առմամբ այդ աշխատությունը, որն իմ կարծիքով առավել մեծ ազդեցություն ուներ ապագա տրիբունի աստիճանաբար ձևավորվող քաղաքական համոզմունքների բնորոշման վրա, մնացել է թերագնահատված կամ, եթե կուզեք, պատշաճ չափով չնկատված:

Ինչու՞մեն է բանը:

Այս նյութին հարկավոր է մի փոքր հեռվից մտախնայ: Դեռևս ավելի քան հարյուր տարի առաջ նշանավոր բանաստեղծ, ուժանարիկ, պատմաբան, պետական գործիչ, արտաքին գործերի մինիստր, Եվրոպայի առաջին հետազոտողներից մեկը՝ Ալֆոնս դը Լամարտինը, որը կես դար շարունակ ամբողջ աշխարհի ուշագրությունն էր զբաղել իր «բանաստեղծական խոհերով», քաղցրախոս ճառերով ու փարթամ գանգուլներով, իր նույնքան նշանավոր, ինչպես և այն ամենը, ինչ դուրս է եկել նրա գրչի տակից, «ժիրոնդիստների պատմության» մեջ ասել է կոմս Օնորե-Փարրիել Ռիբետտի դր Միրաբոյի՝ Ֆրանսիական մեծ հեղափոխության նշանավոր տրիբունի վառ, հիշարժան դիմանկարը:

Լամարտինն առաջինն էր, որ Օնորե Միրաբոյի և Սոֆի Մոնիեի որպես ինչ-որ անվիճելի և պաշտամունքի արժանի աղմուկ հանած նամակները, որոնք միմյանց հետ փոխանակում էին տարբեր բանտերում տառապող սիրահարները զրեթե չորս տարվա ընթացքում, առանց վարանելու անվանեց անմահ<sup>27</sup>: Լամարտինի հեղինակությունը, գեղագիտական լավատեղյակությունը, նրա գեղարվեստական ճաշակը այնքան անառարկելի էին, որ բանաստեղծի այս կարծիքը յուրատեսակ գոսական դարձավ:

Ծրեաուն տարի անց Մարիո Պրոսը Միրաբոյի նամակների հրատարակության («Միրո մասին») բնորոշակ ներածականում հուստատեղ առաջին տեղամ կամարտինի տված բնորոշումը<sup>28</sup>: Միրաբոյի և Սոֆի Մոնիեի նամակներն անձնուրացաբար մի-

մտանց եվիբված երկու էակների յուրատեսակ սիրո դասական օրինակ, նմուշ են դարձել:

Եվ ա՛հա ձեռ տոջև են վազուց ազմկելուց դադարած հին, անսահմանորեն հեռավոր սիրավեպի էջերը:

Երբ դուք նայում եք ժամանակից խոնացած տողերին, սեփացած, խոնավ, ասես արդեն նեխող թերթերին, ձեզ համակում է թռչող ժամանակի սարսուռը: Այստեղ ամեն ինչ անցյալում է:

Բայց դուք սկսում եք կարդալով խորամուխ լինել այդ սողերի մեջ և առաջին բառերից ձեզ տկամայից համակում, գրավում է երկար, երկար տարիների միջով անցած նրանց կենդանի, հրապուրիչ ուժը: Բառերը վազում են՝ առաջ անցնելով մեկը մյուսից: նրանք շատապում են, վախենում են ուշանալ: Երանք ժամանակ չունեն: Ընդամենը մեկ ժամ, երկու ժամ առաջ ոչխարում այդ երկու ամենահերջանիկ (թե՞ ամենադժբախտ) կակաները բաժանվեցին: Ի՞նչ է եղել նրանց հետ: Ի՞նչ է լինելու նրանք զեռ ոչինչ չգիտեն: Վաղվա օրը, ինչպիսի՞ն կլինի այն: Դեռ այն աննշմարելի է, անիմանալի: Օնորեն նրան գրում է չապչապ՝ չէ որ այնքա՛ն շատ բան պետք է ասել: Դեռ շափարտելով մի նամակը, նա սկսում է մյուսը: Նրանք համբերություն չունեն ամեն ինչ պատմելու միմյանց: Եվ գրեթե յուրաքանչյուր նախագասությունից, համառոտ գործարար չաղորդումից հետո կրկնվող կրկնատողերը հարցեր են, որոնց պատասխանները, ինչպես Սոֆին է թվում, ինքը երբևք չի ստանա. «Դու ինձ հիշո՞ւմ ես: Դու ինձ սիրո՞ւմ ես: Դու ինձ չե՞ս մոռացել»:

Հավանաբար, դժվար չէ պատկերացնել բանտախցի կոպիտ սեղանի վրա նամակի համար անսովոր կանացի խոշոր ձևագրով գրված սպիտակ էջերի կույտը: Բայց սպիտակ թղթի այդ էջերում ինքը կյանքն է: Որքա՛ն զգացմունքներ, որքա՛ն սպասումներ, որքա՛ն հույսեր են ամփոփված այդ շատպիտ վազող ոտների մեջ:

Այս հսկայական, անողորմ աշխարհում նրանք, այդ անպաշտպան էակները, բնդամենը երկուսն են:

Միզուցե Ալֆոնս Լամարտինն իսկապե՛ս իրավացի էր: Ո՞վ կ'ամարձակվի միճարկել XVIII դարի այդ սիրավեպի արցունքներով սղողված էջերը: Մի՞թե զբանք ակամայից հարգանք չեն սերձելում ընթերցողներին:

Երբ դուք նայում եք այդ ամուր, թվում է թե անխորտակելի կազմերին, այդ գեղնած և ճին հաստ թղթի տախ թանձրացած խիտ էջերին, այդ հնարամիտ և միևնույն ժամանակ իր խզուկ տարագրական անխնկիտյով աղքատ համանի տառատեսակին, դուք պիտոյից տախ անդափսիվում եք վազուց անցած գնացած, գրեթե աննշմարելի, բնդմիշտ հեռացած գտրր:

Արդեն կենդանի չին ոչ Սոֆին, ոչ Օնորեն, ոչ վկաները, ոչ էլ ականտակները: Աչ ոք չի մնացել: Անցած ժամանակներից կթե մի բան էլ մնացել է, սպա սոսկ այս այնքան միամիտ և համար կրկնվող հարցերը:

«Գու ինձ հիշո՞ւմ ես: Գու ինձ սիրո՞ւմ ես: Գու ինձ չե՞ս մոռացել?»

Աչպես է սկսվում այս սիրավեպը նամակներում: Բնարկե, նա անհամեմատելի առավելություններ ունի Ռուսոյի «Նոր էլոիդի» նկատմամբ: Բայց հազիվ թե պետք են Սոֆի Մանիևի և Օնորե Միրարոյի նամակների համեմատությունները ժան-ժակ Ռուսոյի տաղանդով ստեղծված գրական նամակագրության ճեղքնակների հետ: Եվ ինչի՞ համար են փառքի ուշացած հաշիվները: Երկրորդ տարբերակում, որը Միրարոն իր ոչ լրիվ ապրած կյանքի բնթացքում այդպես էլ չհասցրելից (ինչպես և, տակն, այդ մասին բնավ չէր էլ ժամոճում), անհավասար սողերի հետևում հենց ինքը կյանքն է:

Միայն սրատկերողնեյ կարելի է, թե ինչպես դանդաղ, անսահմանորեն դանդաղ է ձգվում ժամանակը միմյանց սիրող երկու էակների համար, որոնք մշտապես մտածում են միմյանց մասին, միշտ երկչուց կրում միմյանց համար և միևնույն ժամանակ բաժանված են երկար տարիներով: Ըստ կրեոլթին, կամարինն իրավացի էր, պնդելով, որ Սոֆիի և Օնորեի սիրտ պատմության էջերն անմահ են: Միգուցե, իսկապե՞ս գրանք անմահ են:

Բայց մեկ անգամ ես կարդացել այդ նամակները սկզբից: Անցավ մեկ տարի: Այդ երկարատև տարվա բնթացքում հրաշք չկատարվեց: Վենսենի զոլյակի հզոր և կանոնավոր սրվագծերը նույն ձևով անհղ կախված են հորիզոնում: Եվ բոլորի մտար անտեսանելի, գաղտնի բնակիչներն ապրում են ամբողջի փոփոխության չենթարկվող, խտտորեն սահմանված, դժամ կանոնների ենթարկված աշխարհում:

Վենսատանը, ուր կալանված էր Սոֆի Մոնիեն, էլի այնպես չէ: Են է շշուկ կերպով պահպանվում է հզնավորի անպաճույճ վերնագրեսս հաղած հուշիկ բայերով ներստուրպա անող բայերի կողմից: Երեկվա օրը նման է այսօրվանին, իսկ այսօրվանը՝ երեկվա և վաղվա օրվան... Անցած օր՝ դա շա՞տ է, թե բի: Սրբան ժամանակն առաջ է անցնում, թվում է, այնքան ավելի ակնհայտորեն է դանդաղում նրա ընթացքը:

Մնորե Միրարոն չի էր վճռականությունը շրջանի իր թշնամիների ձևերն ինչպես կիսակոյր հիմար հաղար: Նա թույլ չի տա, որպեսզի նրանք իրենց կամբին հեթարկեն իրեն: Նա կշտադասեց, ժամանակի մեջ որոշակի բաշխեց այն վիթխարի պարտականությունները, որոնք նա պետք է կատարի առաջիկա մեկ-երկու տարում:

Խորհրդածկու շատ բաներ կային... Ինչպես արդեն ասվել է, Միրարոն սիրեց իր Շաղանի հրամանների ու պետական բանասիրի մասին՝ սրակտտար: Աշխատությունը ծավալվելու համեմատ նա բնդայնում էր այն սղբյուրների ու գրականության շրջանակը, որոնք ներգրավվում էին բննարկվող հարցերի ստեղծմասիրման համար: Միամամանակ նա ձեռնարկեց մի շարք խոշոր գրական աշխատանքներ: Իրանք բնդարձակ թարգմանություններ էին Համերոսից՝ և՛ ըստ հին հունական աղբյուրների և՛ ըստ Պոպպի անգլիական փոխադրությունների, թարգմանություններ Տակիտոսից, և Քոկալլոյի՝ իր կողմից համատարեն առաջ մղվող ու խնամքով խմբագրվող թարգմանություններ: Չի կարելի շապչել այդ մարդու գարնանալի աշխատունակությունից և ներքին հավաքվածությունից:

Վենսենի աշտարակում նա գրանորեց գրչի այնպիսի սրբյունավետություն, որը զժվար կլինիկ նրանից սպասել այն, ամենանպաստավոր պայմաններում: Նա հոյոդացրեց դաժան, խիստ կանոնակարգված ուժիմի պայմաններում կարգավորել ու վենսենի զոլյակի սահմաններից դուրս միջնորդ հրատարակչական ֆիրմաների օգնությամբ կազմակերպել Քոկալլոյի երկերի լույս բնծալումը:

Օրը երկու-երեք անգամ նա նստակներ է գրում իր Սոֆիին: Մտորեն նրան է ուղարկում իր գրական թարգմանությունները, խորցնում նրա կարծիքը այս կամ այն գրական հարցի մասին: Եւ, անկեղծորեն մասնողված է Սոֆիի գրական հաջակի մասին: Թվում է, թե նա մենակ կարող է լրիվ իր ուսերին վերցնել

իրենց բաժին հասած այդ դժվար ճակատագրի ամբողջ ծանրությունը: Առաջվա նման նա Սոֆիի համար քնքուշ, սիրալիր բառեր է գտնում: Նա գիմում է նրան՝ իմ միակ, իմ ջերմագին սեր, իմ ամենաթանկագին...

Դա մի հղոր կաղնի է, և թվում է, որ աշխարհում չկան ուժեր, որոնք կարող են կոտրել երկաթե օրգանիզմը և այդ անընկճելի կամքը:

Եվ այնուամենայնիվ շարունակեք նայել այդ նամակները: Անցավ ևս մեկ տարի: Արդեն անցավ երեք տարի: Հնչում է Վենսենի ուշտարակի զանգը, իսկ ժամանակն անցնում է ավելի դանդաղ, ավելի լուռ: Օնորեն հեռ է նայում: Ահա նա ծառին նշան արեց: Այն ժամանակ դեռ կիրակի էր, նրանից հետո սկսվեց երկուշաբթին, իսկ տոչևում դեռ երկար, մեծ շաբաթն է: Նա հեռ է նայում: Ինչպե՞ս տարբերել օրերը: Այժմ, երբ գրանք մնացել են հետևում, ասես դառնում են միատեսակ, մեկը մյուսի նման: Մի շաբաթը մյուսին: Ահա կանգ առած ժամանակի սարսափելի, ձգձգվող, կոկորդն ավելի ու ավելի պինդ սևզմող օդակը:

Վերստին կարդացեք նամակները, որոնք առաջվա նման փոխանակում են երբեմնի, անհիշելի, անսահման հեռավոր անցյալում երջանիկ սիրահարները: Իսկ չէ որ նամակները զնայով ավելի են քշանում: Իրենք նամակներն էլ ավելի կարճ, ավելի բարակ են դարձել: Օնորեն ու Սոֆին ավելի հագվադեպ են միմյանց գիմելու անհրաժեշտությունը զգում: Եվ ով կարող է ասել, թե ինչն է գործում ավելի ուժեղ՝ տարիների ընթացքում ձևավորված սովորո՞ւյթը, հոգեկան անհրաժեշտությունը կամ պահանջմո՞ւնքը, թե՞, միգուցե, ոչ Օնորեն, ոչ Սոֆին չեն ուզում, չեն էլ համարձակվում խորհել այդ հարցի շուրջ:

Դրանք կարծես այն նույն նամակներն էին, որ եղել էին և նախկինում: Եվ այնուամենայնիվ, գրանք արդեն այն չէին:

Սերը չի այրվում բառերի խարույկի վրա, միայն բառերը բավական չեն: Նամակներում կարելի է մեկ շաբաթ, ամիս, տարի, երեք տարի կրկնել սիրո միևնույն, եթե կամենաք, տարբեր խոսքեր, բայց ժամանակի ընթացքում նրանք կթվան ավելի ու ավելի անկենդան, խամբած, դժգույն: Բառերը պահպանվում են, բայց նրանք կորցնում են իրենց համոզիչ ուժը:

Կալանավորման երրորդ տարում այդ երկաթե թվացող մարդու վարքի, սպրելակերպի, հոգեբանության մեջ ինչ-որ բան

սկսում է տեղի տալ: Նրա պայծառ ու մարտը միտքը մթափում է: Նա գիշերները գրում է ինչ-որ հրեշավոր տարփայլից պատմություններ, որոնք ցերեկային լույսի տակ սարսափելի է կարգալ: Այժմ նա երկար ժամանակ, ժամերով, կարող է խորհել, աշերքը հառելով մի կետի:

Հնչում է Վենսենի դղյակի աշտարակի զանգը: Հնչում է ամեն ժամ: Հնչում է դիշերը, ստավոտյան, ցերեկը, Երեկոյան: Նա այլևս ի վիճակի չէ տանել այդ: Նա այլևս չի կարող լարված վիճակում սպասել, թե երբ աշտարակից կհասնի զանգի հարվածը:

Դրսից ստացվող լուրերը նույնքան տխուր ու ծանր են, ինչպես և այն ամենը, ինչի հետ շփվում է նա այս մուռյլ ամրոցում: Նրա փոքրիկ Վիկտորը, նրա որդին, նրա հույսը, որի մասին նա այնքան շատ է մտածել հարկադրական մեկուսյան օրերին, մահացել է ինչ-որ մանկական հիվանդությունից, որը, միգուցե, չէր լինի, եթե կոմսուհի էմիլի դը Միրարոն ի վնաս սեփական որդու դաստիարակության այդչափ ուշադրությունը չգարձներ աշխարհիկ զվարճություններին:

Սոֆին և Օնորեն միմյանցից թաքցնում են իրենց փոքրիկ Սոֆի-Գարբիելի մահվան վշտալի լուրը: Բայց նրանցից չուրաբանչուրի սրտում դա բարի նման ծանրացած էր: Սոսկայի աշխարհ, ուրախությունից զուրկ աշխարհ, զրկանքների աշխարհ, կորուստների աշխարհ:

1780 թվականի ուշ աշնանը, երբ նույնմբերյան բաժին ծառերից թռում տանում է վերջին տերևները, երբ նորից (այդ էլ բանի՞ հորդը անգամ) նույն անգութ կրկնություն մուռյլ աղջամուղջը ազդարարում է մոռեցող ձմռան մասին, նա հասկանում է, որ այսուհետև ինքն այլևս չի գիմանա: Էլի մի ձմեռ, և նա չի կարող կանգուն մնալ:

Նա Բինյոն դղյակ իր հորը՝ մարկիզ դը Միրարոյին մեղալական, համարյա թե ստորաբարձ նամակներ է գրում: Նա ամեն ինչի համար հորից ներողություն է խնդրում: Նա միշտ մեղավոր է եղել: Հայրը միշտ և ամեն ինչում եղել է իրավացի: Իմ նա անվերապահորեն ընդունում է հոր բարոյական գերազանցությունը, նրա իմաստությունը, նրա մեծահոգությունը: Նա նազանդորեն մի բան է միայն խնդրում՝ օգնել իրեն, հնարավոր ամեն ինչ անել իրեն այս սարսափելի խորխորատից հա-

նելու համար, որտեղ նա թաղված է ողջ-ողջ: Նա խնդրողական նամակներ է գրում նաև կնոջը: Նա օգնութեան կոչ է անում:

Եվ նամակները հասնում են նպատակին: Կամ մարկիզ Միրաբոն այդ առիթի հետևում զգացել է հուսահատութեան ինչ-որ վերջին, ծայրահեղ աստիճանը, կամ էլ այդ արդեն խոր ծիրութեան հասած մարդու խիստ՝ բնավորութեան մեջ ինչ-որ բան է փոխվել: Ըստ երևույթին, նրա վրա ես, ինչպես և Օնորեի, մեծ տպավորություն է գործել նրա թոռան՝ փոքրիկ Վիկտորի մահը, որի հետ նա շատ էր կապված: Առանց քննարկման և առանց հակաձառելու նա դիմում է անհրաժեշտ միջոցների: Հին դասական միայակետությունում տոհմի ավագ Միրաբոն մեծ ուժ է, և ձեր մարկիզի սրտումը բավական էր մի քանի ժամում իր սրբու ճակատագիրը փոխելու համար:

Եվ ահա 1781 թվականի ձմռանը հայր և որդի հինավուրց թիչուն զոչակում սպանում են ժամանակը: Ով կարող էր այդ ինքնամոռի, մոռյլ, տարտամած մարդու մեջ տեսնել նրան, որին դեռ մինչև վերջերս «մայր Փոթորիկ» էին կոչում: Միրաբո-կրտսերը, որպես կանոն, լուր է: Եթե նա բուսեր էլ արտասանում է, ապա լուկ նրա համար, որպեսզի ամեն ինչում համաձայնի Նոր հետ: Նա հորը միշտ և անայլամանորեն իրավացի է համարում:

Բայց ժամանակն անցնում է, և այդ մարդը, որ թվում է թե լիովին կտրված է, աշտարակում կալանքի տարիներից լավ կալված, աստիճանաբար սկսում է հարություն առնել: Դա կատարվում է ոչ միանգամից, դանդաղ, և հաշրբ, որ սկզբում վախենում էր, թե արդեն շափից դուրս ուղ է, թեթևացած տեսնում է վերածնության նշաններ: Ինչպես բոլոր Միրաբոնները համակրված մեծության մուրացրով, մարկիզը կյանքում ամենակարևորն է համարում հոգան իր հինավուրց տոհմի զոչատեումը երկարացնելու մասին:

1781 թվականի դարձանային մի օր Միրաբոն Տանապարհվում է հեռավոր Գիեն, այն մենաստանը, որտեղ միանձնուհիների հսկողության ներքո գտնվում է Սոֆի դը Մոնիեն:

Եվ ահա չորս տարվա բաժանումից հետո տեղի է ունենում այդ հանդիպումը, որի մասին, ինչպես երջանիկ օրվա, քանի՞ անգամ են երազել նրանք:

Նրկուսի համար էլ դժվար է թարցնել նրանց գեմբերին նըր-մարվող իսկական զգացմունքները: Օնորեն իր առջև տեսավ

կիսով չափ սպիտակած նոսրացող մազերով, գունաթափ աչքերի ուսած կոպերով, տգեղ, ազսվաղված դիմադժերով, երբեմնի կորսված ու մեղմութունը կորցրած հասուն տարիքի մի կնոջ: Բայց Նո ինքն էլ է փոխվել: Իհարկե, նրանք երկուսն էլ աշխատում էին ձեացնել, թե ոչինչ չի փոխվել: «Ես քեզ առաջվա նման սիրում եմ: Ես քեզ միշտ պետք է սիրեմ», — կրկնում էին նրանք այժմ, ինչպես երբեմնի անցած գնացած ժամանակներում: Բայց այդ խոսքերը ճշմարիտ չէին, երկուսն էլ դա լավ էին զգում: Բաժանման տարիներին սերը մեռել էր:

Ըստ երևույթին նրանք երկուսն էլ ներքին թեթևություն զգացին, երբ այդչափ ծանր հանդիպումն ավարտվեց: Իհարկե, Նրամեշտ առլով նա մեկ անգամ էլ կրկնեց այն նույն խոստումները, որոնք քանի՞ անգամ արդեն տրվել էին: Բայց խոսքերստ կույան արդեն պետք չէին:

Օնորե դը Միրաբոն այլևս չզրեց Սոֆիին: Դա նրանց վերջին հանդիպումն էր:

Սոֆի դը Մոնիեն ևս մի քանի տարի ապրեց Գիենի Սեն-Կլեր մենաստանում: Նա չէր ուղում բաժանվել այդ մենաստանից: Մի քանի տարի անց, գարնանային մի օր, երբ նրան այցելող շոգևորականը սովորականի նման առաջտառն ժամերին մտավ նրա խուցը, Սոֆիին տեսավ մեռած: Նախօրեին նա դիտավորյալ թողել էր այլով աճուխները և փակել վտարանը: Հալա-նարար նա գիշերը մեռել էր աճխահոտից: Նա հոգնել էր այս դժվարին հողի վրա ապրելուց:

## XV

1781 թվականի ձմռան մի օր մարկիզ դը Միրաբոն, համոզված լինելով, որ որդին արդեն գրեթե ամբողջովին վերականգնել է իր ուժերը, վճանց, որ հասել է նրա հետ բացեփբաց խոսելու ժամանակը: Կոմս դը Միրաբոնի գրությունը մնում էր ծայրահեղ երկիմաստ: Դրանից էլ վատ՝ այն անտանելի էր: Պոնտարլիեում դատարանի վճիոր շեղյալ չէր հայտարարված: Խույնիակ մահվան դատավճիոր, որ կալացվել էր նրա նկատմամբ՝ կատարած հանցագործությունների համար, լիովին պահպանում էր իր իրավական ուժը, պարզապես այն ի կատար չէր անվել: Կոմս դը Միրաբոնի առաջին և ամենակարևոր խնդիրն էր հասնել Պոնտարլիեի դատարանի վճի վերանայմանը: Դատա-

վճռի շեղյալ հայտարարելը և կոմս զը Միրաբոյի անբասիր անունը վերականգնելն առաջին անհետաձգելի կենսական խընդիրն էր, որին լուծում շտալը անհնարին էր գարձնում մնացած բոլորը:

Այն բանից հետո, երբ այդ խնդիրը կլուծվի, պետք է ձեռնամուխ լինել երկրորդ խնդրի կատարմանը՝ Միրաբոյի և կնոջ հաշտեցմանը, միասնական բնաանիքի վերականգնմանը և Մարինիանների ու Միրաբոնների ունեցվածքի և հողերի լրիվ միավորմանը:

Օնորեն առանց առարկելու ընդունեց մարկիզ զը Միրաբոյի ստրատեգիական պլանը: Բայց հո նրա դեմ առարկելն էլ ըստ էության անհնարին կլիներ: Կարձված գիրքերը կոժով հետ նվաճելը հարկավոր էր սկսել ամենատարրական հիմքերից, ամենից առաջ սեփական գլուխն ուսերի վրա պահելուց:

1783 թվականի փետրվարին Միրաբոն եկավ Պոնտարլիե, կամուփին ներկայացավ տեղական բանտ և իշխանություններին հայտարարեց, որ նա ժամանել է այն բանի համար, որպեսզի անձամբ մասնակցի այն դատավարությանը, որը մի քանի տարի առաջ անց էր կացվել իր բացակայությանը:

Նրա նախաձեռնությունները դատավարությունը վերականգնվում է, տևում է մի քանի ամիս և դրա ծավալմանը զուգընթաց, այն ավելի ու ավելի շատ է գրավում ֆրանսիական հասարակական կարծիքի ուշադրությունը: Միրաբոն հրաժարվում է դատապաշտպաններից, և ինքն է իր մշակած պլանով վարում պաշտպանությունը: Այդ պլանը ծայրատիճան համարձակ է, դեռ ավելին, վտանգավոր, նրանում ամեն ինչ դրված է խաղաքարտի վրա: Միրաբոն օգտագործում է 1778 թվականի դատավճռի մեջ եղած հակասությունը: Նրան մեղադրվում էր, որպես մեղադրանքի զլխավոր կետերից մեկը, մարկիզուհի Սոֆի զը Մոնիեին գայթակղելը:

Ըստ ֆրանսիական իրավաբանների շրջանում ընդունված մեկնարանություն, հրապուրել (séduction) ենթադրում է գայթակղողի անմեղ, շամունանցած աղջկան: Միրաբոն հմտորեն է օգտագործում այդ իրավաբանական վրիպումը: Պոնտարլիեում առաջին անգամ համոզվում են, թե որքան մեծ է նրա հոեատրական ուժը: Նա ծանակում է իր հակառակորդներին, ծաղրում նրանց իրավաբանական փաստարկների սնանկությունը: Ինչպե՞ս կարելի է մեղադրել տիկնոջը գայթակղելու մեջ, ինչպե՞ս կա-

րելի է մեղադրել և անգամ պահանջել մեղադրվողի պուխը մի տիկնոջ գայթակղելու համար, որն արդեն մի քանի տարի է ինչ օրինական ամուսնություն մեջ է: Պաշտպանությունից նա անցնում է հարձակման նրա մեղադրական ճառերը նույնքան ճարտար են ու զորեղ, որքան և պաշտպանականը: Նա դրանք տպագրում է առանձին գրքուկներով, տարածում երկրով մեկ: Ամբողջ ֆրանսիան տարված կարգում է Միրաբոյի ճառերը:

Ապացուցելով, որ մեղադրական Լզրակացությունը կառուցված է եղել անհարիրության և սխալների վրա, նա կտրականապես պահանջում է շեղյալ հայտարարել դատավճիռը, որի պատճառով անմեղ մարդիկ այդքան ծանր, ոչ մի բանով չարդարացված պատիժ կրեցին, ու լիովին արգարացնել ն՝ անձամբ իրեն, և՛ մարկիզուհի Սոֆի զը Մոնիեին:

Դատավարությունը Պոնտարլիեում ցույց տվեց Միրաբոյի սպաշնուցիչ հոեատրական զորությունը: Նրա պերճախոսությունն ուժն այնքան մեծ էր, այնքան համոզիչ, որ իր կողմը թեքեց դատավորների մեծ մասին: 1783 թվականի օգոստոսի 14-ին դատարանն ընդունեց վերջնական որոշում, որը շեղյալ էր համարում նախկին դատավճիռը: Միրաբոյի դեմ հարուցված բոլոր մեղադրանքները ճանաչվեցին իրավական ուժը կորցրած, և նույնիսկ դատական ծախսերը, որոնք հասնում էին բավական պատկանելի գումարի՝ 40 հազար լիվրի, դրվեցին գառամյալ մարկիզ զը Մոնիեի վրա:

Դա ամենալիակատարն էր Միրաբոյի տարած բոլոր հաղթանակների մեջ: Այդպիսի որոշում զժվար էր սպասել գառամբանից: Կոմս զը Միրաբոյի անբասիր անունը կրկին վերականգնված է: Նա շրջապատված է տառապալի լուսապսակով, և նրա անունը դարձավ ամենանշանավորներից մեկը ներկում: Ճիշտ է, արիստոկրատական սպունների տարիքավոր տիկիները կոմս զը Միրաբոյի անունը լսելիս սարսափից ձեռքերն իրար էին դարկում, իսկ առավել զգալունները նույնիսկ ուշաթափվում. հետո նրանց հարկ էր լինում ուշքի բերել աղերի օգնությամբ:

Մեր մարկիզը, որ գառամարության ժամանակ հավանություն չէր տալիս որդու համարձակ տակտիկային, համարելով այն չափից դուրս վտանգավոր և հանդուգն, հիմա բավականությունը ձեռքերն է շփում. «Այդ էլեբը, ըստ երևույթին, մո-

ուացել են, որ գործ ունեն իմ որդու հետ: Որդիս գիտեր ումից սովորել:»

Բայց երկրորդ խնդիրը, որ Գաբրիելի առաջ էր գրել մարկիզը, շատ ավելի դժվար էր առաջ գնում:

Կոմսուհի էմիլի դը Միրաբոյի համար Վենսենի ամբողջ աշտարակում իր ամուսնու կալանավորման տարիները ամենաբըշմանիկ տարիներն էին: Այն ժամանակ նա ամենամոզայիկ նրբակիրթ տիկիներից մեկն էր, և նա ստիպված էր խստորեն հաշվել իր ժամանակը, որպեսզի հնարավորություն ունենար մասնակցել մեկը մյուսին փոխարինող աշխարհիկ զվարճություններին: Ամբողջ արխատկրատական Ֆրանսիան գերազանց ցորեն քաշատեղյակ էր կոմս դը Գալիֆեի հետ նրա կապերին: Ըստ էության այն նույն մեղադրանքները, որոնք 1778 թվականին առիթ տվեցին Պոնտարլիեի դատարանին մահվան դատապարտել, իսկ հետո ցմահ բանտարկության ենթարկել Միրաբոյին՝ Վենսենի ամբոցում, իսկ մարկիզուհի Սոֆի դը Մոնիեին՝ խայտառակության և բանտարկության մենաստանում, կարող էին ներկայացվել և՛ կոմս դը Գալիֆեին, և՛ կոմսուհի դը Միրաբոյին: Բայց կար և տարբերություն՝ առաջին ղեկավարում սիրահարները պետք է դաժանորեն հատուցեին այն բանի համար, որ նրանք դա արել էին միանգամայն բացահայտ՝ հաշվի չառնելով հասարակական կարծիքը, իսկ երկրորդ ղեկավարում նույն բանն արվում էր զգուշությամբ, պահպանելով անհրաժեշտ պայմանականությունները և պարտադիր տուրք տալով պաշտոնական երեսպաշտությանը:

Էմիլի դը Միրաբոն գոյություն ունեցող կարգավիճակի պայմաններում ապրում էր թեթև ու ազատ, և նա նվազագույն իսկ հակում չուներ փոխելու իր բնարած ապրելակերպն ու ենթարկվել ամուսնու կամրին: Բացի այդ էլ, իր հորից ժառանգած լինելով ոչ միայն անբավ հարստություն, այլև ազահություն ուկու նկատմամբ, նա չէր կամենում կիսել այն նույնիսկ իր սեփական ամուսնու հետ:

Կողմերի միջև բանակցությունները ոչ մի բանի չհանգեցրին: Եվ այդ ժամանակ Միրաբոն, որ շարունակում էր լսել իր հոխորհորդները, դատական գործ է հարուցում էմիլիի դեմ: Դատավիճիոր պետք է կնոջը պարտավորեցնել վերադառնալ իր ամուսնու մոտ և ապրել նրա հետ մի հարկի տակ:

1783 թվականի փետրվարին էքսում սկսված դատավարու-

թյունը ըստ էության դատավարություն էր Պրոյանսի երկու ամենահզոր՝ Միրաբոնների և Մարինիանների տոհմերի միջև: Բայց այն ուներ մի առանձնահատկություն: Միրաբոնները որպես տոհմ, այսինքն նրա գլխավորը՝ մարկիզ դը Միրաբոն, նրա կրտսեր եղբայր բայի Միրաբոն, այդ տոհմային պաշարին չեն մասնակցում: Դա կոմս Յնորե դը Միրաբոյի դատավարությունն է դը Մարինիանների տոհմի դեմ: Սա նշանակում է, որ մի կողմում միայն հետտորական արվեստն է, իսկ մյուսում՝ հարստության հզորությունը: Պրոյանսի մայրաքաղաք էքսում մարկիզ դը Մարինիանը և նրա տոհմը գնել են ամեն ինչ: Նրբ Միրաբոն ձգնում էր փորձի համար իր կողմը գրավել թեկուզև մեկ դատապաշտպանի, պարզվում էր, որ դա անկարելի է: Պրոյանսի բոլոր դատապաշտպանները, ինչպես ասում են, էն զլոից էին կաշառված Մարինիանի կողմից: Ե՛վ բարձր, և՛ ցածր դատական շինովնիկները, որոնք մասնակցում էին և վերջին հաշվով որոշում այդ դատավարության էլքը, Մարինիանների ձեռքում էին: Ուժերի այդպիսի հարաբերակցության պայմաններում էքսի դատավարության ելքը կանխորոշված էր: Եվ այնուամենայնիվ, չնայած նրան, որ դատավարությունը (Միրաբոն չէր կարող կասկածել զրանում) նյութական և բարոյական վնաս կպատճառի նրան, սակայն ամբողջությամբ այն կնպաստի նրա համբավի աճին:

Դատավարությունն էքսում անցնում էր Միրաբոյին զարհուրեցնող հասարակական հետաքրքրության և ուշադրության պայմաններում: Նիստերի զահիճը տրաքվում էր ժողովրդից, և այն ժամանակվա ամենանշանավոր դատավարությանը ներկա լինել ցանկացողների թիվը գնալով աճում էր:

Այդպիսի, թվում է խիստ մասնավոր, ամուսնու և կնոջ փոխհարաբերություններին վերաբերող հարցում, առաջին հայացքից դժվար բացատրելի շահագրգռվածության հիմնական պատճառը դադանի էր մնում անսեղյակ մարդկանց: Մարինիանների տոհմը պաշտպանում էր մարկիզի հսկայական ժառանգության մեծաշնորհ տիրապետման իր իրավունքները: Քանի վեո փոքրիկ Վիկտորը կենդանի էր, նա իր հոր՝ էմիլի Միրաբոյի ամուսնու հետ մնում էր առավել անվիճելի ժառանգորդը: Բայց Վիկտորի մահվանից հետո և ամուսնու հեա էմիլիի գժավելու պարագայում Մարինիանների համար բարեպատեն հնարավորություն բացվեց ամուսինների միջև ծագած խռովությանը տոն

տալու միջոցով Միրաբոյին հանել ժառանգների թվից: Հենց այս շահագիտական հաշիվներն էին Մարինիաններին հաղորդում այդպիսի անհաշտելիություն:

Դատական նիստին մասնակցելու համար էքս ժամանածների թվում, առաջին շարքերում տեսնում ենք նշանավոր հյուրերի՝ ավստրիական արքիդուքս Ֆերդինանդին, Լոմբարդիայի փոխարքային, թագուհի Մարիա-Անտուանետի եղբորը՝ տիկնոջ հետ: Ճանապարհորդելով Ֆրանսիայում, բարձրաստիճան հյուրը ոչ առանց հիմքի գտավ. ամենահետաքրքիրը, որ նա կարող է տեսնել ու լսել հարևան թագավորությունում՝ նշանավոր Միրաբոյի դատավարությունն է:

Դատավարությունը ձգվեց մի քանի ամիս: Երկու կողմերն էլ սկզբում գործում էին զգույշ, իրենց հաշիվ տալով այն բանում, որ յուրաքանչյուրի մոտ պահեստում դեռ կա ահեղ զենք, որը մինչև այժմ գործի չի գրված: Իժովար է ասել, թե ինչն էր շատ այդ առաջին ճառերում՝ հակառակորդին շեղող խուսափարումն էր, թե՛ լսարանի համակրանքը նվաճելու հույսով թատերական էֆեկտները:

Վճռական հարվածը հասցրեց Մարինիանների գլխավոր դատապաշտպան Պորտալիսը մայիսի 7-ին: Դա հսկայական ուժի հարված էր Միրաբոյի դեմ, ցույց տալով, որ էմիլին նախապես բացառում է հաշտության ամեն մի հնարավորություն նրա հետ, ով դեռ շարունակում է նրա ամուսինը կոչվել: Էմիլին Պորտալիսին դիմեց մարկիզ Միրաբոյի՝ իր հարսին ուղարկած նամակներով՝ սեփական որդու դեմ: Չկային այդպիսի գրեթե անճշմարտանման, հրեշավոր մեղադրանքներ ամենայն հնարավոր ու անհնարին շարագործությունների մեջ, որոնք շվեդագրվեին դժբախտ կոմսուհի զր Միրաբոյի ահավոր ամուսնուն: Պորտալիսի նկարագրությանը Միրաբոն ներկայանում էր որպես եղենագործ, բռնակալ, անբարյացակամ, խաբեբա, անխիղճ և պատվազուրկ մի մարդ: Պորտալիսի մեղադրական ակտում ամենասարսափելին այն էր, որ նա ընդամին վկայակոչում էր կոմս զր Միրաբոյի հարգարժան հոր կամ էլ կոմսուհի զր Միրաբոյի կարծիքները:

Հարվածը խորտակիչ էր թվում և քիչ հավանականություն կար, որ Միրաբոն կկարողանա ուշքի գալ ու շարունակել դատական մենամարտը:

Միրաբոն պատասխան ճառով հանդես եկավ մայիսի 23-ին: Չորս ժամ տևած այդ ճառն ընդունված է համարել էքսում անցկացված դատավարության գագաթնակետը: Ելույթի սկզբում Միրաբոն արտասանեց հայտնեց այն առթիվ, որ հակառակ կողմի գատապաշտպանները փոխանակ հաշտության հնարավոր ուղիներ փնտրելու (դա բնական կլինեք տվյալ հանգամանքներում) ուշադրություն են դարձրել մեղադրական նյութեր որոնելու վրա: Նրանք ստիպում են իրեն՝ Միրաբոյին դիմելու անցյալի այն էջերին, որոնց նա ոչ մի այլ պայմաններում, բացի այն, որոնք ստեղծեց Պորտալիսն իր ելույթով, չէր դիմի: Եվ նա քաղվածք բերեց էմիլիի՝ 1774 թվականից իր մոտ պահպանված նամակից, որ վերաբերում էր իրենց ամուսնության առաջին երջանիկ օրերին, որտեղ էմիլին խոստովանում էր ասպետ զր Գասսոյի հետ ունեցած իր կապի մասին և խոնարհարար ամուսնուն խնդրում էր ներել, խոստանալով, որ նման բան այլևս չի կրկնվի:

Դա վիթխարի առաջին հարվածն էր, որն առաջ բերեց լսարանի ազմկոտ բացականչությունները, երբ նա ավարտեց նամակի ընթերցումը: Կոմսուհի զր Միրաբոն, որին մինչ այդ Պորտալիսը ներկայացրել էր (և Միրաբոն ոչ մի անգամ դա չի իճարկեց) համեստ գառան դերում, այժմ ունկնդիրներին բոլորովին այլ էր ներկայանում: Բայց հմուտ հոնտորի բնազդը, որ զգայուն կերպով որսում էր լսարանի տրամադրությունը, Միրաբոյին զսպեց իր կնոջ հասցեին ուղղված հետազա բնապատական դիտողություններից: Քննադատության և նրան ավելի ու ավելի համակող զայրույթի հարածուն կրակը նա թափեց սկզբում էմիլիի հոր գլխին, իսկ հետո հիմնական զենքը շուտ ավելց Պորտալիսի դեմ, որի հետ նա պետք է հաշվեհարդար տեսներ մայիսի 7-ի դատական նիստի համար:

Նա Պորտալիսին մեղադրում էր այն բանում, որ այդ փաստաբանը, որ կարող էր բարի նպատակով օգտագործել իրեն վերապահված հնարավորությունները, ըստ էության ներկա գատապաշտպան հովանավորողն ու գլխավոր հեղինակն էր: Նա սաստկացող կատաղությանը հարձակվեց իր հակառակորդի վրա և մեղադրանքն ավարտեց հետևյալ խոսքերով. «Եթե փաստաբանը ամբողջ պերճախոսությանը կեղծ գեկլարացիաներ, գրոպարություններ է ժայթքում, եթե նա խարդախում կամ, այլ կերպ, կեղծում է փաստաթղթերը, որոնցից նա քաղվածք-

ներ է բերում... այդպիսի մարդը կեղծիքի և զրպարտութեան վաճառորդ է»:

Պորտալիսը ճգնում էր վեր կենալ, սրպեսզի պատասխանի Միրաբոյին, բայց չգիտացավ իր հակառակորդի սենյացնող հարվածներին: Նա կորցրեց գիտակցությունը և փլվեց հատակին: Նրան ձեռքերի վրա դուրս բերեցին գաշիճից: Դա դատական պրակտիկայում ոչ հաճախակի պատահող դեպք է, երբ հոետորներից մեկը պերճախոսության ուժով իր հակառակորդին գետնաթափալ է անում բռնի իսկական իմաստով:

Հուսիս ամսին, ինչպես արդեն ասվել է, Մարինիանների մարդկանցից կազմված գատարանը վճիռ կայացրեց մարկիզ դր Մարինիանի թելադրանքով: Միրաբոյի համար գատարանի վճիռը անսպասելի չէր: Առանց այդ էլ բառ կուսկան էմիլիի հետ հաշտվելը գործնականում անհնարին էր: Որպես այդպիսին այդ հաշտությունը նրան պետք էլ չէր: Այդ գատավարությունում չեալ նշանակություն ունեին սոսկ գույքային շահերը:

Դեռ մինչև գատարանի վճիռ կայացնելը Միրաբոն մենամարտի հրավերից կոմս դը Գալիֆեին: Նրանք մենամարտեցին սրերով և Միրաբոն վիրավորեց նրա ձեռքը: Մեկ օր անց Միրաբոն երկրորդ անգամ նրան մենամարտի կանչեց, բայց Գալիֆեն չներկայացրավ նշանակված տեղը: Միրաբոն Գալիֆեին ուղարկեց մեկ տուփ խխունջ՝ կցելով կարճատև մի գրովյուն, «Ահա թե ումից դուք պետք է նահանջել սովորեք»:

Էքսի գատավարությունը, թեպետև գործնականում Միրաբոյի համար անարդյունք դուրս եկավ, նրան բարոյական խոշոր առավելություն տվեց: Անհամեմատ մեծ շահով, քան Պոնտարլիեի գատավարությունը, էքսի գատավարությունը նպաստեց նրա հեղինակության աճին ամենայն խավերի, հասկապիս երրորդ դասի շրջանում: Երբ Միրաբոն անցնում էր էքսի և Պրովանսի մյուս քաղաքների փողոցներով, նրան դիմավորում էին ծափահարություններով: Անծանոթ մարդիկ մտանում էին, սեղմում նրա ձեռքը, ողջունելու համար հանում գլխարկները, նրան հավանություն արտահայտող բացականչություններ պարզեում:

Էքսի գատավարությունը պատկանում էր իր ժամանակի ամենահռչակվող գատավարություններից մեկին և է՛լ ավելի մեծ ուշադրություն էր գրավել, քան Գյոզմանի դեմ Բոմարշեի ազմուկ հանած գատավարությունը:

Միրաբոն դարձավ նշանավոր դեմք: Նրա հոետորական արվեստի մասին, որն ի հայտ եկավ դատական այդ մենամարտերի ժամանակ, կիսաֆանատստիկ պատմություններ էին պատմում:

Միրաբոյի շուրջ այժմ խմբվում էին երիտասարդներ, որոնք մեծ մասամբ առաջավոր հայացքների տեր էին. Բրիսսոն՝ ժիրոնդիսանների ապագա պարագլուխը, որ այն ժամանակ ճգնում էր դեպի վեր ճանապարհ հարթել լրագրային փորձերով և փիլիսոփայական-հրապարակախոսական շորինյաժքերով, կլավիերը՝ ժուկի գեմոկրատների առաջնորդներից մեկը, որը հետագայում նույնպես նշանակալից դեր խաղաց ժիրոնդիստական շարժման մեջ, բացի այդ, նա խոշոր ֆինանսիստ էր. Նիկոլա ճամֆորը՝ նախահեղափոխական դարաշրջանի ակնավոր գրողներից մեկը, որը գրականության մեջ արդեն ձեռք էր բերել հանաչում և պատվովոր դիրք: Շամֆորի և Միրաբոյի միջև հաստատվեցին ամենասերտ, բարեկամական հարաբերություններ, դիմանալով ժամանակի քննությունը: Միրաբոյի հռչակն այնքան մեծ էր, որ նրան էին ձգտում մի քանի երիտասարդ արիստոկրատներ, որոնք կյանք էին մտել և լավ էին զգում մոտավոր փոփոխությունները: Նրանց թվում առաջիններից մեկը, ով տասնձին, միայն իրեն հատուկ հաստատվածք կուսեց Միրաբոյի ուժը, այն ժամանակ նոր միայն աշխարհ մտած Օտտենի երիտասարդ, հմայիչ եղիսկոպոս իշխան Շառլ-Մորիս Տալեյրանն էր: Տալեյրանի կենսագրությունն այն ժամանակ նոր միայն սկսվում էր: Եվ նրա մասին, դերազանցապես կանանց ստյուններում, խոսում էին քնքուշ ժպիտով. «հմայիչ տղա է»:

Բայց այդ «տղան», որն իրար տիրապետում էր «հրապուրչի» արվեստին, օժտված կախարդելու կարողությամբ, արագ դրսեփորեց և այլ, գործնական բնույթի ընդունակություններ: Այնպես, ինչպես շատ ավելի ուշ նա առաջին իսկ հայացրից կարողացավ գնահատել երիտասարդ գեներալ Բոնապարտին, այդպես էլ 80-ական թվականների սկզբին, մեկ անգամ տեսնելով Միրաբոյին, նա հասկացավ վերջինիս ուժը և սկսեց քվել նրան:

Այժմ մինիստրության ազդեցիկ անդամները ևս ստիպված էին հաշվի նստել Միրաբոյի հետ: Կոմս դը Վերմենը՝ կյուրովիկոս XVI-ի արտաքին գործերի մինիստրը, նրա հետ խորհրդակցում է մի շարք հարցերի շուրջ: Իսկ ավելի ուշ, 1786 թվականին, Միրաբոյին առաջարկում են հուլիս գաղտնի դիվանագի-

տական հանձնարարություն Բեռլինում՝ կապված Վերժենի դի-  
վանագիտական բարդ և խորամանկ մտահղացումների հետ: Նա  
երազում է տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Պրուսիայի  
նոր եռյակ կառուցիկ ստեղծելու մասին, որի առավելություն-  
ների մեջ Միրաբոն պետք է համոզի զուտամյալ թագավոր  
Ֆրիդրիխ II-ին և թագաժառանգ Հենրիխին: Այդ դիվանագի-  
տական առաքելությունը հիրավի ամենեին էլ աչքբան անվնաս  
և անմեղ չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Դա խաղ  
է դանակի շեղբի հետ: Ո՛ւմ դեմ պետք է ուզվի երեք տերու-  
թյունների այդ միաբյուր: Դժվար չէ այդ մասին գլխի բնկնել՝  
Հարսբուրգների հզոր կայսրության դեմ: Բայց հակաազատրիա-  
կան քաղաքականությունը սեեռուն ուշադրության է արժանի ոչ  
այնքան արտաքին քաղաքական տեսակետներից, ինչքան ուժերի  
ներքին տեղաբաշխումով: Պայքար մղել Ավստրիայի դեմ՝ նշա-  
նակում է պայքար մղել հզոր թագուհի Մարիա-Անտուանետի և  
նրա հոնքերի շարժմանը հյու-հնազանդ հետևող ամբողջ ավս-  
տրիական կուսակցության դեմ: Սակայն Միրաբոնին դա չի  
անհանգստացնում: Նա լավ գիտե, որ Մարիա-Անտուանետ թա-  
գուհին իրեն տանել չի կարող, որ դեռևս նախկինում, երբ ինքը  
գտնվելով Անգլիայում հրատարակեց պամֆլետ ի պաշտպանու-  
թյուն նիդեռլանդական ժողովրդի, որը տուտապում էր Հարս-  
բուրգների բռնակալական լծից, Մարիա-Անտուանետը պատ-  
րաստել էր «գաղտնի հրաման»՝ Միրաբոնին ամբողջում բան-  
տարկելու մասին: Դեռ ավելին, նա գիտեր նաև, որ թագուհին  
պատրաստել էր և այլ գաղտնի հրամաններ, գաղտնի հրաման-  
ների մի ամբողջ շարք, որոնք, թե որ ի կատար ածվեին, նորից  
Միրաբոնին մինչև նրա կյանքի վերջը կպահանջեին Վենսենի ամ-  
բոցի աշտարակում:

Բայց և այնպես ժամանակները փոխվում են: Եվ Լեթ Մա-  
րիա-Անտուանետի գաղտնի հրամանները գործողության չեն  
դրվում, ապա ոչ միայն այն կանանց թախանձանքով, որոնք  
սրտամտ էին բնզունում կոմս դը Միրաբոնի ճակատագիրը, այլև  
այն պատճառով, որ թագուհին արգեն ի վիճակի չէ անել այն  
ամենը, ինչ նա ուզում է:

80-ական թվականների կեսերից Ֆրանսիայում բուրժուան էն  
զգում հակայական ուժի պայթյունի մտեհնալը: Այն ուշադրու-  
թյունը, որով այժմ շրջապատված է Վենսենի ամբոցի երեկվա  
իրավագուրկ բանտարկյալը, ինքնին հասարակական գիտակցու-

թյուն մեջ տեղի ունեցող փոփոխությունների անվիճելի ապա-  
յույց էր:

1783 թվականին Ֆրանսիան ԱՄՆ-ի հետ մեկտեղ ստորագրեց  
Վերսալյան պայմանագիրը, որը վերջ դրեց Անգլիայի դեմ պա-  
տերազմին: Դա հույսեր ծնեց, որ թանկ նստող պատերազմի  
ավարտումով թագավորության ֆինանսական դրությունը կբա-  
րելավովի: Սակայն ստիպված էին շուտով հրաժեշտ տալ այս  
հույսերին: Փողերը քամուն տալու ավելի ու ավելի նոր միջոցներ  
որոնելու մեջ ապշեցուցիչ հնարամտություն դրսևորող Մարիա-  
Անտուանետի շոպյուրթյունը, աճող ազատությունը, գահի ստա-  
րտում կերակրվող պալատական խառնախմբի անզուսպ ախոր-  
ժակը, անամոթ գողությունները, ընդհանուր ծախվածությունը,  
անպատասխանատվությունը, հանցագործության հետ սահմա-  
նակցող շարաշահումները, որի մեջ էին ներքաշված թագավորի  
բարձրաստիճան ծառայողները՝ ընդհուպ մինչև մինիստր Կա-  
յունը, այս ամենը սպառնալից արագությամբ ավելացնում էր  
դեֆիցիտը, ստեղծելով անհաղթահարելի ֆինանսական դժվար-  
ություններ:

Ապաշուրհ, բայց Մարիա-Անտուանետին լիովին հնազանդ  
ֆինանսների պետական վերահսկիչները կարծես դիտավորյալ  
նորամտած քաղաքականություն էին վարում այն բանի հա-  
մար, որպեսզի ուժեղանա ընդհանուր դժգոհությունը: 1786  
թվականի սեպտեմբերին Անգլիայի հետ կնքվեց առևտրական  
պայմանագիր, բայց պայմանագիրը կազմված էր այնպես, որ  
այն բոլոր առավելությունները տալիս էր անգլիական կողմին  
և ձեռնաու չէր Ֆրանսիային: Երրորդ գասի շարքերում պայմա-  
նագիրը ենթարկվեց բացահայտ, լիովին հիմնավորված քննա-  
դատության:

Ֆինանսների գլխավոր վերահսկիչները երկար չէին մնում  
իրենց պաշտոններում, տեղը չափից դուրս տաք էր: Փայլ  
դը Ֆլեբին փոխարինեց դ՛Օրմեսոնը, բայց նա էլ չդիմացավ:  
Բուրբից երկար, 1783-ից մինչև 1787 թվականը, չորս տարի,  
այլ կարևոր պաշտոնը զբաղեցնում էր Շաու-Ալեքսանդր դը  
Կայունը:

Այլ գեղեցիկ, նրբագեղ, բարեհամբույր մպիտով մինիստրը,  
թվում է, ախրում էր ինչ-որ անորոշ գաղտնիքների: Նրա համար  
դուրություն չունեի ոչ մի արգելք, ոչ մի դժվարություն: Նա ցան-  
կացած խնդրանք թողակների, շնորհների, պարտերի մարման

մասին բավարարում էր տոանց մի առարկություն: Նույն զինաթափող, հրապուրիչ հավատ ընծայող ժպիտով նա զրույցներին մեկի ժամանակ թագավորին խոստովանեց, որ ինքն ունի անձնական պարտքեր՝ շնչին գումար, 220 հազար լիվր, բայց դա իրեն այնուամենայնիվ հուսահատեցնում է: Թագավորը տեղնուտեղը արկղիկից հանեց 220 հազար և հանձնեց մինիստրին: Չար լեզուները պնդում էին, որ Կալոնը ստացած գումարները պարտատերերին այդպես էլ չավեց, այլ գումարեց իր եկամուտներին (կամ ծախսերին): Թե ինչ սնուն պետք է տալ սրան, դժվար է գլուխ հանել: Գրեթե ամեն տարի Կալոնը բաց էր թողնում 100 միլիոն կամ ավելի լիվր փոխառություն (ընթացիկ ծախսերը ծածկելու համար), և բաժնեգրությունը շափազանց հաջող էր գնում: Բոլոր պաշտոնական ելույթներում նա պնդում էր, որ պետության ֆինանսական դրությունը լրիվ կարգին է, որ գործերը լավ են գնում, իսկ սրանից հետո ավելի լավ կգնան: Ի կատարումն Սեն-Վրու պալատը ձեռք բերելու մասին թագուհու հայտնած առաջին իսկ ցանկություն, Կալոնն անհապաղ դրա համար վճարեց 15 միլիոն, իսկ Ռամբուլե դղչակը, որը դուր էր եկել թագավորին, ձեռք բերվեց 14 միլիոնով:

Մարիա-Անտուանետը, իսկ նրա հետևից բոլոր պալատական տիկնայք թեթևացած շունչ քաշեցին՝ վերջապես Ֆրանսիայում հայտնվեց ֆինանսների իսկական, բանիմաց մինիստր՝ Նեկկերի նման սասախի ժլատների փոխարեն, որը ճգնում էր հարստություն տնտեսել թերաշրված մոմերի հաշվին:

Բոլոր այդ պարոնները գլխի շնչին ընկնում, որ Կալոնը (բնությունից շափազանց խելոք մի մարդ) վաղուց է արդեն հասկացել, որ պետության պարտքերն այնքան մեծ են, որ միևնույն է դրանք մարել չի լինի, և իսկական ազնվականական անհոգությունը գանձարանի հին պարտքերին ավելացնում էր նորերը՝ 30 միլիոն ավել կամ պակաս, ինչ տարբերություն, երբ վճարելու համար ոչինչ չկա:

Թագավորական գանձարանը զատարկված է, պետության պարտավորությունների դիմաց վճարելու ոչինչ չկա, և 1787 թվականին, չգտնելով այլ վճիռ, թագավորն ստիպված էր վերստի ստանալ հրավիրել նոտարյան խորհրդակցություն: Բայց արտանյալ դասերը, որոնք պետք է նվիրարեցնեին իրենց եկամուտների մի մասը, որպեսզի ամբանար միապետության տարուբերվող շենքը, շկամեցան ոչինչ զոհարեցել: Ամեն մեկը գտնում էր

իսկ ինչպես ուզում են տակից դուրս գան, բայց առանց իրեն: Նոտարյան հրավերն ավարտվեց լիակատար անհաջողությամբ:

Իրար հետևից երկու անբերրի տարիներ՝ 1787 և 1788, 1788/89 թվականների անօրինակ դաժան ձմեռը, երբ սառցակալեցին Սենան և Ֆրանսիայի հյուսիսի մյուս գետերը, աղետալիորեն վատացրին գյուղացիություն, շրավորության և քաղաքների խղճուկ ամբոխի դրությունը: Ժողովուրդը չէր կարող և չէր ուզում հաշտվել զրկանքների ու տառապանքների հետ:

Փորձելով հաղթահարել վարչակարգի արագորեն խորացող նյնաժամը, թագավորական իշխանությունը հայտարարեց Գրյուամոր շտատների ընտրություններ անցկացնելու մասին:

## XVI

Կոմս Օնորե դը Միրաբոն 1786 թվականի հունվարին փոքրիկ, բայց հարմարավետ կառքով հատուկ դիվանագիտական անձնագրով դուրս եկավ Փարիզից և ուղղություն վերցրեց դեպի արևելյան սահման տանող ճանապարհ: Միրաբոն մեկնակ չէր: Նրա հետ միասին հեռավոր ճանապարհորդության մեկնեցին ժյուլի-Հենրիետա դը Նելյոն և նրանց փոքրիկ սրդին՝ Լյուկա դը Մոնտինյին: Ճամփորդների այդ խումբը կարելի է անվանել փոքրիկ ընտանիք, այդ բնորոշմանը շատով իրավաբանական իմաստ: Պատահեց այնպես, որ պատահական կապերով տոտա անկանոն ապրելակերպի պայմաններում Միրաբոն անուպատեկիորեն կապվեց դեռատի, զրեթե երկու անգամ իրենից բաժնի, խելացի, կրթված, խոհուն, խարտյաշ մի ուղջկա հետ, որն օրրատօրե ավելի ու ավելի մեծ ազդեցություն էր ձեռք բերում նրա վրա: Միրաբոնի այս նոր, վերջին հրապուրանքը չէր շիջեցնում նախկին կիրքը Սոֆի Մոնիեի նկատմամբ: Օնորեն մեծացել էր, և նրա զգացմունքներն արդեն այլ էին: Սերը յրացվում էր բարեկամությամբ և մի տեսակ մտավոր համագործակցությամբ: Տիկին դը Նելյոն նրա բոլոր կորեորագույն գրական նախաձեռնությունների շափազանց արժեքավոր մասնակիցն ու օգնականն էր: Փոքրիկ տղան, որ նրանց հետ միասին գնում էր կառքով, Միրաբոնի սրդին էր մեկ այլ կնոջից: Սրանչելի տղային Միրաբոն շատ էր կապված և նրա համար սիկին դը Նելյոն կամավին ու մեծ ցանկությամբ մայր դար-

ձափ: Ինչպես հայտնի է, ավելի ուշ էջուկա դը Մոնտինյիի շնորհիվ հետագա սերունդներն ունեցան Միրաբոնյի առաջին լիակատար և փաստաթղթերով լավ հիմնավորված կենսագրությունը<sup>29</sup>։ Եվ Լեթ Մոնտինյիի գիրքը որոշ հիմքով մեղադրում են շատագուցավական բնույթի համար, ապա մարդկայնորեն դժվար է այդ բանում մեղադրել որդուն, որը հպարտանում է իր հորով:

Եվ այսպես, զեպի արևելյ ավելի ու ավելի հեռացող կառքն ուղևորվում էր Բեռլին: Այստեղ չենք շարագրի Միրաբոնյի և նրա փոքրիկ ընտանիքի անցկացրած երկամյա կյանքի պատմությունը ոչ Պոտսդամում, որտեղ նրան հաջողվեց երկու անգամ հանդիպել Պրուսիայի զրեթե արդեն հոգեվարքում գտնվող երկաթյա միսպետին, ոչ Մագդեբուրգում, ոչ Բեռլինում, ոչ դուքս Բրաունշվեյգի առհմական կալվածքում, որի հետ նրան հաջողվեց սերտ կապեր հաստատել:

Միրաբոն քաղաքական կողմնորոշման իր ձիրքով արագ պատկերացում կազմեց և՛ Պրուսական միապետության ներքին մեխանիզմի, և՛ երկրի ներսում քաղաքական ուժերի իրական տեղաբաշխման մասին: Նրա գործնական նկատառումները, որոնք նա հասցեագրում էր վերսալյան կարիներին, խելամիտ էին և հիմնավորված Ֆրանսիայի շահերի պաշտպանության տեսանկյունից: Ժամանման առաջին օրերից նա հանդիպեց Բեռլինում Ֆրանսիայի պաշտոնական ղեսպանի հակազդեցությունն ու բացահայտ օպոզիցիային և հարկ է խոստովանել, որ Միրաբոն ավելի լավ էր հասկանում պրուսական քաղաքականության բուն էությունը, քան Ֆրանսիայի պաշտոնական ներկայացուցիչը:

Բեռլինում Միրաբոն սկսեց իր վիթխարի աշխատությունը Պրուսական միապետության մասին: Ամենից գարմանալին այն է, որ նրա ուժերն ու համատությունը բավականացրին մինչև վերջ հասցնելու այն Դա մի ընգարձակ քառահատոր երկ էր, որտեղ ամենատարբեր տեսանկյուններով քննարկվում էր Հոհենցոլերների գլխավորած Պրուսական միապետության գործունեության ներքին բնույթը: Իհարկե, ժամանակակից ընթերցողի տեսանկյունից այդ երկը թվում է հնացած, ասենք այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ այն գրված է XVIII դարի գրական տրակատներին ոճով և գտնվում է այն ժամանակվա գիտելիքների ու ամսագրային ճաշակի մակարդակին: Բայց այդ երկասիրությունը վկայում է ոչ միայն Միրաբոնյի գրական ստեղծա-

պործության ապշեցուցիչ աշխատասիրության և նպատակասլացության մասին: Ինքնին այն հիմա էլ շարունակում է առաջնակարգ նշանակության աղբյուր մնալ XVIII դարի վերջի Պրուսական պետության սոցիալ-քաղաքական բնույթը հասկանալու համար: Այդ մոնումենտալ աշխատությունը համարում է ոչ միայն կոնկրետ փաստական նյութով, հեղինակի կողմից հաղորդվող տվյալների հարստությամբ, այլև ամենից առաջ պրուսական ֆեոդալների բխամիտ, սահմանափակ, ամբարտապան, սնապարծ ագրեսիվության բնութագրումների դիպուկությամբ և ըմբռնման խորությամբ<sup>30</sup>:

Պրուսական միապետության մասին աշխատությունը չէր ավարտվի, եթե Միրաբոն շունենար մի այնպիսի անգնահատելի օգնական, ինչպիսին էր տիկին դը Նեյրան: Այդ վերջին, գրական տեսակետից առավել արգասավոր տարիներին տիկին դը Նեյրան ըստ էության նրա ամենամոտ օգնականն էր, զրեթե հեղինակակիցը: Իսկն ասած, հենց այն ժամանակ է ստեղծվում այն, ինչը հետագայում սկսեցին անվանել «Միրաբոնյի արհեստանոց»: Արդեն Պրուսիայում տիկին Նեյրայից բացի նյութերի որոնումների և ընտրության հարցում նրան մեծ օգնություն էր ցույց տալիս գերմանական գործերում գերադանց կողմնորոշվող և Գերմանիայում երկար ժամանակ ապրած Մոփիլինը: Միրաբոնյի աշխատակիցներին էին նաև կալվիերը, Բրիստոն և մի շարք սակավ հայտնի օգնականներ:

Միրաբոն ավելի ու ավելի շատ ուշադրություն, ժամանակ, ուժեր է տրամադրում գրական գործունեությանը: 1788 թվականին, այն բանից հետո, երբ դուքս Բրաունշվեյգը գլխավորում է պրուսական բանակը, որը մարտաբաշխվի էր էլի Լուանդիայի դեմ, Միրաբոնյին հաջողվում է Անգլիայում հրատարակել սուր պարսավագիր (պամֆլետ) Պրուսիայի և պրուսական զենքալուքս Բրաունշվեյգի դեմ, որին նա ղեռ երեկ թեթևատորեն նսկված էր լիբերալ, զրեթե իր համախոհը համարել:

Մեկ տարի անց, արդեն վերագոնալով Ֆրանսիա, Միրաբոն լրատարակում է քաղվածքներ խայտառակ մերկացուցիչ հռչակ ձևը բերած նամակներից, որոնք վերաբերում էին Հոհենցոլերների արքունիքի ինտիմ պատմությանը: Այդ գիրքը, որն ուներ աչքի զարնող «Բեռլինյան արքունիքի գաղտնի պատմությունը» վերնագիրը, հարուցում է ֆրանսիական կառավարող շրջանների ծայրաստիճան դժգոհությունը: Բայց Միրաբոնյին հաջողվում է

հարթել բարդություններով ստանալով կոնֆլիկտը, պաշտոնապես ժխտելով իր մասնակցությունն այդ հրատարակությունը:

Միրարոն այդ վերջին նախահեղափոխական տարիներին գրում է շատ, կրքոտություններ: Այժմ նա իրեն անհամեմատ ավելի վրաստահ է զգում, քան առաջ: Թեև նրա հրատարակած ստեղծագործությունների մեծ մասը ժամանակի սովորույթի համաձայն անստորագիր են, դրանցից շատերը մեծ համբավ էին վայելում: Այսպես, նրա առաջին «Փորձ բունկայություն մասին» երկը համարյա թե լուսավորական մտքի առաջատար ստեղծագործություններից մեկի հռչակ ուներ:

Միրարոն խիզախորեն հարձակվում է նաև այն քաղաքական գործիչների վրա, որոնք մեծ հեղինակություն էին վայելում երրորդ դասի օպորտիցիալի շրջաններում:

Ֆրանսիայում հարուստ բանկիր նեկկերը, որ մեծ հաջողությամբ բազմապատկել էր իր անձնական ունեցվածքը, միգուցե այդ պատճառով ֆրանսիական բուրժուազիայի շրջանում ֆինանսական արվեստի խոշոր վարպետի համարում ուներ: Ֆրանսիական բուրժուազիան նեկկերի հետ է կապում բոլոր հույսերը: Ընդունված է համարել, որ միմիայն նա կարող է թագավորությունը փրկել ֆինանսական սնանկացումից, որ նրա գրքայանները լիքն են Ֆրանսիայի բուժման փրկարար ղեկառուներով:

Միրարոն ամենին համոմիտ չէ այն պատրանքներին: Մասնավոր, հաճախ երկրորդական բնույթի բազմաթիվ պատճառների հետևանքով նա տանել չի կարող այդ գործին: Իրեն հաշիվ առնելով այն բանում, որ պայքարելով նեկկերի դեմ, նա չի նպաստի իր հանրաճանաչության անին, Միրարոն այնուամենայնիվ համարձակվում է բացահայտ պատերազմ մղել նշանավոր ֆինանսիստի դեմ: Այն պահին, երբ նեկկերի հռչակը հասնում է զաղափնակեօին, Միրարոն նրա դեմ հրատարակում է «ժամակներ պարոն նեկկերի մասին» պարսավագիրը: Դա «ժամացույց է, որը միշտ հետ է ընկնում»՝ այսպիսի արհամարհանքով է արտահայտվում նա նեկկերի հասցեին:

Ըստ երևույթին անհաշվենկատորեն, գերազանհատելով իր ուժերը, նա միտամանակ պատերազմ է մղում ոչ միայն նեկկերի, այլև այն ժամանակ դեռևս հզոր մինիստր Կալոնի դեմ: Միրարոն խորաթափանցորեն կանխատեսում է Կալոնի շուտափույթ անկումը, բայց, չսպասելով այդ պահին, նա պարսա-

վագրեր է հրատարակում և նրա դեմ: Ասեմք Միրարոյի բնագրական գրական արտադրանքը շոշափում է և մյուսների շահերը: Լեզնոդ Բոմարշեն, որ այդ ժամանակ տարված էր խոշոր մասշտաբների հասնող շահագիտական գործողություններով, ընկնելով Միրարոյի քննադատական գնդակոծության տակ, ծաղրանքով նկատում է. «Ես ձանձրացել եմ այդ միրաբելից (դեղնաշուրից), լավ կերել ու կշտացել եմ զրանից»:

1788 թվականի սկզբից Միրարոն, որ դեռ ավելի առաջ կարճ ժամանակով Բեռլինից մեկնել էր Փարիզ, վերջնականապես մնում է մայրաքաղաքում: Բայց նրա ընտանիքը, առանց որի նա իրեն զգում է անօթևան, դեռ մնում էր Պրուսիայում: Եվ նա ստիպված է նրա Փարիզ վերադարձի զանազան տարբերակներ որոնել: Ամենահիմնական դժգոհությունները, ինչպես գրեթե նրա ամբողջ կյանքում, ֆինանսական դժգոհություններն էին: Նա արգեն շուրջ քառասուն տարեկան էր, բայց դեռ չէր սովորել փող հաշվելու և իր եկամտաներին համապատասխան ասրելու արվեստը: Վերջապես մտերիմների օգնությամբ նրան հաջողվում է հաղթահարել իր ընտանիքի վերադարձի ճանապարհին ծագած խոշընդոտները, և 1788 թվականին ընտանիքը վերամիավորվում է:

Ժյուլի-Լենրիետան վերագառնում է ճիշտ ժամանակին: 1788 թվականին Միրարոն աժասպատ է լինում հանելուկային և նրան անբերականելի տառապանքներ պատճառող ինչ-որ հիվանդությունից: Բժիշկները չեն կարողանում ճշգրիտ ախտորոշել հիվանդությունը: Այն ժամանակվա բժշկության կանոնների համաձայն հիվանդին բուժում են արյուն թողնելով: Միգուցե Միրարոն այդ ընթացքում մտ երկու լիար արյուն է կորցրել: Եվ եթե նա վերջիվերջո հաղթահարեց իր բոլոր ախտերն ու անցավ այն տարիների բուժման բոլոր մտանգավոր մեթոդներով, ապա զրանով նա պարտական էր ոչ միայն բնությունից հզոր իր օրգանիզմին, այլև կնոջ հոգատար խնամքին:

Բայց այդ բոսսային, ներքուստ հակասական մարդը, որ իսկապես թեթևություն էր զգում միայն այն ժամանակ, երբ նրա կողքին էր հավատարիմ ընկերուհին, և անկեղծորեն ձգտում էր ամրապնդել առաջին անգամ իրեն հոգեկան հանգիստ պարգևող այդ միությունը, հաջողեցնում է սեփական ձեռքերով կործանել այն, ինչը նա այդքան հաջող կերպով էր գտել: Նա իրեն թույլ տվեց մտնել սիրային կապի մեջ, որը վերանցեց երկարա-

տն ու հաստատուն կապի կասկածելի համբավի տեր մի կնոջ հետ, որը նրան սկզբում գրավել էր սոսկ որպես հրատարակչական ձեռնարկութեան ճշմարիտ սեփականատիրոջ: Ժյուլի-Ղենրիեստոսը դր նեյրան առժամանակ հանդուրժեց իր ամուսնու անհավատարմութիւնը: Բայց նրա համբերութեան վերջն էլ եկավ: 1788 թվականի օգոստոսին նա հեղափոխականից և նույն երեկոյան մեկնեց Լոնդոն:

Գեռ երեկ այնպես հուսալի ու երջանիկ թվացող ընտանեկան բույնը դատարկվեց: Միրարոն չի էր ամեն ինչ ուղղելու, ամեն ինչ փոխելու վճռականութեամբ՝ Ժյուլիի հետեից գնալ Լոնդոն, համոզել նրան վերադառնալ, վերականգնել ընտանեկան երջանկութիւնը, որն ինքը կործանեց հանցավոր թեթևամտութեամբ:

Բայց եկավ վաղվա օրը նոր հոգսերով, գործերով, որոնք, ինչպես միշտ, թվում էին անհետաձգելի: Եվ այն, ինչ որոշված էր անել վաղը, հետաձգվում էր ևս մեկ օրով, հետո ևս մեկ օրով, և այդպես անվերջ, աստիճանաբար կորցնելով իր հրատարակչութիւնը և կամաց-կամաց կենսական անհրաժեշտութիւնից վերածվելով բարի ցանկութեան:

Միրարոյին դեռ թվում էր, թե ամբողջ կյանքն առջևում է, թե ամեն ինչ նոր միայն սկսվում է, ինքը դեռ նույնիսկ ուժերի լրիվ ծաղկման մեջ է (չէ որ դեռ բառասուն տարեկան էլ չկա), և որ ինքը դեռ կհասցնի ամեն ինչ փոխել, ամեն ինչ շրջել դեպի յավր:

Խեղճ, անզոր մարդ: Արդյոք կարո՞ղ էր նա այն ժամանակ իմանալ, որ թեև իսկապես սկսվել էին նրա կենսագրութեան ամենակարևոր էջերը, բայց որ դրանք կլինեն ամենակարճը և որ կյանքը, իրեն անափ օվկիանոս թվացող կյանքն արդեն վախճանին էր մոտենում. չի անցնի ևս երկու տարի և այն կընդհատվի մահով:

## XVII

1787 թվականի նոյեմբերի 18-ին Միրարոն գրում էր. «Ֆրանսիան հասունացել է հեղափոխութեան համար»:

Պատահել է, որ Միրարոն վերջին տարիներին շատ բաներում էր սխալվում, կեղծ կամ թեթևամիտ արարքներ կատարում: Բայց գլխավորի՝ հասարակական զարգացման բնութի ու միտումների մասին նա ճիշտ էր դատում: Եվ հենց նոր բերված

հատվածում նա նույնպես պարզորոշ է բնորոշել իրերի դրոսթիւնը, քան թե նրա շատ ժամանակակիցներ: Ֆրանսիան իսկապես գտնվում էր հեղափոխութեան շեմին: Միրարոն նույնքան հիմնավորվածութեամբ էր արտահայտում զեռես նոտաբլների գումարման ժամանակ, երբ շատ բաներ պարզ չէին և անխուսափելի չէր թվում Կալոնի վերջին անհաջող մաների խորտակումը, համոզվածութիւնն այն բանում, որ շուտով թագավորը ստիպված կլինի կանգնել Գլխավոր շտատներ գումարելու անհրաժեշտութեան առաջ: Գրանում ևս նա չսխալվեց:

1788 թվականի օգոստոսին, այն բանից հետո, երբ թագավորութիւնում խորացող ճգնաժամը հաղթահարելու սեփական բաղաբականութեան ճանապարհին Լոմենի զբ Բրիենի (փախուստի դիմած Կալոնին փոխարինողի) բոլոր փորձերն անհաջողութիւն կրեցին, այն բանից հետո, երբ ամբողջ երկիրն իմացավ, որ շնայած խոստումներին ու հավաստիացումներին պետական գեֆիցիտը գերազանցել է 140 միլիոն լիվրը, միապետութեանը ոչինչ չէր մնում, քան 1789 թվականի մայիսին հայտարարել Գլխավոր շտատներ գումարելու մասին:

Ամեն ինչ մի ակնթարթում շարժման մեջ մտավ: Գլխավոր շտատների գումարումը, ղեկավարութեան թեկնածուների առաջիկա առաջադրումը, հրահանգների նախապատրաստումը, անսահման խնդիրների բննարկումը՝ այս բոլորը գլուխ էր պտտեցնում, ուրախալի սպասումներ, մեծ հույսեր ծնում:

Գլխավոր շտատների մասին թագավորական հրամանագրի հրատարակումից հետո առաջին իսկ օրերից խոր անհամապատասխանութիւն երևան եկավ մի կողմից միապետութեան նպատակների ու խնդիրների, և մյուս կողմից՝ ամբողջ ազգի միջև թագավորը հույս ուներ, որ Գլխավոր շտատները նրան հնարավորութիւն կտան հետաձգել կամ լիովին խուսափել հեղափոխական ճգնաժամի սաստկացումից և կապահովեն ֆինանսական անանկացումը հաղթահարելու ու թագավորական դատարկ գանձարանը լրացնելու ուղիները: Ֆրանսիան, ավելի ճիշտ ֆրանսիական հասարակութեան մտածող մասը, բոլորից բիշ էր մտահոգված արքունիքին անհանգստացնող ֆինանսական նեղ խնդիրներով: Գլխավոր շտատների գումարման մեջ տեսնում էին նոր դարաշրջանի սկիզբը: Գլխավոր շտատները ազգային ժողովի նախադուռն էր, քսա էութեան ազգը ներկա-

չացնող մի մարմին, որը կոչված էր համատեղ ջանքերով Ծրանսիայի համար մշակել սահմանադրություն:

Միրաբոն վաղուց արդեն շէր զգացել հոգեկան և ֆիզիկական ուժերի մի այնպիսի հորդում, ներքին մի այնպիսի վերելք, ինչպես 1788 թվականի այն օրերին: Նա գգում էր, որ իր ժամը եկել է:

Առանց տատանվելու նա անմիջապես վճռեց, որ պետք է քվեարկվի որպես թեկնածու Պրովանսից Բայց ո՞ւմ կողմից: Պրովանսի ազնվականություն, թե՛ Լորրոզ դասի կողմից: Նրա ակնհայտորեն ոչ բավականաչափ կշռադատված առտջին վճիռն իր թեկնածությունը Պրովանսի ազնվականության կողմից առաջադրելն էր: Հավանաբար, նա ենթադրում էր, որ դա ամենարևականն ու պարզն էր կոմս Միրաբոնի համար: Նա ձեռնարկեց որոշ անհրաժեշտ գործնական միջոցներ՝ պետք էր գրանցել նրան պատկանող հողամասը, պետք էր մանել ինքնամոփոփ ակումբներից մեկը, ինչպես որ դա մոգա էր դարձել 80-ական թվականների սկզբից: Եվ նա Տալերյանի աջակցությամբ դարձավ «30-ի ակումբի» անդամ: Բայց այդ բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Նա մոռացել էր, որ համեմատաբար ոչ այնքան վաղուց էքսում ավարտվեց Մարինիաններին բարոյական ծանր հարված հասցրած դատավարությունը: Կարո՞ղ էին արդյոք Մարինիանները թույլ տալ իրենց մահացու թշնամի կոմս Միրաբոնին դեպուտատ ընտրել Պրովանսի ազնվականության կողմից:

Պրովանսի ազնվականությունը երես թեքեց կոմս Միրաբոնից: Ի՞նչ արած, ավելի լավ: Միրաբոն ուրախ էր, որ կյանքն ուղղել է իր թույլ տված սխալը: Նա իր թեկնածությունն առաջարկեց երրորդ դասին: Նա հրապարակեց վարպետորեն կազմված մի մանիֆեստ, որը վերնագրված էր «Միրաբոն՝ պրովանսյան ազգին»: Մանիֆեստը խանդավառությամբ ընդունվեց այդ հարուստ գավառի բուրժուազիայի և ժողովրդի կողմից:

1789 թվականի ձմեռը և գարնան սկիզբը Միրաբոն անցկացրեց Պրովանսում: Նա ծրագրային ձևերով հանդես էր գալիս ապագա ընտրողների առջև: Արդեն այդ ընտրական կամպանիայի ընթացքում լիովին բացահայտվեց Միրաբոնի հիանալի հետադարձ արվեստը: Հավանաբար, նույնիսկ ավելի ճիշտ կլինեք ասել, ոչ թե հետադարձ արվեստը, այլ տրիբունի հատուկ տաղանդը, ձիրքը:

XVIII դարում ընդունված էր ճառերը կարգալ նախապես գրված տեքստով: Այդպես էին վարվում Կոնվենտի ապագա նշանավոր հետադարձ Մաքսիմիլիան Ռոբեսպիերը, Ժորժ Դանտոնը, Սեն-ժյուստը և մյուսները: Այդպես էր վարվում նախկինում և Միրաբոն: Պոնտարիեի և էքսի դատավարություններում նրա արտասանած ճառերից մի քանիսը գրված են եղել նախապես: Արդեն դատավարությունների ընթացքում Միրաբոն հեռանում էր պատրաստած տեքստերից և սմեն անգամ բարեհաջող: 1788—1789 թվականներին Պրովանսում ունեցած բազմաթիվ ելույթների ժամանակ ինքը պրակտիկական ապացույցեց, որ առավել հաջող են ստացվում նրա հանպատրաստից ճառերը: Միրաբոնի ինքնաքերաբար, ասես տարերայնորեն զարգացող ճառերն անսպասելիորեն ստանում էին այնպիսի վառ զույններ, այնպիսի պատկերավոր, ունկնդիրների գիտակցության մեջ մխրձվող արտահայտություններ, որոնք անհնարին կլինեին ինամբով կշռադատված, նախապես գրված ճառում: Թվում էր, թե նրան տանում է մաքերի ու բառերի հեղեղը: Եվ գրեթե անբացատրելի էր թվում, թե ինչպես է նա կարողանում կառավարել ձայների այդ հաված հեղեղի նման սրբնթաց տարածվող հնչյունները, որոնք նա գահավիժում էր ամբիոնից:

Ամեն անգամ դա լսարանի վրա մի տեսակ արտասովոր, կախարդական տպավորություն էր գործում:

Ունկնդիրներին հափշտակող այդ հանկարծասեղծումներն անկարելի կլինեին, եթե Միրաբոն չունենար բացառիկ ձայնային տվյալներ և՛ ըստ դրանց հնչողության հզորության, որը կարծես օժտված է հնչյունների ուժն ավելացնելու անսահման ունակությամբ, և՛ ըստ դրանց ելեկտրոմեծների բնազդաբար գտնված ընդունակության վարպետության:

Ալֆոնս Օլարը «Հեղափոխության հետադարձները» երկհատոր աշխատության մեջ հիմնական տեղը հատկացրել է Միրաբոնի հետադարձ արվեստի վերլուծությանը: Այսօր հագիվ թե տեղին կլինեք ըստ էության քննարկել շատ տասնամյակներ առաջ գրված այդ աշխատությունը: Այնուամենայնիվ, չի կարելի շնչել, որ Միրաբոնի հետադարձ ձիրքի ինքնատիպությունը քննարկելիս, իմ կարծիքով, Օլարը աչքաթող է արել Միրաբոնի անկրկնելի տաղանդի ամենակարևոր կողմերից մեկը: Ի ծնե, բնությունից Միրաբոնի մեջ թաքնված է եղել արտիստի մեծ տաղանդը: Ըստ երևույթին, նա իր ժամանակի ամենախոշոր

դերասաններից մեկն էր: Միրաբոն ուներ լսարանի, նրա նվիրական մտքերի, ցանկությունների, չգիտակցված բրնձողության ապշեցուցիչ զգացողություն: Բայց նա ոչ թե իր ունկնդիրների գերին էր, այլ նրանց առաջնորդը: Զգալով լսարանը, նա բնազդորեն, իր մտքերի ընթացքին համապատասխան կարողանում էր գտնել պահին հարմար հնչերանգներ, ճիշտ մետեր, իր մտտ անսպասելիորեն ծնված հանրագումարի բերող ձևակերպումներ, որոնք ամրապնդվում էին ձեռքի հզոր թափահարումով:

Միգուցե ինքը Միրաբոն չէր էլ կռահում այդ մասին. չէ որ նրա հոետորական ձիրքը և դրանում թաքնված հնարավորություններն առաջին անգամ նրա համար սկզբում ոչ լիովին բացահայտվել են Պոետարլիեի ու էքսի դատավարությունների ժամանակ. իսկ այնուհետև ամբողջ ուժով՝ 1788—1789 թվականներին Պրովանսում ունեցած նրա ելույթներում:

Բայց իհարկե, որքան էլ հզոր լինի Միրաբոնի՝ որպես ապշեցուցիչ հղորության տեր տրիբունի բացառիկ հոետորական տաղանդի ուժը (և այդ իմաստով նա անգերազանցելի էր մնում հետագա բոլոր տասնամյակների ընթացքում. ավելի ուշ բոլորից շատ նրան մոտենում էր Ժան Ժորեսը), իր կյանքի վերջին երկու տարում նրա ձեռք բերած վիթխարի քաղաքական ազդեցությունը բացատրվում էր ոչ այնքան տրիբունի նրա ուժով, որքան նրա ելույթների քաղաքական բովանդակությամբ:

Ինչպիսի՞ն էր Միրաբոնի ճատերի գլխավոր քաղաքական բովանդակությունը 1788—1789 թվականներին:

Դրանք գալիք առավոտի վաղորդյան ժամերն էին: Դա ընդհանուր երջանկության անսահման հույսերի, պատրանքների, սպասումների ժամանակն էր: Այն սկեզորը, բանականության իշխանություն, առաքինության, ազատության մեծ սկզբունքների հաղթանակի այն երջանիկ ժամանակը, որոնց մասին ավելի քան հարյուր տարի ազդարարում էր առաջավոր, լուսավորական միտքը, Մոնտեսքյոյի, Վոլտերի, Հելվեցիուսի, Դիդրոսի, Հոլբախի, Կանդիլլակի, Գ'Ալամբերի, Ժան-Ժակ Թուսոյի այդ իզնալական և իգեալականացված՝ մարդու բնական իրավունքների հաղթանակի աշխարհը դալիս էր: Լուսավորության գպրոցի գրողների վարկը, բարոյական հեղինակությունը երբեք այդպես մեծ չի եղել, ինչպես այդ տարիներին: Բնական գիտությունների նշանակալից հաջողություններն այդ տարիներին՝ Մոնգոլֆիեր

Լեզբայների կողմից թռչող սարքի ստեղծումը, թռչող սարքով Շառլի և Թոբերի առաջին թռիչքը Փարիզում, Մարսյան դաշտում խոնված վիթխարի ամբոխի ներկայությունը, իսկ այնուհետև 1785 թ. օդապարիկով Բյանշարի թռիչքը ևս Մանշի վրայով, կավուաղիեի կողմից շրի քիմիական կազմության հայտնագործումը և Ֆիդիկայի ու մեխանիկայի մյուս հաջողությունները վստահություն էին ծնում խիզախող մարդկային մտքի անսահման հնարավորությունների նկատմամբ:

Եթե հնարավոր դարձավ թափանցել օդային տարածության մեջ, եթե մարդը պայքարով նվաճեց երկինքը, որ մինչ այդ մնացել էր տեր աստծո և երկրի վրա նրա սպասավորների՝ սուրբ կաթոլիկ եկեղեցու անձեռնմխելի «հայրենական կալվածքը», ապա կա՞ն ուժեր, որոնք ընդունակ են կասեցնելու հասարակությունը բանական սկզբունքներով վերափոխող մարդու ստեղծագործական Լուսնը: Այսպիսիք էին ամենամոտավոր և կոպիտ ձևով ընդհանրացված պատկերումը այն պատրանքների, որոնց արձագանքում էին Ֆրանսիական ազգի ամենալայն շերտերը նախահեղափոխական տարիներին:

Բոլորն սպասում էին, որ աշխարհն ամենակարճ ժամանակում կփոխվի դեպի լավը: Բայց սխալ կլինեք պատկերացնել, որ Ֆրանսիական բուրժուաները, ղյուղացիները, քաղաքային շրավորությունը, որ երկրի ճնշող մեծամասնությունն էին կազմում, մնում էին իբրև հրաշքի սպասող անվրդով, պասիվ հայեցողներ, հրաշք. որը հայանվելու էր ինչ-որ տեղ դրսից:

Ոչ, դրանք պարզորոշ գիտակցող այն մարդիկ էին, որոնք գիտեին, թե ովքեր են կտրում երկրի վրա գեպի երջանկություն տանող նրանց ճանապարհը: Նրանք ունեին ուղղակի դասակարգային հակառակորդներ (թեև այդ տերմինն այն ժամանակ, իհարկե, գեոես չէր օգտագործվում) և հին, մինչև վերջ չմարքված հաշիվներ: Նրանց ուղղակի շահերը, նրանց հասարակական վրդովմունքը, զեո ավելին, սոցիալական կատաղությունն ուղղված էին երկու արտոնյալ դասերի՝ հոգևորականության և ազնվականության դեմ: Երկար հարյուրամյակների ընթացքում այդ տիրապետող, արտոնյալ դասերը ճնշում, շահագործում, ստորացնում էին երկրի ողջ ժողովրդին:

Միրաբոն Պրովանսի երրորդ դասին ներկայացրավ ամենից տուաջ որպես արիստոկրատիայի, ազնվականության և եկեղեցու իշխանների գլխավոր մերկացնող: Նա իր հաշիվներն ուներ այդ

ամբարտաժան հարուստ վերնախավի հետ, որը քան տարի համարյա շնորո՞վ որսահալած է արել նրան: Նա չէր մտաոցել ոչ իՖ դղյակը, ոչ Մանուկը, ոչ ժու ամրոցը, ոչ էլ, իհարկե, Վենսենի զոյակի աշտարակները: Նա հիշում էր և՛ վերջին դատավարությունը էքսում, և՛ այն ամբարտաժան քամահրանքը, որով Պրովանսի ազնվականությունը մերժեց նրան, երբ նա միամտաբար առաջարկեց համագործակցել իր հետ: Եկել էր հաշվները մաքրելու ժամանակը: Ոչ ոք սլոպիսի ճշգրտությունը չէր կարող հարվածներ հասցնել Պրովանսի արիստոկրատիայի ամենազգայուն սեղերին, ինչպես կոմս դը Միրաբոն, որը դուրս էր եկել նրանց շարքերից: Նա, իհարկե, ավելի լավ գիտեր, քան մեկ ուրիշը, իրենց փիլիսոփայական անաշուտությունը կամ էլ կարմիր կրունկներով նրբագեղ կոշիկներ հագած, ասպետական առաքինություններով պարծեցող մեծահարուստ պարոնների բույր գաղտնի արատները, նենգավոր մտադրությունները, սև գործերը, հանցավոր գործողությունները: Եվ նա անողորմաբար պոկում էր նրանց դիմակները, նրանց ընտրողներին էր ներկայացնում իրենց խսկական տեսքով: Բունակայության ծառաներ՝ սվաբ՝ ես զրանք. դա արիստոկրատիան է, եկեղեցու իշխանները: Խոշոր վաճառականներից, արմատորներից, շուկայական առևտրականներից, քաղաքների աշխատավոր մարդկանցից, շրջակա գյուղերից եկած գյուղացիներից բաղկացած լսարանը մեռնում էր հրձվանքից, երբ հոնտորը Պրովանսի տեղական շտատներից կամ քաղաքացիների ինչ-որ ժողովի ամբիոնից հարված հարվածի հետևից էր հասցնում պրովանսյան ինքնահավան վերնախավին: Այն, որ արտոնյալ դասերին մերկացնողն այնքան հանդուգն է, որ մինչ օրս կրեք նման բան հարկ չի եղել լսել, ծննդյամբ պատկանում էր Պրովանսի ամենաազնվատուն ընտանիքներից մեկին, Էլ սվաբի մեծ արժեք էր տալիս նրա սենսացիոն մերկացուցիչ ճառերին: «Կեցցե՛ կոմս դը Միրաբոն»,— գոռում էր լսարանը, իսկ Մարսելի շուկաների առևտրական կանաչը ծաղիկներով էին ծածկում կտորիքը, որոնցով Միրաբոն անցնում էր քաղաքում:

Քայց Միրաբոն, լինելով փորձված և իմաստուն քաղաքական գործիչ, հասկանում էր, որ սոսկ մերժողական ծրագիրը, սոսկ արտոնյալ դասերի և բանակալության սխտեմի հրեշավոր կամայականության արատների մերկացումը բավական չէ: Հարկավոր էր և դրական ծրագիր: Եվ նա ասելու շատ բան ուներ:

Այժմ, գրեթե երկու հարյուր տարի անց, կարդալով այդ դրական ծրագիրը, որով Միրաբոն հանդես էր գալիս իր ընտրողների առջև, չի կարելի չնշել նրա շահավորությունը, նրա թվացող սահմանափակությունը:

Ինչի՞ էր հանգում այդ ծրագիրը:

Ընդհանուր քաղաքական լողուններ՝ ազատություն և հավասարություն: Եղբայրություն՝ այն ժամանակվա երրորդ գրեթե ավոր լողունը: Երկրորդ նույնպես կարելի էր հանդիպել Միրաբոնի ելույթներում, բայց դրան քիչ ուշադրություն էր դարձվում. ամենից առաջ, ամենակարևորը ազատությունն էր:

Ազատության լողունն ուներ և պարզ, կոնկրետ բովանդակություն՝ այն նշանակում էր դեսպոտիզմի, այսինքն ըստ էության ֆեոդալաբարությունից առկա վարչակարգի ոչնչացման պահանջ և Ֆրանսիայի վերածում սահմանադրական միապետության:

Քայց ինչպե՞ս հասնել դրան: Ինչպե՞ս նվաճել ազատությունը: Ինչպե՞ս ապահովել հավասարությունը: Ինչպե՞ս հարթել ճանապարհ դեպի սահմանադրություն:

Միրաբոն դրան պատասխանում էր համոզվածությամբ՝ ազգի բոլոր ուժերի համախմբումով, միավորումով, միասնությունամբ, ամբողջ երրորդ դասի անխախտ միությունամբ: Միասնության և միավորման կոչը այն ժամանակվա նրա բոլոր ելույթների լեյտամոտիվն էր: Նա բազմիցս էր այդ խնդրին անդրադառնում յուրաքանչյուր ճառի մեջ: Երբեմն դա կարող էր և նույնիսկ ինչ-որ սեռուտ գաղափարի տպավորություն գործել: Ամբողջ երրորդ դասի համերաշխությունը, համախմբվածությունը, դաշինքը արտոնյալ դասերի դեմ մղվող պայքարում նրա շուրթերին մոմենտի գլխավոր, վճռական խնդիրն էին դառնում:

Դժվար չէ նկատել, որ այդ ամբողջ ծրագիրը, որ Միրաբոն լայնորեն բացահայտում էր իր ունկնդիրների առաջ, գերազանցապես քաղաքական ծրագիր էր: Սոցիալական հարցերը, որոնք այն ժամանակ, բնականաբար, մեծ, միգուցե ոչ պակաս կարեւոր նշանակություն ունեին, քան թե քաղաքական հարցերը, նա լուրջությամբ չըջանցում էր: Օրինակ, նրան հաճախ էր հարկ լինում խոսել հավասարության՝ դարաշրջանի ամենահանրաճանաչ լողուններից մեկի մասին, բայց նա այն մեկնաբանում էր սահմանափակ կերպով, գլխավորապես իբրև դասային անհա-

վասարութեան ոչնչացման պահանջ: Հավասարութեան լողունը սոցիալական հարցերը՝ գույքային անհավասարութեան ոչնչացման ցանկացած տարրերակները, նա թողնում էր չքննարկված, ինչպես եթե գրանք ստացադրված չլինեին բուն կյանքի կողմից, կամ թեկուզև բնոջանուր ձևով, բայց լիակատար սրտակիրութեամբ ցույց էր տալիս պահանջ անիրագործելիութունը:

Ինչպե՞ս գնահատել Միքաբոյի այդ ելույթները: Ուրեմն ինչ՝ գրանք նրա քաղաքական մտածողութեան ուժեղ թե թույլ կողմերն էին: Ի՞նչ նշանով ուղեկցել պահանջ՝ պլուտոսօփ, թե՞ մի-նոսոսփ:

Կասկածից վեր է, որ Ֆեոդալաբսուլյուտիստական վարչակարգի և արտոնյալ դասերի հզոր ուժերին, սրունք ճնշվում էին զորեղ պատմիչ ապստամբ վրա, հաղթահարել կարելի էր միայն երրորդ դասի բոլոր ուժերի ամենասերտ համախմբման դեպքում: Այդպիսին էր մոմենտի օրջեկտիվ պահանջը: Ինչպես հայտնի է, երրորդ դասը դասակարգային կազմով միատարր չէր: Բուրժուազիայի, գյուղացիության, նախապրոլետարիատի և քաղաքային շրջափոխության շահերը ամենին ոչ բոլոր հարցերում էին համընկնում: Ընդհակառակը, ինչպես ակնհայտորեն ցույց տվեց Ֆրանսիական մեծ հեղափոխության հետագա պատմությունը՝ նրանց միջև գոյություն ունեին հակասություններ:

Սակայն հեղափոխության սկզբնական փուլում և հասկացելու նրա նախաշեմին վճռական նշանակություն էին ձեռք բերում ոչ թե նրանց բաժանող տարբերությունը կամ դասակարգային շահերի ընդհարումը, այլ այն, ինչ նրանց միավորում էր:

Շահերի ընդհանրությունը գերակշռում էր նպատակների ու խնդիրների շուրջ տարակարծություններին: Գլխավորը, սրում կենսականորեն շահագրգռված էին բուրժուազիան, գյուղացիությունը, բանվորները, սանկյուտոնները՝ ինչպես այն ժամանակ էին ասում, բանապետության կամայականության, արտոնյալ դասերի տիրապետության ոչնչացումն էր, այսինքն Ֆեոդալաբսուլյուտիստական վարչակարգի ոչնչացումը:

Երրորդ դասի բաղկացուցիչ ուժերից և ոչ մեկը դատ-գատ չէր կարող լուծել այդ խնդիրը: Բուրժուազիան, որ ձգտում էր ազատվել իր անտեսական նախաձեռնությունը խոչընդոտող միջնադարյան մնացուկներից, որ հասունացել էր կառավարման դեկի մոտ կանգնելու և երկիրը նոր, բուրժուական ձևով վերա-

կառուցելու համար, բուրժուազիան մենակ, առանց ժողովրդի հետ գաղնահիցեելու ի վիճակի չէր լուծել այդ խնդիրը: Նույն շահով բազմամիլիոնանոց գյուղացիությունը ես, որ կազմում էր երկրի բնակչության ճնշող մեծամասնությունը, մենակ, առանց բուրժուազիայի և քաղաքի շքավորագույն խավերի՝ բանվորների, սանկյուտոնների հետ գաղնահիցեելու չէր կարող լուծել այդ խնդիրը:

Երկրում դասակարգային ուժերի բուն օրջեկտիվ տեղաբաշխումը պահանջում էր երրորդ դասի բոլոր բաղկացուցիչ տարրերի առավելագույն համախմբում միասնական լագերի մեջ, որը պաշարի մեջ էր մտել հին վարչակարգի հզոր ուժերի դեմ:

Հաղթահարել մի այնպիսի հզոր հակառակորդի, ինչպես Ֆեոդալաբսուլյուտիստական կարգերն էին, կարելի էր միայն հանդես գալով միատեղ, համախմբված: Մեր օրերում մենք կասեինք, որ օրջեկտիվ անհրաժեշտությունը պահանջում էր միասնական ճակատի ստեղծում Ֆեոդալների դեմ: Այն ժամանակ, իհարկե, այդպես չէին ասում: Բայց գտան այլ հրաշայի բնորոշում, որն ընդգծում էր համախմբված շահերի ընդհանրությունը՝ «ժողովուրդ» տերմինը: Ժողովուրդ (ֆրանսերեն այն նշում էր le peuple, le nation) և այդ՝ զա էլ ճնեց այն համաձուլվածքն էր, որն անասանանպակ միասնականության օրոք կոչվում էր երրորդ դաս:

Միքաբոյի քաղաքական հոտառությունը նրան հուշեց ճիշտ ըմբռնել երկրում ձևավորված ուժերի հարաբերակցության առանձնահատկությունները և մոմենտի գլխավոր քաղաքական խնդիրները:

Ո՞րն էր Միքաբոյի քաղաքական ելույթների ուժը: Ամենից առաջ այն, որ նրա գլխավոր քաղաքական լույսնեղը՝ միասնություն, համախմբում, օրջեկտիվորեն համապատասխանում էր ժամանակի հիմնական պահանջին:

Ժան Ժորեսը «Ֆրանսիական հեղափոխության սոցիալիստական պատմության» մեջ արդարացիորեն ուշադրություն էր նրավիրում այն բանի վրա, որ Միքաբոն Պրովանսի տեղական շտապներում արտասանած իր ձևերում ժողովրդին (որի տակ նա հասկանում էր le բուրժուազիային, le գյուղացիությունը, le բանվորներին)՝ որպես արտաբուրժուազիական բնակչություն, որպես աշխատանքի մարդկանց միասնություն, հակադրում էր աղեր-

վականների անսպասելի արտոնյալ կատարման, պորտաբույժ փոր-  
բամանությունը<sup>31</sup>։

Կարող են առիթ, որ նախահեղափոխական ժամանակվա մյուս  
գործիչները կամ բարձրացնում էին այդ նույն հարցերը։ Իհարկե,  
դա «իշտ է՝ Սրինականերն էլ քիչ չեն։ Բայց եթե, ասենք, դիմելու  
լինենք նախահեղափոխական շրջանի ամենահամարձակ առեղ-  
ժադորություններից մեկին՝ Սիեյեսի ազմուկ հանած «Ի՞նչ է  
երրորդ դասը» գրքուկին, ապա հեշտ է նկատել, որ եթե նա  
բարձրացնում էլ է նման հարցեր, ապա նրա շարադրանքի  
երանդը, հարցերի մեկնարանություն չտրամադրվելու միան-  
գամայն այլ է։ Քրեատմատիական համարվ ձևեր բերած երեք  
հարցերը՝ նշում էին այսպես. «Ի՞նչ է Երրորդ դասը։ Ամեն ինչ  
Ի՞նչ էր նա մինչև օրս քաղաքական կարգում։ Ալինը։

Ի՞նչ է ուզում նա լինել։ Գտնոյ ինչ-որ բան»<sup>32</sup>։ Սիեյեսի  
ցանկությունները երկչոտությունը և ընդգծված համեսությունը  
Միրաբոյի ճառի խիստ հակադրությունն են։

Ի տարբերություն Սիեյեսի սպեռական տանի, Միրաբոն խո-  
սում է պահանջների լեզվով, սպանալիթների լեզվով։ Նրա  
ճառը հաստատակամ է, գինամիկ, եռանդով լի։

Չաշխդմի և վերահաս պատերազմի վտանգի դեմ պայքարի  
տարիներին Ռոմեն Ռուսոնը հիշեցրեց 1789 թվականի ճառերի  
ոմի մասին. «Այն ժամանակներում ֆրանսիացիները զիտեին  
«ուզել» բառի լրիվ իմաստը։ Այն չի նշանակում «ես կուզե-  
նայի...»։ Այն նշանակում է «ես ուզում եմ»։ Հետևաբար, ես  
գործում եմ»<sup>33</sup>։

Միրաբոն մեկն էր նրանցից, ովքեր ստեղծեցին 1789 թվա-  
կանի ճառերի այդ կամային, գործուն ոճը։ Նա չի խնդրում, չի  
արտահայտում բարի ցանկություններ։ Նրա ճառերին հատուկ է  
հրամայական տոնը։ Նա խոսում է ժողովրդի անունից, ամբողջ  
ազգի անունից։ Նվ ժողովուրդը պետք է որոշի երկրի բախտը,  
այլ ոչ թե այդ գաղափարապետները՝ սպանականները։

Փորևոր ենթադրում էր, որ Միրաբոն առաջինն էր, ով դիմեց  
արասպարեզների ընդհանուր գործադուլի սպանալիթին<sup>34</sup>։ Գուցե  
Փորևոն այստեղ ավելորդ տեղն է սեղմել գրիչը, ասես ստատ-  
կոսիկ Միրաբոյի ճառի իմաստը։ Անկասկած, Միրաբոն ընդ-  
գծում էր, որ արտանշալ գասերի գոյությունն իսկ լիովին կախ-  
ված է աշխատանքի մարդկանցից՝ լինի դա ձեռնարկատեր կամ  
հասարակ բանվոր։ Միրաբոյի այն ժամանակվա ճառերի համար

խիստ հատկանշական է, որ նա խոսում է ոչ թե այն հակասու-  
թյունների մասին, որ իրական կյանքում գոյություն ունեն տե-  
րերի ու բանվորների, հարուստների ու շքավորների միջև, այլ  
այն մասին, ինչ նրանց միավորում է։ Այդ բոլոր մարդիկ, որոնք  
զբաղվում են արտադրողական աշխատանքով, ստեղծում նյու-  
թական արժեքներ, այդ ամենաօգտակար մարդիկ ամբողջովին  
իրավագուրկ են և պետք է ենթարկվեն դատարկապարտներին  
ու քեֆչիններին, որոնք պարծենում են նրանով, որ իրենց երակ-  
ներում իրը հոսում է կապույտ արյուն։ Այդ մտտեցումը, որ մեկ  
այլ դարաշրջանում կարելի էր, քստ XX դարի տերմինաբանու-  
թյան, անվանել օպորտունիստական, XVIII հարյուրամյակում,  
բուրժուական հեղափոխության շեմին, պատմականորեն արդա-  
բացվում էր։ Այն ժամանակ, երբ Փարիզի վրա դեռ կախված էր  
անխորտակելի թվացող բանտ-ամբոց Բաստիլը, երբ հազա-  
րամյա միապետությունը իր բռնության վիթխարի ապարատով  
անհաղթահարելի սով էր ներկայացնում, մտեցող հեղափո-  
խությունը օրվեկափվ խնդիրները հրամայաբար պահանջում էին  
երրորդ դասի բոլոր ուժերի համախմբում։

Իհարկե, երրորդ դասի ներսում գաղափարապետական հակասու-  
թյունները պահպանվում էին, բայց նրանց մասին չէ, որ պետք  
էր խոսել այն պահին։ Դեռ ավելին, այն ամենը, ինչ տարա-  
դասում էր երրորդ դասը, բոլոր վիճելի կամ չլուծված հարցերը  
ժամանակավորապես պետք է հետաձգվեին։ Առաջին պլան  
պետք էր մղել այն քնդհանուր, ինչը մերձեցնում, անհրաժեշտ  
էր դարձնում երրորդ դասի բոլոր ուժերի մարտական զաշխնը  
քնդհանուր թշնամու դեմ։

1788—1789 թվականներին բուրժուազիան համարձակորեն  
զաշխնի էր դնում ժողովրդի հետ։ Նվ զա նրան սով էր հաղոր-  
դում։ Այն ժամանակ ժողովուրդը ի դեմս բուրժուազիայի տես-  
նում էր ամենից ատաղ զաշխակցի՝ ասելի բնակապական կար-  
գերի և ֆեոդալական շահագործման դեմ մղվող պայքարում։  
Բոլորն էլ կենսականորեն շահագրգռված էին ֆեոդալիզմի վերջ-  
նական ապալումով։

Միրաբոյի ուժն էլ հենց նրանում էր, որ նա ավելի լավ, ավելի  
խոր, ավելի պարզ հասկացյալ ստեղծված իրադրությունը, բան  
իկ իր ժամանակակիցներից որեէ մեկը։ Նրան այդ ավելի գյու-  
րին էր հասկանույ, բանի որ գաղափարների նման ընթացքը  
համապատասխանում էր նրա մարերի ու պզաջմունքների ներ-

քին կառուցվածքին: Սակայն չպետք է աչքաթող անել, որ ամբողջ անսամձելի եռանկով հանդերձ արիստոկրատիայի, ամբարտաձան ազնվականության նկատմամբ, որոնցից նա այդքան տառապանքներ էր կրել իր նախորդ կյանքում, նրա անկեղծ ատելությունը, նրա ազդարարող թշնամությունը հանդերձ, նա ինքն իր ներքին խառնվածքով, սովորություններով, հոգեբանությամբ, այնուամենայնիվ մնում էր սենյոր, ազա, արիստոկրատ, որն այդպես էլ երբեք լիովին չծուլվեց հասարակ մարմնի ճեղքում, որի շահերն այն ժամանակ նա միանգամայն անկեղծորեն պաշտպանում էր:

Միրաբոյի բացատրիկ ժողովրդայնությունը, հսկայական հեղինակությունը, որ նա արագորեն ձեռք բերեց սկզբնապես Պրոֆանսում և որի արձագանքները լսելի դարձան ամբողջ Ֆրանսիայում, բացատրվում էին ոչ այնքան նրա հռետորական ձիրքով, որքան այն ժամանակվա պոհանջներին համապատասխանող նրա քաղաքական ծրագրի հստակությամբ ու որոշակիությամբ: Ոչ որ չկարողացավ այն պահին Ֆրանսիայի առջև ծառայած գլխավոր խնդիրները բնութագրել այնպիսի հստակությամբ և ուժով, ինչպես Միրաբոն: Դրանում է նրա շքմեջնող հայտնությունների գաղտնիքի մեկնությունը: Նրա յուրաքանչյուր ձևն ավարտվում էր լսարանի հսկայական օվաղիակով: Երիտասարդությունը լծից արձակում էր նրա կառքի ձիերին և այն կամ բռնում, կամ տանում էր ձեռքերի վրա: Բանկիրները, խոշոր վաճառականները, շուկաների ձկնեղեն վաճառող կանայք, նավահանգստային բանվորները Մարսելում խոսուներամ շրջապատում էին նրան՝ ծաղիկներ նետելով և գոչելով. «Կեցցե՛ Միրաբոն՝ հայրենիքի հայրը»:

Միրաբոն միաժամանակ Դիալոգի շտապների դեպուտատ բնորոշեց էքս և Մարսել քաղաքների կրթող դասի կողմից: Բայց քանի որ էքսի բնորական ցուցակում նա ընտրվել էր առաջինը, իսկ Մարսելում՝ չորրորդը, նախապատվությունը տվեց էքս քաղաքին:

Նվաստացած ու ահարկված Միրաբոյի անօրինակ հայտնությունից, Պրոֆանսի ազնվականությունն իր դեպուտատ ընտրեց նրա կրտսեր եղբորը՝ դերկոմս Միրաբոյին, որին «Միրաբո տակառ» էին հորջորջում ողբից խմիչքների նկատմամբ նրա հակվածություն համար. վերջինս ձգտում էր, բայց այդպես էլ քա-

չությունն շունեցավ իր ավագ եղբոր դեմ հանդես գալ ժայռահեղ աչ գիրքերից:

Միրաբոյին դեպուտատ ընտրելն ուղեկցվեց նրա պատվին կազմակերպված ժողովրդական ցույցերի նոր ալիքով: Նա Պրոֆանսում ձեռք բերեց այնպիսի անառարկելի հեղինակություն, որ կրք Մարսելում ծագեցին ժողովրդական խոշոր հուզումներ, որոնք հարուցված էին տեղական իշխանությունների պրովոկացիոն կամ անիմատ գրգռիչ գործողություններով, ապա Մարսելի պարետ Կարամանը, որ դեռ մինչև վերջերս էլ ատելությամբ էր խոսում Միրաբոյի մասին, հարկադրված էր հարգալից, խոնարհ արտահայտություններով Պրոֆանսի կրթող դասի ամենահեղինակավոր դեկավարին խնդրել՝ անձամբ միջամտել ժողովրդին հանգստացնելու և իր կյանքը փրկելու համար:

Միրաբոն ստիպված էր գնալ Մարսել: Անմիջականորեն ժողովրդին ուղղված նրա ճառերը հանգստություն մտցրեցին քաղաքում: Նա կարգ ու կանոն է հաստատում և էքսում: Չգրավելով ոչ մի պաշտոն, շունենալով ոչ մի պաշտոնական դիրք, նա, բոս էություն, դառնում է Պրոֆանսի գլխավոր քաղաքական արքիտրոս:

Անփական նախաձեռնությամբ, ոչ ոքի հետ լիտորդակցելով, նա որոշում է ընդունում կրթող դասի կամավորներից կազմավորված զինվալ շոկատներ ստեղծելու մասին: Այսպիսով, բոս էություն դեռ ավելի վաղ, քան Փարիզում, Միրաբոն դառնում է ազգային գվարդիայի՝ կրթող դասի զինված ուժերի, մոտեցող հեղափոխության զինված ուժերի փաստացի կազմակերպիչը: Այսուհետև բոլորը պետք է հաշվի նստեին Միրաբոյի հետ: Նրա յուրաքանչյուր բոս ունկնդրում է ոչ միայն խանդավառությամբ նրան ողջունող ժողովրդական ամբոխը, այլև գեռ երկկ անխոհեմ, մեծամտորեն նրան մեթոդ ազնվականությունը: Չէ որ այդ մարդը ցանկության դեպքում կարող էր սոսանց որևէ արգելքի դառնալ Պրոֆանսի զիկուտորը:

Բայց Միրաբոյին դա պետք չէ: Նա շտապում է Փարիզ, Վերսալ: Այնտեղ հենց նոր միայն կակսի իսկական, մեծ խաղը: Նա մեկնում է մինչև վերջ ժողովների մեջ թաղված կառքերով, նրան մինչև Պրոֆանսի և Գոֆինեի սահմանը ուղեկցում է երիտասարդներից բաղկացած ձիավորների թիկնախումբը՝ բոցականները ձեռքերին:

Ինչպիսի տարօրինակ, հեղհեղուկ ձակատագրի տեր է այս

մարդը: Քսան տարվա հալածանքներ, հետապնդումներ, ստորացումներ, բանտային կալանք և գրեթե ճակատագրի լիակատար փոփոխություն՝ հաղթանակ, համընդհանուր ճանաչում, պատիվ ու փառք:

## XVIII

1789 թվականի մայիսի 5-ին վերստում, այսպես կոչված «Փոքր զվարճանքների» դահլիճում, թագավորի ներածական ճառով և ժակ նեկկերի՝ կառավարության փաստացի ղեկավարի զեկույունով տեղի ունեցավ Գլխավոր շտապների հանդիսավոր բացումը:

Դեպուտատները բաժանված են երեք դասի: Շքեղազարդ հագուստներով, լայնեզր փետրավոր պիսարկներով, կարմիր բարձրակրունկ կոշիկներով, գեղապատկեր շարքերով, խստիվ պահպանելով իրենց դասավանդությունը, վստահ ու անկաշկանդ կեցվածքով կանգնած են ազնվականության ներկայացուցիչները:

Մյուս կողմում կանգնած են հոգևորականության ներկայացուցիչները՝ շքեղ փարաջաներով և անզարդ սև հանդերձով, նույնպես իրենց կարևորության և նշանակալիության գիտակցումով:

Եվ վերջապես, քիչ հեռու, ասես երկրորդ պլանում, մեկը մյուսին են սեղմվում ամենաբազմամարդ երրորդ դասի ներկայացուցիչները՝ զլխաբաց, միանման հանդերձով: Ըստ թագավորական հրամանագրով սահմանված կարգի, երրորդ դասին, որը ներկայացնում է ամբողջ ազգի ինը տասներորդը, հատկացված է 600 տեղ՝ նույնքան, որքան հոգևորականությանն ու ազնվականությանը միասին վերցրած:

Դահլիճում աշխուժություն է տիրում: Բոլորը համակված են անհամբեր սպասումով: Բոլորն սպասում են, որ Լյուդովիկոս XVI-ի գահաձառում կազդարարվին մեծ ռեֆորմներ, վերափոխություններ, որոնք կոչված են նորացնելու և վերածնելու երկիրը:

Երրորդ դասի դեպուտատները, որոնք կամ այստեղ երբեք չեն եղել, կամ եղել են ծայրաստիճան հաղվադեպ և միայն խնդրողների դերում, այդ հոյակապ, պերճաշուք շքատենյակներում իրենց զգում են երկշուռ ու անվստահ: Նրանցից միայն

մեկն է գլուխը բարձր պահած անկաշկանդ, հանգիստ, ուշադիր զննում ներկա գտնվողներին: Դա կոմս դը Միրբաբոն է: Բայց նա ևս երրորդ դասի դեպուտատների բազմության մեջ քիչ է նկատելի: Ասենք նրա վրա մեծ ուշադրություն էլ չեն դարձնում:

Փոքր նրան ուղեկցում էր լոկ Պրովանսի ճանապարհներին: Հարևան զավառներում, Փարիզում, վերստում հարկադրված ամեն ինչ սկզբից պետք էր սկսել:

Վերսալի հոյակապ թագավորական պալատի «Փոքր զվարճանքների» դահլիճում և մյուս հարկաբաժիններում, որտեղ իրենց նիստերն էին անցկացնում Գլխավոր շտապները, այնքան էլ հեշտ չէր ստիպել ունկնդրելու խոսողին: Գլխավոր շտապների դեպուտատների մեջ կային ոչ քիչ թվով մարդիկ, որոնք արդեն մեծահոշակ անուն ունեին և ներքնապես նախատրամադրված էին այն բանին, որպեսզի խաղան երրորդ դասի լիգերի կամ ազդեցիկ խորհրդականի դերը: Անվիճելիորեն ամենահանրաճանաչը և հեղինակավորը մարկիզ դը Լաֆայետն էր՝ Ամերիկայի անկախության համար պատերազմի մասնակիցը, ամերիկյան բանակի գեներալը, վաշինգտոնի ընկերը, նա «Հին և Նոր աշխարհի հերոսի» համբավ ունեւր ու թեև Գլխավոր շտապներում ընտրված էր ազնվականության կողմից, աներկբայորեն ամենախոշոր հեղինակությունն էր երրորդ դասի դեպուտատների համար:

Մեծ համբավ էին վայելում և արտաքննապես ոչնչով ուշադրություն չդրավող սքբա Սիեյեսը, ամբարտապան, ծանրաբարո, միշտ ինքնավստահ դիմանական աստղագետ Բային, Բրետանի փաստաբան Ռենն Շապելիեն՝ ամուր, թիկնեղ մի մարդ, որը նիստերի առաջին իսկ օրերից իր պարտքն էր համարում ելույթ ունենալ ցանկացած հարցի շուրջ, Շառլ դը Լամետը, որ սերված էր հինավուրց արիստոկրատական ընտանիքից, իրեն համար լայն համբավ էր վաստակել իր ակտիվ մասնակցությունները (1789 թվականին նա քսանութ տարեկան էր) մեկը՝ Անտուան դը Բառնավը, որ խելացի, եռանդուն, գերազանց հոնտոր էր, նենդավոր և խորամանկ իշխան Տալեյրանը, որ դեպուտատ էր ընտրված հոգևորականության կողմից, և նրանց մեջ՝ համեստ ու ղեռ ամենքին անհայտ դեպուտատն Արրասից՝ Մաքսիմիլիան դը Ռոբեսպիերը. որքան ականավոր քաղաքական գործիչներ,

որոնց մեծ մասը հավակնում էր առաջին դերը խաղալ այդ ժողովում: Երբ դահլիճով անցնում էին Լաֆայետը, Քային կամ Սիեյեսը և մյուսները, երրորդ դասի ներկայացուցչության մեծամասնությունը կազմող բուրժուական հասարակական կուրսերը իրար մեջ քսփսում էին. «Տեսե՛ք, ահա գալիս է Լաֆայետը», «Ահա գալիս է Սիեյեսը»:

Այս մրցակցող փառամուլների մեջ Միրաբոյի համար հեշտ չէր առաջ ընկնել, համակրանք շահել կամ գոնե ստիպել լսելու իրեն: Միայն կլինե՞ր ասել, թե նրան չգիտեին, թե նրա անունը մնում էր անհայտ: Ո՛չ, նա որոշակի համբավ ուներ: Բայց այդ համբավը, որ հույժ երկիմաստ էր, ավելի շատ իր մեջ թաքցնում էր կանխակալ կարծիք նրա դեմ: Նրա անցած կյանքի աղմկոտ, սկանդալային իրադարձություններն ավելի կամ պակաս հավաստիությամբ, հաճախ մեծ շահագրգռություններով հասնում էին նույնիսկ մինչև զավառական բուրժուային նրան վերաբերվում էին անվստահությամբ և զրուշորեն: Մաքսիմիլիան Ռոբեսպիերն իր ընկերոջը՝ Բյուխարին ուղղված 1789 թվականի մայիսի 24-ի թվակիր նամակում տալով Գլխավոր շտատների առավել նշանավոր դեպուտատների բնութագիրը, Միրաբոյի մասին գրում էր. «Կոմս Միրաբոն ոչ մի ազդեցություն չունի, որովհետև նրա բարոյական կերպարն իր հանդեպ վստահություն չի ներշնչում»<sup>35</sup>: Այս տողերը, որ վերցված են նախկինում երբեք Միրաբոյի հետ հանդիպում չունեցած Ռոբեսպիերի մասնավոր նամակից, արտացոլում էին Պրովանսից երրորդ դասի դեպուտատի մասին տարածված այն կարծիքը, որ տիրապետում էր վերսալում:

Միրաբոն իր քաղաքական սուր հոտառությամբ, իհարկե, կուհում էր այս տրամադրությունները: Բայց դա նրան չէր ընկնում: Պրովանսում ճաշակելով Փառքի ծառի պտուղները, այժմ նա վստահ էր իր նկատմամբ և դիտեր իր ուժի աղբյուրը: Գլխավոր շտատների աշխատանքի առաջին իսկ օրերից երրորդ դասն ընդհարվեց առաջին հայացքից ձեռնարկված պրոցեդուրային բնույթի խոշորագույն ինչպես ստուգելի դեպուտատների լիազորությունները, ինչպես անցկացնել քվեարկությունը՝ ըստ դասերի, թե միասին: Այս ձեռնարկվող մի հետևում թաքնված էր ապագայի ամենազխավոր պրոբլեմներից մեկը: Թագավորի աջակցությունը վայելող արտոնյալ դասերը պնդում էին անցկացնել դասային քվեարկություն: Եվ հենց այն պատճառով,

որ երկուսը միշտ ավել է մեկից, երրորդ դասի դեպուտատները կտրականապես առարկեցին, պնդելով անցկացնել անհատական, անվանական քվեարկություն: Այս հողի վրա ծագած կոնֆլիկտն այնքան շատ է նկարագրված ֆրանսիական հեղափոխության պատմության վերաբերյալ բոլոր աշխատություններում, որ չարկ չկա այստեղ պատմել գրեթե երկու ամիս ձգձգված հանկարծական փոփոխությունների մասին, հարվածի տակ դնելով վերսալում հավարված ներկայացուցչական մարմնի բուն ապագան: Այդ վիճարանությունների ընթացքում Միրաբոն ելույթ ունեցավ մի քանի անգամ՝ մայիսի 18, 27, 28-ին: Նրա ձայնի բացառիկ ուժը և խոսքի արտահայտչականությունը լսարանին հարկադրեցին լսել նրան ուշադիր, թեև դեռ համակրանք չնվաճեցին նրա համար: Միայն հունիսի 11-ին մի անսպասելի, հանպատրաստից արտասանած ճառով, երբ մտքերի փոխանակության ժամանակ նա անհրաժեշտ համարեց հանդես գալ իր ընկերներից մեկի՝ լրագրող դյու Ռովերի պաշտպանությամբ, որին նախորդ հոկտոբերից մեկը պահանջել էր դահլիճից հեռացնել որպես ոչ դեպուտատի, Միրաբոն կարողացավ իր վրա դամել ամբողջ լսարանի ուշադրությունը: Այդ կարճատև ճառը, ինչպես Միրաբոյի գրեթե բոլոր հանկարծաստեղծումներում, արտասանվեց կրքով ու ներշնչանքով: Առաջին անգամ Միրաբոյի ճառն ընդունվեց ամբողջ դահլիճի ծափահարությամբ:

Վճռական բեկումը տեղի ունեցավ 1789 թվականի հունիսի 23-ի նշանավոր նիստում, երբ արքունիքի այստեղ ժամանած ավագ արարողապետ մարկիզ դը Բրեդեն հրապարակեց թագավորի կարգադրությունը, որով դեպուտատներին պատվիրվում էր անհապաղ բաժանվել ըստ դասերի և նիստերն անցկացնել տոանձին-առանձին:

Երրորդ դասի դեպուտատներն իրարանցման մեջ ընկան: Բացահայտ ընդդիմանալ թագավորական հրամանին: Դրա համար քաջությունը պակասում էր: Ենթարկվե՞լ դրան: Ի՜նչ նշանակում էր ընկրկել և կամօվին հանձնել երկու ամսվա ընթացքում այդպիսի դժվարությամբ նվաճած դիրքերը: Հավանաբար ներկաներից լուրաբանչյուրը մտովի իրեն հարց էր տալիս. «Ի՞նչ անել, ինչպե՞ս վարվել»:

Շփոթմունքի ու տատանումների այդ պահին ևս Միրաբոն



էր Պրովանսի երրորդ դասը, հիմա պետք է զիջեին. շրջահայացորեն առաջ թողնելով նրան Ինչպես Պրովանսում, այստեղ ևս Միրաբոն ամենից առաջ նվաճեց ժողովրդի համակրանքը: Փարիզը ցայսօր չգիտեր նրան: Հունիսի 23-ից հետո Միրաբոն դարձավ ժողովրդի կուռքը: Հասարակ մարդիկ, արհեստավորները, շուկայական առևտրականները, երեկոյան պանդոկներին մշտական հաճախորդները բերնեքերան փոխանցում էին շափազանցված պատմություններ այդ վիթխարահասակ և մի այնպիսի հզոր ձայնի տեր կոմսի մասին, որը դրանով հանգցնում է մոմերը, կրկնելով երևակայությամբ պնդազարգված առասպելներ նրա անհավանական ստեղծագործությունների մասին:

Գլխավոր շտատների գումարման առաջին իսկ օրերից Միրաբոն սկսեց հրատարակել «Journal des Etats généraux» («Գլխավոր շտատների թերթ») պարբերականը: Նեկկերը, որին նա քննադատում էր իր թերթի էջերում, դրսևորելով իրեն հատուկ քաղաքական տակտի բացակայություն, արգելեց այն: Մեկ օր անց Միրաբոն նորից թողարկեց այդ նույն թերթը փոխված անվանումով՝ «Նամակներ իմ ընտրողներին»: Նեկկերի այդ ապաշնորհ և միանգամայն անարդյունք ուսիկանական քայլը մեծ մասամբ նպաստեց Միրաբոնի թերթի հեղինակության բարձրացմանը: Թեև ձևականորեն թերթը հասցեագրված էր Պրովանսի ընտրողներին, այն դարձավ ամենաշատ կարդացվող թերթերից մեկը Փարիզում: Այն խլխլելով էին գնում:

Ի տարբերություն Մարատի, որն իր «Ժողովրդի բարեկամ» թերթը փաստորեն «սարքում էր» սեփական ուժերով, միայնակ, Միրաբոնի թերթը պատրաստում էր նրա «արհեստանոցը»: Դժվար է ասել, թե որքան մեծ էր Միրաբոնի անմիջական մասնակցությունը բառի բուն իմաստով գրական տեքստի պատրաստմանը: Ամենից ավելի հավանականը անհշան մասնակցությունն է: Դրա համար նա պարզապես ոչ ժամանակ ուներ, ոչ էլ ուժ: Բայց նա խարխափելով, տարեբայնորեն մոտենում էր ավելի ուշ ժամանակվա թերթի խմբագրի դերին: Նա էր որոշում թերթի ուղղությունը, նրա քաղաքական գիծը, նա էր տալիս այս կամ այն անցքի կամ մարդկանց գնահատականները: Նրա աշխատակիցները, որոնք պատրաստում էին հերթական համարի նյութերը և կազմակերպում թերթի տպագրությունը, անհայտ էին մնում ընթերցողներին: Միակ անունը, որ կրկնվում էր թերթի էջերում, Միրաբոնի անունն էր: Բայց այդ անանուն աշ-

խատակիցների, յուրատեսակ գրական «նեղրերի» մեջ կային մեծ թվով ականավոր և անվիճելիորեն ընդունակ մարդիկ՝ Կ. Դեմուկենը, Կլավիերը և ուրիշներ:

## XIX

Հունիսի 23-ից, դը Բրեզելին ուղղված իր նշանավոր ռեպլիկի ժամանակվանից, որը Ազգային ժողովը հանեց փակուղուց, և հեղափոխության ամբողջ սկզբնական փուլում Միրաբոն իրերի ընթացքով սկսեց խաղալ Ազգային ժողովի գլխավոր ղեկավարներից մեկի դերը: Նրա ներզգացողությունը, արագ, գրեթե ակնթարթային հակազդումը փոփոխվող իրադրությանը, ազատ կողմնորոշումը քաղաքական մեծ ասպարեզի պահանջների մեջ նրան թելադրում էին ժողովում ելույթներ ունենալ և մտցնել գործնական առաջարկներ, որոնք գրեթե միշտ արժանանում էին ղեկուտատների մեծամասնության լայն հավանությունը:

Այսպես, հունիսի 23-ի այդ նույն նիստում Միրաբոն երկրորդ անգամ հանդես եկավ Ազգային ժողովի ղեկուտատների անձի անձեռնմխելիության մասին ղեկրետի հիանալի փաստարկների առաջարկությամբ: Այդ առաջարկը ոչ միայն սղղեց ղեկուտատներից յուրաքանչյուրի զգացմունքների վրա՝ հարգանք ներշնչելով նրանցից յուրաքանչյուրին, այլև ունեցավ սկզբունքային կարևոր նշանակություն: Դեկուտատները, որպես սղղի ներկայացուցիչներ, ձեռք բերելով անձեռնմխելիության իմունիտետ, վեր էին դասվում միապետության և թագավորական կամքի օրենքներից:

Միրաբոնի մտքրած առաջարկությունը խանդավառությամբ արժանացավ ժողովի հավանությունը և օրենքի ուժ ստացավ նաև որոշում ընդունվեց հրապարակել Միրաբոնի ձևը:

Դործնականորեն հունիսի 23-ի նիստից հետո երկու ամիս տևած խոսքակոխիլը դասերի միջև զուգարեցվեց: Հողերակալության և ազնվականության ղեկուտատների մեծամասնությունը, իսկ հետո նույնիսկ նրանցից ամենապահանջողականները միացան Ազգային ժողովին: Եվ եթե սկզբնապես առաջին և երկրորդ դասերի ղեկուտատները դեռ նստում էին առանձին, ապա աստիճանաբար այդ տարբերություններն էլ ջնջվեցին: Դասային բաժանումը բոլորից վաղ դադարեց գոյություն ունենալ Ազգային ժողովում. այստեղ դասերը փաստորեն սընչացված

էին: Այստեղ միայն ազգի ներկայացուցիչներն էին, և ոչ մի այլ մեկնարանութիւն արդէն հնարավոր չէր:

Միրաբոն այժմ Ազգային ժողովի լիդերն է, նրա մեծամասնութիւն կարծիքի արտահայտիչը: Նա կոահում է և իր ուժեղ, վստահ ձայնով բոլորին լսելի արտահայտում այն, ինչը դեռ աղոտ, մինչև վերջ չգիտակցված է ձևավորվում դեպուտատների գիտակցութեան մէջ:

Այժմ նրան համախ կարելի է լսել ժողովի ամբիոնից: Հունիսի 23-ի վճռական օրից հետո Միրաբոն ելույթ է ունենում հունիսի 27-ին, հուլիսի 2-ին, հուլիսի 3, 8, 9, 11, 15, 16-ին և այլն<sup>30</sup>: Այդ ճառերից մի քանիսը քաղաքական մեծ նշանակութիւն ունեն և էպպես կարևոր են երկրում քաղաքական պայքարի ընթացքի համար: Այսպես, Միրաբոն առաջինն էր, որ ճիշտ կոահելով արքունիքում հաղթած ծայրահեղ տարրերի հակահեղափոխական սլանները, նույնքան հիմնավոր, քաղաքական տակտիկայի տեսակետից, ազգի անունից պահանջեց զորքերն անհապաղ հեռացնել Փարիզի և Վերսալի շրջակայքից:

Հունիսի առաջին օրերից Վերսալ և մայրաքաղաքի արվարձաններ մեկը մյուսի հետևից մուտք գործեցին գնդեր, որոնք գալիս էին թագավորութեան հեռավոր գավառներից: Կենտրոնացվեցին հրետանու զգալի ուժեր: Փարիզի և Վերսալի շրջանը վերածվեց զինված ճամբարի:

Ո՞ւմ դեմ էին կենտրոնացվում այս ահեղ զինյալ ուժերը:

Հուլիսի 8-ին Միրաբոն բարձրացավ ժողովի ամբիոն և հուզաթաթափ, բայց լավ կանխամտածված ճառում հայտարարեց, թե ամենաանհետաձգելի պահանջը, որը դրդեց նրան ժողովին շեղել ընդհանուր սրբուխների քննարկումից, ժողովրդին, նրա բուն շահերին և ազգի ներկայացուցիչներին սպառնացող վտանգն է: Միրաբոն դեպուտատների ուշադրութեանը հրավիրեց Վերսալի և Փարիզի շուրջը զորքերի և հրետանու՝ ծայրահեղ անհանգրստութեան ներշնչող կենտրոնացման վրա: Նա հայտարարեց, որ Ազգային ժողովը պարտավոր է ամբողջ ժողովրդի անունից դիմել միապետին, պահանջելով Փարիզի և Վերսալի գոտուց անհապաղ դուրս բերել նրանց սպառնացող զորքերը:

Միրաբոն կարգաց թագավորի անունով իր կազմած ուղերձի նախագիծը: Նա առաջարկում էր թագավորական սպառազինված զորամասերը փոխարինել իրեն իսկ՝ ժողովրդի ստեղծած ազգա-

լին զվարդիայով, որի վրա պետք է դրվի կարգուկանոնի պահպանման սարտականութիւնը<sup>31</sup>:

Արտահայտութիւնների ակնածանքը պահպանած այդ ուղերձը այնուամենայնիվ կրկնում էր Միրաբոնի ճառում ձևակերպված հիմնական պահանջները՝ թագավորական զինված ուժերի անհապաղ դուրս բերում և գրանց փոխարինում ազգային զվարդիայով: Ե՛վ Միրաբոնի ճառը, և՛ նրա առաջարկած ուղերձն արժանացան ժողովի միահամուռ հավանութեանը:

Ռոբեսպիերը նույն այդ Բյուխարին ուղղված 1789 թվականի հուլիսի 23-ի նամակում Միրաբոնի դերի մասին արդէն գրում էր միանգամայն այլ տոնով, քան նախկինում. «Պուք, իհարկե, զիտեք թագավորին հղված ուղերձի մասին՝ ներկայացված Ազգային ժողովի անունից և կազմված կոմս Միրաբոնի կողմից, որը որոշ ժամանակից սկսած իրեն շատ լավ դրսևորեց: Դա հիրավի վեհութեամբ, ճշմարտութեամբ ու եռանդով առեցրան վսեմ ստեղծագործութիւն է»<sup>32</sup>:

Միրաբոնի ելույթները հուլիսի 9-ին Ազգային ժողովում բոտ էութեան հակազործողութիւնների համար ժողովրդի ուժերի և Ազգային ժողովի մոբիլիզացման՝ առաջին քաղաքական կոչն էր արքունիքի հակահեղափոխական մտադրութիւնների դեմ: Դա առաջին քաղաքական ճառն էր ուրիշ հայտնի և անհայտ այն հետադրների հաջորդ ելույթների շղթայում, որոնք նախապատրաստեցին 1789 թվականի հուլիսի 14-ի ժողովրդական սպառամբութեանը:

Միրաբոն գրսևորեց նույն քաղաքական հաստունութեանն ու քաղաքական հակազգման արագութեանը հաջորդ իրադարձութիւններում: Թագավորը Ազգային ժողովին հայտարարեց, որ Փարիզի և Վերսալի մոտ գտնվող զորքերն այնտեղ կենտրոնացված են բացառապես անհրաժեշտ կարգուկանոնը պահպանելու նպատակով, բայց եթե նրանք որևէ մեկին վրդովում են, ապա նա պատրաստ է Գլխավոր շտատները տեղափոխել Նուայոն կամ Մուասոն, իսկ ինքը մեկնել Կոմպիեն, որտեղից կսպ կպահպանի ժողովի հետ: Հուլիսի 11-ին Ազգային ժողովի նիստում դեպուտատները թագավորի հրապարակած պատասխանը դիմավորեցին բուռն ծափահարութեաններով:

Միայն Միրաբոն, բարձրանալով ամբիոն, վճռականորեն մերժեց միապետի այդ առաջարկը: Նա հայտարարեց, որ, ինչպես և մյուս դեպուտատները, նա հավանութեան է տալիս թագավորի

բարի մտադրութիւններին: Բայց կան նաև մինիստրներ, կա ազմինիստրացիա, կան ուժեր, որոնք ձգտում են սրել իրադրութիւնը: «Թագավորի պատասխանը՝ իրականում մերժում է Փոխանակ հեռացնելու զորքերը, մեզ, ժողովին են առաջարկում հեռանալ նուայոն կամ Սուտոն, որտեղ մենք կհայտնվենք բոլոր կողմերից շրջապատված զորքերի ռզակում: Մենք նույնիսկ չենք էլ քննի այդ առաջարկները. մենք այդ մասին չենք խնդրել և չենք խնդրի. մենք ուղերձում պահանջել ենք դուրս բերել զորքերը, և մենք նորից ենք պնդում նույնը»<sup>39</sup>:

Միրաբոյի ելույթը սթափեցնող ազդեցութիւն գործեց ժողովի վրա: Հիրավի, ո՛ւմ դեմ են ուղղված այդ անհղ ուղղման ուժերը: Արդո՞ք չպե՞տք է սպասել, որ առաջին հերթին գրանք կուղղվեն Ազգային ժողովի գեմ: Մի՞թե ակնհայտ չէ, որ բռնակալութիւն կուսակցութիւնը սփիւնների ուժով ձգտում է խաչ բաշել մինչև օրս այսպիսի դժվարութիւններ ձեռք բերվածի վրա:

Հուլիսի 11-ից Փարիզում հասարակութիւնի գանազան խաղերում տարածվեցին քափոցով փոխանցվող լուրեր այն մասին, որ ամենամոտ օրերս արքունիքը կիրականացնի դիմվորական հեղաշրջում՝ ժողովը կցրվի, խռովարար պարագուխներ Միրաբոն, Լաֆայետը, Սիէյեսը, Բային կրանտարկվեն: Ժամացույցի սլաքը հետ կտարվի. Ֆրանսիան կվերադառնա Լյուդովիկոս XIV-ի ժամանակները:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձութիւնները, այդ լուրերը բավական ստույգ էին վերարտադրում թագավորական պալատի իսկական մտադրութիւնները:

Հուլիսի 11-ից մինչև 15-ը ոչ մի տեղ չի նշված Միրաբոյի և ոչ մի ելույթ: Հուլիսի 12—14-ի վճռական պատմական օրերին, երբ թատերաբեմում հանդես է գալիս գլխավոր գործող ուժը՝ ժողովուրդը, երբ նրա հարվածների տակ հուլիսի 14-ին փլուզվում է բացարձակ միապետութիւն անմատչելի թվացող պատվարը՝ Բաստիլը, Միրաբոյի անունը ոչ մի տեղ չի հանդիպում և չի հիշատակվում: Հետագայում դա տրիրոնի համար աննըպատ առեկռեսների հող ծառայեց: Բայց դրանք պետք է վճռականապես մերժվեն: Միրաբոն իրօք որ չի մասնակցել հուլիսի 13-ի և 14-ի իրադարձութիւններին: Պատճառը միանգամայն հարգելի էր: Հուլիսի 13-ին մահացավ նրա հայրը: Նա՛ ավագ որդին, մեկնեց հուզարկավորութիւն: Հուլիսի 15-ին նա արդեն

Ազգային ժողովի նիստում էր և առաջիններից մեկը բարձրացավ ամբիոն:

Չնայած Բաստիլի անկմանը, հեղափոխութիւնի ելքը դեռ լիովին որոշված չէր, և դրութիւնը մայրաքաղաքում մնում էր ծալրատափճան սպանալից, քանի որ Փարիզը և վերսալը ողողված էին զորքերով, գերազանցապես օտարերկրյա վարձկաններով:

Դիմելով ժողովի երրորդ պատգամավորութիւն անդամներին, Միրաբոն թագավորին ուղղված իր կարճատու եռանդուն ճառում՝ զորքերը դուրս բերելու պահանջով, ասում էր. «Ասացեք թագավորին, որ օտարերկրյա հորդանները, որոնցով մենք շրջապատված ենք չորս կողմից, երեկ ընդունել են արքայազների և արքայադուստրերի, նրանց սիրեկանների ու սիրուհիների այցելութիւնը... Ասացեք նրան, որ ամբողջ գիշեր այդ օտարերկրյա կամակատարները, որոնք լսղանում էին, գինու և ոսկու մեջ, իրենց սանձարձակ շաղակրատութիւններում նախագուշակում էին Ֆրանսիայի ստրկացումը և բարձրաձայն արտահայտում Ազգային ժողովը շախջախելու իրենց ազամաշունչ մտադրութիւնները»<sup>40</sup>: Միրաբոն այս պատկերները համեմատում էր Բարդուղիմեոսյան գիշերվա սկզբի հետ:

Բայց հեղափոխութիւնը, որ սկսվել էր Փարիզում Բաստիլի անկման հետևանքով, մի քանի օրվա ընթացքում հզոր ախրով տարածվեց ամբողջ Ֆրանսիայով մեկ: Ե՛վ մեծ, և՛ փոքր քաղաքներում, հենց որ այնտեղ էր հասնում Բաստիլի անկման լուրը, այն ակնթարթորեն, ինչպես վառողի նկուղին մոտեցրած կրակ, ժողովրդական ցասման պայթիւն էր առաջացնում: Ամենուրեք մարդկանց բազմութիւններ էին դուրս գալիս փողոց, իրենց կամքով պաշտօնանկ անում իշխանութիւն հին մարմիններին և դրանք փոխարինում քաղաքային ինքնավարութիւն նոր ընտրովի մարմիններով՝ մունիցիպալիտետներով, որոնք կազմված էին հիմնականում բուրժուազիայի ներկայացուցիչներից: Մի շարք քաղաքներում հին իշխանութիւնների ցրումը ուղեկցվում էր տեղական «բաստիլներ», բանտերի, քաղաքապետարանների, հին իշխանութիւն՝ ժողովրդին առավել ատելի ներկայացուցիչների անների ավերումով: Տրուալում ժողովուրդն սպանեց քաղաքապետին, հիմնահատակ ավերեց քաղաքապետարանը և գրավելով աղի պահեստը, ստիպեց վաճառել այն էժան գներով: Ստրասբուրգում ժողովուրդը նույնպես հիմ-

նահատակ ավերից քաղաքապետարանի շենքը: Ամիենում, Ռուսնում և մյուս քաղաքներում ժողովուրդը դարձավ փողոցների լիիրավ տեր:

Հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում այդ «մունիցիպալ հեղափոխությունը», ինչպես այն անվանեցին պատմաբանները, ընդգրկեց Ցրանսիայի բոլոր քաղաքները, ամենուրեք հանգեցնելով քաղաքային իշխանություն նոր, իր կազմով բուրժուական մարմինների ստեղծմանը: Միաժամանակ ստեղծվեց հեղափոխության նոր զինված ուժ՝ Ազգային զվարդիայի տեղական ջոկատներ, որոնք կազմավորվեցին բուրժուազիայի և ժողովրդի շարքերից ելած կամավորներից:

Հուլիսի վերջերին, երբ Բաստիլի անկման մասին արտասովոր, գրեթե անհավատալի թվացող լուրը հասավ գյուղերի ամենահեռավոր, խուլ անկյունները, գյուղացիությունն այն ընդունեց որպես մարտակոչ և պայքարի ելավ ընդդեմ կալվածատեր-ֆեոդալների: Երկրով մեկ տարածվեց զինված ելույթների ալիքը՝ գյուղացիներն ավերում ու այրում էին ֆեոդալական գոյակները, սենյորների կալվածքները, ոչնչացնում, պատռոտում կամ խորոչվիների վրա այրում ֆեոդալական փաստաթղթերը, դադարեցնում ֆեոդալական հարկերի մուծումն ու ֆեոդալական պարճակների կատարումը: «Մեծ վախն» էր համակել կալվածատեր-հողատերերին, բոլոր տերերին: Սենյորները լքում էին իրենց կալվածքները և խուճապահար փախչում քաղաքներ:

Հեղափոխությունը ծավալվեց ամբողջ երկրով մեկ: Այն արթնացրեց, իրագործությունների շրջապտույտի մեջ քառեց ժողովրդի բազմամիլիոն զանգվածներին: Ցրանսիայում այլևս չմնաց մի այնպիսի անկյուն, որտեղ ամեն ինչ շարեկոծվեր ոտքի ելած ժողովրդի կողմից: Հեղափոխությունն ընդունեց համազգային բնույթ, այն դարձավ անշրջելի:

## XX

Գլխավոր շտատների գումարումից մինչև հեղափոխության լիակատար հաղթանակն ընկած կարճ ժամանակամիջոցում, երեք-չորս ամսվա ընթացքում, Միրաբոն կարողացավ այնպիսի վիթխարի ազդեցություն նվաճել իր ժամանակակիցների վրա, այնպիսի վիթխարի ժողովրդայնություն նվաճել երկրում ու նրա

սահմաններից դուրս, այն սատիճան հաստատել իր հեղինակությունը, որ ըստ էության նա դառնում է հեղափոխության առաջնորդը: Միրաբոնի հաջողությունն առավել ևս ապշեցրեցի է այն տեսակետից, որ ի տարբերություն Լաֆայետի, որն անկախության համար մղված ամերիկյան պատերազմի ժամանակներից մեծ ու անբասիր փառք ուներ, Միրաբոն պետք է հաղթահարեր զեպուտատների մեծամասնության մեջ իր դեմ գոյություն ունեցող կանխակալ կարծիքը: Զիտոսելով արդեն ադրիականության միջավայրից և հոգևորականության քարձր ներկայացուցիչներից ընտրված զեպուտատների մասին, որոնք նրան դիտում էին որպես հակառակորդի, որպես իր դասի շահերը դավաճանող ազնվականի, երրորդ դասը ներկայացնող բարեկանոն բուրժուաների շրջանում ևս Միրաբոնին, նրա խայտառակ պատմությունների հետևանքով վերաբերվում էին ծայրահեղ անվստահությամբ:

Միրաբոն իր պաշտոնակիցներին՝ ժողովրդի զեպուտատներին ստիպեց դեմ նետել այդ անձնական զգացմունքները: Նա ոչ միայն կարողացավ հարկադրել նրանց ուշադիր լսելու իր յուրաքանչյուր ելույթը, այլև հետևել իր խորհուրդներին, որոնք երբեմն հնչում էին որպես ուղղակի ցուցումներ: Բաստիլի անկումից հետո Միրաբոն դարձավ Ասամբլեայի համարյա թի միակ զեպուտատը, որը քաջություն ուներ սովորեցնել ժողովին, ստիպել նրան փոխելու տակտիկան: Եվ զեպուտատներն ուզում էին այդ թե ոչ, նրանք պետք է հետևեին Միրաբոնի խորհուրդներին:

Ինչպե՞ս բացատրել այդ անօրինակ հաջողությունը մի մարդու, որի նկատմամբ բոլորովին վերջերս վերաբերվում էին անսրբող նախատրամադրվածությամբ: Արդյո՞ք միայն շնորհիվ նրա հիանալի հոնտորական տաղանդի, պերճախոսության ձրքբի Անվիճելի է, հոնտոր-տրիբունի՝ իր տեսակի մեջ այդ միակ հազվագյուտ վարպետությունը նույնպես որոշակի դեր է խաղացել: Բայց, այնուամենայնիվ, գլխավորը դա չէր: Կարևորն այն էր, որ հեղափոխության այդ վաղ, սկզբնական փուլում Միրաբոնի առաջադրած հիմնական խնդիրը՝ արսույլտտիզմի դեմ մղվող պայքարում ժողովրդի բոլոր ուժերի, բոլոր դասակարգերի միասնության գաղափարը, համապատասխանում էր հեղափոխության օբյեկտիվ պահանջներին: Հաճախ աչքաթող են պնտմ այն, որ մինչև հուլիսի կեսը, մինչև Բաստիլի անկումը և ժողո-

վրդրի ներգրավումը պայքարի մեջ, արտոլլուտիստական վարչակարգը դեռ մեծ ուժ էր ներկայացնում: Արքունիքի տրամադրության տակ կային նշանակալից դիմված ուժեր, ոչ միայն ոստիկանությունը և բուն իմաստով ֆրանսիական գնդեր, որոնք գտնվում էին վստահելի կամ արքունիքին մոտ կանգնած արիստոկրատների հրամանատարության ներքո: Արտոլլուտիստական վարչակարգն իր տրամադրության տակ ուներ և այնպիսի վտանգավոր ռազմական ուժ, ինչպես օտարերկրյա վարձու զորքերը, որոնք չէին ենթարկվում և խորթ էին հեղափոխական պրոպագանդային, դարի հեղափոխական հովերին:

Կտորել այդ հզոր ուժերը, որոնց վրա հենվում էր բռնակալությունը, տապալել և ոչնչացնել ֆեոդալաբարտոլլուտիստական վարչակարգը կարելի էր միայն ազգի բոլոր ուժերի համախմբմամբ, միավորմամբ: Միրաբոն դա հասկանում էր ավելի լավ, քան նրա ժամանակակիցներից որևէ մեկը: Միրաբոնի մտքերի սաղմերը կարելի է հայտնաբերել և՛ նրա վաղ աշխատություններում, և՛ «Փորձ բռնակալության մասին» երկում, և՛ Վենսենի դժգոհի աշտարակում նրա խորհրդածություններում և այլն: Բայց գրանք այնտեղ նշմարվում էին դեռևս սաղմնային ձևով, և դա հասկանալի էր: Կյանքն այդ խնդիրները դեռևս օրակարգում չէր դրել: 1789 թվականի արտոլլուտիզմի դեմ երրորդ դասի բոլոր ուժերի համախմբման խնդիրը դարձավ հրամայական պահանջ, և Միրաբոն իր արագ քաղաքական հրամայական տակ հասկացավ, քան ժողովի ազգային կողմնորոշումով դա ավելի լավ հասկացավ, քան ժողովի ազգային ղեկավարներից որևէ մեկը: Նշանակալից է այն, որ Միրաբոն՝ արիստոկրատը, կոմս դը Միրաբոն ավելի հաճախ և համառորեն, քան որևէ մեկ ուրիշը, պահանջում է բուրժուազիայի և հասարակ ժողովրդի՝ բանվորների, շրավոր մարդկանց միասնություն: Նույնիսկ Մարատը, որ մյուսներից ավելի վաղ էր անվստահություն ցուցաբերել Միրաբոնի նկատմամբ, նա ևս պետք է խոստովաներ, որ Միրաբոն բացառիկ ժողովրդականություն է վայելում քաղաքային շրավորության, բանվորների շրջանում<sup>1</sup>: Իրականում այդպես էլ եղել է: Երբ նա երևում էր Փարիզի փողոցներում, հասարակ մարդիկ նրան շրջապատում, հրճվալից ողջունում էին՝ «Կեցցե՛ Միրաբոն՝ ժողովրդի հայրը» բացականչություններով:

Փորեան իր «Ֆրանսիական հեղափոխության սոցիալիստական պատմություն» աշխատության մեջ Միրաբոնի ժողովրդա-

կանություն և քաղաքական ազդեցության այսպիսի սրընթացանք բացատրում էր նրանով, որ նրա բոլոր գործնական առաջարկությունները քաղաքական տեսակետից առավել տրամաբանական էին: Նա ավելի լավ էր հասկանում հեղափոխության խնդիրները, քան որևէ մեկը: Հենց Միրաբոն կարողացավ անհրաժեշտ քաղաքական տակտ և բանականություն գրասեղել, Ազգային ժողովի ամբիոնից հրապարակավ համերաշխվելով Բաստիլը գրոհած ապստամբ ժողովրդի հետ: Նա համարձակվեց սովորեցնել ժողովին: Երբ ժողովն իմանալով, որ թագավորը գալիս է իր նիստին, սկսեց շափազանցված հիացմունք արտահայտել լուկ այդ առիթով, Միրաբոն շեղվեց և լույսն ունենալ հակառակ այդ տրամադրությունների: «Կսպասենք, — ասաց նա, — որպեսզի նորին մեծությունն ինքը մեզ հաստատեր այն բարի մտադրությունները, որոնք վերագրվում են նրան»: Միրաբոն անհրաժեշտ համարեց հիշեցնել. «Փարիզում հոսում է մեր եղբայրների արյունը. թող մոռալ հարգանքը լինի միապետին տրվող ողջունի միակ ձևը դժբախտ ժողովրդի ներկայացուցիչների կողմից»: Նա դեպուտատներին կոչ էր անում հրաժարվել տվյալ իրադրության մեջ անպատեհ ամեն տեսակ ցնծություններից. «ժողովրդի լույսն ունենալ՝ դաս է թագավորին»<sup>2</sup>:

Անվիճելի է, որ հեղափոխության վճռորոշ, սկզբնական փուլում Ազգային ժողովի բոլոր գործիչներից Միրաբոն նրա քաղաքականապես առավել հասուն ղեկավարն էր:

Հեղափոխության այդ վճռական օրերին Միրաբոնի գրեթե բազմաթիվ իմաստությունը, համարձակությունը, խիզախությունն էլ հենց նրան համաշխարհային փառք բերեցին:

Եկատերինա II-ը, որ կոտորավում էր Վոլտերի և Դիդրոյի հետ, ցուցադրելով իր ազատասիրությունը, բոլորովին այլ կերպ էր գնահատում Միրաբոնին: «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» ստեղծագործության վերաբերյալ իր նշումներում, այն տողերի դիմաց, որոնցում Ռադիշչևը բարձր էր գնահատում Միրաբոնին, կայսրուհին գրքի լուսանցքներում գրել է. «Այստեղ պարունակվում է Միրաբոնի գովքը, որը ոչ թե մեկ, այլ շատ կախաղանների է արժանի»: Միրաբոնի հեռակա կարգով բազում կախաղանների դատապարտող ոռոսաստանյան կայսրուհու այս կարծիքը շատ հատկանշական է: Ֆրանսիական հեղափոխության գործիչներից քչերն են արժանացել միապետների այսպիսի անսքող առեւտրության պատվին: 1793 թվականին

Մոսկվայում հրատարակվեց որպես անհայտ հեղինակի Ֆրանսերենից թարգմանված գիրքը՝ «Դոնորի-Գավրիլ Ռիբետախ կոմս Միրաբոյի հասարակական և անձնական կյանքը» վերնագրով, որտեղ փառաբանված տրիբունը հորջորջվում էր որպես «մարդկության վիժվածք»։ Պաշտոնական, կոռուպցիոն, ինքնակայական Ռուսաստանը մեծագույն թշնամանքով էր վերաբերվում Ֆրանսիական մեծ հեղափոխության տրիբունին՝ Միրաբոյին։

Հակադիր բևեռում առաջավոր, ազատամիտ Ռուսաստանը փառաբանում էր Միրաբոյին որպես առաջավոր գաղափարների ակունավոր պաշտպանի։ Արդեն խոսվեց Միրաբոյի նկատմամբ Ռադիշչևի համակրական կարծիքի մասին։ «Խոսք Լոմոնոսովի մասին» ստեղծագործության մեջ Ռադիշչևը առանձնապես նշում էր Միրաբոյի հոետորական ձիրքը, նա վերջինիս դասում էր «խոսքի մեջ հիանալի գիտունների»<sup>43</sup> շարքին։

Ռադիշչևի ավանդույթներն ընդունել և շարունակել են ապագա ղեկավարիստները։ Վ. Ֆ. Ռաևսկին գինվորներին ու յունկերներին Քիշինում ուսուցանելով ազմական արվեստը, նրանց առաջարկում էր գրագիտություն ձեռք բերելու համար գրել այսպիսի բառեր. «Ազատություն, հավասարություն, սահմանադրություն», «Կվիրոգա» (1820 թվականին Իսպանիայում ծագած ապստամբության ղեկավարներից մեկը — Ա. Մ.), «Վաշինգտոն», «Միրաբո»։ Դիվիզիայի հրամանատար գեներալ Մ. Ֆ. Օրլովը, որ տեղակ էր Ռաևսկու ուսուցչական գործունեության այդ ինքնակամ ուղղությանը, համամիտ էր նրա հայացքներին<sup>44</sup>։

Ռուսական առաջավոր մամուլում առանձնապես նշվում էր Միրաբոյի արվեստը որպես հոետորի։ 1820 թվականին «Նևսկի զրիտել» հանդեսի հոդվածներից մեկում հեղինակը Դեմոսթենեսին անվանելով հին աշխարհի «հոետորների արքա», նրա հետ համեմատում էր միայն Միրաբոյին. «Միրաբոն բարձրացավ ու հասավ մինչև Դեմոսթենեսի բարձրությանը, նա օրենքներ էր տալիս ժողովին, արքունիքին, ամբողջ Ֆրանսիայի ժողովրդին, նրա ճառերը միշտ պերճախոս են, երբեմն կատարյալ»։ Նշելով Միրաբոյի ուժը որպես բանավիճողի, հեղինակը գրում էր. «Ինչից նա (Միրաբոն) — Ա. Մ.) ավելի շատ էր զայրանում, այնքան նրա բառերն ավելի շատ եռանդ էին ձեռք բերում. Միրաբոյի մարմինը և շարժումը նրա պերճախոսությանը

նր տալիս էին ուժ, որն ապրեցնում էր հանճարով, երբեմն ուղեղնչված զգացմունքով։ Այն անդադար վերածնվում էր»<sup>45</sup>։

Ժամանակակիցները նշում էին Միրաբոյի ազդեցությունն անգամ Ռադիշչևի ոճի վրա։ Ա. Ռ. Վորոնցովը 1791 թվականի հունվարին պնդում էր, որ «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» ստեղծագործության հեղինակային զրկվածում պատկերվում է «Միրաբոյի և Ֆրանսիայի մյուս կատաղիների տոնը»<sup>46</sup>։

Միրաբոն հիմնավորապես մտավ Ռուսաստանի առաջադեմ մարդկանց գիտակցության մեջ։ Ուսումնասիրողները պարզել են, որ «Եվգենի Օնեգինի» հինգերորդ գլխի սևագրի լուսանցքներում Ա. Մ. Պուշկինը նկարել է Միրաբոյի հրաշալի դիմանկարը<sup>47</sup>։

Ա. Ի. Գերցենը բարձր է գնահատել Միրաբոյի ճառերը և մտքի հյուսիսությունը։ Քարգմանելով նրա դատողություններից մեկը Բառնավի մասին, Գերցենը գրել է. «Այդ, ինչպես և այն ժամանակվա շատ արտահայտություններում, ցայտուն կերպով արձագանքել է բառերի ու գործերի մեջ եռանդի այն ժամանակը, որն ուներ իր լեզուն, իր ումանտիզմը, իր պոեզիան։ Մեր ժամանակ ոչ ոք չի անի նման գիտություն և այդպես ուժեղ»<sup>48</sup>։

Կարելի էր Ռուսաստանի առաջադեմ մարդկանց այլևայլ նման շատ դատողություններ բերել Միրաբոյի մասին։

Մտաավորապես նույն բանը կարելի է հաստատել, վերլուծելով հասարակական մտքի պատմությունը Դեմոստիայում, Իտալիայում, Անգլիայում և այլուր։

Միրաբոյի քաղաքական կերպարի ամբողջ հակասականությունը հանդերձ, շնորհիվ այն բացառիկ դերի, որ նա խաղաղել է ֆրանսիական հեղափոխության առաջին փուլում, նրա անունը հաջորդ սերունդների համար դարձել է հանուն ազատության պայքարի խորհրդանշաններից մեկը։ Այն նույն շափով, ինչ շափով որ հասարակության ավանգարդում ընթացող առաջադեմ մարդիկ են հարգել Միրաբոյի հիշատակը որպես իրենց մյուս նախորդներից մեկի, պաշտոնական շրջանները, բացարձակ միապետության հին, «անսասան» սկզբունքների կողմնակիցներն ու պաշտպանները, արիստոկրատիայի արտոնությունների նախանձախնդիր անձինք, պահպանողականներն ու հետադիմականները նախում ու անարդում էին Միրաբոյին, որը գա-

վաճանել էր իր դասին, նրանց աշքում մնացել որպէս «կատա-  
գիններէց» մեկը:

Յրանսիական մեծ հեղափոխութեան անհայտ մնացած ոմն  
ժամանակակցի վերագրվում են հետևյալ խոսքերը. «Եթէ Մի-  
րարոն մահանար մեկ տարի շուտ, ինչպիսի՞ մեծ փառք կըրջա-  
պատեր նրա անունն առհասկառ»:

Եթէ իրականում այդպէս է ասված՝ եղև, ապա պետք է  
խոստովանել, որ այդ տարիմաստ ասույթի անհայտ հեղինակը  
իրավացի էր:

1789 թվականը Օնորե Միրարոյի փառքի գագաթնակէտն էր:  
Մի քանի ամսվա ընթացքում կատարվեց այն, ինչը կարելի է  
գրեթէ հրաշք համարել: Անհաջողակ արկածախնդիրը, որի  
անունը մշտպես կապվել է ամբողջ եվրոպայով մեկ քնդացող  
սկանդալների հետ, իշխանութիւններից և պարտատերերից հե-  
տապնդվողը, արկածներ որոնողը, որոնք մեծ մասամբ նրա  
համար ավարտվել են դաժան հատուցումով, XVIII դարի  
դոն ժուանը, որի միայն անունից տիկնայք ուշագնաց էին լի-  
նում, արիստոկրատը, որը հարաբերութիւնները խզել էր ոչ  
միայն իր ընտանեկան տոհմի, այլև իր դասային ընտրախավի  
հետ և դրա համար պատժվել երկար տարիների դեգերումների՝  
ամբոցներում ու բանտերում, տաղանդավոր գրողը, որն անա-  
նուն ձևով մերկացնում էր բնակալութիւնը, որի պատճառով  
էլ փառքի շտիրացավ, այդ մարդը, որին աշխատում էին շըր-  
ջանցել կամ շնկատել, կատարեց փոխակերպութիւններից ամե-  
նաանհավանականը: Հեղափոխութեան հինգ ամսվա ընթացքում  
նա դարձավ Ֆրանսիայի ամենանշանավոր քաղաքական գործիչ-  
ներից մեկը, հեղափոխական երիտասարդութեան կուռքը, տրի-  
բունը, որը վայելում էր ժողովրդի սերն ու պաշտպանութիւնը,  
որոնց անձանոթ էր մի որևէ այլ գործիչ, Ազգային ժողովի ամե-  
նահեղինակավոր ղեկավարը: 1789 թվականին Միրարոյի  
անունը Ֆրանսիական հեղափոխութեան մարմնացումն էր:

Բայց ահա հեղափոխութեան ամենագլխավոր և ամենագրծ-  
վարին խնդիրը լուծված էր: Բաստիլի անկումը նշանակում էր  
Ֆեոդալաւարսուլլուտիստական վարչակարգի խորտակում: Անմո-  
ռանալի 1789 թվականի՝ ազատութեան առաջին տարվա ամուսն  
վերջին արսուլլուտիստական վարչակարգը որպէս իշխանութեան  
սխտեմ ջախջախվեց: Թագավորը և արքունիքը տահաութեամբ  
պետք է խոստովանեին հեղափոխութեան հաղթանակը: Դեպի

Վերսալ հոկտեմբերի 5—6-ին ժողովրդական զանգվածների ար-  
շավից հետո, որն ավարտվեց թագավորի և Ազգային ժողովի  
ակնածալի, բռնի փոխադրումով մենավոր Վերսալից հեղա-  
փոխական կրթերով Եռացող Փարիզ, հեղափոխութեան հաղ-  
թանակը դարձավ անշրջելի: Միապետին ցույց տրվող մեծա-  
բանքներով, ազգի մեջ միապետական զգացմունքների դեռ  
գրեթէ կատարյալ տիրապետմամբ հանդերձ թագավորը, այնու-  
ամենայնիվ, փաստորեն դարձավ ժողովրդի գերին:

Աբսուլլուտիզմի պարտութեան արտաքին արտահայտութիւնը  
թագավորի եղբայրներ կոմս Պրովանսի, կոմս դ'Ար-ուալի,  
արքայազն Կոնդեի, արքայազն Կոնտիի և մյուսների փախուստն  
էր Ֆրանսիայից: Ավելի ու ավելի լայն թափ ընդունած հակա-  
հեղափոխական տարագրութիւնը ուղղակի ապացուցեւ էր այն  
բանի, որ արսուլլուտիզմի դաժան քաղաքականութեան պարա-  
զուխներն ու կողմնակիցները իրենց գործը համարում էին տա-  
նուլ տված:

Հեղափոխութիւնը թևակոխում էր նոր փուլ: Հզոր թշնամու-  
ղեմ մղվող պայքարում բոլոր ուժերի միավորման ժամանակա-  
շրջանն ավարտվում է: Այժմ, երբ առաջին և գլխավոր խնդիրը  
լուծված էր, արսուլլուտիզմին հասցված էր ծանր հարված,  
կյանքն ինքը օրակարգում դնում էր նոր պրոբլեմներ:

## XXI

Հոկտեմբերի 5—6-ին ժողովրդի արշավը դեպի Վերսալ և  
դրան հետևած թագավորական արքունիքի, Ազգային ժողովի և  
Բրիտոնյան ակումբի փոխադրվելը Փարիզ նշանավորելին հե-  
ղափոխութեան հետագա խորացումը:

Ժողովրդի ուղղակի միջամտութիւնը, ինչպէս հուլիսին, ոչ  
միայն ձախողեց հակահեղափոխութեան ուժերի դիմավորու-  
թիւններն ու պլանները և ծանր պարտութեան մատնեց նրանց,  
այլև նշանակում էր հեղափոխական պրոցեսի հետագա զար-  
գացում: Հոկտեմբերի 5—6-ի իրադարձութիւններից հետո շատ  
բան փոխվեց: Մեծ նշանակութիւն ուներ քաղաքական կենտ-  
րոնի տեղափոխումը Վերսալից Փարիզ: Թագավորական արքու-  
նիքը Փարիզում փաստորեն ընկավ ժողովրդի հակողութեան տակ:  
Փարիզցիներն այժմ հնարավորութիւն ստացան ներգործել և  
Ազգային ժողովի վրա: Նրա նիստերն անցնում էին ձիաճարգա-

բանի ընդարձակ շենքում, և հյուրերի համար առանձնացված տեղերն այսուհետ լիփ-լիցուն էին մայրաքաղաքի տեղի ունեցածին աշխուժորեն արձագանքող բորբոքուն բնակիչներով:

Միրարոն դժ էր հոկտեմբերյան իրազարգացումների արդյունքներից: Դրանք նրան ուրախացնում էին ոչ միայն, նույնիսկ ոչ այնքան ընդհանուր քաղաքական նկատառումներով (հեղափոխության հաջողություններին նա չէր կասկածում), որքան զուտ անձնական շարժառիթներով՝ ճգնաժամային պահներին, երբ կանայք ներխուժեցին Մասնաճակատի ժողովի շենքը՝ պատրաստ ամեն ինչ վերածել տաշեղի, նա միակը 600-ից, իր տիրական ձայնով ստիպեց նրանց ենթարկվել իր հրամաններին: Բայց դա՛ չէր կարևորը նա ենթադրում էր, որ այժմ, երբ միապետության դրուժյունը շեշտակիորեն բարդացել է, թագավորը կհանգձի կառավարության ղեկավարությունը իրեն՝ Միրարոյին՝ հանձնարարելու անհրաժեշտության առաջ: Մոտենում էր նրա ժամը՝ գրանում նա համոզված էր: Լյուդովիկոս XVI-ը և Մարիա-Անտուանետը (նա նույնիսկ չէր կասկածում, որ թագուհին իր դեմ է) կուպենան այդ թե ոչ, նրանք հարկադրված վրիճեն հանդամանքների բերումով դիմել իրեն, ապավինել իր օգնությանը:

Միրարոյի այս պլանները անհազ փառասիրության շփոթանալոված հաշիվներ չէին: Այն ժամանակվա մամուլում, գրեթե բոլոր լրագրերում՝ ընդհուպ մինչև Մարտի «ժողովրդի բարեկամը»<sup>59</sup>, բազմիցս ենթադրություններ են արվել այն մասին, որ մոտակա ժամանակներս իշխանության գլուխ կանցնի Միրարո-Լաֆայետի «մեծ մինիստրությունը»: Եվ իրոք, ովքե՞ր, քացի ժողովրդի մեջ հանրաճանաչ այս լիբերալ միապետականներից կկարողանային նեցուկ լինել միապետության երեքացող շենքին:

Հակառակորդ մրցակիցներից, լինի դա Լաֆայետը, Բային կամ Սիեյեսը, Միրարոն չէր վախենում: Նրանցից և ոչ մեկը չէր կարող նրա հետ մրցել հոետորական ձիրքի, ժողովի, ժողովրդի վրա ազդելու ունակության հարցերում:

Ազգային ժողովը ձիամարզարանի դահլիճ տեղափոխվելուն պես, որտեղ ակուստիկ պայմաններն անհամեմատ ավելի լավ էին, քան վերսայլան հին դահլիճում, Միրարոն հատկապես հաճա-

խակի և հաճույքով էր ելույթ ունենում: Նրա հզոր ձայնն այստեղ թնդում էր ամբողջ հզորությամբ, հիացմունք պատճառելով վերնասրահներում նստած փարիզցիներին: Երբ Միրարոն բարձրանում էր ամբիոն, դահլիճը սակվում էր: Այժմ արդեն չէին խոսում այն մասին, թե արդյոք որևէ մեկին հաճելի՞ է էքսի դեպուտատը, թե ոչ: Նրա գերազանցությունը հանրաճանաչ դարձավ: Ե՛վ Լաֆայետը, և՛ Բային, և՛ Մոնիեն՝ բոլորը անխածանքով էին վերաբերվում Միրարոյին: Միգուցե այն ժամանակ քչերին հայտնի արբասցի դեպուտատ պարոն դը Ռոբեսպիերն էր միայն ուշադիր, օտարոտի, ավելի շուտ նույնիսկ անբարյալացի հայացքով անկուպիչ նայում Միրարոյին: Բայց այն ժամանակ Ռոբեսպիերը վճռական խոսք չունեյ՞ նրա հետ հաշվի չէին նստում: Այնուամենայնիվ, Միրարոն նրան նկատեց և կարողացավ գնահատել: «Այս երիտասարդը հետո կգնա, — ասաց Միրարոն, — նա հավատում է այն ամենին, ինչ ասում է»:

1789—1790 թվականներին և՛ Ազգային ժողովի պատերի ներսում, և՛ կրքերի մեջ Լուսցող Փարիզում, և՛ ամբողջ Երկրում Միրարոյի ազդեցությունը հսկայական էր: Տարօրինակ կերպով Միրարոն առանձնապես հանրաճանաչ էր ժողովրդի ցածր խավերի, բաղաբային խղճուկ ամբոխի շրջանում: Բավական է, որ նա երևար մայրաքաղաքի մի որևէ փողոցում, որպեսզի անմիջապես հոծ բազմություն հավաքվիր Բանջարավաճառ, շուկաների ձկնավաճառ կանայք, որմնադիրները, շինարար բանվորները, Փարիզի ամբողջ խայտաբղետ խղճուկ ամբոխը շրջապատում էր փառարանված տրիրոնին, ծափահարում նրան, սեղմում նրա ձեռքը, իրենց ձեռքերը խփում մեջքին, խանդավառությամբ բացականչում. «Կեցցե՛ մեր կոմս դը Միրարոն», «Կեցցե՛ մեր հայր Միրարոն»:

Բնազգային, բնածին դերասանական տաղանդը Միրարոյին թելադրում էր տվյալ պահին պահանջվող հանպատրաստից կարճատև ճառեր արտասանել: Իր պատասխաններում նա հակիրճ էր ու հնարամիտ և ժողովրդի մեջ նրա հեղինակությունը ավելի ու ավելի էր աճում:

Երբեմն ժողովրդի մեջ Միրարոյի բացառիկ հանրաճանաչությունը նրա կենսագիրները հակված էին բացատրել այսպես. հասարակ մարդկանց պատկառանք է ազդում, որ արիստոկրատը, կոմսը անցել է ժողովրդի կողմը և դարձել նրա պաշտ-

\* Նկատի է առնվում երրորդ դասի դեպուտատների թիվը:

պանը: Միգուցե ոմանց վրա դա իրոք որ տպավորութիւնն է գործել: Բայց որպէս լուրջ փաստարկ այն չի կարող ուշադրութիւն գրավել, քանի որ հեղտութեամբ ժխտվում է հանրահայտ փաստերով:

Պուրս Ֆիլիպ Օռլիանցին, որ ներկայացնում էր թագավորական դինաստիայի կրտսեր ճյուղը և, հետևաբար, պատկանում էր ամենաբարձր արիստոկրատական վերնախավին, հայտնի է, որ նույնպէս հարեց հեղափոխութեանը և նույնիսկ սկսեց կողմել Ֆիլիպ էգալիտե (Հավասարութեան): Մարկիզ դը Լաֆայետը՝ նույնպէս արիստոկրատական բնորոշումովի ներկայացուցիչ, առաջին օրերից կանգնեց հեղափոխութեան կողմը: Բայց ոչ մեկը և ոչ էլ մյուսը հանրաճանաչութեան տեսակետից չէին կարող մրցակցել Միրաբոյի հետ:

Օռլեանի դուքսը, չնայած նրան, որ հետևողականորեն գրավում էր ամենաձայրահեղ դիրքեր, ընդհուպ մինչև Լյուդովիկոս XVI-ի՝ իր զարմիկի գլխատման համար քվեարկութիւնը, ժողովրդի մեջ այդպիսի հանրաճանաչութեան երբեք էլ չհասավ: Նրան չէին նկատում և լրջորեն չէին ընդունում այնքան ժամանակ, մինչև որ 1793 թվականին մի օր շնորհատեցին նրա բոլոր ձախ ժեստերն ու ճառերը, ուղարկելով նրան գիլիտոտին՝ մահապատժի Լաֆայետը հեղափոխութեան առաջին շաբաթներին իսկապէս հանրաճանաչ էր. նրա թիկունքին էր հերոս գնեքալի, անկախութեան համար ամերիկյան պատերազմի մասնակցի փառքը: Նրան Ֆրանսիայի հեղափոխական մայրաքաղաքի Ազգային գվարդիայի հրամանատար նշանակելը նրա մարտական ծառայութիւնների հասարակական ճանաչման ձևն էր: Բայց արդյոք երկա՞ր շարունակվեց Լաֆայետի հանրաճանաչութիւնը: Մի քանի ամիս: Տատանումները, անվճռականութիւնը, որ նա դրսևորեց 1789 թվականի հոկտեմբերի 5—6-ի ժողովրդական ելույթների օրերին, ժողովրդին վանեցին նրանից: Նա սկսեց արագորեն հեղաշրջվել դեպի աջ և ավարտեց նրանով, որ 1792 թվականին փորձեց բանակը շրջել հեղափոխական Փարիզի դեմ, բայց անհաջողութիւն կրելով, փախավ թշնամիների բանակատեղին: Կարելի էր բերել և այլ օրինակներ՝ Կոնգորսե, Տալեյրան և այլոք:

Հեղափոխութեան կողմն անցած արիստոկրատները շատ էին, բայց նրանցից մեկն էլ չէր կարող ոչ միայն հավասարվել Միրաբոյին, այլ նույնիսկ հեռավոր կերպով մերձենալ ամբողջ

երկրով, ամբողջ Եվրոպայով մեկ թնդացող Պրովանսի դեպուտատի փառքին:

Հիշեցնենք այն ժամանակվա բարբերի խրոնիկայից վերցված առաջին հայացքից անշնան մի բնորոշ գիծ: Լեյտենանտ Բուռնապարտեն՝ այն ժամանակ բուրբին անհայտ հրետանային սպան, որն իր գործմասի հետ միասին անիմաստ կյանք էր վարում փոքրիկ քաղաք Օքսոնում, բայց շատ ուշադիր ակննդ դնում հեղափոխական մայրաքաղաքից եկող բոլոր լուրերին, արձակուրդ գալով Կորսիկայի Այաչչո քաղաքում գտնվող իր տուն, գրում կախեց մի մեծ ցուցանակ. «Կեցցե՛ ազգը: Կեցցե՛ Միրաբոն»:

Այս ոչ մեծ, գրեթե կենցաղային մանրուքը լի է խոր իմաստով: Հեռավոր Այաչչոյում կետիցիա Բուռնապարտեի տանը ձեռքով գրված ցուցանակն ապացուցում էր, որ երիտասարդ հրետանային սպայի գիտակցութեան մեջ Միրաբոյի անունը հեղափոխութեան խորհրդանիշն էր, այն նույնանում էր «ազգ», այսինքն «ժողովուրդ» հասկացութեան հետ:

Ահա թե որքան մեծ էր Միրաբոյի համաժողովրդական փառքը հեղափոխութեան առաջին տարիներին:

Վա՛վ, իսկ հետո՞, կհարցնի անհամբեր ընթերցողը, իսկ հետո ի՞նչ:

Բնականաբար, մենք կվերադառնանք դրան, բայց փոքր-ինչ ուշ:

Միրաբոյի բացառիկ ժողովրդայնութեան տարիմաստութիւնը նաև այն է, որ իր ելույթներում և՛ Ազգային ժողովի պատերի ներսում, և՛ նրա սահմաններից դուրս, նշանավոր արիւնը ամենեկին էլ չէր հետևում ամենաձախ հայացքների: Այն նույն հարցերի, որոնք ինքը կյանքն էր դնում օրակարգի մեջ, օրինակ, սահմանադրական հարցերի շուրջ, որոնք 1789—1791 թվականներին մշտապէս քննարկվում էին Սահմանադիր ժողովում, Միրաբոն հաճախակի ելույթ էր ունենում շատ ավելի աջ դիրքերից, քան նրա պաշտոնակիցները, և, չնայած նրա անձնական վիթխարի ազդեցութեանը, երբեմն մնում էր փոքրամասնութեան մեջ:

Քաղավորի վետոյի իրավունքի վերաբերյալ հարցը քննարկելիս նա սկզբնապէս հանդես էր գալիս բացարձակ վետոյի օգտին. իսկ հետո վետոն կասեցնելու իրավունքի օգտին: Այս մասնավոր հարցում նրա գիրքը (ինչպէս և սահմանադրական

մյուս հարցերում) որոշվում էր նրա քաղաքական հայացքներով:

Ուշադիր վերլուծելով Միրաբոյի նախահեղափոխական շրջանի և հեղափոխության առաջին երկու տարիների ելույթները, կարելի է նկատել, որ դարձվածաբանության որոշ տարբերակների (րոտ երևույթին, թելադրված կոնկրետ հանգամանքներով) առկայությամբ հանդերձ տրիրունի դրական հայացքները ըստ էության մնում էին անփոփոխ:

Փոքր-ինչ պարզեցված ընդհանրացման ենթարկելով Միրաբոյի քաղաքական իդեալը, կարելի է ասել, որ նա հանդես էր գալիս հանուն սահմանադրական, լիբերալ, ուժեղ կառավարության կողմից ղեկավարվող, ժողովրդի վստահության, ավելի ստույգ, օրենսդրական ժողովի վրա հենվող միապետության: Եթե խոսելու լինենք ժամանակակից տերմիններով, նրա իդեալը բուրժուական միապետությունն էր, սրն ապահովում էր որոշակի բուրժուադեմոկրատական իրավունքներ:

Ի տարբերություն մինչհեղափոխական տարիների, երբ այդ հարցերն ունեին վերացական-տեսական նշանակություն, 1789—1791 թվականներին դրանք դարձան Սահմանադիր ժողովի առօրյա աշխատանքի կոնկրետ պրակտիկա:

Միրաբոն խիստ ցածր կարծիք ուներ թագավորական զույգի մասին, որը գլխավորում էր Ֆրանսիական միապետությունը: Նրա վերաբերմունքը Մարիա-Անտուանետի նկատմամբ խիստ բացասական էր: Նրա համար լրիվ ակնհայտ էր Լյուդովիկոս XVI-ի սահմանափակությունը, թուլությունը, շնչունությունը: Միրաբոն նրա մասին գրում էր. «Նա չգիտե ոչ ինչ է կարող ինքը, ոչ ինչ է ուզում ինքը, ոչ ինչ է անելու ինքը»<sup>50</sup>:

Եվ այնուամենայնիվ, գիտակցելով թագավորի բոլոր թերությունները, նա համառորեն հետամուտ էր լինում միապետության ինստիտուտի պահպանմանն ու ամրապնդմանը: Ինչու՞ է Ամենից առաջ այն պատճառով, որ նա երկյուղ էր կրում հանրապետությունից կամ նրա տարբերակներից, այսինքն պլուրալիստական իշխանությունից, շատերի իշխանությունից: Ժողովում իր ունեցած ելույթներից մեկում նա ասում էր. «Ես ուզում եմ միանգամայն բացեփրաց հայտարարել, որ առավել սարսափելի եմ համարում 600 անձից բաղկացած իշխանությունը. վաղը նրանք իրենց կհայտարարեն անփոխարինելի, վաղը չէ մյուս օրը՝ ժառանգական, այն հաշվով, որպեսզի, ինչ-

պես դա հատուկ է այլ երկրների արիստոկրատական վարչակարգերին, ավարտեն իրենց անսահմանափակ իշխանություն վերապահելով»<sup>51</sup>:

Թող որ թագավորը լինի թույլ, անվճռական, օժտված բազմաթիվ թերություններով: Գա ի՞նչ ոնեւ նշանակություն կարող է ունենալ: Թագավորը պետք է թագավորի, բայց ոչ կառավարի: Բայց ժառանգական միապետության գոյության բուն փաստը խոչընդոտ է 600-ի արիստոկրատները հաստատելու, նոր արիստոկրատիայի բռնակալության համար, ինչպիսի պայլամենտական զգեստներով էլ նրանք շրջադարձվին:

Ենական է, որ այդպիսի հայացքները, նրա կողմից բացահայտ արտահայտած անլստահությունն իր պաշտոնակիցների, Սահմանադիր ժողովի 600 ղեկուսառների նկատմամբ կրորդ դասի ներկայացուցիչներին համակրանք չէին ներշնչում նշանավոր տրիրունի հանդեպ: Բայց այն ժամանակ այնքան ուժեղ էր «բառի ղիկտատուրան», այնքան մեծ էր Միրաբոյի անձնական հեղինակությունը, որ Սահմանադիր ժողովում նրա ղեմ ղեռ ոչ որ չէր համարձակվում հանդես գալ: Ոչ ոք չէր կամենում անգերազանցելի հետտորի բանավիճալին պերճախոսության զոհը գառնալ: Սակայն այդ շարժառիթներին միացան և այլ, միգուցե առավել ծանրակշիռ շարժառիթներ:

Ինչպես արդեն ասել ենք, Միրաբոյի սրբնթաց, գրեթե ակնթարթային հանրաճանաչության աճը 1788—1789 թվականների վերջերին մեծ մասամբ բացատրում էին նրանով, որ «Ամբողջ երրորդ դասի միտքանություն» լոզունգը, որն այն ժամանակ պաշտպանում և պրոպագանդում էր նա, համապատասխանում էր ժամանակի օրյեկտիվ պահանջներին, այն խնդիրներին, որոնք պատմության ընթացքով ծառայած էին ֆրանսիական ժողովրդի առջև:

Միրաբոն դա հասկացավ առաջինը և իր որոտալից ձայնի ողջ հզորությամբ ամբողջ երկրով մեկ առաջինը հռչակեց միալանություն լոզունգը:

Բայց հուլիսի 14-ից հետո, ամբողջ երրորդ դասի միավորված ջանքերի գնով արսույլուտիստական վարչակարգի անկուճից հետո, միաբանության լոզունգը կորցրեց իր նախկին նշանակությունը: Կյանքն օրակարգում էր դնում նոր խնդիրներ, սկսվում էր նոր պրոցես՝ պայքար իր իսկ երրորդ դասի ներսում, սահմանադատում դեռ մինչև երեկ միասնաբար հանդես եկած

բլտի ներսում: Խոշոր բուրժուազիան և լիբերալ ազնվազիան ությու-  
ներ, այսինքն քաղաքականապես ամենաաջ մասը, որ մինչ այդ  
գերիշխում էր Սահմանադիր ժողովում, սկսեցին նաև քաղաքական  
տիրապետության հավակնել երկրում: Շարունակելով խուսել ամ-  
բողջ ժողովրդի անունից, նրանք ձգտում էին յուրացնել իշխա-  
նության մենաշնորհը: Լաֆայետը, Բային, Մունիեն, Միլեյետը՝  
խոշոր բուրժուազիայի և լիբերալ ազնվականության լիդերները  
ձգտում էին ոչ միայն մենաշնորհացնել պետական իշխանու-  
թյունը, այլև հեղափոխությունը պահել որոշակի սահմաններում,  
և ամենից առաջ արգելակել նրա սրընթաց զարգացումը:

Միրաբոն իր անձնական վիթխարի հեղինակությամբ, տրի-  
բունի զարմանահրաշ տաղանդով, երկրում, ժողովրդի մեջ ունե-  
ցած հսկայական ժողովրդականությունը կենսականորեն անհրա-  
ժեշտ էր նրանց: Նրանցից ոչ մեկը չէր կարող մրցել Միրաբոնի  
հետ. ինչ-որ մի Միլեյետ, որ տառապում էր անհազ փառամո-  
լության ցավով<sup>52</sup>, կամ Լաֆայետը, ինչպես և մյուս լիդերները,  
որոնք հեղափոխության տարիներին տառապում էին աններելի  
արատով՝ թոթովախոսությամբ, հստակորեն հականում էին,  
որ չեն կարող ուժերը չափել Միրաբոնի հետ: Իսկ գլխավորը՝  
Միրաբոն ժողովրդի աչքում մնում էր որպես հեղափոխության  
կենդանի խորհրդանիշ. ժողովուրդը նրան երկրպագում  
էր: Եվ Միրաբոնի անունը խոշոր բուրժուազիայի կուսակ-  
ցությանն անհրաժեշտ էր որպես համազգային դրոշ: Գրանք-  
գործնական խառնվածքի տեր բանիմաց մարդիկ էին, բւտի և  
ճնշելով իրենց սեփական զգացմունքները, իրենց հակակրանքը,  
նրանք գլուխ էին խոնարհում Միրաբոնի առաջ, նույնիսկ ազդա-  
բարում նրա առաջնության ճանաչումը իրենց կողմից:

Ինքը Օնորե Միրաբոն իր քաղաքական հայացքներով, ան-  
կասկած, ավելի մոտ էր այդ խմբավորմանը: Եթե նրանց միջև  
ժառոց էլ էին ինչ-ինչ տարակարծություններ, ապա մասնավոր-  
բարություններում, այլ ոչ թե գլխավորում: Նրանք բոլորը սահ-  
մանադրական միապետության կողմնակիցներ էին, և Միրաբոն,  
ինչպես և մյուս սահմանադրականները (չուտով այդպես սկսե-  
ցին անվանել Սահմանադիր ժողովի բուրժուական աջ խմբա-  
վորմանը), գտնում էր, որ հեղափոխական պրոցեսը պետք է  
արգելակել:

Հոկտեմբերի 5—6-ի անցքերից հետո Միրաբոն թագավորին  
ներկայացրեց մի ուղերձ (որը ժամանակակիցների համար եր-

կար ժամանակ անհայտ էր մնացել), որում նրան հանձնարա-  
բում էր միջոցառումների մի ամբողջ ծրագիր: Ամենից առաջ նա  
թագավորին խիստ հեռատեսորեն նախազգուշացնում էր, որ  
արքունիքի գտնվելը մայրաքաղաքում կարող է վտանգավոր  
լինել. պետք չէ իրեն համար պատրանքներ ստեղծել: Նա միա-  
պետին խորհուրդ տվեց մեկնել որևէ տեղ Ֆրանսիայի խորքերը  
և ժողովրդին ուղղված կողով ստեղծել Կոնվենտ՝ ներկայացուց-  
չական նոր ժողով: Թագավորը ամբողջ ժողովրդի առջև պետք է  
ընդունի, որ արսույլուտիզմը և ֆեոդալիզմը ֆրանսիական թա-  
գավորությունում ոչնչացված են ընդմիջտ, և որ թագավորը  
հանդիսավորապես հաստատում է ազգի իրավունքներն ու պար-  
տավորում միշտ գործել ազգի հետ համերաշխ, և նրա իրա-  
վունքները պետք է ամրապնդվեն:

Ուղերձի հետ միաժամանակ ներկայացվել էր ուժեղ և հեղի-  
նակավոր կառավարության ձևավորման անհետաձգելի պլան,  
որի կազմի մեջ պետք է մտնեն ժամանակակից նշանավոր գոր-  
ծիչներ՝ սկսած Նեկկերից (իր համար Միրաբոն ցուցադրական  
համեստությամբ խնդրում էր սոսկ անպորտֆել մինիստրի պաշ-  
տոնը), և որը պետք է անմիջականորեն պատասխանատու լի-  
ներ Կոնվենտի առաջ:

Լյուդովիկոս XVI-ին հղված այդ ուղերձը շատ պատճառներով  
ուշադրության է արժանի: Այն Միրաբոնի առաջին ուղղակի դի-  
մումն է թագավորին: Բայց կարևոր է գործի ոչ այդ, ձևական  
կողմը: Հական է մեկ այլ բան: Թագավորի, արքունիքի, ամ-  
բողջությամբ վերցրած թագավորական կուսակցության համար  
Միրաբոնի դիմումը պետք է որ շլված, անօրինակ հանդրա-  
նություն թվար: Ոչ միայն այն պատճառով, որ Պրովանսից եկած  
այդ ազնվականը, թեպետ պահպանում էր միապետի նկատմամբ  
սահմանված նարգանքի բոլոր ձևերը, ըստ էության նրան էր  
դիմում որպես հավասարը հավասարին. նա ոչ միայն մոռացել  
էր նրանց՝ հպատակին ու միապետին բաժանող տարածության  
մասին, այլև իր վրա համարձակություն էր վերցնում խորհուրդ-  
ներ տալ թագավորին, այսինքն, եթե իրերը կոչենք իրենց իսկա-  
կան անուններով՝ սովորեցնել թագավորին:

Խրատների ձևով տրված խորհուրդների բուն բովանդակու-  
թյունն էլ արքունիքին հրեշավոր պետք է թվար: Խորհրդատուն  
կամենում էր միապետությանը զրկել նրա բոլոր մենաշնորհնե-  
րից, նրա բոլոր իրավունքներից: Այդ հանդուգն դեպուտատը

չկտիաբար միապետին առաջարկում էր կամովին համաձայնվել ազգի կամքը ներկայացնող հզոր օրենսդրական ժողովի որոշումները կատարողի խղճուկ դերին:

1789 թվականի հոկտեմբերին կրած երկրորդ պարտությունից հետո անգամ թագավորական կուսակցությունը ամենևին ամեն ինչ կորած չէր համարում: Նրա պահեստում կային դեռևս մեծ առավելություններ. հարկավոր ժամանակ դրանք խաղի մեջ կմտցվեին: Միրաբոյի ուղերձը գալույթով մերժվեց և, բնականաբար, մնաց անպատասխան: Խիստ հավանական է, որ Միրաբոյի՝ արքունիքի գալույթը շարժած հանդուգն ուղերձի տպավորության տակ Մարիա-Անտուանետը արտասանել է հետևյալ հայտնի ֆրազը. «Սա հուսով եմ, որ մենք երբեք այնչափ դժբախտ չենք լինի, որպեսզի կանգնենք Միրաբոյի խորհուրդներին ապավինելու ցավալի անհրաժեշտություն առաջ»:

Բայց Միրաբոյի հոկտեմբերյան ուղերձը պահանջում է այն քննարկել և մեկ այլ կողմից: Ինչպե՞ս հարաբերակցել այն սահմանադրականների, այսինքն խոշոր բուրժուազիայի և լիբերալ ազնվականության ծրագրի հետ: Դրանք գրեթե լիովին համընկնում են: Այն, ինչ Միրաբոն խորհուրդ էր տալիս թագավորին, միգուցե ինչ-որ բանում առաջ էր անցնում կաֆայետ-Բայի ցանկություններից: Նրանցից ոչ մեկը, այդ պարուններից ոչ ոք, որոնք ներկայացնում էին Զրանսիայի ամենահարուստ սեփականատերերին, չէր պահանջի, օրինակ, ֆեոդալիզմի վերացում: Ինչի՞ համար են այդ ծայրահեղությունները: Բայց մնացած հարցերում Միրաբոյի ծրագիրը նրանց համար լիովին ընդունելի էր:

Շենց այդ պատճառով և՛ կաֆայետը, և՛ Մունիեն, և՛ Սիլեսը, և՛ Լե Շապելիեն՝ բոլոր այդ քաղաքական գործամուրհիվը, որոնցից յուրաքանչյուրն ինքն իրեն մեկուսի գալիք շատ տարիների համար կանխատեսված, վերջնախաղում հաղթանակ ապահովող բարդ խաղի տարբերակների մոտավոր հաշիվ էր անում, անհրաժեշտ համարեցին 1789—1790 թվականներին նսեմանալ Միրաբոյի առաջ, նրան մղել առաջին պլան. նրանց ձեռնառու էր իրենց խմբավորման լիզեր ունենալ մի մարդու, որը ժողովրդի աչքում հեղափոխության մարմնացումն էր: Միրաբոյի անունը կարող էր քողարկել իշխանությունն իր ձեռքում պահել ձրգտող խոշոր բուրժուազիայի եսասիրական նեղ, շահագիտական հաշիվները:

Միրաբոն այնքան էլ պարզամիտը չէր, որպեսզի չկուսներ իր բարեկամ հակառակորդների խթանիչ դրդապատճառները: Նա չնչին վստահություն անգամ չունեց նրանց նկատմամբ, և նրանք անձնական համակրանք չէին ներշնչում նրան: Բայց կարևոր քաղաքական հարցերում նրանց դիրքորոշումները համընկնում էին կամ մոտ էին: Իսկ ինչո՞ւ հանապարհի ինչ-որ մասը միասին չվնայ:

Այն բանից հետո, երբ համընդհանուր եղբայրության և եղբայրացման, առաջին հաղթանակներով արբեցման վարդազույն հույսերի ժամանակը բավական արագ, 1789 թվականի աշնանամուտին ավարտվեց, և դասակարգային շահերի հակասությունները ապաշերտավորեցին ու բաժանեցին հեղափոխության նախկին միասնական լագերը, հստակորեն ուրվագծվեցին հեղափոխության հետագա զարգացման ու խորացման և նրա արգելակման երկու հիմնական հակամարտող միտումները: Առաջինի կողմնակիցներին սկզբնապես անվանում էին գեմոկրատներ, երկրորդին՝ լիբերալներ կամ սահմանադրականներ. ավելի ուշ նրանց սկսեցին անվանել այլ տերմիններով: Քաղաքական սահմանազատման այդ գլխավոր գիծը շատ շանցած ամրապնդվեց և ստանձին խմբավորումների ստեղծումով: Սկզբնապես արսուլյուտիզմի բոլոր հակառակորդները մտնում էին բոլորի համար ընդհանուր քաղաքական մի ակումբի մեջ. վերսալում այն անվանում էին Բրետոնյան, Ժողովը Փարիզ տեղափոխվելուց հետո՝ Յակոբինյան (ըստ նրանց զբաղեցրած շինություն): Բայց 1789 թվականի վերջին կաֆայետը, Մունիեն, Բային և մյուս լիբերալները անհրաժեշտ համարեցին դուրս գալ Յակոբինյան ակումբից և ստեղծել իրենց առանձին կազմակերպությունը՝ «1789 թվականի ընկերությունը». հետագայում այն սկսեցին անվանել Ֆեյանների ակումբ: Նոր ակումբն ավելի նեղ ու ինքնամիտ էր, քան Յակոբինյանի ակումբը, այն ինքնամիտ էր միանգամայն գիտավորյալ կերպով՝ խիստ բարձր անդամավճարները խոշորագուտում էին գեմոկրատական տարրերի մուտքը ակումբ:

Միրաբոն նոր ակումբի ստեղծման նախաձեռնողների հրավերով մտավ նրա կազմի մեջ և անմիջապես դարձավ «1789 թվականի ընկերության» ամենահեղինակավոր լիզերներից մեկը: Այդ ընկերության մեջ Միրաբոյի մտնելու բուն փաստը պահանջում է պատշաճ գնահատական: Այն բացահայտում էր և՛

նրա քաղաքական գծի ընդհանուր ուղղությունը հեղափոխութեան մեջ, և՛ հետևաբար, նրա էվոլյուցիան հետագայում. Միբարոն կանգնում է հեղափոխութեան արգելակման ուղու վրա: Սա նշանակում էր, որ սկսվող սահմանազատման պայմաններում Միբարոն հեռանում էր գեպի աջ:

Բայց որպես քաղաքական դործիչ, որպես բուրժուական առաջնորդ, Միբարոն անհամեմատ ավելի նրբանկատ ու ձկուն էր, քան նրա բարեկամ հակառակորդները «1789 թվականի ընկերությունից»: Հեղափոխական պրոցեսի զարգացումը հանգեցրեց անունների արտակարգ արագ արժեզրկման: նեկերը, որ վիթխարի ժողովրդականություն էր վայելում 1789 թվականի գարնանը, աշնանն արդեն լրիվ արժեզրկվել էր. երեք ամսվա ընթացքում վատնելով ամբողջ քաղաքական վարկը, նա վերածվեց ոչնչի: Մոտավորապես նույնը կատարվեց և Լաֆայետի հետ, բայց ոչ այդքան ծայրահեղ ձևով:

Միբարոն 1789 թվականի քաղաքական լիդերներին մեջ թերևս միակն էր, որ կարողացավ խուսափել քաղաքական արժեզրկումից: Երան հաջողվեց ձեռքից բաց շփոզնել ժողովրդական ղանդվածների մեջ ունեցած իր հանրաճանաչությունը: Նա կարողացավ պահպանել ժողովրդի վստահությունը, և մեծ դերասանի այն նույն անսխալական բնագործ էրբեմն նրան ոգեշնչում էր դիմելու ամենավտանգավոր հանկարծաստեղծումների, որոնք անուպասելիորեն հաջող էին ստացվում: Այսպես, օրինակ, երբ ժողովը վերացրեց բոլոր դասային արտոնությունները, այդ թվում և ազնվականական տիրույթները և, նամաձայն նոր օրենքի, կոմս Միբարոն պետք է անվանվեր քաղաքացի Ռիքետտի, Միբարոն հրաժարվեց ենթարկվել այդ որոշմանը: «Եվրոպան գիտի միայն կոմս Միբարոյին», — մեծամտաբար հայտարարեց նա և շարունակում էր ստորագրել Միբարո անունով: Սա պետք է հաշվի առնելին:

Նա առաջվա նման պահպանում էր գրան-սենյորի և՛ արտաքին կերպարը, և՛ վարքագիծը՝ ճոխ կեղծամ, օսլայած ժաբո, հպարտ, բարձր պահած գլուխ:

Ոչ միայն այս արտաքին շարժումներում, քաղաքականության մեջ Միբարոն անհամեմատ ավելի նրբանկատ էր իր պաշտոնակիցներից: Մասնակցելով «1789 թվականի ընկերության» մի քանի նիստերի, շուտով նա եկավ այն եզրակացության, որ իր կաստայական ինքնամիտության պատճառով այդ ընկերու-

թյունն ապագա չունի. այն մյուսներից ավելի վաղ կոնֆլիկտի մեջ կմտնի ժողովրդի հետ: Միբարոն նորից վերադարձավ Յակոբինյան ակումբ և հաճույքով ու հաճախակի ելույթ էր ունենում նրա նիստերում. նա արագ հասկացավ, որ սա մի կազմակերպություն է, որին վիճակված է խոշոր դեր խաղալ: 1790 թվականին նա կանոնադրության համաձայն որոշակի ժամանակով ընտրվեց Յակոբինյան ակումբի նախագահ: Նրան ժամանակավորապես ընտրեցին նաև Մահմանադիր ժողովի նախագահ: Միբարոն դորժուն մասնակցություն էր ունենում ժողովի հանձնաժողովներում, առանձնապես մեծ էր նրա դերը դիվանագիտական կոմիտեում. Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ամենակարևոր հարցերն արդեն շեփն լուծվում առանց նրա կարծիքը հաշվի առնելու: Մի խոսքով, 1789—1790 թվականներին Միբարոն դարձավ ոչ միայն ամբողջ աշխարհում Ֆրանսիական հեղափոխությունը մարմնավորող անուն. այլև նոր Ֆրանսիայի առավել ազդեցիկ քաղաքական լիդերը:

Միբարոն չէր լինի այնպիսին, ինչպիսին կա. Լեթե վեհաշուք կեցվածքի և ինքնավստահ: արիստոկրատի ազայական շարժումների հետևում, որը բացի այդ ձևոված էր մեծ արիքունի եվրոպական փառքի ծանրության տակ, թաքնված լինեք տատանվող, շարժուն, միշտ ինչ-որ բան փնտրող, ամենամասշտաբի վտանգին ընդառաջ գնալու պատրաստ արկածախնդրի երերուն սավերը:

Վերջին երկու-երեք տարվա ընթացքում նա վերապրել էր ամենամահավանական կերպարանափոխություններ: Հալածվող, մշտապես հետապնդվող թափառաշրջիկից և վեհաշուքի աշտարակի բանտարկյալից նա, ինչպես կախարդական փայտիկի շարժումով, դարձավ երկրի ամենանշանավոր և ամենահեղինակավոր քաղաքական առաջնորդը, որն իր վրա էր գամել ամբողջ աշխարհի ուշադրությունը:

Էմիլին՝ նրա նախկին կինը, հրապուրել, կեղծ. խելացի էմիլին, սրտնեղությունից եղունգներն էր կրճատում: Նա անհիժում էր իրեն և հատկապես իր հարազատներին՝ այդ չեմար, ոչինչ չհասկացող, ազահ Մարինիաններին, որոնք իրեն այնքան խայտառակ դատավարության դրդեցին: Հիմա ինքը. կողար Միբարոյի փառքի ճաճանչներում: Չէ որ ինքը առաջինը գնահատեց նրան: Ինչպե՞ս ինքը աչքաթող արեց նրան և իրեն սպասող մեծ ապագան: Նա աշխատում էր Օնորեին հասկացնել, որ ինքը

պատրաստ է խոստովանել իր մեղքերը, իրեն մեղավոր ճանաչել՝ բոլորը, ինչ կամենաք, միայն թե վերագոռնան անցյալին, որն այժմ նրան այդքան երջանիկ էր թվում:

Բայց Միրաբոն չէր ուզում հիշել նրա մասին՝ էջերը վաղուց ևն շրջված և անցյալին վերագարձ չկա: Ու եթե նրան հարկավոր լիներ փնտրել որևէ մեկին, իհարկե դա կլիներ Ժյուլի նեյրան: Նա երախտագիտությունը ու քնքշությունը էր հիշում նրա մասին, և նրան դեռ երկար ժամանակ թվում էր, որ այսօր-վաղը ինքը կդռնի նրան, և ամեն ինչ կընթանա վաղեմի ձևով: Բայց օրավուր ավելի ու ավելի քիչ ժամանակ էր մնում, առաջվա նման նա գիշերային անկանոն շվայտ կյանք էր վարում, այժմ նա հիշողության մեջ չէր պահում իր ճանապարհին հանդիպած կանանց անուններն ու դեմքերը: Նա այրում էր այն տարօրինակ պատրանքներով, որ այս ամենը «ժամանակավոր» է, իսկ գլխավորը՝ լավը՝ կնոջ սիրող ձեռքը, խաղաղ, հանգստավետ տունը, փոքրիկ ուղղակի, գիշերային անվրդով քունը, այս ամենը առջևում է և ինչ-որ մոտիկ տեղում: Այս պատրանքներին այդպես էլ վիճակված չէր իրականություն դառնալ:

Հասարակությունում նրա տեղի, նրա ճակատագրի մեջ կարճ ժամանակում կատարված ապշեցուցիչ փոփոխությունները նա քնդունեց հավուր պատշաճի: Արդյոք կարո՞ղ էր այլ կերպ լինել:

Բայց դա էլ քիչ էր: Այն ամենը, ինչ ձեռք է բերված, ինքն է նվաճել, նրան բոլոր շրջապատողները՝ քաղաքագետները, գեպուտատները նրա հակառակորդներն էին, նրա գաղտնի թշնամիները: Եթե նրանք այժմ բարեկամարար ժպտում են նրան և բծնողաբար նայում աչքերին, ապա լուկ այն պատճառով, որ նա ուժեղ է նրանցից: Այն, ինչ կարող էր նա, բոլոր նրանք՝ Սահմանադիր ժողովի նրա բարեկամ-թշնամիները չէին կարող: Եվ ս'ահուր էր միայն առեղծվածն այն դիրքի, որ գրավում էր նա՝ Օնորե Միրաբոն, Գլխավոր շտատներում, Սահմանադիր ժողովում, երկրում:

Բայց դա էլ չէր բավարարում: Երբ թագավորին հղված առաջին դիմումի մեջ նա քնդգծված համեստությամբ իրեն համար նախատեսում էր անպարտճել մինիստրի պաշտոնը, դա ոչ ավելին էր, քան տակտիկական քայլ, կանխամտածված երեսպաշտություն: Ոչ թե ինչ-որ մի երկրորդական մինիստրի դեր էր

հարկավոր նրան, այլ թագավորությունում առաջին դեմքի, առաջին մինիստրի դերը:

Իհարկե, դա կլինի մինիստր-լիբերալ, բունակալության թըշնամի. նա կկառավարի իր քաղաքական հայացքներին համապատասխան, նա այժմ հաճույքով վկայակոչում էր ի պաշտպանություն ազատության իր երկերի 30 հատորը, բայց, լինելով գորեղ մինիստր, նա երազում էր կառավարության շատ ավելի դորավոր ղեկավարի դերի մասին, քան Ռիշելիեն, քանզի նա կհենվեր ոչ թե միայն թագավորի, այլ ազգի աջակցության վրա:

Միրաբոն հավատացած էր, որ լյուցովիկոս XVI-ը և թագուհին, որի ազդեցությունը նա լիակատար շահով սեռել էր գնահատում, հանգամանքների բերումով պետք է զիջեն՝ դիմեն իրեն, նրանք ուրիշ էլք չեն ունենա:

1789 թվականի աշնանից նա բարեկամություն հաստատեց Սոստոս դ'Արենբրեգի, կոմս դը Լա Մարկի հետ: Մարիա-Անտուանետի լիակատար վստահությունից օգտվող և անկեղծորեն նրան նվիրված գերմանացի արխատակրատը Միրաբոնի ուշադրությունը գրավեց ամենից առաջ նրանով, որ աներկբայելի ազդեցություն ուներ արքունիքում: Միրաբոն տիրապետում էր կախարդելու ընդունակությանը, նրա համար դժվար չէր բարեկամական հարաբերություններ հաստատել կա Մարկի հետ:

Սակայն շուտով Միրաբոն համոզվեց, որ կա Մարկը, այսինքն նրա հետևում կանգնած անտեսանելի գորեղ ուժերը, իր նկատմամբ հետաքրքրություն է գրսևորում: Նրա դադտնի, մենակ ինքն իրեն հետ քաղաքական հաշիվները ճիշտ դուրս եկան: Արքունիքը չէր կարող հաշիվ շտանել Միրաբոնի ուժը: Ըստ երեվույթին, 1789 թվականի աշնանը Միրաբոն կարծում էր, որ մտանում է իրեն կողմից վարպետորեն մտածված խաղը շահելու ժամանակը:

Բայց վճռական պահին պարզվեց, որ նա թերազնահատել է իր հակառակորդներին: Մի խումբ փառասեր երիտասարդ գեպուտատներ՝ Անտուան Բոննավը, Ադրիեն Դյուպորը և Ալեքսանդր Լամետը, այսպես կոչված «եռապետությունը», ձրգտում էր իր կողմը գրավել Միրաբոնի ազդեցությունը. 1789 թվականի նոյեմբերի 7-ին նրանք ժողովին ներկայացրին մի որոշման նախագիծ, որով Սահմանադիր ժողովի ցանկացած ղեկուսատի արգելվում էր գրավել մինիստրի պաշտոն:

«Յոսպետութեան» մտցրած զեկրեւի նախագիծը, թեև հասկանալի է, Միրաբոյի անունն այնտեղ չէր հիշատակվում, ամենից առաջ ուղղված էր նրա դեմ: Առաջարկութիւնը պաշտպանեցին զեմոկրատներ Ռոբեսպիերն ու Պետիոնը և այն ընդունվեց Ժողովի կողմից:

Թվում էր, թե արդեն շահած խաղն անսպասելիորեն, հենց եզրագծում, տանուլ տրվեց:

Միրաբոն կատաղութեան մեջ էր: Բայց նա իրեն ոչ մի հարցում չէր մեղադրում, թերևս միայն այն բանում, որ ինքը հակախաղի ժամանակ լավ չի ճանաչել իր հակառակորդներին: Բայց ի՞նչ կարելի էր անել, երբ այդքան առաքինի դրդապատճաններով տոգորված առաջարկութիւն են մտցնում: Նա լավ գիտեր այդ ցուցադրական առաքինութեան գինը, բայց ծուղակի մեջ ընկնել չէր ուզում:

Իսկ ի՞նչ անել: Դեպի մինիստրութեան ղեկավարի, նույնիսկ պարզապես մինիստրի բնագիւթո՞ւ տանող ուղին այսուհետ նրա համար ընդմիշտ փակ էր: Բայց նա ըստ արժանվույն գնահատեց այն, որ կոմս դը Լա Մարկը նոյեմբերի 7-ի զեկրեւից հետո էլ պահպանում էր իր նկատմամբ հետաքրքրութիւնը և բարեկամական տոնը բանակցութիւնների ժամանակ: Մրանից հետոնում էր, որ թագավորական արքունիքում շարունակում են նշանակութիւն տալ Պրովանսի ղեկուսատեին: Ուրեմն...

Ավանտյուրիզմի նրա բնածին ոգին և արագ միտքը նրան թելադրեցին նոր հնարավոր տարրերակ՝ եթե չի կարելի լինել պաշտոնական վարչապետ, ապա ինչո՞ւ, իսկապես, նույն դերը չի կարելի կատարել թաքուն, խիստ գաղտնի: Ինչո՞ւ պետք է հրաժարվել կրկնակի նուրբ խաղից՝ պահպանել Ժողովի ազդեցիկ քաղաքական լիզերի դիրքը և միաժամանակ լինել (հասկանալի է, խստագույնս գաղտնաբար) թագավորի գաղտնի խորհրդականը, ուղղութիւն տալով նրա ամբողջ գործունեութեանը: Իս, իհարկե, ծայրաստիճան վտանգավոր խաղ էր, բայց դանակի սայրի վրա այդ խաղի բուն իսկ վտանգավորութիւնը, մոլի խաղացողի նրա ճաշակին ու խառնվածքին, միգուցե, հենց այդ պատճառով հատկապես գայթակղել էր թվում:

Լա Մարկի հետ բանակցութիւնները լիովին անկեղծ բնույթատացան: Գերմանացի կոմսը այլևս անհրաժեշտ չհամարեց թաքցնել, որ նա արքունիքի անմիջական ներկայացուցիչն է կոմսը դորժում էր նրա հանձնարարութեամբ: Օրավոր միապե-

տութեան դրութիւնն ավելի ու ավելի էր դժգոհանում, և Մարիա-Անտուանետը, շնայած նրա կանխակալ կարծիքին, ստիպված եղավ զիմելու Միրաբոյի ծառայութեանը:

Ըստ երևույթին, 1790 թվականի ապրիլին ձեռք բերվեց երկկողմանի լիակատար համաձայնութիւն: Կոմս Լա Մարկի միջոցով (ուրիշ ոչ մեկը մոտ չէր կարող թողնվել այդ խիստ գաղտնի կապերին) Միրաբոն կամ ուղերձի, կամ էլ այլ ձևով խորհուրդներ ու հանձնարարականներ էր տալիս թագավորին: Արքունիքն իր վրա էր վերցնում որոշակի ֆինանսական պարտավորութիւններ: Թագուհին իր անձնական միջոցներից 208 հազար լիվր հանձնեց Միրաբոյի պարտքերը մարելու համար. թագավորը նրան ամեն ամիս վճարում էր 6300 ֆրանկ և նոտարին հանձնեց 1 միլիոն լիվր՝ բաժանված շորս մասի, յուրաքանչյուրը 250 հազար, որոնք Միրաբոյին էին վճարվում ի նշան շնորհակալութեան Սահմանադիր ժողովի գործունեութեան շրջանում նրա մատուցած ծառայութեանների:

Այսպիսին էր թագավորական պալատի հետ Միրաբոյի գաղտնի համաձայնութեան իրական բովանդակութիւնը, որը հետագայում պատմութեան մեջ մտավ կոմս Միրաբոյի մեծ դավաճանութիւն անունով: Բայց այս անվանումը ճանաչում ստացավ արդեն այն ժամանակ, երբ Միրաբոյի աճուրդը հանգրում էր գերեզմանում:

Միրաբոն միապետութեան հետ այդ գաղտնի գործարքին գնաց թեթև սրտով, չենթարկվելով և ոչ մի բարոյական տարակուսանքի:

Առանց հաշվելու փողերը քամուն տալու՝ իրեն հատուկ արխտոկրատական, նույնիսկ ֆեոդալական սովորութեամբ, նա, դառնալով խոշոր գումարների դրամատեր, ոչ ոքից չթարցնելով մտխում էր դրանք: Միրաբոն իր Մալթա հյուրանոցից, ուր նա համեստորեն ապրում էր մինչ այդ, տեղափոխվեց այն ժամանակ նորածն (ինչպես, ասենք, և մեր ժամանակ) թաղամաս մայրաքաղաքի բուն կենտրոնում՝ Շոսսե դ'Անտեն, որտեղ տարեկան 2400 լիվրով վարձեց գեղեցիկ առանձնատան վերևի հարկը: Դյումոնը իր հիշողութիւններում պատմում է, որ, առաջին անգամ այցելելով Միրաբոյի նոր շքասենյակները, նա ցընցված էր տրիբունի տան օջախի շքեղութիւնից<sup>53</sup>:

Այդ շքեղութիւնը շափից դուրս էր, աչքի էր ընկնում, այն չէր

կարող աննկատ մնալ: Երեկոյան ընդունելութուններին և սպաս-  
քավորման ու խոհանոցի նորահամութեան տեսակետից նրբա-  
ճաշակ ընթրիքի ժամանակ հավաքվում էր ընտրյալներէ, ամ-  
բողջ երկրին հայտնի մարդկանց հասարակութուն՝ քաղաքա-  
գետներ, գիտնականներ, գիվանագետներ: Նրանց բոլորին միա-  
վորում էր երիտասարդ, գեղեցիկ, նրբագեղ ժյուլի Կարրոն՝  
առանձնատան տիրուհին, որը հարկ չէր համարում թաքցնել,  
որ նրան իր նշանավոր կենսագրի հետ կապում են շատ ավելի  
մտերմական ու սերտ, քան գործնական հարաբերութիւններ:

Միրաբոյի անսահման «գոնծուանական ցուցակում» նրա  
այս վերջին մտերմական կապը, հավանաբար, ամենաերջա-  
նիկներից մեկն է եղել: Ասենք, դա շխանգարեց Միրաբոյի վեր-  
ջին ընկերակցութուն նշանավոր տրիբունի մահվանից կարճ ժա-  
մանակ անց մեկ անգամ ևս մտնել պատմութեան մեջ, բայց ար-  
դեն որպէս ֆրանսիական բեմի մեծագույն ողբերգակ Ֆրանսուա-  
ժոզեֆ Տայմայի սիրելի կինը:

Բայց վերադառնանք 1790 թվական, Շոսսե դ'Անտենի  
առանձնատունը:

Մեծանուն հյուրերը, որ այնպէս մտերմաբար գինու գավաթ-  
ներ էին բարձրացնում հանուն փառաբանված տրիբունի՝ Ֆրան-  
սիայի հպարտութեան հաջողութիւնների ու առողջութեան, կես-  
գիշերից հետո թողնելով հարմարավետ տունը, կիսաձայն,  
մտորումների տոնով ասում էին միմյանց.

«Այնուամենայնիվ, որտեղի՞ց նրան այս հարստութիւնը»  
Հարստութիւնը որպէս այդպիսին քիչ էր զբաղեցնում Մի-  
րաբոյին: Հոր մահից հետո, որպէս ավագ որդի, նա ժառանգել  
էր դղյակներ, անշարժ գույք, հսկայական հողային տիրույթներ  
Պրովանսում: Նա իրոք որ դարձել էր խոշոր, հարուստ հողա-  
տեր: Բայց այս բոլորով հանդերձ նա կարողացավ կարճ ժա-  
մանակում վերցնել 200 հազար լիվրի նոր պարտք, որը մարեց  
թագուհին:

Նա այդ վտանգավոր խաղին գնաց ոչ ի սեր փողի, դրանում  
կարելի է հավատալ նրան. նա երբեք չկարողացավ գնահատել  
այն՝ ոչ նախկինում, ոչ էլ իր կյանքի մայրամուտին: Նա ինքնին  
հասկանալի էր համարում այն, որ արքունիքը պարտավոր է  
իրեն վճարել, և վճարել շատ, ինչպէս միեւնոսին. ինչո՞ւ նա  
պետք է ձրի աշխատեր թագավորի համար:

Սակայն այդ գաղտնի գործարքը արքունիքի հետ, որն այն-  
քան տաք վեճերի տեղիք տվեց արդեն Միրաբոյի մահվանից  
հետո, շարունակվելով գրեթե երկու հարյուր տարի, նրա քա-  
ղաքական կենսագրութեան ամենախոցելի տեղն էր:

Կոմս Միրաբոյի երկրպագուներն ու կողմնակիցները ի  
պաշտպանութիւն նրա առաջ քաշեցին այն ժամանակ աղմուկ  
շունամ թեզը. «Նա չի ծախվել», «Նրան վճարում էին»: Ըստ էու-  
թեան դա նրա սեփական փաստարկների կրկնութիւնն էր, բայց  
այդ թեզի մեջ որոշ երկիմաստութիւն կար: Նրան վճարում էին,  
դա անվիճելի էր, բայց ինչի՞ համար: Այն բանի, ինչում նա եր-  
բեք չէր կարող հրապարակորեն խոստովանել:

Մտաւոր, որ իր տրամագրութեան տակ շունամ ստույգ աղմ-  
կալներ, Միրաբոյի գործողութիւնների մեջ, ճառերում բնազդո-  
րին խաբեութիւն, դավաճանութիւն էր զգում: Նա իր թերթի  
էջերում բազմիցս մերկացնում էր Միրաբոյի դավաճանութիւնն  
ու մատնութիւնը: Միրաբոն մտերիմ մարդկանց հետ (որոնց նա  
վստահում էր) ունեցած իր գրույցների ժամանակ կտրականա-  
պէս ժխտում էր դավաճանութեան մեղադրանքը: Ինչի՞ն էր դա-  
վաճանել: Իր հայացքների՞ն: Համոզմունքների՞ն: Բայց իր հա-  
մոզմունքների մեջ ոչինչ վերանայելու հարկ չի եղել: Չի կա-  
րելի սրա հետ շամաձայնվել: Նա միշտ, և՛ մինչև արքունիքի  
հետ համաձայնութեան գալը, և՛ հետո, համոզված հանդես էր  
գոյլիս ի պաշտպանութիւն միապետութեան՝ սահմանադրական,  
լիբերալ, բայց միապետութեան: Նա անհրաժեշտ էր համարում  
միապետութեան պահպանումը որպէս հանրապետութեան կազ-  
մավորման բնական արգելք:

Երբ 1790 թվականի հուլիսին ամբարտաւան, մեծամիտ  
Մարիա-Անտուանետը այնուամենայնիվ «այնքան զժբախտ  
գտնվեց», որ համաձայնվեց անձնական հանդիպում ունենալ  
Միրաբոյի հետ, զրույցի վերջում, որն ամբողջովին մնաց  
առարկայազուրկ, համբուրելով թագուհու ձեռքը, նա իրեն հա-  
տուկ ինքնապատահութեամբ ասաց. «Նա փրկում եմ միապետու-  
թիւնը»:

Նա հերավի ամեն հնարավոր բան անում էր, որպէսզի, իրեն  
չվարկաբեկելով ժողովրդի աչքում, ժողովի աչքում (այդ զեպ-  
րում նա արքունիքի համար կկորցնէր ամբողջ արժեքը), պաշտ-  
պանել միապետութեան շահերը: Երբեմն նա դիմում էր ծայրա-

հեղ փտանգավոր քայլերի: Այսպես, 1791 թվականի փետրվարին, երբ թագավորի զույգ բարեկամուհիները՝ Լյուդովիկոս XV-ի դուստրերը, թագավորի եղբայրներից անմիջապես հետո տարագրվեցին, փորձեցին փախչել արտասահման, բայց հայրենասերների կողմից բռնվեցին սահմանամերձ Արնեդյուկ փոքրիկ գյուղում, նա շվախեցավ հանդես գալ և՛ Ազգային ժողովում, և՛ Յակոբինյան ակումբում ի պաշտպանություն նրանց և հասավ նրան, որ երկու պառավներին՝ թագավորական տան անդամներին թույլ տվեցին մեկնել Քուրին:

Նա շարունակում էր քայլել գլուխը հպարտորեն վեր պահած, շատ ավելի ինքնավստահ, քան երբևիցե, լի այն գիտակցությամբ, որ ինքն այժմ ամենակարևոր, ամենապատասխանատու զեբն է կատարում թագավորության ճակատագրի, հեղափոխության ճակատագրի մեջ:

Բայց դրանք զարձյալ պատրանքներ էին, այս անգամ էլ ավելի փտանգավոր ու կործանարար...

Ինչպիսի փաստարկումներով էլ նա արդարացներ և անգամ փառարաններ իր վարքագիծը, իր կողմից թագավորի զաղանի խորհրդականի առաքելության կամավոր կատարումը, որն այդպես թանկ էր վարձատրվում, իրենից ինչ-որ բարոյագուրկ, ամոթալի բան էր ներկայացնում այն բաղաբական գործչի համար, որին ժողովուրդը համարում էր հեղափոխության առաջնորդ: Նա վարում էր երկդիմի խաղ, նա խարում էր իր վստահելիներին, Ազգային ժողովի, Յակոբինյան ակումբի իր ընկերներին: Նա անկեղծ չէր, արդարամիտ չէր նրանց հետ:

Միրաբոյին կրնկակոխ հետևում էր նրանից անբաժան հեղափոխության մեծ տրիբունի փառքը: 1791 թվականի հունվարի վերջին, փետրվարին նա միահամուռ, մեծ խանդավառությամբ, կանոնադրության համապատասխան տասնհինգ օրով ընտրվեց Ազգային ժողովի նախագահ: Եվ Միրաբոն նախագահի պարտականությունները կատարում էր վստահ, հմտորեն, պահպանելով շարժումների ու կեցվածքի այն վսեմությունը, որն այնպես դուր էր գալիս և՛ դեպուտատներին, և՛ հասարակ ժողովըրդին:

Ու այնուամենայնիվ Մարատի նետած մեղադրանքը, նրա նկատմամբ Ռոբեսպիերի անընդհատ աճող թշնամանքը, նրա անվան հետ կապված ինչ-որ անորոշ լուրերը թափանցում էին արտասահման: Ինչպես հայտնի դարձավ շատ ավելի ուշ, Եկա-

տերինա II-ը, սրբ նախկինում գտնում էր, որ «Միրաբոն», ինչպես ինքն էր արտահայտվում, «բազում կախաղանների է արժանի», իր գործնական, ցինիկ խելքով եկավ այն եզրակացության, որ այդ «Միրաբոն» կարող է իրեն օգտակար լինել, և Փարիզում իր գեսպան կոմս Միմոլինին զաղտնի հանձնարարական ավեց թաքուն բանակցություններ վարել Միրաբոյի հետ և խոշոր վարձատրությամբ նրան Ռուսաստանի կողմը գրավել: Նախագիծը շիրականացավ:

Միրաբոն չէր նկատում կամ չէր ուզում նկատել իր շուրջը թանձրացող այդ ամպերը:

1790 թվականի երկրորդ կեսից Միրաբոյի առողջությունը հունկարձ խիստ վատացավ: Սկզբում առաջացավ աչքերի ինչ-որ հիվանդություն՝ նա սկսեց վատ տեսնել և աչքերը ցավում էին: Հետո սուր, երկարատև ցավեր սկսվեցին որովայնում: Նրա ընկեր Կաբանիսը բուժում էր նրան, բայց, ըստ երևույթին, սխալ կերպով: Ավելի ուշ սկսեցին պնդել, որ նա արչան հիվանդություն ուներ, և, ինչպես միշտ այն ժամանակ, առատորեն արյուն թողեցին:

1791 թվականի սկզբին վիճակը նկատելիորեն թեթևացավ: Նա առաջ էլ մեծ նշանակություն չէր տալիս իր տկարությանը և հավատում էր իր հզոր օրգանիզմին: Նա քառասուն տարեկան էր և ապրում էր այն պատկերացումով, որ առջևում դեռ մեծ ու երկարատև ճանապարհ կա, որ այն ամենը, ինչ եղել է նախկինում՝ լոկ սկիզբն է այն աստիճանի, որը նրան հանում է վեր, դեպի զաղաթները:

1791 թվականի մարտին վրա հասավ նոր խիստ վատթարացումը: Նա այլևս ի վիճակի չէր դուրս գալ տանից: Կաբանիսը և մյուս բժիշկները նկատեցին սուր արյունալույծ (դիզենտերիա) և Փորձեցին նրան բուժել, բայց օրավուր նրա վիճակը գնալով ավելի ու ավելի էր վատանում, ցավերն անընդհատ սաստկանում էին: Երբ արդեն ուշ էր, բժիշկները պարզեցին, որ նրան սուսնջում էր ոչ ժամանակին ճանաչված որովայնաթաղանթի բորբոքումը, բայց այն բարձիթողի էր արված և այլևս ենթակա չէր ոչ վիրահատական, ոչ էլ բուժման ուրիշ տեսակների:

Ըստ երևույթին, մարտի վերջին օրերին Միրաբոն հասկացով, որ վախճանը մոտ է: Կյանքն ավելի կարճ ստացվեց, քան նա սպասում էր: Տարօրինակ կերպով, նա այդ ընդունեց հան-

գիստ, գրեթե անտարբեր, կարծես խոսքը ոչ թե իր, այլ ինչ-որ մեկ ուրիշ մարդու մասին լիներ: Նա միայն ափսոսում էր, որ իր մտադրություններից շատ բան չհասցրեց կատարել: Ի՞նչ արած, դա էլ, վերջիվերջո, ամենակարևորը չէ: Կգան ուրիշները և միգուցե սվեյի լավ կաննն այն, ինչը հույս ուներ, որ ինքը կանի:

Նա կարգադրեց, որպեսզի իրեն տանեն ամենալուսավոր սենյակը և լայնակի բացեն պատուհանները: Գարուն էր, և լայն բացված լուսամուտներից սենյակ էր թափանցում բացվող մատղաշ տերևների նրբին հոտը: Երբ ցավը կարճ ժամանակով (նրան անընդհատ հաշիշ էին տալիս) մեղմանում էր, նա ազահորեն ներծծում էր (վերջին անգամ) իրեն հասնող գարնան շունչը:

Մարտի 30-ից սկսած, երբ հայտնի դարձավ, որ Միրաբոն մահանում է, ժողովրդի վիթխարի բազմությունը լռելյայն, ժամերով կանգնում էր նրա տան լուսամուտների մոտ: Շոսսե դ'Անտեն փողոցը ծածկել էին ավազի հաստ շերտով, որպեսզի անցուղարձող սալակները չխանգարեն նրա հանգիստը: Առաջին հարկի սենյակներում կանգնած էր դեպուտատների, Յակոբինյան ակումբի անդամների, լրագրողների, մայրաքաղաքի բոլոր նշանավոր անձանց հերթը, որոնք շտապում էին տրիբունի քարտուղարի մոտ ստորագրել այցելուների գրքում:

Ապրիլի 1-ի օրն ու երեկոն Միրաբոն անցկացրեց անընդհատ աճող տանջալից ցավերով, ոչ մի դեղ չէր կարող վերացնել դրանք:

Միրաբոն տառապում էր ապրիլի 2-ի ամբողջ գիշերը և միայն առավոտյան զգաց որոշ թեթևություն: Աներևակալելի ջանքերով ձեռքերի վրա հենված վեր ձգվեց, հարմար թիկն տվեց բարձերի վրա և դժվարին լարվածությունից խորը շունչ քաշեց: Նրա վերջին բառերն էին. «Քնել, քնել, քնել...»:

Նա փակեց աչքերը և գրեթե իսկույն քնեց, քնեց, որպեսզի երբեք այլևս չարթնանա:

Հիմա էլ Շոսսե դ'Անտեն փողոցի № 42 տան խորքում, պատի վրա պահպանվել է ժամանակից և անձրևներից խունացած մարմարյա ոչ մեծ հուշատախտակ, որի վրա գունաթափված տառերով գրված է. «Այստեղ 1791 թվականին մահացավ Միրաբոն»:

1791 թվականի ապրիլի 4-ին Ազգային ժողովը լրիվ կազմով, Յակոբինյան ակումբը, ժողովրդի անհամար բազմություններ, հաղարավոր հասարակ մարդիկ՝ բանվորներ, արհեստավորներ, փողոցային մանր առևտրականներ, քաղաքային շրջափրուքյան թաղամասերի բնակիչներ անվերջ հոսանքով գնում էին դիակառքի հետևից, որտեղ հանգչում էր աճյունը՝ այն ամենը, ինչ մնացել էր մի մարդուց, որը կենդանության օրոք Սնորե դը Միրաբոն էր կոչվում:

Հեղափոխության սկզբից Փարիզը դեռ չէր տեսել այդպիսի վիթխարի հրաժեշտ քաղաքական գործչի, որը բերնից բերան անցնող ասեկոսների պայմաններում արժանացավ «ժողովրդի հույր» պատվավոր մականվանը:

Ազգային ժողովի որոշմամբ Միրաբոնի աճյունը թաղվեց սուրբ Ժենեվիայի եկեղեցում, որը հայտարարվեց Պանթեոն՝ տաճար, որտեղ շնորհապարտ հայրենիքը հավիտյանս պահում է մեծ մարդկանց աճյունները: Միրաբոն առաջինն էր, որ արժանացավ այդ պատվին:

Կարճ ժամանակում մետաղից ձուլվեց ու մարմարից քանդակադրոշմվեց Միրաբոնի պատկերը, և նշանավոր տրիբունի կիսանդրիները բարձր պատվանդանի վրա դրվեցին Սահմանադիր ժողովի ամենաաչքի ընկնող տեղում, Յակոբինյան ակումբի նիստերի դահլիճում, բոլոր կարևոր հասարակական վայրերում:

Հետտորները ճառեր արտասանելով քաղաքացիական առարինության, հայրենասիրական պարտքի մասին, անհրաժեշտ էին համարում դիմել Միրաբոնի կիսանդրուն, որը լուռ, կույր աչքերով մասնակցում էր բոլոր հասարակական վիճաբանություններին:

«Ժողովրդի հայր» Սնորե-Գարբիել դը Միրաբոն Ֆրանսիական մեծ հեղափոխության այն առաջին հերոսն էր, որը մարդկության համար ճանապարհ բացեց դեպի նոր աշխարհ:

Բայց ահա անցավ մեկ տարի Միրաբոնի մահվանից, դրանից հետո անցավ երկրորդը, 1792 թվականի օգոստոսի 10-ի ժողովրդական հզոր ապստամբությունը տապալեց հազարամյա միապետությունը, թագավորը բանտարկվեց «Տամպլ» աշտարակում, 1792 թվականի սեպտեմբերին սկսեց նիստեր գումա-

քել մեծ Կոնվենտը. Ֆրանսիայում հաստատվեց Հանրապետութիւն:

1792 թվականի գեկտեմբերի 5-ին Կոնվենտի հատուկ հանձնաժողովը, որի վրա խնդիր էր դրված պրպտել և ուսումնասիրել Տյուրիքիի թագավորական պալատի գաղտնապահարաններում պահվող գաղտնի գործերը, Կոնվենտին զեկուցեց իր կողմից գտած խնամքով թարցված այն փաստաթղթերի մասին, որոնք անհերքելիորեն ապացուցում էին գաղտնի կապերը Միրաբոյի և արքունիքի միջև:

Վրդովմունքի, զայրույթի, կատաղության պոռթկումը ցնցեց ամբողջ Ֆրանսիան: Մրանից հետո էլ ո՞ւմ կարելի է հավատալ: Կոնվենտի դահլիճում, Յակոբինյան ակումբում, Փարիզի կոմունայում, Ֆրանսիայի մեծ ու փոքր քաղաքներում Միրաբոյի կիսանդրիները շարգուփշուր էին արվում. անունն այն մարդու, որին գեռ երեկ ժողովրդական մեծ տրիբուն, ժողովրդի հայր էին կոչում, անարգանքի ու խալտառակութիւն մատնվեց:

1793 թվականի աշնանը Լեոնար Բուրդոնի առաջարկութիւն հիման վրա, Կոնվենտի ընդունած որոշմամբ Պանթեոնից դուրս բերվեց հանրապետութիւն առաքինութիւնը վիրավորող Միրաբոյի անշունը, և նրա տեղը հանդիսավորութիւն տեղափոխվեց 1793 թվականի հուլիսի 13-ին Շառլոտա Կորդէի դաշույնի զօճը դարձած Ժան-Պոլ Մարատի՝ Ժողովրդի բարեկամի անշունը: Մեծ մարդկանց գերեզմանատանը Ժան-Պոլ Մարատի դին փոքր ինչ ավելի երկար մնաց Միրաբոյի անշունից: Թերմիդորի 9-ից հետո պատմութիւն անիվը ամեն ինչ շուռ տվեց այլ Պանթեոնում շմնաց ոչ Միրաբոյի, ոչ էլ Մարատի անշունը:

Այդ ժամանակվանից անցել է շուրջ երկու հարյուր տարի: Ինչ որ ժամանակ այդքան սրընթաց ծավալվող մեծ իրադարձութիւնների մասնակիցներին հուզող կրքերը վաղուց են աչրվել վերջացել, և նույնիսկ ժամանակն է սառեցրել դրանց մոխիրը: Ամեն ինչ անցյալի գիրկն է անցել:

Ապա ի՞նչ եղավ մեր պատմութիւն զլիավոր գործող անձր: Ի՞նչ եղավ Միրաբոն: «Մեծ Միրաբո»՝ ինչպես ասում էին նրա կենդանութիւն օրոք: «Արհամարհելի, ծախված Միրաբո»՝ ինչպես սկսեցին խոսել նրա մահից հետո:

Ուրեմն ո՞վ էր նա: Եվ որպես ի՞նչ մնաց նա պատմութիւն մեջ:

Միրաբոյի մահվանից գրեթե երեք քառորդ հարյուրամյակ անց, ամենախիստ և իմաստուն գնահատական տվողներից մեկը իր առավել հասուն, մտածված և կշռադատված աշխատութիւն մեջ (խոսքը Կարլ Մարքսի և նրա «Կապիտալի» առաջին հատորի մասին է) նշանավոր տրիբունին անվանել է «հեղափոխութիւն առյուծ»<sup>54</sup>:

Այս բարձր գնահատականը, թերևս, ամենաբարձրն է այն բոլոր գնահատականներից, որ տրվել են փառաբանված տրիբունին:

Արդյոք Մարքսը գիտե՞ր արքունիքի հետ Միրաբոյի գաղտնի դավադրութիւն մասին, նրա բախտախնդիր կյանքի անհավանական արկածների մասին, գրեթե բոլոր հնարավոր մեղանշումների համար Միրաբոյի դեմ հարուցված մեղադրանքների մասին: Իհարկե, ո՞վ չգիտեր այդ մասին: «Միրաբոյի մեծ դավաճանութիւն» հետմահու մերկացումից հետո ասեկոսենք թի թանձր նստվածքը է՛լ ավելի պատեց նրա անունը, և արդեն «նշտ չէր տարբերել իսկականը, անեղձը՝ զրպարտչականից, կեղծիքից, և կողմնակալութիւնից, շափազանցութիւններից գերծ, սթափ ու ճիշտ կարծիք կազմել այդ շատ բաններում ուրիշներին շնմանվող մարդու պատմական գերի մասին:

Մարքսը կարողացավ այդ անել: Ամբողջութիւնամբ վերցրած Միրաբոյի պատմական գերը, շնայած նրա որոշ արատներին ու թերութիւններին, բարձր են գնահատել Վիկտոր Հյուգոն, Ջորջ Բայրոնը, Յոհան Վոլֆգանգ Գյոթեն, ավելի ուշ մի շարք խոշոր պատմաբաններ՝ Ալֆոնս Օլարը, Ժան Ժորեսը և ուրիշներ:

Իհարկե, այստեղ պետք չեն ոչ գեկրետիվ բնորոշումներ, ոչ քնդհանրացնող խիստ բնութագրումներ, նույնիսկ անտեղի են նրա հասցեին արված աչք ծակող պիտակները: Ինչի՞ են դրանք պետք:

Հարկավոր է փորձել այդ խոշոր քաղաքական գործչին հասկանալ ենթատեքստում՝ նրա դարաշրջանի ամբողջ բարդութիւնամբ ու հակասականութիւնամբ հանդերձ այնպիսին, ինչպիսին նա եղել է:

1788—1791 թվականների Միրաբոն, այսինքն նրա կյանքի վերջին երեք տարիները, նրա կուրացուցիչ փառքի երեք տարիները, որոնք նրա անունը հավերժ դրոշմեցին պատմութիւն տարեկրութիւն մեջ, անխզելի է արիստոկրատի, «վայրենի աղայի» բախտախնդրական և աստանդական նրա անցյալ կյանքից՝ իր

կաստայի բոլոր սովորույթներով ու ճաշակով հանդերձ, բայց որն անհաշտելի, անխնա պատերազմի մեջ մտավ դրա դեմ:

Միրաբոն հեղափոխութիւն եկավ ոչ որպէս ժողովրդի ներկայացուցիչ, թեև նա խոսում էր ժողովրդի անունից և նրա համակրանքից օգտվում էր շատ ավելի, քան որևէ մեկ ուրիշը: Նա միշտ մնում էր dolce vita՝ «բաղջր կյանքի» մարդ, բուրժուազիայի և լիբերալ ազնվականութեան ընտրյալների վերնախավի մարդ:

Այս մասին չի կարելի մոռանալ ո՛չ միայն այն պատճառով, որ դա իր կնիքը դրեց նրա ողջ կերպարի վրա, և երբ սկսվեց տարանջատման պրոցեսը հեղափոխականների շարքերում, կանխորոշեց նրա շարժումը դեպի աջ, որն ամբողջապէս անավարտ մնաց լոկ այն պատճառով, որ այն ընդհատվեց անժամանակ մահով:

Բայց այդուհանգերձ դա ինքն է, կոմս դը Միրաբոն, որ և զուտ անձնական, և կաստայական իր ողջ արկածախնդրութեամբ... կարողացավ դառնալ բաղաբական անուն՝ առավել լիակատարութեամբ ամբողջ աշխարհի առջև մարմնավորելով Ֆրանսիական մեծ հեղափոխութիւնը նրա առաջին փուլում: Ո՞վ 1789 թվականին ավելի մեծ հեղինակութիւն ուներ Գլխավոր շտաբների և Սահմանադիր ժողովի ներսում, քան Միրաբոն: Ո՞վ էր ավելի մեծ համբավ, ժողովրդայնութիւն վայելում հասարակութեան մեջ, երկրում, եվրոպայում: Զի կարելի տալ և ոչ մի անուն, որը կարելի լիներ հակադրել Միրաբոնին: Արդ ուրեմն ո՞րն էր Միրաբոնի այդ անվիճելի, հակայական, աչքի առաջ կարծրացած մետաղի ու մարմարի վերածված ծանրակշիռ փառքի առեղծվածը:

Նրա բացառիկ հռետորական ձի՞րքը: Սրբնթաց հոսանքի մեջ միախառնված բառերի կախարդական հմայ՞ումը, որ հիպնոսում էր լսարանը: Այո, իհարկե, տրիբունի այդ հազվագլուտ տաղանդը, որ կարողանում էր իր հետեից տանել մարդկանց, շատ բան է բացատրում. այդ մասին արդեն խոսվել է: Բայց նախկինում խոսվել է և այլ բանի մասին:

Միրաբոնի փառքն ընդմիշտ հիշարժան 89 թվականին այդպէս սրբնթաց աճում ու ընդլայնվում էր այն պատճառով, որ նա առաջինն էր Ֆրանսիայի բաղաբական գործիչներից, որը հասկացավ և ամբողջ երկրով մեկ բարձրագուշ հայտարարեց, որ անհնար է հաղթել բռնակալութեանը, արքայուտիզմին ու ար-

տոնյալ դասերին առանց երրորդ դասի միասնութեան, առանց ժողովրդի միասնութեան:

«Միասնութիւն, միասնութիւն և դարձյալ միասնութիւն» ահա այն հիմնական գլխավոր բաղաբական լոզունգը, որ պաշտպանում էր Միրաբոն 89 թվականի գարնանն ու ամառը ունեցած իր բոլոր բաղաբական էլույթներում: Եվ ուժերի համախմբման այդ կոչը, օբյեկտիվորեն տրտացուելով ժամանակի պատմական անհրաժեշտութիւնը, բաղաբականապէս նախապատրաստեց Բաստիլի գրոհը և անկումը 1789 թվականի հուլիսի 14-ին:

Գարաշրջանի պատմականորեն հասունացած խնդիրների հետ Միրաբոնի առաջագրած ժողովրդի համախմբման լոզունգների այդ լիակատար համապատասխանութիւնն էլ հենց որոշ ժամանակով նրան վերածեց հեղափոխութեան ամենահեղինակավոր և համբավավոր առաջնորդի:

Ահա և վերջինը: Միրաբոն գործի, գործողութեան մարդ էր, այլ ոչ թե ճամարտակութեան: Բայրոնի օրագրում 1813 թվականի նոյեմբերի 23-ին և 24-ին կա մի գրառում, որտեղ նա խոստովանում էր, որ կուզենար նմանվել Միրաբոնին և Սեն-ժյուստին: Անունների այդ զուգակցումը, որն առաջին հայացքից այդքան անօպասելի էր թվում, բացահայտում է Բայրոնի հաշորդ բացատրութիւններում: Ի՞նչն է միավորում այդքան միմյանցից տարբեր գործիչներին: Ամենից առաջ այն, որ և՛ Միրաբոն, և՛ Սեն-ժյուստը իրենց բոլոր տարբերութիւններով հանդերձ գործի մարդիկ էին, գործողութեան մարդիկ, այլ ոչ թե խոսքի: «Գործողութիւններ, գործողութիւններ, — ասում եմ ես, — այլ ոչ թե հորինում, հատկապէս բանաստեղծութիւններում», — կրկնում էր Բայրոնը<sup>55</sup>:

Անգլիայի մեծ բանաստեղծը ճիշտ է բնորոշել ուժի աղբյուրն այդքան տարբեր, նույնիսկ հակադիր այնպիսի մարդկանց, ինչպիսիք են Միրաբոն և Սեն-ժյուստը: Իհարկե, Միրաբոն իր ժամանակի մեծագուշ հռետորն էր և ավելի լավ, քան որևէ մեկ ուրիշը այն ժամանակ, հասու եղավ բառերի զուգակցման կախարդութեանը: Բայց մասսաների վրա նրա ազդեցութեան ուժը, սուրբուրբ բնորոշում էր ոչ այնքան ինքը հռետորական տալանդը, որքան նրա ուղղվածութիւնը: Միրաբոնի խոսքը գործողութեան կոչ էր: Հիշենք նրա հակահարվածը դը Բրեղեին, որը անդեցրեց արքայուտիզմի առաջին նահանջին, 1789 թվականի

Հուլիսի սկզբին նրա առաջադրած պահանջները զորքերը հանելու մասին, մասսաների քաղաքական մորիլիզացիան հուլիսի 14-ի նախօրյակին, ժողովրդական սխրագործության՝ Բաստիլի գրոհի անվերապահ ջերմ պաշտպանությունը: Միրաբոյի 1789 թվականի՝ հեղափոխության առաջին, սկզբնական փուլի բոլոր ելույթներում լիակատար մտրմնախորում գտան նրա հզոր գործուն ուժը, գործողության առաջնությունը խոսքի նկատմամբ:

Հենց այս ամենն էլ, իմ կարծիքով, երեք քառորդ հարյուրամյակ անց, երբ Միրաբոյին անգաղրում հետապնդող ամենախնամոթ և գաղտնի գործերը վաղուց արդեն ջրի երես էին գուրս եկել, հանրագումարի բերելով, ի մի բերելով սկիզբն ու վերջը, Մարքսին հիմք տվեց Միրաբոյին կոչել հեղափոխության առյուծ:



**ՄԵՋՈՒՄԻՆԱ  
ՈՒՇԱՊԻՇԵՐ**

ՄԱՔՍԻՄԻԼԻԱՆ  
ՌՈՐԵՍՊԵՐ

I

Պատմութեան մեջ կան անուններ, որոնց ոչ ժամանակը, ոչ կրքերը, ոչ էլ անտարբերութիւնը չեն կարող ջնջել սերունդներէ հիշողութիւնէ: Նրանց թվին է պատկանում Մաքսիմիլիան Ռոքեսպիերի անունը:

Ռոքեսպիերը կարճատև կյանք է ունեցել: Նա մեռել է, իսկ ավելի ճիշտ, զոհվել է կառափնարանի վրա այն բանից հետո, երբ լրացել էր նրա երեսունվեց տարին: Այդ կարճատև կյանքի լոկ վերջին հինգ տարիներն էին նշանակալից: Նախորդ բոլոր տարիները քիչ բանով էին առանձնացնում արբասցի երիտասարդ փաստաբանին՝ Ժան-Ժակ Ռուսոյի երկրպագուին և սենտիմենտալ բանաստեղծութիւնների հեղինակին:

Երբ 1789 թվականի գարնանը որպես Աբրասի երրորդ դասից Դյուսալոն շտատների դեպուտատ Ռոքեսպիերը դուրս եկավ քաղաքական մեծ տպարեզ, նրա առաջին քայլերը թշնամալից արձամարհանքով ընդունվեցին: Ոչ միայն Ռիվարոյի սեակցիոն-միապետական «Առաքելների արտրքները» թերթին էր ծանակում նրան, այլև նրա քաղաքական համախոհները, երրորդ դասի ղեկավարները և լրագրողները՝ արսուլյուտիզմի թշնամիները կամ չէին նկատում, կամ մեծամտաբար քամահրում էին նրան: Այն ժամանակվա լրագրային հաշվետվութիւններում նրա ազգանունը ազտվազվում էր. նրան կոչում էին մերթ Ռոքերպիեր, մերթ Ռոքեպիեր, մերթ Ռոքեր, իսկ ավելի հաճախ չէին հիշատակում նրա անունը, փոխարինելով այն վիրավորական անդեմ ձևով՝ «Դեպուտատներից մեկը»: Մայրաքաղաքի պճնամոլները և բազմափորձ սրախսները Ռոքեսպիերին ընտրեցին սրպես թիրախ իրենց ծաղրոմանակի համար: Նրանց բոլորին զվարճութիւն էր պատճառում արբասցի դեպուտատի հետ

կտարված ամեն ինչ՝ և՛ հնարձ գեղնակամաշափուն ֆրակը, և՛ գովառական շարժումներ, և՛ նախապես գրված ճառերի վերամբարձ փրուն ոճը: Մի անգամ նա ստիպված եղավ ամբիոնը թողնել դահլիճում առաջացած աներևակայելի ծիծաղի հետեւում: Մեկ ուրիշ անգամ նա ընդհատեց իր ելույթը դահլիճում բարձրացած աղմուկի պատճառով: Նա ապարդջուն փորձում էր բղավել հավաքվածներից ավելի բարձր, բայց, համոզվելով, որ զա իր ումերից վեր է, իջավ ամբիոնից, շավարսելով ճառը:

Բայց ժամանակն անցնում էր, և ծանակալների ձայները պետք է լսելին: Թերթերում սովորեցին ճիշտ գրել նրա անունը, վերջին էջից այն անցավ առաջին էջ: Ազգային ժողովում և Յուկոբինյան ակումբում այժմ արդեն ուշադիր էին ունկնդրում նրա ելույթները. արդեն ոչ կոստյումը, ոչ շարժումներ, ոչ հետադիմ սեր ծաղրական դիստուրբուցիաներ չէր առաջացնում:

Անցավ ևս մի որոշ ժամանակ, և Կոնվենտում Ռոքեսպիերի արտասանած յուրաքանչյուր ճառ արդեն քաղաքական խոշոր իրադարձութիւն էր. այն ընդունում էին անհավանութեան կատարի բացականութիւններով ժողովի մի կողմում և որստալից ծափահարութիւններով՝ մյուս կողմում:

Հեղափոխութիւնը առաջ էր ընթանում, իր գարգացման մեջ հասնելով նոր, ավելի բարձր աստիճանների: Նրա հետ մեկտեղ աճում էր և Մաքսիմիլիան Ռոքեսպիերի փառքը: Նրա ապրելակերպում ոչինչ չէր փոխվել՝ առաջվա նման ապրում էր հյուան Մորիս Դյուպիէի՝ Սեն-Օնորի փողոցի վրա գտնվող փայտե կողոնքի միակ սենյակում: Նա մնում էր նույնքան ազբատ, ինչպես և այն ժամանակ, երբ անհայտ էր: Նա չէր գրադեցնում որևէ հատուկ պաշտոն կամ պոստ: Եվ այնուամենայնիվ, նրա ազդեցութիւնը հեղափոխական կառավարութեան քաղաքականութեան, իրադարձութիւնների ընթացքի ընթացքի վրա անբնդհատ աճում էր. իսկ նրա խոսքը դառնում էր ավելի ու ավելի ծանրակշիւ:

Հեղափոխութեան բոլոր լիդերներից Ռոքեսպիերը միակն էր, ով նրա հետ և նրա գլուխ կանգնած ամբողջ ճանապարհն անցավ մինչև վերջ: Ոմանք հետ մնացին հենց սկզբից: Մյուսներին հեղափոխութեան հեղեղը դեն շարսեց կարուկ շրջադարձներին: Յակոբինյան երեք առաջնորդներից Մարատը յակոբինյան իշխանութեան առաջին օրերին սպանվեց թշնամու դաշույնից,

Գանատներ գլուխը գիլիտտինի վրա դրեց Հեղափոխական արբ-  
բունայի գառավճռով փոքր-ինչ ազելի ուշ, և միայն Ռոբես-  
պիերը մնաց հեղափոխական ալիքի կատարին:

Ռոբեսպիերը կանգնած էր պատմության մեջ շտեմոված, ան-  
օրինակ իրադարձությունների պոպկուն ընթացքի բուն կենտ-  
րոնում: Նա դաժան պայքար էր մղում, բայց, ինչպես Գերցենն  
է ասել, համարձակ քայլերով նա «ոտը էր դնում արյան վրա, և  
արյունը նրան շէր ապականում»: Հասարակ ժողովուրդը սիրեց  
Անկաշառին: Հեղափոխության բացահայտ և գաղտնի թշնամի-  
ները, որ դողում էին նրա հոնքերի սոսկ մի շարժումից, բայց  
այնքան ազելի ուժեղ առում նրան, սրում էին դանակները,  
հյուսում դավադրությունների սարդոստայնը:

1794 թվականի ամռան նախօրեին Հանրապետությունը,  
թվում է, հասել էր հզորության և փառքի գագաթնակետին: Այդ  
փառքի ճառագայթները լուսավորում էին հեղափոխական կա-  
ռավարության առաջնորդին՝ Ռոբեսպիերին: Սակայն զենիթին  
հասած նրա փառքը ակնթարթորեն փոխվեց գիլիտտինի: Թե-  
միդոմի 9-ին մինչ այդ իւր ստվերում թաքնված դավադիրները  
հակահեղափոխական հեղաշրջում կատարեցին, Ռոբեսպիերին  
և նրա ընկերներին հայտարարեցին օրենքից դուրս և հաջորդ  
օրը առանց դատի մահապատժի ենթարկեցին Փարիզի Գրեկի  
հրապարակում:

\* \* \*

Այդ անսովոր կյանքը, այդ զարմանալի ճակատագիրը, բնա-  
կանաբար, երկար տասնամյակների ընթացքում տարիների հե-  
շթույացող ուշադրություն է գամել իր վրա:

Ռոբեսպիերի ղոհվելու արդեն իսկ հաջորդ օրը նրա անունը  
պարուրվեց առասպելով: Նրա թշնամիները բոլոր բաղաբական  
ճամբարներից, բոլոր խմբավորումներից ու ֆրակցիաներից,  
որոնք կռվում էին հեղափոխության դեմ, նրա երեկվա բարեկամ-  
ները, որոնց վախն ստիպում էր սահմանազատվել հաղթվածից,  
բոլորը հանդես էին գալիս նրա դեմ: Բավական է հիշել թեկուզև  
Լուի Գալիզին՝ փառարանված նկարչին, Հասարակական ան-  
վտանգության կոմիտեի անդամին: Ռոբեսպիերի ընկերը, որը  
Թեմիդոմի 8-ին Յակոբինյան ակումբում Անկաշառի ճառից հե-

տո կրքոտությամբ խոստանում էր նրա հետ միասին մինչև վերջ  
լամել խնդամոլին, Ռոբեսպիերի ղոհվելուց հետո արգարանում  
էր, պնդելով, որ խորապես խաբված էր նրանից: Այս կամ այն  
պատճառով յակոբինյան դիկտատուրայի կառավարությունից  
բոլոր ղեկավարները, բոլոր կասկածելիները, որոնց վրա կախված  
էր գիլիտտինի ստվերը, բոլոր սակեուլյանաները, կաշառակեր-  
ները, պետական ունեցվածքի հափշտակիչները, փոտասերները,  
կարիերիստները, Հասարակական փրկության կոմիտեի երկաթե  
ձեռքից բոլոր ղուղաղուները այժմ պարտված առաջնորդի վրա  
ցեխ էին շարում, հերյուրում, գրպարտում: Ոչ միայն դավա-  
դրության սրբապիղծ համախոհները՝ այլ բոլոր Տալիենները,  
Բարրասները, Յրերոններն էին մրցակցում միմյանց միջև  
անեծքներ տեղալու «բննապետի» ու «բննակալի» դեմ, ինչպես  
այժմ անվանում էին Անկաշառին. Թեմիդոմի 9-ից հետո քա-  
ղաքական մթնոլորտն այնքան էր շիկացել, որ նույնիսկ շահա-  
գիտական կրքերից ու բաղաբական հաշիվներից հետո մարդիկ  
էին ենթարկվում այդ հասարակական հոգեխանգարմանը: Այս-  
պես, հանճարեղ «Մարսելիեզի» հեղինակ Ժոզեֆ Ռուժե դը Լիլը  
հորինեց Թեմիդոմի 9-ի հեղաշրջումը (որն իբրև թե խափանեց  
«Ռոբեսպիերի դավադրությունը») փառարանող հաճոյակատար  
ցածրբուկ հիմն, իսկ զրամատարները, ռեժիսորները և գերա-  
սանները, որոնց անունները պատմությունը չի պահպանել, Ան-  
կաշառին զրպարտում էին թատերական սանձարձակ ներկայա-  
ցումներում<sup>2</sup>:

Հեղափոխության գրեթե բոլոր գործիչները բազում թշնա-  
միներ վատակեցին: Վենդանության օրոք նրանց հետապնդած  
թշնամանքի հետքն անցնում էր և պատմության մեջ: Իհարկե,  
ոչ ինքը՝ այդ թշնամանքը, ոչ նրա անհաշուտության աստիճանը  
չէր կարող միանման լինել արիսպետող դատակարգերի հաջորդ  
ոկրոնողների համար: Որինակ, Մարտը (ես արդեն հարկ եմ  
ունեցել պրելու այդ մասին) իր դեմ հարուցեց բուրժուազիայի  
առանձնահատուկ տաեղությունը: Եվ այնուամենայնիվ, էթե  
ավելալ գեպում թուլլատրիլի են համեմատություններ, պետք  
է խոստովանել, որ Ռոբեսպիերի թշնամիների շրջանը ղգալիո-  
բեն լայն էր, քան Ժողովրդի բարեկամինը: Մարտին տոտմ և  
նրանից մխեկնում էին բոլոր նրանք, ովքեր կանդնած էին յա-  
կորինյաններից աջ՝ ժիրոնգիստները, ֆելլյանները, ոռլալիստ-  
ները: Ռոբեսպիերի ստիսների մեջ, նրանց հետ միասին կային

և այլոք, որոնք աճել էին յակոբինյան իշխանության վերջին տարում, երբ արդեն կենդանի չէր Մարտոք: Ռոբեսպիերի կենդանության օրոք նրա թշնամիներն էին ոչ միայն թվարկված խմբավորումները, այլև «կատաղիներն» ու էրերականները, զանտոնականներն ու բոլոր այն խայտաբղետ, տարասեռ տարբերք, որոնցից հետագայում կազմավորվեց թերմիդորյան բռնկը:

Ռոբեսպիերի վրա էին գրել ամեն ինչի պատասխանատվությունը: Ե՛վ Շառլոտա Կորգեի վրա բարձրացված հատուցման գանակը, և՛ գալլերի կրծոտած ժիրոնդիստական դեպուտատների դիակները, և՛ Մարիա-Անտուանետի խոսուպիկները, և՛ Օուլանի դքսի՝ Ֆիլիպ Էգալիտեի աճյունը, և՛ բանտում իրեն խոզխոռած ժակ Ռուի հուսահատությունը, և՛ անմեղ տեղը զոհված Շոմետի արյունը, և՛ Դանտոնի ցլալին կատաղությունը, և՛ Լյուսիլ Դեմուլենի արցունքները, և՛ Շեղափոխական տրիբունալի կողմից մահապատժի ենթարկված հարյուրավոր մեղավոր ու անմեղ մարդիկ՝ այս բոլորը վերագրվում էր Մարքսիմիլիան Ռոբեսպիերին:

Պետք է անմիջապես ուղարկություն դարձնել այս հանգամանքին, քանզի այստեղ է Ռոբեսպիերի՝ հետագա պատմագրության կողմից ավելի ուշ նրան տրված գնահատականների քարտեզյունն ու հակասությունն ըմբռնելու բանալին:

Յակոբինյան դիկտատուրայի անկումից հետո Ռոբեսպիերի բոլոր հակառակորդները՝ աջերը և «ձախերը» համաձայնության եկան մի քանի ընդհանուր բնորոշումներում, որոնք, լինելով հրեշավոր զրպարտություն, մատուցվում էին որպես քայլող ճշմարտություն: «Բռնապետ», «գիկտատոր», «բռնակալ», «մարդասպան», «արյունարբու»՝ այս բոլոր հայհոյական մականունները Ռոբեսպիերի վերաբերմամբ միանման էին հնչում և՛ «ձախ» Կոլլո դ'Էրբուայի, և՛ աչ Բուասի դ'Անգլայի շուրթերին: Բոլոր երանգների թերմիդորականների համերաշխությունը Ռոբեսպիերին մարդկային ցեղի թշնամի ներկայացնելու ձգտման մեջ տարածվեց այնքան հեռու, որ նրանք, շքավարտվելով յակոբինյանների լիզերի բաղաքական և ֆիզիկական ունշացումով, նույնիսկ անարգում էին նրա աճյունը՝ հորինելով հետևյալ սրբապիղծ բնաբանը. «Passant, qui que tu sois, ne pleure pas mon sort. Si je vivais, tu serais mort», որը կարելի է թարգմանել մոտավորապես հետևյալ կերպ.

Բայց դրանից այն կողմ սկսվում էր տարաձայնությունների ստպարեզը: Արդեն թերմիդորի 9-ից հետո, երկրորդ օրը Բիլլո-Վարենը, Բարերը, Վադիեն Ռոբեսպիերին մեղադրում էին մոգեբանտիզմի, թշնամիների նկատմամբ հանգուրժողականության, հոգևորականներին հովանավորելու մեջ, այսինքն նրան քրեանդատում էին, այսպես ասած, ձախ դիրքերից: Տիրոզոն, Տյուրիոն և մյուս դանտոնականները, ընդհակառակը, պահանջում էին զտել և վերացնել Շեղափոխական տրիբունալը, ամիսատիա, դիտարտություն, այսինքն հանգես էին գալիս աչից:

Այսպես էր կեղտն ու զրպարտությունը ծամոնի պես կաշում Ռոբեսպիերին, որն արդեն չէր կարող պատասխանել իր պարտավիճներին: Քաղաքական և զրական կողոպտիչները, որ շտապում էին անալիզի վանապարհով զրպանը լցնել իրենց կեղտոտ արհեստով, ծաղր ու ծանակի էին ենթարկում Լեոան առաջնորդի՝ իշատակը, թխելով զրպարտչական հորինումներ:

Սկսած Կուրտուալի ամենակուպիտ ու բուցահատ կեղծավորության վրա կառուցված դեկուցումից<sup>1</sup>, Դյուպերոնի, Մոնմուալի, Մերլինի (Տիոնվիլից), Լորան Լեկուանտրի, որը դեռ նախկինում էր հմտացել զրպարտչական մատնությունների մեջ<sup>5</sup>, ըստարակ բրոշյուրներից և նրանց նման ծախված շատ գրիչների ստեղծագործություններից աստիճանաբար սկսեց ձևավորվել Ռոբեսպիերի պատմագրությունը՝ ծայրահեղ հակասական, բայց սկզբից մինչև վերջ ամբողջովին կեղծ, կառուցված զրպարտության, խեղաթյուրումների, վրիժառու շարունակ, հերյուրանքների, շնոտացված վիրավորանքների շարանենգության վրա:

Այդպես ստեղծվեց Ռոբեսպիերի կերպարը՝ աղավաղված, տնձանաշելի, սարսափելի, մարդկային ամեն մի հատկանիշից զուրկ, բոլոր արատների և ստոր կրթերի կարծրացած թանձրուկը, բռնապետի և արյունարբու մարդասպանի դիմանկարը:

Սակայն ի հեճուկս այս մեկնակերպի, որ ստանում էր պետական իշխանության աշակցությունը, տարածվում եկեղեցու, դպրոցի, պաշտոնական գիտության կողմից, ժողովրդի գիտակցության, սերունդների հիշողության մեջ այլ պատկերացումներ, այլ հուշեր էին ապրում Ռոբեսպիերի մասին, այլ, սար-

ափսիւի պատկերի շնամեղով՝ մարդու և մարդկային կերպար: Ռքքան էլ զրպարտիչներն աշխատում էին սեպտեմբեր XVIII դարի մեծ հեղափոխականին, կեղծիքի ու հերյուրանքների բազմամյա շերտանստովածքի միջով ճանապարհ էր հարթում, դուրս էր գալիս ու ճառագում էր Անկաշառի անեղծ, շցիտտոված դիմա- նկարը: Եվ նոր սերունդները երկար դիտելով այդ նրբակերտ ուրվանկարը, որ զնայով ավելի ու ավելի էր հեռանում ժամա- նակների խորքը, աշխատում էին գուշակել նրա գաղտնիքը:

Առաջին հայացքից կարող էր թվալ, որ երիտասարդներին գլխապատույտ էր պատճառում ինքը՝ Ռոբեսպիերի կյանքի ուղու քաջառիկութիւնը. երեսուն տարի անհայտութիւն, իսկ այնու- հետև սրբնթաց ու կուրացնող, ինչպես հրթիռի մեկնարկը, վեր- ելք և ամենաբարձր գագաթին՝ անկում ու կործանում: Բայց եթե Ռոբեսպիերի կենսագրութիւնն այդ արտաքին կողմը կարող էր հրապուրել փառասիրական մտքերն ու սրտերը, ապա նրանց համար, իհարկե, անհամեմատ ավելի գայթակղիչ էր անսովոր կյանքի ուղու մեկ ուրիշ օրինակը, որ առկա էր բոլորի աչքի առաջ՝ Նապոլեոն Բոնապարտի ուղին: Արկուլի կամուրջը, Աուս- տերլիցի արևը, հաղթանակների շեփորագոգերը, ոսկե մեղունքը թավշի վրա (նոր կայսերական դինաստիայի խորհրդանշանը), այս ամենը փառասերների ու երազողների համար տասնութ տարեկանում հարյուր անգամ ավելի գայթակղիչ էր Հասարակա- կան փրկութիւնն կոմիտեի սև մահուկների դմնդակ խստու- թիւնից: Ստենդալը հավատարիմ էր պատմական ճշմարտու- թիւնը, երբ իր սիրելի հերոսին՝ ժողովրդից սերված ընդունակ և փառասեր Ժյուլիեն Սորելին ստիպում էր ներքնակների մեջ պահել նվիրական դիմանկարը՝ իհարկե, ոչ թե Ռոբեսպիերի, այլ Նապոլեոն Բոնապարտի: Ասենք XVIII դարի վերջի— XIX դարի սկզբի բեկումնային դարաշրջանի այս երկու նշանավոր մարդկանց հետմահու ճակատագիրն էլ (ամեն մեկինը յուրովի) շափազանց տարբեր է եղել: Նապոլեոնի հիշատակը տիրապե- տող դասակարգերի կողմից հավերժացվեց Վանդոմի սլունով, Հաշմանդամների տնով, հուշարձաններով, հարյուր հազարավոր վերհուշերով, թանգարաններով, գրեթե անսահման գրականու- թիւմբ. բայց մինչ օրս Ֆրանսիայում, մայրաքաղաքում, որտեղ մի ժամանակ նիստեր էր գումարում Կոնվենտը, և մյուս բա- ղաքներում շկա Առաջին հանրապետութիւնն ամենաերկնի ներ-

կայացուցչի հուշարձանը, ասենք նրա անունն էլ Ֆրանսիայի պատմութիւնն մեջ դեռևս ամենին չի հնչում ամբողջ ծայնով:

Ո՛չ, իհարկե, նրանք ուշագիր չէին հետևում Ռոբեսպիերին և աշխատում հասկանալ նրա անսովոր ճակատագրի նվիրական իմաստը, այլ նրանք, ովքեր վազում էին փառքի, հաղթանակի, մեծարանքների հետևից: Հեղափոխական պայքարի ելնող ճրնշ- ված դասակարգերի ներկայացուցիչները, հասարակական ուժե- րը յակորինյան դիկտատուրայի և նրա առաջնորդ Ռոբեսպիերի հերոսական փորձի մեջ տեսնում էին ոգեշնչման օրինակ խի- զախումների և փորձութիւնների համար:

Եվ առաջինները, ովքեր պետք է հիշատակվեն այդ շարքում, ովքեր համարձակորեն իրենց հուշակեցին Ռոբեսպիերի գլխավո- րած պայքարի ժառանգորդներ և շարունակողներ, Գրակոս Բարլոֆին էր և նշանավոր «հավասարների դավադրութիւնն» նրա ընկերները:

Նրանք նախաձեռնողներն էին հասարակական մտքի, մաս- նավորապես առաջին ֆրանսիական հեղափոխութիւնն պատմա- գրութիւնն զարգացման մեջ մեկ այլ, Ռոբեսպիերին համակրող և անհամեմատ ավելի ճշմարտացի ուղղութիւնն, որը հակադրվում էր հետադիմական և զրպարտչական ուղղութիւնն: Ի դեպ, սրա մասին պետք է ավելի հանգամանորեն խոսել:

\* \* \*

«Հավասարների» շարժման առաջացումը, ինչպես հայտնի է, ժամանակի առումով համընկնում էր այսպես կոչված «ճախ թերմիդորականների» քաղաքական և գաղափարական խորտակ- մանը: Նրանցից ոմանք, օրինակ Ամարը, ուղիղ կապ հաստա- տեցին «հավասարների դավադրութիւնն»՝ հետ և շարժման մեջ լրավական նշանակալից դեր էին խաղում: Իսկ ընդհանուր առ- մամբ, «ճախ թերմիդորականներ» Բիլլո-Վարենը, Կոլլո դ'Էր- բուան, Վուլանը, Բարբըր և մյուսները հետո մնացին «հա- վասարների» շարժումից, Բարլոֆից և նրա կողմնակիցներից

\* «Հավասարների» վանդոմյան դատավարութիւնը Ամարի հետ միասին պատասխանատուութիւնն ենթարկվեց նաև Վադիեն, որին, սակայն, Բուենարտի Լեդիակավոր վկայութիւնը, «որինչ հայտնի չէր դավադրութիւնն մասին»:

ոչ միայն կազմակերպորեն և գաղափարապես, այլև Ռոբեսպիերի գնահատման հարցում:

«Ձախ թերմիդորականները», ինչպես հայտնի է, մեծ և շարագույժ դեր խաղացին թերմիդորի 8—10-ի՝ ճակատագրական իրադարձությունների մեջ: «Հավասարների դավադրության» մասնակիցների մեծամասնությունը, ինչպես, ի դեպ, և այլ ազնիվ չակոբինյաններ, օրինակ, այսպես կոչված «վերջին մոնտանյարներ» Ռոմմը, Կուտոնը, Բուրբուտը, Սուբբանին և պրեբիալի ապագա մյուս գոհերը, անհամեմատ քիչ էին նպաստել Ռոբեսպիերի տապալմանը, թեև ամբողջությամբ հավանություն էին տալիս հեղաշրջմանը: Չնայած այս տարբերություններին, թե՛ մեկը, և թե՛ մյուսները (անկեղծ համոզմունքով, անխելքությունից, թե երկերեսանությունից, տվյալ դեպքում դա նշանակություն չունի) թերմիդորի 9-ի հակահեղափոխական հեղաշրջումը համարում էին հեղափոխական ապստամբություն կամ հեղափոխություն: Նույնիսկ «հավասարների» շարժման վաղ փաստաթղթերից մեկում, որը վերաբերում է 1795 թվականի վերջին կամ 1796 թվականի սկզբին, 1794 թվականի հուլիսի 27-ի անցքերն անվանվում էին «թերմիդորի հեղափոխություն»<sup>2</sup>:

Բայց «ձախ թերմիդորականների» համար հեղաշրջումից հետո շատ շուտով ակնհայտ դարձավ, որ այդ «թերմիդորի հեղափոխությունը» այլևս չի հնազանդվում իրենց և իրականում բնավ էլ հեղափոխություն չէ, այլ հակահեղափոխություն: Երբ նրանց սկսեցին հետին պլան մղել, այնուհետև չախշախել ու անարգանքի ենթարկել, հետո էլ ձերբակալել ու արսորել, ավելի հաճախ նույնիսկ առանց պահպանելու դատական ձևակահույնությունները, ճիշտ այնպես ինչպես թերմիդորի 9-ի օրը, այն ժամ նրանք զզջացին:

Հոգեբանորեն լրովին հասկանալի էր, որ այդ բույր Քիլոները, Կոլլոները, Վագիենները, Հասարակական վերկուլյան և Անվանանդության հոդր կոմիտեների անդամները, իրենց ամբողջ մեղքերով հանդերձ պողպատե կոփվածքի սեր մարդիկ, գայրույնից փոթորկվում էին, տեսնելով, թե ինչպես ինչ-որ մի ուղորմելի Ռոմմը, լկտիաբար խոստովանելով, որ ինքը «Կուտոնի շնիկին շոյել է նրա տիրոջ բարեհաճությունը նվաճելու համար»<sup>3</sup>, այժմ Հասարակական փրկություն կոմիտեում մարդկանց ճակատագիրն է տնօրինում և լողում ոսկու մեջ:

Իհարկե, այդ ուշացած և արդեն առարկայազուրկ ինքնաբնադատությունը «ձախ թերմիդորականների» համար ուներ իր անհատական երանգը: Եկացի, ճկուն, անսկզբունք Բարերը Վիեզակը, որ միշտ կարողանում էր մնալ սրբնթաց հոսանքի մակերեսին (այն Բարերը, որը ժամանակին լինելով Ֆելյանների ակումբի նախագահը, ավելի ուշ դարձավ Հասարակական փրկություն կոմիտեի գրեթե միակ անփոփոխ անդամը) իր հուշագրություններում, որոնք գրվել կամ խմբագրվել են 1794 թվականի ողբերգական իրադարձություններից ավելի քան երեսուն տարի անց, խոստովանում էր, որ «թերմիդորի 9-ը չարդեց հեղափոխական ուժը»: Նա սնստող վրդովմունքով պնդում էր, որ իշխանության գլուխ անցավ «հակահեղափոխական կուլիցիան», որը, նրա կարծիքով, բաղկացած էր Գանտոնին նվիրված մարդկանցից, «ճուճի» ներկայացուցիչներից և կյուրովիկոս XVIII-ի գործակալներից. նույնիսկ նա այդ մարդկանց զզվանքով անվանեց «թերմիդորականներ»<sup>4</sup>, հասկանալիորեն իրեն հանելով նրանց թվից: Բայց Բարերը այդ անցքերն ընկալում էր ամենից առաջ որպես անձնական աղետ՝ թերմիդորը հակահեղափոխական դարձավ ոչ այն պատճառով, որ տապալվեց Ռոբեսպիերի գլխավորած հեղափոխական կառավարությունը, այլ այն պատճառով, որ թերմիդորից անմիջապես հետո ապաշփորհ «իշխանության սիրահանները» (armateurs du pouvoir), չնրելով նրան՝ Բարերին, նրա հանրաճանաչությունն ու տաղանդը, նրան դուրս մղեցին ղեկավարությունից<sup>5</sup>: Իսկ վերանայել իր վերաբերմունքը Ռոբեսպիերի նկատմամբ, քաղաքականապես վերագնահատել Անկաշատի դերը հեղափոխու-

\* Հիպոլիտ Կարոն, որը Բարերի հրապարակած (Գավիզ դ'Անտերի հետ միասին) հուշերի համար գրել էր ընդարձակ ու բովանդակալից մի առաջաբան, մասնանշում է, որ Բարերը իր հուշերի վրա սկսել է աշխատել կառուցման առաջին տարիներին, իսկ խմբագրել է կյանքի վերջին տարիներին (նա մահացել է 1841 թվականին):

\*\* Բարերը «Հուշերում» իր օգտին քերած այլևայլ վիճակությունների թվում վերաբառում է և իրե թե իրեն մարտիցի Գրանդի սամ հետևյալ խոսքերը. «Հրաժարական սուր՝ դրանով ամեն ինչ կավարտվի Միայն այդպես դարձելով դու ձեռք կրերես հանդատություն, քանի որ այդ մարդիկ չեն ներում քեզ քո հանրաճանաչությունը, քո երկարատև հաշտությունները ամբողջի մաս: Հարկավոր է նրանց դիչել և նրանց համար տեղ ազատել» (Barère B. Mémoires, t. II, p. 219—220):

թյան մեջ՝ դրանից Քարերն անասմանորեն հեռու էր: Իհարկե, որպես խելացի մարդ նա պետք է ընդուներ և Թոբեսպիեի արժանիքները՝ «անբասիր ազնվությունը, ազատությունը, նկատմամբ ունեցած սերը, սկզբունքների հաստատակամությունը, սերը ազգատության նկատմամբ, նվիրվածությունը Յոզովուզի գործին»։ Նախառակ պարագային անհասկանալի կլիներ, թե ինչպես կարող էր նա՝ Քերարան Քարերը նրա հետ կիսել փառքն ու իշխանությունը Հասարակական փրկության կոմիտեում: Բայց զբլխավորում ու հիմնականում Քարերը բուրժուական, իսկ այնուհետև ֆեոդալարիտոսոկրատական տեակցիայի հաղթանակի երկուրտես փորձից հետո էլ իր հուշերում կրկնում էր Թոբեսպիեի անհաղույթ, իշխանասեր դեսպոտիզմի մասին հին մեկնակերպը, և, բացահայտորեն սեփեթեթույթ, չափազանցնում էր իր դերը թերմիդորի 9-ի անցքերում<sup>12</sup>:

Այսպիսով, Քարերը Թոբեսպիեի անկումից ու կործանումից երեսուն տարի անցնելուց հետո էլ շարունակում էր արգարացնել պաշարը նրա դեմ՝ որպես իբրև թե հեղափոխությունը ճնշող բռնապետական դիկտատուրայից փրկելու հերոսական սիրագործություն:

Հավոք, պատմաբանի տրամադրությունն ամբողջով չկան նույնշան լիակատար աղբյուրներ, ինչպիսիք Քարերի հուշերն են, որոնք բացահայտեին մյուս «ձախ թերմիդորականներին» գաղափարական գիրքորոշումները նրանց քաղաքական խորատկումից հետո: Ատիպով կլինենք բավարարվել կցկուտը տեղեկություններով, կողմնակի ապացույցներով, որոնք տեղ են թողնում կոտորածներին համար:

Ռեստավրացիայի տարիներին բելգիական տարագրության մեջ Քարերի և Վադիեի հետ Ֆիլիպ Բուռնարտիի հանդիպումների մասին նոթագրություններից, որոնք ժամանակին հրատարակել է Ֆրանսիացի պատմաբան Մատիեզը<sup>13</sup>, մենք կարող ենք հստակ պատկերացում կազմել թերմիդորի 9-ի հեղաշրջման երկու մասնակիցների հայացքների և զաղափարական տեսակետների մասին:

Բուռնարտիի սյավորություններն ու դատողությունները Քարերի մասին, ամբողջությամբ վերցրած լիովին հաստատում են քաղաքական այն ինքնանկարը, որ նկարագրել է Քարերը իր հուշերում այդ հանդիպումներից մտավորապես տասնհինգ

տարի անց: Բարերին Բուռնարտիի տված բնութագրերը վկայում է այդ նոթագրությունների հեղինակի դատողությունների շրջալի խորաթափանցություն և ճշտության մասին:

Հասարակական անվտանգության կոմիտեի ամենաազդեցիկ անդամ, Եկեղեցու և կրոնի դեմ անհաշտ մարտնչող հակաապարկ Վադիեն քիչ դեր չի խաղացել թերմիդորյան հեղաշրջման նախապատրաստման ու կազմակերպման գործում: Երեսուն տարի անց, երբ Բուռնարտին նորից հանդիպեց նրան\* բրյուսելյան տարագրության մեջ, նա արդեն կյանքի իններորդ տասնամյակը հաղթահարած ժերոնի էր: Բայց անգամ այդ պատկանելի տարիքը չկարողացավ Բուռնարտիին հարգանք ներշնչել Հասարակական անվտանգության կոմիտեի նախկին անհղ ղեկավարի նկատմամբ: Բուռնարտին նրա մասին գրում է անհարգալից և անբարեհաճ տոնով. «Ատել ազնվականներին և ծագումնականի ենթարկել կրոնը՝ ահա Վադիեի ամբողջ քաղաքականությունը: Նա շատ է սիրում հավասարություն, հիմնիայն ունի լավ եկամուտներ, կարող է շահավետ կերպով վաճառել իր ապրանքները և պահպանում է որոշ ազդեցություն բողոքական գործերի վրա»<sup>14</sup>: Այսպիսին է գառամյալ Վադիեն՝ առանց դիմակի, առանց չափազանցումների, որ բնօրինակից նկարել է Բուռնարտին նրա անբովանդակ կյանքի անհրապույր օրերին: Այդ մանրախնդիր, շարացած և սնափառ ժերոնին, որպիսին պատկերում է նրան Բուռնարտին, իհարկե, այժմ թերմիդորի 9-ը համարում էր կործանարար ու ճակատագրական, բանգի այստեղից էին սկսվում հայրենիքի աղետները, որոնք նա նույնացնում էր իր սեփական դժբախտությունների հետ: Բայց նույն կերպ, ինչպես և Քարերը, միայն կուպիտալ պարզունակ, առանց որևէ փրապահության, նա լիովին արգարացնում էր իր մասնակցությունը Թոբեսպիեի դեմ մղված պաշարին և կրկնում մաշված ու մտացածին այն բոլոր մեղադրանքները, որոնք Թոբեսպիեի դեմ էին հարուցվում 1794 թվականին:

Մենք սովյալներ չունենք, որոնք Թոբեսպիեի նկատմամբ վերաբերմունքի որևէ փոփոխության ենթադրություն թույլ տա-

\* Բուռնարտին 1797 թվականին երեք ամսից ավելի գտնվել է քանտարկության մեջ Պելե կղզում, Շերբուրգի մոտ, Վադիեի հետ, որը սխալմամբ դատապարտվել էր «հավասարների զավաղություն» գործով:

չին «ձախ թերմիդորականներին» պարագլուխներ Կոլլո դ'էրբուաչի և Բիլլո-Վարենի կողմից:

Էքերականներին ամենամոտ կանգնած՝ Հասարակական փրկութեան կոմիտեի անդամ, Լիոնում կատարված շափից զուրս դաժանութիւնների համար պատասխանատու, հեղափոխական կառավարութեան կողմից դատապարտված Կոլլո դ'էրբուան, որը բոլոր հիմքերն ուներ վախենալու Թորեսպիերից, թերմիդորի վճռական օրերին խաղաց ամենապիտավոր դերերից մեկը: Այդ նա էր նախագահում Կոնվենտի թերմիդորի 9-ի ճակատագրական նիստում՝ շարաշահելով իր իշխանութիւնը հօգուտ դավադիրների, և այդ նրան էր Թորեսպիերը տեղից արտասանած իր վերջին ցատումնալից բացականչութեան մեջ անվանում «մարդասպանների նախագահ»: Մի բանի ամիս անց նետովելով բանտ, իսկ աչնուհետև քստրվելով արեադարձային տենդի մեջ նեխվող Գլիանա, որպեսզի այնտեղ մահ գանի, Կոլլո դ'էրբուան բանտային ներքնակի ծղոտի վրա վերագնահատեց արդյոք այն անցքերի նշանակութիւնը, որոնցում նա այնքան շարանենգ դեր էր խաղացել: Այդ մասին ոչ մի վկայութեան չկա, իսկ կոահումները տվյալ դեպքում անպատեհ են: Կոլլո դ'էրբուան պատմութեան մեջ մնաց այնպիսին, ինչպիսին նրան տեսել էին թերմիդորի 9-ին՝ Թորեսպիերի կատաղի, ռխակալ թշնամի:

Խիստ, հաստատակամ, մինչև իր կյանքի վերջին օրերը համոզված դեմոկրատ Բիլլո-Վարենը իր հետամահ հրապարակված նոթերում ավելի արդարամիտ էր Թորեսպիերի նկատմամբ, քան իրական կյանքում: «Եթե ինձ հարցնեին, թե Թորեսպիերն ինչպես կարողացավ այդպիսի ազդեցութեան հասնել հասարակական կարծիքի վրա, ես կպատասխանեի, որ դա ձեռք է բերվել ամենախիստ առաքինութեան ճանապարհով, անվերապահ անձնազոհութեամբ, ամենամաքուր սկզբունքներով».— գրում էր Բիլլո-Վարենը: Բայց նա էլ, ինչպես և Թարերը, ինչպես Վադիեն (և նույնիսկ, միգուցե մեծ շափով, քան թե նրանք, քանզի ավելի սկզբունքային էր նրանցից) հակված չէր քննադատաբար վերաիմաստավորել իր խաղացած դերը 1794 թվականի ամռանը:

Կարիեն, Կոլլո դ'էրբուաչի նման, երկյուղ կրելով հեղափոխական հատուցումից նանտում թույլ տված հանցագործ դաժանութիւնների, 1794 թվականի մարտին էքերականների չկա-

յացած ապստամբութեանն ուղղակի մասնակցելու փորձի համար և հենց դրանով միայն դառնալով հակառոքեսպիերական խոտվութեան գործուն համախոհը, ճակատագրի շար հեգնանքով դարձավ առաջիններից մեկը, ում աչ թերմիդորականները քարշ տվեցին գիլիոտին, հայտարարելով «Թորեսպիերի թափվե- փուկ»: Կարիեի նշանավոր ֆրագը Կոնվենտում արտասանած իր պաշտպանական ճառում՝ «Այստեղ բոլորն են հանցապարտ, բոլորն՝ քնդհուպ մինչև նախագահի գանգը», ուներ պարզ ենթատեքստ՝ ամբողջ Լեոնը, ամբողջ Կոնվենտը պատասխանատու են տեոորի և բոնութեան քաղաքականութեան համար, որոնք որպես մեղադրանք բարդվում են միայն նրա՝ Կարիեի վրա: Այդ դատողութիւնների տրամաբանութիւնը պետք է հանգեցնել և Թորեսպիերի իրավունքների անուղղակի վերականգնմանը: Բայց այդ ֆրագը շարունակութեւն շունեցավ: Կարիեն գլորվում էր գեպի վայր, և հուսահատութիւնից թելադրված այդ խոսքերում թաքնված սպառնալիքը շօգնեց նրան կառչած մնալու մակերեսից: Ընդհակառակը, լինելով լավ քմբոնված, այդ ֆրագը միայն արագացրեց նրա անկումն ու կործանումը:

Պե՛տք է արդյոք խոսել մյուս «ձախ թերմիդորականների» մասին:

Մենք առանց այդ էլ բավական երկար խոսեցինք նրանց մասին: Բայց դա պետք էր այն բանի համար, որպեսզի հաստատեինք, որ «ձախ թերմիդորականներին» մեծամասնութիւնը իրենց քաղաքականութեան լիակատար սնանկացումից և նրանց անձնական խորտակումից հետո էլ շարունակում էր արդարացին իր պայքարը Թորեսպիերի դեմ 1794 թվականի ամռանը:

Այս հավաստումը կարևոր է և այն պատճառով, որ այն բացահայտում է ավելի ուշ, XIX դարի հեղափոխական-դեմոկրատական պատմագրութեան Թորեսպիերին թշնամի երկրորդ ուղղութեան առաջացման աղբյուրները:

\* \* \*

Ի տարբերութեւն «ձախ թերմիդորականների», Բարյոֆը և նրա գինակիցները թերմիդորյան սեակցիայի և Գիրոկոտորիայի մամանակաշրջանում լիովին վերագնահատեցին 1794 թվականի լույսի բեկումնային անցքերի վերաբերյալ իրենց հայացքները

և դիտակցարար փոխեցին վերաբերմունքը Ռոբեսպիերի նկատմամբ:

Մատիեզը, որ բազմիցս ուսումնասիրել էր Ռոբեսպիերի նկատմամբ բարձրֆականների վերաբերմունքի հարցը, իր հայացքների առավել լիակատար շարադրանքը այդ հարցի կապակցությամբ տվել է 1917 թվականին հրատարակված շատ արժևարար «Բարչոֆը և Ռոբեսպիերը» հոդվածում<sup>17</sup>:

Մատիեզը, այդ հոդվածում հիշեցնելով, որ Բարչոֆը սկսած 1791 թվականից և հետագայում անդամաճանորեն հիացել է Ռոբեսպիերով, միտք է հայտնել, թե իբր Բարչոֆի կողմից թերմիդորի 9-ի հեղաշրջման հավանությունը միայն կիզմավորության տուրք էր ժամանակի պահանջներին: «Անկասկած, Բարչոֆը որպես լրագրող պետք է հաշվի նստեր հասարակական կարծիքի հետ, — գրում էր Մատիեզը, — նա հարկադրված էր II առաջին ֆրեյմսթրի 17-ի իր հիմնադրած թերթում հրատարակել Ռոբեսպիերից և սահմանազատվել վարկաբեկող անունից»: Բայց այն եղանակը, որով նա այդ բանն արեց, «չի գավաճանում Բարչոֆի անկեղծ զգույնություններին»<sup>18</sup>:

Այս կարծիքին համաձայնվել չի կարելի 1794 թվականի սեպտեմբերին Journal de la liberté de la press-ում («Մամուլի ազատության հանդես»), մասամբ նաև «Le tribun du peuple»-ում, որը նրա շարունակությունն էր, լույս տեսած Բարչոֆի հոդվածները ցույց են տալիս, որ Բարչոֆը թերմիդորի 9-ից հետո առաջին ամիսներին, գլուխ շահնելով, ինչպես և շատ շատերը, խիստ խճճված և զսնազան քողորկիչ լռոնեզներով սովորապատված իրադրությունից, ոգշունում էր հուլիսի 27-ի հեղաշրջումը, համարելով այն հեղափոխություն, և գատապարտում Ռոբեսպիերին որպես բռնակալի<sup>19</sup>: Այդ օրերին Բարչոֆի գիրքըրոշումը մոտ էր շատ ուրիշ իտարված կամ խարվող ձախ գեմոկրատներին, որոնք հայած յուզի սեղ էին բնզունում թերմիդորականների գեմագողիկ լուղունգները «բռնակալության դեմ» պայքարի մասին: Շատերի նման Բարչոֆը միամտորեն հավատում էր, որ «բռնակալ եռապետների» անկումով վրա կհասնի ժողովրդի անսահմանափակ ազատությունը: Բարչոֆի հրատարակած ստաջին տպագիր օրդանի վերնագիրն իսկ՝ «Մամուլի ազատության հանդես», դրա պերճախոս վկայությունն է:

Սակայն շուտով, թերմիդորյան հակահեղափոխության զգաստացնող փորձի ներգործության տակ, Բարչոֆը փոխեց իր վե-

րաբերմունքը հուլիսի 27-ի հեղաշրջման նկատմամբ, համապատասխանաբար վերանայեց և իր տված գնահատականը նրա զոհերին՝ Ռոբեսպիերին, Սեն-ժուստին, Կուստոնին և նրանց սեղն ու գիրք հեղափոխություն մեջ: Բարչոֆի կյանքի այդ վերջին, վճռական երկու սարկների զուգափարական էվոլյուցիայի վերլուծությունը չի մտնում տվյալ աշխատության ինչդրի մեջ: Այստեղ ամենարնգհանուր ձևով նշենք միայն, որ «հավասարների» շարժման զուգափարական և քաղաքական ղեկավար գաունայուն գուղրեթաց, Բարչոֆը տվելի վճռականորեն էր փոխում Ռոբեսպիերին և յակորինյան գրկատաուրային սված գնահատականը հօգուտ վերջիններիս:

Ռոբեսպիերին և հեղափոխական ղեկատաուրային արված այս նոր գնահատականը Բարչոֆն արտահայտել է «Le tribun du peuple»-ում հրատարակված մի շարք հոդվածներում<sup>20</sup> և վավերացվել Բուոնարոտի «հավասարների զավագրություն»<sup>21</sup> նշանավոր օրատուության մեջ: Բայց, թերևս, ամենից լավ այն ձևակերպված է 1796 թվականի փետրվարի 29-ին Բոգսոնին ուղղված Բարչոֆի մասնավոր նամակում, որը վերահրատարակվել է XIX դարի վերջին էսպինասի կողմից: «Ես այսօր պետք է խոստովանեմ իմ մեղքը այն բանում, որ ինչ-որ ժամանակ սե լույսի տակ եմ տեսել և՛ հեղափոխական կառավարությունը, և՛ Ռոբեսպիերին, և՛ Սեն-ժուստին, — գրել է Բարչոֆը: Ես համոզված եմ, որ այդ մարդիկ ինքնին սվելի թանկ արժեին, բան բոլոր հեղափոխականները միասին վերդրած, և որ նրանց գրկատաուրական կառավարությունը շափազանց լավ էր մտածված»: Իմ այնուհետև. «...Ռոբեսպիերիզմը գեմոկրոտիա է. այս երկու բառերը լիովին նույնական են»<sup>22</sup>:

Ահա գատողություն, որը հող չի թողնում ստեկոսների և որևէ անորոշության համար:

Ոչ միայն Բարչոֆը, այլև «հավասարների» շարժման մյուս ղեկավարներն ու մասնակիցները թերմիդորյան հակահեղափոխության և «Գիրեկտորիայի բուրժուական գինարբուրի»<sup>23</sup> օրերին կարողացան հասկանալ ու գնահատել Ռոբեսպիերի պատմական վեհությունը: Ալեքսանդր Գոյաեն, «հավասարների զավագրություն» պիսավոր ղեկավարներից մեկը, որը մահապատմի էր ենթարկվել Բարչոֆի հետ միասին, Բուոնարոտի վկայությամբ «վաղ յուրացրեց Ռոբեսպիերի համոզմունքները և բոլոր սովերով նպաստում էր գրանց իրականացմանը. իր կողմից

Մտքեսպիերը հույժ բարձր էր գնահատում նրան»: Ինքը՝ Բուռնարտին Մտքեսպիերին բնորոշում էր որպես «Նշանավոր տառապլայ հանուն հավասարության»<sup>22</sup>, ամբողջ կյանքում հիանում էր նրանով, հարգում էր նրան որպես «մեծ մարդու»<sup>23</sup>:

Բուռնարտին հեղինակն էր առաջին և առավել հեղինակավոր այն կոնցեպցիայի, որը հաջորդական կապ էր հաստատել Բարյոֆի և Մտքեսպիերի, բարյոֆականների և յակոբինյանների միջև: Նա իր աշխատության մեջ ցույց տվեց ոչ միայն անհատական, այլև գաղափարական հաջորդայնությունը նրանց միջև, կարողացավ հիանալիորեն բնորոշել նրանց կողմից խորապես քմբռնված հեղափոխական կառավարության դիկտատորական քաղաքականության առաջադիմական էությունը: Բանավիճելով մտքեսպիերին բանակալության մեջ մեղադրող կեղծ մեղադրանքների դեմ, Բուռնարտին գրում էր. «Մտքեսպիերի բնակալությունը կաշանում էր... նրա իմաստուն խորհուրդների, նրա առաքինության ազդեցության մեջ... նա բնակալ էր վաս մարդկանց համար»<sup>24</sup>:

Այդ նույն գրքում, գնահատելով «հավասարների» շարժման դրական նպատակները՝ Բարյոֆի կողմնակիցների ձգտումը դեպի «ազատության և հավասարության օրենքների» իրականացում, Բուռնարտին գրում էր, որ «Մտքեսպիերն այդպիսի բարեկամության ընկերն էր», դրանով իսկ նրան գիտելով որպես «հավասարների» շարժման ուղղակի նախորդի»<sup>25</sup>:

Մատիեզը սոսկ հետևում էր Բուռնարտի կոնցեպցիային, ընդգծելով հաջորդական կապը ոտքեսպիերիզմի և բարյոֆիզմի միջև: Նա շատ արժեքավոր բան է արել այդ բնագավառում, որոնելով և հրապարակելով մի շարք նոր փաստաթղթեր, որոնք մեկ անգամ ևս ցույց էին տալիս, թե Բարյոֆը և նրա ընկերները որքան բարձր էին գնահատում Մտքեսպիերին, Սեն-ժյուստին և նրանց գլխավորած հեղափոխական կառավարությունը: Բայց Մատիեզը ընդամեն երկակի բնույթի սխալ էր թույլ տալիս: Նախ և առաջ, նա բարյոֆիզմի գաղափարական ակունքները հանդեցնում էր եթե ոչ բացառապես, ապա գերազանցապես ոտքեսպիերիզմին և դրանով իսկ զիջում Բուռնարտիին, նույնիսկ Աղվիլին<sup>26</sup>, որը չէր մեղանշում նման միակողմանիությամբ: Երկրորդ, սոցիալիզմը մոգեռնացնելու և փնտրելու այնտեղ, որտեղ այն չի եղել և չէր կարող լինել, իրեն հատուկ հակմանը համապատասխան Մատիեզը փորձում էր մտցնել Մտքեսպիերի

և Բարյոֆի դիքթորոշումները, Մտքեսպիերին օժտելով սոցիալիստական մարտիկի կամ նույնիսկ կոմունիստի գծերով<sup>27</sup>:

Սովետական պատմական գրականության մեջ, նրա առաջին, սկզբնական շրջանում, XVIII դարի վերջի կոմունիստ-ուտոպիստի կերպարը, բնականաբար, մեծ հետաքրքրություն և ուշադրություն է գրավել: Այդ թեմայի ուսումնասիրությունը որին աշափօրեն հանդեցրել է և բարյոֆիզմի գաղափարական ծագման հարցի պարզաբանմանը: Այս կապակցությամբ ժամանակին բորբոքվել են տաք վեճեր, որոնց ընթացքում ճիշտ մտքերի հետ միասին արտահայտվել են ոչ քիչ թվով խճճված և թյուր կարծիքներ: Այսօր միտք շունի կանգ առնել այդ վեճերի վրա թեկուզև այն պատճառով, որ առավել կասկածելի կամ ուղղակի անձիշտ հիմնադրույթների հեղինակները (Յա. Մ. Զախեր, Պ. Պ. Շչեգոլև) հետագայում իրենք հրաժարվեցին դրանցից, իսկ որ գլխավորն է, այդ ժամանակվանից անցած տասնամյակների ընթացքում այդ վեճերն այնպես հիմնովին մոռացվեցին, որ արդեն ոչ մի ազդեցություն չէին կարող ունենալ սովետական պատմագրության հետագա զարգացման վրա<sup>28</sup>:

Սակայն այդ վեճերից մնաց մի գաղափար, որի համաձայն բարյոֆիզմի ծագումնաբանական կապը հանգում էր բացառապես «Սոցիալական խմբակին» և «կատաղիներին»:

Ճիշտ է, սովետական պատմական գրականության մեջ երկար տարիների ընթացքում պաշտպանվում էր առավել լայն և պատմական ճշմարտությանն անհամեմատ ավելի համապատասխանող տեսակետ բարյոֆիզմի գաղափարական ակունքների վերաբերյալ: «Անցնելով հեղափոխական տարիների դպրոցը, իրենց համարելով յակոբինյանների գործի շարունակողներ, բարյոֆականները հաստատապես յուրացրին հեղափոխական դիկտատուրայի գաղափարը...», — գրում էր ակադեմիկոս Վ. Պ. Վոլգինը<sup>29</sup>: Այդ ձևակերպումը տվյալ հարցի շուրջ հեղինակի հին տեսակետի սոսկ տարատեսակությունն էր: Իհարկե, մեջբերված աշխատության մեջ ևս, ինչպես և նախկիններում, Վ. Պ. Վոլգինը ամենևին էլ հակված չէր բարյոֆիզմի գաղափարական ակունքները հանդեցնել միայն յակոբինիզմին: Նա ընդգծում և ապացուցում էր բարյոֆականների վրա ֆրանսիական նախահեղափոխական մտածողների՝ կոմունիստական տեսության հեղինակներ Մարլիի և Մորելիի, առանձնապես վերջինիս ազդեցությունը: Բայց, արդարացիորեն մասնացույց անելով

այն, որ բաբլոնացիները նրանց աշակերտներն են հղել, վ. 9. Վորգինը միևնույն ժամանակ հիշեցնում էր, որ դա չպետք է հասկանալ նեղ իմաստով. պետք է հաշվի առնել և հաջորդ պատմական փորձը, որը ազդեցություն է գործել Բաբլոնի և նրա ընկերների հայացքների ձևավորման վրա: «Ֆրանսիական հեղափոխությունը շատ բան է սովորեցրել. Մորելիի ոճով տեսարանները 1795 թվականին բաբլոնականների համար միանգամայն անհնարին էր»<sup>30</sup>:

Դժբախտաբար, այդ ճիշտ դատողությունները պատշաճ կերպով հաշվի չէին առնվում տվյալ հարցը շոշափող մի շարք հեղինակների կողմից: Առարկայի պատմական կոնկրետ վերլուծությունը փոխարինվեց «Սուրբ քնտանիքից» Բրունո Բաուերի դեմ Մարքսի հայտնի բանավիճային ֆրագի կրկնվող վկայակոչումներով, որն ակամայից մոռանալ տվեց Մարքսի ու էնգելսի մի շարք այլ դատողություններ այդ նույն հարցի շուրջ: Մասնավորապես, պատշաճ ուղադրություն չէր դարձվում բարուվիզմի գաղափարական ակունքների այլ բնորոշմանը էնգելսի կողմից գրեթե այդ նույն ժամանակ, 1845 թվականին. «...Բաբլոն-Ֆրե և նրա դավադրության մասնակիցները հավասարության վերաբերյալ կատարեցին հեռուն գնացող եզրակացություններ 1793 թ. դեմոկրատիայի գաղափարներից, ինչպիսիք միայն հնարավոր էին այն ժամանակ»<sup>31</sup>: Անկասկած, ինչպես «Սուրբ քնտանիքում» Մարքսի արտահայտած հայտնի դատողությունը, այնպես էլ սա պահանջում է լրջախոճ վերաբերմունք, բայց ոչ ամենևին քաղվածքների ընդհարում:

Բաբլոնականները բուրժուական էլ չեն հղել ժակ Թուի և Վարլեի հոգևոր որդիները և Կլոդ Ֆոշեի ու Նիկոլա դը Բոնվիլի թոռները, ինչպես ստացվում է ըստ ուղղագրած ազգակցության սիրված սխեմայի: Նրանց գաղափարական ծագումնաբանությունը և՛ ավելի բարդ էր, և՛ ավելի ճյուղավորված:

Այդ հարցի մանրամասն քննարկումը մեզ կշեղեր հիմնական թեմայից: Սակայն նախկինում ամբողջ ասվածի հիման վրա անվիճելի է Թոբեսպիերին և առհասարակ ռոբեսպիերական ուղղության յակոբինյաններին Բաբլոնի գաղափարական նախորդների թվում դասելը:

Ասենք, ավելի պարզ ու որոշակի, քան ցանկացած պատմական հետազոտություն, այդ հարցը լուսաբանեց տվյալ հարցում առավել հեղինակավոր հեղինակը՝ ինքը Գրակոս Բաբլոն-Ֆրե:

Ռոզոտին 1796 թվականի թվակիր՝ նախկինում մեջբերված նամակում Բաբլոն-Ֆրե գրում էր. «Ծն շեմ գտնում ապաքաղաքական ու ավելորդ, ինչպես և դու, Թոբեսպիերի և Սեն-ժյուստի աճյունի ու սկզբունքների վերականգնումը հիշողության մեջ մեր վարդապետությունն ամրապնդելու համար: Մենք ամենից առաջ դրանով լուրջ արժանին ենք հատուցում մեծ ճշմարտությունը... Այդ ճշմարտությունն այն է, որ մենք սոսկ ֆրանսիական հեղափոխության երկրորդ Գրակոսներն ենք... որ մենք սոսկ հետևում ենք ժողովրդի առաջին ազնվաբարո պաշտպաններին, որոնք գեռես մեզանից առաջ են գրել ժողովրդին ոգեվորող արդարության ու երջանկության նույն նպատակը»<sup>32</sup>:

\* \* \*

Եվ այսպես, Թոբեսպիերը, որ սպանվել և զրպարտվել էր թերմիդորականների կողմից, այնուամենայնիվ, վերջնականապես մեղցված չէր:

Նրա կորստից երկու տարի անց նրա սովերը վեր հաննեց Բաբլոնի ու Դարտեի ուսերից, և «Հավասարների» արտասանած նոր խոսքում, որն իրենից ներկայացնում էր անցյալի ու ապագայի ձայների համաձուլվածքը, բացահայտորեն տարբերվում էր և Մարքսի իրան Թոբեսպիերի խուլ ձայնը:

Բայց 1797 թվականի գարնանը Բաբլոն-Ֆրե ու Դարտեն, ինչպես և ավելի առաջ Թոբեսպիերը, մահապատժի ենթարկվեցին այդ նույն թերմիդորականների կողմից: Լեհակցիան ուժեղանում էր: Թերմիդորի 9-ից ի վեր երեսունհինգ տարվա ընթացքում Ֆրանսիայի քաղաքական պատմությունը շեշտակիորեն շրջվեց մի ուղղությամբ, դեպի այ՝ թերմիդորյան Կոնվենտ, Դիրեկտորիա, Կոնսուլություն, կայսրություն, Բուրբոնների վերահաստատված միապետություն: Այս փուլերը ցույց էին տալիս հանրապետական թերմիդորականների բուրժուական հակահեղափոխությունից մինչև Լյուդովիկոս XVIII-ի ռոյալիստների ֆեոդալական հակահեղափոխության էվոլյուցիան:

Անընդհատ աճող քաղաքական ռեակցիայի այդ տարիներին ամենևին չէին խոսում հեղափոխության, հետևաբար և նրա հերոսների մասին, կամ խոսում էին միայն վատը: Դիրեկտորիայի շրջանում լիտիաբար ծանակում էին հեղափոխությունը

(նա նկատի ունեւմ նրա բարձրագույն, յակոբքինչան փուլը)։ Նապոլեոնի ժամանակներում այն Ֆրանսիայի պատմութիւնից ջնջվեց ոստիկանական շրջաբերականով, նրա մասին չէին համարձակվում հիշել նույնիսկ շրջակայքում, նույնիսկ նեղ շրջանում, կուրդիկոս XVIII-ի և Կառլոս X-ի՝ մահապատժի ենթարկված թագավորի եղբայրների ժամանակներում, հեղափոխութեան վրա վերականգնված գահի բարձունքից անեծքներ էին թափվում և տարածվում բոլոր խաչմերուկներում։

Ռոբեսպիերը՝ հեղափոխութեան հերոսական դարաշրջանի ամենահիանալի ներկայացուցիչը, ամբողջովին բաժանում էր նրա ճակատագիրը։ Կարող էր թվալ, որ նրա համահարկ թշնամիները՝ հեղափոխութեան թշնամիների քանքերով նրա անունը կջնջվի ժողովրդի հիշողութիւնից։

Հեղափոխութեան առաջին հուշագիրները և պատմագիրները, ինչպիսին Սիեյեսն էր<sup>33</sup>, Գիրեկտորիայի տարիներին գրիչ վերցնելով, որպեսզի վրեժխնդիր լինեն տեւորի օրերին իրենց ապրած վախի ու ստորացման համար, իրենց գլխավոր խնդիրն էին համարում սեպտեմբր 17-ի համարում էին բոլոր «հանցագործութիւնների» համարյա թե միակ մեղավորը. հակահեղափոխական տեւորի օրերին այդպես սկսեցին անվանել հեղափոխական տեւորը։

Կոնսուլութեան և կայսրութեան տարիներին նույնիսկ դա էլ վերջացաւ։ Ռոբեսպիերին նույնիսկ չէր էլ կարելի հաշտելու նախկին հրետանային կապիտանը, որին հովանավորում էին Կոնվենտի կոմիսարներ Օգյուստեն Ռոբեսպիերը և Սալիշետին, հուշակվելով կայսր Նապոլեոն, հրամայեց մոռացութեան տալ նրանց, ում հետ էին կապված նրա առաջին հաջողութիւնները կյանքի ճանապարհին։

Ռեստավրացիան խախտեց այդ գերեզմանային լուսթիւնը, բայց միայն այն նպատակով, որպեսզի ցեխ ու զրպարտութիւն շարտվի հեղափոխութեան և նրա մասնակիցների երեսին։ Բոնապարտի, Շատոբրիանի<sup>34</sup> և մյուս ազնվականական-կղերական պատմաբանների ու հրապարակախոսների խզրոցները ստակ լուտանք էին հեղափոխութեան և նրա առաջնորդների դեմ։ Ատեւութիւնն այնպես էր կուրացրել այդ գրողներին, որ հեղափոխութեան ամբողջ պայծառ, բազմերանգ կտավը նրանց պատկերմամբ համատարած սև գույնով էր երևում։ Այդ պատճառով էլ Ռեստավրացիայի ժամանակաշրջանի ազնվական գաղափար

բախտանքի և հրապարակախոսների բազմութեան մեջ (իսկ նրանցից ոմանք, թեկուզև այդ նույն Շատոբրիանը, զուրկ չէին տաղանդից) չգտնվեց անցած դարաշրջանի և ոչ մի խոշոր պատմաբան։

Բայց այն ժամանակ, երբ քաղաքական էվոլյուցիան դեպի աջ հասավ մինչև իր տրամաբանական վախճանին՝ մինչև ուլտրաուլտիստների տիրապետութիւնը և տարագիրների վարձատրութեան օրերը, այն ժամանակ, իսկ խորաթափանց դուրսների համար դեռ ավելի վաղ, ակներև դարձավ, որ ինչպես էլ յնդեզներ ազնվականական-կղերական ուսուցիչան, նա ի վիճակի չէր հետ շրջել պատմութիւնը և կասեցնել երկրի այն տոաջընթաց զարգացումը նոր, կապիտալիստական ուղիով, որը յարթեց ֆրանսիական առաջին հեղափոխութիւնը։

Մասամբ զը Ստալի «Ռատողութիւններ ֆրանսիական հեղափոխութեան մասին» աշխատութիւնը, իսկ այնուհետև արդեն լիովին պարզորոշ Մինիեի և Տիերի<sup>35</sup> պատմական երկերը, որոնցում ընդհանուր առմամբ վերականգնվում էր հեղափոխութեան նշանակութիւնը, ներկայացնում էին ամառ, ամբապընդված և լիիրավ իշխանութեան հավակնող լիբերալ բուրժուազիայի տեսակետը։

Ռեստավրացիայի շրջանի բուրժուական պատմաբանների աշխատութիւններին ընդհանուր նշանակութիւնը, և մասնավորապես նրանց վերաբերմունքը հեղափոխութեան նկատմամբ, այնքան է պարզաբանված մարքսիստական գրականութեան մեջ, որ հարկ չկա դրա վրա կանգ առնել։ Բայց պետք է նշել, որ ինչպես Ստալի, այնպես էլ ավելի ուշ Մինիեի ու Տիերի համար, որոնցից յուրաքանչյուրն իր շարժումներով պաշտոնական ճառեր էր արտասանել հօգուտ հեղափոխութեան, Ռոբեսպիերն, իհարկե, ոչ թե պաշտպանյալների թվում էր, այլ մեղադրյալների սթոտին։

Դը Ստալն, իր «դատողութիւններին» միախառնելով ազոտ հիշողութիւններ ստեղծագործական երևակայութեամբ կերպարանափոխված երիտասարդական տարիների մասին, ստեղծեց Ռոբեսպիերի ամենից ավելի ազնվազնված դիմանկարներից մեկը<sup>36</sup>։ Մինիեն պատրաստ էր իր դեմոկրատական համակրանքը

\* Թվում է, թե նա առաջինն էր, որ ստեղծեց առասպել կանաչ գույնի մտին (նա գրել է Ռոբեսպիերի կոպերի կանաչ գույնի մասին), որը հետո

հասցնել մինչև Գանտոնի ժառանգութեաննեքի ճանաչումը, որը նրան պատկերանում էր որպես «աժդահա՝ հեղափոխականների մեջ»: Բայց Ռոբեսպիերի նկատմամբ նա նողկանք ու ատելություն էր տածում՝ նրան համարում մի մարդ, որն ամբողջապես տիրապետում էր այն ամենին, ինչ հարկավոր էր բռնապետության համար, որը սարսափելի գեր էր խաղացել հեղափոխության մեջ<sup>27</sup>: Տիեզեր, որ երիտասարդական տարիներից բնազդորեն հարգանք էր տածում գործադիր իշխանության ամեն կարգի հեղինակավոր ներկայացուցչի հանդեպ (հիշենք Մարքսի դատողությունն այն մասին, թե ինչպես էր նա նապոլեոնի «ճտքակոշիկը մաքրում») իր «Կոնսուլության և կայսրության պատմության» մեջ), Ռոբեսպիերի նկատմամբ ավելի մեծ զսպվածություն գրսեորեց, քան այն ժամանակ նրա եղբայրակից Մինիեն: Սակայն նա ևս, իհարկե, անվիճելիորեն մնում էր Ռոբեսպիերի թշնամին:

Այստեղով անցնում էր այն սահմանագիծը, որը լիբերալ բուրժուազիային բաժանում էր գեմոկրատական բուրժուազիայից, նրանից ձախ կանգնած դասակարգերից:

«Ճանաչելով» ֆրանսիական հեղափոխությունը և, զեռ ավելին, իր «ձախացման» տարիներին հեղափոխության հռազուն գրոշը բարձրացնելով որպես իր մարտական գրոշ, լիբերալ բուրժուազիան ընդունում էր ոչ թե ամբողջ հեղափոխությունը, այլ միայն մինչև որոշակի սահման՝ մինչև ներառյալ ժիրոնդան, իսկ որոշ հեղինակներ՝ մինչև Գանտոնը: Ռոբեսպիերը մնում էր հակադիր կողմում, այնտեղ, ուր շարժման աշխարհը բաժանվում էր բարության աշխարհից:

Սահմանազատման գիծը ուրվագծվում էր կտրուկ և որոշակի. հեղափոխության մեջ ֆրակցիաներն ու խմբավորումները սկսած ժիրոնդիստներից և մինչև Գանտոնը ներառյալ՝ լիբերալիզմի համար ընդունելի քաղաքական ժառանգություն է. Ռոբեսպիերից սկսած և նրանից ձախ խմբավորումները գեմոկրատիայի լագերի քաղաքական նախորդներն են:

այդպես ուճացրել և օգտագործել է Կարլայլը (T. Carlyle. The French Revolution. London, 1838): Բայց պետք է նշել, որ բացահայտ տեսությունն արտահայտելով Ռոբեսպիերի նկատմամբ, նա խոստովանում էր, որ հեղափոխությունը ծնված բոլոր անուններից միակը, որը կպահպանվի՝ դա Ռոբեսպիերի անունն է:

Եթե Ռոբեսպիերի նկատմամբ լիբերալ բուրժուազիայի ներկայացուցիչներն իրենց վերաբերմունքն այդպես անհաշտ թըռնամանքով էին բնորոշում «ձախացման» ժամանակ, Ռեստավրացիայի տարիներին, երբ բուրժուազիան զեռ երազում էր տիրապետության նվաճելու մասին, ապա 1830 թվականի բուրժուական հեղափոխությունից հետո, որն իր մի մասին՝ դրամական արիստոկրատիային մասնակից էր դարձրել իշխանությանը, ապա 1848 թվականի հեղափոխությունից ու Երկրորդ հանրապետության փորձից հետո այդ տրամադրություններն էլ ավելի ամրապնդվեցին:

Ալֆոնս դը Լամարտինը «Histoire de girondins» բազմատոր արձակ բանաստեղծության մեջ իզեպականացնելով ժիրոնդան<sup>28</sup>, իհարկե, թշնամանքով էր տրամադրված Ռոբեսպիերի նկատմամբ: Բայց, իր ողջ քաղաքական արատներով հանդերձ, Լամարտինը տաղանդով և գեղարվեստական ընկալման ձիրքով օժտված բանաստեղծ էր: Ուստի նա չէր կարող չզգալ Ռոբեսպիերի պատմական վեհությունը: Պատկերելով նրա գերը հեղափոխության մեջ որպես շարագույժ և կործանարար, թիպետե սոսկ անձնական մղումներով, Լամարտինն այնուամենայնիվ խոստովանում էր, որ «Ռոբեսպիերով և Սեն-ժյուստով ավարտվեց Հանրապետության մեծ ժամանակաշրջանը: Սկսվում էր հեղափոխականների երկրորդ սերունդը: Հանրապետությունը ողբերգության բարձունքից գահավիժեց մինչև բանասարկություն...»<sup>29</sup>:

Բայց տասնհինգ տարի անց, 1848 թվականի հեղափոխության փորձություններից հետո, ուր նա այնքան անփառունակ գեր խաղաց, Երկրորդ հանրապետության տարիներին դասակարգային պայքարի դասերից հետո փորձով իմաստնացած Լամարտինը 1861 թվականին հանդես եկավ իր իսկ «Histoire de girondins»-ի քննադատությամբ: Եվ վերողառնալով այդ աշխատության մեջ Ռոբեսպիերի գնահատականին, Լամարտինը, արդեն ոչ որպես բանաստեղծ, այլ ժամանակավոր կառավարության նախկին մինիստր, մտքրեց էական ուղղումներ. «Ես այսօր միգուցե ավելի խիստ կլիների (Ռոբեսպիերի գնահատման շարքում:— Ս. Մ.), քանի որ ևս 1848 թվականին տեսել եմ նրա սովելը փողոցներում»<sup>30</sup>: Լամարտինի գրչի տակից դուրս պրծած այս խոսքերի մեջ է հենց նրա, և ոչ միայն նրա, այլև

ամբողջ բուրժուազիայի հետզհետե սաստկացող թշնամանքի գաղտնիքը Ռոբեսպիերի նկատմամբ 1848 թվականից հետո:

Տարօրինակ բան է, բանական կլիներ ենթադրել, որ որքան տասնամյակներն ավելի էին հեռանում ահեղ 93 թվականից, այնքան պետք է հանդարտվեին կրթերը, պետք է սառչեր շարությունը, անձնական անբարյացակամությունը կամ թշնամանքը-ամեն ինչ մեղմացնող ժամանակը թվում է թե պետք է հանգցըներ այդ բուռն դարաշրջանից մնացած հուզումների, մոլությունների կրակը:

Բայց իրականում ամեն ինչ այլ էր: Ոչ միայն խոշոր բուրժուազիային ներկայացնող պատմաբանները, այլև իրենց քաղաքական հայացքներով, մասժողովյան բնույթով, հասարակական իդեալներով բացահայտ մանրբուրժուական մի շարք հեղինակներ, ինչպես օրինակ, Միշլեն կամ էդգար Կինեն, կամ ոչ ֆրանսիական հեղինակներից Թոմաս Կարլեյլը, Ռոբեսպիերի մասին գրում էին դժվար բացատրելի գրգռվածությամբ ու շարությամբ<sup>41</sup>: նրանց համար ևս բարու ու շարի տարանջատման գիծը XVIII դարի Մեծ հեղափոխության պատմության մեջ մնում էր անաշին անգամ Միկեի կողմից գծված որոշակի սահմաններում՝ այն ամենը, ինչ ընդունելի էր, ավարտվում էր ժիրոնդիստներով ու Դանտոնով. այնուհետև Ռոբեսպիերից սկսվում էր սոցիալական շարիքի սարսափելի աշխարհը:

Իսկ եթե դիմելու լինենք մի այնպիսի պատմաբանի, ինչպիսին է Հիպոլիտ Տենը, որը հեղափոխության մասին գրել է նրա սկզբից գրեթե հարյուր տարի անց<sup>42</sup> և, այսպիսով, արդեն անցել Փարիզի կոմունայի փորձով, ապա նա պարզորոշ կերպով դրսևորում է թշնամանքի ինչ-որ այլ շափանիչ հեղափոխության նկատմամբ ընդհանրապես և Ռոբեսպիերի նկատմամբ մասնավորապես: Դա արդեն ոչ թե հակակրանք էր, ոչ թե շարություն, այլ ինչ-որ մոլեգնություն, ատելություն, դաժանություն՝ զոստավորված գրական ձևերով, որոնց կատաղության ծայրահեղ լարվածությունը տալիս էր անգամ արտաքին փայլ:

Բայց ախր ինչո՞ւմն էր բանը: Ո՞րն էր Ռոբեսպիերի նկատմամբ բուրժուազիայի և նրա պատմաբանների շահագրգռող ատելության աղբյուրը: Ինչո՞ւ նա, բուրժուազիան, ընդունում էր ժիրոնդիստներին ու Դանտոնին և վրդովմունքով մերժում Անկաշառին:

Ծթե խորամուկս լինենք այն փաստարկումների մեջ, որոն-

ցով հիմնավորվում էր Ռոբեսպիերի բացասական գնահատականը, ապա դրանք բուրժուական հեղինակների մեծամասնությունն մոտ խիստ նման էին:

Ռոբեսպիերի վրա կրակում էին գլխավորապես բարոյական և էթիկական դիրքերից. նրան մեղադրում էին այն բանում, որ նա դաժան էր, փառասեր, արյունարբու, իշխանատենչ, որ նա շատ մարդկանց կործանեց, բռնակալ էր ու քմահաճ: Ոմանք սրան ավելացնում էին զեղազիտական մերկացման տարրեր՝ նա ցածրահասակ էր, ձայնը խուլ, դեմքի գույնը՝ տիկին գր Ստալի ստեղծած լեզենդի համաձայն, կանաչ և այլն:

Բայց այս բոլոր փաստարկների կեղծիքն ու սնանկությունը լիովին ակներև է դառնում, հենց որ խոսք է լինում այն դարաշրջանի մեկ ուրիշ նշանավոր գործչի՝ Նապոլեոն Բոնապարտի մասին: Ռոբեսպիերի դեմ հարուցված բարոյական և էթիկական կարգի բոլոր մեղադրանքներն անհամեմատ ավելի մեծ հիմքով կարող էին հասցեագրվել նրան: Բոնապարտն իրականում և՛ փառասեր էր, և՛ դաժան, և՛ իշխանատենչ, և՛ կործանեց մեծ թվով մարդկանց, և՛ Ֆրանսիայի ու Նվրոպայի կեսի բռնապետն էր: Վերջապես, նա նույնպես կարճահասակ էր, նրա դեմքի գույնն էլ անառողջ էր, ինչպես ականատեսներն էին վկայում: Բայց Բոնապարտը, ինչպես հայտնի է, բուրժուազիայի և նրա պատմաբանների շրջանում ոչ թե շարություն ու ատելություն էր հարուցում, այլ հիացմունք: Հետևաբար, Ռոբեսպիերի դատապարտումը բարոյաէթիկական առումով լոկ երկերեսանություն էր, նրա նկատմամբ բուրժուազիայի թշնամանքի իսկական պատճառները թաքցնող դիմակավորում:

Այդ հարաճուն թշնամանքի աղբյուրի մեկնությունը պարունակվում էր Համարտինի 1861 թվականի ինքնաքննադատությունից՝ արդեն վերևում բերված խոսքերի մեջ:

Ռոբեսպիերը բուրժուազիայի աչքում եղել է և մնացել հեղափոխական ղեմոկրատիայի մարմնացումը: Բուրժուազիայի պատկերացման մեջ նրա անունը միշտ կապվում էր հեղափոխական ղեմոկրատիայի հետ, որը պաշտօրի էր ելել, տիրաբար միջամտում էր կյանքին, լի էր հեղափոխական ժողովրդի անսունձելի եռանդով:

Միրաբոն, Ֆելյանները, ժիրոնդիստները բառի բուն իմաստով բուրժուազիայի տարրեր խմբերի ներկայացուցիչներն էին, և նրանց քաղաքականությունը հեղափոխության բոլոր

փուլերում միշտ մնում էր հասարակութեան բուրժուական վեր- նախափերի քաղաքականութիւնը: Գանտոնը ներկայացնում էր այդ խմբերի հետ կոմպրոմիսի, համաձայնութեան քաղաքականու- թիւնը. նրա հանրաճանաչութիւնը սրպես ժողովրդական տրի- բունի նրան սոսկ ավելի մեծ դին էր տալիս:

Քեկ Ռորեսպիեբը, ինչպես խոստովանում են բուրժուական բոլոր հեղինակները, սլ թե ժողովրդի, այլ բուրժուագիւյի ծո- ցից ելած մարդ էր, այնուամենայնիվ, չէր պաշտպանում բուր- ժուագիւյի վերնախավի շահերը, այլ պայքար էր մղում նրա դեմ, հենվելով ժողովրդի վրա և հանուն ժողովրդի շահերի: Կինեն այդպես էլ ուղղակի գրում էր, որ Ռորեսպիեբը, ժիրոն- դայի անկումից հետո, սկսեց ժողովրդին գծտեցնել բուրժուա- գիւյի հետ<sup>35</sup>:

Դա յիովին բովական էր, որպեսզի անշեջ առելութիւն սուա- ջանա Անկաշտոի նկատմամբ:

Բայց բուրժուագիւյն, տիրելով իշխանութեանը, որքան ավելի էր սուր պայքարի մեջ մտնում ժողովրդի և նրա ավանգարդի՝ պրոլետարիատի դեմ, այնքան նրա թշնամանքը Ռորեսպիեբի նկատմամբ, բնականաբար, ավելի էր աճում:

1848 թվականին Փարիզի պրոլետարիատի հունիսյան սպա- տամբուլումից, իր ամենատարափելի կերպարանքով քաղա- քացիական պատերազմից, աշխատանքի և կապիտալի պատե- բազմից հետո<sup>36</sup>, այսպես կոչված լիբերալ բուրժուագիւյն իր էվոլյուցիայի մեջ ես մի քայլ կատարեց դեպի աջ: Եվ կամար- տինը, հունիսյան ողբերգութեան ամենաանմիջական մեղավոր- ներից մեկը (հիշենք Մարքսի խոսքերը. «...կամարտինի հրա- մառութիւնը վերածվեց կավենյակի Նրկիզող հրթիռների»<sup>36</sup>), որոնք արտահայտեցին բուրժուագիւյի նոր հակահեղափոխա- կան երրորդութիւններից մեկը), խոստովանում էր, որ այն բա- նից հետո, երբ նա Ռորեսպիեբի ստվերը տեսավ 48 թվականի փարիզյան փողոցներում, ավելի խիստ կրատեր նրան: Դա կա- մարտինի՝ պոետի, պատմաբանի, մինիստրի անձնական դատը չէր, գա բուրժուագիւյի դատակարարչին դատն էր:

Բայց 1848 թվականի հունիսյան սպատամբութեանը հաջոր- դեց 1871 թվականի Փարիզի կոմունան և կամարտինի՝ մաղձով գրված ակագեմիական ճշգրտումներին՝ ակադեմիկոս Հիպոլիտ Տենի հրապարակային լուստանքի սահմանադրում կանգնած պակվիլը հեղափոխութեան դեմ:

Հարչուրամյակի ընթացքում ազնվականական և բուրժուա- կան պատմագրութիւնը պարսավում էր Ռորեսպիեբին և սևաց- նում նրա հիշատակը՝ վտարելով նրա անունը ֆրանսիական փառքի պատմութիւնից: Նա ուզում էր նրանից քնդմիշտ հեռու պահել ժողովրդին...

Իսկ ի՞նչ է հակադրվել այդ ջանքերին:

Վաղուց մահապատժի ենթարկված ու զրպարոված Ռորես- պիեբն արդյոք շարունակո՞ւմ էր ապրել ժողովրդի գիտակցու- թեան մեջ և ազդեցութիւն գործել նրա պայքարի վրա: Վ. Ի. Լենինը գրում էր. «...Ֆրանսիական հեղափոխութիւնը, որին թեև ջախջախեցին, այնուամենայնիվ հաղթեց, որովհետև նա ամբողջ աշխարհին ավելի բուրժուական դեմոկրատիայի, բուր- ժուական ազատութեան այնպիսի հիմքեր, որոնք արդեն ան- հաղթահարելի էին»<sup>36</sup>: Լենինյան այս հիանալի մտքերը, որ այն- բան կարեւոր են նոր ժամանակի ամբողջ պատմութեանն ըմբռո- նելու համար, շատ բան են տալիս և մասնավոր հարցը՝ Մարքսիմիլիան Ռորեսպիեբի հետամահու ձակատագիրը հասկա- նալու համար:

Ամեն անգամ, երբ պատմական զարգացման պահանջները ստիպում էին Ֆրանսիական մեծ հեղափոխութեան առաջագրած ինչպիսիներն «իրականացնել մաս առ մաս», ժողովրդի հիշողու- թեան մեջ օրինաշարներն վերակենդանանում էր նրա ամենա- նշանավոր գործիչներից մեկի՝ Մարքսիմիլիան Ռորեսպիեբի կերպարը:

Այդ մասին կարելի էր գատել ո՛չ միայն ըստ պրակտիկ գործունեութեան տարբեր ձևերի՝ հեղափոխական-հանրապետա- կան շարժման վերածննդի, ընդհատակյա հեղափոխական խրմ- բրի ստեղծման և այլն: Այդ մասին էին վկայում ուղղակի կամ անուղղակի Անկաշտոին նվիրված պատմական աշխատութիւն- ները, որոնց երևան գալն իսկ նաև խորապես օրինաշար էր:

Ֆրանսիայում երկրորդ հեղափոխութեան՝ 1830 թվականի բուրժուական հեղափոխութեան նախօրերին մեկը մյուսի հետևից լույս տեսան Բուռնարտիի և Լեասերի հուշագրութիւնները<sup>37</sup>:

Բուռնարտիի նշանավոր «հավասարների զավագրութեան» մասին գիրքը, ինչպես արդեն ասվել է, տաշին անգամ Բարչոֆի մահապատժից հետո Ռորեսպիեբին բացահայտորեն հուշակեց որ-

պես հեղափոխության մեծագույն գործիչը Լիասերը՝ 93 թվականի երկամյա կոփվածքի տեր յակոբինյանը, որին ոչ թափառումները, ոչ հալածանքները շատիպեցին զուլս խոնարհել, ձախորդության տարիներին հպարտության մեջ էր հիշում մեծ դարաշրջանի մարդկանց և նրանց մեջ առաջինին՝ Անկաշառին<sup>48\*</sup>։

Երբորդ հեղափոխության՝ 1848 թվականի հեղափոխության և երկրորդ հանրապետության նախօրերին Ռոբեսպիերը փառաբանվեց Բյուշեի և Լուի Բլանի՝ բնույթով ու նշանակությամբ տարբեր աշխատություններում։

Բյուշեն՝ սենսիմոնական դպրոցի ինքնատիպ քրիստոնյա սոցիալիստը, հունիսյան միապետության օրերին Ռուի հետ միասին ձեռնամուխ եղավ Քրանսիական հեղափոխության դարաշրջանի վավերագրական նյութերի (գրեթե բացառապես քաղաքական բովանդակության) համակողմանի հրապարակմանը<sup>49</sup>։ Այդ հրապարակումը պահպանում է որոշակի գիտական արժեք նաև մեր օրերում։ Բայց այն ժամանակվա համար նրա լույս ընծայումը խոշոր իրադարձություն էր։ Քաղաք-բուրժուազի բազմաքանակ թագավորության, շնչին և ստոր բանասարկությունների, կոպեկանոց ժլատության և մանր շահագիտական հաշիվների տարիներին Բյուշեի և Ռուի կողմից հրատարակվող հատորների էջերից հանկարծ խոսել սկսեցին բուրժուազիայի այլ ձայներ՝ երիտասարդ ու հզոր, որ ձայնակցում էին հեղափոխական փոթորկի ամպրոպներին, հաննեցին միանգամայն այլ, ասես բրոնզաձուլյ կերպարներ, «ցիվիլիզմի հսկաների» կերպարներ, ինչպես իր ժամանակին ասում էր Ա. Բ. Գերցենը։

Բյուշեն հեղափոխության ամենահիանալի արարիչներ համարում էր յակոբինյաններին, իսկ յակոբինյանների մեջ ամենահիանալին՝ Ռոբեսպիերին։ Եվ նա իր հրատարակչությունն առաջին հերթին նույնպես նվիրեց նրանց առջև։ Առաջին անգամ, թերմիդորից քառասուն տարի անց, Ռոբեսպիերի ձայնը նորից հրնչեց Ֆրանսիացիների նոր սերնդի համար, որը շուտով պետք է ստեղծեր երկրորդ հանրապետությունը։ Եվ իհարկե, հանրապետականների այդ նոր սերնդի համար անհամեմատ պերճախոս

էին հենց իր՝ Ռոբեսպիերի ձայնը, քան թե խմբագիր Բյուշեի հիացական, բայց ծայր աստիճան խառնաշփոթ մեկնաբանությունները։

Լուի Բլանը, որը փեսովարյան հեղափոխությունից երկու տարի առաջ սկսեց հրատարակել իր տասներկուհատորանոց «Ֆրանսիական հեղափոխության պատմությունը», իր աշխատության մեջ հանդես եկավ որպես Ռոբեսպիերի խանդավառ շատագույժ։ Բայց Լուի Բլանը իր աշխատության հիմնական մասը գրեց արդեն 1848 թվականի հեղափոխությունից հետո<sup>50</sup>։

Հարկավոր է խոստովանել, որ Ռոբեսպիերին Լուի Բլանի տված կարեկցական գնահատականը, ինչպես և նրա աշխատությունը ամբողջությամբ վերցրած, իր ժամանակի համար անօգտակար չէին։ Բանավիճելով Միշլեի, Տիերի, Լամարտինի և մյուս պատմաբանների հետ, Լուի Բլանը Ռոբեսպիերին պաշտպանում էր նրանց հերյուրանքներից և դրանում մեծ մասամբ իրավացի էր։

Իհարկե, դա չէր նշանակում, թե «Աշխատանքի կազմակերպումը» գրքի հեղինակը, մանրբուրժուական սեֆորմիստը, «համաձայնողականության» նախահայրը, ինչպես 1917 թվականին Վ. Բ. Լենինը բնորոշել է նրա քաղաքականությունը<sup>51</sup>, դարձավ հեղափոխական տեղորի դարաշրջանի իսկական յակոբինյան։ Ամենին էլ ոչ։ Լուի Բլանը, որքան էլ նա ձգվեր ոտնաթաթերի ծայրերին, որքան էլ ջանար, չէր կարող հասնել Անկաշառին։ Քաղաքականության, 1848 թվականի հեղափոխության մեջ Լուի Բլանը և նրա բնկերակիցները մանրբուրժուական համաձայնողականների միջավայրից, որոնց տականքները հետագայում իրենց հաշակեցին «նոր լեռ», 93 թվականի իսկական յակոբինյաններից փոխ էին առել միայն նրանց հետտրոական ոճի արտաքին գծերը։ Բայց նրանց զորեզ, սակայն ժլատ խոսքերին ուղեկցում էին է՛լ ավելի զորեզ գործողությունները։ Լուի Բլանի, Լեդրյու-Ռոլենի, «նոր լեռան» հերոսների զբնդուն ձուռմարանությունը լոկ բողարկում էր գործողությունների բացակայությունը. նրանք հեղափոխական, գոտակարգային պայքարի քաղաքականությունից հրաժարումը փոխարինեցին գոտարկախոսությամբ։ Դա միայն իսկական Լեռան գերի խղճուկ ծաղրանմանությունն էր, 1848 թվականին 1789—1793 թվականների սղրերգության խեղկատակային կրկնորգության դիպվածներից մեկը, ինչպես դա փայլուն կերպով ցույց է տվել Մարքսը իր

\* Այս կապակցությամբ հարկ է հիշեցնել, որ Մարքսը մեծ ուշադրություն էր ցուցնում և խնամքով է ուսումնասիրել և նույնիսկ կոնսպեկտավորել Լեռանի հուշագրությունները (Տե՛ս Маркс К. и Энгельс Ф. Соч., т. III, с. 599—611)։

նշանավոր «Լուսի Բոնապարտի բրյուսների տասնութը»<sup>52</sup> աշխատություն մեջ:

Լուսի Բլանն իր «Ֆրանսիական հեղափոխության պատմությունը» սկսել է մինչև 1848 թվականի փետրվարը և այն ավարտել լոնդոնյան վտարանդիության մեջ, 1862 թվականին: Քաղաքականությունը նրա զբաղմունքը, երբ նա Երկրորդ հանրապետության իրական կյանքում խաղում էր խզճուկ, խեղդատակի գեր՝ նմանակելով Ռոբեսպիերին և նրա զբաղմունքը պատմության մեջ, երբ նա իրականությունից վտարել էր Առաջին հանրապետության հերթի ողբերգական աշխարհը՝ նկարագրելով Ռոբեսպիերի կյանքը, այնպես սերտորեն միահյուսվեցին միմյանց, որ առաջինը չէր կարող չազգել երկրորդի վրա:

Այն «թուլությունը, անկայունությունը, բուրժուազիայի նկատմամբ ունեցած դուրահավաստությունը», որոնցով Վ. Ի. Լենինը բնորոշել է Լուսի Բլանին որպես մանրբուրժուական քաղաքագետի<sup>53</sup>, որոշ չափով հատուկ էին նրան և որպես պատմաբանի, թեև որպես պատմաբան նա շատ ավելի ուժեղ էր, քան քաղաքագետ: Նրա ամբողջ երկր ներքուստ խորապես հակասական էր: Փառարանելով Ռոբեսպիերին և արգարացնելով նրա գործողությունները, միևնույն ժամանակ Լուսի Բլանը խիստ նվազեցնում էր Լեոն և Ժիրոնդայի միջև եղած տարաձայնությունների խորությունը ու, թեպետև բաղժամբով վերապահումներով, այն միտքն էր ներշնչում, թե որքան օգտակար կլինեին նրանց հաշտվելը: Այնուհետև Լուսի Բլանը իր ամբողջ երկի մեջ անվերապահորեն հավանություն էր տալիս Ռոբեսպիերի քաղաքականությանն ու գործողություններին. նա Ռոբեսպիերի փառարանողն էր:

Այնինչ Ռոբեսպիերի քաղաքականության մեջ ամենևին էլ ոչ ամեն բան էր հավանության արժանի: Ռոբեսպիերը ուժի մեջ թողեց և Շապելյեի հակաբանվորական օրենքը, նա պաշտպանում էր մաքսիմալի տարածումը նաև բանվորների աշխատավարձի վրա, չէր հասկանում բանվորների շահերն ու կարիքները, անտարբեր էր նրանց պահանջների նկատմամբ: Նույնպիսի անտարբերություն էր ցուցաբերում գյուղական շքավորության հանդեպ. նա ոչինչ չարեց նրանց դրությունը բարելավելու համար. նա հարվածներ էր հասցնում ոչ միայն հանրապետության թշնամիներին, այլև հեղափոխության մեջ ձախ խմբա-

վորումների ներկայացուցիչներին՝ «կատաղիներին», այնուհետև Շոմետին:

Ես այստեղ թվարկում եմ Ռոբեսպիերի քաղաքական կենսադրության սոսկ մի քանի փաստեր ու գծեր, որոնցում պարզորոշ նկատվում էին նրա հակասականությունն ու թուլությունը որպես բուրժուական մեծ, բայց այնուամենայնիվ բուրժուական հեղափոխականի: Հետևել Ռոբեսպիերի օրինակին, հետևել յակոբինիզմի ավանդույթներին պատմական նոր պայմաններում, երբ դասակարգային պայքարի ասոլարեզ դուրս եկավ պրոլետարիատը, սուսվազն նշանակում էր յակոբինիզմի փորձի անբըննազատ կրկնություն, յակոբինիզմի և նրա առաջնորդների իդեալականացում:

Լուսի Բլանը անվերապահորեն Ռոբեսպիերին հավանություն էր տալիս ամբողջովին, նրա ամբողջ քաղաքականությանը սկզբից մինչև վերջ: Յակոբինյանների առաջնորդի քաղաքական սխալներն ու թուլությունները Լուսի Բլանն ամենևին չէր ընկալում որպես սխալներ, ընդհակառակը, նա դրանք վերագրում էր քաղաքացիական առաքինությանը: Դա նույնպես Ռոբեսպիերի պատմական կերպարի խեղամիտում էր, թեև մյուս կողմից:

Այդ գիծը Ֆրանսիական պատմագրության մեջ շարունակում էին Ռոբեսպիերի ամբողջ քաղաքականությանն անվերապահորեն հավանություն տալու հարցում Լուսի Բլանի հետևից ընթացող Ամելը և ուրիշ, ավելի պակաս նշանավոր գրողներ: Բայց այն ուղղությունը, որի հիմնադիրը կարելի է համարել Լուսի Բլանին, խիստ կենսունակ դուրս եկավ նաև հետագայում ու, թեպետև մեծ վերափոխություններով, իրեն զգացնել էր տալիս անգամ այնքան տարբեր պատմաբանների աշխատություններում, ինչպես Օլարը և Մատիեզը:

Չորրորդ հեղափոխության՝ 1870 թվականի բուրժուազամոկրատական հեղափոխության և Սրբորդ հանրապետության նախօրյակին, բնապարտիստական վարչակարգի ճգնաժամի տարիներին նորից երևան եկան Ֆրանսիական մեծ հեղափոխության պատմության հետ կապված բազում գրքեր, և դրանց թվում առաջին պատմական երկերը, որոնք խորապես քաջալիրական էին իրենց ուղղվածությամբ, հատկապես նվիրված էին հեղափոխության ձախ գործիչներին, յակոբինյան առաջնորդներ Ռոբեսպիերին, Մարատին, Աեն-ժյուստին<sup>54</sup>: Բուն այս կրեույթը խիստ հատկանշական էր. այն ցույց էր տալիս, թե ինչպես

պրոլետարիատի և բուրժուազիայի միջև դասակարգային պայ-  
քարի զարգացման ու սրման համեմատ կարծես հարուստուն էին  
առնում անցյալի մոտացված սովորները՝ առաջին հեղափոխա-  
կան մարտերի պարագլուխները և իրենց ինչ-որ գծերով, ուրիշ  
պատմական դարաշրջանում, հարադատ, հասկանալի ու պետ-  
քական էին դառնում ժողովրդին:

Ճիշտ է, այստեղ պետք է ասել, որ մոտավորապես այդ  
նույն ժամանակ դեմոկրատիայի շարքերում լսվում էին և բա-  
ցահայտ թշնամական ձայներ: Ռոբեսպիերի ամբողջ գործու-  
նեություն խիստ, անհաշտ դատապարտումով հանդես եկավ  
Օգյուստ Բլանկին: XIX դարի նշանավոր հեղափոխականը Ռո-  
բեսպիերին քննադատում էր, այսպես ասած, ձախից: Նա Ռո-  
բեսպիերին համարում էր «անժամանակ հասունացած նապո-  
լեոն», դիկտատոր ու բռնակալ և հատկապես նրան մեղադրում  
էր ապաքրիստոնեացման և «գերագույն էակի գաղափարներ»  
գեմ նրա մղած պայքարի համար<sup>55</sup>: Ռոբեզիեց հայտնվեց այդ-  
պիսի ծայրահեղ թշնամանք Ռոբեսպիերի նկատմամբ Բլանկիի  
մոտ: Մատիեզը, որ 1928 թվականին առաջին անգամ հրապա-  
րակեց Մոլինիեի կողմից իրեն հանձնված Բլանկիի նոթերը, այդ  
թշնամանքը ամենից առաջ բացատրում է Ֆրանսիական հեղա-  
փոխության պատմության «պարունակությունից» անտեղյակու-  
թյամբ և նրանով, որ այդ հեղափոխության մասին տվյալները  
նա բաղել է կամարտինի «Ժիրոնդիստների պատմությունից»:  
Մատիեզը այդպես էլ գրում է. «Դրանք քաղաքական այն  
գործչի նոթերն են, որը չգիտեր պատմություն, բացի միայն  
մեկ ուրիշ քաղաքական գործչի շտապահատ և սխալներով լի  
աշխատությունից», այսինքն՝ կամարտինի:

Մատիեզի այս կարծիքի հետ չի կարելի համաձայնվել: Կա-  
մարտինի «Ժիրոնդիստների պատմության» վկայակոչումները,  
որոնք իրոք կան Բլանկիի ձեռագրում, իմ կարծիքով կարելի է  
բացատրել սոսկ նրանով, որ Դույանի բանտում, որտեղ Բլան-  
կին 1850 թվականին գրում էր իր նոթերը, նրա տրամադրության  
տակ, բացի կամարտինի գրքից, ուրիշ գրքեր չեն եղել: Բայց  
ընդունել, որ Բլանկին՝ Կոնվենտի ղեպուտատի որդին, Ֆրիչպ  
Բուռնարտիի աշակերտը, «Ժողովրդի բարեկամների ընկերու-  
թյան» անդամը, որի ժողովներից իսկ Հայնեի պատկերավոր  
արտահայտությամբ, «հոտ էր փչում ինչպես 1793 թվականի

«Moniteur»-ի քրքրված, ճարպոտված օրինակից»<sup>56</sup>, Գոդեֆրուա  
Կավենյակի և 30-ական թվականների մյուս «երիտասարդ յա-  
կորինյանների» գինակիցը, համարել, որ Բլանկին Ֆրանսիական  
հեղափոխությունը գիտեր միայն կամարտինի երկերից՝ կնշա-  
նակեր հանձնվել վրդովմունքի կամ ջղայնության կուրացուցիչ  
սկիզբարթյալի զգացմանը:

Մի շարք կողմնակի ապացույցներից կարելի է ենթադրել,  
որ այդ հարցում Բլանկին գտնվում էր, իհարկե, ոչ թե կամար-  
տինի, այլ «ձախ թերմիդորականների» պատմական գրականու-  
թյան ազդեցության տակ, որի մասին խոսվել է գլխի սկզբ-  
րում:

Ինչպես էլ լինի, բայց Բլանկիի այդ նոթերը որոշ դեր խա-  
ղացել են Ռոբեսպիերի մասին վեճերում: Թեև այդ նոթերի  
հեղինակի կենդանության օրոք դրանք չհրապարակվեցին, բայց  
ձեռագիր պատճեններով տարածվում էին նրա համախոհների  
չրջանում: Բլանկիի պատմական հայացքների անմիջական ազ-  
դեցության հետևանքով երևան եկան նրա մերձավոր աշակերտ  
Դուստով Տրիգոնի երկերը, որտեղ նա հանդես էր գալիս էրերա-  
կանների բացահայտ ջատագովությամբ ու Ռոբեսպիերի վրա  
հարձակումներով, և Ավենելի՝ որոշ առումներով դրանց մոտ  
աշխատությունը Անախարսիս Կլոտտի մասին<sup>57</sup>:

Այսպես ոռեսպիերիզմի պատմագրության մեջ նրա դեմոկրա-  
տական թևում Ռոբեսպիերին համակրող ուղղության հետ  
միասին պահպանվում էր, վեճի մեջ մտնելով առաջինի հետ,  
նաև հակառոբեսպիերական ուղղություն՝ Ռոբեսպիերին գրոհի  
ենթարկելով, այսպես ասած, «ձախից»: Այդ ուղղությունը գալիս  
էր «ձախ թերմիդորականներից»՝ անասովածներից, ավեխու-  
ններ Բարերից, վադիեից ղեպի Բլանկին, նրանից՝ Տրիգոնին և  
այնուհետև ինչ-որ կողմերով սահմանակցվում էր Պ. Ա. Կրո-  
պտկինի դավանած Ֆրանսիական հեղափոխության անարխիս-  
տական կոնցեպցիային<sup>58</sup>:

Բայց Ռոբեսպիերին թշնամի այդ հոսանքն իր լավագույն  
օրերին անգամ, երբ այն ներկայացվել էր Բլանկիի փառահեղ  
անունով, դեմոկրատական գրականության մեջ մեծ նշանակու-  
թյուն չստացավ: Նույնիսկ Բլանկիի հակայական հեղինակու-  
թյունն ու բարոյական վարկը չկարողացան ապահովել նրա հա-  
կառքեսպիերական հայացքների պաշտպանությունը մի խումբ

մերձավորագույն կողմնակիցների կողմից: Այսպես, նրա հնագույն զինակից Մարտեն Բերնարը հանդես էր գալիս հրպես Անկաշառի ամենաչեղձ երկրպագու<sup>59\*</sup>:

Դեմոկրատական պատմագրության մեջ գերակշռող ուղղությունը Ռոբեսպիերի շերտ պաշտպանության միտումն էր: XIX դարի նույն ՅՈ-ական թվականներին երևան եկավ Ֆրանսիացի պատմաբանի գրած առաջին երկը, որտեղ նա ճշգրտում էր մեկուկես հազար էջի վրա օր առ օր վերականգնել հեղափոխության մեծ գործիչ կյանքը: Այդ աշխատության հեղինակ էր Նեստ Ամելը, որն ամեն կերպ ընդգծում էր իր անաշտությունը, իր «արտակուսակցականությունը», միևնույն ժամանակ չէր թաքցնում խոր հիացմունքը իր պատմության հերոսի նկատմամբ<sup>60</sup>:

Առաջին Ֆրանսիական հեղափոխության պատմագրության մեջ Ամելի աշխատությունների նկատմամբ պահպանվել է զուսպ կամ նույնիսկ արհամարհական վերաբերմունք, ուր որոշ շափով մեղավոր է Մատիեզը: Իմ կարծիքով դա հանդուրժելի է: Իր ծամանակի համար Ամելը շատ բան է արել: Ռոբեսպիերի գիտական կենսագրության ստեղծման գործում նրա աշխատությունը նույնպես խոշոր նշանակություն է ունեցել, ինչպես Բուժարիքը Մարատի մասին: Ամելի հետազոտությունը նման էր այն ռեստավրատորի աշխատանքին, որը հին գիմանկարի վրայից քերում էր երկար տատանակների ընթացքում սև ներկի շերտադարձված թանձրույթը և մաս առ մաս վերականգնում նրա սկզբնական պոփոքն ու գույնը:

Բայց եթե Ամելի աշխատությունը իր զազափարական բովանդակությամբ արժանի էլ է քննադատության, ապա ամենից առաջ, եթե կարելի է այդպես ասել, Ռոբեսպիերի ամբողջ գործունեության «չրջանաձև պաշտպանության» գիրքորոշման համար: Ամելը պաշտպանության տակ էր վերցնում և փորձում էր որպես քաղաքական առաքինություն ներկայացնել Ռոբեսպիերի

բոլոր գործողությունները, այդ թվում և նրանք, որոնք սխալ էին: Կարճ ասած, Ամելին հարկ է քննադատել այն բանի համար, որ նա անբավարար է քննադատում Ռոբեսպիերին:

Նվ այսպես, ամեն անգամ, երբ պատմական պրոցեսի զարգացումը Ֆրանսիայում զնում էր, ինչպես Վ. Ի. Լենինն էր ասում՝ «կատարել-վերջացնելու» խնդրերը, որ սկսվել էր առաջին Ֆրանսիական հեղափոխությամբ, հետագայում անցյալից հայտնվում էր և զնայրից դեպք ավելի պարզորոշ, ավելի տեսանելի, կարծես ավելի մեծանալով ու աճելով ներկայանում և նոր սերունդներին էր մոտենում XVIII դարի մեծ հեղափոխական Մարտիի-իան Ռոբեսպիերի կերպարը:

Բայց XIX դարը, առաջին Ֆրանսիական հեղափոխությամբ սկսված բուրժուազեմոկրատական հեղափոխական շարժումների դար էր ոչ միայն Ֆրանսիայի, այլև Նվրոսայի մյուս երկրների համար: Յուրաքանչյուր երկրում այս պատմական պրոցեսների զարգացումը, հասկանալի է, շատ մեծ ինքնատիպություն ուներ: Բայց առավել բան ուշագրավ է, որ իր երկրորդ, հետամահու նախաազրի մեջ անվանարկված Ռոբեսպիերը, դուրս գալով իր նայրենիքի սահմաններից, կարողացավ հասկանալի լինել ու հանաչվել Ֆրանսիայից հեռու և մտափ կերպների առաջադեմ մարդկանց կողմից:

Ռոբեսպիերի մահվանից կես դար անց, 40-ական թվականների սկզբին, Նիկոլայ Ի-ի ղմնդակ իշխանությամբ կաշկանդված հեռավոր Ռուսաստանի երկու մայրաքաղաքներում գտնվեցին ռուս երիտասարդներ, որոնք իրենց հայտարարեցին Ռոբեսպիերի համախոհներ: Ճիշտ է, այդ երիտասարդները ոչ բարձր աստիճաններ ունեին, ոչ էլ կոչումներ, բայց փոխարենը նրանք ներկայացնում էին իրենց մոզոյրդի ապագան:

Ի. Ի. Պանսևի հիշողություններից<sup>61</sup>, որոնք հաստատում էր և նրա հորեղբոր օրգին՝ Վ. Ս. Պանսևը<sup>62</sup>, հայտնի է, որ 1841—1842 թվականների ձմռան շարաթ օրերին Իվան Պանսևը իր բնակարանում, Բելինսկու բարեկամների շրջանում կարդում էր Ֆրանսիական հեղափոխության պատմությունը: Պանսևի համար որպես սկզբնաղբյուր էին ծառայում Բյուշեի և Ռուի հիշատակված «Ֆրանսիական հեղափոխության պատմականության պատմությունը», «Moniteur»-ը (որոնք, ինչպես հայտնի է, ամբողջովին վերարտադրում էին Ռոբեսպիերի ճառերը) և գրա-

\* Մատիեզը, արդարացիորեն ուշադրություն դարձնելով Ռոբեսպիերի գնահատման հարցում Բյանկիի և Մարտեն Բերնարի խոր տարակարծությանը, արտահայտել է տրամաբանությունից ոչ դուրի ենթադրություն այն մասին, որ Բյանկին չի հրապարակել իր նոթերը Ռոբեսպիերի մասին, վախենալով տարածանությունների ծնունդ տալ սեփական կուսակցության շարժերում («Annales historiques de la Révolution française», 1928, № 28, p. 306—307):

կանությունը<sup>63</sup>։ Ընթերցումից հետո վեճեր էին ծագում, ինչպես Պանանն է վկայում, Մալոլը և «մանք դարձան շփազանց հանդուգն ժիրոնդիստներ։ Մենք Բելիենսկու հետ պաշտպանում էինք մոնտանյարներին»<sup>64</sup>։

Բայց ոչ միայն Բելիենսկին ու Պանանն էին Ռոբեսպիերի համախոհները։ Այն ժամանակ նույնպես երիտասարդ Ալեքսանդր Դերցինը գրում էր. «Մաքսիմիլիանը հեղափոխության միակ իսկապես մեծ մարդն էր, բոլոր մնացյալը նրա անհրաժեշտ փայլուն երևույթներն էին և ուրիշ ոչինչ»<sup>65</sup>։ «Շղջություններ և խոհեր» գրքում Դերցինը խոստովանում էր, որ այն ժամանակ, 40-ական թվականների սկզբներին, նա նախանձում էր Ռոբեսպիերի ուժին։ Նրա բարեկամ Նիկոլայ Կետչերը «քնից առաջ ազոթքի փոխարեն կարգում էր Մարատի ու Ռոբեսպիերի ճառերը»<sup>66</sup>։ Երիտասարդները այն ժամանակ Ռուսաստանի զարդն էին, նրա հույսը, և իրենց համակրանքներով որոշելով սեփական քաղաքական գիրքորոշումը, միավորվում էին Լեոան և նրա առաջնորդ Ռոբեսպիերի շուրջը։

Բայց 41 թվականի առաջին վիճարանությունները, որոնք Բելիենսկու խմբակը բաժանեցին ժիրոնդիստների կողմնակիցներին և մոնտանյարների համախոհների, շարունակվելով վերածվեցին սուր և սկզբունքային բնույթ ստացած տարաձայնությունների՝ մի կողմից Բելիենսկու և Գերցենի, մյուս կողմից Տ. Ն. Գրանտովսկու միջև<sup>67</sup>։ Այդ վիճարանությունների առարկան նախկինի նման նշանակալից չափով կապված էր Ռոբեսպիերի անձնավորության հետ, բայց դրանց էությունը և՛ ավելի խորն էր, և՛ ավելի լայն։ Այստեղ էր սկսվում սահմանազատումը, այստեղ էին միմյանցից բաժանվում երկու ճանապարհները՝ հեղափոխական դեմոկրատիայի ուղին և լիբերալիզմի ուղին։

Ռոբեսպիերի շուրջ վիճարանությունները XIX դարի կեսերի ռուս առաջավոր հասարակայնության շրջաններում վիճարանություններ էին Ռուսաստանի վաղվա օրվա մասին, նրա զարգացման ուղիների, ապագա ռուսական հեղափոխության մասին։

\* Ի. Յամպոլսկին խիստ հանգամանալից ծանոթագրություններում արդարացի կերպով մատնանշում է, որ Բելիենսկին նախկինում ևս լավ ծանոթ էր ֆրանսիական հեղափոխությանը և որոշակի կարծիք ուներ նրա մասին (տե՛ս Панаев И. И. Указ. соч. с. 414—415)։

Ո՞րն էր Բելիենսկու, երիտասարդ Գերցենի և նրանց բարեկամների՝ Անկաշառի նկատմամբ ունեցած հրապուրանքի պատճառը։ Ռոբեսպիերի խոր դեմոկրատիզմը, նրա անասան հավատը ժողովրդի նկատմամբ, նրա անվեհերությունը, վճռականությունը, հեղափոխականի աննկունությունը՝ այն ամենը, ինչ վախ էր ներշնչում և իրենից վանում առաջավոր, լուսավորչալուբայց միշտ ազնվական մնացած Տ. Ն. Գրանտովսկուն։

Ռուս հեղափոխական դեմոկրատները Ռոբեսպիերի մեջ հայտնագործեցին իրենց նախորդին։ Նրանց առջև կանգնած էր ահեղ թշնամին՝ ինքնակալական-ճարտատիրական հասարակարգը, որը խեղդում էր ռուս ժողովրդի բոլոր կենսունակ ուժերին։ Եվ կարելի էր նրան հաղթել, դրանում նրանք համոզվեցին, ոչ թե լիբերալների «քողոց-մեղքը և խանդավառ ֆրագնեթով», որին ըստ էության հանգում էր Գրանտովսկու գիրքորոշումը, այլ «Ռոբեսպիերների և Մեն-ժյուստների խոսքի ու գործի երկասյր սրով», ինչպես բանավիճելիս արդարացիորեն նրա դեմ գրում էր Բելիենսկին։

Այսպես էին ձգվում հաջորդական կապի աննշմարելի թելերը XVIII դարի ֆրանսիական հեղափոխականների՝ չափորինյանների և XIX դարի կեսերի ռուս դեմոկրատների միջև, որոնք ուղի էին հարթում դեպի իրենց ժողովրդի մեծ ապագան։

Եվրոպայի հսկառակ ծայրում, նրա արևմուտքում, Բրիտանական կղզիներում մոտավորապես այդ նույն ժամանակ Ռոբեսպիերի անունը դարձավ լարված դասակարգային պայքար մղող այլ սոցիալական խմբերի մտրտական նշանաբանը։ Անգլիական պրոլետարիատը, որ որոնումների և պարտությունների երկար ճանապարհ՝ անցնելուց հետո քաղաքական պայքարի էր հլել սոցիալական հարցերի լուծման համար, բայց դեռ չէր հասել գիտական կոմունիզմին, չափորինիզմի մեջ անսամ ռզեոթոդ և իրեն համար ուսանելի օրինակներ։ Հասկանալի է, որ խոսքն անդլիտական բանվորական շարժման փառավոր մամանակաշրջանի՝ շարտիզմի մասին է։

Այն ժամանակ շարտիզմի ամենալավագույն ներկայացուցիչներից մեկը, նրա ձախ թեի տառչնորդը, հետագայում Մարքսի և Էնգելսի բարեկամը՝ Զորջ Զուլիան Գարնին՝ ֆրանսիական հեղափոխության երկրպագուն, որը ստորագրում էր, ինչպես և Մարատը, Ami du peuple («Ժողովրդի բարեկամ»), Լոնդոնում 1845 թվականի սեպտեմբերին կայացած միջապգային

ղեմոկրատիայի միախնգում ասում էր. «Ծս գիտեմ, որ դեռևս անխելք վարմունք է Ռոբեսպիերին նայելը ոչ այլ կերպ քան հրեշի, բայց ես կարծում եմ, որ հետո չէ այն օրը, երբ հակված կլինեն բոլորովին այլ կարծիքի այլ արտասովոր մարդու բնավորության մասին»<sup>68</sup>:

Գարնին անգլիական շարտիսանների շարքերում Ռոբեսպիերի և յակոբինյանների միակ հետևորդը չէր: Անկաշառի առավել ջերմ և համոզված երկրպագուն Բրոնտեյ 0' Բրայենն էր: 30-ական թվականներին նա սկսեց լրջորեն ուսումնասիրել ֆրանսիական հեղափոխությունը և հատկապես Մաքսիմիլիան Ռոբեսպիերի գործունեությունն ու գաղափարաբարդաբանական հայացքները: Յակոբինյան դիկտատուրայի առաջնորդի կերպարը նրա վրա հսկայական ազդեցություն գործեց՝ Ռոբեսպիերի մեջ նա տեսավ իսկական ղեմոկրատիայի ներկայացուցչին: Չարտիստական շարժման աճման տարիներին 0' Բրայենը աշխատում էր Ռոբեսպիերի կենսագրության վրա: Նրա առաջին հատորը լույս տեսավ 1837 թվականին՝ շարտիզմի առաջին արժիքի սաստկացման տարում<sup>69</sup>:

Հնարավոր չէ, ասենք անհրաժեշտություն էլ չկա հետամտել և օրինակներով հաստատել ֆրանսիական մեծ հեղափոխության պատմական փորձի, նրա ազատագրական գաղափարների, նրա ականավոր գործիչների ազդեցությունը սոցիալական երանգների ամենալայն սպեկտրի հեղափոխական և ազգային-ազատագրական պայքարի վրա XIX դարի առաջին կեսում Եվրոպայի և Ամերիկայի գրեթե բոլոր երկրներում:

Հարկ կա՞, արդյոք, խոսել ժամանակի առումով ֆրանսիական հեղափոխությանն ամենամոտ, այսպես կոչված, «հունգարական յակոբինյանների» գրական-քաղաքական շարժման մասին, որոնք ստեղծեցին «Ազատություն և իրավահավասարություն» գաղափարի հեղափոխական ընկերությունը Մարտինովիչի գլխավորությամբ, կամ, ավելի ուշ, Հունգարիայի մեծագույն գլխավորությամբ Մետեֆիի ստեղծագործության գաղափարական ակունքների մասին<sup>70</sup>, կամ էլ իտալական ժողովրդի շարժման մասին, որը 1801 թվականին Միլանում իր գալլուսթեն արաահայտեց «Կեցցե՛ Ռոբեսպիերը»<sup>71</sup> բացականչություններով, կամ Գեոորգ Բյուխների գրամատուրգիայի մասին<sup>72</sup>, կամ «երիտասարդ Գերմանիայի»<sup>73</sup> տաղանդների պատանեկան հրապուրանքների մասին, կամ շատ այլ հասարակական, հեղափոխա-

կան և առաջադիմական շարժումների մասին, որոնց թիկունքում նշմարվում էր XVIII դարի մեծ յակոբինյան Մաքսիմիլիան Ռոբեսպիերի մերթ մոտիկից, մերթ հեռվից երևացող ուրվանկարը:

Ոչ ֆեոդալազնվականական, ոչ բուրժուական սեակցիան ի վիճակի չեղան պատմությունից ջնջել Ռոբեսպիերի անունը: Պատմությունը կերտող, այն առաջ շարժող, դաժան մարտերում ֆրանսիական հեղափոխության սկսած գործն ավարտած ժողովուրդը չէր կարող մոտանալ նրա հերոսներին:

Ինքնին հասկանալի է, որ հեղափոխական շարժումն այդ նոր փուլում չէր կարող և չդարձավ ֆրանսիական հեղափոխության սովորական կրկնությունը: Այն նոր բովանդակություն էր ստանում հատկապես առաջավոր կապիտալիստական դարգացած երկրներում, որտեղ արագորեն հասունանում էր պրոլետարիատը: Բայց XIX դարի 40-ական թվականների հեղափոխական ղեմոկրատիան, որ սրգեն զգում էր վերահաս նոր հեղափոխական արժիքի շունչը, որն իրոք թնդալով անցավ 1848 թվականին, խիստ սուր զգաց ժառանգական կապը ֆրանսիական հեղափոխության հետ և բացահայտորեն հռչակեց այն: «...Ամբողջ ժամանակակից եվրոպական սոցիալական շարժումը իրենից ներկայացնում է միայն հեղափոխության երկրորդ գործողությունը, միայն հանգուցալուծման նախապատրաստումը այն գրամայի, որն սկսվել էր 1789 թ. Փարիզում, իսկ այժմ իր ազդեցությամբ ընդգրկել է ամբողջ Եվրոպան...»<sup>74</sup>, — գրում էր էնգելսը 1845 թվականին:

Բնական է, որ և՛ այդ գրամայի առաջին գործողության գրչխավոր հերոսները, և՛ նրանց մեջ, բնականաբար, նա, որ խաղում էր հաղիվ թե ոչ անկարևոր և ողբերգական դերը՝ Ռոբեսպիերը, նորից տիրացան իրերի բնթացքով հեղափոխության նոր գործողության մեջ ներգրավված միլիոնավոր մարդկանց մտքերին ու սրտերին:

Եվ այստեղ մենք ընդհատում ենք հիմնական թեմային վերաբերող այս ձգձգված ներածությունը: Ակամայից այն ձևեր ընրեց պատմագրական առաջաբանի գծեր: Իսկ զա չէր մտնում նեղինակի մտադրությունների մեջ, գործնականապես էլ անիրականալի կլիներ: Զէ՞ որ եթե հետամուտ լինենք Անկաշառի առիթով կարծիքների շարունակվող բախմանը պատմական գրականության և հասարակական մտքի մեջ վերջին հարյուր հիսուն

տարվա ընթացքում, հարկ կլինեն 2—3 անգամ ավելացնել շախատութեան ծավալը: Արդյոք պե՞տք է այդ:

Ներածութեան խնդիրն այլ էր: Ես ենթադրում էի, որ ամբողջ հաջորդ շարադրանքը առավել ճիշտ հասկանալու համար պետք է հենց սկզբից ցույց տալ, որ Ռոբեսպիերի մահապատիժն առանց դատի, բռնի մահի, հետմահու անարգումը հակառակ նրա թշնամիների ջանքերի՝ այս ամենը իդուր էր: Ու տապալված, սպանված, գրպարտված Ռոբեսպիերը շարունակում էր ապրել ժողովրդի հիշողութեան մեջ:

Եվ շմոռանալով այս մասին, արդ վերագառնանք այն բանին, ինչից, ըստ երևույթին, պետք էր սկսել:

## II

Յուրաքանչյուր պատմական մեծ դարաշրջան ծնում է մեծ տաղանդներ: Նրանք երևան են պալիս սովորաբար մարդկային գործունեության բոլոր բնագավառներում՝ քաղաքականության, հասարակական մտքի, գիտության, գրականության մեջ, արվեստում:

Վառ տաղանդների մի ամբողջ համաստեղություն ծնեց և տասնութերորդ հարյուրամյակը՝ ֆրանսիական մեծ հեղափոխության և նրա պատմական նախապատրաստության դարաշրջանը: Ճիշտ է, դրանց նշանակությունը հաջորդ սերունդների համար միանման չէր. ներդրումը, որ այդ տաղանդներից յուրաքանչյուրը մտցրեց մարդկության հոգևոր արժեքների գանձարանը, կարող էր որոշվել միայն ժամանակի քննությամբ:

Անուններից նրանք, որ այդպես շացուցիչ փայլատակեցին հեղափոխության տարիներին և ժամանակակիցներից շատերին թվում էին առաջին կարգի մեծության աստղեր, յղիմացան այդ ստուգմանը: Սկզբում նրանք դալկացան, հետո սկսեցին աղտտանալ, հետո բոլորովին հանգեցին, և նրանցից պահպանվեց հազիվ նկատելի հետք պատմության մեջ:

Մյուսները թողեցին ավելի կաշուն հիշատակի, բայց նրանց նկատմամբ ուշադրությունն ու հետաքրքրությունը պահպանվեց միայն դիտնական-մասնագետների՝ պատմաբանների, փիլիսոփաների, բանասերների շրջանում, մարդկանց նոր սերունդների անտարբեր թողնելով նրանց անցյալ փառքի, անցյալ ճակատագրի նկատմամբ:

Եվ միայն շատ քերքը (նրանց անունները մատնների վրա կարելի է հաշվել) հաղթահարելով ժամանակի ամեն ինչ սրբբող-տանող հոսանքի ճնշումը, յուրաքանչյուր նոր պատմական շրջադարձի վրա նախկինում շճանաչված ինչ-որ գծերով իրենց վրա զամելով կյանք մտնող մարդկային նոր սերնդի ուշադրությունը, ընդմիջտ տպավորվեցին մարդկության հիշողության մեջ: Այդ սակավաթիվ մարդկանց թվին է պատկանում, ինչպես մենք հենց նոր փորձում էինք ապացուցել, նաև Մաքսիմիլիան Ռոբեսպիերը:

Մաքսիմիլիանը դր Ռոբեսպիերը ծնվել է 1758 թվականի մայիսի 6-ին Ֆրանսիայի հյուսիսի Արտուա գավառի Արբաս քաղաքում: Նրա լրիվ անունն է Մաքսիմիլիան-Մարի-Իզիդոր, բայց նա գրեթե երբեք չի գրվել իր բոլոր երեք անուններով, այլ իր ազգանվան դիմաց գրում էր միայն առաջինը՝ Մաքսիմիլիան: Այդ անունը նապետք է միշտ միացնել իր ազգանվանը, որպեսզի նրան շփոթեին իր կրտսեր եղբոր՝ Օգյուստեն-Փոզեֆ Ռոբեսպիերի հետ, որը հետագայում նույնպես քաղաքական գործիչ դարձավ:

1758 թվականը՝ յակոբինյանների ապագա առաջնորդի ծննդյան տարին, անմոռանալի հուշ մնաց Ֆրանսիայի պատմության մեջ: Դա ֆրանսիական թագավորության համար ներքին և արտաքին խոր ցնցումների, կուղովիկոս XV-ի երկարամյա ամենաանփառունակ թագավորության տարիներից մեկն էր: Ֆրանսիական բանակի պարտությունները Յոթնամյա պատերազմում 1757 թվականին Ռոսբախի մոտ և 1758 թվականին Կրեկետի մոտ ծանր հարված հասցրին միապետության հեղինակությանը: Իր նախորդի՝ «արև-թագավորի» փառքին ու վեհությանը հավակնող կուղովիկոս XV-ի իշխանությունը ներկայացավ իր իսկական տեսքով՝ նա երկրի, ամբողջ աշխարհի առջև բացահայտեց իր թուլությունը, ապաշնորհությունը, ոլընչությունը: «Ըստ էության մենք շունենք կառավարություն... մենք շունենք ոչ գեներալներ, ոչ մինիստրներ...»,— գրում էր կառավարական աչքի ընկնող աստիճանավոր, արքա դր Բերնին՝ արտաքին գործերի դեպարտամենտի պետական քարտուղարը<sup>75</sup>:

Բայց այդ կառավարությունը, որի ոլընչությունն ընդունում էին նույնիսկ նրա բարձրաստիճան ծառայողները, չէր ցանկանում կամովին իջնել ասպարեղից, ընդհակառակը, նա ուժե-

դասնում էր ճնշումը բուրբ «ազատախոհների» դեմ: 1758 թվականի սեպտեմբերին Փարիզում, Գրեի հրապարակում խնդիրքների պալատի ծառայողներից մեկը հրապարակայնորեն կախաղան բարձրացվեց թագավորի և նրա մինիստրների հասցեին ուղղված անհարգալից խոսքերի համար: Սակայն դաժան պատիժները չէին կարող կոտրել հասարակական դժգոհությունը: 1758 թվականի աշնանը ֆրանսիական կոմեդիայի թատրոնում, կուլրում և Փարիզի մյուս այցելավայրերում փակցվում և տարածում էին խռովարարական կոչեր պարունակող թուուցիկներ:

Կառավարությունը, իսկ այնուհետև Փարիզի արքեպիսկոպոսը, 1758 թվականին արգելեց և դատապարտեց Հելվեցիուսի հենց նոր լույս տեսած «Մտքի մասին» երկը, բայց արգելիքից հետո նշանավոր մատերիալիստ փիլիսոփայի գիրքը դարձավ ամենահանրահայտ գրական ստեղծագործություններից մեկը: «Մենք մոտենում ենք անկման վերջին շրջանին»՝ 1758 թվականի հունիսի 6-ին գրում էր արդեն հիշատակված արքա դը Բերնին, և կամ նրա նախածնունդով, կամ թե ուրիշների բերանից, բայց այդ «անկում» — décadence բառը դարձավ կործանման դատապարտված վարչակարգի ամենատարածված խորհրդանիշը:

Իսկ ինչի՞ց սկսվեց դա: Ո՞ր ժամանակվանից էր նշմարվել անկման հակումը՝ արդեն դժվար է պարզել: Քառասուն տարուց ավելի Ֆրանսիան կառավարում էր կուղովիկոս XV թագավորը, բայց սրբան առաջ էր գնում ժամանակը, այնքան պարզորոշ էր դառնում ողորմելի միապետի ոչ միայն թուլությունն ու ապաշնորհությունը, այլև ամբողջ ֆեոդալաբարսոյուտիստական վարչակարգի նեխվածությունը: Վերսալյան պալատը փայլում էր նույնպիսի պերճությունը ինչպես «արև-թագավոր» կուղովիկոս XIV-ի օրերին, բայց ի ցույց հանված շքեղությունը և անընդմեջ տոնախմբություններն ու զվարճությունները, որոնք թելադրված էին ամենազոր տիկնոջ՝ դը Պոնտպուրի հնարամիտ երևակայությամբ, արդեն թագավորության հզորության և բուրեկեցության տպավորություն չէին ստեղծում:

Վերսալյան պալատում, մեծատոհմիկ արիստոկրատիայի առանձնատներում, արիստոկրատիա, որը ձգտում էր հետևել արքունիքին, հապշտապ, կուպտարար և ագահությունը մասխում էին կյանքը: «Մեզնից հետո թեկուզ ջրհեղեղ»՝ կուղովիկոս XV-ին վերադրվող այս ցինիկ խոսքերը կարծես դարձել

էին XVIII դարի կեսի ֆեոդալների տիրապետող դասակարգի նշանաբանը: Նրանք ապրում էին այսօրվա կյանքով, առանց մտածելու ապագայի մասին: Արքունիքի պալատական ընտրախափի, գանձարանի, հսկայական հարկային ապարատի, բանակի, եկեղեցու, մեծատոհմիկ արիստոկրատիայի, կալվածատեր սզնվականության ագահ և սնտանձ պահանջները բավարարելու համար մնում էին եկամտի նույն աղբյուրները՝ գյուղացիների հարածուն շահագործումը և բուրժուազիայի սաստկացող հարկադրումը:

Թագավորության բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող գյուղացիությունն ընչազուրկ էր, իրավագուրկ, աղքատ: Բայց այդ ձեծկլված, ուժից վեր աշխատանքից հոգնատանջ գյուղացիությունը, այնուամենայնիվ, հրեշավոր շահագործմանը պատասխանում էր հարածուն դիմադրությամբ: Գյուղացիական հուզումները, որոնք հաճախ վերածում էին բացահայտ գինված ապստամբությունների, սաստկանում էին XVIII դարի ընթացքում: Գարի կեսերին և հատկապես նրա երկրորդ կեսին, ֆեոդալական անխնա շահագործմանը գյուղացիների զրվանի տակ դրված դիմադրությունն սվելի ու սվելի հաճախ էր վերածվում բացահայտ զայրույթի:

Կուսավորական մտքի ծաղկումը Ֆրանսիայում, երրորդ դասի շարքերում, անգամ լիբերալ ազնվականության շրջանում, նորանոր համախոհներ շահող «փիլիսոփաների կուսակցության» հաջողությունները իր դարն ապրող ֆեոդալաբարսոյուտիստական հասարակարգի դեմ ժողովրդական զանգվածների և ուժեղ երիտասարդ բուրժուազիայի հարածուն պայքարի արտաքին անդրադարձումն էին:

Հնի դեմ նորի այդ պայքարը վաղուց էր սկսվել: Ֆեոդալիզմի ժամանակը վերջացավ: Դուռն էին բախում նոր դարաշրջանը, հասարակական նոր հարաբերությունները, նոր հասարակարգը: Նրանց իսկական բովանդակությունը (իսկ այդպիսին, բոտ հասարակական զարգացման օրենքների, կարող էր լինել միայն բուրժուազիայի տիրապետության հաստատումը) դեռ անորոշ ու անլուծելի էր մնում նույնիսկ ամենաուժեղ խելքի տեր մարդկանց համար: Նոր դարաշրջանը պատկերանում էր նրանց, հասկանալի է, տարբեր երանգներով՝ որպես բանակառության և ազատության հողթանակի ժամանակ, որպես լագավույն, առա-

վել արդարացի և ներդաշնակ հասարակարգ՝ կառուցված «մարդու բնական իրավունքների» համապատասխան:

Ինչպիսի՞ն կլինի ապագան: Այդ մասին ոչ ոք ստույգ չգիտեր: Բայց արդեն շատերն էին զգում մեծ փոփոխությունների մոտենալը, ամբողջ կյանքի սոցիալ-քաղաքական կայունության շեղումներ, և ապագան, որ պետք է վրա հասներ այդ բեկումնից հետո, նրանց պատկերանում էր շատ գեղեցիկ:

Բայց հմայիչ հույսերը, որ տակնուվրա էին սնում XVIII դարի կեսին կյանք մտած և պատասխանը՝ Վոլտերի, Մոնտեսքյոյի, Լամետրիի, Լիվիցիուսի, Ռուսոյի երկերում, Գիյոսյի և դ՛ Ալամբերի «Հանրագիտարանի» հոդվածներում փնտրող երիտասարդների մտքերը, այդ «խոսվարար տրամադրությունները», այդ «ազատախոճ ոգին» ոչ միայն դուրսն էին կառավարության հովանավորներ չէին արժանանում, այլև, քննակառուցող, հետապնդվում էին որպես վատնգամոր «խոսվարարություն» և «հերետիկոսություն»<sup>75</sup>:

Խզումը թագավորության բնակչության ինք տասներորդ կազմող երրորդ դասի և գոյատևող իշխանության՝ Ֆեոդալաբսոլյուտիստական վարչակարգի միջև հասավ ծայրահեղ աստիճանի: Գրանք երկու աշխարհ՝ էին, տարբեր ու թշնամի միմյանց, բայց սրունք հարկադրված էին հարմարվելով ապրել մի պետական մարմնի շրջանակներում: Հին, ֆեոդալաբսոլյուտիստական աշխարհը տիրապետում էր, ճնշում և կառավարում: Իսկ ժողովուրդը և նրա հետ միասին ընթացող, ավելի ճիշտ՝ նրան գլխավորող բուրժուազիան, ձգտում էին ջարդել սեփական համոզական կարգերի դժնդակ անդորրը, պոկել նրա կապանքները: Գործի կեսերից այդ անհողթահարելի հակասություններն սկսեցին ավելի ու ավելի պարզորոշ դառնալ:

1748—1749 թվականներին ֆրանսիական թագավորության զանազան դավառներում և հենց բուն Փարիզում բռնկվում էին ժողովրդական հուղումներ: Կառավարությունը դրանք ճնշում էր դժժան բռնություններով, սակայն ընդհատակ բաշված, բայց արմատախիլ չարված ժողովրդական դժգոհությունը շարունակում էր թույլ մարմրել:

Այսպիսով, ֆրանսիական հազարամյա միապետությունը թևակոխեց անկման ժամանակաշրջանը, վերջապես դա գիտակցվեց և արտահայտվեց բարձրաձայն: Ազատամիտ տրամադրությունները, «բննադատություն», փոփոխությունները

ձգաման ոգին օրըստօրե ավելի էին սաստկանում: Բայց այդ «խոսվարար ոգին», որ համակել էր երկիրն այնպիսի մի ուժով, որ Գրիմին անգամ ստիպում էր զգուշանալ հեղափոխությունից<sup>77</sup>, Փարիզում երիտասարդներին գլխավորապես պատճառած ազատության այդ քամին թուլանում էր, հանդարտվում, դժվարությամբ ներս թափանցելով Արրաս քաղաքի անվանի քաղաքացի, թագավորական դատարանի փաստաբան Ֆրանսուա Ռոբեսպիերի լավորակ տան պատուհաններից:

Մանկահատակ Մաքսիմիլիանի և հայրը, և պապը, և պապի պապը, և հայրական գոթով բուր Նախնիները, զատավորական դասից էին: Դա հայրենի քաղաքում համբավ ու պատիվ վայելող ունեոր պատրիկական ընտանիք էր, վաղ ժամանակներից կայուն ավանդույթներ ունեցող ընտանիք: Թվում է, թե այդ տանը ամենից ավելի դժվարը նոր ժամանակների հովերից ծնված գույթակղություններին կամ կասկածներին հանձնելու էր:

Մինչև յոթ տարեկան հասակը Մաքսիմիլիանի մանկությունն անխռով էր: Բայց հետո ամեն ինչ փոխվեց: Մահացավ մայրը, իսկ երեք տարի անց ընտանիքի գլխավորը՝ Ֆրանսուա Ռոբեսպիերը, անբավարար պարգևատրված պատճառով, լքեց Արրասը, իսկ ավելի ուշ նաև Ֆրանսիան: Նա տեղափոխվեց Գերմանիա, որտեղ ժամանակ ապրեց Մանհեյմում, հետո էլի ինչ-որ տեղ և մեռավ 1777 թվականին Մյունխենում<sup>78</sup>:

Չորս երեխաները որը մնացին: Նրանց հոգան իր վրա վերցրեց պապը: Նրանցից ավագը՝ Մաքսիմիլիանը, մյուսներից ավելի սուր զգաց ընտանեկան սղեար, որն ամեն ինչ փոխեց նրա մանկական աշխարհում: Բարբոթությունը փոխարինվեց աղքատությամբ, մայրական քնքշանքը՝ մեհակություն: Ծակատագրի այդ շեղանկի շրջապարձը չէր կարող չանդրադառնալ Մաքսիմիլիանի բնավորության վրա, այն իր կնիքը թողեց նրա ամբողջ հետագա կյանքի վրա<sup>79</sup>:

Պապը Մաքսիմիլիանին տեղավորեց տեղական բոյեզում, իսկ լիտո նրա համար կրթաթոշակ հաշուեցրեց Փարիզի Լյուդովիկոս Մեծի բոյեզում՝ նախապատրաստելով Սուրբոնի իրավաբանական ֆակուլտետ ընդունվելու համար: 1769 թվականի աշնանը տասնմեկամյա Մաքսիմիլիանը թողեց քաղաքը, ուր նա մեծացել էր, և ձիակոտոր երկար ճանապարհ կտրելով, նրան սարավ խորհրդավոր Փարիզ:

Թագավորութեան մայրաքաղաքում Մարսիմիլիանը ապրեց տասներկու տարի՝ մինչև 1781 թվականը: Սկզբում նա սովորեց Լյուդովիկոս Մեծի քոլեջում, իսկ Տեոս Սորբոնի իրավաբանական ֆակուլտետում, որն ավարտեց 1780 թվականին և ստացավ իրավունքի բակալավրի կոչում: Փարիզում մեկ տարի պրակտիկա անցնելուց Տեոս նրան շնորհվեց իրավունքների լիցենցիատի կոչում:

Քոլեջում, իսկ Տեոս նաև Սորբոնում նա իր ժամանակը նվիրում էր ուսմանը: Նա ամբողջովին կլանված էր ընթերցանությունում: Ռոբեսպիերի ամենաուշ ելույթները ցույց են տալիս, որ նա անտիկ Տեղինականերին, ինչպես նաև Հունաստանի և Հռոմի պատմությունը գիտեր կատարելապես: Որքան էլ ինքնամոտի, որքան էլ մեկուսացած լիներ Լյուդովիկոս Մեծի քոլեջի սաների կյանքը, որոնց արթուն հակում էին եկեղեցու զոռն սպասավորները, նախաամպրոպային ժամանակվա թարմ բամին թափանցում էր և քոլեջի ամուր պատերից ներս: Լյուդովիկոս Մեծի քոլեջի սաները և Փարիզի համալսարանի ուսանողները երիտասարդության մտքերի վրա իշխողների՝ Լուսավորության դարաշրջանի մեծ գրողների արդիված ստեղծագործությունների ամենափոփոխան ընթերցողներն էին ու երկրպագուները: Պատանի Մարսիմիլիան Ռոբեսպիերը մի առանձին ազահովամբ էր կլանում այդ ստեղծագործությունները:

Հասակակիցների ու դասավանդողների միահամուռ վկայություններ, որոնցից թողալիս Փարիզի ուսումնական հաստատությունների պատերի ներսում վարում էր ինքնամոտի սպրեյակերպ: Նա աղքատ էր: Արրասում նրա համար սահմանված թոշակը տարեկան կազմում էր 450 լիվր. մայրաքաղաքային կյանքի համար դա ոչնչության չափ քիչ էր: Նա հագնվում էր աղքատ, ման էր գալիս ծոմոված կոշիկներով: Նա լռակցաց էր, ընկերներ չէր փնտրում, գերադասում էր առանձնության մեջ կարդալ գիրք գրքի հետևից:

Ռոբեսպիերի հասունության շրջանի ելույթներից կարելի է լիակատար արժանահավաստությամբ հաստատել, որ նա ծանոթ էր իր ժամանակի հասարակական-քաղաքական մտքի բոլոր կարևորագույն ստեղծագործություններին: Նա գերազանց գիտեր Լուսավորության դարաշրջանի գրականությունը: Ինչպես Մարտը, նա ևս բարձր էր գնահատում Մոնտեսքյոյին, բայց նրա

սիրելի Տեղինակը, որ նրա վրա վիթխարի ազդեցություն էր գործել, ժան-ժակ Ռուսոն էր:

Ռուսոն Ռոբեսպիերի համար ոչ միայն սիրելի գրող էր, որն իր ստեղծագործության ինչ-որ կողմերով համապատասխանում էր նրա ներքին, հոգեկան կերտվածքին: Ավելին, նա դարձավ Ռոբեսպիերի ուսուցիչը: Քսան տարեկան հասակում Ռոբեսպիերը ուղևորվեց Էրմենտնիլ, որտեղ, անձկության մեջ, «Նոր էյոթիք» և «Հասարակական դաշինքի» Տեղինակն իր վերջին որերն էր ապրում: Այնտեղ տեսավ նշանավոր գրողին, որի մասին նա հազորգում է հետագայում<sup>20</sup>: Այս հանդիպման կապակցությամբ պատմական գրականության մեջ տարբեր կարծիքներ կան<sup>21</sup>, բայց, ըստ երևույթին, պետք է համաձայնվել Ամելի հեռ, այն հարցում, որ բերված բոլոր մանրամասները չի կարելի արժանահավատ համարել<sup>22</sup>: Չի կարելի նաև գերազնահատել այդ հանդիպման նշանակությունը: Ռոբեսպիերի երկարատև, ավելի ճիշտ է ասել՝ մշտական հափշտակվածությունը Ռուսոյով չի կարելի բացատրել այդ կարճատև հանդիպման ազդեցությամբ:

Ռոբեսպիերի գաղափարական ձևավորումն, իհարկե, ընթանում էր ոչ այնքան քոլեջի ամբիոնի, իսկ այնուհետև Սորբոնի հրամցրած առարկաների շար ներդրությամբ, և նույնիսկ ոչ այնքան արգելված այն գրականությամբ, որ կլանում էր նա, և որի Տեղինակները դասապարտված էին իշխանության ու եկեղեցու կողմից, որքան ամբողջ փոթորկալի նախաամպրոպային դարաշրջանի անմիջական ազդեցությամբ:

Ռոբեսպիերը աճում, հասունանում, ձևավորվում էր արտաբնական վարչակարգի ճգնաժամի և վերահաս Տեղափոխական ամպրոպի տարիներին: Եվ նա, ինչպես և նրա հասակակիցները, ապրեցին Լյուդովիկոս XV-ի գրեթե անսքող դատարտման և Լյուդովիկոս XVI-ի գահակալության ու Տյուրգոյի ռեֆորմների հետ կապված հույսերի ժամանակաշրջանը: Եվ նա ապրեց այդ կարճատև պատրանքների խորտակումն ու ոգեփորությունը, որ երիտասարդությանը համակել էր «ազատության տղաների», ինչպես այն ժամանակ անվանում էին բրիտանական թագի ղեմ ազատագրական պայքարի կյան ամերիկյան գաղտնաբանակներին, անվեհեր պայքարի մասին յուրերից: Բնությունից օժտված Մարսիմիլիան Ռոբեսպիերը ազահովամբ, ուշագիտ ունկնդրում էր ժամանակի ազմուկը և

Նրանում տարբերում, ավելի պարզորոշ, քան նրա շատ հասարակակիցներ, ամպրուպի մոտենալն ազդարարող առաջատար ձայները:

Ժան-Ժակ Ռուսոն կարողացավ այդքան նշանակալից ու կայուն ազդեցություն գործել Սորբոնի պատանի ուսանողի, այնուհետև իրավունքի բակալավրի, փաստաբանի և քաղաքական գործչի վրա, թվում է, ամենից առաջ այն պատճառով, որ նրա ստեղծագործություններում, դրանց ողջ հակասականությունը հանդերձ, Ռորեսպիերը, ինչպես և այն ժամանակ նրան անձանոթ Մարատը կամ ավելի ուշ Սեն-Փյուստը, ամենից ավելի ուժեղ զգաց նախահեղափոխական ժամանակների խոսվարար ոգին և գտավ ժողովրդական զանգվածների աղոտ, մինչև վերջ չդիտակցված ակնկալությունների առավել վառ արտահայտումը: Մաքսիմիլիան Ռորեսպիերը արգեն դպրոցական, իսկ հետո համալսարանական նստարանից դառնում է ուսուցական: Այդպիսին նա կմնա և հետագայում: Բայց դա չպետք է հասկանալ որպես ինչ-որ քարայած ու անփոփոխ մի բան: Կանցնի ժամանակ և աշակերտը շատ բաներում առաջ կանցնի իր ուսուցչից:

1781 թվականի վերջերին քսաներեքամյա իրավունքի լիցենցիատ Մաքսիմիլիան դը Ռորեսպիերը (ըստ երևույթին փառասիրությունից զրգված, նա այդպես էր շարունակում ստորագրել ևս որոշ տարիներ), Փարիզում ամբողջուպես և հաջողությամբ ավարտելով իրավաբանական գիտությունների դասընթացը, վերադարձավ իր հայրենի քաղաքը՝ Արրաս: Ինչպես և նրա հայրն ու պապը և ինչպես նրա նախապապն ու պուպի պապը, նա հավատարիմ մնաց դատավորական մասնագիտությանը: Նա Արրասի թագավորական դատարանում զբաղեցրեց փաստաբանի աթոռը: Կարող էր թվալ, որ ամեն ինչ նորից է կրկնվում. վերականգնվում է Ռորեսպիերների ընտանիքում ավանդական դարձած ևս մի շրջան:

Երիտասարդ փաստաբանը իր քրոջ՝ Շառլոտայի հետ բնակություն հաստատեց Մոմոն փողոցի վրա գտնվող լավագույն տներից մեկում: Մահացած պապից և մորաքույրներից նրան հասավ ժառանգության ինչ-որ մաս: Նա սկսեց լավ, նույնիսկ խնամքով հագնվել: Նրա գազվածությունը, ծանրաբարո շարժուձևը, անպաճույճ, կշռագատված խոսքը համաքաղաքացիների վրա գերազանց առավորություն էին գործում: Արրասի

նազույն և ամենահարգելի փաստաբան պարոն Լիբորելը հովանավորում էր իր կրտսեր գործընկերոջը: Հաճախողները հանուշքով էին դիմում այդ երիտասարդ, բայց լուրջ փաստաբանին՝ իրենց նախնիների գործի արժանավոր փոխարինողին: Կարելի էր սպասել, որ փարիզյան պատանուկից ազատախոհական հրապուրանքները շուտով կմոտացվեն (ո՞ւմ հատուկ չէ իրապուրվել տասնյոթ տարեկանում), Ռուսոյի հատորիկները զրադարակներում կծածկվեն փոշով, երիտասարդ փաստաբանը կըջանա, կամուսանա քաղաքի ամենահարուստ հարսնացուներից մեկի հետ և կզառնա Արրասի նույնպիսի բարեկանն և սրտավաճոր քաղաքացի, ինչպես նրա հայրն ու պապը, նրա նախապապը:

Բայց ամեն ինչ այլ կերպ ստացվեց:

Ճիշտ է, երիտասարդ փաստաբանն իրոք արագորեն հաջողություն և ճանաչման հասավ իր գավառում: Նա հեշտուկյամբ և առանց նկատելի ջանքերի առաջ անցավ իր մի քանի հնականուն գործընկերներից: Նրա ելույթները դատարանում ուշադրության արժանացան, և նա դարձավ Արրասի ամենահարգված քաղաքացիներից մեկը: Բայց իր հայրերի մասնագիտության մեջ երիտասարդ Ռորեսպիերը որոշ նորություններ մտցրեց: Նրան չէին զայնակողում ոչ խոշոր վաստակը, ոչ շահավետ գործերը և ոչ էլ բնզայնվող կապերը երկրամասի հարուստ և ազդեցիկ մարդկանց հետ: Նա տարածացրեց իր ավագ գործընկերոջ՝ իրեն հովանավորող Լիբորելի հետ և աներկյուղ կոնֆլիկտների մեջ էր մտնում Արտուա զավառի ուժեղ մարդկանց հետ, երբ դա պահանջում էին իր համոզմունքները: Նա ձգտում էր փաստաբանի իր մասնագիտությունը գործնականում իրականացնել նրա բարձրագույն նշանակության համապատասխան՝ լինել թույլերի և անմեղների պաշտպանը: Նա դժվար գործ ձևոնարկեց՝ օգնել եպիսկոպոսի հետ երկար ժամանակ դատավիճի մեջ մտած գյուղացիներին: Նա շվախեցավ պալատի մեջ մտնել նաև տեղական եկեղեցական իշխանությունների հետ հանուն անմեղ տեղը զրպարտված արհեստավորի և կարողացավ լազթանակի հասնել այդ դժվարին դատավարությունում:

Նրան ամենամեծ հույակ բերեց Սենտ-Օմեր քաղաքից ոմեն վիսերի աղմուկ հանած և քաղաքական բնույթ ունեցող դատավարությունը: Ֆիզիկայով հրապուրված Վիսերին իր տան վրա տեղակայել էր շանթարգել, որ հայտնագործել էր Ֆրանկլինը:

Պա բավական էր, որպեսզի տեղական իշխանությունները նրան մեղադրեին հանցագործ մտադրությունների մեջ: Որոշվեց շանթարգելը հանել՝ որպես «հասարակական կարգի համար վտանգավոր»:

Վիսերին դիմեց Ռոբեսպիերի օգնությունը: Երիտասարդ փաստաբանը հանուշիուկ ձեռնարկեց այդ գործը: Այնտեղ ընդհարվում էին երկու հակադիր աշխարհներ՝ խավարամտությունն ու լուսավորությունը, երեկվա ու վաղվա օրը, և նա ուրախ էր մարտնչել «փիլիսոփաների կուսակցության» հակառակորդների դեմ: Այդ դատավարությունն իր վրա բեռեց հասարակության ուշադրությունը: Ռոբեսպիերը Արրասի դատարանում հանդես եկավ երկու կրակոտ ճառերով, որոնք այնուհետև Փարիզում լույս տեսան առանձին գրքույկով<sup>65</sup>: Գործը շահվեց և այն Ռոբեսպիերին հռչակ բերեց ամբողջ կրտսույի գավառում:

Բայց Ռոբեսպիերը երիտասարդ էր, և որքան էլ նա նախանձախնդրությամբ վերաբերվեր ճնշվածների ու անմեղների պաշտպանի իր պարտքին, փաստաբանի նրա պարտականությունները չէին կլանում ոչ նրա ամբողջ եռանդը, ոչ էլ նրա բոլոր ձգտումները: Նա ազատ ժամերին գրում էր հարթ ու նրբին բանաստեղծություններ բնության գեղեցկության, վարդերի բուրմունքի մասին՝ բանաստեղծական վայելչագրություն, որն աչքի չէր ընկնում ոչ առանձին տաղանդով, ոչ էլ զգացմունքների կամ մտքի պայծառությամբ: Պա մի տուրք էր մոգային, և նա ինքն էլ նշանակություն չի տալիս իր բանաստեղծական փորձերին: Նա գրում է փիլիսոփայական-գրական տրուկտատներ բարոյախոսական թեմաներով՝ ընտանիքում կիրառվող պատիժների կամ այն ժամանակ հանրաճանաչ բանաստեղծ Գրեսի և նրա «Վեր-Վեր» պոեմի մասին<sup>66</sup>: նրա գրական փորձերը հաջողություն ունեն: Բարոյախոսության մասին աշխատությունը, որ նա ուղարկել էր Մեջի գիտություն և արվեստի թագավորական ընկերության հայտարարած մրցանակաբաշխությունը, արժանացավ մեղալի ու պարպկի, և շոյված հեղինակը շտապեց իր աշխատությունը առանձին գրքույկով հրատարակել Փարիզում:

Այն ժամանակ Ֆրանսիայի մի քանի գավառական քաղաքներում գոյություն ունեին տեղական սկադեմիաներ, որոնք հանդիսանում էին երկրամասի նշանավոր կամ իրենց նշանավոր երեսակալող գործիչների կենտրոններ: Այդ սկադեմիաները եթե ոչ զիտական, ապա համենայն դեպս գավառի մտավոր

կյանքի յուրատեսակ կենտրոններ էին: Արդեն գրեթե կես դար սկզբներին գոյություն ունեին նաև Արրասում: Ութսունական թվականներին այն ապրում էր ծաղկման ժամանակաշրջան, և նրա անդամների թվում կային դեմքեր, որոնք հետևում էին ժամանակի առաջավոր զաղափարներին: Գյուբուա զը Ֆոսեն, որն աշխույժ նամակագրություն ուներ երիտասարդ Բարյոթի հետ, Լազար Կարնոն, որի անունը հետագայում խոշոր տառերով կմտնի Ֆրանսիայի պատմության մեջ, փաստաբան Բյուխարը՝ Մաքսիմիլիան Ռոբեսպիերի մտերիմ բարեկամը և ուրիշներ:

1783 թվականի աշնանը, ըստ երևույթին Բյուխարի նախանունությամբ, Ռոբեսպիերն ընտրվեց սկադեմիայի անդամ: Երկը տարի հետո, 1786 թվականին, նա ընտրվեց սկադեմիայի պրեզիդենտ: Այս ընտրությունը միայն այն հեղինակության վկայությունը չէր, որ նա կարողացավ նվաճել սկադեմիայի իր ելույթակիցների միջավայրում, այն արտացոլում էր և Ռոբեսպիերի հեղինակության անը գավառական քաղաքի առաջավոր շրջաններում:

Բայց երիտասարդ փաստաբանի գործունեությունը չի սահմանափակվում միայն պաշտոնական կամ կիսապաշտոնական խմբակությունների պատերի ներսում: Նա հաճախ է լինում իր բարեկամ Բյուխարի տանը և տիկին Մարշանի տանը, ուր հավաստվում է Արրասի «բոմոնդը» (արիստոկրատական գերնախալը:— Մ. Ք.): Նա չի խուսափում երիտասարդ գեղեցիկ կանանց ընկերակցությունից, և բամբաստողները (իսկ փոքր քաղաքում ո՞վ բամբաստող չէ) պատմում են օրիորդ Դեկուլ՝ իր քրոջ ընկերուհու նրա հրապարակելու մասին, իսկ ավելի ուշ, կիսաձայն միմյանց են փոխանցում այն լուրը, թե երիտասարդ փաստաբանն արդեն զրեթե իր ազգականուհի Անաիս Դեգորտիսի փեսացուն է:

Որն է այստեղ ճշմարիտը, որը հերյուրանքը՝ դժվար է դատել, և վերջապես դա այնքան էլ կարևոր չէ: Ռոբեսպիերի վաղ շրջանի գրագրություններում պահպանվել են երիտասարդ մի աղջկա ուղղված նամակներ, որոնք զրված են պրական հրդեհվածություն այն նույն փութաշանությամբ, որն այնքան հատուկ էր տասնութիորդ դարին, նամակային արվեստի դարին, բայց սրունցում դժվար չէր մի որոշ բան էլ ավելին կարգալ:

Ռոբեսպիերը տեղի գրական-դերասանական «Սոցիալի» («Վարդերի բարեկամների») ընկերության գործուն մասնակիցն

էր: Նա այդ ընկերութեան մեջ մտաւ 1787 թվականին: Ընդունելութեան հանդիսավոր-կատակային արարողութեան ժամանակ նրան պէնտ զավտթով և նրա պատվին երգած բանաստեղծութեամբ ողջունեց հրետանային մի երիտասարդ սպա, որը պերճաշուք երկըր-պագուի և ամենահմուտ բանաստեղծի համբավ ունէր Արրասի երիտասարդ տաղանդների այդ համարութեամբ: Սովորութեամբ պահանջում էր, որպէսզի «Վարդերի բարեկամների» ընկերութեան նորընտիր անդամը հանպատրաստից, անհարկ պատասխանի բանաստեղծութեամբ: Արրասի ակադեմիայի երիտասարդ պրեզիդենտն իր բարձրութեան վրա գտնվեց: Նույն, փոքր-ինչ զեղծված մեղեդիով, Ռոբեսպիերը հանպատրաստից տեղնուտեղը երգեց մի կատակ-բանաստեղծութիւն:

Այդ երիտասարդ սպայի հետ, որն այդպիսի անհոգ ու անկեղծ ուրախութեամբ ողջունեց «Վարդերի բարեկամների» ընկերութեան նոր եղբայրակցին, Ռոբեսպիերը դեռ շատ է հանդիպելու Գա Լագար Կարնոն էր՝ Հանրապետութեան պաշտպանութեան տպագր նշանավոր կազմակերպիչն ու փառաբանված մաթեմատիկոսը: Կանցնեն տարիներ, ընդամենը միայն մի քանի տարի ու երեկվա ընկերները, որոնք գալովսիների մտերմական զրնգոցով անհոգութեամբ տոնում էին որևէ մեկի հաջող բանաստեղծական հնարանքը կամ սուր խոսքը, դարձյալ կհանդիպեն, բայց այս անգամ արդեն անպիշող խոսքերի մեջ ժլատ Հասարակական փրկութեան կոմիտեի՝ օտար աշքերից թաքուն նիստերի ժամանակ, Հանրապետութեան ճգնաժամային օրերին, իսկ հետո ընդմիշտ կհեռանան, բաժանվելով անհաշտ թշնամանքով: Բայց դա կլինի հետո:

### III

Վարդաց սպաավոր, բոլորի կողմից կանխատեսված և այնուամենայնիվ անսպասելի ամպոտայր վրա հասավ 1788—1789 թվականներին: Այն ժամանակ, երբ գավառական, մայրաքաղաքից և նրա տափնապետներից հեռու Արրասում կյանքը թվում է թե հոսում էր առանձնապէս խաղաղ, Փարիզում, իսկ նրանից հետո և ամբողջ երկրում քաղաքական մթնոլորտն արդեն ծայրաստիճան շիկացել էր: Երկրում ստեղծվում էր հեղափոխական իրադրութիւն:

Գլուղայիական խռովութիւններ թագավորութեան շատ գավառներում, կարիքից հուսահատութեան հասած պլեբեյների Լյուլթներ քաղաքներում, որն արտահայտվում էր պարենային կրպակները, պահեստները, հարուստների անիքը ավերելով, հասարակական հուզումներ Փարիզում, խորհրդավոր հավարութիւնը Պալե-Ռոյալում, հակակառավարական թուրքիկներ ամենամասնապասելի տեղերում: Բանն այնտեղ հասավ, որ Բուսլական օպերայում թագավորական օթյակի թավշի վրա ինչ-որ մեկը փակցրել էր թղթի կտոր, որի վրա խոշոր տառերով գրված էր. «Դողացե՛ք, բռնակալներ, ձեր թագավորութեան վերջն է գալիս»<sup>37</sup>:

Մտալուտ վախճանի այդ գգացողութիւնը վերջապէս հասավ և խաղաղ Արրաս: Ու այնտեղ, Արտուա դավառում, ինչպէս և ամբողջ թագավորութիւնում, ամեն ինչ շարժման մեջ մտաւ: Երիտասարդների ուրախ կատակները, անհոգ զվարճութիւնները «Վարդերի բարեկամների» շրջանակում, սենտիմենտալ բանաստեղծութիւնները՝ ամեն ինչ անմիջապէս դեն նետվեց և վրան խաչ քաշվեց: Ռոբեսպիերը գլխովին ներգրավուից քաղաքական պայքարի մեջ:

1788 թվականի օգոստոսի սկզբներին պաշտօնապէս հայտարարվեց Գլխավոր շտաբներ գումարելու մասին: Արդեն երկու հարյուր տարի Գլխավոր շտաբները չէին հավարվել և թագավորի՝ անհրաժեշտութիւնից թելադրված այդ որոշումը վիթխարի տպավորութիւն է գործում ամբողջ երկրում:

Երիտասարդ փաստաբանը ներգրավվում է քնտրական պայքարի մեջ: Նա արագ գրում է և նույնքան արագ էլ հրատարակում մի գրքույկ Արտուայի շտաբների արժանական օեֆորմի անհրաժեշտութեան մասին<sup>38</sup>: Այդ երկն ուղղված է Արտուա գավառի բնակիչներին և առաջին հայացքից շոշափում է նեղուտեղային բնույթի հարցեր, որոնք դուրս չեն գալիս գալուտի սահմաններից: Բայց առաջին տպավորութիւնը խորուսիկ է: Թեև երկի առարկան իսկապէս Արտուա դավառի վերակառուցման հարցերն են, հեղինակը դրանք մեկնաբանում է այնքան լայնուրեն, որ գրանք կորցնում են իրենց լուրի նշանակութիւնը: Այդ ստեղծագործութեան մեջ Ռոբեսպիերը լսատորեն մերկացնում է նախնապատի և կառավարական իշխանութիւնների կամայականութիւնն ու գործողութիւնների անօրինականութիւնը, քննադատում է հարկային սխտեմը, որն իր սուր ծայրով ուղղված է

երրորդ դասի գեմ: Հեղինակը նկարագրում է ծայրահեղ ազդե-  
տութիւն հասած գշուղացիութեան լիակատար իրավազրկութեան-  
և դաժան կարիքի պատկերը: Ռորեսպիները խոսում է Արտուալի  
գշուղացիների աղետալի վիճակի մասին: Բայց մի՞թե նրա ներ-  
կայացրած ժողովրդի տառապանքների պատկերը նույն շափով  
չի արտացոլում վիճակը Շամպանում, Տուրենում և թագավո-  
րութեան մյուս մասերում: Արտուալում գոյութիւն ունեցող  
կարգերի խիստ քննադատութեանը վերաճում է ամբողջ Ֆրան-  
սիայում գոյութիւն ունեցող վարչակարգի քննադատութեան ու  
դատապարտման:

Գրքույկը հսկայական հաջողութեան ունեցավ: Նրա հեղինա-  
կը քիչ թշնամիներ չվաստակեց դավառի կառավարիչների ու  
քննադատութեանից վիրավորված անձանց թվից: Բայց նա  
ավելի շատ նոր բարեկամներ ձեռք բերեց: Կարճ ժամանակ անց  
գրքույկը լույս տեսավ երկրորդ հրատարակութեամբ:

Այժմ երիտասարդ փաստաբանին լավ գիտեն և՛ Արրասում,  
և՛ Արտուալի գավառում: Արրասի առաջավոր մարդիկ հանձին  
նրա տեսնում են երրորդ դասի շահերի բազմախոստում պաշտ-  
պանի: Նրան ընտրում են սկզբում իբրև բասնշորս ընտրող-  
ներից մեկը Արրաս քաղաքի երրորդ դասից, իսկ հետո, 1789  
թվականի ապրիլին, Դիսավոր շտատների տասներկու դեպու-  
տատներից մեկը:

Ռորեսպիների ժողովրդայնութեանը հայրենի քաղաքում աճում  
է: Զարմանալի չէ, որ նրան են հանձնարարում Արրասի օկրուգի  
ընտրողների կողմից ներկայացվելիք համահավաք հրահանգի  
կազմումը: Իրեն հատուկ եռանդով նա ձեռնամուխ է լինում  
պատվավոր ու պատասխանատու գործին: Ի դեպ, դա նրան հնա-  
րավորութեան է տալիս համակարգել նաև քաղաքական պա-  
հանջների իր սիրած ծրագիրը:

Ռորեսպիների կազմած Արրասի ընտրողների հրահանգը ինչ-  
որ մի բացառիկ փաստաթուղթ չէ այն ժամանակվա մյուս հրա-  
հանգների մեջ: Նա չի պարմացնում ոչ պահանջների ծայրահեղ  
ռազիկալիզմով, ոչ շարագրանքի ձևով: Բայց փոխարենը այդ  
փաստաթղթում հետևողականորեն ու արամբանորեն շարա-  
դրված են այն ժամանակվա գլխավոր դեմոկրատական պահանջ-  
ները՝ դասային արտոնութեանների ոչնչացման, անձի, մամու-  
լի, խղճի ազատութեան ապահովում, հարկերի արդարացի բա-

ժանում, գործադիր իշխանութեան իրավունքների սահմանա-  
փակում և այլն:

Իհարկե, այդ փաստաթուղթը չի կարող դիմել որպես Ռո-  
րեսպիների քաղաքական հավատամք հեղափոխութեան նախօր-  
յակին: Որպես համահավաք հրահանգի կազմող և խմբագիր,  
Ռորեսպիները կաշկանդված էր այն նյութով, որն ինքն էր ընդ-  
շանքացրել ու համակարգել: Բայց, այնուամենայնիվ, այդ փաս-  
տաթուղթը, իհարկե, համապատասխանում էր նաև Ռորեսպիների  
սեփական հայացքներին և նշանակալից շափով արտացոլում  
դրանք:

Ինչպես պարզվում է, և՛ «Արտուալի ժողովրդին» գրքույկից,  
և՛ 1788—1789 թվականներին Ռորեսպիների մյուս ելույթներից,  
այն ժամանակ նա դեռ շատ պատրանքներ էր անջնջելի պահում:  
Նա չի է վստահութեամբ ու բարյացակամութեամբ կուզովիկոս  
XVI թագավորի, նրա բարի մտադրութեանների, գոյութեան ունե-  
ցող անարդարութեանները վերացնելու նրա ցանկութեան նկատ-  
մամբ: Նա ենթադրում է, որ թագավորի կամքից է կախված  
«Երկրի վրա երջանիկ ժողովուրդ ստեղծելը» և միապետին ժո-  
ղովուրդների ազատութեան ու երջանկութեան հետ ընդմիջա  
միացնելը: Նույնպիսի վստահութեամբ է նա վերաբերվում և  
1788 թվականին վերստին ֆինանսների պետական վերահսկիչ  
նշանակված Նեկկերին: Ռորեսպիները հանձին նրա տեսնում է  
մեծ ռեֆորմատորի և հույս ունի, որ մեկի բանկիրը ընդու-  
նակ է փրկել երկիրը:

Այս միամիտ պատրանքները չեն կարող դիմել որպես Ռո-  
րեսպիների քաղաքական կարծատեսութեան և քաղաքական հա-  
յացքների հետամնացութեան ապացույց հեղափոխութեան  
նախօրյակին: Նման պատրանքներն այն ժամանակ հատուկ էին  
երրորդ դասի բոլոր ներկայացուցիչներին: Դրանցից ազատ չէր  
նույնիսկ այնպիսի հասուն և խորաթափանց քաղաքական գոր-  
ծիչ, ինչպես Մարտոլը, թեև, իհարկե, ամբողջութեամբ վերցրած  
նրա դիրքորոշումն այն ժամանակ ավելի ձախ էր Ռորեսպիների  
գիրքորոշումից:

Հեղափոխութեան շեմին Ռորեսպիներն արդեն անկեղծ ու հա-  
մոզված դեմոկրատ էր: Նա մարտնչում է աբսոլյուտիստական  
վարչակարգի և նրա կամակատարների գեմ, նա կրթութեամբ  
պաշտպանում է ժողովրդի շահերը, նա դատապարտում է ոչ  
միայն ֆեոդալազատային հիերարխիկ կարգերը, այլև ցասումով

մերկացնում է հարստության շահամոլությունը: Պատահական չէ, որ իր կյանքի բեկումնային այդ օրերին է նա գրում հիացական «Ձոն Ժան-Ժակ Ռուսոյին», որում փառաբանում է իր ասուցչին:

Բայց ապարդյուն կլիներ Ռոբեսպիերի մինչևևղափոխական ժամանակվա ելույթում փնտրել ժողովրդին ուղղված դիմում, որը նրան կոչիր զենքը ձեռքին իրականացնել իր իրավունքները: Արքայան ժամանակաշրջանի Ռոբեսպիերը զեռ չի բարձրանում մինչև իր իրավունքների համար ժողովրդի զինված պայքարի անհրաժեշտության բմբունմանը, մի բան, որ գրսետրեց Մարատը «Ստրկության շղթաներում», գրված դեռևս 70-ական թվականների սկզբներին:

Ռոբեսպիերի զեմոկրատական զղացմունքների ու համոզմունքների ողջ անկեղծությունը հանկերծ, նրա խառնվածքի գործունեությամբ և խոսքը գործի վերածելու ձգտմամբ (դա նրա՝ որպես քաղաքական գործչի, ամենաուժեղ գծերից մեկն էր) հանդերձ, արքայան ժամանակաշրջանում նա զեռ զեմոկրատական րափոխական չէր: Ըստ երևույթին, ավելի ճիշտ կլիներ ասել, որ մինչև հեղափոխությունը նա անկեղծ ու համոզված զեմոկրատ էր, որն աշխատում էր գործողության մեջ զնել իր համոզմունքները, բայց զեռևս գտնվում էր սահմանադրական-միտայետական պատրանքների ւզգեցություն տակ:

#### IV

Արքայի երրորդ դասի զեպուտատ, Երեսնամյա փաստաբան Մաքսիմիլիան Ռոբեսպիերը 1789 թվականի ապրիլին եկավ Վերսալ և բնակություն հաստատեց Սուրբ Նդիսաբեթ փողոցում զանվոզ փոքրիկ հյուրանոցում:

Նա բոլոր հիմքերն ուներ հույսով նայելու ապագային: Ընդամենը յոթ ատրի էր անցել այն ժամանակամեկից, երբ աղքատ, բոլորին անհույս իրավունքի լիցենցիատը թողեց Փարիզը: Եվ ահա նա նորից փերադարձավ թաղավորի ու Գլխավոր շտատների նստավայրը որպես ֆրանսիական ժողովրդի լիբրավ ներկայացուցիչ, որը կոչված էր մյուս գործընկերների հետ միասին Ֆրանսիայի ճակատագրի համար փերկարար որոշումներ զանել:

Բայց, հայտնվելով Վերսալի «փոքր զվարճանքների» պալատի վիթխարի շենքում, որտեղ նիստեր էին գումարում Գլխ-

խավոր շտատները, պարզվեց, որ նա երրորդ դասի վեց հարյուր զեպուտատներից մեկն է միայն: Հարագատ քաղաքում ունեցած նրա հաշոդույթյուններն անեկատ էին մնացել երկրում: Ոչ Վերսալում, ոչ Փարիզում ոչ որ շղիտեր Արքայի համեստ փաստաբանին: Գլխավոր շտատների զեպուտատների մեջ քիչ չէին մեծածոչակ անունները, որոնք հայտնի էին ամբողջ Ֆրանսիային, ամբողջ Եվրոպային: Կոմս Ուորե Միքալո, «Հին և նոր աշխարհի հերոս» մարկիզ Լաֆայետ, իրեն «Լ՛նչ է երրորդ դասը» նշանավոր գրքույկով փառաբանած արքա Միլեյես, ամերիկյան հանրապետության աղատության պատերազմի իրզալս մասնակից Շուալ Լամետ, զիտնական-աստղազես Բայի... Նրանց հայտնվելը ամբիոնի մոտ զիմավորում էին բուն երկարատե ժափահարություններով: Նրանց հոչակը նախօրոք կանխորոշում էր ելույթների հաշոդույթյունը:

Հոչակավոր և տաղունզավոր մարդկանց այդ պայծառ համատեղության մեջ Արքայի զեպուտատը անեկատ մնաց: Այնինչ Ռոբեսպիերը Գլխավոր շտատների աշխատանքի առաջին իսկ օրերից գործուն մասնակցություն ունեցավ ժալավոր պայքարում: Դատերի միջև ծագած սուր վիճարանությունների ժամանակ նա կոմունաների<sup>85</sup> նիստի բնարկմանը ներկայացրեց քաղաքականապես իմաստուն և իրեն արզարացրած առաջարկություն՝ զիմել հոգևորականությանը, հրավիրելով նրան միանալու երրորդ դասին: Նա հեռատեսորեն ենթադրում էր, որ սուրին հոգևորականությունը՝ ծխական քահանաները զհանջատվեն իրենց դասի այն մասից, որը պաշտպանում է պատակատմը և կոխանա կոմունաներին<sup>86</sup>:

Արտուայի մյուս երեք զեպուտատների հետ միասին Ռոբեսպիերը նախաձեռնողն էր Գնդակախազի զահլիճում 1789 թվականի հունիսի 23-ին տեղի ունեցած նշանավոր ժողովում երգում ընդունելու առաջարկության, այն է՝ շղրվել, քանի զեռ չի մշակվի սահմանադրություն: Պատմական գրականության մեջ կարծիք է հայտնվել այն մասին, որ նրան է պատկանում հունիսի 17-ին կոմունաների նիստում ընդունված Ազգային ժողով անվան գաղափարը<sup>87</sup>:

Ի՞նչն էր զրգում Արքայի զեպուտատին աչրան Լոանգապին խառնվել Գլխավոր շտատների աշխատանքին: Փաստարկություններ, առաջ գնալու ցանկություններ, իր վրա ուղադրություն գրավելը:

Հաղիվ թե: Վերստում Ռորեսպիերի գտնվելու այդ առաջին շաբաթների մասին մեր տրամադրությունն ատակ եղած միակ լիարժեք աղբյուրում՝ իր բարեկամ Բյուրսարին ուղղված նամակներում, չի կարելի գտնել մի փաստ, որը վկայեր Ռորեսպիերի գործողությունների մեջ փառասիրական կամ նույնիսկ պարզապես անձնական դրդապատճառների մասին: Նա առհասարակ ոչինչ չի գրում իր մասին: Բավական է այդ նամակները համեմատել Միրաբոյի կամ Կամիլ Դեմուլենի նույն ժամանակվա նամակների, նրանց ինքնահասկողությունների, իրադարձությունների մեջ սեփական դերի շահագնացման հետ, որպեսզի իսկույններեք զգալ, թե որքան հեռու էին Ռորեսպիերի զգացմունքները, մտքերը, վարքագծի հոգեբանական հիմքը այն դրդապատճառներից, որոնք ոգեշնչում էին նշանավոր տրիբունին և «լատերի գլխավոր դատախազին»:

Ռորեսպիերն այդքան եռանդազին խճճվեց քաղաքական պայքարի մեջ այն պատճառով, որ այդ բանին էին նրան դրգում նրա համոզմունքները, պատասխանատվության զգացումը ժողովրդի հանդեպ, որը նրան վստահել էր ներկայացնել իր շահերը, նրա խառնվածքի գործունեությունը, խառնվածք, որ միշտ ձգտում էր սկզբունքները վերածել պրակտիկայի, խոսքը՝ գործի: Նույնիսկ Ազգային ժողովի աշխատանքի առաջին շաբաթներին (1789 թվականի մայիս-հունիս) Ռորեսպիերը քիչ գործ չկատարեց: Համենայն դեպս նա ավելի ակտիվ, ավելի եռանդուն էր Ազգային ժողովի շատ ուրիշ ղեկավարներից, անգամ նրանց մեծամասնությունից:

Եվ այնուամենայնիվ, Արրասի ղեկավարությամբ առաջվա նման շարունակում է աննկատ մնալ: Նրա նկատմամբ ոչ հետաքրքրություն, ոչ էլ ուշադրություն են դրսևորում: Լրագրային հաշվետվություններում նրա ելույթները գրվում են խիստ սեղմ և բացի այդ՝ ազավաղված: Լրագրողներն ու թերթերի լրագրողներն իրենց նեղություն չեն տալիս հիշելու նրա անունը: Ազգային ժողովում երրորդ դասի նրա եղբայրակիցներն անգամ անտարբերությամբ ու քամահրանքով են վերաբերվում Արրասի այդ համառ ղեկավարության, որը նրանց գավառաբարո ու հնաժողովում: Նրա ելույթների ժամանակ դահլիճում ազմուկը չէր գաղարում, իսկ նրա ձայնը չէր բավականացնում ավելի բարձր բզավելու և փոթորկվող դահլիճը լռեցնելու համար: Բայց ո՛չ անտարբերությունը, ո՛չ թշնամական քամահրանքը չէին կարող

Ռորեսպիերին շեղել ընտրած ճանապարհից: Նա գնում էր իր ճանապարհով՝ համոզված նրա անվրեպություն մեջ, նա անում և խոսում էր այն, ինչ անհրաժեշտ էր համարում ժողովրդի բարօրության համար:

1789 թվականի մայիս-հուլիս ամիսներին Բյուրսարին գրած նրա նամակները, որոնք նախատեսված չէին կողմնակի լսողների համար, ապշեցնում են դատողությունների անկախությամբ ու հասունությամբ, զարմանալի խորաթափանցությամբ: 1789 թվականի մայիսին, երբ Միրաբոյի փառքը գեներթին էր հասել, Ռորեսպիերը գրում է, որ «կոմս Միրաբոն շնչին դեր է խաղում, նրա վատ բարոյականությունը գրկել է նրան իր հանդեպ ունեցած ամեն վստահությունից»: Ավելի ուշ, հուլիսին, նա մեղմում է իր անհաշտ դատողությունները Միրաբոյի մասին, բայց շատ շուտով նորից վերադառնում է դրանց: Նա բացասաբար է սրակում Մունիեին, Տարթեին, Մալուեին՝ այն ժամանակ ժողովի լիբերալ-բուրժուական մեծամասնության մեջ մեծ հեղինակություն վայելող ղեկավարներին: Նա ծայրաստիճան զուսպ է գրում Լաֆայետի մասին<sup>90</sup>, որն այն ժամանակ ղեկավարների մեծամասնության և ամբոխի կուռքն էր:

Արրասի երկուսսարդ ղեկավարների համար, ըստ երևույթին, արդի կարծիքները ոչ մի արժեք չունեն: Պարզապես նա արհամարհում է դրանք և իր գործողություններում, իր ելույթներում ղեկավարվում միայն սեփական դատողություններով:

Իր պաշտպանած քաղաքական գծի ճշմարտացիության, ուսինքն ժողովրդի շահերին համապատասխանելու այդ անհողորդ համոզվածությունն էլ հենց այդպիսի հաստատակամություն, այդպիսի համառություն էր ներշնչում Ռորեսպիերին իր ելույթներում: Մ. Բուլուազոն հաշվել է. 1789 թվականին լրագրից արձանագրել են Ռորեսպիերի վաթսուհինը ելույթ Մահմոնադի ժողովում, 1790 թվականին՝ հարյուր քսանհինգ, 1791 թվականին՝ երեք հարյուր քսանութ ելույթ նրա ինքն ամսվա գործունեության ընթացքում<sup>91</sup>: Այս չոր թվերը ապշեցուցիչ են: Դրանց հետևում են թաքնվում անընդմեջ սաստկացող ճնշումը, գլխավորությունը հաղթահարող կամքի վիթխարի լարումը:

Խորաթափանց մարդիկ կարողացան մյուսներից շուտ գնահատել Արրասի՝ նախկինում Փարիզին անհայտ այդ ղեկավարների: Խելացի, ճարպիկ, նրբազգաց Բարբերը զր Վիեղակը՝ ապագա ֆելյանը, ապագա ժիրոնդիստը, ապագա յակոբինյանը և,

վերջապես, թերմիդորական Բարեբը, թերես, առաջիններից մեկն էր, ով գուշակեց և իր «Point du jour» թերթի էջերում արձանագրեց նոր ազդանդի հայտնությունը: Հայտնի է և Միրաբոյի խորաթափանց դատողությունը. «Նա հետուն կգնա, որովհետև նա հավատում է այն բանին, ինչ ասում է»:

Անցավ ևս քիչ ժամանակ և միշտ զուսպ, անփութկոտ, անփրզով ինքնավստահությամբ տուկեցուն Արրասի դեպուտատը, որին անհնար էր ոչ շփոթության մեջ դրել, ոչ մոլորեցնել, ոչ ահարեկել, կրքերով հուսալից աչք բազմաձայն ժողովին ստիպեց լսել իր ճառերը: Նա իր կողմը չգրավեց ժողովը, նա չնվաճեց և նրա համակրանքը. այն իր մեծամասնությամբ թշնամի էր մնում նրան: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի այստեղ քաղաքական շահերի անհամադաստասխանություն կար: Բայց աստիճանարար, բայց տա բայց, էլույթից էլույթ նա հնազանդեցնում, սանձում էր իրեն թշնամի այլ դաշիվը: Նա աչք «Ֆրանսիական ազգի ներկայացուցիչներին», որոնցից գրեթե յուրարանչուրը հովանակում էր առաջնակարգ գերի, վարժեցրեց հաշվի նստել իր հետ, ինչպես նաև ուժի և տագնապահույց ուղադրությամբ անկնդրել իր ճառերը:

Իհարկե, ինքը՝ Ռոբեսպիերն այս դժվարին ամիսներին բնթացքում նույնպես փոխվել էր. նա սուրբում էր կյանքից, սովորում ժողովրդից, հեղափոխությունից: Նրա վրա հսկայական, կարիքի է ասել վճռորոշ ազդեցություն ունեցավ հուլիսի 14-ի ժողովրդական ապստամբությունը, որը սկիզբ դրեց Ֆրանսիական մեծ հեղափոխությանը: Բյուխսարին ուղղված 1789 թվականի հուլիսի 23-ի նամակում գուսպ Ռոբեսպիերը խանդավառությամբ է գրում Բուստիլի գրավման մասին: Ի տարբերություն իր շատ ժամանակակիցների, նա իսկույնեթե հիշա գնահատեց հուլիսի 13—14-ի իրագործությունները որպես սկսվող մեծ հեղափոխություն:

«Իսկական հեղափոխությունը, իմ թանկագին բարեկամ, կարճ ժամանակվա բնթացքում մեզ դարձրեց ականատեսը մեծագույն իրադարձությունների, որպիսիք երբեք իմացել է մարդկության պատմությունը...», գրում է նա Բյուխսարին: Այդ հեղափոխության մեջ պիտավորը Ռոբեսպիերը համարում է ժողովրդի վճռական դերը, արտաստվոր ետանգը, որ նա գրականում է:

«...Հայրենասերների երեք հարյուր հազարանոց բանակը՝ բաղկացած բոլոր դասակարգերից, որոնց միացան Ֆրանսիական պարոլիան, շվեյցարացիները և ուրիշ զինվորներ, թվում է ինչ-որ հրաշքով հայտնվեցին գետնի տակից: Երկրորդ հրաշքը արագությունն էր, որով Փարիզի ժողովուրդը գրավեց Բաստիլը... Մարտափը, որ ներշնչում է այդ ազգային բանակը (այսինքն՝ զինված ժողովուրդը:— Ա. Մ.), որը պատրաստ է շարժվել վերսալի վրա, վճռեց հեղափոխության բախտը»<sup>92</sup>:

Հեղափոխության մեջ ժողովրդի գերի ճանաչումը պատահականորեն արտասանված բառեր չէին: Երեք օր առաջ, հուլիսի 20-ին, Ազգային ժողովում արտասանած ճառում Ռոբեսպիերը, սրամտությամբ մերժելով սեակցիոն դեպուտատներից մեկի առաջարկությունը՝ ժողովրդական շարժումները ճնշելու նամար ուժ գործադրելու մասին, մատնանշեց հուլիսի 14-ի ժողովրդական ապստամբության փրկարար դերը: «Մի՛ մոռացեք, պարոններ,— ասում էր Ռոբեսպիերը,— որ միայն այդ խոսվության շնորհիվ ազգը ձեռք բերեց իր ազատությունը»<sup>93</sup>:

Այդ ժամանակ Ռոբեսպիերը դեռ պահպանում է պատրանքները թագավորի և միապետության նկատմամբ. նա գրանցից այնքան էլ շուտ չի ազատվել: Բայց հենց հուլիսի 14-ից և այդ օրվա ուղղակի ազդեցության տակ է Ռոբեսպիերը դառնում հեղափոխական: Ժողովրդի, այլ ոչ թե պառլամենտականների՝ ժողովի դեպուտատների մեջ էր տեսնում նա հեղափոխության պիտավոր ուժը: Նա անվերապահորեն հավատում էր ժողովրդի անսպառ ուժին, նրա եռանդին, նրա գործունեակությանը: Եթե մինչև այժմ, մինչև հուլիսի 14-ը հասարակական տառադիմությունը, առաջխաղացումը նրան պատկերանում էր միայն լեզալ ձևերում, ապա Բուստիլի գրավումից հետո նա միանգամից հասկացավ, որ հեղափոխության հիմնական ուժը ժողովրդի անլեզու, արտապատյամենտական գործողությունների մեջ է, մասսաների հեղափոխական ակտիվության մեջ:

Իննելով իրավարան, զինված օրինականության բոլոր նըրությունների իմացությունը, նա միանգամից և անվերապահորեն հեղափոխական բնությունը բնորոշում է որպես ժողովրդի առջարի արդարացի ու անհրաժեշտ միջոց: Բյուխսարին ուղղված, արդեն մեջ բերված նույն նամակում նա բացահայտ հավանություն է գրում Փարիզի ժողովրդի կողմից Բուստիլի պարետի և վաճառականների ավագի մահապատժի (առանց դատի, իհար-

կե) մասին՝ ժողովրդի հանգեպ թշնամական գործողությունների համար: Նա կարճատև ու գործիմացորեն տեղեկացնում է. «Պարոն Ֆուլոն երեկ կախաղան բարձրացվեց ժողովրդի դատավճռով»<sup>94</sup>:

Ավելի ուշ նա հավանություն է տալիս ու պաշտպանում է հոկտեմբերի 5—6-ի ժողովրդական էլույթը՝ արշավանքը Վերսալի վրա, գյուղացիական էլույթները գյուղերում, ատելի կալվածատերերի կալվածքների հրդեհումը և այլն<sup>95</sup>: «Եթե Բրետանում ժողովրդի ցատումը այրեց մի քանի ղզյակ, ապա դրանք պատկանում էին այն պաշտոնատար անձանց, որոնք ժողովրդին զրկում էին արդարությունից, շէին ենթարկվում ձեռ օրենքներին ու շարունակում են ապստամբել սահմանադրության դեմ: Թող ուրեմն այս փաստերը ոչ մի վախ չներշնչեն ժողովրդի ու հայրենիքի հայրերին», — ասում էր Ռոբեսպիերը Մահմանադիր ժողովում<sup>96</sup>: Եվ նա եզրակացնում էր. «Չհետևենք նրանց քրթմընչոցին, ովքեր հանգիստ ստրկությունը գերադասում են որոշ գոհների գնով ձեռք բերված ազատությունից, և ովքեր մեզ անդադրում ցույց են տալիս մի քանի այրվող ղզյակների բոցերը: Ինչ է, մի՞թե Ողիսեսի ուղեկիցիների նման զուք ուզում եք վերադառնալ Կիկլոպի քարանձավը հանուն սաղավարտի ու գոտու, որոնք զուք այնտեղ եք թողել»<sup>97</sup>: Այս միտքը՝ բռնությունը, զոհերն արդարացված են, էթե դրանք անհրաժեշտ են հեղափոխությանը, անհրաժեշտ են ազատություն հաստատելու համար, Ռոբեսպիերը քանիցս զարգացնում է իր բազմաթիվ էլույթներում:

Բաստիլի գրավումից հետո Ռոբեսպիերը սահմանադրական դեմոկրատից վերածվում է հեղափոխական դեմոկրատի, դեմոկրատ հեղափոխականի: Իհարկե, դա չպետք է պարզեցված հասկանալ: Ռոբեսպիերը սահմանադրության կամ սահմանադրական մարշալարգի հակառակորդ չի դառնում: Ինչպես ժամանակի բոլոր հեղափոխական դեմոկրատները, նա ևս անհրաժեշտ է համարում մշակել սահմանադրություն: Հարցը միայն այն էր, թե ինչպիսի՞ն կլինի սահմանադրությունը՝ ժողովրդական, թե՛ հակաժողովրդական:

Նրան լիովին խորթ էր սահմանադրության այն ֆեոդալացումը որպես այդպիսին, միայն հանուն իր համար, որը հատուկ էր Ազգային ժողովի բուրժուա-լիբերալ դեպուտատներին: «...Թող մեզ շատեն սահմանադրության մասին: Այդ բառը մեզ

չափազանց երկար է թմրեցրել, չափազանց երկար է մեզ լեթարգիայի մեջ խորասուզված պահել: Այդ սահմանադրությունը կլինի միայն անօգտակար դիրք, և ինչ իմաստ ունի նման մի գրքի ստեղծումը, եթե մեզանից մեր ազատությունը խլում են օրորոցում»<sup>98</sup>:

Ահա հեղափոխական մտածողության հիանալի նմուշ: Ռոբեսպիերն իսկական ազատությունը բարձր է դասում ձևական սահմանադրությունից: Ուշադրության է արժանի այն, որ սահմանադրության նկատմամբ այդ հոյակապ, իսկապես հեղափոխական վերաբերմունքը Ռոբեսպիերը ձևակերպել էր 1789 թվականի հոկտեմբերի 21-ի ճառում, այսինքն հեղափոխության սկզբից ընդամենը երեք ամիս անց:

Ե՛վ ապագա սահմանադրության հատվածները քննարկելիս, և՛ ընթացիկ անցքերը գնահատելիս, և՛ հեղափոխության խնդիրները սահմանելիս Ռոբեսպիերը իր պիսավոր խնդիրն է համարում ժողովրդի շահերի պաշտպանությունը:

Նա Մահմանադիր ժողովում հետևողականորեն պայքարում է բոլոր հակադեմոկրատական նախագծերի դեմ, այն բոլոր առաջարկությունների դեմ, որոնք հանցափորձ են կատարում ժողովրդի իրավունքների դեմ: Ժողովրդի գերիշխանության, ամբողջ քաղաքական կյանքը ժողովրդի տիրապետության, մնացյալ բոլոր շահերի ու իրավունքների նկատմամբ ժողովրդի շահերի ու իրավունքների գերակայության գաղափարը դառնում է Մահմանադիր ժողովում և նրա սահմաններից դուրս Ռոբեսպիերի բոլոր էլույթների առաջատար թեման: «Պետք է հիշել, որ կատարությունները, ինչպիսիք էլ որ դրանք լինեն, հաստատվել են ժողովրդի կողմից և ժողովրդի համար, որ բոլոր նրանք, ովքեր կառավարում են, հետևաբար և թագավորները, միայն ժողովրդի լիազորներն ու ներկայացուցիչներն են...»<sup>99</sup>: Այս բաներում չափազանց հստակ է ձևակերպված Ռոբեսպիերի սկզբբունքային մերաբերմունքը սահմանադրության և նրա նշանակության նկատմամբ: Մահմանադրությունը պետք է մշակի ժողովրդի գերիշխանությունն ապահովող հիմնական օրենքները:

Ռոբեսպիերն այս դիրքերից Մահմանադիր ժողովում հետևողականորեն հանդես էր գալիս բոլոր հակադեմոկրատական նախագծերի դեմ, որոնք ժողովի բուրժուա-լիբերալ մեծամասնությունը աստիճանաբար, հողված առ հողված ընդունում էր որպես ապագա սահմանադրության մասեր: Ռոբեսպիերը մար-

արհշուժ է թագավորի ուղղակի կամ ուշացնող վետոյի վերաբերյալ առաջարկությունների, ընտրողների և ընտրվողների համար պայքարին ցենզ մտցնելու վերաբերյալ առաջարկությունների, քաղաքացիներին ակտիվների ու պասիվների բաժանելու դեմ և այլն:

Մահմանադիր ժողովում ունեցած իր ելույթներում Ռոբեսպիերը մերկացնում էր Ազգային ժողովի մեծամասնության քաղաքականության իսկական իմաստը: Նա ուղղակի խոսում էր այդ օրենսդրության հակաժողովրդական բնույթի մասին, քողազերծ էր անում շահախնդիր, նեղ եսասիրական զրգապատճառները, որոնցով ղեկավարվում էր ժողովի մեծամասնությունը:

«Եթե ազգի մի մասը ինքնակալական է, իսկ մյուս մասը նրա հպատակներն են, ապա այդպիսի քաղաքական կարգը նշանակում է արիստոկրատիայի վարչակարգի ստեղծում: Իսկ ի՞նչ արիստոկրատիա է դա: Ամենաանտանելի բոլոր արիստոկրատիաներից՝ հարուստների արիստոկրատիան, որի կեղծքմանն եք դուք ուղում հնթարկել ժողովրդին, որը հենց նոր է ազատվել ֆեոդալական արիստոկրատիայի կեղեքումից»<sup>100</sup>:

Ռոբեսպիերի այս դատողությունը հրաշալի է նրանով, որ այստեղ նա տալիս է Ազգային ժողովի լիբերալ մեծամասնության քաղաքականության էության դասակարգային գնահատականը: Քաղաքական կամ էթիկական վեճերի ոլորտից նա հարցը տեղափոխում է դասակարգային պայքարի բնագավառը: Ժողովի մեծամասնության բոլոր հակադեմոկրատական առաջարկությունների իրական իմաստը կայանում է նրանում, որ, ինչպես պարզում է Ռոբեսպիերը, նա ձգտում է իրավաբանորեն, սահմանադրորեն հավերժացնել «հարուստների արիստոկրատիայի» տիրապետությունը: Ռոբեսպիերը պայքարում է այդ միտումների, այդ քաղաքականության դեմ, պաշտպանելով ժողովրդի շահերը, որին նոր վտանգ է սպառնում:

Արդյոք Ռոբեսպիերը միակ քաղաքական գործիչն էր երկրում, որ դիտակցեց իշխանության հավերժացման վտանգը «հարստության արիստոկրատիայի» ձեռքում, այսինքն խոշոր բուրժուազիայի, ինչպես մենք ասում ենք այժմ: Ո՛չ, իհարկե:

Մենք գիտենք, որ Մարատը «L'Ami du peuple»-ի էջերում, գրեթե տառացիորեն այն նույն արտահայտություններով, ինչ Ռոբեսպիերը, հանդես էր գալիս խոշոր բուրժուազիայի տիրա-

պետությունն ամրապնդելու փորձերի դեմ: «Իսկ ի՞նչ ենք մենք շահում այն բանից, որ ոչնչացրինք ազնվականության արիստոկրատիային, եթե նրան փոխարինի հարուստների արիստոկրատիան», — վրդովված հարցնում էր Մարատը 1790 թվականի հունիսի իր հողավճաններից մեկում<sup>101</sup>:

Մենք այստեղ տեսնում ենք ոչ միայն Ռոբեսպիերի ու Մարատի քաղաքական դիրքորոշումների մերձեցումը, այլև քաղաքական ձեակերպումների ճշգրիտ համընկնումը: Արժե՞, արդյոք, որոնել պարզելու համար, թե ով է առաջինը հեղափոխության բուռնանի մեջ մտցրել «հարուստների արիստոկրատիա» տերմինը, կամ ով է առաջինը հանդես եկել նրա դեմ պայքարելու կոչով: Մարատը (նա ինքն է այդ մասին գրել) ուշադրությամբ հետևում էր Ռոբեսպիերի ելույթներին Ազգային ժողովում: Անկասկած, Ռոբեսպիերը պետք է կարգար Մարատի մարտական թերթը: Ավելի ուշ ժամանակի համար դա անվիճելի է, քանի որ Ռոբեսպիերն այդ մասին ինքն էր ասում: Բայց պետք է համաձայնել Մ. Բուլուազոյի հետ, որը ենթադրում է, որ Ռոբեսպիերը նախկինում էլ է կանոնավոր կերպով կարդացել «L'Ami du peuple»-ը<sup>102</sup>:

Բայց հազիվ թե հարկ կա ջանք թափել իմանալու, թե այդ երկու քաղաքական գործիչներից որին պետք է այդ հարցում տալ առաջնության դափնին: Նրանց դիրքորոշումները քաղաքական շատ (թեև ոչ բոլոր) հարցերում այդ ժամանակ խիստ մոտ էին: Բայց Մարատից բացի էլ արդեն այն ժամանակ, 1789—1790 թվականներին, Մահմանադիր ժողովի հակադեմոկրատական քաղաքականության դեմ հանդես էին գալիս, թեպետև պակաս հետևողականությամբ, և՛ Կամիլ Դեմուլենը, և՛ Ժորժ Դանտոնը, որոշ կորզելիներ, «Révolutions de Paris» թերթը և այլն:

Այստեղ կարևոր է այլ բան: Եթե ոչ երկրում, ապա Ազգային ժողովում Ռոբեսպիերը, այնուամենայնիվ, գրեթե միակ ղեկուստան էր, որը կանոնավոր և հետևողական պայքար էր մղում այդ քաղաքականության դեմ: Ժողովում նրան պաշտպանում էին ոչ ավել քան շորս-հինգ ղեկուստատ: Նրան մոտ էին Պետիոնը, Դրեզուարը, որոնք նույնպես ծայրահեղ ձախ հետորոնք էին: Մնացած բոլորը (ճնշող մեծամասնությունը) նրան կամ բացահայտ թշնամարար էին վերաբերվում, կամ անբարյացակամ շեղոք:

Որքան անօրինակ խիզախություն, բնավորության ամբու-  
թյուն էր պետք ունենալ, որչափ համոզված պետք էր լինել իր  
արդարացիության մեջ, որպեսզի օրըստօրն դնալ հոսանքի դեմ,  
եւույթ ունենալ տազնապահույժ թշնամական ուշադրության  
միջնորդում, միայնակ բուրբի դեմ կամ գրեթե բուրբի:

Իհարկե, կային Սահմանադիր ժողովի և այնպիսի որոշում-  
ներ, որոնք Ռոբեսպիերը պաշտպանում կամ էլ հավանություն  
էր տալիս: Ինչպես հայանի է, Սահմանադիր ժողովը բնութենի է  
մի շարք ղեկերտներ, որոնք ունեին հակաֆեոդալական և, հետե-  
վաբար, անկասկած առաջադիմական բնույթ: Այդպիսին էր  
Մարդու և քաղաքացու իրավունքների նշանավոր ղեկավարացիան՝  
հեղափոխական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ,  
որն ավելի համոզիչ էր արտացոլում ֆեոդալիզմի դեմ պայքա-  
րի ելած ժողովրդական դանդաղների հզոր հեղափոխական  
պոռթկումը, քան որևէ մեկ այլ փաստաթուղթ: Այդպիսիք էին  
դասերի, ժառանգական ախտոսանների ոչնչացման, Ֆրանսիան  
մի շարք խորթ գավառների մասնատող հին ֆեոդալական վար-  
չական բաժանումը վերացնելու և նոր միասնական ղեկարտա-  
մենտական վարչական բաժանում ստեղծելու, եկեղեցապա-  
կան սեփականության բռնազրավման, հոգևորականության քա-  
ղաքացիական կազմակերպման, կարգորոշման, արտադրամա-  
սային սահմանափակումների և արդյունաբերության ու առևտրի  
զարգացումն արգելակող այլ խոչընդոտների վերացման, մա-  
մուլի, պաշտամունքի ազատության մասին ղեկերտները և  
այլն:

Սակայն, հավանություն տալով այս առաջադիմական օրենս-  
դրությանը, Ռոբեսպիերն այն դիտում էր միայն որպես սկիզբ՝  
միայն այդ օրենքները բացահայտորեն քիչ էին: Իսկ ժողովի  
լիբերալ մեծամասնությունը գտնում էր, որ այդ օրենսդրու-  
թյամբ հեղափոխության խնդիրները սպառված են, և որ հե-  
տագա քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ թե հե-  
ղափոխության կապազերծմանն ու ընդլայնմանը, այլ ընդհա-  
կառակը՝ նրա թափի նվազեցմանը, մասսաների նախաձեռնու-  
թյան արգելակմանն ու սահմանափակմանը:

Այս անհավասար պայքարում, երբ հարկավոր էր օգտագոր-  
ծել դիրքորոշումն ամրապնդող նվազագույն հնարավորություն,  
Ռոբեսպիերը հաճախ հենվում էր Սահմանադիր ժողովի սկզբը-  
նական առաջադիմական օրենսդրության վրա, որպեսզի այն

հակադրեր ավելի ուշ ժամանակների հետադիմական օրենսդրու-  
թյանը: Այսպես, Սահմանադիր ժողովում ընտրական իրավունքի  
համար գույքային ցենզ մտցնելու վերաբերյալ հարցի երկարա-  
տե քննարկման ժամանակ, մի հարց, որի վրա պնդել և պնդում  
էին ժողովի բուրժուա-լիբերալ ղեկավարները, Ռոբեսպիերը  
բազմիցս այդ հետադիմական առաջարկություններին հակադրում  
էր Մարդու և քաղաքացու իրավունքների ղեկավարացիայի սկզբ-  
ունքները, որոնք նա անվանում էր «անասան ու նվիրական»:

«Ձեզ ասում են, որ ընդհանուր ասամբ հավանություն են  
տալիս իրավունքների ղեկավարացիայի սկզբունքներին: Բայց ախե-  
յացնում են, որ այդ սկզբունքները թույլ են տալիս տարբեր  
կիրառություն: Դա ևս մի մեծ մուլտրություն է: Խոսքը արդարու-  
թյան սկզբունքների, բնական իրավունքի սկզբունքների մասին  
է, և մարդկային ոչ մի օրենք չի կարող փոխել դրանք...  
էլ ինչպե՞ս կարող էինք մենք դրանք կիրառել կեղծ կեր-  
պով»<sup>105</sup>:

Տակտիկապես պայքարի այդ մեթոդը շատ զորեղ էր: Մեր-  
կացնելով երկրին ցենզային ընտրական սխառն՝ հարուստների  
համար սահմանադրություն պարտադրող լիբերալ-սահմանա-  
դրականների քաղաքականության հակաժողովրդական, շահա-  
մուլական դրդապատճառները, Ռոբեսպիերը ցույց էր տալիս, որ  
դրանով իսկ նրանք ոչ միայն սոսնձություն են անում ժողովրդի  
իմասական իրավունքների նկատմամբ, այլև ջնջում, սրբապղ-  
ծորեն ոչնչացնում են Մարդու և քաղաքացու իրավունքների  
ղեկավարացիայի այն նույն սկզբունքները, որոնք այդ նույն Սահ-  
մանադիր ժողովի կողմից հռչակվել էին նվիրական<sup>106</sup>:

Ռոբեսպիերը չի սահմանափակվում միայն մեծամասնության  
քաղաքականության մխտողական ելույթներով, քննադատական  
ցատումով: 1789—1791 թվականներին Սահմանադիր ժողովում  
նրա ելույթների հիանալի գծերից մեկն այն է, որ նա նույն հե-  
տևողականությամբ ու համառությամբ պրոպագանդում է դե-  
մոկրատական վերափոխությունների դրական ծրագիրը:

«Բոլոր մարդիկ ծնվում և ապրում են ազատ ու հավասար  
օրենքի առաջ», — ավետում էր Դեկլարացիան: Յենդային սահ-  
մանադրությունը, քաղաքացիների բաժանումը «ակտիվների ու  
պասիվների»՝ Դեկլարացիայում գրված այդ առաջին և կարե-  
վորագույն իրավունքի ուղղակի հերքումն են:

Իսկ այդ անվիճելի իրավունքն ինչպե՞ս իրականացնել գործնականում: Դրա համար առաջին և անհրաժեշտ պայմանը ընդհանուր ընտրական իրավունքն է: (Այստեղ անհրաժեշտություն չկա պարզաբանել, որ Ռոբեսպիերը, ինչպես և այն ժամանակվա քաղաքական այլ գործիչներ, չէր նախատեսում ընդհանուր ընտրական իրավունքի տարածում կանանց վրա: XVIII դարում այդ հարցը կրեք դրված չի եղել): Բանավոր և գրավոր բազմաթիվ ելույթներում Ռոբեսպիերը պաշտպանում էր ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը: Ժողովուրդը՝ աշխատավորները, ղյուղացիները, արհեստավորները, ազգի ամենաարժեքավոր մասն են, այն դեպքում, երբ հարուստները իրենց հետ արատ ու հանցագործություններ են բերում: Ցենզային ընտրական սխտեմի նախագծերի քննադատության մեջ Ռոբեսպիերը ծավալում է ուսույական փաստարկումը՝ աղքատությունը առաքինություն է, հարստությունը՝ հանցագործություն: «...Որտե՞ղ է, իսկապես, բոլոր հարստությունները քիչ մարդկանց ձեռքերում կենտրոնացնող ունեցվածքի ծայր աստիճան անհավասարության ազդրուրը: Արդյոք այն չի՞ գտնվում հիմար օրենքների, տիմար կառավարությունների, վերջապես, փշաջած հասարակությունների բոլոր արատների մեջ»<sup>105</sup>:

Ռոբեսպիերը երկու ծրագրերի՝ ցենզային ընտրական համակարգի և ընդհանուր ընտրական իրավունքի մրցակցությունը բացահայտում է որպես Լրկու տարրեր գծերի ընդհարում՝ ոչ թե իրավաբանական կամ նույնիսկ քաղաքական, այլ ամենախոր, սոցիալական տեսակետից:

Ո՞րն է վեճի էությունը: Նա թափանցում է նրա բուն էության մեջ: «...Հարուստները հավակնում են ամեն ինչի, նրանք կամենում են բոլորը նվաճել և բոլորի վրա իշխել: Չարաշահումը հարուստների գործն է ու ընազավառը, նրանք պատուհաս են ժողովրդի համար: Ժողովրդի շահը ընդհանուր շահ է: Հարուստների շահը մասնավոր շահ է: Իսկ դուք ուզում եք ժողովրդին հանգեցնել ոչնչության, իսկ հարուստներին դարձնել ամենազոր»<sup>106</sup>: Այսպիսով, Ռոբեսպիերը նորից է մերկացնում քաղաքական վեճերի դասակարգային էությունը:

Ոչ միայն Սահմանադիր ժողովի վիճարանություններում, այլև Փրանսիական մեծ հեղափոխության առաջին տարիների ամբողջ քաղաքական գրականության մեջ դա եղել է ցենզային ընտրական համակարգի ամենախոր քննադատությունը և ժողովրդի

համար ընդհանուր ընտրական իրավունքի օրինական իրավունքների ամենախոր հիմնավորումը:

Հանդես գալով նույն Ելակետային դիրքերից, Ռոբեսպիերը պահանջում է այդ սկզբունքի՝ գործնականում ժողովրդի գերակայության, առաջնության հետևողական կիրառում: Նա պարզորոշ տեսնում է վտանգը՝ հարուստները ցանկանում են գրավել ու հավերժացնել իրենց իշխանությունը և իրենց ենթարկել ժողովրդին: Այդ նպատակին է ծառայում և գույքային ցենզի սահմանումը ազգային գվարդիա ընդունվելու համար: Ռոբեսպիերն ամբողջ վճռականությամբ առարկում է դրան: Ազգային գվարդիան ստեղծված է հայրենիքի պաշտպանության, ազատության պաշտպանության համար: «Ձինված լինել հայրենիքի պաշտպանության համար՝ յուրաքանչյուր քաղաքացու իրավունքն է»: Աղքատները ևս ունեն այդ իրավունքը ոչ պակաս, այլ ավելի շատ, քան հարուստները: Ազգային գվարդիան կատարի իր դերը, իր կոչումը, եթե միայն դառնա այն, ինչ նա պետք է լինի՝ զինված ժողովրդի կազմակերպություն»<sup>107</sup>:

Ռոբեսպիերի ղեմնկրատական ծրագիրը նախատեսում է այնպիսի միջոցառումներ, որոնք որոշ երաշխիքներ են ստեղծում պործադիր իշխանության վտանգավոր դրեղացումից: 1789 թվականի սեպտեմբերին նա մտցնում է առաջարկություն դեպուտատների ամենամյա վերընտրության մասին: Ավելի ուշ նա տաջարկում է Օրենսդիր ժողովի դեպուտատների թիվը հասցնել հազարի<sup>108</sup>, նա պահանջում է մտցնել պաշտոնատար անձանց հաշվետվություն ընտրողների առաջ:

Ռոբեսպիերի կողմից 1789—1791 թվականներին մտցված ղեմնկրատական բնույթի գրեթե բոլոր առաջարկությունները հետագայում իրականացան 1793 թվականի հանրապետական երկրորդ սահմանադրության մեջ:

Բաց այդ առաջարկություններն արդյոք որևէ հաջողություն ունեի՞ն այն տարիներին, երբ դրանք առաջին անգամ Սահմանադիր ժողով մտցրեց Արրասի դեպուտատը: Ռոբեսպիերի մտցրած առաջարկություններից ոչ մեկը կամ գրեթե ոչ մեկը Սահմանադիր ժողովը չընդունեց:

Նրան մինչև վերջ լսում էին. նա ստիպեց, նա վարժեցրեց լսել իրեն: Վաղուց էր անցել այն ժամանակը, երբ ինքնավստահ, սուր զգացողությունների ծառավ դեպուտատները տեղից խայրող բացականչություններ էին նետում Արրաս քաղաքի ներկա-

յայտուցչի հասցեին: Այժմ նրանք արդեն վախենում էին այդ միշտ խնամքով հագնված, դիմափոշեծածկ կեղծամ կրող երիտասարդից, որը ցածր, բայց հաստատուն ձայնով արտահայտում էր իր համոզմունքները, որին հնարավոր չէր ոչ կաշտակել, ոչ ահաբեկել: Նրան լսում էին, լսում ուշադիր՝ պեսք էր հասկանալ, թե ինչ է ցանկանում նա, իսկ հետո միահամուռ քվեարկում էին նրա առաջարկությունների դեմ:

Բայց Ռոբեսպիերին Ազգային ժողովում ունեցած իր էլույթների գործնական ապարդյունությունը ամենևին չէր վրդովում: Այն բանից հետո, երբ հաջորդ օրը ժողովի բուրժուա-լիբերալ մեծամասնությունը մերժում էր նրա առաջարկությունները, նա պատրաստ էր նորից հանդես գալ և նոր փաստարկներով հիմնավորել դեմոկրատիայի իր պաշտպանած սկզբունքները:

Ուրեմն ինչ, նա ֆանատիկոս է, կույր կամակորի մե՞կը, որն անտեսում է փաստերը, սևեռուն զազափարների իշխանության տակ գտնվող խելագար՞:

Ոչ, իհարկե: Ռոբեսպիերի ոչ բնավորության, ոչ հոգեկան խառնվածքի, ոչ մտածողության մեջ ոչինչ չկար Դոն Քիշոտից: Այդ երիտասարդը, որ անդրդվելիորեն վստահ էր իր համոզմունքների անկեղծության և այն բանի անհրաժեշտության մեջ, որ շինակելով իր ուժերը, մինչև վերջին շունչը պետք է ծառայի իր ժողովրդի բարօրությանը, հեղափոխության բարօրությանը, թվում է, անսպասելիորեն իր մեջ էր համատեղում մտքերի ու զգացմունքների վեհությունը արծվային հույսերի հեռատեսության, կամքի աննկունության, սուր և խորաթափանց մտքի զգաստ հաշիվների հետ:

Ռուսոյի այդ աշակերտն ու հետևորդը, որ հիանում էր «հավասարության և ազդեցության քարոզչի» բոլոր առաքինություններով, չունեի ոչ ներքին հակասություն, ոչ կասկածներ, ոչ երազկոտություն, որոնք այնքան հատուկ էին «մնեյի մեծ քաղաքացուն»: Նա միշտ գիտեր, թե ինչ է ուղում ինքը և ինչպես հասնել ցանկալիին: Նա գործողության մարդ էր:

Այն ամենը, ինչ Արրասի ղեկուսատի էլույթներում այդ գործարար բուրժուական քաղաքագետներին, ղեկուսատ-գործամուխներին թվում էր «վերացականություն», «գրասերի իմաստություն» կամ վտանգավոր պատրանքներ, իրականում ամենալայն ժողովրդական զանգվածների պահանջների ճիշտ արտահայտությունն էր: Ժողովրդական անկախության, քաղա-

քական հավասարության, սոցիալական հավասարության՝ էզալիտարիզմի հիմնական գաղափարներն էլ հենց ընկած էին Սահմանադիր ժողովում և Յակոբինյան ակումբում 1789—1791 թվականներին Ռոբեսպիերի գրեթե բոլոր էլույթների հիմքում, և ժողովրդի, այսինքն՝ ամենից առաջ գյուղացիության, արհեստավորների, պրուլետարիատի, դեմոկրատական՝ մանր և միջին բուրժուազիայի մի մասի դիմավոր պահանջների միջնորդավորված արտահայտությունն էին: Միևնույն միջնորդավորված ձևով այդ դիմավոր գաղափարներն արտացոլում էին հեղափոխության հիմնական օբյեկտիվ խնդիրները:

Ռոբեսպիերի ճառերը չէին կարող վերահամոզել Ազգային ժողովի ղեկուսատների մեծամասնությանը, որոնք ներկայացնում էին բացահայտորեն իշխանության և հարստացման ձգտող խոշոր բուրժուազիային: Նա գիտեր այդ: Բայց ժողովի ղեկուսատների գլխի վրայով նա դիմում էր ժողովրդին:

Նրա ձայնը լսելի էր: Արդեն 1790 թվականից սկսում է արագորեն աճել նրա հեղինակությունը ժողովրդի մեջ: Արրասի ղեկուսատաը, որի ճառերը հարկադրված էին տպագրել թերթերը, արտահայտում էր այնպիսի մտքեր, ձգտումներ, ակնկալություններ, որոնք երկրով մեկ թափառում էին շատերի գիտակցության մեջ ու սրտերում:

Պատանի Սեն-ժյուստը 1790 թվականի օգոստոսին նրան Բլերանկուրից գրում էր. «Ծա ձեզ չեմ ձանաչում, բայց դուք մեծ մարդ եք, դուք միայն մի գավառի ղեկուսատաը չեք, դուք ամբողջ մարդկության ղեկուսատան եք...»<sup>103</sup>:

Գովեստի մեջ մլատ Մարատը, ղեռես անձամբ շիմանալով Ռոբեսպիերին, բայց կարդացած լինելով նրա ճառերը, արդեն 1789 թվականի հոկտեմբերին գրում էր, որ «նրա անունը միշտ թանկ կլինի ազնիվ քաղաքացիների համար», իսկ մեկ տարի անց, 1790 թվականի հոկտեմբերին Ռոբեսպիերին համարեց միակ ղեկուսատաը, որը սղեշնչված մեծ սկզբունքներով «միջուցն միակ ճշմարիտ հայրենասերն էր Սենատում»<sup>\*</sup>:

\* Ի շահ ճշգրտության պետք է ավելացնել, որ Մարատին առիթ է ներկայացել նաև քննադատական գիտողություններ արտահայտել Ռոբեսպիերի մասին (տե՛ս Марат Ж.-П. Избранные произведения, т. II. М., 1956, с. 292; т. III, 1956, с. 79).

Ոչ միայն առաջավոր քաղաքական գործիչները, այլև հեղափոխության շարքային մասնակիցները գավառներում ու Փարիզում ուշադրությունը ունենալով էին Ռոբեսպիերի ձայնը և իրենց ջերմ հավանությունն էին արտահայտում նրան: Ավի-նիոնի մունիցիպալիտետի անդամները 1790 թվականի դեկտեմբերին հատուկ շնորհակալություն հայտնելով Ռոբեսպիերին նրա «գեղեցիկ ճառի» համար, ոչ առանց հիացական շափազանցումների դրում էին. «Եթե այն սկզբունքները, որոնք դուք այդքան հաղթականորեն հիմնավորեցիք, հայտնի լինեին հողափնդի բոլոր ժողովուրդներին, շատով այլևս բռնակալներ գոյություն չէին ունենա»<sup>10</sup>: Մարսելի մունիցիպալիտետը 1791 թվականի մայիսի 27-ի նամակում Ռոբեսպիերին անվանեց «մարդ, որի հանձարն ու սիրտը նվիրված են հասարակական գործին, որին մենք այնքան ավելի շատ ենք սովորում սիրել, որքան կարողում ենք ամբիոնից արտասանած նրա հիանալի ճառերը»: Ռոբեսպիերի քաղաքական ելույթներին իրենց համերաշխության հավաստիացումներն են հղում կորդելիերների ակումբը Փարիզում, Մարսելի, Վերսալի, Տուլոնի և մյուս քաղաքների ակումբները, քաղաքական գործիչներն ու մասնավոր անձինք<sup>11</sup>:

Ռոբեսպիերի փառքը երկրում արագորեն աճում էր: Բայց Ազգային ժողովում նրա ճառերը առաջիկա նման հանդիպում էին դահլիճի ստոր թշնամական լարվածությանը կամ հավանություն չափող խուլ աղմուկին: Ռոբեսպիերի ձայնը կտրուկ էր, բայց ոչ բարձր: Նա չէր կարողանում խեղդել աղմուկը: Նա կարճատես էր, աչքերը կկոցում էր, երբեմն նույնիսկ ակնոց էր կրում: Հավանաբար, նա նստարանների երրորդ-չորրորդ շարքից այն կողմ չէր տեսնում: Նա չէր կարողանում իր հետևից տանել Սահմանադիր ժողովի լսարանը: Բայց նա խոսում էր ո՛չ այդ շքեղ հագնված պարոնների համար, որոնք միշտ զբաղված էին փառասիրական մտադրություններով կամ շահամոլական հաշիվներով: Նրա կկոցած աչքերի հայացքը սահում էր դեպուտատների գլխավերևով, նա այդ դիմափոշեծածկ կեղծամների վրայով նայում էր ապագային:

Քաղաքական գույգի փախուստի փորձի և դերեմարտության կապակցությամբ 1791 թվականի հունիս-հուլիսին ծագած Վարենի ճգնաժամը\* բացահայտեց հեղափոխության ներքին խոր հակասությունները:

Քաղաքորին դասել պահանջող ժողովրդի ահարկու գայությունը, հանրապետության գաղափարի արագ հաջողությունը ժողովրդական զանգվածների խոր անբավարարվածության լուր արտաքին արտահայտությունն էին: Հեղափոխության երկու տարիների ընթացքում ժողովուրդը չհասավ իր հիմնական պահանջների իրականացմանը, և ամենից առաջ ազրարային հարցի լուծմանը՝ ֆեոդալիզմի, ֆեոդալական պարհակների, ֆեոդալական հողատիրության ոչնչացմանը դուռում: Գյուղացիության, քաղաքային պլերբյուրի և միջին բուրժուազիայի մի մասի անբավարարվածությունը հեղափոխության գործնական արդյունքներից, որը դեռ քիչ փոփոխություններ էր մտցրել նրանց սոցիալական դրության մեջ, գրգռում էր ծայրաստիճան դժգոհությամբ իշխանությունը գրաված խոշոր բուրժուազիայի և նրա շահադիտական ու հակադեմոկրատական քաղաքականության գեմ, որն իրականացվում էր Սահմանադիր ժողովի օրենսգրքով:

Բայց թեև այդ լայն ժողովրդական դժգոհության արմատները շատ խորն էին և կապված հեղափոխության բոլոր հիմնական և դեռևս անլուծելի հարցերի հետ, Վարենի ճգնաժամի օրերին ջրի երես ելան սուսկ քաղաքական հարցեր՝ միապետության և հանրապետության ճակատագրի մասին<sup>12</sup>:

Մաքսիմիլիան Ռոբեսպիերը՝ այդ քաղաքական գործիչը, որ մինչև այժմ քայլում էր իր ժամանակի առջևից, Վարենի ճգնաժամի օրերին հայտնվեց իրադարձությունների ընթացքի հետևում: Նրա գրաված դիրքը ծայրաստիճան հակասական էր:

Հունիսի 21-ին, այն օրը, երբ Փարիզը ցնցված էր Քաղաքի փախուստի լուրից, երբ փողոցներում ու հասարակական

\* Վարենի ճգնաժամ սկսեցին անվանել ըստ սահմանին մոտ գտնվող գյուղաքաղաք Վարենի, որտեղ բռնկեցին փախստականները, այնուհետև ժողովրդի կողմից ուղարկվեցին Փարիզ: Հունիսի 21-ից սկսվեցին հակամտայետական ելույթներ Փարիզում և երկրում: Ծգնաժամն ավարտվեց 1791 թվականի հուլիսի 17-ին Փարիզում ժողովրդական ցույցի գնդակոծությամբ:

շենքերում շարժում էին Լյուզովիկոս XVI-ի կիսանդրինները, Յակոբինյան ակումբի նիստում Ռոբեսպիերը հանդես եկավ ճառով: Իրեն հատուկ անվեհերություններ նա ամբողջ թափով հարձակվեց Ազգային ժողովի այն ժամանակ դեռ հզոր մեծամասնության վրա: Ռոբեսպիերը մեղադրում էր «Ազգային ժողովին այն բանում, որ նա դավաճանել է ազգի շահերին», իրողը քաղաքականությունը նախապատրաստելով կատարվածը: Նրա ճառը ցնցեց յակոբինյաններին: Երբ նա ասաց, որ կրնդուներ «մահը որպես բարերարություն, որն իրեն կիսանգարեր անկասելի աղետների վկան լինել», դահլիճում գտնվող ութ հարյուր մարդ սեղմ պարսպով շրջապատեցին նրան: «Մենք կմեռնենք քեզ հետ միասին», — լավեցին բացականչություններ<sup>13</sup>:

Բայց երբ մոտակա օրերին միապետական պատրանքներից ազատված Փարիզի դեմոկրատական կազմակերպությունները՝ Կորդելիերների ակումբը, Սոցիալական ակումբը, յակոբինյանների մի մասը, ժողովրդական ընկերություններն արտահայտվեցին միապետությունը ոչնչացնելու և հանրապետություն հռչակելու օգտին, Ռոբեսպիերը հրաժարվեց միանալ նրանց պահանջներին:

Երբ Ազգային ժողովում «եռապետության» («եռապետություն») էին անվանում դեպուտատներ Ա. Բարնավին, Ա. Դյուպորին և Ա. Լամետին, որոնք Միրաբոյի մահից հետո խաղում էին «սահմանադրականներին» խմբավորման ղեկավարների դեր) կողմից գլխավորվող բուրժուական սահմանադրականները, ամենից շատ սարսափելով հեղափոխության հետագա խորացումից առաջ քաշեցին «թագավորին հափշտակելու» մասին կեղծ վարկածը, Ռոբեսպիերը միակ դեպուտատն էր, որ պայքարում էր այդ որոշման դեմ: Նույնպիսի հաստատակամություն և անհաշտություն նա դրսևորեց իր քաղաքական հակառակորդների դեմ Յակոբինյան ակումբի առաջին պառակտման ժամանակ\*:

\* Յակոբինյան ակումբի պառակտումը տեղի ունեցավ 1791 թվականի հուլիսի 16-ին: Խոշոր բուրժուազիային ներկայացնող նրա աջ մասը, որը կանգնել էր հեղափոխության հետագա զարգացմանը հակադրելու ուղու վրա, կապերը խզեց Յակոբինյան ակումբի հետ և հիմնեց նոր ակումբ՝ Ֆելլանների ակումբը: Այդ ժամանակվանից «սահմանադրականներին» սկսեցին հաճախակի անվանել «ֆելլաններ»:

Բայց նույնիսկ 1791 թվականի հուլիսի 17-ի ժողովրդական ջուլցը գնդակոծելուց հետո, որը նշանավորեց «սահմանադրականներին»՝ միապետական խոշոր բուրժուազիայի խմբակցության վերածումը բացահայտ հակահեղափոխական ուժի, Ռոբեսպիերը դեռևս շարունակում էր տատանվել իշխանության ձևի հարցում՝ չհամարձակվելով պաշտպանել հանրապետության պահանջը:

Ռոբեսպիերի դիրքորոշման հակասականությունը Վարենի ձգնաժամի օրերին ակնհայտ էր: Հարկ կա՞, արդյոք, այն ընդունել նաև որպես սխալ: Իհարկե:

Ռոբեսպիերը հանրապետության նկատմամբ իր տատանումներում ելնում էր հին, բազմիցս արտահայտած իր այն երկյուղից, որ հանրապետությունը կարող է դառնալ բուրժուական արիստոկրատիայի տիրապետության ձև: Բայց եթե առաջ, երբ ուժեղ էին մասսաների միապետական պատրանքները, Ռոբեսպիերի կողմից հանրապետության թերազնահատումը գործնական նշանակություն չուներ, ապա Վարենի ձգնաժամի օրերին, ձգնաժամ, որն օրակարգում էր դրել հանրապետության հարցը, վերջինիս նկատմամբ նրա բացասական կամ թերահավատ վերաբերմունքը արդեն իսկ սխալ էր: Այդ օրերին տվյալ հարցում նման և նույնպես սխալ դիրք գրավեց նաև Մարատը<sup>14</sup>:

Ճիշտ, խորաթափանցորեն ըմբռնելով հեղափոխության հիմնական խնդիրները և հանդես գալով որպես ժողովրդի պահանջների մունետիկ, Ռոբեսպիերը հեղափոխության այդ առաջին տարիներին գերադասելի ուղարկություն էր նվիրում քաղաքական և պակաս՝ սոցիալական հարցերին: Իհարկե, դա հասկանալի է ու բացատրելի: Նրա ելույթներն այժմ նշանակալից չափով բնորոշվում էին այն հարցերով, որոնք դրված էին Սահմանադիր ժողովի օրակարգում, իսկ դրանք հիմնականում քաղաքական բնույթի հարցեր էին:

Պետք է նաև խոստովանել, որ ժողովի բոլոր դեպուտատներից Ռոբեսպիերն էր առավել արմատական դիրք գրավում գլխավոր սոցիալական հարցում՝ գյուղացիական հարցում:

Նա մի քանի անգամ հանդես է եկել ի պաշտպանություն գյուղացիության շահերի, նա արգարացրել է գյուղացիների կողմից ուժի գործադրումը իրենց առեւի սենյուրների դեմ, նա պահանջել է վերացնել տրիաժի իրավունքը և գյուղացիներին

վերադարձնել այն հողերը, որոնք 1669 թվականի օրդոնանսի ժամանակվանից թալանչիարար ղավթել էին Ֆեոդալները<sup>15</sup>:

Չի կարելի, սակայն, չնկատել, որ գյուղացիական հարցին Ռոբեսպիերի նվիրած ուշադրությունը չէր համապատասխանում նրա բուն նշանակությանը հեղափոխության մեջ: Ըստ երևույթին, այն ժամանակ նա զեռ չէր գիտակցում, թե հեղափոխության համար կենսականորեն որքան կարևոր էր գյուղացիության հիմնական պահանջների առաջնահերթ լուծումը:

Ռոբեսպիերը անտարբեր մնաց 1791 թվականի հունիսին Սահմանագիր ժողովում և Շապելիեի օրենքի քննարկման ժամանակ: Այդ օրենքը նախատեսում էր բանվորներին արգելել համախմբելու միությունների մեջ և անցկացնելու գործադուները<sup>16</sup>: Որպես զեմոկրատիայի համոզված ջատագով, նա պետք է որ վճռականապես ընդվզեր այդ բացահայտորեն հակաբանվորական օրենքի դեմ: Բայց այդ բանը տեղի չունեցավ: Ոչ 1791 թվականին, ոչ հետագայում Ռոբեսպիերը հանդես չեկավ և Շապելիեի օրենքի և նրա գործնական կիրառման դեմ:

Ասվածից հետևում է, որ XVIII դարի բուրժուական մեծ հեղափոխության առաջնորդներից լավագույնին էլ էին հատուկ սխալները, թուլությունները, վրիպումները: Դրանց մի մասը այդպես էլ մնաց շհաթահարված: Օրինակ, ոչ միայն և Շապելիեի օրենքի բեղունման ժամանակամիջոցում, այլև հետագայում, չակոբինյան ցիկտատուրայի օրոք, Ռոբեսպիերը նույնպիսի անտարբերություն էր պահպանում բանվորների շահերի նկատմամբ:

Բայց մի շարք սխալ հայացքներից Ռոբեսպիերը հրամարվեց: Նրան սովորեցնում էր հեղափոխությունը, նա առաջ էր գնում նրա հետ միասին: Հեղափոխական պրոցեսի զարգացմանը համընթաց Ռոբեսպիերն ավելի լայն, ավելի խոր, ավելի ճիշտ էր սկսում հասկանալ հեղափոխության խնդիրները: Նրա ուժի ազդյունը այն էր, որ կարողանում էր ունկնդրել ժողովրդի ձայնը և հաշվի առնել ոչնի ի տարբերություն Մարատի, որը վարժվել էր խրատներ տալ մասսաներին, հրապարակավ դիմել նրանց հանդիմանական բառերով, Ռոբեսպիերը երբեք չէր դատապարտում ժողովրդին: Նա ժողովրդի մեջ տեսնում էր «ազատության գլխավոր հենարանին» և գտնում, որ ժողովուրդը միշտ իրավացի է:

Վարենի ճգնաժամի հետևանքներից մեկը արտաքին քաղաքականության բնագավառում եվրոպական միապետությունների կողմից ինտերվենցիայի սպառնալիքի սաստկացումն էր: 1791 թվականի օգոստոսի 27-ին, Սաքսոնիայի Պիլնից դղյակում կայսր Լեոպոլդ II-ը և Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ II-ը ստորագրեցին դեկլարացիա համատեղ գործողությունների մասին՝ ի պաշտպանություն Ֆրանսիայի միապետի: Ավելի ուշ, 1792 թվականի փետրվարի 7-ին, Ավստրիայի և Պրուսիայի միջև կնքվեց զաշնակցային պայմանագիր, որն ուղղված էր հեղափոխական Ֆրանսիայի դեմ:

Բրիտոն և ժիրոնդիստների մյուս լիզերները 1791 թվականի նոյեմբերից սկսեցին հանդես գալ բորբոքիչ ճառերով, հեղափոխական Ֆրանսիային կոչ անելով ազատագրական պատերազմ սկսել բունականների դեմ, առանց սպասելու ինտերվենցիային: Հեղափոխական պատերազմի պրոպագանդան համակրանքով բնդունվեց հայրենասիրաբար տրամադրված մասսաների կողմից<sup>17</sup>:

Բայց պատերազմի կոչը գաղտնի պաշտպանություն ստացավ և մյուս կողմից: Լյուդովիկոս XVI-ի և Մարիա-Անտուանետի համար այն ժամանակից ի վեր, երբ փախուստի անհաջող փորձից հետո նրանք փաստորեն դարձան ժողովրդի թագակիր գերիները, ապագայի բոլոր հուշերը կապված էին պատերազմի հետ: Միայն օտարերկրյա ինտերվենտների սվինները կարող էին Ֆրանսիայի թագավորական արքունիքին վերադարձնել իր կորսված անսահմանափակ իշխանությունը:

Սեպտեմբերին Սահմանագիր ժողովն ավարտեց իր աշխատանքը և հոկտեմբերի 1-ին բացվեց ցենզային ընտրական համակարգի համաձայն ընտրված Օրենսդիր ժողովը:

Երևք տարվա վիթխարի լարվածությունից և գործունեությունից հետո վերջապես Ռոբեսպիերը հնարավորություն ստացավ շունչ բաշել: Սահմանագիր ժողովի որոշմամբ նրա դեպուտատներից ոչ մեկը չէր կարող Օրենսդիր ժողովի դեպուտատ լինել: Բնականաբար, գա տարածվում էր և Ռոբեսպիերի վրա: Մեկ ու կես ամսով նա մեկնեց հայրենի Արրաս: Երբ Ռոբեսպիերը վերադարձավ Փարիզ, նա մայրաքաղաքը տեսավ խիստ հուզված միճակում: Ամենուրեք խռատացությունը միայն մտատուտ պատերազմի մասին էր: Բրիտոյին և նրա կողմնակից-

ներին, որոնք «բռնակալների դեմ ժողովուրդների պատերազմի» կոչ էին անում, Յակոբինյան ակումբում, ժողովրդական հազարայիններում ընդունում էին բուռն ծափահարություններով:

Ռորեսպիերը որոշ ժամանակ ուսումնասիրում էր նա պետք է պատկերացում կազմեր իրադրության մասին: Բայց արդեն Յակոբինյան ակումբում դեկտեմբերի 12-ին արտասանած ճառում զգուշորեն, իսկ հետո երկրորդ, դեկտեմբերի 18-ին նույն լսարանում արտասանած փալլուն մեծ ճառում նա հանդես եկավ Բրիտոյի արկածախնդրական և կեղծարար ծրագրի սպանիչ բննադատության: Հրաշալի խորաթափանցությունը Ռորեսպիերը կանխադուշակում էր, որ Ֆրանսիայում սակզմված իրադրության պայմաններում պատերազմը ձեռնառու կլինի արբունիքին և հակահեղափոխությանը: Ժողովրդի հայրենասիրական զրացմունքների հետ խաղաղող հետադուրները միայն օգնում են արքունիքի գաղտնի դավադրական պլաններին, որը ձգտում է Ֆրանսիան պցել ժուդակի մեջ: Գլխավոր թշնամին գտնվում է ոչ թե երկրից դուրս, այլ նրա ներսում:

«Դեպի Կորլենց, ասում եք դուք, դեպի Կորլենց,— Բրիտոյի հետ բռնավիճում էր Ռորեսպիերը:— Կարծես ժողովրդի ներկայացուցիչները կկարողանային կատարել իրենց բոլոր պարտավորությունները, պատերազմ նվիրելով ժողովրդին: Մի՞թե վասնզր Կորլենցի մեջ է: Ոչ, Կորլենցը ամենևին էլ երկրորդ Կարթագենը չէ, շարի օշախր Կորլենցի մեջ չէ, այն մեր միջավայրում է, ձեր գրկում»<sup>118</sup>:

Պատերազմի հարցերին նվիրված երրորդ և չորրորդ ճառերում (1792 թվականի հունվարի 25-ին և փետրվարի 10-ին) Ռորեսպիերը կրկին ու կրկին փալլուն փաստարկումով հիմնադրում էր այդ միտքը՝ պիտավոր խնդիրը պայքարին է ներքին հակահեղափոխության դեմ, և այնքան ժամանակ, քանի դեռ այդ խնդիրը չի լուծված, արտաքին հակահեղափոխության դեմ հաղթանակի հնարավորություններ չկան<sup>119</sup>:

Ռորեսպիերը մերկացնում էր հեղափոխության համար հեղափոխական Ֆրաչի, ժիրոնդիստական առաջնորդների մարտաշունչ հոխորտանքի վտանգավոր բնույթը, նրանց, ովքեր «անհամբեր ուզում են պատերազմ սկսել, որը նրանց, բոս երեսույթին, բոլոր բարիքների աղբյուր է թվում»: Նա մերժում էր թեթևամիտ կամ հանցագործ խաղը պատերազմի հետ: «Ազգը

չի հրաժարվում պատերազմից, եթե այն անհրաժեշտ է ազատություն նվաճելու համար, բայց նա ազատություն և խաղաղություն է ցանկանում, եթե դա հնարավոր է, և նա մերժում է պատերազմի ամեն մի նախագիծ, որն ուղղված է ազատության և սահմանադրության ոչնչացմանը, թեկուզև դրանք պաշտպանելու պատրվակով»<sup>120</sup>:

Գրսեորելով հեղափոխական արտաքին քաղաքականության սկզբունքների խոր ըմբռնողություն, Ռորեսպիերը լիովին մերժում էր «ուլտրահեղափոխական» ժիրոնդիստական գաղափարներն ու «ազատագրական պատերազմի», այսինքն՝ ժամանակակից լեզվով արտահայտած «հեղափոխության արտահանություն» պլանները:

«Իսկ եթե արտասահմանյան ժողովուրդները, եթե եվրոպական պետությունների ղեկավարները չլինե՞ն այնպես փիլիսոփայական, այնպես հասուն, ինչպես դուք եք ենթադրում, հեղափոխության համար, նման այն հեղափոխությանը, որը ձեզ համար էլ այնպես դժվար է հասցնել մինչև վերջ: Եթե նրանք հանկարծ մտածե՞ն, որ իրենց առաջին հոգսը պետք է լինի շնախատեսված հարձակման դիմադրումը, շորոշելով, թե դեմոկրատիայի որ աստիճանի վրա են գտնվում դրսից եկած փնիերալներն ու ղինվորները»,— հեգնորեն հարցնում էր Ռորեսպիերը «բռնակալների տապալման» կողմնակիցներին:

Նա հիմնավորված երկյուղ էր արտահայտում այն առիթով, որ «գինված ներխուժումը կարող է մեզանից վանել ժողովուրդներին, փոխանակ թեթևիս նրանց ձգտումներն ընդատուլ գնալ մեր օրենքներին»: Նա վճռականորեն մերժում էր ժիրոնդիստների կողմից ալգթան հաճույքով սրոպազանդովոլ այն միտքը, թե իրը ժողովուրդներին ազատություն կարելի է բերել սվինների սալրի վրա<sup>121</sup>:

Ռորեսպիերի իմաստուն նախազգուշացումները չկարողացան վերահամոզել նույնիսկ յակոբինյաններին: 1792 թվականի փետրվարին Յակոբինյան ակումբն ընդունեց իր անդամներին ուղղված դիմում, որի մեջ ասվում էր, որ «ազգը պատերազմ է կամենում», որ նա սպասում է միայն, թե երբ կգա ցանկալի պահը և ժողովուրդների ու թագավորների մեծ վեճը կլուծվի մարտի դաշտում<sup>122</sup>: Ազդեցիկ քաղաքական գործիչներից Ռորեսպիերին պաշտպանեց միայն Մարատը, զրավելով նրան մոտ

դիրքորոշում<sup>120</sup>։ Բայց Մարտը վերադարձավ Անգլիայից (ուր նա ստիպված էր թաքնվել) միայն 1792 թվականի ապրիլին, երբ արդեն ստեղծված էր միրոնդիստական կառավարություն և պատերազմի վերաբերյալ հարցը կանխորոշված էր։ Ո՛չ Ռոբեսպիերին, ո՛չ Մարատին չհաջողվեց ազդել իրադարձությունների ընթացքի վրա։ 1791 թվականի ապրիլի 20-ին Ֆրանսիան պատերազմ հայտարարեց «Հունգարիայի և Բոհեմիայի թագավորին»՝ ավստրիական կայսրին։

Պատերազմը սկսվեց, և նախկին վեճերը կորցրեցին իրենց նշանակությունը։ Այժմ արգեն այլ խնդիր էր ծառանում։ Քանի որ արդեն պատերազմ է սկսվել (օբյեկտիվորեն պաշտպանական, արդարացի)՝ սկսվեցին արսույլուտիստական միապետությունների դեմ, այդ պատերազմը հարկավոր է վարել որպես հեղափոխական, ժողովրդական պատերազմ։

Այսպիսին էր քաղաքական ծրագիրը, որով այժմ հանդես էր գալիս Ռոբեսպիերը։ Նա այդ հայացքները պաշտպանում էր Յակոբինյան ակումբի ամբիոնից։ Բայց Ռոբեսպիերը միշտ խոսում էր ժողովրդի համար, և նրան հարկավոր էր ևս մեկ ուրիշ ամբիոն՝ ավելի քիչ պատահական, քան այն, որը նա ժամանակ առ ժամանակ ստանում էր Յակոբինյան ակումբում։ 1792 թվականի մարտից նա սկսեց հրատարակել «Le défenseur de la Constitution» («Սահմանադրության պաշտպան») շտրամբական հանդեսը<sup>121</sup>։

Ինչպես և կանխատեսում էր Ռոբեսպիերը, պատերազմը Ֆրանսիայի համար շատ շուտով դարձավ անհաջողությունների ու պարտությունների մի շղթա։ Հակառակ միրոնդիստական լիզերների սնույաբաժ խոստումների, ֆրանսիական զորքերը նահանջում էին ինտերվենտների ճնշման տակ։ Եվ դա տեղի էր ունենում ոչ թե այն պատճառով, որ ֆրանսիական զինվորներին պակասում էր բաջությունն ու խիզախությունը, այլ այն պատճառով, որ բանակի ղեկավարությունը գտնվում էր այն զենքերային ու սարանների ձեռքերում, որոնք չէին ցանկանում կովել հեղափոխության համար։ Գուվանանությունը ճանապարհ էր հարթում թշնամու համար։ Ամենից առաջ այն արմատավորվել էր թագավորական պալատում, որը գարծել էր հակահեղափոխության ավագակալին որչք, այստեղից իր նորը թելերն էր ձգել մինչև ինտերվենտների բանակի շտաբները<sup>122</sup>։

Ո՛չ Օրենսդիր ժողովը, ո՛չ «պետական մարդկանց կուսակցությունը» (այսպես էր Մարատը հեղեղերն անվանում միրոնդիստներին այն ժամանակից ի վեր, երբ նրանք նստեցին միապետական բազկաթոսներին)<sup>123</sup> չէին կարողանում և չէին կամենում պատերազմը վարել հեղափոխականորեն։ Հետապնդելով ֆրանսիական նահանջող զորքերին, ինտերվենտների բանակները մոտենում էին Փարիզին։

Վառնգի ժամին հասարակական միթիոսի հուզմունք համակեց երկրին։ Հեղափոխության սոցիալական և քաղաքական արդյունքներից ժողովրդի խոր անբավարարվածությանն այժմ միացան վիրավորված ազգային զգացմունքները, վախը հայրենիքի հակառակի համար։ Միապետության, կեղծ, երկրին խորոզ թագավորի և առելի «ավստրոհո»՝ թագուհու դավերի մեջ էր ժողովուրդի այժմ սեծում Ֆրանսիայի ղլխին թափվող աղետների հիմնական աղբյուրը։ Հունիսի վերջից — հուլիսի սկզբներից Փարիզում և միաժամանակ ցածրներում սկսվեց միապետության տուպուլման արդեն գրեթե շթարքվող նախապատրաստությունը։

Ռոբեսպիերը դեռևս 1792 թվականի զարնանն էր սառանումներ գրսեերում այդ հարցում։ Նա դեռ չէր ազատվել իշխանության հանրապետական ձևի դեմ հին նախապաշարումից, մի ձև, որը նրան դեռևս պատկերանում էր որպես «արիստոկրատական սենատի և դիկտատորի խարազան»։ Բայց, թեպետև ուշացումով, այնուամենայնիվ նա անսաց ժողովրդի պահանջներին. նա կարողացավ վերաստիօրել ժողովրդից<sup>124</sup>։

Իր «Սահմանադրության պաշտպան» հանդեսում նա սպադրում է Փարիզ ժամանած ֆեդերատների՝ մարտական վճռակոնությունը լի դիմումը. «Փարիզում մենք պետք է հաղթենք կամ մեռնենք»<sup>125</sup>։ 1792 թվականի հուլիսին Ռոբեսպիերը, դեն նետելով նախկին բուր կասկածներն ու նախապաշարումները, պաշարում է հանուն միապետության անհապաղ սննչայման և հանրապետության հոշակման։ Բայց միայն հին դործադիր իշխանությունը խորտակելը բովական չէ։ Իսկ օրենսդիր իշխանությունը։ Արդյոք նա արժանի է մտահոխության։

Յակոբինյան ակումբում հուլիսի 29-ին արտասանած ուղղիցիկ ճառում Ռոբեսպիերը պատկերում է Երկրի ամբողջ պետական-քաղաքական տպարատի համարձակ ու վճռական խորատակման ծրագիրը։ «Պետք է փրկել պետությունը ինչ գնով էլ

լինի. հակասահմանադրական է լուկ այն, ինչ տանում է դեպի նրա կործանում»<sup>129</sup>:

Դա իսկական հեղափոխական ճառ է: Ո՛չ մի սահմանադրական, ո՛չ մի ձևական խոչընդոտ չի շփոթեցնում իրավունքների նախկին լիցենցիատին: Օրենսդիր ժողովը ապուցուցեց իր անզորությունը. նա իրեն ջուլց տվեց որպես արքունիքի հանցագործ ոտնձգությունների գործակից: Օրենսդիր ժողովը պետք է իջնի ասպարեզից. նա Ֆրանսիան անպաշտպան է թողնում ռազմական բռնակալության, խռովարարների ոտնձգությունների հանդեպ: Կոնվենտ: «Ազգային կոնվենտը բացարձակապես անհրաժեշտ է»: Այն պետք է ստեղծվի նոր հիմքի վրա, քան թե իրեն շարդարացրած Օրենսդիր ժողովը: «Էլ որտե՞ղ գտնել սեր հայրենիքի նկատմամբ և հավատարմություն ընդհանուր կամքին, եթե ոչ հենց ժողովրդի մեջ», — հարցնում էր Ռոբեսպիերը: Եվ նա պահանջում էր լիովին վերականգնել այն «աշխատասեր և մեծահոգի դասակարգի» իրավունքները, որը զրկված է եղել քաղաքացիության իրավունքներից: Գուլբային ցենզի հետ կապված բոլոր սահմանափակումների վերացում, ընդհանուր բնարական իրավունքի կիրառում օրենսդիր և մյուս մարմինների ընտրությունների համար, բոլոր ֆրանսիացիների շահերն արտահայտող Կոնվենտ»<sup>130</sup>:

Ռոբեսպիերն այդ վճռական օրերին շահահանափակվեց ճանրով: Նա ուղղակի կայ հաստատեց գավառներից Փարիզ մտած կամավոր ֆեդերատների ջոկատների հետ. նա ուղղակի հեղափոխական գործողությունների էր գրգռում այդ ջոկատներին:

Փարիզում քառասունութ սեկցիաներից քառասունյոթը պահանջում էին թագավորի հրաժարում իշխանությունից: Ամբողջ երկիրը ոտքի ելավ միապետության դեմ: Ժիրոնդիստները երկերեսանի խուսավարումներով և արքունիքի հետ գաղտնի հանցակցություններ զուր էին փորձում կանխել ժողովրդի ապստամբությունը: Օգոստոսի 10-ին Փարիզի ժողովուրդը ֆեդերատների ջոկատների հետ սերտ միաբանությամբ ապստամբություն բարձրացրեց բոլորին ասելի միապետության դեմ: Ժողովուրդը հաղթեց: Լյուսովիկոս XVI-ը բանտարկվեց Տամպլ աշտարակում: Հազարամյա միապետությունը փլուզվեց: Հեղափոխությունը թևակոխեց նոր փուլ:

Օգոստոսի 10-ի ապստամբությունը ոչ միայն խորտակեց ու աշնացրեց միապետությունը, այլև խարխիւց խոշոր բուրժուազիայի քաղաքական տիրապետությունը: Հաղթական ապստամբության ղեկավարությունը պատկանում էր Կոմունային և նրա քաղաքական ոգեշնչողներին՝ յակոբինյաններին: Ժիրոնդիստները ոչ միայն չէին պաշտպանում ապստամբությունը, այլև ընդդիմանում էին նրան: Եվ չնայած դրան, նրանց հաջողվեց օգտվել ժողովրդի հաղթանակի պտուղներից. փաստորեն նրանց ձեռքն անցավ իշխանություն ղեկավարությունը՝ և՛ Գործադիր խորհրդում, և՛ Օրենսդիր ժողովում գրավելով ղեկավար դիրքեր:

Բայց այս, այսպես ասած, իշխանության «օրինական» մարմինների կողքին օգոստոսի 10-ից հետո առաջացավ նոր մարմին՝ Փարիզի կոմունան, որը հենվում էր ոչ թե օրենքի շեղում շահագործող մեկնաբանության, ոչ թե իշխանության լեզալ աղբյուրի, այլ զինված ապստամբության վրա: Միապետության տապալման առաջին իսկ օրերից Օրենսդիր ժողովի և Փարիզի կոմունայի միջև սկսվեցին բախումներ, որոնք շուտով վերաճեցին բացահայտ, անհաշտ պայքարի:

Այդ պայքարն իր բովանդակությամբ ավելի լայն ու խորն էր Կոմունայի և ժողովի միջև ծագած կոնֆլիկտից: Դա Լեոան ու Ժիրոնդայի և նրանց թիկունքում կանգնած դասակարգային ուժերի պայքարն էր: Լեոնը, յակոբինյանները ներկայացնում էին մանր ու միջին բուրժուազիայի, դյուզացիության և քաղաքային պլեբեյների բյուր՝ դասակարգային այն ուժերի, որոնք դեռ չէին հասել իրենց պահանջների իրականացմանը հեղափոխության մեջ և այդ պատճառով ձգտում էին շարունակել ու խորացնել այն: Ժիրոնդան ներկայացնում էր ուռևարաբողջունաբերական և հողագործական (գերազանցապես գավառական) բուրժուազիային, որը, վերջապես հասնելով իշխանության և վախով ու թշնամանքով վերաբերվելով ժողովրդին, աշխատում էր կասեցնել հեղափոխությունը, խոչընդոտել նրա հետագա զարգացումը: Դաժան պատերազմի ու երկրի տնտեսական ժանր դրության պայմաններում Լեոան և Ժիրոնդայի պայքարը անխուսափելիորեն պետք է ծայրաստիճան սուր բնույթ կրեր:

Մեծ էր Ռոբեսպիերի դերն այդ պայքարում: Նրա մասնակցությունը օգոստոսի 10-ի իրազարձություններին դեռևս չի կա-

րելի լիովին պարզաբանված համարել պատմագիտութեան կողմից: Սակայն կասկածից վեր է, որ նա ղգալի քաղաքական ազդեցութիւն է ունեցել ժողովրդական ելուշխները նախապատրաստելու գործում: Նա իր անձնական ճակատագիրը կապում էր վերահաս ճակատամարտերի հետ: Բյուրխարին ուղղված անթվակիր նամակում, որը Միշոնը պատշաճ հիմքով վերագրում է մինչև օգոստոսի 10-ը ընկած ժամանակամիջոցին, Ռոբեսպիերը իր երիտասարդ տարիների ընկերոջը գրում էր. «Եթե նրանք (Ֆեդերատները:— Ա. Մ.) հեռանան այստեղից, շհասցնելով փրկել հայրենիքը, ամեն ինչ կորած է: Թող որ մեզ բոլորիս հարկ լինի գոհվել մայրաքաղաքում, բայց նախ մենք կփորձենք դիմել շափազանց հանդուգն միջոցների»<sup>131</sup>: «Մեզ բոլորիս» բառերը ցույց են տալիս, որ նա իրեն նույնպես համարում էր առաջիկա ապստամբութեան մասնակիցներից մեկը:

Օգոստոսի 10-ին նա հանդես եկավ Յակոբինյան ակումբում: Նրա ճառի համառոտ շարադրանքում թվարկվում են այն գործնական առաջարկութունները, որ նա մտցրել է՝ պահանջել Ազգային կոնվենտի գումարում, հասնել այն բանին, որ ընդունվի Լաֆայետին դավաճան հայտարարող դեկրետ, բանտերից ազատել հայրենասեր բանտարկյալներին, բոլոր քաղաքացիներին թույլ տալ ազատ մուտք գործելու սեկցիաների նիստերին. սեկցիաները պետք է կապ հաստատեն ժողովրդական ընկերութիւնների հետ և Ազգային ժողովին տեղեկացնեն ժողովի կամքը. Կոմունան պետք է իր կոմիսարներին ուղարկի բոլոր ութսուններեք դեպարտամենտները: Նա ապացուցում էր նաև, ինչպես հաշվետվութիւնն է հայտնում, «որ ծայրաստիճան անխոհեմ կլինեն, եթե ժողովուրդը զենքը վայր դնեն, նախապես շապահովելով իր ազատութիւնը»<sup>132</sup>:

Որքան էլ ժլատ է այս հաշվետվութիւնը, բայց և այն բանի հիման վրա, ինչ բովանդակում է նա, այնուամենայնիվ, կարելի է այդ ճառը որակել որպես ժողովրդական ապստամբութեան քաղաքական գործիչներից մեկի ելուշխ: Ռոբեսպիերի խորհուրդները հնչում են որպես դիրեկտիվներ: Դրանք հասցեագրված են յակոբինյաններին, իսկ դա նշանակում է, որ կարճ ժամանակ անց դրանք ակումբի նեղ պատերից կտարածվեն ժողովրդի հոծ շարքերում:

Այն նույն ժամանակ, օգոստոսի 10-ին, օրվա երկրորդ կես-

սին, Ռոբեսպիերն ընտրվեց Կոմունայի անդամ, իսկ այնուհետև նրա Զլխավոր խորհրդի անդամ:

Ու թեև պետք է աներկբայելի համարել, որ նա չի մասնակցել փողոցային մարտերին, զենքը ձեռքին չի գրոհել Տյուրիքի պալատի վրա, նրա զերը օգոստոսի 10-ի պատմական օրվա իրադարձութիւնների նախապատրաստման գործում և բուն այդ իրադարձութիւնների մեջ իրականում նշանակալից էր. նա ապստամբութեան քաղաքական ղեկավարներից մեկն էր:

Ղեկավար մասնակցութիւնը ժողովրդական ապստամբութեանը, իսկ այնուհետև Կոմունային, կարևոր նշանակութիւն ունեցավ Ռոբեսպիերի գաղափարաքաղաքական զարգացման գործում: Իհարկե, նա արդեն 1789 թվականի հուլիսի 14-ից լիանում էր ժողովրդական սոցստամբութեամբ և հավանութիւն էր տալիս մասսաների հեղափոխական նախաձեռնութեան բոլոր համարձակ գրստորումներին: Նա զարձայ հեղափոխական: Բայց այնուամենայնիվ, անձամբ իրեն հարկ էր լինում մասնակցել միայն լեզալ ձևերով տեղի ունեցող պայքարին՝ պատկառազու Մահմանադիր ժողովի պատերի ներսում, որտեղ մարտիկներից յուրաքանչյուրը հենվում էր անբասիր կերպով օրինական, բնորոշների կողմից վստահված դեպուտատական մանդատների վրա:

Օգոստոսի 10-ին Ռոբեսպիերն առաջին անգամ ներգրավվեց պայքարի մեջ, սրբ բառի բուն իմաստով ներկայացնում էր մասսաների հեղափոխական ստեղծագործութիւն: Այդ ստեղծագործութեան առաջին փորձը բոլոր նախկին օրենքների վերադումն էր և ձևական օրինականութեան փոխարինումը ժողովրդի շամար բարձրագույն օրենքով՝ հեղափոխական անհրաժեշտութեամբ:

Ռոբեսպիերը, որ սովորում էր հեղափոխութիւնից, օժտված էր հատուկ ձիրքով՝ մյուսներից ավելի ճիշտ ու արագ յուրացնել նրա դասերը, իսկույննեթ կարողացավ նշմարել օգոստոսի 10-ի անցքերի այդ կարևորագույն կողմը:

«1792 թվականի օգոստոսի 10-ի իրադարձութիւնների մասին» հրաշալի հոգվածում՝ գրված ժողովրդական ապստամբութիւնից անմիջապես հետո, Ռոբեսպիերը գրում էր. «Ժողովուրդներ, մինչև այժմ խարեբաները օրենքների մասին ձեզ ասում էին լուր այն բանի համար, որպիսի ստրկացնեն ու կտորեն ձեզ: Իրականում դուք օրենքներ չեք ունեցել: Դուք ունեցել եք

միայն որոշ բնակալների հանցագործ քմայքներ, բռնակալներ, որոնք իշխանություն են հասել խարդավանքների միջոցով և հենվելով ուժի վրա... Նրանց հանցագործությունները ձեռք ստիպել են նորից ձեռք ձեռք վերցնել սեփական իրավունքների իրականացումը»<sup>32</sup>։

Նախկին իրավաբան-օրինադիրը այդ դատողություններում հանդես է գալիս որպես մեծ հեղափոխական։ Նա գրոշի արժեք չի տալիս ձևական օրինականությանը, նա լիովին բացասում է այն և իր կողմից պսակադերժված այդ օրինականությանը հակադրում բարձրագույն օրենքը՝ իրավունքների իրականացումը իր իսկ ժողովրդի կողմից։

Նույն հոդվածում Ռոբեսպիերը բազմիցս վերադառնում է անցած իրադարձությունների այդ ամենակարևոր կողմին՝ ժողովրդի կողմից իր գերիշխան իրավունքների իրականացմանը հեղափոխական ապստամբության միջոցով։ «Ամբողջ Ֆրանսիական ժողովուրդը, որ վաղուց ի վեր ստորացված էր ու ճնշված, պղծ էր, որ հասել է ժամանակը կատարելու բոլոր կենդանի էակների և առավել ևս բոլոր ազգերի վրա իր իսկ բնության կողմից դրված սրբազան պարտականությունը, այն է՝ ճնշմանը արիարար դիմադրելու միջոցով սեփական անվտանգություն մասին մտահոգվելու պարտականությունը»։

Օգոստոսի 10-ի ապստամբության միջոցով ժողովուրդն «իրականացրեց իր հանրահայտ անկախությունը և լայնորեն բացահայտեց իր իշխանությունն ու արդարագատությունը, որպեսզի ապահովի իր փրկությունն ու երջանկությունը... Նա գործում էր որպես գերիշխան, որը չափից ավելի ուժեղ էր արհամարհում բռնակալներին, որպեսզի վախենար նրանցից, չափից ավելի խորն էր համոզված իր ուժին ու իր գործի սրբությանը, որպեսզի բարեհաճ լիներ մինչև իր մտադրությունները թարցնելու աստիճան»<sup>34</sup>։

Օգոստոսի 10-ի փորձով Ռոբեսպիերը կարողացավ է՛լ ավելի խորը հասկանալ որոշակի պատմական հանգամանքներում մասսաների հեղափոխական բնույթի փրկարար նշանակությունը։ Նա անձամբ տեսավ, թե ինչպիսի անսոսո հնարավորություններ են թաքնված ժողովրդի ընդերքում։

Ռոբեսպիերը դարձավ Փարիզի կոմունայի ամենաազդեցիկ ղեկավարներից մեկը։ Բայց նա ոչ միայն ինքն էր ներգործում կոմունայի աշխատանքի վրա, այլև սովորում էր նրանից, հա-

սու էր լինում այն ամենին, որոնց հետ նախկինում նրան շէր վիճակվել գործ ունենալ։ Կոմունան մի իշխանություն էր, որը գործում էր ոչ թե սահմանադրական կամ որևէ այլ օրինական չափանիշների հիման վրա. դա իշխանություն էր, որը հենվում էր ապստամբության վրա և իր գործողություններում ղեկավարվում հեղափոխական անհրաժեշտության մեջ կամ նպատակահարմարության մեջ։

Կոմունայում Ռոբեսպիերի ընկերները փառաբանված հոստոսներ, ականավոր գրողներ չէին, ոչ էլ մեծանուն բուրժուաներ, ինչպես Սահմանադիր ժողովում, այլ անհայտ, հասարակ մարդիկ, աշխատանքի մարդիկ, տեղական սեկցիաների և ստորին ժողովրդական ընկերությունների ղեկավարներ, որոնց անունները գիտեին միայն մի քանի թաղամասերի կամ նույնիսկ մեկ-երկու փողոցի սահմաններում։ Քարտաշներ, սակերիչներ, գրաշարներ, հյուսներ, մանր առևտրականներ, սկանակ լրագրողներ, նկարիչներ, ներկարարներ, գրասենյակային ծառայողներ, զարեջրագործներ՝ ահա Կոմունայի այս ամբողջ խայտաբղետ, ազմկոտ, մարտական ամբոխը, որն օժտված էր սոռոզ դատողությամբ, գործնական հնարամտությամբ, ոչ մի բանի առաջ տեղի չտվող խիզախությամբ. հենց սա էր Ֆրանսիայի այն ժողովուրդը, որը մինչև այժմ Սահմանադիր ժողովի դեպուտատի բերանով ներկայանում էր որպես մի հավաքական հասկացություն։ Այժմ Փարիզի սանկյուրտների հետ անմիջական շփման ընթացքում, բնդհանուր թշնամիների դեմ ամենօրյա համատեղ պայքարում Ռոբեսպիերն անցում էր կատարում դեպի իր գաղափարաբաղաբական դարպասման վերջին աստիճանը\*։

1792 թվականի սեպտեմբերի 20-ին Փարիզում հավաքվեց Կոնվենտը, որն ընտրված էր, ինչպես առաջարկում էին Ռոբեսպիերն ու նրա համախոհները, ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա։ Ուժերի հարաբերակցությունը Կոնվենտում կարճես ժամանակ էր դասավորվում ժիրոնդիստների համար։ Հենվելով գալառների ձայների վրա, նրանք ստացան հարյուր վաթսուհինգ մանդատ, չակոբինյանները՝ մոտավորա-

\* Ռոբեսպիերը հրապարակավ հայտարարեց, որ ինքը բարձր է գնահատում, հպարտանում է իր մասնակցությանը Կոմունային («Oeuvres complètes», t. IX, p. 86—95)։

պես հարյուր մանդատ: Իսկ ղեկավարատներին ճնշող մեծամասնությունը (մոտ շորս հարյուր ութսունը, որոնք չէին հարում խմբավորումներից և ոչ մեկին), որը հեգնորեն հորջորջվեց իբրև «ճահիճ», գնում էր նրանց հետևից, ովքեր սովյալ պահին ավելի զորեղ էին: Սկզբնապես նրանք պաշտպանում էին ժիրոնդալին, մի բան, որը, բնականաբար, ուժեղացնում էր նրա գիրքերը Կոնվենտում:

Ռոբեսպիերը, որ իր թեկնածությունն առաջադրել էր Փարիզում, մայրաքաղաքի ղեկավարատների մեջ ձայների թվով անցավ առաջինը: Նրա հռչակը երկրում այդ ժամանակ արդեն հրակայական էր: Դադափարները, որ նա այգպես աներեր և համատուխյամբ պաշտպանում էր իրեն թշնամի Սահմանադիր ժողովում, այժմ պաշտպանում էին միլիոնավոր ֆրանսիացիներ: Իր քաղաքական հակառակորդների հետ վեճի ընթացքում նա իրավացի դուրս եկավ. նրա շատ կանխագուշակություններ իրագործվեցին: Արդեն 1791 թվականին, Սահմանադիր ժողովի աշխատանքի վերջում, Արրասի գեպուտատը, որ թիրախ էր ծառայում Ռիվարոլի տիպի միապետական արտագրող գրչակների սրահոսությունների համար, դարձավ երկրում ամենանշանավոր և ամենասիրելի ժողովրդական ներկայացուցիչը:

Երկրի բոլոր կուլտերից նրան հասցեագրված նամակներ էին գալիս, որոնք հիացմունքի ու շնորհակալության խոսքեր էին պարունակում նրա բաջության, հայրենասիրության, ժողովրդի շահերը պաշտպանելու համար: 1791 թվականի սեպտեմբերի 30-ին, երբ փակվում էր Սահմանադիր ժողովի վերջին նիստը, Փարիզի ժողովուրդը նրան օվացիայով զիմավորեց: Յակոբինյան ակումբում նա անառարկելի հեղինակություն էր վայելում: Ամբողջ ղեմոկրատական մամուլը նրա մասին արտահայտվում էր խորին հարգանքով: Մարտը գրել է այն «փառքի մասին, որով նա պտակեց իրեն, անդավաճան կերպով պաշտպանելով ժողովրդի շահերը», «նրա քաղաքացիական առաքինության համար արդարացի պարգև դարձած ժողովրդական համակրություն» մասին<sup>135</sup>:

Էբերը իր «Père Duchesne»-ի էջերում իրեն հատուկ անբռնազրոսիկ տոնով բացականչում է. «Իմ կարծիքով, Ռոբեսպիերն ավելին արժե, քան Պերուի բոլոր գանձերը»<sup>136</sup>: Ցուցափեղկերում սկսեցին ցուցադրել նրա զիմանկարները:

Նրա արտաքին կերպարի մեջ, նրա վարքագծում ոչինչ չփոխվեց: Վերսալից Փարիզ վերադառնալուց ի վեր նա ապրում էր Սենտոնժ փողոցի № 8 տան երրորդ հարկի երկու փոքրիկ սենյակում: 1791 թվականի օգոստոսին նա տեղափոխվեց Նյուան Մորիս Դյուպլեի տունը, որը գտնվում էր Սենտ-Օնորե փողոցում: Այստեղ փայտե կցաշենքի մի սենյակում նա ապրեց մինչև իր վերջին օրը: Ո՛չ միայն Մորիս Դյուպլեի և նրա որդի Սիմոնի սրտաբաց սիրալիրությունը կապեց Ռոբեսպիերին այդ խաղաղ, համեստ օթևանին: Նա սիրեց Մորիսի աղջկան՝ Էլենորա Դյուպլեին, և այդ զղացմունքը փոխադարձ էր: Բայց նրանք անընդհատ հետաձգում էին ամուսնությունը մինչև, ինչպես իրենց էր թվում, թշնամիների նկատմամբ ազատության վերահաս հաղթանակի ժամանակը՝ ժամանակ, որ նրանց համար այգպես էլ չեկավ:

Ռոբեսպիերը մնում էր նույն աղքատը, ինչպես և նախկինում: Նա հրաժարվում էր պաշտոններից, որոնք նրան բարձր աշխատավարձ էին խոստանում: Նրա պահանջները շափազանց համեստ էին: Դրամը նրա համար ոչ մի արժեք չունեց:

Հասարակ ժողովուրդը, որ գնահատում էր Ռոբեսպիերի անվեհեր պայքարը ի պաշտպանություն իր՝ ժողովրդի շահերի, նրա անշահախնդրությունը, նրա ազնիվ զիտավորություններն ու գործերը, սիրեց նրան և հորջորջեց Անկաշառ պատվավոր մականվամբ:

Կոնվենտը հավաքվեց բարի նախանշանների առկայությունամբ: 1792 թվականի սեպտեմբերի 20-ին վալմի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հեղափոխական Ֆրանսիայի բանակը տարավ առաջին հաղթանակը ինտերվենտների դեմ: Դա բեկման սկիզբն էր պատերազմական գործողությունների ընթացքի մեջ: Հաջողությունից թևավորված հեղափոխական գումարտակների ճնշման տակ սովորիացիներն ու պրուսացիներն սկսեցին նահանջել դեպի արևելք:

Վալմիի մոտ հաղթանակի ճառագայթներով պայծառացած Կոնվենտի առաջին նիստերն անցան մեծ գահիճում բոլոր հավաքվածների հայրենասիրական վիթխարի վերելքի պայմաններում: Հանդիսավորությամբ ընդունվեց ղեկրետ թագավորական իշխանության ոչնչացման մասին: Սեպտեմբերի 21-ի օրը հռչակվեց «նոր դարաշրջանի» սկիզբը՝ Հանրապետության առաջին տարվա, Ազատության շորրորդ տարվա առաջին օրը:

Հաշվի նստելով Կոնվենտին և երկրին համակած հայրենասիրական ոգևորության հետ, ձգտելով հեղափոխական բոլոր ուժերը համախմբել թշնամու դեմ հաղթանակի հասնելու համար, յակոբինյանները ժիրոնդիստներին հաշտություն առաջարկեցին: Մարատն իր նոր՝ «Փրանսիական հանրապետության թերթի» էջերում սեպտեմբերի 22-ին հանդես եկավ ծրագրային նոր հոդվածով, որում հայտարարեց, որ ինքն անցնում է նոր տակափկայի՝ բոլոր հայրենասիրական ուժերի համախմբմանն ու միավորմանը:

Բայց ժիրոնդիստները՝ արբեցած իրենց հաջողություններով գավառում, «Ճահճի» դեպուտատների աջակցությամբ, որի կայունությունը նրանք գերագնահատում էին, շնորհակցին իրենց մեկնված ձեռքը: Նրանք մերժեցին հաշտությունը և կատաղի հարձակման անցան Լեոան վրա: Ժիրոնդայի մի շարք հետորդներ՝ Վերնիոն, Լասուրսը, Ռերեկին, Բարբարուն, Լուվեն, Ռոբեսպիերի ու Մարատի դեմ հանդես եկան մեղադրանքով՝ դատապարտելով նրանց դանազան շարագործությունների և դիկտատուրայի ձգտման մեջ: Լեոը բարձրացրեց իրեն նետված ձեռնոցը: Երկու խմբավորումների միջև ընդհարումը վերականգնվեց է՛լ ավելի մեծ անողորմությամբ:

Ռոբեսպիերն իրեն մեղադրողներին պատասխանում էր էլույթների շարքով<sup>37</sup>: Նա հերքեց բոլոր անձնական մեղադրանքները և բանավեճը սեղափոխվեց բաղաբական հարցերի բնաքավառ: Նա մեծը հասցրեց մինչև տարածայնությունների բուն Լույսյանը: «Քաղաքացիներ, մի՞թե ձեզ պետք էր հեղափոխություն առանց հեղափոխության... Ո՞վ կարող է ստույգ մատնացույց անել, թե որտեղ պետք է կանգ առնի ժողովրդական ապստամբության հոսանքը այն բանից հետո, երբ իրադարձությունները ծավալվել են», — հարցնում էր Ռոբեսպիերը դեպուտատներին: 1792 թվականի նոյեմբերի 5-ի Կոնվենտում արտասանած ճառում<sup>38</sup>: Իր փայլուն փաստարկումների ամբողջ տրամաբանությամբ նա ապացուցում էր, որ իր հակառակորդները՝ ժիրոնդիստները հեղափոխության հակառակորդներն են, որոնք ձգտում են ժողովրդից խլել օգոստոսի 10-ին նրա ձեռք բերած հիանալի հաղթանակի պտուղները:

Ռոբեսպիերի բնավորության մեջ չկար պաշտպանություն բավարարվելու սովորություն. նա անցնում է հարձակման: Նա ժիրոնդիստներին մեղադրում էր Փարիզի դեմ դավադրություն

կաղմակերպելու, երկիրը հեղափոխական մայրաքաղաքին հակադրելու փորձի մեջ: Հիանալի խորաթափանցությամբ նա բացահայտում էր նրանց երկդիմությունը, նրանց ճառերի կանխամտածված խուսափողականությունը, որոնք թաքցնում էին իրենց գաղտնի թշնամանքը հեղափոխության նկատմամբ, իրենց նենգավոր դիտավորությունները՝ խառնակիչների դեմ պայքարի պատրվակով ուրեղ ժողովրդի թևերը և նորից ստրկացնել նրան:

Երբ Կոնվենտում բարձրացավ նախկին թագավորի ճակատագրի հարցը, Ռոբեսպիերը, ինչպես և Մարատն ու Սեն-ժյուստը, համառորեն պնդում էր, որ անհրաժեշտ է կայացնել ամենաանողոր որոշումներ: Նա հիանալի կերպով հասկանում էր (իրադարձությունների հետագա ընթացքը լիովին հաստատեց դա), որ ժիրոնդիստները կփնտրեն Լյուդովիկոս XVI-ի կյանքը փրկելու բոլոր միջոցները: Նախկին միապետի ճակատագրի վերաբերյալ վեճը բոլորից քիչ էր վերաբերում անձամբ Լյուդովիկոսին: Դա վեճ էր հեղափոխության ճակատագրի մասին՝ արդյոք այն կզարգանա՞, թե՞ կանգ կառնի:

1792 թվականի դեկտեմբերի 3-ին Կոնվենտում արտասանած ճառում Ռոբեսպիերը պահանջում էր մահվան դատավճիռ կայացնել նախկին թագավորի նկատմամբ: Նրան չպետք է դատել, այլ հարկավոր է պատժել: Ժողովուրդը գահընկեց անելով նրան, դրանով իսկ որոշեց, որ Լյուդովիկոս XVI-ը խոտվարաբ է: Նա չի կարող դատվել, որովհետև նա արդեն դատապարտված է: Սահմանադրական հին օրենքներին փոխարինելու եկավ նոր, բարձրագույն օրենք, որը «բուն հասարակության հիմքն է. դա ժողովրդի բարօրությունն է: Բռնակալին դատելու իրավունքը և նրան գահընկեց անելու իրավունքը միևնույն բանն է... Ապստամբություն՝ ահա բռնակալի դատը. նրա իշխանության խորտակումը նրա դատավճիռն է. պատժաշահին այն է, ինչ պահանջում է ժողովրդի ազատությունը: Ժողովուրդները դատում են ոչ այնպես, ինչպես դատական ատյանները. դատավճիռներ չեն արձակում նրանք: Ժողովուրդները շանթահարում են. նրանք չեն դատապարտում թագավորներին, նրանք սուզվում են նրանց անգոյություն մեջ»<sup>39</sup>:

Այդպես կարող էր խոսել միայն հիրավի մեծ հեղափոխականը: Եվ նշանակալից է, որ հեղափոխական անվեհերությամբ ներծծված այս խոսքերը պատկանում էին քաղաքական այն

գործչին, որը գեռ վերջերս Մահմանդիբ ժողովում պահանջում էր բնդմիշտ վերացնել մահապատիժը և այնպես երկար առարկում էր Ֆրանսիայում միապետության ինստիտուտի վերացման դեմ: Ռոբեսպիերն ընթանում էր հեղափոխության ավանգարդում, և, միգուցև, ամենից առաջ այն պատճառով, որ նա կարողանում էր լսել նրա ձայները, և ինքը նրանից վերասովորելով, նրա դասերը սովորեցնում էր օւրիշներին:

Հակառակ Ռոբեսպիերի պահանջի, ժիրոնդիստների համառպնդումով նախկին թագավոր Լյուդովիկոս Կապետը հանձնվեց Կոնվենտի դատին: Ռոբեսպիերը, Մարատը, Սեն-ժյուստը հետամուտ էին լինում նրա մահապատժին<sup>140</sup>: Ժիրոնդիստներն ամեն կարգի երկերեսանի խուսափարումներով աշխատում էին փրկել նրա կյանքը: Բայց երբ Մարատի առաջարկությամբ Կոնվենտն անցավ անվանական քվեարկության, ժիրոնդիստական լիդերները փոքրոգություն ցուցաբերեցին, և մեծամասնությունը քվեարկեց նրա մահապատժի օգտին: 387 ձայնով ընդգեմ 334-ի Կոնվենտը Լյուդովիկոս Կապետին դատապարտեց մահապատժի: 1793 թվականի հունվարի 21-ին Փարիզի Հեղափոխության հրապարակում նա գլխատվեց:

Քագավորի ճակատագրի հարցի շուրջ Կոնվենտում ծավալված պայքարի ելքը ցույց տվեց, որ ժիրոնդիստների ազդեցությունը սկսում էր նվազել: Եվ դա պատահական չէր: Հեղափոխությունը ծավալվում էր, և դասակարգային ուժերի հարաբերակցությունը փոխվում էր:

Պատերազմը ձգձգվում էր: Եվրոպական միապետությունների հակահեղափոխական կոալիցիան ընդլայնվում էր: Ավրստրիայից և Պրուսիայից բացի սլոժմ նրա կազմի մեջ մտնում էին Անգլիան, Հոլանդիան, Իսպանիան, Նեապոլիտանական թագավորությունը, Սարդինիան, գերմանական և իտալական մի շարք մանր պետություններ: 1793 թվականի մարտին հակահեղափոխական խոռովություն բռնկվեց Վանդեայում, որը տեղափոխվեց նորմանդիա և Բրետան: Ժիրոնդիստների դրածո, նրանց հետ սերտորեն կապված գեներալ Դյումուրիեն մարտին քանակաւթյունների մեջ մտավ ավստրիացիների հետ և փորձում էր բանակը շրջել դեպի Փարիզ: Դյումուրիեի դավաճանությունը անհաջողությունների ժամանակաշրջան բացեց հեղափոխական բանակի համար: Հանրապետության զորքերը ին-

տերվենտների գերազանց ուժերի ճնշման տակ նահանջում էին բոլոր ռազմաճակատներում:

Երկրի պարենային դրուժյունը գտնում էր սպառնալից: Թանկության արագ աճը դաժան կարիքի հասցրեց արհեստավորներին, բանվորներին, աղքատ ամբսին: Փարիզում և մյուս քաղաքներում սկսեցին հուզումներ: Այսպես կոչված կատաղիների<sup>141</sup> առաջ քաշած սննդամթերքների վրա կաշուն գներ սահմանելու պահանջը («մաքսիմում») արժանացավ քաղաքային սրբեքյության պաշտպանությանը<sup>142</sup>: Հեղափոխության գլխավոր հարցը՝ ազրարային հարցը առաջվա նման մնում էր չլուծված, և համերոությունը կորցրած գյուղացիությունը բացահայտ կերպով արտահայտում էր իր դժգոհությունը: 1792 թվականի աշնանից գյուղացիական հուզումները նորից սաստկացան:

Հանրապետության այդ խորացող ճգնաժամի առկայության պայմաններում ժիրոնդիստները դրսևորեցին համարձակ և վճըրական միջոցներով այն հաղթահարելու անկարողություն ու անկամեցողություն: Փոխանակ պայքարելու արտաքին և ներքին հակահեղափոխության հարաճուն ճնշման դեմ, նրանք մտահոգված էին միայն Լեոան դեմ պայքարով: Հայրենիքի գլխին կախված մահացու վտանգի մասին նրանք մտածում էին միայն իրենց մասին: Ատելությունը կուրացրել էր նրանց աչքերը: Գասակարգային բնազդը նրանց թելադրում էր ճիշտ հասկանալ երկրում տեղի ունեցող պայքարի իսկական իմաստը: Ամենախորաթափանց ժիրոնդիստներից մեկը՝ Վերնոն 1793 թվականի մայիսի սկզբին ասում էր. «Գծքախտաբար ես նկատում եմ, որ դաժան պատերազմ է գնում նրանց միջև, ում անվանում են սանկյուրտներ, և նրանց, ում առաջվա պես տերեր են կոչում»<sup>143</sup>: Սա համապատասխանում էր ճշմարտությանը: Ժիրոնդան տերերի խմբավորում էր, ուստի և նրա բոլոր ուժերն ուղղված էին սանկյուրտների, ժողովրդի դեմ: Բայց հակաժողովրդական դիրքորոշումներն անխուսափելիորեն տանում էին դեպի հակաազգային: Ժողովրդի դեմ պայքարից դեպի բացահայտ հակահեղափոխությունը և ազգային դավաճանությունը միայն մի քայլ է:

1793 թվականի ապրիլի 3-ին Ռոբեսպիերը Կոնվենտում հանդես եկավ Դյումուրիեի հանցակիցների մասին ճառով: Նա այն սկսեց պարզ ու անողոր խոսքերով. «Անհրաժեշտ է լրջորեն դրազվել մեր հիվանդությունների բուժմամբ: Հայրենիքին սպառ-

նացող վտանգներով թելադրված վճռական միջոցները պետք է վերջ դնեն այս կատակերգությանը... Պետք է հայրենիքը փրկել իսկական հեղափոխական միջոցներով: Պետք է դիմել ազգի ուժին...»:

Բայց դա միայն ներածություն էր: Կրան հետևեց ժիրոնդալին ներկայացված ուղղակի և անհերքելի մեղադրանքը ղավաճանության մեջ: Մեղադրանքը անձնավորված էր: Ռոբեսպիերը խոսում էր ոչ թե ժիրոնդալին հարող բոլոր ղեկուսատեսների, այլ նրա առաջնորդի մասին: «Ես հայտարարում եմ,— ասաց Ռոբեսպիերը,— որ երբեք Գյումուրիեն, երբևք ազատության թշնամիները չեն ունեցել շատ ավելի հավատարիմ բարեկամ և շատ ավելի օգտակար պաշտպան, քան Բրիսոնն: Եվ նա լայնորեն բացահայտեց ապացույցների մի ամբողջ շղթա, որոնք հիմնավորում էին այդ պնդումը: «Ես հայտարարում եմ,— կրկնեց նա,— որ մեր աղետների իսկական պատճառը հանցագործ կապի մեջ է այն մարդկանց միջև, որոնք գտնվում են մեր միջավայրում, և հենց իմ մատնանշած մարդու և բոլոր նրանց միջև, ովքեր ընկերացել են նրան»: Եվ նա առաջարկեց ղեկրեստ Բրիսոնին պատասխանատվության ենթարկելու մասին՝ մեղադրելով նրան Գյումուրիեի հետ հանցակցության մեջ<sup>144</sup>:

Ռոբեսպիերը, ինչպես և Մարատը, արդեն վաղուց էր պայքարում ժիրոնդալի դեմ: Այստեղ հարկ չկա պարզելու (ասենք դրա առանձին կարիք էլ չկա), թե երկու նշանավոր հեղափոխական առաջնորդներից որն է ավելի շատ բան արել «պետական մարդկանց» խմբավորման պսակազերծման հարցում: Նրանք համաձայնեցված չէին գործում, և՛ Ռոբեսպիերը, և՛ Մարատը ընթանում էին յուրաքանչյուրն իր առանձին ճանապարհով: Պատահում էր, որ նրանք դժգոհություն էին արտահայտում միմյանցից: Բայց նրանք երկուսն էլ ինքնամոռաց նվիրված էին հեղափոխությանն ու ժողովրդին՝ նրա արարչին, և պայքարի տրամաբանությունը տանում էր նրանց դիրքերի ավելի ու ավելի սերտ մերձեցմանը: 1793 թվականի նախօրյակին իրադարձությունների ընթացքը հանգեցրեց նրան, որ Ռոբեսպիերը և Մարատը (այն ժամանակ դեռևս նաև Գանտոնը, թեև արդեն հայտնի վերապահումներով) դարձան յակոբինյանների ամենահեղինակավոր առաջնորդները, և նրանց հարկ էր լինում գլխավորել պայքարն ընդհանուր թշնամու՝ ժիրոնդալի դեմ:

Այդ պայքարն սկսվել էր դեռևս 1791 թվականին: Յակոբինյան ակումբի Երկրորդ պատակտումից հետո (1792 թվականի հոկտեմբերին) այն անհամեմատ սրվեց: Ռոբեսպիերն այժմ մահացու հարվածներ էր հասցնում իր հակառակորդներին<sup>145</sup>: Բայց միայն ապրիլի 3-ի ճառում նա իր մեղադրանքները հասցրեց տրամաբանական վախճանի, ժիրոնդալի առաջնորդին ու նրա ղինակիցներին՝ մեղադրելով հեղափոխությանը դավաճանելու մեջ:

Այսուհետ վրա էր հասնում պայքարի ամբարտական փուլը: Հաշտեցումն արդեն անհնարին էր: Ժիրոնդալական Ռոբեսպիերի մեղադրանքին պատասխանեցին յակոբինյանների, հեղափոխական Փարիզի վրա հրեշավոր հարձակումներով և, խախտելով ղեկուսատական անձեռնմխելիությունը, Մարատին հանձնեցին հեղափոխական տրիբունալի դատին:

Վերահաս աղետի պայմաններում, երբ ինտերվենտների բանակները մոտենում էին Փարիզին, իսկ հակահեղափոխական խռովությունը երկրի ներսում ավելի լայն թափով էր բորբոքվում, Լեոան նկատմամբ ատելությունից կուրացած ժիրոնդիստները կանգնում էին քաղաքացիական պատերազմի սանձազերծման ուղու վրա:

Մայիսի 8-ին հանդես գալով Յակոբինյան ակումբում, Ռոբեսպիերն ասում էր. «Ֆրանսիայում մնացել են միայն երկու կուսակցություններ՝ ժողովուրդը և նրա թշնամիները... Ով ժողովրդի կողմը չէ, նա ժողովրդի դեմ է, ով քայլում է ոսկեկար շավարով, նա թշնամի է բոլոր սանկյուլոտներին»<sup>146</sup>: Այս խոսքերի մեջ կար երկրում ծավալվող դասակարգային պայքարի իմաստի խոր ըմբռնումը:

Ռոբեսպիերի ուժը, յակոբինյանների ուժն այն էր, որ նրանք միշտ ժողովրդի հետ էին, կարողանում էին ուշադիր լսել ժողովրդի ձայնը, հասկանալ նրա կարիքներն ու պահանջները: Ռոբեսպիերը, ինչպես և յակոբինյանների մյուս ղեկավարները, սկզբում անվաստահորեն, դեռ ավելին, բացասաբար վերաբերվեցին «կատաղիներին» և նրանց քաղաքական ու սոցիալական պահանջների նկատմամբ: Բայց հաշվի առնելով ժողովրդի ցանկությունը և երկրում ստեղծված իրադրությունը, նա փոխեց իր վերաբերմունքը «մաքսիմումի» վերաբերյալ նրանց առաջարկությունների նկատմամբ: Այն բանից հետո, երբ «մաքսիմումի» օգտին արտահայտվեց նաև Փարիզի կոմունան, Ռոբես-

պիեքն ու յակորինյանները պաշտպանեցին այդ պահանջը և, չնայած ժիրոնդիստների դիմադրութեանը, 1793 թվականի մայիսի 4-ին Կոնվենտում անցկացրին ղեկըն՝ ցորենի կալուն գներ սահմանելու մասին:

Յակորինյաններին հաջողվեց հասնել հանրապետութեան փրկութեան համար անհրաժեշտ այլ միջոցառումներին: Նրանց նախաձեռնութեամբ Փարիզում ստեղծվեցին զգոնութեան ժողովըրդական կոմիտեներ: Մայիսի 20-ին Կոնվենտն ընդունեց ղեկըն՝ հարուսներից մեկ միլիարդ ֆրանկ հարկադրական փոխառութեան վերցնելու մասին և այլն: Բայց Հանրապետութեան փրկութեան համար ամենաանհրաժեշտ միջոցառումը ժիրոնդայի իշխանութեան տապալումն էր: Արդեն 1793 թվականի ապրիլից Յակորինյան ակումբում ունեցած իր ելույթներում Ռոբեսպիերը պահանջում էր անցկացնել հեղափոխական բնույթի գործնական որոշումներ սանկյուլոտներից բաղկացած հեղափոխական բանակ ստեղծելու, կասկածելիներին բանտարկելու մասին: Այժմ եկել էր գլխավորին անցնելու ժամանակը:

Մայիսի 26-ին, ելույթ ունենալով Յակորինյան ակումբում, Ռոբեսպիերն ասաց. «Երբ բոլոր օրենքները խախտվում են, երբ բռնակալությունը հասել է իր վերջնա կետին, երբ ոտնահարվում են ազնվությունն ու պարկեշտությունը՝ այն ժամանակ ժողովուրդը պետք է ապստամբի: Այդ պահը հասել է»: Մայիսի 29-ին նա Յակորինյան ակումբում նորից կրկնեց. «Ես ասում եմ, որ եթե ամբողջ ժողովուրդը ոտքի չկանգնի, ազատությունը կորստյան կմատնվի»<sup>167</sup>:

1793 թվականի մայիսի 31-ին Փարիզում սկսվեց ժողովրդական ապստամբությունը, որն ավարտվեց հունիսի 2-ին՝ ժողովրդական ապստամբությունը տապալեց ժիրոնդայի իշխանությունը և այն հանձնեց յակորինյանների ձեռքը:

## VII

Մայիսի 31—հունիսի 2-ի ապստամբության օրերին Ռոբեսպիերն իր օրագրում կատարեց հետևյալ կարճառոտ նշումները. «Միասնական կամք է հարկավոր: Այն պետք է լինի կամ հանրապետական, կամ ոռոյալիստական... Ներքին վտանգները բխում են բուրժուազիայից. բուրժուազիային հաղթելու համար պետք է միավորել ժողովրդին»: Եվ այնուհետև. «Ան-

հրաժեշտ է, որ ժողովուրդը միանա Կոնվենտին, և որ Կոնվենտը օգտվի ժողովրդի օգնութունից»<sup>168</sup>:

Այս գրառումը շատ բան է ասում: Ռոբեսպիերը պարզորոշ տեսնում էր դասակարգային այն ուժը, որի դեմ պետք էր պայքարել: Ապստամբությունն ուղղված էր ժիրոնդայի դեմ, և Ռոբեսպիերը խոսում էր բուրժուազիայից ելնող վտանգի մասին: Սա նշանակում է, որ նա լավ էր հասկանում, թե որ դասակարգն է կանգնած մոնտանյարների հակառակորդների հետևում: Նա հասկանում էր նաև այն, որ ժիրոնդային և բուրժուազիային հաղթել կարելի էր միայն ժողովրդին Կոնվենտի շուրջը համախմբելով:

Արդյոք սա նշանակո՞ւմ է, որ 1793 թվականի Ռոբեսպիերին պետք է համարել պլեբեյականության, կամ «շուրտրոգ դասի» ներկայացուցիչ, կամ նույնիսկ սոցիալիստ, ինչպես նրան երբեմն ներկայացնում էր Մատիեզը:

Ոչ, իհարկե: Յակորինյանները, մեկ անգամ ևս կրկնենք, իրենցից ներկայացնում էին դեմոկրատական բուրժուազիայի, (միջին և մանր) գյուղացիության և պլեբեյների բլոկը: Գասակարգային տեսակետից այս տարասեռ ուժերը գնում էին միասին, քանի որ նրանց միավորում էր շահերի ընդհանրությունը: Սերտորեն կապված լինելով կոտարված բուրժուական հեղափոխության հետ, նրանք պիտե չէին հասել իրենց գլխավոր պահանջների բավարարմանը, ուստի և հեղափոխության դարգացումը առաջ էին մղում: Հասկանալի է, այդ պահանջները չէին կարող նույնը լինել. այդ պատճառով բլոկի ներսում հետագայում կառաջանան տարաձայնություններ, բայց մինչև մի որոշակի ժամանակ յակորինյան բլոկի մեջ մտնող ուժերն ունենին ընդհանուր խնդիրներ և ընդհանուր թշնամիներ, և, հանդես գալով համախմբված, նրանք հասնում էին հաղթանակների:

Միայն կլիներ, ինչպես ևս եմ կարծում, Ռոբեսպիերի համար փնտրել սոցիալական ստույգ համարժեք: Յակորինյանները հանդես էին գալիս որպես այդ դասակարգային տարասեռ բլոկի ներկայացուցիչներ, բայց չէ սր այդ բլոկը ըստ էության ֆրանսիական ժողովուրդն էր: Այլ կերպ ասած, Ռոբեսպիերը ներկայացնում և պաշտպանում էր հեղափոխություն կատարած ֆրանսիական ժողովրդի շահերը:

Թերված գրառումները ցույց են տալիս, թե Ռոբեսպիերը որքան պարզորոշ էր գիտակցում հեղափոխության խնդիրները

մայիսի 31—Հունիսի 2-ի ապստամբության մեծական օրերին «Ժողովրդին միավորելու», նրան ժիրոնդիստական լիզերներից մաքրված Կոնվենտի շուրջը համախմբելու համար հարկավոր էին արագ և հրրավի հեղափոխական միջոցառումներ:

Եվ յակոբինյան Կոնվենտը դրանք գտնում է: Հունիսի 3-ի, 10-ի և Հուլիսի 17-ի ազդարարչին օրենքները\* գյուղացիներին վեց շաբաթվա ընթացքում ավելցին այն, ինչ հեղափոխությունը նրանց շտաբը շուրջ տարում: Գյուղում ֆեոդալիզմին հասցված խորտակիչ հարվածը և գյուղացիների կողմից հողի թեև ոչ լրիվ, բայց էական մասի ստացումը ապահովեցին գյուղացիության հիմնական մասսաների անցումը յակոբինյանների կողմը:

Մատիեզը պնդում էր, որ Լեոնան ձեռնարկած միջոցառումները, որոնք էական բավարարություն ավելցին գյուղացիությանը, անց էին կացվում Ռոբեսպիերի նախագծով: Դրանում, իհարկե, չափազանցություն մասնիկ կա: Հայտնի է, որ այդ միջոցառումների նախապատրաստումն ու անցկացումը իրականացվում էին բաղձաթիվ մարդկանց՝ գյուղատնտեսության և առևտրի ֆեոդալական իրավունքների գծով կոմիտեիների անդամների, Կոնվենտի ղեկավարատների և այլոց մասնակցությամբ<sup>149</sup>: Բայց Մատիեզի հետ պետք է համաձայնել այն հարցում, որ Ռոբեսպիերը ոչ միայն պատասխանատվություն էր կրում այդ միջոցառումների համար, այլև, ըստ երևույթին, պրակտիկ ղեկավարողն էր:

Նույնպեսի պաշտոնիցիլ արագությունը, երեք շաբաթվա ընթացքում, յակոբինյանները մշակեցին: Նոր սահմանադրությունը, քննարկեցին Կոնվենտում և դրեցին ժողովրդի հաստատմանը: Այդ հանրապետական, հիտեղական դեմոկրատիզմի ոգով ներթափած սահմանադրությունը պետք է ծառայի զաղափարաբարձական պլանիում, որը կոչված էր իր շուրջը համախմբել ամբողջ ազգին:

2իջեցնենք, որ Հունիսի 3-ի ղեկիտով տարադիրների բնագրովում հողի մասնատվում էին փոքր կտորների, և դրանք ձեռք բերելու համար ազգապա գյուղացիներին պրվում էր 10 տարի անողությունը, տարածաված վճարման իրավունք: Հունիսի 10-ի ղեկիտը համայնական հողից (8 միլիոն ղեխախնից ավելի) գյուղացիների միջև բաժանում էր յուրաքանչյուր շնչին հավասար չափով: Հունիսի 17-ի ղեկիտն առանց փրկագնի ոչնչացրեց ֆեոդալական թուր իրավունքները, կոն ու բեզարը, հարկերը և արտոնությունները:

Սահմանադրական-դեմոկրատական կարգերի պրոբլեմները պատկանում էին յակոբինյանների կողմից առավել մշակված հարցերի թվին: Ռոբեսպիերն այստեղ կարող էր հենվել ոչ միայն Ռուսոյի տեսական ժառանգության, այլև Սահմանադիր ժողովում հանուն դեմոկրատիայի սկզբունքների պայքարի իր սեփական փորձի վրա: Ընդհանրացնելով հեղափոխության կենդանի փորձը, մասնավորապես հանրապետական վարչակարգի առաջին փորձը, Ռոբեսպիերը դեռևս ժիրոնդայի դեմ պայքարի շրջանում ստեղծեց քաղաքական դեմոկրատիայի հարցերի վերաբերյալ հայացքների կուռ համակարգ<sup>150</sup>: Նորը, որ այստեղ կար Սահմանադիր ժողովի ժամանակաշրջանի նրա սահմանադրական ծրագրի համեմատությամբ, ժողովրդական անկախության պահպանման երաշխիքի պահպանումն էր՝ ընտրականություն, հաշվետվություն և պետական ծառայողներին հեռկանչելու իրավունք, օրենսդրական մարմինների աշխատանքի նկատմամբ ժողովրդի վերահսկողության ուժեղացում, առավելագույն ժամկետների (2 տարի) սահմանում ընտրված պետական ծառայողների համար և այլն: Նոր էր նաև Մարդու և քաղաքացու իրավունքների ղեկավարացիայում մտցված սեփականություն իրավունքը սահմանափակող մեկնաբանությունը, Ռոբեսպիերի գրած «աշխատանքի իրավունքը», որը վկայում էր նրա՝ ապագա սահմանադրության մեջ նաև իր հավասարապաշտական (էգալիտարիստական) հայացքների որոշ տարրեր մտցնելու ցանկություն մասին<sup>151</sup>:

Չարմանալի չէ, որ այդ սահմանադրությունը, իր որոշ մասերում ամենադեմոկրատականը Ֆրանսիայի պատմության մեջ, մինչև մեր օրերը գործող բոլոր սահմանադրություններից, գրված լինելով սկզբնական ժողովների հաստատմանը, արժանացավ ժողովրդի միահամուռ հավանությանը:

Բայց յակոբինյանների և նրանց առաջնորդ Մարսիմիլիան Ռոբեսպիերի ճշմարիտ մեծությունը որպես իսկական հեղափոխականների, գրանցվեց նրանում, որ թողնելով ճաշակածի ուրիտը, նրանք անվեհերաբար առաջ գնացին շտրոկված ճանապարհներով: Մրանց մեծությունը կայանում էր նրանում, որ ընդունելով ամենադեմոկրատական սահմանադրությունը և ստանալով նրա լիակատար հավանությունը՝ ժողովրդի կողմից, հիշտ գնահատեցին արտաքին և ներքին հակահեղափոխության

դեմ մահացու պատերազմի պահանջները՝ հրաժարվեցին սահմանադրական վարչակարգի գործնական կիրառումից և այն փոխարինեցին իշխանութիան կազմակերպման ուրիշ, առավել բարձր ձևով՝ հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայով:

Ի տարբերություն յակոբինյանների կողմից դեռ նախկինում մշակված սահմանադրական-դեմոկրատական կարգերի վերաբերյալ հարցերի, հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի պրոբլեմը ոչ յակոբինյան, ոչ էլ որևիցե այլ գրականության մեջ չի քննարկվել, և առհասարակ չի էլ դրվել քննարկման: Այս քննարկուր կանոնից և այս, ինչպես և ուրիշ շատ հարցերում բացառություն է կազմել ժան-ժակ Ռուսոն: Նշանավոր «Հասարակական դաշինքում» Ռուսոն հանճարեղ խորաթափանցությամբ կանխատեսեց այնպիսի դրության առաջացման հնարավորությունը, երբ անհրաժեշտ կգտնա նահանջը սովորական օրենսդրական նորմերից: Տրակտատի VI գլխում, որը հենց այդպես էլ վերնագրված էր՝ «Գիկտատուրայի մասին», Ռուսոն գրում էր. «Օրենքների անճկունությունը, որ խոչընդոտում է գրանք կիրառել իրապարծությունների նկատմամբ, որոշ դեպքերում կարող է գրանք դարձնել վտանգավոր և գրանց միջոցով հանգեցնել պետության կործանմանը, երբ նա ճգնաժամ է ապրում... Ուստի պետք չէ ձգտել քաղաքական հիմնադրույթների ամրապնդմանը մինչև այն աստիճան, իրենից խլեն գրանց գործողությունը դադարեցնելու հնարավորությունը...»: Հենվելով Հռոմեական հանրապետության և ինչ-որ չափով Սպարտայի պատմական փորձի վրա, «Հասարակական դաշինքի» հեղինակը գտնում էր, որ որոշակի պայմանների դեպքում որպես ժամանակավոր, նույնիսկ կարճատև միջոց կարող է հաստատվել լայն իրավունքներով օժտված մեկ կամ մի քանի անձանց դիկտատուրա:

Ժան-ժակ Ռուսոյի բոլոր երկերը, և առանձնապես «Հասարակական դաշինքը» իր ծրագրային-քաղաքական հարցերով, Ռոբեսպիերն ընկալեց որպես Ռուսոյի, մեծատառով Ռուսոյի յուրատեսակ կտակ: Ռոբեսպիերն իր ամբողջ կյանքի միջով անցկացրեց ոչ մի ակնթարթ չասանված, անսահման ակնածանք հավասարության մասին ուսմունքի մեծ արարչի նկատմամբ: Նա բազմիցս վերրինթերցում էր Ռուսոյին, նա ասես

խորհրդակցում էր նրա հետ. խորհում այն մասին, թե ինչպես կվարվեր ժան-ժակը այս կամ այն հանգամանքներում:

Բայց երկու Ռոբեսպիերներին՝ Մարսիմիլիանի և Սոլյուստենի ո՛չ մտածողության յուրաձևության, ո՛չ բնավորության մեջ ոչինչ չկար ո՛չ բժախնդիր շոր դողմատիվմից, ո՛չ էլ սխեմաների նկատմամբ հակումից: Դրանք ստեղծագործական, նույնիսկ կրակոտ խառնվածքի տեր մարդիկ էին, որոնք համարձակորեն գնում էին անհայտ աշխարհներ. նրանց, ինչպես և մյուս յակոբինյանների մեծամասնության համար գործողությունը միշտ ստաջնային էր խոսքի նկատմամբ:

Իհարկե, Ռոբեսպիերը կարգացել է և ուշադրություն դարձրել Ռուսոյի «Հասարակական դաշինքի» VI գլխին: Բայց չէ որ ժան-ժակի մեկնաբանության մեջ դիկտատուրայի պրոբլեմը դրվում էր ամենարեղհանուր, վերացական-մեկնակերպային ձևով: Փաստորեն այդ գլուխը ոչ մի պատասխան չէր տալիս 1793 թվականին կյանքի կողմից անողոքարար առաջադրված հարցերին: Այն չէր էլ կարող տալ ոչ պատասխաններ, ոչ խորհուրդներ, ոչ հանձնարարականներ. չէ որ այն գրված էր հեղափոխության սկզբից գրեթե քսան տարի առաջ:

Հեղափոխության ընթացքում Մարտոն ավելի պարզորոշ, իսկ Ռոբեսպիերը մի տեսակ տարբերացրեց էր ընկալում ժողովրդի գիկտատուրական գործողությունների անհրաժեշտության բմբունումը, բայց գրանք սոսկ պատահականորեն առկա ժող մտքեր էին, որոնք զարգացում չստացան:

Յակոբինյան հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան առաջացավ ու կազմավորվեց ոչ նրա գիտակցական նախապատրաստության՝ նախօրոք մշակված պլանի կամ նրա անհրաժեշտության տեսական հիմնավորման շնորհիվ: Այն ծնվեց ու ստեղծվեց բուն կյանքի, մասսաների հեղափոխական ստեղծագործության միջոցով: Եվ միայն այն բանից հետո, երբ նա հաստատվեց, դարձավ իրողություն, նրա փորձը գիտակցվեց, իսկ այնուհետև տեսականորեն ընդհանրացվեց յակոբինյան առաջնորդների և ամենից առաջ Ռոբեսպիերի կողմից:

Ըստ էության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի սկիզբը պետք է տեսնել 1793 թվականի մայիսի 31 — հունիսի 2-ի ժողովրդական ապստամբության բուն ակտի և ապստամբության հետևանքով երկրում ստեղծված դասակարգային ուժերի հարաբերակցության մեջ: Բայց յակոբինյանները, անց-

Տեղիով իշխանություն գլուխ, չէին նկատում և չէին գիտակցում այդ: Հանրապետության դրությունն այնքան տագնապալից էր, բոլոր կողմերից նրան դարանակալած վտանգներն այնպես արագ էին աճում, որ յակորինյաններն այդ օրերին ժամանակ չունեին խորհելու, իմաստավորելու տեղի ունեցող իրադարձությունները: Հարկավոր էր գործել, հարկավոր էր կայծակնային արագությունը հարվածով պատասխանել հարվածին, դեռ ավելին՝ գերազանցել հակառակորդների հարվածներին: Բայց 1793 թվականի ամռանը յակորինյանների ջանքերը գլխավորապես ուղղված էին մասսաների նախաձեռնություն կապանքադրածմանը, քաղաքական կարգի համակողմանի դեմոկրատացմանը, հեղափոխության մեջ ժողովրդի մասնակցություն ընդլայնմանը:

Յակորինյանների ջանքերով երկրում կարճ ժամկետում ընդլայնվեց, իսկ մասամբ նորից ստեղծվեց ստորին ընտրովի հեղափոխական մարմինների՝ հեղափոխական կոմիտեների ցանցը: «Ժողովրդական ընկերությունների», ամբողջ երկրով մեկ լայնորեն ճյուղավորված Յակորինյան ակումբի ու նրա մասնաճյուղերի և դեմոկրատական մյուս ակումբների, Փարիզում և մի քանի ուրիշ քաղաքներում սեկցիաների ժողովների հետ միասին հեղափոխությանը ստեղծված այդ նոր, դեմոկրատական կազմակերպությունները դարձան երկրի պետական շինարարության մեջ և քաղաքական կյանքում ժողովրդի անմիջական մասնակցության ձևեր:

Այդ բազմապիսի դեմոկրատական կազմակերպությունների միջոցով ի դերն էր գալիս ժողովրդական նախաձեռնությունը, իրականացվում մասսաների հեղափոխական ստեղծագործությունը, և նրանց ներգործությունը իշխանության բարձրագույն մարմինների վրա ներքևից:

Ժիրոնդայի դեմ պայքարում, որը մայիսի 31—հունիսի 2-ից հետո դարձավ ներքին հակահեղափոխության բոլոր ուժերի դրոշմ ու միավորող կենտրոնը, Լեոբ հենվում էր ժողովրդի ուժերի և նրա ավանգարդի՝ սանկյուլոտների վրա: Ռոբեսպիերի բանաձևը՝ «Ով քայլում է ոսկեկար շավարով, նա բոլոր սանկյուլոտների թշնամին է», բացահայտում էր այդ պայքարի սոցիալական, դասակարգային իմաստը: Պատերազմը Ժիրոնդայի դեմ ընչազուրկների պայքար էր ընդդեմ հարուստների: Դեռ մինչև մայիսի 31-ի ապստամբությունը, Ռոբեսպիերը Յակորինյան

ակումբում մայիսի 8-ին արգեն հիշատակված ծրագրային ճառում ասում էր. «Կա միայն մարդկանց երկու դասակարգ՝ մի կողմից ազատության և հավասարության բարեկամներ, ճյուղավածների պաշտպաններ, աղքատների բարեկամներ, և մյուս կողմից՝ անարդարացիորեն ձեռք բերված հարստության և բռնապետական արիստոկրատիայի գործիչներ»<sup>102</sup>: Յակորինյանները «աղքատների բարեկամն էին»: Ինքը Ռոբեսպիերն ընդգծում էր իր սկզբունքային նվիրվածությունն աղքատությանը: «Ես նույնպես կարող էի հողիս ծախել հանուն հարստության, — ասում էր նույնպես ճառում: — Բայց ես հարստության մեջ տեսնում եմ ոչ միայն հատուցում, այլև պատիժ հանցագործության համար, և ես ուզում եմ լինել աղքատ, որպեսզի չլինեմ պրծբախտ»<sup>103</sup>: Այս խոսքերի մեջ սեղմ ձևով ձևակերպված է յակորինիզմի և նրա առաջնորդ Ռոբեսպիերի հայացքների ամբողջ համակարգը հարստության և աղքատության վերաբերյալ՝ աշատեղից բխող բոլոր հետևություններով:

Պատերազմ մղելով «հարուստների ու բանակայների», Ժիրոնդայի և եվրոպական միապետությունների բանակների դեմ, յակորինյան հանրապետությունը կարող էր և պետք է այն վարեր որպես ժողովրդական պատերազմ, այսինքն՝ գործեր ժողովրդական, սանկյուլոտական միջոցներով:

Սեպտեմբերի սկզբին Փարիզի ժողովրդական մասսաների պահանջով Կոնվենտը դեկրետավորեց. «Տեսողը օրակարգի հարց դարձնել»: Հեղափոխական տրիբունայի գործունեությունն ընդլայնվեց: Հեղափոխական տեսողն այժմ ուղղված էր ոչ միայն հեղափոխության թշնամիների ու կասկածելիների, այլև սպեկուլյանտների, մեծարանակ գնորդների, մաքսիմոմի մասին օրենքը խախտողների դեմ:

Պարենային դաժան ճգնաժամի պայմաններում Կոնվենտը հանուն պլեբեյության և նրա պահանջով, ճիշտ է ոչ առանց պայքարի, ընդունեց դեկրետ՝ ընդհանուր մաքսիմոմ մտցնելու մասին: Այդ սոցիալական օրենսդրության տրամաբանությունն այնուհետև պետությունից պահանջում էր բաշխման ու առևտրի անողորմ կարգավորում և ավելի ու ավելի տիրական միջամտություն տնտեսական գործունեության կարևորագույն բնագավառներում: Այդ էին պահանջում արագ աճող բանակի մատակարարման, նրան զենքով, զինամթերքով ապահովելու խնդիրները:

Բայց իշխանութեան քաղաքական ֆունկցիաները ևս պետք է ուժեղացվեն ու ամրապնդվեն: Քաղաքացիական պատերազմի անողորմությունը, իրենց ուժերով Հանրապետությանը անհամեմատ գերազանցող անթիվ անհամար թշնամիների կատաղի գրոհներն ու թաքուն դիվերսիաները հաղթահարելու և ճնշելու անհրաժեշտությունը պահանջում էին պետական իշխանության միանգամայն այլ կազմակերպում: Հանրապետությունը փրկելու համար պետք էր ոչ միայն վանել շորս կողմից տեղացող հարվածները, այլև պատասխան խորտակիչ հարվածներով բոլոր թշնամիներին ճնշել մաս առ մաս, մեկը մյուսի հետևից: Դրա համար հարկավոր էր ոչ թե սահմանադրական վարչակարգ, այլ ուժեղ կենտրոնացված իշխանություն, որը ներքևից հենվում է ժողովրդական զանգվածների ամենալայն աջակցության վրա և ղեկավարվում անաուրկելի հեղինակությամբ ու անսահմանափակ լիազորություններով օժտված պետական մարմնի կողմից: Դրա համար անհրաժեշտ էր հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա:

Կյանքն ինքը ստեղծեց յակոբինյան հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի սիստեմ ներքևից իր լայն ճյուղավորումներով՝ հեղափոխական կոմիտեներով, ժողովրդական ընկերություններով և այլն ու ամենահեղինակավոր ու ավտորիտար (հավակնոտ) բարձրագույն մարմնով՝ Հասարակական փրկության կոմիտեով:

Այդ նոր հեղափոխական իշխանությունը, որ ստեղծվել էր քաղաքացիական պատերազմի ընթացքում ժողովրդական զանգվածների ստեղծագործությամբ, բնականաբար պահանջում էր իր տեսական իմաստավորումը և հիմնավորումը: Դրան էին նվիրված յակոբինյան կառավարության մի շարք գործիչների՝ Սեն-ժյուստի, Բարբերի, Բիլլո-Վարենի և մյուսների ջանքերը: Բայց հեղափոխական իշխանության պրոբլեմի ամբողջական և կուռ հիմնավորումը տվել է Մաքսիմիլիան Ռոբեսպիերը:

«Հեղափոխական կառավարման տեսությունը,— ասում էր նա 1793 թվականի դեկտեմբերի 25-ի ճառում,— նույնպես նոր է, ինչպես և կառավարման այդ կարգն ստեղծող հեղափոխությունը: Զուր կլինեք այդ տեսությունը փնտրել այն քաղաքական գրողների գրքերում, որոնք հեղափոխություն չէին կանխատեսում»<sup>154</sup>:

Արդեն այս խոսքերում, հարցի բուն մոտեցման մեջ զգացվում է այն հեղափոխականը, որը չի սարսափում նորից և պատրաստ է ժողովրդի համար դասեր քաղել ոչ թե գրքային իմաստություններից, ոչ թե «հայրերի փորձից», այլ նրանց հեղափոխական պայքարի կենդանի պրակտիկայից:

Իսկ ո՞րն է հեղափոխական կառավարման էությունը: Ի՞նչ հարաբերակցության մեջ է գտնվում այն սահմանադրական-դեմոկրատական կարգերի հետ, հանուն որոնց երեկ մարտնչում էին յակոբինյանները:

Ռոբեսպիերը հասկանում է, որ այդ հարցը ծագում է հեղափոխության յուրաքանչյուր մասնակցի առջև, և նա դրան միանգամայն հստակ պատասխան է տալիս. «Հեղափոխությունը պատերազմ է ազատության և նրա թշնամիների միջև. սահմանադրությունը վարչակարգ է արդեն ձեռք բերված հաղթանակի և ազատության աշխարհի միջև»: Միևնույն միտքը նա արտահայտում է ավելի կարճ ու կտրուկ. «Սահմանադրական կառավարման նպատակը հանրապետության պահպանումն է, հեղափոխական կառավարման նպատակը՝ հանրապետության ստեղծումը»<sup>155</sup>:

Այսպիսով, Ռոբեսպիերի համոզմամբ հեղափոխական կառավարման վարչակարգը անցման ժամանակաշրջան է:

1794 թվականի փետրվարի 5-ին Կոնվենտում կարգացած «Քաղաքական բարոյախոսության սկզբունքների մասին» ծրագրային զեկուցման մեջ նա մեկ անգամ ևս ճշգրտում է, թե որն է «հեղափոխական կառավարման»՝ որպես անցման ժամանակաշրջանի էությունը: «Մեր միջավայրում դեմոկրատիա ստեղծելու և ամրապնդելու, սահմանադրական օրենքների խաղաղ տիրապետությանը հասնելու համար պետք է մինչև վերջ հասցնել բունակալության դեմ մղվող ազատության պատերազմը և պատվով անցնել հեղափոխության փոթորիկի միջով»<sup>156</sup>:

«Ազատության պատերազմ բունապետության դեմ»՝ ասա թե որն է «հեղափոխական կառավարման» էությունը: Բայց այդ արդարացի պատերազմը մինչև հաղթական ավարտ հասցնելու համար հեղափոխական կառավարման վարչակարգը պետք է զործի այլ մեթոդներով, քան սահմանադրականը. նա պետք է լինի ակտիվ, գործուն, շարժունակ, նա չի կարող նեղացվել ձևական-իրավական բնույթի սահմանափակումներով: «Հեղա-

փոխական կառավարման վարչակարգը,— ասում էր Ռոբերտ-պիերը,— գործում է ահեղ և մշտապես փոփոխվող պայմաններում, ուստի նա հարկադրված է ինքը նրանց դեմ կիրառել պայքարի նոր և արագ ներգործող միջոցներ»<sup>157</sup>:

Ռոբեսպիերը, որ տիրապետում էր հեղափոխական մտածողության հիանալի ուժի, կարողացավ հասկանալ և, ընդհանրացնելով, ցույց տալ ժողովրդին այդ նոր անցման վարչակարգի վեհությունը որպես հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի ձևի՝ «Հեղափոխական կառավարությունը իր գործողություններում հենվում է, — ասում էր նա, — հասարակական փրկության սրբազան օրենքի վրա և բոլոր նիմֆերից ամենաանվիճելի հիմքի՝ անհրաժեշտության վրա» (ընդգծումն իմն է:— Ա. Մ.)<sup>158</sup>:

Սորբոնի իրավաբանական ֆակուլտետի նախկին սանը, որ պատրաստ էր ղոհել օրենսդրության ձևական-իրավաբանական հիմքը, մեծ հեղափոխական էր, ուստի և շատանվելով, հեղափոխության շահերը վեր էր դասում ձևական իրավունքից:

Նա անմիջականորեն սովորեց հեղափոխությունից և ըմբռնման զարմանալի խորությամբ ու ընկալման արագությամբ տեսականորեն ընդհանրացրեց հեղափոխական պայքարի օրենքները: Նա հասկացավ, որ հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի բուն էություն մեջ պետք է լինի երկու կարեւորագույն խնդիրների դիալեկտիկական միասնություն՝ հոգատարություն ժողովրդի բարօրության մասին և անհաշտություն, անողորմություն հեղափոխության թշնամիների դեմ մղվող պայքարում: 1794 թվականի փետրվարի 5-ին Կոնվենտում արտասանած նույն ճառի մեջ Ռոբեսպիերն ասում էր. «Ստեղծված իրադրությունում ձեր քաղաքականության առաջին կանոնը պետք է լինի ժողովրդի կառավարումը՝ բանականության օգնությամբ և ժողովրդի թշնամիների կառավարումը՝ տեղորոշ օգնությամբ»<sup>159</sup>:

Ռեակցիոն պատմագրությունը շատ տասնամյակներ է զբրայրահել Ռոբեսպիերին, նրան պատկերելով որպես արյունարբու բռնակալի, գազազած էակի, որը բավականություն է ստանում դաժան տեղորոշ, արյունալի բռնությունների քաղաքականության գլխավոր ոգեշնչողի: Զկա ավելի ստոր զրպարտություն Ռոբեսպիերի հասցեին, քան այս: Ռոբեսպիերն անկեղծ ու համոզված մարդասեր էր, որն արդեն հասուն տարիքում հանդես

եկավ մահապատժի կիրառման դեմ ընդհանրապես: Նա հեղափոխական տեղորոշ ուղու վրա կանգնեց միայն այն ժամանակ, երբ այն անհրաժեշտություն դարձավ, Հանրապետության ինքնապաշտպանության միջոց՝ հեղափոխության ներքին և արտաքին թշնամիների հակահեղափոխական տեղորոշից:

Ինչպես արդեն նշվել է, հեղափոխական տեղորոշ պահանջը առաջ էր քաշվել ներքեից, ժողովրդական մասսաների կողմից, որպես ինքնապաշտպանության անհրաժեշտ միջոց: 1793 թվականի սեպտեմբերի 4—5-ի ժողովրդական շարժումը Կոնվենտին հարկադրեց «օրակարգում դնել տեղորոշ հարցը»:

Ռոբեսպիերը մեծ հեղափոխական չէր լինի, եթե չկարողանար իսկույնիցնեթ գնահատել ստեղծված պայմաններում այդ պահանջի փրկարար նշանակությունը Հանրապետության համար: Հեղափոխական տեղորոշ նրա համար ոչ հատուկ սկզբունք դարձավ, ոչ էլ առավել ևս ինքնանպատակ մի բան. նա այն դիտում էր որպես ժամանակավոր, ծայրահեղ միջոց, որին պետք է դիմի հեղափոխական կառավարությունը հանուն հեղափոխության փրկության, հետևաբար և, հանուն մարդկության փրկության:

«Տեղորոշ ոչ այլ ինչ է, քան տրազ, խիստ և անհողողոզ արդարություն. դրանով իսկ այն առաքինության արտահայտություն է», — ասում էր Ռոբեսպիերը 1794 թվականի փետրվարի 5-ի նույն ճառում: Եվ նա ավելացնում էր, որ տեղորոշ պետք է դիտել ոչ որպես հատուկ սկզբունք, այլ որպես «հայրենիքի ամենածայրահեղ կարիքի գեպտում կիրառելի հետևություն դեմոկրատիայի ընդհանուր սկզբունքից»<sup>160</sup>:

Հենց սա էլ Ռուսոյի մինչև ծայրահեղ տրամաբանական հետևությունների հասցված ժողովրդական անկախության մասին այն գաղափարների կիրառումն է, որ էնգլիշը բնօրոշել է սեզմ, փայլուն ձևակերպումով. «Ռուսոյի հասարակական դաշինքը իր իրազորմամբ դտավ տեղորոշ ժամանակ»<sup>161</sup>:

Բայց արդյո՞ք Մաքսիմիլիան Ռոբեսպիերը, Ժան-Պոլ Մարատը, Սեն-ժյուստը, Կուտոնը և չակոբինյան մյուս գործիչները, որ այդքան կրկնում էին Ռուսոյի անունը, միայն ժնեցի մեծ քաղաքացու չերմեռանդ աշակերտներն են եղել:

Առաջին հայացքից այսպիսի հարցադրումն իսկ կարող է անօրինական թվալ: Մի՞թե Ռուսոն երբևէ տեղորոշ է կոչել: Մի՞թե «Միայնակ երազողի զրոսանքը» երկի հեղինակը երբևէ

կանխատեսում էր անխնա Տեղափոխական դիկտատուրայի այն դաժան ժամանակը, որ Ֆրանսիայում 1793—1794 թվականներին հաստատեցին նրա հաջորդները:

Ոչ, Ռուսոյի մտ, իհարկե, չի կարելի գտնել Տեղափոխական տեռորի վարչակարգ հաստատելու կոչը: Նա, ինչպես հայտնի է, Տեղափոխության մասին էլ բարձրաձայն հրեր չի խոսել: Եվ այնուամենայնիվ, էնգելսի հենց նոր բերված դատողությունը խորապես ճիշտ էր: Տեղափոխական-դեմոկրատական չակոբինյան դիկտատուրայի վարչակարգը Ֆրանսիայում պատմության մեջ ժողովրդախիսանության, հավասարության, սրբաբացի հասարակարգի մասին Ռուսոյի գաղափարները գործնականում կիրառելու առաջին փորձն էր:

Բայց որպեսզի Ռուսոյի գաղափարները, որոնք բազում տարիների ընթացքում մնացել էին որպես «գրքային իմաստություն», վերամտածնադարվելին Հասարակական փրկության կոմիտեի անոդոսը և աճեղ քաղաքականություն, գրա համար հարկավոր էր, որ նրա աշակերտները լինեին ոչ միայն նոր ուսմունքի օրթոդոքսալ հետևորդներ, այլև տիրապետեին և այլ հատկություններին:

Ռոբեսպիերը մինչև իր կյանքի վերջին օրերը մնում էր Ռուսոյի տաղանդի անկեղծ երկրպագուն և նրան համարում էր հեղափոխության իսկական դատախարակ: Նա մեծ ժան-ժակին ընդունում էր ամբողջովին՝ ոչ միայն «Հասարակական դաշինքը» և քաղաքական մյուս երկերը, այլև «Նոր էլոգր», «Էմիլը» և «Նոստոմանանքը»: Նա դարձավ Ռուսոյի հավասարապաշտական կոնցեպցիաների համոզված հետևորդը: Նրա գրական ոճը (ընթերցողն էլ հեշտությամբ կհամոզվի դրանում) նույնպես կրում է Ռուսոյի ազդեցությունը պարզորոշ կերպով<sup>102</sup>: Խորափանց Պուլկինը, որ ապշեցուցիչ պատմական զգացողություն ուներ, կարողացավ նկատել ավելին: Նա Ռոբեսպիերին անվանեց «դուրազղաց վագր»<sup>103</sup>: Եվ Ռոբեսպիերի կերպարում հակասական ինչ-որ բան նշմարած այս տարիմաստ բնորոշման մեջ զիպուկ կերպով չուրացվել է «վագրի» սենտիմենտալիզմը. սա այն է, ինչ մնացել է Ռոբեսպիերի մեջ Ռուսոյից:

Եվ այսպես, Ռոբեսպիերին ամբողջապես ընդունում էր Ռուսոյին, ընդհուպ մինչև նրա սենտիմենտալիզմը: Ռոբեսպիերի պատմական մեծությունը հենց այն էր, որ նա շննաց իբրև «Հասարակական դաշինքի» հեղինակի երկչու ընդօրինակող: Ռու-

բեսպիերը Ռուսոյի վերացական քաղաքական հիպոթեզները վերածեց Տեղափոխական գործողության անոդոս լեզվի: Այնտեղ, ուր Ռուսոյի միտքն անվճռականությամբ կանգ էր առնում, Ռոբեսպիերն անաչ շարժվում էր առաջ: Նա իր ուսուցչի գաղափարների իսկությունը ստուգում էր գործնականում և այդ դաժան պրակտիկան, իհարկե, նրան անսահմանորեն ավելին էր տալիս, բան ժան-ժակի պրքային խորհուրդները: Ծրամուր նա ավելի ու ավելի էր առաջ գնում նրա համեմատությամբ, ում շարունակում էր տնվանել իր ուսուցիչը:

Ռոբեսպիերը, ինչպես ասենք, և՛ Մարատը, և՛ Սեն-ժյուստը, և՛ Կուտոնը, ինչպես երկաթե կոփածոքի սկր այս մարդկանց՝ չակոբինյանների ամբողջ համաստեղությունը, ուստիզմն ազատեցին նրան հատուկ հաշվեդրականությունից ու երազկոտությունից: Գրանք գործի մարգիկ էին, Տեղափոխական պրակտիկայի մեծ վարպետներ: Չերպզել, շանրել, շպասել, ինքզ պետք է մխրճվես թրատման ամենախիտ սեղը, աչ ու ձախ սրախող-խող անես, քո հետևից տանես մյուսներին, համարձակ ընդառաջ գնաս վտանգին, սխեկի զիմես, խիզախես ու հաղթես:

Յակոբինյանները, և նրանց մեջ զարձայ պետք է առաջինը նշվի Ռոբեսպիերի մտունը, ուստիզմն ազատեցին նաև նրա մշուշառ, անպարզ, հոստեսական երանգավորումից: Նրանք իրենց առչև տեսնում էին ոչ թե մայրամտար, ոչ թե վիրշուլայսը, այլ այդպրացը, նոր օրվա զարթոնքը, ծագող արևի վառ ճառագայթներով յուսավորված առախոտը:

Ռոբեսպիերի մեջ չկար կյանքի նկատմամբ այն բիրտ ազահությունը, կրքերի այն անսանձ հորդումը, որոնք այնպես հատուկ էին Կանտոնի զորեղ խառնվածքին: Նա ավելի խիստ և ավելի կենսաբանացած էր իր չակոբինյան ընկերներից:

Գրականության մեջ գոյություն ունի մի վարկած, համաձայն որի այն ժամանակ, երբ պատանի Ռոբեսպիերը 1778 թվականին այցելեց Էրմենոնվիլ, ուր կյանքի վերջին օրերին մեկուսացել էր «միայնակ երազողը», Սորբոնի այս երիտասարդ ուսանողի հետ զրուցելիս Ռուսոյի վրա ամենամեծ ազավորությունը գործեցին ոչ թե զրուցակցի բացառիկ բանիմացությունը, ոչ թե ժան-ժակի երկերի ապշեցուցիչ իմացությունը (երբեմն անզիր), այլ թվում և այն երկերի, որոնք Ռուսոն ինքն էր վաղուց մուսացել, այլ ինչ-որ մի այլ բան՝ նրա փոքր-ինչ կկոցած աշրերի հաստատ, անթափանց, կարծես պողպատե հայացքը:

Դժվար է ասել, թե որքանով է ճիշտ տարածում ստացած այդ մեկնակերպը. համեմայն դեպս նրանում ոչ մի անճշմարտացի բան չկա: Մաքսիմիլիանի՝ անմաքուր խղճի տեր մարդկանց սարսափ ներշնչող անողոք, պողպատե աչքերի կկոցանքի մասին հաճախ է գրվել:

Պողպատե, անվրդով հայացքով Մաքսիմիլիան Ռոբեսպիերը նայում էր մոտեցող թշնամիներին, շորս կողմից իրեն դարանակալած անհամար վտանգներին՝ թեևանցիկ խորամանկ քայլերին, դավերին, մերթ յայտեղ, մերթ յայտեղ գրված թակարդներին: Նա ամեն ինչ տեսնում էր, ամեն ինչ նկատում, ոչինչ չէր սողոսկում անշարժ, քարացած թվացող, բայց սեեռուն հայացքից, և նրա անթափանցելի դեմքի անխոռովությունը թաքցնում էր նրան հուզող մտքերն ու զգացմունքները:

Բայց Ռոբեսպիերի համար էլ կյանքն սկսվում էր առավոտից: Դաստիարակված լինելով XVIII դարի գրականության ոգով, նա նույնպես ուսմանտիկ էր, և նրա ուսմանտիզմը սնվում էր հին աշխարհի աղոտ վերհուշերով: Բայց նրան, ինչպես և նրա հասակակից յակոբինյաններին, խորթ էր հայեցողական երազկոտությունը: Աշխարհը նրա համար բացվում էր ոչ իր գեղեցկությունը՝ այն նվաճվում էր մարտերում: Նրանք խիստ դաժան պայքարի դարոց էին անցել, որպեսզի թեկուզև շնչին չափով հանձնվեին թախծոտ տրամադրությունների:

«Գեղեցիկ է այն, ինչը չկա», — ասում էր Ռուսոն: Ռոբեսպիերը մերժեց այդ հոռետեսական բնորոշումը: Դեպի գեղեցիկ տանող ուղին անցնում է սխրագործության, պայքարի, գոտեմարտի միջով՝ այսպես կարելի էր բնորոշել Ռոբեսպիերի աշխարհայացքը:

«Թող Ֆրանսիան, — ասում էր Ռոբեսպիերը 1794 թվականին, — որ երբեմնի փառաբանվում էր ստրկական երկրների մեջ, այժմ նսեմացնելով ինչ-որ ժամանակ գոյություն ունեցած բոլոր ազատ ժողովուրդների փառքը, օրինակ դառնա բոլոր ազգերի համար, սարսափ՝ ճնշողների համար, դառնա Տիեզերքի զարդը, և թող, մեր աշխատանքը վավերացնելով սեփական արյամբ, մենք կարողանանք տեսնել, համեմայն դեպս, ընդհանուր բարձրագույն երջանկության արշալույսի լուսապսակը»<sup>164</sup>:

Այս «ընդհանուր բարձրագույն երջանկության արշալույսի լուսապսակը», մարդկության «ոսկեդարը», Ռոբեսպիերի համոզմամբ, հղել են բոլորովին մոտիկ, գտնվել են ինչ-որ տեղ

կողքին: Հարկավոր էր միայն լարել ժողովրդի վերջին ջանքերը՝ միավորվել, համախմբվել և, հարվածելով ամբողջ զորությունը, խորտակել թշնամիներին: Դա միանգամայն իրականանալի էր. կարելի էր մատների վրա հաշվել այն, ինչ մնում էր ավարտել՝ վոնդել ինտերվենտներին, ճնշել ներքին հակահեղափոխությունը, գլխոտին ուղարկել վերջին դավադիրներին ու դավաճաններին: Ըստ էության ահա և բոլորը: Եվ այնժամ հաղթանակած ժողովուրդը ձեռք կբերի ազատության, հավասարության, արդարության, երջանկության բազմալի աշխարհը:

Ռոբեսպիերի պատկերացմամբ այսպիսին էր դեպի գեղեցիկը. դեպի երջանկությունը տանող ուղին, և այդ հեռանկարը, որ նա բաց էր անում իր հայրենակիցների համար, լի էր մեծագույն սոցիալական լավատեսությամբ:

Նեղափոխությունն անպարտելի է: Ոչ ոք և ոչինչ չեն կարող դիմազրավել նրան: Նրա ուժերն անսպառ են, և նա ի վիճակի է խորտակել ուղածը թշնամուն:

Այսպիսին էր Ռոբեսպիերի անհողողող համոզմունքը, որ նա քաղել էր հեղափոխության փորձից, և այստեղից էին ծնունդ առնում նրա անվեհերությունը, վստահությունն իր գործի արդարության մեջ, աննկուն վճռականությունը գործողություններում:

## VIII

Այն, ինչ հրաշք էր թվում ժամանակակիցներին և առանձնապես հեղափոխության թշնամիներին, այն, ինչ հետագայում ապշեցրել էր բոլորին, ովքեր փորձել են հասու լինել Առաջին հանրապետության առեղծվածային պատմությանը՝ յակոբինյան Ֆրանսիայի անհավատալի, շրմեցուցիչ, դրեթե անբացատրելի հաղթանակը նրա անթիվ անհամար արտաքին և ներքին թշնամիների դեմ՝ այս ամենը կատարվեց շափազանց կարճ ժամկետում, տասներկու-տասներեք ամիսների ընթացքում:

Ցակոբինյան հանրապետությունը, որը 1793 թվականի ամռանը թվում էր թե ուր որ է կրնկնի նրան շորս կողմից սեղմող թշնամիների հարվածներից, սեղմված շրջափակման, ինտերվենցիայի, հակահեղափոխական խոռովությունների օղակով, շնչահեղձ լինելով քաղցից, զենքերի, վառոդի, անհրաժեշտ ամեն ինչի կարիքից, այդ հանրապետությունը, որն արդեն թաղվում էր

Քր թշնամիների կողմից, ոչ միայն վանեց կատաղի գրոհները և ճնշեց խռովությունները, այլև անցավ հարձակման և, ի սարսափ պահպանողական-ռեակցիոն աշխարհի, ջախջախեց իր հակառակորդներին և դարձավ Եվրոպայի ուժեղագույն տերությունը:

Գեո ավելին, պատմական ամենակարճ ժամկետում՝ միայն մեկ տարում, յակոբինյան դիկտատուրան լուծեց հեղափոխության բոլոր հիմնական խնդիրները: Նա ֆեոդալիզմը ջախջախեց այնքան լիակատար, որքան դա հնարավոր էր բուրժուազեմոկրատական հեղափոխության շրջանակներում: Նա ստեղծեց ժամանակակից գինեով դինաված տասնչորս բանակ, որոնք ասես հաշտնվեցին գետնի տակից. դրանք գլխավորում էին ժողովրդի ստորին խավերից ելած և պատերազմ վարելու նոր, հեղափոխական տակտիկան համարձակորեն կիրառող տաղանդավոր զորավարներ: 1794 թվականի հունիսի 26-ին Յուլյուսի մոտ մղված ճակատամարտում Հանրապետության բանակը ջախջախեց ինտերվենտների զորքերին, վճռեց նրանց Ֆրանսիայի սահմաններից և վերացրեց ֆեոդալական միապետության վերականգնման վտանգը: Հանրապետության տարածքային ամբողջականությունը ամենուրեք վերականգնվեց, և ներքին՝ ժիրոնիստական, վանդեյական, ռոյալիստական հակահեղափոխությունը ջախջախվեց ու թշվեց խոր ընդհատակ:

Ռոբեսպիերի և յակոբինյան մյուս առաջնորդների ստեննահամարձակ խոստումները կատարվեցին: Թվում է, Հանրապետությունը մոտենում էր վերջին սահմանագծին. նրա հետևից վրա էր հասնում հեղափոխության առաջնորդների ազդարարած ազատության, հավասարության, եղբայրության թագավորությունը:

Բայց, զարմանալի բան. որքան իր զարգացման մեջ ավելի վեր էր բարձրանում հեղափոխությունը, որքան նրա մահացու հարվածներից բազում թշնամիներ էին ընկնում, այնքան ներքուստ ավելի էր թուլանում արտաքուստ այդքան հզոր թվացող յակոբինյան հանրապետությունը:

Յուլյուսի մոտ՝ ամբողջ Եվրոպան ցնցած փայլուն հաղթանակից մեկ շաբաթ անց, Մաքսիմիլիան Ռոբեսպիերը 1794 թվականի հուլիսի 1-ին Յակոբինյան ակումբում արտասանած ճառում ասում էր. «Պետության ծաղկման մասին դատում են ոչ այնքան նրա արտաքին հաջողություններով, որքան նրա

երջանիկ ներքին դրուժյամբ: Եթե բացականչություններն անպատկառ են, եթե անմեղությունը կրկնում է, դա նշանակում է, որ Հանրապետությունն ամուր հիմքերի վրա չի հաստատված»<sup>165</sup>:

Իսկ որտեղից հեղափոխական կառավարության ղեկավարի այդ դառնադեպ տոնը, որը պետք է միայն ուրախանար Հանրապետության հիանալի հաղթանակների համար:

Վշտի այդ ձայնը, դատապարտվածության, տրտմության, հիասթափության այդ նրբերանգները, որոնք ավելի ու ավելի պարզորոշ են հնչում 1794 թվականի ամռանը Ռոբեսպիերի ելույթներում, հասկանալի են ու բացատրելի. Ռոբեսպիերն արդեն զգում էր, որ ժողովրդի հսկայական զոհերի գնով նվաճված հաղթանակը սողոսկում է ձեռքից, հեռանում է յակոբինյաններից:

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ: Ռոբեսպիերի պատկերացման, ինչպես և նրա գինակիցների, ասենք հեղափոխության բոլոր ակտիվ մասնակիցների գիտակցության մեջ տիտանական մեծ ճակատամարտը, որ նրանք մղում էին հինգ տարվա ընթացքում, ճակատամարտ էր հանուն ազատության ու արդարության, հանուն հավասարության ու եղբայրության, հանուն «մարդու բնական իրավունքների», հանուն երկրի վրա ընդհանուր երջանկության, ինչպես ուղղակի ասվում էր 1793 թվականի Իրավունքների ղեկավարացիայում<sup>166</sup>:

Ռոբեսպիերն ամենևին էլ նման չէր աղքատ ասպետ կամանչեցուն, որն ապրում էր մտացածին պատկերների ու անուրջների աշխարհում: Ընդհակառակը, ավելի շուտ կարելի է ապշել զարմանալի խորաթափանցությամբ, պայծառատեսությամբ ինքնատիպ շնորհքով օժտված այդ երեսունհինգամյա մարդու վրա: Նրա արժվային հայացքն ընդգրկում էր ճակատամարտի ամբողջ հսկայական դաշտը: Նա հակառակորդի թշնամական գործողությունները կոհաճում էր հենց սկզբում, և դրանից անմիջապես հետո Հասարակական փրկության կոմիտեի պատժող ձեռքը այնպիսի արագությամբ էր հասնում թշնամուն, որ նա չէր գուշակում:

Եվ եթե Ռոբեսպիերն իր ողջ խորաթափանցությամբ հանդերձ շարունակում էր հավատալ առաքինության հաղթանակի երջանիկ ժամանակի գալստյանը, ապա դա բացատրվում էր ո՞չ միամտությամբ կամ տհաս երազկոտությամբ: Նա իր ժամանակի

առաջավոր հասարակական մտքի մակարդակի վրա գտնվող քաղաքական գործիչ էր: Այդպես էր մտածում ոչ միայն նա, այդպես էին մտածում XVIII դարի վերջի բոլոր լավագույն մտածողները: Գլխավորելով հեղափոխությունը, որն իրենից ներկայացնում էր ազատագրական մեծ պատերազմ հանուն ողջ մարդկության վերածննդի, նրանք չգիտեին, չէին հասկանում և չէին կարող հասկանալ այն, որ իրականում նրանք ղեկավարում են մի հեղափոխություն, որն իր օբյեկտիվ խնդիրներով բուրժուական է և չի կարող այլ կերպ լինել:

Մենք մինչև այժմ խոսում էինք յակոբինյան դիկտատուրայի և նրա առաջնորդ Ռոբեսպիերի ուժեղ կողմերի մասին: Բայց այն հակասություններն ու սխալները, որոնք դրսևորեց Ռոբեսպիերը հեղափոխության առաջին տարիներին, իրենց հետևանքներով ավելի շատ և ավելի կործանարար դարձան յակոբինյան դիկտատուրայի օրոք: Այդ սխալները, հակասությունները, վրիպումները Ռոբեսպիերի անձնական թերությունները չէին. դրանք բխում էին բուն հեղափոխության դասակարգային բնույթից: Ռոբեսպիերը XVIII դարի մեծ հեղափոխական էր, բայց նա, ինքն էլ այդ բանը չգիտակցելով, բուրժուական մեծ հեղափոխության առաջնորդ էր, և դրանով էին պայմանավորված նրա վրիպումներն ու սխալները, դրանում էր նրա ողբերգությունը:

Մի որոշ ժամանակ անց, այսինքն այն ժամանակվանից, երբ հեղափոխությունը կործանեց իր բոլոր գլխավոր հակաակորդներին, երբ նա մի շարք փայլուն հաղթանակներով աշխարհին ապացուցեց իր ուժերի անխորտակելիությունը, Ռոբեսպիերը պարզորոշ զգաց, որ իր ուժեղ ձեռքերին այնպես հլուծված են-թարկվող դեկը դադարում է հնազանդվել իրեն: Գնալով ավելի էր դժվարանում այն կառավարելը:

Իսկ ինչո՞ւմն էր բանը: Ի՞նչ էր պատահել:

Յակոբինյան դիկտատուրան ապահովեց բուրժուազեմոկրատական հեղափոխության խնդիրների լուծումը, գործելով պիեթեյական մեթոդներով: Բայց հենց որ հեղափոխության գլխավոր խնդիրները լուծվեցին, երբ արդեն թշնամիները պարտված էին, ռեստավրացիայի անմիջական վտանգը վերացված՝ յակոբինյան իշխանության բուն էություն մեջ հիմնարկված բոլոր ներքին հակասություններն անհասպող ջրի երես ելան:

Արդեն ասվել է, որ յակոբինությունն իրենից ներկայացնում էր ոչ թե միատարր, դասակարգային և քաղաքական իմաստով

ոչ թե համաժին ուժ, այլ տարասեռ դասակարգային ուժերի չլուկ, որոնք, քանի դեռ մահացու պատերազմ էր մղվում Ֆեոդալական հակահեղափոխության դեմ, գործում էին համախմբված և համերաշխ: Միավորված ներքին և արտաքին հակահեղափոխության դեմ կառավարի պայքարի տարում յակոբինյան հեղափոխական կառավարությունը, գերազանցապես հենվելով ժողովրդի ուժերի վրա, սրի ազդեցությունն այդ ժամանակ շեշտակիորեն անել էր, սկսեք է դաժան սահմանափակ քաղաքականություն վարել բուրժուազիայի նկատմամբ:

Այդ սահմանափակ և շատ բանեղում պատժիչ քաղաքականությունը թեկզբոված էր բուն կյանքով: Մաքսիմումի մասին օրենքները հարկ չէր լինի քննարկել, ընդունել և կենսագործել, և՛ Նանրապետության պարենային դրուժունն այդքան վատ չլինելու: Մաքսիմումի մասին օրենքներն ամենից առաջ անհրաժեշտության ծնունդ էին: Նույնը պետք է ասել հեղափոխական տեղորի մասին. այն նույնպես թելադրված էր բուն կյանքով, ինքնապաշտպանության անհրաժեշտ միջոց էր: Կարելի էր նաև ուրիշ օրինակներ բերել: Սակայն սխալ կլիներ կարծել, որ հեղափոխական կառավարությունը գործում էր միայն կյանքի հրամայական սյահանչին համապատասխան, որ այն պրագմատիկների կառավարություն էր՝ հարմարեցված օրվա թեկզբած պահանջներին:

Նա ուներ նաև դրական իդեալներ և գրանց համապատասխան դրական ծրագիր. այդ կառավարությունն իր առջև դրած նպատակին էր դնում դիտակցությամբ, հաղթահարելով բնթայիկ օրվա բոլոր դժվարություններն ու հոգսերը: Ռոբեսպիերը, Սեն-ժյուստը, Կոտտնը, նրանց ընկերներն ու համախոհները՝ նրանք բոլորը Ռուսոյի հետևորդներն էին, հետևարար, նրա հավասարապաշտական զաղափարների կողմնակիցները:

Ռոբեսպիերի քաղաքականության, հեղափոխական կառավարության քաղաքականության մեջ դժվար չէ նկատել այն գիծը, որ նրանք անց էին կացնում լիովին պիտակցաբար: Դա յակոբինյան կառավարության հավասարապաշտական քաղաքականությունն է:

Ռոբեսպիերը մերժում էր լիակատար դուլքային հավասարության հաստատումը: Նա այն համարում էր անիրազործելի, իսկ նրա պրոպագանդումը՝ վնասակար: Այդ նույն շարժումի-ներով ևս դատապարտում էր այսպես կոչված ազդարային

օրենքները, որի տակ հասկանում էին ամբողջ հողի վերաբա-  
ժանումը տարբեր մասերի, դատապարտում էր և ժակ Ռուի  
առաջ քաշած թեզը, որն ընդհանուր ուշադրություն էր գրավել.  
«Անհրաժեշտ է, որպեսզի հավասարության մանգաղն անցնի հա-  
րուստների գլուխների վրայով»:

Բայց Ռուսոյից անմիջապես հետո, չհավատալով լիակատար  
գույքային հավասարության հաստատման հնարավորությանը,  
Ռոբեսպիերն անկեղծորեն համոզված էր, որ գույքային անհա-  
վասարության ծայրահեղությունների վերացումն անհրաժեշտու-  
թյուն ու բարեարություն է: Նա ձգտում էր ունեցվածքի հարա-  
բերական հավասարեցման:

Երբ պետական կառավարման լծակները հայտնվեցին Ռո-  
բեսպիերի և նրա համախոհների ձեռքերում, նրանք փորձում  
էին անել ամեն հնարավոր բան՝ իրենց հավասարապաշտական  
ծրագիրն իրականացնելու համար:

Հարուստներից հարկադիր փոխառություններ վերցնելու քա-  
ղաքականությունը, հետզհետե աճող եկամտահարկը, համալ-  
նական հողերի գլխահարկ բաժանքը, վաճառքի ենթակա հո-  
ղակտորների մասնատումը, ժառանգելու իրավունքի սահմա-  
նափակումը, տեղորի կիրառումը սպեկուլյանտների և մաքսի-  
մումը խախտողների դեմ, վերջապես, նշանավոր վանտոզյան  
դեկրետները՝ այս ամենը ապացուցում էին այն, որ Ռոբեսպիե-  
րի գլխավորած հեղափոխական կառավարությունը ձգտում էր  
իրագործել իր հավասարապաշտական ծրագիրը, որը կոչված էր  
հաստատելու «հավերժ արդարության թագավորություն»:

Սեն-ժյուստի՝ վանտոզյան դեկրետների մասին նրա առա-  
ջին ճառում իր վրա ուշադրություն գրաված նախադասությունը՝  
«Նրանք, ովքեր հեղափոխությունը կատարում են կիսով շափ,  
դրանով իսկ իրենց համար գերեզման են փորում»<sup>67</sup>, բացա-  
հայտում էր վանտոզյան օրենսդրության ամբողջ սկզբունքային  
նշանակությունը: Սեն-ժյուստը որպես քաղաքական գործիչ  
ձևավորվեց Ռոբեսպիերի գաղափարական ազդեցության տակ.  
Նա Ռոբեսպիերի ամենահավատարիմ հետևորդն էր. հանրա-  
պետության տպագալի մասին նրա հայացքներն, անկասկած,  
արտահայտում էին և Անկաշառի հայացքները:

Բայց հավասարապաշտության քաղաքականությունը, որ  
նուանդուն կերպով վարում էր յակոբինյան հեղափոխական կա-  
ռավարությունը, Հանրապետությունը տանում էր ոչ ամենևին

զեպի «երջանիկ առաքինություն և համեստ լիութուն», ինչի  
մասին երազում էին նրա ողբերգիչները<sup>68</sup>: «...Հավասարության  
նույն այդ գաղափարը բուրժուազեմոկրատական խնդիրների  
ամենալրիվ, հետևողական ու վճռական արտահայտությունն  
է... — գրում էր Վ. Ի. Լենինը: Հավասարությունը ոչ միայն գա-  
ղափարապես է արտահայտում ազատ կապիտալիզմի և ապ-  
րանքային արտադրության պայմանների առավել լրիվ իրագոր-  
ծումը: Նյութապես էլ, ճորտատիրությունից ծագող հողագոր-  
ծության տնտեսական հարաբերությունների բնագավառում,  
մանր արտադրողների հավասարությունը կապիտալիստական  
գյուղատնտեսության ամենալայն, լրիվ, ազատ ու արագ զար-  
գացման պայմանն է»<sup>69</sup>:

Յակոբինյաններին և նրանց առաջնորդ Ռոբեսպիերին չհա-  
ջողվեց լիովին իրականացնել իրենց հավասարապաշտական  
ծրագիրը՝ ստեղծել «մանր արտադրողների հավասարության»  
հանրապետություն: Բայց նույնիսկ այն, ինչ նրանք հասցրեցին  
անել (իսկ նրանք շատ բան էին արել՝ խորտակվեց ու ոչլին-  
չացվեց Ֆեոդալիզմը), հանգեցրեց այնպիսի արդյունքների,  
որոնք հաստատում էին Վ. Ի. Լենինի բերված արտահայտության  
խորին ճշմարտությունը:

Յակոբինյանների քաղաքականությունը օբյեկտիվորեն, ան-  
կախ նրանց կամքից, մաքրեց Ֆրանսիայի հողը, ազատեց այն  
բոլոր խոշրնդատներից, որոնք անհրաժեշտ էին բուրժուազիայի  
և կապիտալիստական հարաբերությունների զարգացման հա-  
մար: Եվ ինչպես էլ յակոբինյան դիկտատուրան դաժանորեն  
չպատժեր առանձին խոշոր բուրժուաների, սպեկուլյանտների,  
հարստություն դիզողների, ինչքան էլ տիրականորեն շխառվե-  
րաշխման ոլորտի հարցերում (միաժամանակ պահպանելով ար-  
տադրության մասնավոր եղանակը), նրա ամբողջ պատժիչ և  
սահմանափակող դաժան քաղաքականությունը ի վիճակի չէր  
ոչ կանգնեցնելու, ոչ էլ կասեցնելու խոշոր բուրժուազիայի  
տնտեսական հզորության աճը: Դեռ ավելին, շնայած գլխիտի-  
նի դանակով սպեկուլյանտների բնաջնջմանը, շնայած արգելիչ  
խիստ քաղաքականությանը, այդ ժամանակաշրջանում աճեց  
նոր, շահադիտական բուրժուազիա, հսկայական հարստություն  
դիզելով բանակի մատակարարումների, հողակտորների վերա-  
վաճառքի, դրամի կրկնակի կուրսի հետ խաղալու, մթերքների  
սպեկուլյացիայի հաշվին և այլն:

Քանի դեռ երկրի վրա կախված էր ինտերվենտների բանակների հաղթանակի և հին, Ֆեոդալաբարությունտական կարգերի վերականգնման վտանգը, այդ նոր բուրժուազիան, որը կենսական, նյութական շահերով իրեն կապել էր հեղափոխության կողմից կատարված սեփականության վերաբաշխման հետ, պետք է խոնարհարար հանդուրժեր յակոբինյան դիկտատուրայի պատժող ձևերը: Ես պետք է հաշտվեք և՛ ժողովրդի աճած դերի, և՛ սահմանափակ վարչակարգի հետ, ես պետք է հավատարմության կրգում տար արդարության և առաքինության մեծ իրեւաններին, քանզի միայն յակոբինյան «հավասարության ջուտաղովների» երկաթե ձեռքը կարող էր նրան պաշտպանել ինտերվենտների սվիններից ու դեպի անցյալը վերադարձից:

Բայց հենց որ վերականգնման վտանգն անցավ, բուրժուազիան, իսկ նրա հետ միասին և յակոբինյան դիկտատուրայի սահմանափակող վարչակարգից նեղված բոլոր սեփականատիրական տարրերն սկսեցին նրանից ազատվելու միջոցներ փնտրել:

Բուրժուազիայից անմիջապես հետո դեպի աջ նույն շրջադարձը կատարեց ունեւոր, իսկ հետո նաև միջին գյուղացիությունը: Հեղափոխությունը նրան ազատեց ֆեոդալական ձեռնարկից, ֆեոդալական պարսկաններից, նրան հող տվեց, հարստանալու ճանապարհ հարթեց: Բայց յակոբինյան դիկտատուրան արգելում էր օգտվել ձևաբ քեթվածի պտուղներից: Կայուն դիտերի համակարգը, յակոբինյան իշխանության վարած ցարենի բռնագրավման քաղաքականությունը ժայրատախճան զժգոհություն առաջացրեց գյուղում:

Յակոբինյան դիկտատուրայի դեմ բուրժուազիայի և սեփականատեր գյուղացիության հիմնական դանդախների շրջադարձը նշանակում էր բուրժուական հակահեղափոխության ուժերի կազմավորում երկրում:

Ռոբեսպիերը և հեղափոխական կառավարությունը մարտնչում էին անհաղթահարելի ուժի դեմ, հիդրայի դեմ, որի մեկ կտրված գլխի տեղում իսկույն աճում էին տասը նորերը:

Հեղափոխական արիքունալը ուժեղացնում էր իր պատմիչ գործունեությունը: Դատավարությունները սպեկուլյանտների, մաքսիմոնի մասին օրենքը խախտողների դեմ ընթանում էին հարաձուռն արագությունը. դրանց էլքը մեծ մասամբ կանխորոշված էր՝ մահ կառափնարանի վրա: Բայց հեղափոխական կառավարությանը ցույց տրվող դիմադրությունը օրբատօրե ավելի

շոշափելի էր դառնում: Դեռ ավելին, այդ դիմադրությունն այժմ զգացվում էր ոչ միայն հեղափոխական կառավարության սահմաններից դուրս. այն իրեն զգացնել էր տալիս (դեռևս քողարկված) և՛ Կոնվենտի պատերի ներսում, և՛ նույնիսկ Հասարակական փրկության կոմիտեում, իսկ ավելի ուժեղ՝ Հասարակական անվտանգության կոմիտեում:

Ո՛ւժ վրա կարող էր հենվել Ռոբեսպիերի գլխավորած հեղափոխական կառավարությունը: Քաղաքային պիերեյություն, գյուղական շրավորություն՝ վրա: Հասարակական այն ներքինախափերի՞ վրա, որոնց այժմ անվանում են ձախ ուժեր: Վ. Ի. Լենինը այս հարցերին պատասխանել է հիանալի բնութագրմամբ. «Կոնվենտը թափավ լայն միջոցառումներ էր կիրառում, բայց կյանքում դրանք կիրառելու համար հարկավոր ենցուկ չունեւոր, չգիտեր անգամ, թե որ դասակարգի վրա պիտի հենվի այս կամ այն միջոցը կիրառելու համար»<sup>70</sup>:

Ավելի ճիշտ չես ասի Ռոբեսպիերը՝ յակոբինյանների ճանաչված առաջնորդը, հեղափոխության առաջնորդն իսկապես նրա այդ վերջին փուլում չգիտեր. Բե հեղափոխությունը որ դասակարգի վրա պետք է հենվի: Ռոբեսպիերը և յակոբինյանները մեծ ու հզոր էին, երբ համախմբում ու միավորում էին ժողովրդին, նրանց պաշարի հանում ֆեոդալական հակահեղափոխության և բուրժուական արխատկրատիայի դեմ: Նրանց հարվածները պահպանում էին նույն սարսափելի հզորությունը, և նրանք ժողովրդի գլուխն անցած հեղափոխության հետ միասին գնում էին առաջ, մարտնչելով խոշոր բուրժուազիայի, Ժիրոնդայի դեմ: Այժմ նրանք նորից ձեռք էին բարձրացնում, ամբողջ ուժով հարվածներ տեղում, բայց թշնամուն չէին հասնում՝ ձեռքը թուլանում էր և անօգնական իջնում:

Յակոբինյան կառավարության վարած քաղաքականությունը, և մասնավորապես նրա սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, որն այժմ, 1794 թվականի դարնանից հարուցում էր սեփականատիրական տարրերի զժգոհությունը, որոշ չափով չէր բավարարում և՛ պլեբեյությունը, և՛ դեմոկրատական ներքինախափերին ընդհանրապես: Մաքսիմոնը սանկյուլտների, առաջին հերթին քաղաքային շունեւոր ներքինախափերի օգտին անցկացվող միջոցառում էր: Բայց մաքսիմոնը տարածելով և բանվորների աշխատավարձի վրա, ուժի մեջ պահելով և Շապելիեի հակաբանվորական օրենքը, յակոբինյան կառավարությունը

ցույց տվեց, որ չի ըմբռնում բանվորների կարիքները: Նրանք դժգոհություն հայտնեցին այդ օրենսդրությունից: Կյանքի թանկացման աճին զուգընթաց այդ դժգոհությունն ուժեղանում էր: Իր ագրարային քաղաքականության մեջ յակոբինյան կառավարությունը հավասարապես ոչինչ չարեց գյուղական շքավորության ծանր դրությունը բարելավելու համար, չէր պաշտպանում նրա շահերը: Իսկ անցկացվող այսպես կոչված բանվորական ձեռքերի բռնագրավումները, այսինքն մորիլիզացիաները, նույնպես դժգոհություն առաջացրին:

Այսպես էին քայքայվում, կենտրոնախույս շարժումով միմյանցից հեռանում այն դասակարգային ուժերը, որոնք մինչև այժմ կազմում էին միասնական յակոբինյան բլոկը: Եվ հակասությունների այդ սրումը յակոբինյան բլոկում անխուսափելիորեն հանգեցնում էր նրա շարքերում ներքին պայքարի և յակոբինյան դիկտատուրայի ճգնաժամի:

Բայց այն, ինչն այժմ, համարյա երկու հարյուր տարի անց, հանգիստ կարող է վերլուծության ենթարկել մարքսիստ-պատմաբանը, որն իր տրամադրության տակ ունի պատմական գիտության կուտակած բոլոր տվյալները, իրադարձությունների բուն կենտրոնակետում գտնվող մարդկանց, որոնք դատում էին այն հեռավոր XVIII դարի հասկացություններով ու կատեգորիաներով, իհարկե, միանգամայն այլ կերպ էր պատկերանում:

Ռոբեսպիերն զգում էր, նա չէր կարող չզգալ, թե ինչպես հեղափոխության տարած հաղթանակների հետ միասին արգելքներ են աճում նրա ճանապարհին: Որքան նա մոտենում էր ցանկալի նպատակին, այնքան ավելի էր հեռանում այդ նպատակը:

Թվում է, թե հեղափոխությունն արեց ամեն հնարավոր բան, այն ամենը, ինչ կարելի է մարդու «բնական իրավունքները» վերականգնելու համար. նա ջախջախեց բոլոր նրանց, ովքեր ստանձգում էին այդ «բնական իրավունքներին», ովքեր իրենց հանցավոր գործողություններով ոտնահարում էին առաքինությունը: Բայց Ռոբեսպիերը համոզված էր, որ հեղափոխության առաջ շարժման համեմատ մարդիկ չեն դառնում ավելի լավը և Հանրապետության թշնամիների թիվը չի պակասում, Ընդհակառակը, դրանց թիվը օրըստօրե ավելանում է:

Նախկինում, երբ պայքար էր գնում արիստոկրատների, ֆեյդյանների, ժիրոնդիստների դեմ, երբ ամբողջ յակոբինյան բլոկը

եղբայրական համախմբվածություն մարտնչում էր ամենահզոր հակառակորդների դեմ, ամեն ինչ պարզ էր: Բայց այժմ պայքար էր ծավալվել հենց իր՝ յակոբինյան բլոկի շարքերում. այժմ հարկավոր էր մարտնչել այնպիսի մարդկանց դեմ, որոնք դեռ երեկ զինակից ընկերներ էին, իսկ ոմանք, ինչպես օրինակ Կամիլ Դեմուլենը՝ անձնական բարեկամ:

Աննկուն կամքի տեր Ռոբեսպիերի համար, իր էություն ամբողջականությամբ հանդերձ, անցյալի այդ տեսիլքները չէին կարող անհաղթահարելի խոչընդոտ դառնալ: Նա աչքերի սթափ, ուշադիր հայացքով զննում էր իր երեկվա դիտակցի այսօրվա կերպարը:

Նրա «նոթեր դանտոնականների դեմ» սևագիր աշխատանքում, որն այնպես նման չէր Հեղափոխական տրիբունալի ներկայացրած ձևական մեղադրանքին, ուշադրություն են գրավում Դանտոնի էությունը հասկանալու նրա փորձերը: Կարող է նույնիսկ տարօրինակ թվալ, որ Ռոբեսպիերն այդ նոթերում համեմատաբար քիչ է խոսում Դանտոնի գործերի, նրա գործողությունների մասին և կանգ է առնում առաջին հայացքից ինչ-որ շնչին թվացող մանրամասների վրա: Այսպես, նա գրել է. «Առաքինի» բառը Դանտոնի ծիծաղն էր շարժում, չկա ավելի զիմացկուն առաքինություն, ասում էր նա կատակով, քան այն առաքինությունը, որ նա դրսևորում է յուրաքանչյուր գիշեր իր կնոջ հետ»: Եվ Ռոբեսպիերը, որի համար «առաքինություն» բառը սրբություն էր, դրանից անմիջապես հետո պարզ զգացվող վրդովմունքով գրում է. «Ինչպես կարող էր մարդը, որին խորթ է բարոյականության ամեն մի գաղափար, լինել ազատության պաշտպանը»<sup>171</sup>:

Ու ներքնում նա կրկին նշում է. «Իր քաղաքականության գաղտնիքը նա, Դանտոնը, ինքն է բացահայտել հեռեկալ ուշադրավ խոսքերով. «Այն, ինչ թուլացնում է մեր գործը,— ասում էր նա իսկական հայրենասերին, որի զգացմունքներն իբրև թե բաժանում էր,— բազում մարդկանց ահաբեկող մեր սկզբունքների դաժանությունն է...»<sup>172</sup>:

Ռոբեսպիերը, որ դատում էր XVIII դարի կատեգորիաներով, չի տվել և չէր կարող տալ Դանտոնի քաղաքականության գասակարգային բնորոշումը, բայց նա բնազդաբար մոտենում էր ճշմարտությանը, նրանում գլխավորը համարելով Դանտոնի «ժգոհությունը «մեր սկզբունքների դաժանությունից»: Դժգո-

Հուլյուն յակոբինիզմի սկզբունքներից՝ հենց սա էլ այն ընդհանուրն էր, որ միավորում էր հեղափոխական-դեմոկրատական գիկատառուրայից բոլոր նեղվածներին, այդ «բարձր սկզբունքներին» վերջ տալու և շուտափույթ երկրային բարիքների վրա պրծնելու բոլոր շտապողներին:

Համակված իր դատապարտվածության գիտակցությամբ, աներկյուղ մահվան նկատմամբ իր արհամարհական անտարբերությամբ, Ռոբեսպիերն ընդունակ էր ուրիշի կյանքը գնահատել ոչ ավելի, քան իրենը: Նա կառափնարան ուղարկեց, կամ ասենք ավելի զգուշ և ստույգ՝ Հասարակական փրկության և անվտանգության կոմիտեների իր անդամների հետ միասին նա կանխորոշեց Դանտոնի, Դեմուլենի, Ֆիլիպոյի և մյուսների մահապատիժը, որոնք գնում էին ապրիլի 4—5-ի «ամալգամապատված» պրոցեսում:

Բայց պարտության մատնելով Դանտոնին ու Դեմուլենին (որին նա, ըստ երևույթին, առաջվա նման սիրում էր), Ռոբեսպիերը հույս ուներ, որ նրանց հետ միասին կպարտվի, ինչպես XVIII դարում էին ասում, ամբողջ «Ֆրակցիան», բոլոր նրանք, ովքեր ձեռք են բարձրացրել առաքինության, կեռան նվիրական սկզբունքների վրա:

Նրա ողբերգությունն այն էր, որ նա չկարողացավ միանգամից կռահել, ավելի ճիշտ է ասել, անվրեպ գնահատել նրանց ստվերի թիկունքում կանգնած ուժերին: Սկզբում նրան թվում էր, թե խոսքը մեկ կամ երկուսի երկու-երեք տասնյակ հերձվածողների և բանասարկանների մասին է, որոնք դավաճանել են քաղաքական բարոյականության սկզբունքներին, իսկ իրականում պարզվեց, որ հեղափոխության դեմ են շարժվում թշնամական ուժերի անվերջ շարքերը, որ նրանք անհաղթահարելիորեն սեղմում են շորս կողմից, ինչպես պորժող հոծ գանգվածակույտը: Ամուր, քնշաքաղց, ազահ բուրժուազիան անում, բարձրանում էր Ֆրանսիայի՝ յակոբինյան գութանով մաքրված հողի բոլոր ճեղքերից ու ծակասիներից, և այն ժամանակ շկար մի ուժ, որ կարողանար կանգնեցնել նրան:

Այստեղ հարկ չկա շարադրել յակոբինյան բլոկի շարքերում սկսված ներքին պայքարի պատմությունը: Բայց պետք է հիշեցնել, որ հեղափոխական կառավարության հարվածներն ուղղված էին ոչ միայն դեպի աջ, այլև դեպի ձախ:

Դեռևս 1793 թվականի ամռան վերջերին ու աշնան սկզբներին,

բոլոր յակոբինյանները համատեղ ջանքերով շախջախեցին «կատաղիներին»՝ ֆրանսիական հեղափոխության ամենաձախ հոսանքին: 1794 թվականի մարտին, վճռական պայքարի մեջ մտնելով դանտոնականների դեմ, հեղափոխական կառավարությունը շախջախեց ձախ յակոբինյանների շարքերից դատված էրերականների խումբը: Էրերականների շարքերում կային տարբեր ըմբռնումների տեղ մարդիկ և ապստամբություն բարձրացնելու նրանց ձեռնարկած փորձը շնանդիպեց սանկյուլոտների աշակցությանը: Բայց էրերականների դեմ ուղղված հարվածը տարածվեց նաև կորդելիերների վրա: Դանտոնի մահապատից մի քանի օր անց Հեղափոխական տրիբունային հանձնվեց և հետո մահապատի էնթարկվեց ձախ յակոբինյանների լավագույն ներկայացուցիչ Ծոմեթը, թեև նա չէր պաշտպանում էրերականների ելույթները: Դրանից անմիջապես հետո Ծոմեթի համախոհներից «մաքրման» ենթարկվեց Փարիզի կոմունան\*:

Ռոբեսպիերն այն ժամանակվա իր ելույթներում և՛ գանտոնականներին, և՛ ձախ յակոբինյաններին ներկայացնում էր հեղափոխությանը թշնամի մեկ խմբավորման երկու նյութավորումներով՝ «...այդ երկու խմբավորումներից մեկը մեզ մղում է թուլության, մյուսը՝ ամեն տեսակ ծայրահեղությունների... Մեկին ավեցին չափավորներ մականունը, մյուսներին՝ առավել սրամիտ, քան ճիշտ, ուլտրահեղափոխականներ անվանումը... Դրանք բոլորը մի տիրոջ ծառաներ են, կամ, եթե կամենաք, գործակիցներ՝ ձեռքներով, թե իբրև գծավում են, որպեսզի ավելի լավ թաքցնեն իրենց հանցագործությունները: Նրանց մասին կարծիք կազմեցեք ոչ թե նրանց ճառերի տարբերությամբ, այլ արդյունքների նմանությամբ»<sup>72</sup>:

Ռոբեսպիերը դրսևորեց իրեն հատուկ խորաթափանցություն, գուշակելով խաբերա ու դավադիր Ֆուլշի, կաշառակերներ ու գանձագողիք Տալիենի, Բարրասի, Ֆրերոնի վառ հեղափոխական գույներով քողարկված գաղտնի ազգակցությունը «չափավորների» հետ: Դրանք նոր բուրժուազիայի հարձակվող բանակի գանազան պաշտպանական գույներով սրողված հետախույզ-

\* Այստեղ չի կարելի շնչել, որ Կոմունայի անհատական կազմի փոփոխությունը շնչին լափով անգամ չազդեց նրա սոցիալական կազմի վրա: Հիմնականում նա մնաց նույնը, և այն, ինչ կոչվում էր «ռոբեսպիերական Կոմունա», դասակարգային տեսակետից գրեթե չէր տարբերվում «շոմեթական Կոմունայից» (M. Eude. Etudes sur la Commune robespierriste. Paris, 1973),

ներն էին: Ռոբեսպիերն իրավացի էր և, անկասկած, գործում էր հանուն հեղափոխության, հանգև գալով ծայրահեղ տեռորիստների դեմ, որոնք իրենց անիմաստ դաժանություններով մեծ վնաս էին հասցնում հեղափոխությանը: Նա դրսևորեց պիտական իմաստություն, գատապարտելով այսքրիստոնեացման քաղաքականությունը, որ բռնի միջոցներով անց էին կացնում էբերը, Շոմեուր և մյուս յակոբինյանները, և որը դեռ նախկինում առաջ էր բերել գյուղացիության վտանգավոր դժգոհությունը:

Դրա հետ մեկտեղ Ռոբեսպիերը սխալ էր թույլ տալիս, հրաժարվելով հեղափոխական կառավարության սահմաններից դուրս տեսնել այլևայլ քաղաքական ձախ ուժերի: Այնինչ այդպիսի ուժեր կային և նշանակալից դեր էին խաղում հեղափոխության մեջ: Մ'ի Շոմեուր, և՛ շոմեուսականները, և՛ Մոմորոյի նման մարդիկ, և՛ Կոմունայի շարքային անգամները՝ բոլոր նրանք կանգնած էին Ռոբեսպիերի դեկավրած յակոբինյան կառավարությունից ավելի ձախ և յակոբինյան դիկտատուրայի հետարանն էին ձախից:

Նույն հակասականությունը, նույն սխալները դրսևորվեցին և յակոբինյան կառավարության սոցիալական քաղաքականության մեջ: Ինչպես արդեն ասվել է, 1794 թվականի մարտին ընդունվեցին վանտոզյան դեկրետները, որոնք նախատեսում էին հեղափոխության թշնամիների սեփականությունը բաժանել շունեփորների միջև: Իհարկե, վանտոզյան դեկրետները «նոր հեղափոխության ծրագիր» չէին, ինչպես դրանք իր ժամանակին պատկերում էր Մատիեզը<sup>144</sup>, ոչ էլ տակտիկական խորամանկ բայլ, որը դրանց մեջ նշմարել էր Ժորժ Լեֆերը<sup>175</sup>: Վանտոզյան դեկրետներում իրենց մարմնավորումը գտան Ռոբեսպիերի, Սեն-ժյուստի և Ռուսոյի մյուս յակոբինյան հետևորդների հավասարապաշտական նկրտումները, իսկ նրանց շուրթերով ձևակերպվեցին ժողովրդական զանգվածների հավասարողական ակնկալությունները:

Վանտոզյան դեկրետները, թող որ դրանք կենսագործված լինեին, կնշանակեին սեփականատերերի թվի ավելացում շունեփորների շարքերից և, հետևաբար, հեղափոխության դեմոկրատական բազայի ընդլայնում: Դրանց իրականացումը որոշ չափով կնպաստեր հակահեղափոխական բուրժուազիայի մի մասի տնտեսական և քաղաքական գինաթափմանը: Հասկանալի է,

այսօր մենք կարող ենք վստահություններ ասել, որ վանտոզյան դեկրետների իրականացումը վերջին հաշվով չէր փոխի իրերի ընդհանուր ընթացքը: Բայց չէ որ դա պարզ չէր 1794 թվականի իրադարձությունների մասնակիցներին, և ինքը՝ վանտոզյան օրենսդրությունն այնուամենայնիվ բազմաթիվ մեծ նշանակություն ուներ:

Բայց, տարօրինակ բան, անցավ մեկ ամիս, լակ վանտոզյան օրենսդրությունը չէր կիրառվում: Այն հանդիպեց բուրժուազիայի և ունեոր գյուղացիության լայն խավերի բաջաստկան, ավելի ճիշտ, թշնամական վերադարձունքին: Այն բախվեց Կոնվենտի, կենտրոնում և տեղերում կառավարական ապարատի մեծամասնության լույսայն դիմադրությունը:

Իսկ ինչո՞ւ հեղափոխական դիկտատուրայի աճող ուժը չգործադրվեց Կոնվենտի ընդունած դեկրետների իրականացման համար: Ինչո՞ւ Ռոբեսպիերը, որ աննկուն հաստատակամություն էր ցուցաբերում նպատակին հասնելու գործում, այդ նորոցում ի հայտ բերեց տատանումներ ու թուլություն, սիրա շարեց կոտրել դիմադրությունը վանտոզյան օրենսդրություն դեմ:

Ո՞ւր գնալ: Ինչպիսի՞ ծրագիր առաջարկել Կոնվենտին, Լեռանը, հայրենասերներին: Ինչպիսի՞ ուղի գտնել, որը պահպանեի և ամրապնդեր ժողովրդի միասնությունը հեղափոխական կառավարության հետ: Ռոբեսպիերը, ինչպես և յակոբինյան դիկտատուրայի մյուս ղեկավարները, պատասխան էր որոնում այդ հարցերին, բայց չէր կարողանում ճիշտ որոշում գտնել:

Հեղափոխության սոցիալական բովանդակության հետագա խորացման ուղին, որը բացված էր վանտոզյան օրենսդրությամբ, դադարեցվեց: Այն չի գատապարտվել, չի մերժվել, ոչ որ նույնիսկ բարձրաձայն կասկածներ չի արտահայտել նրա նշմարտության առթիվ: Բայց այդ ուղուց հետացան անձայն:

Ռոբեսպիերը փորձեց գտնել այլ ուղի: 1794 թվականի մայիսի 7-ին նա Կոնվենտում հանդես եկավ մեծ ճառով՝ հօգուտ «գերագույն էակի» պաշտամունքի<sup>176</sup>, «Գերագույն էակի» գազափարը՝ սոցիալական և հանրապետական դադափար էլ:— ասում էր Ռոբեսպիերը: «Գերագույն էակի» սյաշտամունքը ազգի միավորման ու համախմբման փորձ էր ներ պետական ճնշնրապետական կրոնի հողի վրա:

Ժերար Վալտերը Ռոբեսպիերի մասին իր ուսումնասիրությունների մեջ այն կարծիքն է արտահայտում, որ այդ ճառն առավել լիակա-

տարութեամբ ու խորութեամբ է արտահայտել Անկաշառի մրտ-  
քերը<sup>177</sup>։ Միգուցե դա մտտ է ճշմարտութեանը։ Համենայն դեպս  
ճառը գրվել կամ արտասանվել է աներկբայելի ոգևշնչմամբ։  
Ռոբեսպիերը դեռևս լիահույս էր. այդ ճառը դեռևս շնչում էր  
մոտալուտ հազիմանակ ձեռք բերելու ջերմ հավատով։ «Եվ դուք,  
Ֆրանսիական հանրապետության հիմնադիրներդ,— սուտ էր  
նա, դիմելով Կոնվենտի անդամներին,— զգուշացեք մարդկու-  
թյան նկատմամբ հույսը կորցնելու կամ թեկուզև մի ակնթարթ  
ձեր մեծ նախաձեռնութեան հաշտութեանը կասկածելուց։

Աշխարհը փոխվել է։ Նա պետք է է՛լ ավելի փոխվի»<sup>178</sup>։

Ռոբեսպիերը նկարագրում էր այն մեծ վերափոխությունների  
պատկերը, որ կատարել էր ֆրանսիական հեղափոխությունը,  
ֆրանսիական ժողովուրդը։ Նա դիմում էր հայրենասիրական  
հպարտության զգացմունքներին. «Ֆրանսիական ժողովուրդը  
կարծես թե երկու հազար տարով առաջ է անցել մնացած մարդ-  
կային ցեղից»։ Նա խանդավառությամբ, դրեթև մոլուցքով  
բռնկված էր խոսում Ֆրանսիայի՝ այդ հրաշալի հողի մասին,  
որին գուրգուրում էր արևը, և որը ստեղծված էր ազատության  
ու երջանկության երկիր լինելու համար։ Նա Կոնվենտի ղեկու-  
տատներին հիշեցնում էր այն մեծ առաքինության մասին, որ  
պատմությունը դրել էր Ֆրանսիայի վրա, յուրաքանչյուր ֆրան-  
սիացի հայրենասերի փառահեղ ու պատվավոր պատասխանա-  
տվության մասին։ Նա նախազուշացնում էր այն վտանգի  
մասին, որն իր հետ բերում էր երկրի ճակատագրի համար  
առաքինության դեմ պայքարող արատը։ Նա կոչ էր անում  
պայքարել նրա անբարոյականացնող ազդեցության դեմ, Կոն-  
վենտի անդամներից պահանջում էր քաղաքացիական արիու-  
թյուն<sup>179</sup>։

«Հաշվի նստեցեք միայն հասարակության բարօրության և  
մարդկության շահերի հետ»,— բացականչում էր Ռոբեսպիե-  
րը<sup>180</sup>։

Բայց ո՞ւմ էին ուղղված այս խոսքերը։ Կոնվենտի այդ դե-  
պուտատների ժողովի՞ն, որոնք դիտավորյալ բարձրաձայն ու  
ձեռքերը ցուցադրաբար առաջ պարզած ծափահարում էին հոե-  
տորին, թաքցնելով իրենց աչքերը նրանից։ Տալիենի՞ն, Բարրա-  
սի՞ն՝ Բորգոյի և Տուլոնի պրոկոնսուլներին, կաշառակերներին  
ու զոդերին, որոնք հակահեղափոխությունը արմատախիլ էին  
անում նրանց կողմից ոսկու վերածվող արյան հեղեղներով։

Ուխտագրում Ֆուշերի՞ն՝ քաղաքական քամեղեռնին, երեկվա էրե-  
րականին, Նապոլեոնի ուստիկանությունն ապագա մինիստրին։  
Մարկիզ Ռովեր դը Ֆոնվիլի՞ն՝ արիստոկրատիայի ճամբարի  
ծախու փախստակին, ամեն տեսակ բարոյականությունը խորթ  
անպատկառին, որը ջանում էր ստիպել մոռանալ իր անցյալը  
սանկուլուտների ղեկավարների հետ ունեցած կեղծավոր մտեր-  
մությունը, անգուժ մարդուն՝ խելահեղ տեոորիզմի մեջ, որը  
ներկված էր ծայրահեղ հեղափոխական գույներով և թույլ էր  
տալիս նրան բարկացած ժամանակ դիակապտություն անել,  
կողոպտելով իր զոհերին։ Մարի Ֆրանսուա Լապորտի՞ն, որն  
իրեն ձևացնում է հավատարիմ ծառայող, յակոբինյան բլոկի  
չարքային, Կոնվենտի կամքի պարզամիտ կատարող, որն ավելի  
ուշ, 1796—1797 թվականներին մերկացվել է քսան միլիոնից  
ավելի ֆրանկ կողոպտելու համար։ Ֆրեյրոնի՞ն՝ գանձագողին և  
մարդասպանին, «ոսկի երիտասարդության» բանդանների ապա-  
գա պարագլխին։ Մերլենի՞ն Տիոնվիլից, որը երազում է իշ-  
խանական առանձնատան մասին։ Հին ազգավ Սիեյեսի՞ն, որը  
չի բացում կտուցը, մինչև որ չգա իր ժամը։

«Հայրենիքի բարօրություն», «մարդկայնություն», «առա-  
քինություն»՝ սրանք դատարկ խոսքեր էին այս բոլոր վաղվա  
թերմիզորականների, զազանի նորահարուստների համար, որոնք  
իրենց գրպանները լցրել էին հեղափոխության տարիներին և  
շտապում էին վայելել այնպես հեշտությամբ իրենց բաժին հա-  
սած ունեցվածքը։

Նրանք արդեն դիտակցում էին իրենց ուժը. նրանց արդեն  
ձանձրացրել էր այդ հերոսականությունը, արիության և առա-  
քինության այդ կոչերը. նրանք արագ հայացքներ էին փոխա-  
նակում. բայց հասկանում էին, որ իրենց ժամանակը դեռ չի  
եկել, և նրանք հոտնկայս ծափահարում էին Ռոբեսպիերին ու  
միահամուռ քվեարկում նրա մտքրած «գերագույն էակի» պաշ-  
տամունքի մասին դեկրետի նախագծի օգտին։

Հունիսի 8-ին Փարիզի Տյուրիլիի այգում, իսկ հետո Մարսյան  
դաշտում տեղի ունեցան հանդեսներ ի պատիվ «գերագույն  
էակի»։ Տյուրիլիի կանաչ զրոսայգին զարդարված էր ալյաբա-  
նական ֆիգուրներով, որոնք ստեղծվել էին նշանավոր Դավթի  
Նախագծով։ Ռոբեսպիերը, որ նախօրյակին միահամուռ ընտրվել  
էր Կոնվենտի նախագահ, երկնագույն նոր ֆրակը հագին, ձեռքին

աշորայի հասկիկներ, բարձրացավ ամբիոն: Հեղափոխական կառավարության անունից նա կարճատև ճառ արտասանեց:

«Ֆրանսիացիներ, հանրապետականներ, դուք պետք է մաքրեք հողը, որ ազատուի են բռնակալները, և վերստին վկայակոչեք արդարություն, որին նրանք արտաքսել են»<sup>161</sup>, — ասում էր նա:

Ժողովուրդը ջերմ բացականչություններով ընդունեց Անկաշտոնի: Հասարակ մարդիկ, որոնք հավատում էին Ռոբեսպիերին, ծափահարում էին և թղթում. «Կեցցե՛ Հանրապետությունը»: Կարող էր թվալ, թե հեղափոխական կառավարությունն ավելի ուժեղ է, քան կրեկից, թե նրա դիրքերն անսասան են:

Բայց դա պատրանք էր:

Փափառների և մայրաքաղաքի յակոբինյան ակումբներից Կոնվենտում ստացվում էին ողջույնի ուղերձներ: Նրանցում հավանություն էր տրվում «գերագույն էակի» բարեբար պաշտամունքին: Բայց դրան հավատալ չէր կարելի: Սեն-ժյուստի գլխավորած Հասարակական փրկության կոմիտեի ոստիկանության բյուրոն իր իրազեկիչների և գործակալների միջոցով այլ տեղեկություններ էր ստանում՝ ժողովուրդը սառնությունից, իսկ մեծ մասամբ թշնամաբար է ընդունել «գերագույն էակի» պաշտամունքը:

Այլ կերպ չէր էլ կարող լինել: Սոցիալական մեծ հարցերի լուծումը ճառերով, կրոնական կամ կիսակրոնական բնույթի ղեկրեաներով և մանիֆեստացիաներով փոխարինելը նախապես ձախողման էր դապատարոված: Ռոբեսպիերի անձնական հաջողությունը Կոնվենտում և հունիսի 8-ին Փարիզում տեղի ունեցած հանդիսություններում չէր կարող, իհարկե, ոչ խափանել, ոչ էլ առավել ևս փոխել երկրում յակոբինյան դիկտատուրայի համար ծայրաստիճան անբարենպաստ դասակարգային ուժերի այն հարաբերակցությունը, որ գոյացել էր 1794 թվականի ամռան նախօրյակին:

Բացի այդ, Անկաշտի անձնական հաջողությունը նույնպես պատրանքային էր: Սանկյուլոտները, Փարիզի հասարակ ժողովուրդը առաջվա նման հավատում էին նրան: Նրա կյանքը բոլորի աչքի առաջ էր. լինելով Ֆրանսիայի ճակատագրի տնօրինողը, նա շարունակում էր ապրել նույն տեղում, Սենտ-Օնորե փողոցում, հյուսն Դյուպլեի մոտ: Նա վարում էր նույն հասարակ ապրելակերպը, քայլում էր ոտքով, էլի նույն աղքատն էր,

ինչպես և իր անհայտության օրերին: Աշխատավոր ժողովուրդը գնահատում էր այդ՝ «Սա չի ծախի»: Բայց Կոնվենտի պատերի ներսում արդեն ժողովուրդը չէր տերը: Հունիսի 8-ի հանդեսի օրը հավանության բացականչությունների մեջ Ռոբեսպիերը պարզորոշ դանազանում էր թշնամական քշփշոցը՝ դրանք Կոնվենտի դեպուտատների ծանոթ ձայներն էին: Այնուհետև նրան սպանելու փորձ կատարեցին Ամիրալը և Սեսիլ Ռենոն: Ռոբեսպիերն ինքն էլ կարող էր նկատել իր կարծեցյալ բարեկամների շարամիտ ջերմեռանդությունը՝ իր անվան հետ կապված բոլոր գործերը գիտակցաբար ուռճացվում էին: Այդպես էր ոչ միայն նրա դեմ կազմակերպված մահափորձերի հետ: Նրան վարկաբեկելու, Կոնվենտի մյուս անդամներից նրան մեկուսացնելու, ժողովրդին ծիծաղի ու աննպաստ լույսի տակ ներկայացնելու համար ստեղծվեց և ուռճացվեց կիսախեղազար պառավ Եկատերինա Քեոյի գործը:

Հանրապետական բանակի հաջողությունները, հունիսի 26-ին Ֆլեբրյուսի մոտ նվաճված փայլուն հաղթանակը, որոնք ամուր կրաշիթեր ստեղծեցին վերականգնման սպառնալիքից, սաստկացրին բոլոր սեփականատիրական տարրերին միավորած բուրժուազիայի ձգտումը վերջ տալու հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի վարչակարգը: «Հավասարության առաքյալները» յակոբինյանները երկաթե ձեռքերով վերացրին հեղափոխության ճանապարհի վրա բոլոր կանգնածներին: Դրանով իսկ նրանք ճանապարհ հարթեցին բուրժուազիայի համար: Նրանք կատարեցին իրենց գործը, և այժմ բուրժուազիան ինքն էր շտապում շափազանց ծանր ձևերով վերացնել այդ մարդկանց:

Ռոբեսպիերը պարզ գգում էր այդ բանը, այդպես տարօրինակ կերպով արտաքին հաջողությունների հետ զուգակցվող ներքին սպառնալիքի սաստկացումը: Պրեբիալի 22-ին (1794 թ. հունիսի 10) Կոնվենտում արտասանած ճառում նա խոստովանում էր. «Այն պահին, երբ ազատությունը հասնում է, ըստ երևույթին, փայլուն հաղթության, հայրենիքի թշնամիներն է՛լ ավելի հանդուգն դավադրություններ են սարքում»<sup>162</sup>:

Բայց ինչպե՞ս խափանել այդ դավադրությունները: Ինչպե՞ս ամբապնդել Հանրապետությունը: Ի՞նչ ճանապարհով տանել այն: Այս հարցերը վերստին հառնում էին հեղափոխական կառավարության ղեկավարների առջև:

Իրավաբանը, իրավունքների լիցենցիատը, փաստաբանը, որ միշտ ձգտել է բոլոր դատավարական նորմերն օգտագործել պաշտպանության համար, մոռենալիքը դիտակցաբար գնաց դրանց կարճմանը, դատավարության ընթացքում մեղադրյալի երաշխիքների նեղացմանը հանուն Հեղափոխական տրիբունալի աշխատանքի արագացման, հեղափոխական տեղորոշումների նախադասման: Նա հուանդուն կերպով պաշտպանեց հունիսի 10-ին Կուտունի մտցրած օրենքի նախագիծը, որը նախատեսում էր հեղափոխության թշնամիներին շուտափույթ պատժելու նպատակով վերակազմել Հեղափոխական տրիբունալը և պարզեցնել դատավարությունը<sup>181</sup>:

Ժիրոնզայի անկման ժամանակվանից ի վեր Կոնվենտը Հասարակական փրկության կոմիտեի առաջարկությունը դիմադրեց լռելյայն, հավանություն չտալով: Ռյուամպը, Բարերը և մի քանի ուրիշ դեպուտատներ անվստահորեն առաջարկություն մտցրեցին օրենքի ընդունումը հետաձգելու մասին: Բայց Ռոբեսպիերը կտրականապես արտահայտվեց հօգուտ նրա անհապաղ հաստատման: Կոնվենտը միահամուռ կերպով քվեարկեց, և պրերիալի 22-ի նախագիծը դարձավ օրենք:

Տեղորոշումներով Հեղափոխական տրիբունալի դատավճիռները կայացվում էին արագ և մեծ մասամբ կրկնում էին միևնույն որոշումը՝ մահապատիժ: Մեկ և կես ամսվա ընթացքում, պրերիալի 23-ից մինչև թերմիդորի 8-ը, Հեղափոխական տրիբունալը կայացրեց հազար հինգ հարյուր վախճաններ և դատավճիռ. դրանցից հազար երկու հարյուր ութսունհինգը հայտարարում էին՝ մահ և միայն երկու հարյուր յոթանասունով՝ արգարացում: Նախորդ քառասունհինգ օրում կայացվեց է հինգ հարյուր յոթանասունյոթ մահվան և հարյուր ութսուներկու արդարացնող դատավճիռ<sup>182</sup>:

Արդյոք Ռոբեսպիերը պատասխանատու էր ժուրահեղ շափերի հասնող այդ տեղորոշումների համար:

Անկասկած, նա քիչ դեր չի խաղացել պրերիալի 22-ի օրենքի ընդունման գործում: Բայց գրանով սպառվում էր նրա մասնակցությունը 1794 թվականի ամռան տեղորոշում: Պրերիալի 22-ի օրենքի կիրառումը գործնականում արդեն գնում էր ոչ նրա հսկողության ներքո և ոչ նրա ցանկությունով: Վերստին, ինչպես և վանտոզյան օրենսդրության մեջ, նա զգաց, որ պետական իշխանության ղեկը ոչ թե կենթարկվում է իր ձեռքերին, այլ ուրիշ

ուժերի: Նա այլևս չէր կարող որևէ բան փոխել, որևէ բան ուղղել: Ինչ-որ մեկը դիտավորություն տեղորոշել կրակը բորբոքում էր այն հույսով, որ նրա շարագույժ արտացոլքը կընկնի Ռոբեսպիերի ղեմքին: Նրանք, ում վրա պետք է իջնեի հեղափոխական արդարադատության պատժող ձեռքը, կարողացան դրավել կառավարական քաղաքական միջոցները և տեղորոշ օգտագործել իրենց նպատակների համար:

Ասե՛ք, այս ամենը պետք է պարզաբանել ավելի մանրամասնորեն:

## IX

Պայքարի տրամաբանությունն ինքն էր յակոբինյաններին դրգում տեղորոշի: «Հարուստներն ու բռնակալները», ժիրոնզիստներն ու ֆեյլանները, միապետության և հին վարչակարգի կողմնակիցներն ամենից քիչ էին հակված առանց մարտի հանձնելու իրենց դիրքերը: Նրանք միայն կատաղի դիմադրություն չէին ցույց տալիս հունիսի 2-ին հաղթած նոր, յակոբինյան իշխանությունը, նրանք անցել էին հակահարձակման, ուղղակի կապեր հաստատելով եվրոպական միապետությունների կառավարությունների և ինտելիկենտների բանակների հետ՝ ստեղծելով ներքին և արտաքին հակահեղափոխության բոլոր ուժերի մեծագուր կոալիցիա:

Պաշտպանվելով շուր կողմից հարձակվող թշնամական ուժերից, յակոբինյան կառավարությունը պետք է դիմեր արտակարգ միջոցների և, մասնավորապես, հակահեղափոխական տեղորոշում պատասխանելու հեղափոխական տեղորոշում:

Հեղափոխական տեղորոշումը կապակցություն ստեղծվեցին բազմաթիվ մեկնակերպեր, պատմական կառուցումներ, առասպելներ: Թերես, հեղափոխության պատմության ոչ մի ուրիշ հարց այնպես խճճված, ակամա կամ շարամտորեն աղավաղված չի եղել, ինչպես հեղափոխական տեղորոշումը հարցը: Վաղուց էր հասունացել ժամանակը անհրաժեշտ պարզություն մտցնելու այդ հարցի լուսարանման մեջ:

Ամենից առաջ, ինչպես և դա համապատասխանում է պատմական գիտության պահանջներին, 1793—1794 թվականների տեղորոշումի քննարկումը պետք է լիովին ազատ լինի ամեն տեսակ սենտիմենտալությունից, ամեն տեսակ բարոյական քարոզ-

ներից. իրերին պետք է նայել այնպես, ինչպես դրանք եղել են, բացահայտելով դրանց պատմական պատճառականությունը:

Ամենից առաջ, և դա պետք է ասվի ամենայն որոշակիությամբ, թույլ չտալով ոչ մի թյուր մեկնություն, հեղափոխական տեղորդ չի սկսվել յակոբինյանների նախաձեռնություններ. դա պատասխան, ստիպողական միջոց էր ուղղված հակահեղափոխական տեղորդի դեմ, որն սկզբնապես սանձազերծվել էր ժիրոնդիստների ու հակայակոբինյան ընդհատակի գծով նրանց գործակիցների կողմից:

Հիշեցնենք հանրահայտ փաստերը: 1793 թվականի մայիսի 31-ի—հունիսի 2-ի ժողովրդական ապստամբություն հաղթանակից հետո յակոբինյանները սահմանափակվեցին այնպիսի մեղմ միջոցներով, ինչպես ժիրոնդիստական լիգերների և նրանց մտերիմ դեպուտատների տնային կալանքը (այսինքն անձնական ազատության փաստացի պահպանում)՝ ընդամենը քսանինը մարդ: Ժիրոնդիստները տնային կալանքից փախան Քորզո և հարավի ու հարավ-արևմուտքի ուրիշ քաղաքներ և այնտեղ բարձրացրին հակահեղափոխական խռովություն: Ժիրոնդիստների այդ քայլից ողենշված, 1793 թվականի հուլիսի 13-ին, իր տան լագարանում, Շառլոտա Կորզի կողմից սպանվեց ժողովրդի բարեկամ Ժան-Պոլ Մարատը: Հուլիսի 16-ին կրոնում տեղի ունեցած հակահեղափոխական հեղաշրջումից հետո սպանվեց կրոնի յակոբինյանների առաջնորդ Շալիեն: Ավելի վաղ, ի հասուցումն Լյուդովիկոս XVI-ի մահապատժի օգտին քվեարկության, սպանվեց հեղափոխության գաղափարներին ամենանվիրված Միշել Լեպելետիե դը Սեն-Ֆարժոն՝ յակոբինյան Կոնվենտի դեպուտատներից մեկը:

Հետևաբար, տեղորդվող որպես քաղաքական պայքարի միջոց, առաջին անգամ կիրառել են ժիրոնդիստներն ու մյուս հակահեղափոխական խմբավորումները 1793 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին: Անհատական տեղորդվող, այսինքն յակոբինյան առաջնորդների ֆիզիկական ոչնչացումը՝ զուգորդված շարքային հայրենասերների զանգվածային սպանություններով, ինչպես դա եղել է կրոնում, Քորզոյում, Տուլոնում, ամենուր, որտեղ խռովարարները հաղթանակ էին տանում, նոր իշխանության կողմնակիցներին ահաբեկելու միջոց էր: Ժիրոնդան, Ֆելյանները, ոռյալիստները հույս ունեին տեղորդի միջոցով

արագացնել Լեոան իշխանություն՝ իրենց մոտույուտ թվացող անկումը:

Հեղափոխական տեղորդի (որը, ի դեպ, անբաժանելի էր հեղափոխական դիկտատուրայի ամբաստանման ուղղությունը՝ ձեռնարկված ուրիշ միջոցներից) առաջացման պատմությունը հասկանալու համար պետք է հիշեցնել 1793 թվականի հուլիս-օգոստոսին ստեղծված իրադրությունը:

Հանրապետության գրությունն աղետալի էր: Թվում էր, որ նրա օրերը հաշվված են և շկան ու շին կարող գտնվել այնպիսի միջոցներ, որոնք յակոբինյաններին թույլ տային իշխանությունը պահել իրենց ձեռքերում: Նրանց անկումը ժամանակակիցների մեծամասնությանը անխուսափելի էր թվում:

Այն ժամանակից ի վեր, կրթ Հանրապետությունը եվրոպական գոհների պատվանդանին շարտեց մահապատժի ենթարկված Լյուդովիկոս Կապետի դուխը, հակահեղափոխական կուտիցիայի ուժերը բազմապատկեցին: Հեղափոխական Ֆրանսիայի դեմ պատերազմի մեջ մտան Անգլիան, Իսպանիան, Հոլանդիան, Իտալիան և գերմանական մի շարք պետություններ: Թեև Ռուսաստանը ձևականորեն չհարեց ինտերվենտների կուտիցիային, բայց նրան սլաշտպանում էր բարոյապես և բազաքականապես: Գրեթե ամբողջ միապետական, հակահեղափոխական եվրոպան արշավանքի ելավ խռովահույզ Ֆրանսիայի դեմ: Հյուսիսից, հյուսիս-արևելքից, արևելքից, հարավ-արևելքից, հարավից ինտերվենտների բանակները ներխուժեցին Ֆրանսիայի սահմանները: Հանրապետական բանակներն ամենուրեք նահանջում էին հակառակորդների գերազանցող ուժերի առջև: Տուլոնը զավթվեց օտարերկրյա ինտերվենտների և ներքին հակահեղափոխության միացյալ գործողություններով: Գեռես 1793 թվականի մարտին Վանդեայում բռնկված ոռյալիստական խռովությունն արագորեն տարածվում էր հյուսիս-արևմտյան դեպարտամենտներում: Հարավում և հարավ-արևմուտքում իշխանությունը գերազանցապես անցավ խռովարար ժիրոնդիստների ձեռքը: Ասենք, ընդհանուր թշնամու առաջ երեկ միմյանց հետ սաստիկ վիճարանող խմբավորումների՝ ժիրոնդիստների, ֆելյանների, ոռյալիստների միջև եղած տարբերությունները ջնջվում էին: Այսուհետև նրանց բոլորին միավորում էր անհաշտ ատելությունը յակոբինյանների նկատմամբ: Հին տարածայնությունները մի կողմ նետվեցին՝ ինչու՞ այդ մասին

վերհիշել: Գլխավոր խնդիրը, որ միավորում էր Լեոնան բոլոր հակառակորդներին միասնական հակահեղափոխական բլթկի մեջ, պարզ էր ու որոշակի՝ հարկավոր էր տապալիլ չափորին-յանների կառավարությունը: Մարտից անմիջապես հետո նույն ճակատագիրն էր պատրաստվել Ռոբեսպիերին, Սեն-ժյուստին, Կուստոնի համար: Լեոն պետք է կործանվեր, դա առաջին նախապայմանն էր, որը ճանապարհ էր բացում ղեպի մեկ այլ ապագա:

1793 թվականի ամռանը ութսուններեք ղեկարտամենաներից վաթսուներ գտնվում էր խոռվարարների իշխանության տակ: Եվրոպայի ամենահզոր միասնատությունների կարգապահության վարժեցված, լավ հանդերձավորված և գերազանց զինված բանակները բոլոր ճանապարհներով մոտենում էին Փարիզին: Կտրված ամբողջ երկրից, խեղդված խոռվությունների, ինտեր-վենցիայի, շրջափակման սեղմ օդակով՝ մայրաքաղաքը սովում էր: Վաղ առավոտից մտի կրպակների և հացի խանութների փակ դռների առջև երկար հերթեր էին գոյանում:

Ի՞նչը կարող էր փրկել չակորինյանների կործանման դատապարտված Փարիզը: Նրա սնկումը, թվում է թե, կանխորոշված էր: Բայց տեղի ունեցավ հրաշք: Յակորինյան Փարիզը կանգուն մնաց: Մահացու վտանգի ժամին մոնտանյարները և առանձնապես նրանց քաղաքական ղեկավարներն այնքան ոգու արիություն, խիղախություն, եռանդ, հեղափոխական նախաձեռնություն, ժողովրդի ուժերի նկատմամբ հավատ դրսևորեցին, որ կարողացան կատարել այն, ինչ անհավանական էր թվում:

Յակորինյան Կոնվենտի 1793 թվականի հունիս-հուլիսի ագրարային օրենսդրությունը, որը լիովին խորտակեց ֆեոդալիզմը (կամ «սենյորային վարչակարգը», ինչպես նախընտրում են ասել ֆրանսիացի պատմաբանները) և նրա բոլոր իրավական վերապրուկներն ու իրականացրեց հողային սեփականության վերաբաժանում, որը գլխավոր հարցում համապատասխանում էր գյուղացիության շահերին, ի վերջո հասցրեց այն բանին, որ գյուղացիների մեծամասնությունն անցավ չակորինյան կառավարության կողմը<sup>15</sup>: Յակորինյանները հենց այդ նպատակին էլ ձգտում էին: Կարելի է Ռոբեսպիերին շատ կամ քիչ հիմքով նախատել այն բանում, որ նա իր էլույթներում պակաս ուշադրություն էր դարձնում ագրարային պրոբլեմներին, բայց հնարավոր չէ ժխտել այն անվիճելի փաստը, որ լինելով չակորին-

յանների քաղաքական լիդերը, նա հիանալիորեն հասկացավ անհետաձգելի սոցիալական օրենսդրության անհրաժեշտությունը գյուղացիության համար և նպաստում էր դրա կենսագործմանը:

Ճեղգայական բոլոր պարհակներից, կտ ու բեզյարից, մնացուկներից անհատույց ազատագրումը գյուղացիությունն ստացավ չակորինյան կառավարության ձեռքից, նա ստացավ և՛ համայնքային հողերը, և՛ վտարանդիական հողերի նշանակալի մասը, և՛ արգասիքի ունեցվածքի մի մասը: Կարճ ասած, միայն չակորինյան կառավարությունը գյուղացուն դարձրեց իր հողա-կտորի լիերջան, սենյորային ամեն տեսակ կախվածությունից ազատ սեփականատեր: Եվ հանուն դրա, հանուն իր սեփականությունը դարձած հողակտորի նա պատրաստ էր պայքար մղել հարյուրամյակների շարունակ իր հրազած այդ ձեռքբերումների վրա բոլոր սոսնձողուկների դեմ:

Յակորինյան իշխանությունը և նրա քաղաքական ողջնշող Մաքսիմիլիան Ռոբեսպիերը առաջին հերթին ձգտում էին ժողովրդին, այսինքն այդ նույն գյուղացիությունը և քաղաքային քնակչության մեծամասնությունը՝ աշխատանքի մարդկանց, շքավորությունը, «միջին խավերին» ապահովել առավել լիակատար քաղաքական իրավունքներ: Նրանք պատրաստեցին և ժողովրդի հաստատմանը ներկայացրին բուրժուական հեղափոխությունների պատմության մեջ բոլոր հայտնի սահմանադրություններից ամենադեմոկրատական սահմանադրությունը: Այս մասին արդեն խոսվել է, բայց տվյալ ենթատեքստում պետք է մեկ անգամ ևս հիշեցնել այդ մասին, քանզի միայն չակորինյան իշխանությունը կարողացավ բուրժուական դեմոկրատիայի շրջանակներում ապահովել նոր, ֆեոդալական ամեն տեսակ կապանքներից և մնացուկներից ազատագրված հասարակարգի ստեղծման գործում մասսաների ստեղծագործական նախաձեռնության, ստեղծագործական մասնակցության իրական հնարավորություն:

Ներքուստ ոչ ոք այնպես հեռու, հոգեբանորեն այնպես անպատրաստ չի եղել հեղափոխական բռնության արյունոտ միջոցների նկատմամբ, ինչպես Մաքսիմիլիան Ռոբեսպիերը, Սեն-ժյուստը կամ չակորինյան ղեկավարներից որևէ մեկը 1793 թվականի մայիսի 31 — հունիսի 2-ի ժողովրդական ապստամբության հաղթանակից հետո ամենամտ շաբաթներին:

Բայց այն բանից հետո, երբ Լուի Դավիթը ստեղծեց անմահ վշտալի կտավը՝ սպանված Մարտտի խոնարհված գլխի և անօգնական կտաված ձեռքի պատկերը, ժողովրդի բարեկամի թաղումից հետո, որը դարձավ համաժողովրդական սգի օր, այն բանից հետո, երբ լուրեր ստացվեցին Լիոնում Շալիեի սպանության մասին, յակոբինյան լիգերները հասկացան, որ այսուհետև հապաղել չի կարելի:

Յակոբինյանները կարող էին ունենալ ամեն տեսակ թերութուններ, բայց նրանք փսխրոտներ կամ խրատամուշներ չէին: Նրանք գործողության մարդիկ էին, որոնք կանգ չէին առնում կես ճանապարհին: Հարվածին պետք էր հարվածով պատասխանել:

Հեղափոխական տեռորի ծագման հարցում, հեղափոխական տեռորի համար քաղաքական պատասխանատվության հարցի մասին ոչ մի անորոշություն, կասկածելի բան չկա. այստեղ հող չկա տատանումների և զանազան կարգի դատողությունների համար: Ամեն ինչ միանշանակ է ու որոշակի: Պատասխանատվությունը տեռորի դեմ պրակտիկայի համար ընկած է ժիրոնդիստների և ֆեոդալարժուական հակահեղափոխության մյուս մասնակիցների վրա: Նրանք առաջինը կանգնեցին տեռորի ուղու վրա և յակոբինյաններին հարկադրեցին հակահեղափոխական տեռորին պատասխանել հեղափոխական տեռորով:

Երբ քաղաքականներից կամ պատմաբաններից ոմանք ձեռքերը աղոթքի նման խաշում են կրծքին կամ աչքերը հառում երկնքին, կամ լուռ հուսահատության այլևայլ շարժումներով իրենց վիշտն են արտահայտում անմեղ զոհված հոգիների առթիվ, երբ նրանք նզովում են Ռոբեսպիերին կամ Մեն-ժյուստին արշուները դաժանության համար, նրանց ներկայացնելով որպես մահվան անհազուրդ դեեր, այս ամենը պետք է դեն շարտել որպես միտումնավոր, ծայրեծայր կեղծ երկերեսանիություն, որպես փորձ ուրիշների վրա բարդելու մեղքը այն հանցագործությունների, որոնց մասնակիցներն են եղել նրանց նախնիները կամ էլ հենց իրենք:

Տեռորի դեմ՝ որպես քաղաքականության, քաղաքական պրակտիկայի միջոցի առաջացման համար պատասխանատվություն են կրում ոչ թե յակոբինյանները, այլ նրանց հակառակորդները: Յակոբինյանների համար հեղափոխական տեռորը, կրկնեք վերջին անգամ, եղել է միայն պատասխան միջոց:

Հենց այս իմաստով էին և՛ Մարքսը, և՛ Էնգելսը, և՛ Լենինը անվերապահորեն հավանություն տալիս գրան:

Բայց այստեղ ծագում են այլ պրոբլեմներ, և լուսվյալը շրջանցել դրանք չի կարելի: Երբ այժմ մեր ժամանակակիցները՝ անգլիացի պատմաբան Կոքենը, կամ իր նախկին հայացքներին զավաճանած և յակոբինյան դիկտատուրայի գլխին լուսանքներ թափող և նրան անարգանքի ենթարկող Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Կոքը, կամ ֆրանսիացի պատմաբաններ Ֆրանսուա Ֆյուրեն և Դենի Ռիշեն ճակատային գրոհ են ձեռնարկել յակոբինյան իշխանության և յակոբինիզմի դեմ ընդհանրապես, ապա նրանց ոգեշնչող քաղաքական դրդապատճառները լիովին ակնհայտ են: Բայց նույնքան էլ ակնհայտ է նրանց գիտական տեսակետների թուլությունը: Կասեմանսփակվեմ միայն մի օրինակով: Ֆյուրեն և Ռիշեն հուշակ էին վատակել ոչ այնքան իրենց լույս ընծայած երկհատոր երկի առաջին հրատարակության արտասովոր ճոխությամբ և արտաքին հարստությամբ, որքան հեղափոխության մեջ յակոբինյան փուլի տեղի ու դերի՝ որոշ ազմուկ և օրինական առարկություններ հարուցած մեկնաբանությամբ: Օգտվելով ավտոմոբիլիստների ժարգոնից, Ֆյուրեն և Ռիշեն պնդում են, որ յակոբինյան իջխանության ժամանակաշրջանում Ֆրանսիան, ինչպես դա հաճախ է պատահում մեծ արագությունների դեպքում, «բշվեց», մի կողմ շարտվեց<sup>186</sup>:

Այս գոհճիկ հորինվածքը հակապիտական է ամենից առաջ այն պատճառով, որ այն անտեսում է հեղափոխական Ֆրանսիայի և արտաքին ու ներքին հակահեղափոխության գերակերչող ուժերի միջև մղված անհաշտ պատերազմի դաժանությունն ու անողորմությունը: Ֆյուրեն և Ռիշեն չեն տեսնում կամ չեն ուզում տեսնել, որ ստեղծված ռեալ պայմաններում՝ կենաց ու մահու պատերազմում ծնվող նոր, վերջին հաշվով բուրժուական հասարակության և հին, Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում դեռևս լիովին տիրապետող ֆեոդալարբուրժուատիստական աշխարհի միջև խիստ, ուժեղ, կենտրոնացված յակոբինյան դիկտատուրան պատմական անհրաժեշտություն էր: Առանց ամուր հեղափոխական իշխանության անհնարին կլինեք պահպանել հեղափոխության հիմնական սոցիալական և քաղաքական նվաճումները, ինչպես և ապահովել Ֆրանսիայի ազգային



հակառակորդների դեմ պայքարի բնագավառից տեղափոխվեց յակորբինյան բլուկի ներսում ծավալված պայքարի ասպարեզը: Այն ժամանակ, երբ գիլիոտին էին ուղարկում Շառլոտա Կորդեին, կամ նախկին թագուհի Մարիա-Անտուանետին, կամ զենք թաքցրած ժիրոնդիստական դեպուտատներին, հեղափոխական տեղորոք քաղաքական պայքարի միջոց էր:

Այս գործողությունների պատասխանատվությունը գերազանցապես դրվում էր Ռոբեսպիերի վրա որպես հեղափոխական կառավարության փաստացի ղեկավարի, և Ռոբեսպիերը շերտաափում այդ պատասխանատվությունից, գտնելով, որ ստեղծված պայմաններում հեղափոխական տեղորոք իրենից ներկայացնում է անհրաժեշտություն, պատասխան միջոցառում հակահեղափոխության գործողությունների դեմ: 1793 թվականի հուլիսի 14-ին, Մարատի սպանության հաջորդ օրը, Յակոբինյան ակումբում արտասանած ճառում Ռոբեսպիերն ասում էր. «Հարկավոր է, որպեսզի Մարատին և Պելետիերին սպանողները Հեղափոխության հրապարակում փոխհատուցեն իրենց սարսափելի հանցագործության դիմաց: Հարկավոր է, որպեսզի բռնակալության մեղսակիցները, Վեստաղբուժ գեպուտատները, որոնք խռովության գրոշ են պարզել, նրանք, ովքեր մշտապես դանակ են սրում ժողովրդի գլխավերևում, ովքեր կործանել են հայրենիքը և, մասնավորապես, նրա որոշ զավակներին, հարկավոր է, ասում եմ ես, որպեսզի այդ հրեշները պատասխան տան մեզ իրենց արյունով, որպեսզի մենք վրեժ լուծենք հանուն ազատության զոհված մեր եղբայրների արյան համար, որ նրանք այդպիսի դաժանությունը թափեցին... Հարկավոր է, որպեսզի մեզանից չուրաքանչյուրը, մոռանալով իրեն, թեկուզև որոշ ժամանակով հանձնվի հանրապետությանը և իրեն անմաքորդ նվիրաբերի նրա շահերին»<sup>17</sup>:

Այս ելույթի մեջ լիովին պարզորոշ սահմանված են տեղորոքական պրակտիկայի քաղաքական դրոպապատճառները, պրակտիկա, որն առաջարկում էր Ռոբեսպիերը՝ «հարկավոր է վրեժ լուծել զոհվածների համար»: Այստեղ տեղորոք սահմանափակվում է պատասխան քաղաքական գործողության շրջանակներով: Եվ Յակոբինյան ակումբում, և Կոնվենտում ունեցած իր բոլոր ելույթներում Ռոբեսպիերն ընդգծում է նույն միտքը, շխտաափելով անձնական պատասխանատվությունից այդ պատժիչ միջոցների համար:

Քայց որոշ ժամանակ անց տեղորոքին սկսեցին ազատ մեկնաբանում տալ: Ամենից առաջ տեղորոքի դաժան սպանության ներկայացվեց գեներալներին: Հանրապետության բանակի, նրա հրամանատարների առջև պարզ երկընտրանք դրվեց՝ հաղթանակ կամ մահ: Եթե ուշադրությամբ զննենք Փարիզի Ազգային արխիվում պահվող հեղափոխության փաստաթղթերը, դժվար չէ նկատել, որ Հանրապետության գրեթե բոլոր գերբերի, խորհրդրդանշանների վրա կրկնվում է այդ կտրական, լակոնիկ պահանջը՝ ազատություն, հավասարություն, եղբայրություն կամ մահ: Մահը դարձել էր այլընտրանք, նրան կարելի էր հակադրել միայն հաղթանակը: Եվ այն գեներալները, որոնք չկարողացան ապահովել հաղթանակը, պետք է բարձրանային կառափնաբան: Այդպիսին էր գեներալներ Կյուստինի, Ուշարի, Վեստերմանի և մյուսների ճակատագիրը:

Ամենադժվարը հեղափոխական տեղորոք մեկնաբանության մեջ վրա է հասնում այն բանից հետո, երբ այն տեղափոխվեց բուն իսկ յակորբինյան բլուկի ներսում ծավալված պայքարի հողի վրա: Յակոբինյան խմբավորումը երբեք միասնական ու համախմբված չի եղել: Նա չէր էլ կարող այդպիսին լինել, բանի որ ներկայացնում էր ոչ թե որևիցե մի դասակարգի, այլ տարբեր դասակարգերի բլուկի շահերը: Այդ մասին արգեն խոսվել է, քայց, միզուցի, պարզության համար մեկ անգամ ես պետք է կրկնել ասվածը: Յակոբինյանները ներկայացնում էին դեմոկրատական միջին և մանր բուրժուազիայի, գյուղատնտեսության և քաղաքի պլերեյական տարրերի, քաղաքային շրջավորության բլուկը, նրանց, ում ֆրանսիացի պատմաբանները սովորաբար անվանում են սանկյույտներ: Բնական է, որ յակորբինյանների դասակարգային անմիատարրության պայմաններում հեղափոխական կառավարությունը նույնպես արտահայտում էր տարբեր դասակարգային շահեր: Եթե հեղափոխության օրհասական ժամանակաշրջանում, երբ հարկավոր էր հեղափոխական Ֆրանսիան փրկել բոլոր կողմերից հարձակվող ինտերվենտների բանակներից, ներքին հակահեղափոխությունից, դավադիրներից, մարդասպաններից, լրտեսներից, որոնք թափանցել էին հասարակության բոլոր ժակոտիներից, եթե այդ ժամանակաշրջանում յակորբինյանները և համապատասխանաբար հեղափոխական կառավարությունը անհրաժեշտությունից ելնելով հանդես էին գալիս միասնական և համախմբված ճակատով՝ ենթարկվելով

Հասարակական փրկութեան կոմիտեի ամօր ձևերին, որն ամբողջապէս կենտրոնացրել էր իշխանութիւնը, ապա այն բանից հետո, երբ ամենազգժարին օրերը հետևում էին մնացել, երբ նշմարվում էր բեկում, երբ ակնբախ էր դարձել, որ Հանրապետութիւնը հաղթում է իր թշնամիներին, սկսեցին ջրի երես դուրս գալ յակոբինյանների և յակոբինյան իշխանութեան բուն էութեան մեջ եղած ներքին հակասութիւնները:

Պարզունակ են այն պատմաբանների դատողութիւնները, որոնք 1794 թվականի գարնանը յակոբինյան բյուրի շարքերում ներքին պայքարի սրումը բացատրում են Մաքսիմիլիան Ռոբեսպիերի կամ Սեն-Փյուստի բնավորութեան առանձնահատկութիւններով կամ էլ ժորժ Գանտոնի՝ նրանց հակազդող խառնվածքով: Դա չէր որոշում իրադարձութիւնների զտրուցման ընթացքը: Անձնական առանձնահատկութիւնները խաղում են և շնչ կարող չբաղալ որոշակի դեր, բայց այդ գերը մեծ մասամբ և տվյալ դեպքում նույնպէս երկրորդական էր: Յակոբինյան իշխանութեան բուն էութեան մեջ պարունակվում էին հակասութիւններ: Այդ հակասութիւններն ամենից ավելի պարզորոշ երևան էին գալիս պայքարի այդ դժվարին տարիներին հարստացած կամ ունեցվածք ձեռք բերած ունեւոր մասի սեփականատերերի և շունեւորների միջև, որոնք առաջվա նման սոցիալական կարիքի մեջ էին:

Այդ հակասութիւններն ունեին և ուրիշ, շատ ավելի խոր հիմքեր: Ընթերցեք Մաքսիմիլիան Ռոբեսպիերի կյանքները՝ ամփոփված նրա աշխատութիւնների 9-րդ և 10-րդ հատորներում, որոնք տալիս են յակոբինյանների առաջնորդի քաղաքական մտածողութեան առավել լիակատար պատկերը<sup>18</sup>: Իր փաստարկումների մեջ Ռոբեսպիերը էլնում է բարոյաէթիկական կատեգորիաներից: Նա խոսում է արատների նկատմամբ առաքինութեան հաղթանակի, բարու և շարի պայքարի, հանցագործութեանը հաղթող արդարութեան մասին: Եվ իր այս բարոյաէթիկական դատողութիւններում նա միշտ անկեղծ է մնում: Նա հենց այդպէս էլ պատկերացնում էր ծավալվող պայքարի իմաստը՝ որպէս պայքար բարու և շարի, արդարութեան և անարդարութեան միջև: Զպետք է մոռանալ, որ նա միշտ մնում է ժան-ժակ Ռոստոյի հավատարիմ հետևորդը, որը պատգամել էր ձգտել քաղաքական պրակտիկայում ապահովելու մարդու «բնական իրավունքների» հաղթանակը: Ռոբեսպիերը կրակոտ և

ակնհայտ թշնամաբերով է խոսում հեղափոխութեան թշնամիների մասին, քանզի նրա պատկերացմամբ Ֆրանսիական հեղափոխականների սկսած գործը համապատասխանում է ս'չ միայն Ֆրանսիացիների շահերին, այն ունի և շատ ավելի ընդհանուր նշանակութիւն՝ հեղափոխութիւնը մարդկային ցեղի հումանիտական մեծ բարեփոխում է: Հումանիզմի տարրերը, հումանիտական մտտեցումը, որքան էլ դա տարիմաստ երևա Ռոբեսպիերի ուսմաներին, միշտ էլ գերակշռող էին մնում նրա կողմից տեղի ունեցող իրադարձութիւնների մեկնաբանութեան մեջ:

Ճիշտ է և այն, որ Ռոբեսպիերը երբեք չի մտտեցել ոչ Գոն Բիշոտին, ոչ Համլետին, և՛ ին տվյալ դեպքում թույլատրելի է համեմատութիւնը դասականութեան այս նշանավոր կերպարների հետ: Նա դուրս գալով կանգնած էր մեզսագործ հողի վրա և նայում էր ուղիղ թշնամիների երեսին: Կարելի է գտնել նրա այնպիսի բնորոշումներ, որոնք հաստատում են, որ այն ժամանակ նա ևս խարխափելով, կարծես բնազդորեն մոտենում էր տեղի ունեցող պայքարի դասակարգային ստատի բմբոնմանը: Նա մշտապէս իրեն անվանում էր աշխատութեան բարեկամ. «Ես հպարտանում եմ, որ ես աղքատ եմ»: Նա հարստութեան չի ցանկանում, և այս իմաստով նա միշտ մնում է հետևողական ուսուցիական, որը ժխտում էր հարստութեանը որպէս ինչ-որ մի հանցավոր և խայտառակ բան: Արեւելահայկական ընկերութեան գործի մեջ խառնված Շարոյի, Բաղիրի, գանձագողերի հասցեին նրա պարսավանքը իր մեջ չի պարունակում ոչ փարիսեցիութիւն, ոչ շահագիտութիւն: Նա համոզված է, որ կեղտոտ ոսկու հետեից ընկած այս մարդիկ խախտել են արդելի սահմանը, հրաժարվել հեղափոխութեան իսկական խնդիրներից:

Բայց անիմաստ կլիներ Ռոբեսպիերից կամ Սեն-Փյուստից, կամ Կատոնից, Լեքայից, իր կենսորին նվիրված հասարակ հշտան Մորիս Դյուպլէից պահանջել հեղափոխական պրոցեսների օրյակտիվ բովանդակութեան ըմբռնում: Այն խոսքով ասած, չի կարելի նրանցից պահանջել հասկանալու այն, ինչ հասկանում ենք մենք, մարքսիստ պատմաբաններս գրեթե երկու հարյուր տարի անց դրամատիկական այն իրադարձութիւններից, որոնց մասին խոսվում է մեր պատմութեան մեջ:

Մաքսիմիլիան Ռոբեսպիերի և նրա ընկերների ողբերգութիւնը, յակոբինյանների ողբերգութիւնն այն էր, որ նրանք

Հասարակական դիտակցության այն ժամանակվա մակարդակի պայմաններում չկարողացան գնահատել այն երևույթները, որոնք այսօր ակնհայտ են մեզ համար:

Ֆրանսիական մեծ հեղափոխությունը բուրժուական էր իր օբյեկտիվ բովանդակությամբ, և այլ կերպ նա չէր կարող լինել ամենից առաջ այն պատճառով, որ նյութական նախադրյալներ չկային ցանկացած ուրիշ որոշման համար: Պատմությունը օրակարգում էր դրել անցումը ֆեոդալիզմից դեպի կապիտալիստական հասարակարգ, և, ինչ էլ որ ասեին, ինչով էլ որ իրենց գայթակղեին այդ դարաշրջանի գործիչները, ոչինչ մեկ այլ, բացի բուրժուական, ժամանակի համար առաջադիմական հասարակարգի հաստատումից, այդ ժամանակ չէր կարող լինել: Խորեոսպիերի և Սեն-ժյուստի հավասարապաշտական երազանքները, նրանց այն հույսերը, որ իրենք կստեղծեն հավասարության իդեալական, արդարացի հասարակություն, անիրագործելի էին:

Այս դարաշրջանի պատմական պրոցեսի օբյեկտիվ բովանդակությունը Ֆրանսիայի հողի մաքրումն էր ֆեոդալական բուրժուական քանքներից, որոնք խոչընդոտում էին կապիտալիզմի զարգացմանը: Յուրաքանչյուր կառավարությունը իր գործունեության մեկ տարվա ընթացքում վճռեց այն զլխավոր խնդիրները, որոնք ծառայում էին ֆրանսիական հեղափոխության առջև: Այն շարքից և արձատարիչ արեց ֆեոդալական մնացուկները: Այն լուծեց հեղափոխության ազդային խնդիրները, հետ շարունակ ինտերվենտների բանակները և ապահովելով ֆրանսիական հանրապետության ազգային ամբողջությունը, անկախությունն ու միասնությունը, որը գարծավ եվրոպայի ամենաուժեղ տերությունը: Այդ կառավարությունը ոչնչացրեց կամ խոր ընդհատակ ըրեց հին վարչակարգի բոլոր կողմնակիցներին կամ նոր կարգերի, հեղափոխության տարիներին կատարված սեփականության նոր վերարաշխման հակառակորդներին:

Յակորինյան իշխունությունը անխնա հեղափոխական տեղոր էր կիրառում սուփի պայմաններում կառավարության կողմից խստորեն անցկացվող մաքսիմումի, պարենային ծրագրի մասին օրենքները խախտողների դեմ: Շատ սպեկուլյանտներ հատուցեցին իրենց լիտով, անգրությունները ակամալից կառափնարանի դճ դարձան:

Բայց չպետք է աչքաթող անել այն, որ, կարգավորելով պարենի բաշխումը, տիրաբար խառնվելով անտեսական կյանքի տարբեր բնագավառներին, հեղափոխական կառավարությունն անձեռնմխելի թողեց արտագրության մասնավոր եղանակը: Վերացնելով նոր, բուրժուական հասարակարգի բոլոր հակառակորդներին, դրանով իսկ նա անհրաժեշտ ազատություն ապահովեց բուրժուական նոր հարաբերությունների համար: Հեղափոխության դարաշրջանի կենցաղագիրները նշում էին, որ այդ պարմանայի ժամանակ հասարակ մարդկանց ճաշակած դաժան կարիքի, սուփի պատկերների կողքին կարելի էր տեսնել և ինչ-որ անհայտ մարդկանց թույլ տված ղեխություն, կյանքի անհոգ վատնումի, խրախճանքների, գինարբուքի սլատկերներ: Աննկատելիորեն բուրժուական հասարակության բոլոր ծակոտիներից հայտնվում էր նոր, գիշատիչ, շահագիտական բուրժուազիան:

Հեղափոխությունը գործածության մեջ մտցրեց ոչ միայն դոկտոր Կիրտենի հայտնագործությունը՝ անդադար աշխատող կառավարանը, այն բարենպաստ պայմաններ ստեղծեց նաև սրբիթաց հարստացման համար: Ինչպե՞ս կարելի էր կարողություն կուտակել կարճ ժամանակում: Հետագայում Ֆրանսիայի նշանավոր մեծատուն Ուլրարը իր հիշողություններում անկեղծորեն պատմում էր, թե ինքն ինչպես է ստեղծել իր հարստությունը: 1789 թվականին բռնկվեց հեղափոխությունը, Ուլրարը՝ գործնական հնարամտության տեր և հուսալի գործելաձև ունեցող այդ խելացի տղամարդը, գլխի ընկավ, որ Փարիզում առաջին թերթերի երևան գալուց հետո սկսվեց նոր, Ֆրանսիայում դեռևս չտեսնված գրականություն, մասսայական մամուլի՝ թերթերի, թոուցիկների, գրքուկների լայն տարածումը: Մասսայական մամուլի ստեղծումը, բազմաթիվ նոր թերթերի լույս ընծայումը պետք է շեշտակիորեն ավելացնեին թղթի պահանջը: Ուլրարն ազատ դրամ ուներ, և իր ամբողջ կապիտալը նա ծախսեց գնելու համար թուղթ այն գներով, որոնք 1789 թվականի սկզբներին դեռևս բարձր չէին: Իսկ հետո, դառնալով եթե ոչ մոնոպոլիստ, ապա թղթի պաշարների ամենախոշոր տերերից մեկը, նա վերավաճառելու միջոցով դիզեց միլիոնանոց կարողություն: Կարճ ժամանակում Ուլրարը դարձավ միլիոնատեր:

Այն, ինչի մասին պատմում էր Ուլրարը, անում էին տասնյակ և հարյուրավոր ուրիշ ձեռներեց գործամուղներ, այդ մասին չպատմելով ոչ գրական, ոչ էլ այլ ձևով: Ինչի՞ հաշվին կարելի



Տեղափոխական տակտիկայի մեծ վարպետ: Գանտոնը մնաց իբրև Ֆրանսիացի հայրենասեր և իր կյանքի վերջին օրերին Այժմ լիովին ապացուցված է, որ Գանտոնը, տեղեկացված լինելով իր գեմ նախապատրաստվող հարվածի մասին, ռեալ հնարավորություններ ուներ փախչելու Ֆրանսիայից: Նշանակալից են Գանտոնի՝ պատմության մեջ մտած խոսքերը. «Մի՞թե կարելի է հայրենիքը տանել կոշիկի ներբանների վրա»: Սա գեղեցիկ ֆրազ չէր, այս խոսքերն արտահայտում էին Գանտոնի էությունը: Գանտոնը հրաժարվեց իրեն ընձեռնված փախչելու հնարավորությունից: Նա վտանգին ընդառաջ էր գնում գլուխը բարձր պահած:

Մենք փոքր ինչ շեղվեցինք մի կողմ և հեռացանք հիմնական նյութից: Ուզում էր այդ Գանտոնը թե ոչ, բայց իր քաղաքական և պետական հեղինակության շնորհիվ նա ակամայից դառնում էր այն կենտրոնը, որի շուրջն էին միավորվում հեղափոխական կառավարությունից բոլոր դժգոհները այժից: Բոլոր նրանք, ովքեր հակայական փողեր էին գիզում, բայց հարկադրված էին թաքցնել գրանք խնայատուփերում և իրենց վրա ուշադրություն չգրավելու համար շրջել համեստ, անշուք կոստյումով, բոլոր նրանք, ովքեր հիմքեր ունեին զգուշանալ Հասարակական փրկության կոմիտեի ծանր ձեռքից, ովքեր տազնապով էին նայում Ռոբեսպիերին, թե որդյոք նա չի՞ նկատում իրենց գործած գաղտնի արարքները՝ բոլոր նրանք հովանավորություն ու պաշտպանություն էին փնտրում: Կրկնում ենք ևս մի անգամ, Գանտոնն ուզում էր այդ թե ոչ, բայց նա ակամայից դառնում էր հարստացած մարդկանց այդ խմբի պաշտպանը:

Զարգացող, արագորեն զորեղացող նոր, շահագիտական բուրժուազիան էլ հենց դարձավ այն դիխավոր ուժը, որ ներուճակորեն ուղղված էր հեղափոխական կառավարության դեմ: Որոշ ժամանակ նա պետք է հաշտվեր դրա հետ, թեև զբաղված էր միայն իր շահատուխամբ, միմյանց շահատուխամբ, ուրիշ ոչնչով:

Բայց ինչ-որ մեկը պետք է պաշտպաներ Ֆրանսիան ինտերվենյաների բանակներից, ինչ-որ մեկը պետք է ապահովեր հաղթանակը ռադիկալիստներում: Այդ բանը կարող էին անել երկաթե կոփվածքի տեր մարդիկ, Ռոբեսպիերի, Սեն-ժյուստի, Կուտոնի, Լեբայի մեծություն մարդիկ, այլ ոչ թե այն բոլոր գործառնողները, ընչաքողացիները, որոնք մտահոգված էին իրենց

գրպանները լցնելով: Եվ գործածողները ծափահարում էին Ռոբեսպիերին, իրենց հայտարարում Լեոան հավատարիմ ղեկավարներ, հեղափոխականներ և հեղափոխական կառավարության պաշտպաններ: Նրանք գիտեին, որ եթե ինտերվենյաները հաղթեն, եթե իրականացվի չին կարգերի վերականգնումը, ապա հարկ կլինի տալ բոլորը, ոչ միայն կողոպտած հարստությունը, այլև կալվածքներն ու ղղակները, որոնք նրանք կարողացել էին ձեռք բերել չնչին գնով, բոլորը ստիպված կլինեին հատուցել ամեն ինչի համար: Այդ պատճառով նրանք մինչև որոշ ժամանակ պաշտպանում էին Ռոբեսպիերի գլխավորած հեղափոխական կառավարությունը:

Բայց երբ 1794 թվականի գարնան մոտ արդեն լիովին ակնհայտ դարձավ, որ հեղափոխությունը հայթում է, որ Հանրապետության բանակները հակահարձակման են անցնում ինտերվենյաների բանակների դեմ, երբ Ֆրանսիայի մի դեպարտամենտը մյուսի հեռեկից աստիճանաբար անցնում է Հանրապետության իշխանության տակ, այդ ժամանակ նրանց միջավայրում միտք հղացավ ուղիներ փնտրելու ուղիներով: աչլ խիստ ու պահանջկոտ իշխանությունից:

Առաջատար դասակարգային ուժ դարձած նոր, շահագիտական բուրժուազիայի շրջադարձը ղեկի աջ առաջ բերեց և խոշոր, սեփականատիրական գյուղացիության շրջադարձը: Զպետք է մոտանալ, որ ազգային ունեցվածքը վաճառելու, ինչպես և համայնքային հողերը բաժանելու, վտարանդիների տիրույթները վերավաճառելու հարյին հարստացումը ոչ միայն բազաբային բուրժուազիան, այլև գյուղացիական վերնախավը: Հեղափոխության տարիներին առաջացավ նոր դասակարգ՝ սեփականատիր գյուղացիների բողոմամարդ դասակարգը, որ կառույց էր ձեռք բերած յուրաքանչյուր հողատիրից: Այդ սեփականատեր գյուղացիները նույնպես չակոբինյան իշխանության հետ հաշտվում էին մինչև այնքան ժամանակ, քանի դեռ սպառնում էր սենյորների, կալվածատերերի վերադարձը, քանի դեռ գյուղացին վախենում էր, որ իրենից կխլեն հողը և կստիպեն նորից աշխատել ազաների համար: Ֆրանսիական բանակը հիմնականում գյուղացիական բանակ էր: Եվ գյուղացիները թշնամու պորբերի հետ կենաց ու մահու կոփվ էին մղում, որովհետև նրանք այդ պատերազմում պաշտպանում էին իրենց ձեռք բերած սեփականությունը, կոխում էին իրենց կենսական շահերի համար:

Բայց երբ հաղթանակն սկսեց թերվել Լանրապետության կողմը, հատկապես Ֆլեբյուսի մոտ 1794 թվականի հունիսին տեղի ունեցած վճռական ճակատամարտից հետո, երբ վերականգնման վտանգը դադարեց իրական սպառնալիք լինելուց, գյուղացիությունը, ամենից առաջ ունեւոր գյուղացիությունը, սկսեց բացահայտ կերպով իր զգոհությունը հայտնել յակոբինյան դիկտատուրայից: Գյուղացիները դրա համար միանգամայն ունեալ նյութական հիմքեր ունեին: Յակոբինյան իշխանությունը խստորեն պործում էր: Հարկավոր էր 14 բանակներին կերակրել, հարկավոր էր դինվորներին ամեն օր հաց տալ: Եվ հեղափոխական կառավարությունը շատ էլ նրբանկատություն չէր ցացաբերում, որպեսզի ապահովեր բանակի մատակարարումը: Զատանավելով, Հասարակական փրկության կոմիտեն բնգունեց մի շարք օրենքներ հացահատիկի, հացի, պարենի բնագրավման, պարտադիր մատակարարումների մասին, որով գյուղացիները պետք է ապահովեին բանակին: Ժամանակին ակադեմիկոս Ն. Մ. Լուկինը համոզիչ կերպով ցույց տվեց, թե որքան մեծ էր գյուղի ունեւոր շերտերի զգոհությունը հեղափոխական կառավարության անցկացրած բռնագրավումից<sup>189</sup>:

Եվ այսպես, բուրժուազիայից հետո յակոբինյան կառավարության դեմ շրջվեց ն' ունեւոր, և՛ զգալի շահով միջակ գյուղացիությունը: Յակոբինյան դիկտատուրայի սոցիալական բազան արագորեն ողողահարվում էր:

Այս շօտագործվող պրոցեսները, որ այնքան պարզ ու ակնհայտ են մեզ՝ XX դարի մարդկանց համար, սակավ տեսանելի էին հեղափոխական պայքարի անմիջական մասնակիցներին:

## X

1794 թվականի սկզբներից արդեն առավել կամ պակաս որոշակիությամբ, հատկորեն սկսեցին նշմարվել հակասություններ բուն իսկ յակոբինյան խմբավորման մեջ: 1794 թվականի մարտին Ռոբեսպիերը, Մեն-ժյուստը և Կուտոնը արդեն չէին կարող խաբվել այն բանում, որ հեղափոխական կառավարության դեմ ճնշում է առաջանում երկու կողմից: Կարծես առաջին պլան էր մղվում յակոբինյան բլոկի շարքերում ձախ խմբավորումներից (որոնց հաճախ սխալմամբ անվանում են էբերականներ) նկնող վտանգը: էբերականների խումբը սոսկ

ձախ թևի մի մասն էր և իրենից չէր ներկայացնում ինչ-որ միատարր բան: Ինքը՝ էբերը, «Պեր գյուշեն» խիստ հանրաճանաչ թերթի՝ կեղծ ժողովրդային, կիսաանճաշակ ոճ ունեցող թերթի խմբագիրը, հստակ քաղաքական հայացքներ չունեցող մարդ էր՝ նրա թերթը, որ հավակնում էր սանկյուլոտների քաղաքական խոստովողի դերին, 1793 թվականի աշնանից մինչև 1794 թվականի մարտը հարցերի մեծ մասի նկատմամբ ծայրաստիճանի ձախ, որպեսզի շասենք «ձախտարական», դիրք էր գրավում: էբերը ներկայացնում էր յակոբինյան բլոկի ծայրահեղական թևը՝ Ֆուշեի և Շոմեաի հետ միասին էբերը ժամանակին հանդես էր գալիս որպես այսպես կոչված սպաքրիստոնեացման քաղաքականության պրոպագանդիստ և կազմակերպիչ: Ներգործելով կոպիտ մեթոդներով, այդ քաղաքականություն կողմնակիցները պահանջում էին, որպեսզի քահանաները հրաժարվեն իրենց աստիճաններից, փակեն եկեղեցիները, վարեն բացահայտ հակակեղեցական քաղաքականություն: Լեպաքրիստոնեացման քաղաքականությունը եկեղեցու սպասավորների նկատմամբ կիրառած իր հալածանքներով հարուցեց գյուղացիների զգոհությունը: Նրանք դատապարտում էին այդ քաղաքականությունը: Ռոբեսպիերն իր լայն մտահորիզոնով և պետական խնդիրների հստակ բմբոնումով միջամտեց ու խափանեց սպաքրիստոնեացնողների գործունեությունը: Նա հրապարակորեն դատապարտեց եկեղեցիների ստիպողական փակումը և քահանաների հալածանքները որպես հեղափոխական կառավարության քաղաքականությանը չհամապատասխանող միջոցառումներ: Հասարակական փրկության կոմիտեի հեղինակությունն այնքան մեծ էր, որ էբերը, Շոմեաը և Ֆուշեն շտապեցին ապաշխարել իրենց մեղանշումների համար, և նրանք բոլորը դատապարտեցին սպաքրիստոնեացման քաղաքականությունը:

Բայց էբերը սանկյուլոտներին, հասարակ մարդկանց ծառայելու դրոշի ներքո առաջարկում էր և այնպիսի միջոցներ, որոնք անմիջականորեն շոշափում էին հեղափոխական իշխանության շահերը: Նա կոչ էր անում անխնա, դաժան պատերազմ մղել բոլոր կարգի՝ ոչ միայն խոշոր, այլև մանր առևտրականների,

\* ՍՄԿԿ Կենտկոմին աղբյուր ՄԼԻ գրադարանում կա էբերի «Père Duchène» թերթի լրիվ հավաքածուն:

բանջարավաճառների, բողկ վաճառող կանանց դեմ: նրա աչքում այս բոլորը վերածվել էին հեղափոխության թշնամիների: Սա արդեն վաղանգավոր էր. այսպիսի «ճախությունը», խոսելով այսօրվա տերմիններով, սպառնում էր հեղափոխական իշխանութիւնի դեմ ըմբոստացնել մանր բուրժուազիային, ընչազուրկ ամբոխին:

Էբերի թերթի քննադատական նետերն ուղղված էին Գանտոնի ու դանտոնականների, այսպես կոչված հանդուրժողականների դեմ: Բայց հարվածներն ուղղելով Գանտոնի դեմ, միաժամանակ նա ակնարկում էր և Ռոբեսպիերի ու Սեն-Շյուստի հեղափոխական կառավարությունը, թեև էբերն այդքան համարձակություն չունէր այդ բանն ասել բարձրաձայն:

1794 թվականի մարտին էբերը և նրա կողմնակիցները փորձեցին ապստամբություն բարձրացնել հեղափոխական կառավարության դեմ: Կորդելիերների ակումբում, որտեղ հանդես էր գալիս էբերը, նրանք, Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան ծածկելով սգո քողով, ապստամբության կոչ էին անում, թեպետ առանց ձայնի մեջ պատշաճ վճռականության ու աներիտության: Կոչ անելով ապստամբել հեղափոխական կառավարության դեմ, կրկնել մայիսի 31—հունիսի 2-ի օրերը, էբերը հույս ուներ, որ Փարիզի կոմունան կպաշտպանի այդ կոչը: Բայց Փարիզի կոմունան Շոմետի զլխավորությամբ սահմանադատվեց էբերականներից և հանդես եկավ այդ արկածախնդրական պլանի դեմ: Սեկցիաների մեծամասնությունը նույնպես շաշտպանեց էբերի կոչը: Զգալով, որ իր գործը տանու է տրվում, էբերն սկսեց ապացուցել, որ ինքը նկատի չի ունեցել ապստամբություն կառավարության դեմ: Այնուամենայնիվ նրա ճակատագիրն արդեն որոշված էր: Մարտի 24-ին էբերը, Ռոնսենը, Վենսանը, Մոմորոն և էբերականներին մոտ քաղաքական ուրիշ առաջնորդներ, մեծ մասամբ ձախ չակորինյաններ, բանտարկվեցին և հանձնվեցին Հեղափոխական տրիբունալին:

Էբերականների դատավարությունը նոր երևույթ էր հեղափոխական տեռորի կիրառման պրակտիկայում: Մինչև այժմ գիլիոտինը գործում էր միայն հեղափոխության թշնամիների դեմ: Էբերականների դատավարությունը առաջին քաղաքական դատավարությունն էր, որտեղ տեռորը դարձավ յակոբինյան բլոկի ներսում ծագած տարաձայնությունների լուծման գործիք:

Անձամբ էբերը դատավարության ժամանակ ներկայացավ ծայրաստիճան անհրապույր տեսքով: Նա փոքրոգի էր, երկչոտ, մեղքը բարդում էր ուրիշների վրա, փորձում էր հեռանալ պատասխանատվությունից և ներկաների վրա շափազանց ծանր սպավորություն գործեց: Բայց ինչպիսին էլ լինեք էբերի վարքագիծը, այդ դատավարությունը սկզբունքորեն կարևոր էր, որովհետև այստեղ հեղափոխափան տեռորի սուր ծայրը շրջված էր միևնույն խմբավորման անդամների դեմ:

Դրա համար Ռոբեսպիերը քաղաքական պատասխանատվություն կրո՞ւմ էր, թե ոչ: Այո՛, իհարկե: Նա գիտեր, թե ինչ է գնում, ինքը՝ այդ դատավարությունն էլ իրավական տեսակետից բացահայտ շեղում էր դատավարության հանրահայտ նորմերից:

Էբերականների դատավարությունն անցնում էր այսպես կոչված բազմախառնուրդ ձևով: Այդ հնարանքի էությունը, որի հայտնագործումը վերագրվում է ալեյի հաճախ Ֆուկիե-Տենվիլին՝ Հեղափոխական տրիբունալի դատախազին, հետևյալն էր: Այս կամ այն քաղաքական ակցիաներում իսկապես մեղավոր անձինք մեխանիկորեն միանում էին ուրիշ անձանց խմբին, որոնց հետ իրական կյանքում կապված չէին: Օրինակ, էբերականների դատավարությանը կցվեց օտարերկրյա լրտեսների (համենայն դեպս նրանք այդպես ներկայացան ժողովրդին) մի խումբ, որոնց թվում էին Պրուլին, Պերեյրան, Դեֆին և ուրիշներ: Բազմախառնուրդն (ամալգամ) էլ հենց դա էր. էբերականների հետ ոչ մի առնչություն չունեցող մարդիկ միավորվել էին նրա հետ: Դատավարությանը մասնակցում էր և ուղղակի ոստիկանական գործակալը, որը մերկացվեց նրանով, որ վերջում միակ կենդանի մնացածն էր դատավարության բոլոր մասնակիցներին<sup>100</sup>:

Գրեթե արդյոք Ռոբեսպիերը այս բոլոր մանրամասների, այս բոլոր իրավախախտումների մասին: Դժվար է այդ մասին դատել, իհարկե, նա ամենահաս չէր, և իսկն ասած պատժիչ մարմինների ապարատը նրա ձեռքում չէր՝ այն ենթարկվում էր Հասարակական անվտանգության կոմիտեին, բայց էբերականների դատավարության համար քաղաքական պատասխանատվություն նա էր կրում: Էբերի, Մոմորոյի, Ռոնսենի, Վենսանի մահապատիժը կանխորոշել էր Հասարակական փրկության

կամխտե՛ն, դեռևս մինչև Հեղափոխական արիբունայի կողմից նրանց մահվան դատավճիռ կայացնելը:

Պայքարը յակոբինյան բլուկի ներսում Ռոբեսպիերին հարկադրում էր ավելի անաչ գնալ: Դանտոնականներին բացահայտ թշնամի էրեքականների պատմությունը հասցրեց «հանդուրժողականների» խմբի շեշտակի հզորացմանը: Գլխավոր հակաակոբրոններն այնուամենայնիվ աչ ուժերն էին, այլ ոչ թե ձախ, և ձախերի թվին պատկանող խմբավորումներին հասցված հարվածները (հիմնավորված թե ոչ՝ դա առանձին հարց է) օրջեկտիվորեն ուժեղացնում էին. աչերին Հեղափոխական կառավարությունը գրոհի ենթարկող աչ թեկի այդ աճող գերի արտաքին արտահայտությունը կամիլ Դեմուլենի «Հին կորդելիեր» թերթի հրատարակումն էր: Տաղանդավոր լրագրող, սուր բանավիճող կամիլ Դեմուլենը համարից համար ավելի անզուսպ, ավելի կտրուկ էր հարձակվում Հասարակական փրկության կոմիտեի վրա:

Ռոբեսպիերի համար դանտոնականների դեմ պայքարի հարցը հոգեբանորեն բարդանում էր նրանով, որ նա անձնական բարեկամությամբ էր կապված կամիլ Դեմուլենի հետ: Նրանք մի ժամանակ դպրոցական ընկերներ էին, նստել էին համարյա նույն աշակերտական նստարանին և լավ հարաբերություններ էին պահպանում մինչև վերջին օրերը: Ռոբեսպիերի սեւագիր նոթեթում, որոնք նրա մահից հետո ստացան «Հողվածների դանտոնականների դեմ» անվանումը, Մարտիմիլիան Ռոբեսպիերը գրում էր. «Կամիլ Դեմուլենը իր երևակայության հեղհեղուկության և փառասիրության պատճառով ընդունակ էր դառնալ Ծաբբի և Դանտոնի կուրորեն նվիրված համախոհը: Այդ ճանապարհով վերջիններս նրան մղում էին հանցագործության. բայց նրանք Դեմուլենին իրենց կապեցին միայն կեղծ հայրենասիրությամբ, որ երեսանց ձևացնում էին նրանք: Դեմուլենը ցուցաբերեց շիտակություն և հանրապետականություն, կրակոտ կերպով իր թերթում նախատեսելով Միբաբուլին, Լաֆայետին, Բարնավին ու Լամետին այն ժամանակ, երբ նրանք հզոր էին ու հռչակավոր, և այն բանից հետո, երբ նա նախկինում անկեղծորեն զովաբանում էր նրանց»<sup>101</sup>: Այս ուշադրավ տողերը ցույց են տալիս, որ վճռական գործողությունների նախորդին Ռոբեսպիերը դեռ պահպանում էր նախկին բարեհաճությունը Դեմուլենի նկատմամբ:

Դանտոնի և դանտոնականների դատավարությունը թեպետ շունեք այնպիսի մանրամասն ու լիակատար արձանագրություն գրառում, ինչպես էրեքականների դատավարությունը, բավականաչափ ամբողջական է լուսաբանված մասնագիտական գրականության մեջ և նրա մասին կարելի է միանգամայն հստակ պատկերացում կազմել: Այստեղ հայտնիին ավելացնելու գրեթե ոչինչ չկա: Թայց, միգուցե, պատմաբանի համար հոգեբանորեն շատ ավելի կարևոր են, քան բուն դատավարությունը (որի էլքը նախնապես կանխորոշված էր), նրա նախնական քանակցությունները, իհարկե, ոչ ձևական, իրավաբանական բնագավառում: Ես նկատի ունեմ մի այլ բան: Ինչպե՞ս հասկանալ երեկվա ընկերների՝ կենսական ուժերով, անարիթ բերկրանքի շահելությունից բխող լավատեսությամբ անլեցուն երիտասարդների ներողամիտ անշատման, խորթացման կործանարար աշխարհն անցնելու հոգևոր պրոցեսը, որին հետևում է կարճատև, անընդհատ արագացող, անկասելի վայրէջքը դեպի մահվան ստորերկրյա թագավորություն:

Ալֆոնս Օլարի հրատարակած Յակոբինյան ակումբի արձանագրություններից, թեկուզև անկատար կարճատև գրառումով, հայտնի է, թե ակումբում ինչպես է անցել կամիլ Դեմուլենի «Հին կորդելիեր» թերթի (հիշեցնենք, որ այդ թերթի վերջին համարը բանագրավվել է հեղափոխական կառավարության որոշմամբ) վերջին համարների և նրա խմբագրի վերաբերյալ հարցի քննարկումը: Արժե՞ն ավելացնել, որ 1794 թվականի դարնանք Դեմուլենի հարցի քննարկման բոլոր մասնակիցներն արդեն միանգամայն պարզորոշ հասկանում էին, որ Յակոբինյան ակումբից վտարումը նշանակում է գրեթե ինքնաբերաբար գործը հանձնել Հեղափոխական արիբունային:

Թող ինձ ներին խստասիրա դատավորները՝ իմ գրչակից պատմաբան-մասնագետներն ու խստապահանջ ընթերցողները, որոնք չեն սիրում օրկիցե մի շեղում հաստատված նորմերից, այն բանի համար, որ Դեմուլենի ճակատագրի համար վճռական երատի ստույգ փաստաթղթերով հաստատվող մանրամասները շարադրելու փոխարեն ես զնացի փոքր ինչ այլ ճանապարհով:

Ես փորձեցի, հենվելով պատմաբանին շնորհված գիվիկացման իրավունքի վրա, պատկերել Դեմուլենին Յակոբինյան ակումբից հեռացնելու նույն գրվազը, բայց մի փոքր այլ կերպ, կամիլի կնոջ՝ Լյուսիլ Դեմուլենի ընկալման միջոցով:



ուծն էր երկրում: Անկախ այն բանից, թե հեղափոխական կառավարության մեջ կամ Կոնվենտում ինչպիսի դեր էին խաղում Դանտոնի համախոհներն ու կողմնակիցները, նրանք օրյեկտիվորեն ներկայացնում էին դասակարգային այն ուժը, որի հզորությունն օրըստօրի աճում էր: Ուզում էր այդ Դանտոնը թե ոչ բայց նա դառնում էր բուրժուազիայի այն շրջանների, միգրացիանգամ ավելի լայն՝ ընդհանրապես ունևոր սեփականատեր խավերի ղեկավարը, որոնք գտնում էին, որ ժամանակն է հեղափոխական ղեկավարացիաներից, արտակարգ միջոցների վարչակարգից անցնել բուրժուազիայի սովորական հանրապետության, որը հնարավորություններ կբացի հեղափոխության գործնական նվաճումների իրականացման համար: Այդ ուժն աճում էր օրավուր, ժամ առ ժամ, այն դառնում էր հարուստ, տնտեսապես ազդեցիկ և արդեն չէր կամենում լսել ճառեր անաքինության, հայրենիքի նկատմամբ պարտքի, հերոսության, հավասարության սրբազան սկզբունքների մասին, այն ամենի մասին, ինչ հակասում էր պարզ ու կոպիտ պահանջմունքին՝ փութով ու լիովին օգտվել իր հաճույքների համար այդ ժամանակաընթացքում ձեռք բերած նյութական բարիքներից:

Մեկ անգամ ևս կրկնում եմ, որ այս տողերում տրված է այն ժամանակ կատարվող սոցիալական պրոցեսների սխեմատիկ, եթե կուզեք, պարզեցված պատկերումը: Դանտոնը անհատական մեծ շնորհքի, բազմակողմանի տաղանդավոր մարդ էր, և կասկածի ենթակա չէ, որ նա իր խնդիրները հեղափոխության տվյալ փուլում ամենևին էլ այնպես հասարակ չէր պատկերացնում, ինչպես արդեն ասվեց: Ընդունված է համարել, և այստեղ չի կարելի չհամաձայնել այն հեղինակների հետ, որոնք ոչ քիչ թվով աշխատություններ են ստեղծել Ֆրանսիական նշանավոր քաղաքական գործչի մասին, որ Դանտոնի 1794 թվականի գարնան քաղաքական ծրագիրը պահանջում էր հեղափոխական վարչակարգի մեղմացում, Գթության կոմիտեի ստեղծում, տեղորի դադարեցում կամ նրա ղգալի թուլացում և աստիճանական անցում սահմանադրական հանրապետական վարչակարգի: Այս բնութագիրը նույնպես խիստ ուղղագիծ է, բայց տվյալ պատմության խնդրի մեջ չի մտնում Դանտոնի կերպարի քննարկումը նրա ամբողջ բարոյության ու հակասականության մեջ: Խոսքն այլ բանի մասին է:

Պայքար սկսելով Դանտոնի դեմ, Ռոբեսպիերն իրեն հաշիվ էր տալիս (և չէր կարող չտալ) այն մասին, որ իրեն որպես հակառակորդ հանդես է գալիս մի քաղաքական գործիչ, որն իր հետ գրեթե հավասար հեղինակություն ուներ: Ռոբեսպիերն իրեն հաշիվ էր տալիս այն մասին, որ Դանտոնի դեմ պայքարն ավելի լծվար կլինի, քան էրբերի կամ ինչ-որ մի Պրուլիի դեմ: Ռոբեսպիերը պետք է խորհեր և այն մասին, թե որքա՞ն թուլատրելի է հեղափոխության առջև հսկայական ծառայություններ մատուցած քաղաքական գործիչների նկատմամբ կիրառել հեղափոխական տեղորի այն նույն միջոցները, որոնք կիրառվում էին էրեթականների նկատմամբ: Այստեղ վերստին հարց էր առաջանում հեղափոխական տեղորի թուլատրելիության սահմանների մասին: Ի՞նչ էր նշանակում ժորժ Դանտոնին կամ Կամիլ Դեմուկենին հանձնել Հեղափոխական տրիբունալին: Դա նշանակում էր նրանց ուղարկել գլխտոին: Հասարակական փրկության կոմիտեն քաղաքական դատավարություններն այն բանի համար չէր սարքում, որպեսզի բացեր ցանկացած հնարավոր որոշում թուլատրող բանավեճեր: Դատավեճերը հայտնի էր ավելի առաջ, քան կսկսվեր դատավարությունը: Իսկ դատավարությունն անցկացվում էր հենց նրա համար, որպեսզի անգոյության դատապարտեր հակառակորդին:

Որպեսզի հոգեբանորեն բացատրել, թե ինչպես անտարակուսելիորեն ազնիվ մարդը, որը քաղաքական մտադրություններում ձգտում էր ինքն իր առջև միշտ ազնիվ մնալ, ինչպես կարող էր Ռոբեսպիերը ժորժ Դանտոնին և Կամիլ Դեմուկենին կամ Ֆիլիպոյոնի և մյուս ընկերներին մահապատժի հանձնելու որոշում ընդունել, պետք է հասկանալ Անկաշառի հայացքների համակարգը:

Ռոբեսպիերը համոզված էր, որ ժողովրդի հսկայական ջանքերից հետո, կատաղի ճակատամարտերից և վերջապես հակահեղափոխության դեմ մղվող պայքարի մեջ բեկում նշմարվելուց հետո Հանրապետությունն ավելի է մոտենում իր իդեալների իրականացմանը: Այն «ոսկեդարը», հավասարության և արդարության այն թագավորությունը, մարդկային հասարակության այն միաձուլումը մեծ, միշտ ծաղկող կանաչ բնության հետ, որի մասին երկար տարիներ երազում էր ժան-ժակ Ռոստոյի հետևորդը, և որը ձգտում էր կենսագործել հեղափոխական կառավարության ղեկավար Մաքսիմիլիան Ռոբեսպիերը, այդ

իղեալական աշխարհը, թվում էր Ռորեսպիերին, այնքան էլ հետո չէ: Ի՞նչն է խոչընդոտում այդ նպատակին հասնելու համար: Ես խնայեցի միայն այդ խոչընդոտները ուսուցիչներին էին, արիստոկրատները: Իղեալական հասարակարգին մտանալու ճանապարհին հակառակորդների երկրորդ էջերն էին ֆելլաաններն էին, Լաֆայետները, Բայնները, Մունինները և սահմանադրական միապետության այլ համախոհներ: Հեղափոխությունը նրանց նույնպես դեմ շարտեց և մարտից իր ճանապարհից: Երրորդ էջերն էին ժիրոնդիստները՝ Բրիսոն, Վերնիսն, Բյուզոն, Ռուանը և ուրիշներ: 1793 թվականի մայիսի 31—հունիսի 2-ի ժողովրդական ապստամբությունը ջախջախեց ժիրոնդան և ժիրոնդիստներին:

Ժիրոնդային հաղթելուց հետո կարճ ժամանակ գոյատևեց այն պատրանքը, թե իբր այժմ կարելի է անմիջապես անցնել հավասարության այդ արդարացի հասարակությանը: Ռորեսպիերի գրած 93 թվականի սահմանադրության նախագիծը և Կոնվենտի ընդունած Հանրապետության սահմանադրության նոր տեքստը սպառնացում էին, որ Լեոսն առաջնորդները, յակոբինյանները գրեթե լիովին համոզված էին, թե իրենք մոտ են այդ արդարացի, բարձր հասարակարգի ստեղծմանը:

Կյանքի պրակտիկան խորտակեց այդ հույսերը, հերքեց գրանք: Կառավարչական աշխարհի այդ հասարակությանը հասնելու համար պետք էր դեռ հաղթահարել այնպիսի հզոր հակառակորդների ճնշումը, ինչպիսիք էին ֆեոդալական եվրոպան, եվրոպական երկրների ամբողջ կապիցիան, որոնք հենվում էին ներքին հակահեղափոխական ուժերի վրա: Հունիսի 2-ից հետո նկատվող հակառակորդները բազմաթիվ անգամ ուժեղ էին նախկիններից: Բայց նույն փորձը ցույց տվեց, որ յակոբինյաններն ի վիճակի են լուծել այդ, թվում է թե, աներևակայելիորեն դժվարին խնդիրը: Նրանք կատարեցին անհավանականը: Աղքատ, քաղցած, մեկուսացված Ֆրանսիական հանրապետությունը, մարտնչելով ամբողջ կամ գրեթե ամբողջ ֆեոդալական հակահեղափոխական եվրոպայի դեմ, կարողացավ հաղթել նրան: Դա հրաշք էր, բայց 94 թվականի գարնան շեմին այդ հրաշքը դարձավ իրականություն, ունալուստ: Դրան հավատացին բոլորը, հավատացին Հանրապետության բարեկամներն ու նրա հակառակորդները: Բոլոր սահմանափակաբանները Հանրապետության բանակներն անցան հակահարձակման: Նշա-

նակում է, այն բանից հետո, երբ այդ ամենահզոր ուժերը, որ կանգնած էին նպատակին հասնելու ճանապարհին, ջախջախված էին: Այդ էր տրամաբանականը, այդպես կարելի էր մտածել:

Եվ այժմ, երբ Ռորեսպիերի պատկերացման մեջ արդեն կարծես նշմարվում էին մոտալուտ լավագույն աշխարհի ուրվագծերը, նրա առջև ծառայան նոր խոչընդոտներ՝ էրբրականների խումբը, դանտոնականների խումբը, հեղափոխական ստաշխարհացման հակառակորդների նոր էջերներ, բոլոր նրանց, ովքեր խանգարում են «առաքինության թագավորության», նրա հաստատման վերջին սահմանի նվաճմանը:

Ռորեսպիերը հեղափոխական էր այդ բառի ամենաստույգ նշանակությամբ: Նա ձգտում էր հասնել այն նպատակին, որին նվիրեց իր ամբողջ կյանքը: Եվ երբ նա եկավ այն համոզման, որ այդ արդարացի, լավագույն աշխարհը չի կարելի նվաճել առանց խորտակելու էրբրականներին ու դանտոնականներին, հարցը նրա համար վճռված էր:

Մեկ անգամ ևս վերընթերցելով «Գրառումներ դանտոնականների դեմ» աշխատությունը, մենք ոչ մի տեղ չենք հայտնաբերում նրա հոգեկան վարանումների կամ որևիցե ներքին կասկածանքի հետքեր: Վերևում նշվեց, որ այդ հոգվածներում չի կարելի գտնել ոչ մի թշնամանք անձամբ Կամիլ Դեմոսլենի հասցեին, բայց Դանտոնին Ռորեսպիերը մոտենում է կողմնապահությամբ: Նա ամենից առաջ ընդգծում է Դանտոնի բացասական գծերը: Համարում է նրան բանասերկու, նրա քաղաքական կենսագրության մեջ փնտրում է գիրադանցապես թերություններ: Հարկ է հիշել, որ կար ժամանակ, երբ Ռորեսպիերը հանդես էր գալիս Դանտոնի պաշտպանությամբ: Դեռ համեմատաբար վերջերս Դանտոնի հետ հանդիպման ժամանակ նա աշխատում էր հաշտության ուղիներ գտնել նրանց հետ, ովքեր կարող էին նրա քաղաքական հակառակորդը դառնալ: Դանտոնի նկատմամբ այդ հաշտվողական երանդները լիովին անհետանում են սևագիր հոգվածների էջերից, հոգվածներ, որոնք գրված էին իր իսկ համար: Դե ինչ, դա ավելորդ անգամ հաստատում է այն մեկնակերպը, որն առաջարկվեց հենց նոր. Ռորեսպիերն ինքը որոշեց, որ անհրաժեշտ է կոտորել, տապալել այդ վերջին ուժը, որ կանգնած է լավագույն, արդարացի հասարակարգի ստեղծման ճանապարհին:

Պարզվեց, որ դանտոնականների խմբի շախշախման անմիջական իրականացումն ավելի դժվար էր, քան ենթադրում էր Ռոբեսպիերը: Գանտոնը հրաժարվեց (այդ մասին վերևում արդեն ասվել է) իրեն ընձեռված փախչելու հնարավորությունից: Այդ բանը նրա կանոններից դուրս էր, հակասում էր վտանգին ընդառաջ գնացող մաքառողի նրա խառնվածքին: Եվ Գանտոնի այդ վարքագծի մեջ, որն ապացուցում էր նրա պատմական մեծությունը, հակառակ Ռոբեսպիերի հաշիվների, կային և հաշուդուրիան իրական հնարավորություններ:

Գանտոնը Հեղափոխական տրիբունալի դատավարությունում իր համար որպես տակտիկա ընտրեց հարձակումը: Բնակության վայրի և անվան վերաբերյալ առաջին զուտ ձևական հարցին նա պատասխանեց. «Շուտով իմ բնակության վայրը կլինի երանությունը, իսկ իմ անունը կգտնեք պատմության պանթեոնում»: Նա առաջին իսկ գործնականապես հնարավոր կապակցված խոսքի մեջ անցավ հարձակման իր թշնամիների վրա: Ինքը չէ, որ պետք է պաշտպանվի, պնդում էր Գանտոնը, այլ նրա հակառակորդները: «Թող երևան իմ մեղադրողները, և ես նրանց անգոյություն մեջ կգցեմ,— որոտալից ձայնով ազդարարում էր նա լեփ-լեցուն դահլիճում: Իմ կոփվածքի տեր մարդիկ անգնահատելի են, նրանց ճակատին կան ազատության կնիքով դրոշմված անջնչելի նշաններ, հանրապետության ոգին»:

Իհարկե, սա XVIII դարի, հեղափոխության դարաշրջանի դարձվածաբանությունն է, բայց իր պատասխանների ամբողջ ոճով Գանտոնը ցույց էր տալիս, թե ինքն ինչպես է մտադիր վարելու իր պաշտպանությունը դատավարության բնթացքում: Գանտոնը օժտված էր ձայնի ալչեցուցիչ հզորությամբ, սրանում նա զիջում էր թերևս միայն Միրաբոյին: Գատարանի լայն բացված պատուհաններից լսվող Գանտոնի որոտալից ձայնը հսկայական ամբոխ հավաքեց փողոցում: Նա այնպիսի արվեստով, ճնշման այնպիսի ուժով, սեփական իրավացիության այնպիսի համոզվածությամբ էր հակադրոհի ենթարկում իր մեղադրողներին, որ դահլիճում գտնվողների և փողոցում հավաքված ամբոխի համակրանքը բացահայտորեն թերվում էր նրա կողմը:

Կամիլ Գեմոլենը Գանտոնի համարձակ գրոհի ազդեցությամբ նույնպես անցավ հակահարձակման, և մեղադրյալները

զուտ էություն վերածվեցին մեղադրողների: Գատավարությանը ենթացքը դառնում էր միանգամայն անորոշ, և Ֆուկիե-Տենվիլը, համոզվելով, որ ինքը չի կարող ոչ միայն բարոյական, այլև իրավաբանական գերազանցության հասնել իր հակառակորդների նկատմամբ, դատական նիստն ընդհատեց: Բայց երբ դատավարությունը վերսկսվեց, նրա էլքը նախկինի նման մնում էր անորոշ: Պահանջվեց Սեն-ժյուստի անձնական միջամտությունը: Գալով Հեղափոխական տրիբունալի շենք, նա փոխեց դատական հետաքննության ընթացքը: Կոպտորեն ոտնահարելով ձևական օրենքները, Ֆուկիե-Տենվիլը պարզեցրեց դատական ընթացքը. այն բանից հետո, երբ մեղադրյալները փաստորեն զրկվեցին խոսքից, Կամիլ Գեմոլենը նախօրոք պատրաստած իր ճառի տեքստը ճմռթեց ու շարտեց մեղադրողի երեսին: Օրինականության կոպիտ ոտնահարման պայմաններում նա հրաժարվեց շարունակել պաշտպանությունը:

Հեղափոխական տրիբունալը, ինչպես և պետք էր սպասել, միայն նիստի երրորդ օրը կաթողացավ կայացնել դատավճիռ: 1794 թվականի ապրիլի 3-ին Հեղափոխական տրիբունալը բուրբ մեղադրյալներին (իսկ մեղադրյալները միավորված էին նաև տխրահոգ բազմախառնուրդի սկզբունքով), դատապարտեց մահապատժի: Իշխանությունները շտապեցին դատավճիռն ի կատար ածել: Ապրիլի 4-ին կայացվեց մահվան դատավճիռ, ապրիլի 5-ի առավոտյան Գանտոնին, Կամիլ Գեմոլենին և մյուս մեղադրյալներին սալակառքով տարան Գրեի հրապարակ: Գատապարտյալների սալակառքն անցնում էր Սենտ-Յուրի փողոցով, հյուան Գյուլլեի տան մոտով, որտեղ ապրում էր Ռոբեսպիերը: Գանտոնը, որ ամբողջ ճանապարհին հայհոյում էր փողոցային խոսքերով, անցնելով Ռոբեսպիերի տան մոտով, բարձրաձայն բղավեց. «Մաքսիմիլիան, դու շուտով կհետևես ինձ»:

Մահապատժից առաջ Գանտոնը շարունակում էր հայհոյել, իսկ Կամիլ Գեմոլենն արտասպում էր: Մինչև կառափնարան բարձրանալը Գանտոնը մոտեցավ Կամիլ Գեմոլենին և համբուրեց նրան: Գահիճը հայտարարեց, որ դա հակասում է օրենքին: «Հիմար.— պատասխանեց նրան Գանտոնը,— դու հո չես խանգարի մեր պուխներին մի բուպե հետո համբուրվել զամբյուղի մեջ»: Հայտնի են այն խոսքերը, որ նա արտասանեց,

կառավարան բարձրանալիս: Նա դիմեց դահճին ու ասաց. «Բարձրացրու իմ գլուխը և ցույց տուր ժողովրդին: Նա, իմ գլուխը, արժանի է դրան»:

## XI

Եվ ահա Հանրապետության բոլոր հակառակորդները խորտակված են: Հասարակական փրկության կոմիտեում լավից հեղափոխական տրիբունալի զեկուցումը անցած դատավարությաննների, կայացված դատավճիռների և դրանք ի կատար ածելու մասին: Հանրապետության ճանապարհին կանգնած բոլոր թշնամիները, որոնց համարում էին նրա գլխավոր հակառակորդներ, հող ու մոխրի վերածվեցին: Թվում էր, թե արդեն ոչինչ չէր կարող խանգարել նվաճելու այդ մոտիկ և վերջին պահին անընդհատ դուրս պրծնող, անընդհատ ինչ-որ տեղ հեռացող երջանիկ ոսկեզարր:

1794 թվականի հունիսի 10-ին և 12-ին Ռոբեսպիերը Կոնվենտում վերջին անգամ հանդես եկավ քաղաքական ճառերով<sup>192</sup>: Հունիսի 10-ի նախօրեին ժորժ Թալուստ Կուտոնիին՝ Ռոբեսպիերի մերձավորագույն բարեկամին, համախոհին և ընկերոջը Հասարակական փրկության կոմիտեում, իր կարճիկ սայլակով մոտեցրին Կոնվենտի ամբիոնին: Կուտոնի ոտքերը կաթվածահար էին, նա ինքը չէր կարողանում տեղից շարժվել: Կուտոնը հանդես եկավ Կոնվենտի ամբիոնից և Հասարակական փրկության կոմիտեի անունից առաջարկեց ընդունել նոր օրենք, որը կընդլայներ հեղափոխական տեռորի կիրառման հետագա հնարավորությունները: Դատավարության գործընթացը օրենքով պարզեցվում էր: Հեղափոխական տրիբունալը ձեռք էր բերում իր պատժիչ գործունեությունն իրականացնելու գործնականում անսահմանափակ հնարավորություններ: Այս օրենքի համապատասխան մեղադրյալների նախնական հարցաքննությունը վերանում էր: Մեղադրյալների պաշտպանների ինստիտուտը ենթակա էր վերացման, իսկ բուն «ժողովրդի թշնամի» հասկացությունը խիստ ազատ մեկնաբանություն ստացավ: Գանկություն դեպքում այն կարող էին ուղղել անցանկալի անձանց դեմ:

Առաջին անգամ պրակտիկայում (և դա կառավարությունում ծագած տարածաչնությունների ապացույցն էր) Հասարակական

փրկության կոմիտեն Կոնվենտին ներկայացրեց որոշման նախագիծ առանց այն Հասարակական անվտանգության կոմիտեի հետ նախապես համաձայնեցնելու, այն Կոմիտեի, որի վրա, իսկն ասած, հենց գրված էր հեղափոխական տեռորի կիրառման խնդիրը: Այդ փաստն իսկ անուղղակի հաստատումն էր այն բանի, որ Հասարակական փրկության կոմիտեն, այսինքն Ռոբեսպիերի կողմից անմիջականորեն գլխավորվող և հեղափոխական կառավարության համակարգում բարձրագույն օղակ հանդիսացող Կոմիտեն, մեծ վստահություն չէր տածում Հասարակական անվտանգության կոմիտեի նկատմամբ:

Առաջին անգամ հեղափոխական կառավարության գործունեության պրակտիկայում Կուտոնի մտցրած առաջարկությունը, նրա, որին նույնքան ամենակարող կամ գրեթե նույնքան ամենակարող էին համարում, որքան և Ռոբեսպիերին, առարկության հանդիպեց: Կոնվենտի սրբա անդամներ սկսեցին այդ զեկրիտի դեմ առարկություններ արտահայտել զգույշ, զուսպ ձևով: Ուազաի դեպուտատ Բուրդոնը, չհամարձակվելով հանդես գալ բացահայտ մեղադրանքներով, առաջարկեց հետաձգել այդ զեկրիտի վերջնական քննարկումը:

Ամբիոն բարձրացավ Մաբիմիլիան Ռոբեսպիերը: Նա համառորեն պնդում էր, որպեսզի Կոնվենտը չհետաձգի մտցված առաջարկության քննարկումը, ընդունի այն: Ռոբեսպիերը առաջվա նման համոզված էր, որ այդ զեկրետը փրկարար է, համապատասխանում է հեղափոխության շահերին: Այդ նույն ելույթի մեջ նա ասում էր. «Ուսումնասիրեք այդ օրենքը, և առաջին հայացքից դուք կտեսնեք, որ այն չի պարունակում մի որևէ որոշում, որը նախօրոք ընդունված չի եղել ազատության բոլոր բարեկամների կողմից, որ նրանում չկա ոչ մի հողված, որը հենված չլինի արդարության և բանականության վրա, և որ նրա մասերից յուրաքանչյուրը կազմված է ի բարօրություն հայրենասերների և ի սարսափ ազատության դեմ դավադրություններ կազմակերպող արիստոկրատիայի»:

Ռոբեսպիերի այս ճառը ցույց է տալիս, որ նա դեռ պահպանում էր հավատը դեպի հեղափոխական տեռորի կիրառման անհրաժեշտությունը վերջին հակառակորդներին կործանելու համար: Բայց այս ճառը դեռևս շապահովեց լիակատար հաջողությունը, օրենքի ընդունումը, և հունիսի 12-ին Ռոբեսպիերը երկրորդ անգամ պետք է հանդես գար ի պաշտպանություն այդ

«Երեւոյի, որը վճռական առարկութեան էր հանդիպել Բուրգոնի կողմից: Բուրգոնն ընդհատեց Ռոբեսպիերին, պնդելով, որ Ռոբեսպիերը փորձում է մեղադրել իրեն: Ռոբեսպիերը պատասխանեց. «Ես Բուրգոնի անունը չտվեցի: Վա՛յ նրան, ով ինքն է իր անունը տալիս»:

Ռոբեսպիերը համառորեն պնդում էր, որ այդ դեկրետը քվեարկվելով ընդունվի և հաստատվի Կոնվենտի կողմից: Բայց այդ ժամանակվանից նա գործնականապես հրաժարվեց հեղափոխական տեռորի քաղաքականութունը պաշտպանելուց: Լի-նելով գործողութեան, և ոչ թե խոսքի մարդ, նա պետք է հասկանար, որ տեռորի իրականացումը գործնականում դուրս է գալիս Հասարակական փրկութեան կոմիտեի վերահսկողութեան սահմաններից: Նա գավառներ ուղարկեց իրեն լիակատար անձնական վստահութեան ներշնչող մարդու՝ Մարկ Անտուան Ժյուլիենին: Այն ժամանակ հազիվ էր լրացել նրա տասնինը տարին: Ազնիվ, անաղարտ, հեղափոխութեանը անսահմանորեն նվիրված այդ երիտասարդը օժտված էր Հասարակական փրկութեան կոմիտեի արտակարգ լիազորութեաններով ստուգելու, թե ինչպես է գործնականում իրականացվում հեղափոխական տեռորի քաղաքականութունը:

Փարիզի Ազգային արխիվում պահպանվել են Ժյուլիենի նամակները՝ հասցեագրված Մաքսիմիլիան Ռոբեսպիերին, Սեն-ժյուստին, Կուտոնին, Հասարակական փրկութեան կոմիտեին: Այն, ինչ տեսել է Ժյուլիենը, սահմակցուցիչ էր: Տեռորը վերածվել է անցանկալի մարդկանց հետ հաշվեհարդարի, կողոպտուի, անձնական հարստացման և անպատիվ շարաշահումների գործիքի:

Ժյուլիենը եղել է Բորգոյում և այնտեղ հետևել Ֆրանսիայի այդ ամենահարուստ քաղաքի պրոկոնսուլ, Կոնվենտի կոմիսար Տալիենի գործողութեաններին: Ի՞նչ էր տեղի ունենում այնտեղ, ի՞նչ էր անում Տալիենը: Գծվար չէր շուտով իմանալ, որ Տալիենը, սկզբնապես բանտարկելով և մահապատժի ենթարկելով բազմաթիվ մարդկանց, այնուհետև հասկացնել էր տալիս, որ խոշոր գումարով կարելի է խուսափել ուրիշ աշխարհ տեղափոխվելուց: Եվ հարյուր հազարավոր ոսկե դրամներ հոսում էին Տալիենի գրպանները: Իր սիրուհի Թերեզա Կաբարյուսի՝ մարկիզ Զոնտենեի կնոջ հետ միասին, որը սկզբնապես մասնակցում էր ազատութեան պատվին տրվող ներկայացումներին գրե-

թե մերկ կամ թատերաշապիկով ծածկված, փոշուգիական փոքրիկ թասակը գլխին, իսկ հետո հմտորեն իր բուռը հավաքելով աշխարհիկ հաճույքների սիրահար Կոնվենտի անհղ կոմիսարին, Տալիենը ուղղակի կապեր հաստատեց Բորգոյի ամենախոշոր հարուստների հետ, և նախկինում բանտարկվածներից շատերը շուտով ազատութուն ստացան:

Հասարակական փրկութեան կոմիտեի հրամանով Տալիենը հետ կանչվեց Բորգոյից և պետք է հաշիվ տար Հասարակական փրկութեան կոմիտեի առջև:

Գրեթե նույն բանը տեղի ունեցավ Մարսելում: Այստեղ գործում էին Կոնվենտի կոմիսարներ Բարրասը և Ֆրերոնը: Ինչ-որ ժամանակ, մեկ տարի առաջ, Ֆրերոնը ժողովրդի բարեկամ Ժան-Պոլ Մարատի աշակերտն էր: Բայց այդ ժամանակներից շատ ջուր էր հոսել, և Ֆրերոնը վաղուց էր եկել այն համոզման, որ սեպ կանխիկ փողն ավելի արժեքավոր է արդարութեան մասին զրնգուն ֆրանզներից: Բարրասը և Ֆրերոնը իրենց առաքելութունը Մարսելում կատարում էին այնպիսի անամոթութեամբ ու անպատկառութեամբ, որ դժվար էր գտնել Հանրապետութեան ուրիշ մեծ քաղաքներում: Նրանք հարյուրավոր, հազարավոր մարդկանց էին նստեցնում բանտերում, իսկ հետո հսկայական կաշառքով ազատում կալանավորվածներին: Ֆրերոնը և Բարրասը զբաղվում էին ուղղակի գանձագողութեամբ:

Ժողով Զուշեն կրոնում գործում էր նույն վայրենաբարո մեթոդներով: Նա ենթադրում էր, որ որքան ավելի անխնա կիրառի հեղափոխական տեռորը, այնքան ավելի կամրապնդվի նվիրված հեղափոխականի իր համբավը: Իսկ նա հեղափոխական եղե՞լ է արդյոք: Ահա թե որն է հարցը:

Ժյուլիենը, որ ստուգում էր Ֆուշեի գործունեությունը կրոնում, դրա մեջ տեսավ միայն հանցագործությունների շղթա: Ֆուշեն հապճեպորեն հետ կանչվեց Փարիզ, որպեսզի հաշիվ տա Հասարակական փրկութեան կոմիտեին: Հնարագետ, ճկուն խաբեբան ամենից առաջ Մաքսիմիլիան Ռոբեսպիերի բարեհաճութեանն արժանանալու ուղիներ էր փնտրում: Անկաշառի համակրանքը շահելու համար նա նույնիսկ դիմեց ժայրահեղ միջոցների՝ սկսեց սիրահետել Մաքսիմիլիանի քրոջը՝ Շառլոտա Ռոբեսպիերին, հուսալով, որ նրան առաջարկելով ամուսնանալ, ինքը կկարողանա բարեկամանալ զորավոր Մաքսիմիլիանի հետ և դրանով իսկ կմեղմացնի նրա ցասումը: Մաքսիմիլիանը

արգահատանքով մերժեց Ֆուշեի բոլոր փորձերը և, շտորանալով մինչև անձնական մասնակցությունը, պահանջեց, որպեսզի Յակոբինյան ակումբը Ֆուշեին ու Տալիենին հեռացնի իր անդամների թվից: Այն ժամանակ բոլորը գիտեին, որ Յակոբինյան ակումբի անդամությունից հեռացվելու հետևանքը գրեթե ինքնաբերաբար Հեղափոխական տրիբունալին հանձնելն է և վերջին հաշվով հանգեցնում է գլխտոփնի:

Կարելի է որոշակիությամբ ենթադրել, որ իր վախճանից առաջ այս վերջին երկու ամիսներին Ռոբեսպիերը համոզված էր հեղափոխական տեոորի ազավաղման կործանարարության և վտանգավորության մեջ: Ծակատագրի շար ծաղրով նրա թըշնամիների ու ոսոխների կողմից իրականացվող բոլոր հանցագործությունները, բոլոր գործողությունները բարդվում էին նրա վրա: Վերջին հաշվով պատասխանատու էր Մաքսիմիլիան Ռոբեսպիերը: Ամայի Փարիզում իր գիշերային զրոսանքների ժամանակ, պատահական զրուցակիցների հետ զրուցելիս նա համոզվում էր, թե ինչպես են Մաքսիմիլիան Ռոբեսպիերին անիծում այն հանցագործությունների, բռնությունների, սպանությունների, կամայականությունների համար, որոնք հեղափոխության անունից կատարում էին նրա թշնամիները: Ըստ երկվյթին, հենց այդ ժամանակ էլ սկսվեց այն հոգեկան ձգնաժամը, որը գնալով աճում, ավելի ու ավելի էր սաստկանում Ռոբեսպիերի գիտակցության մեջ նրա վախճանից առաջ վերջին շաբաթներին:

1794 թվականի հուլիսի 5-ին Յակոբինյան ակումբում արտասանած ճառում Ռոբեսպիերն ասում էր. «Այն, ինչ մենք տեսնում ենք ամեն օր, այն, ինչ չես կարող թաքցնել ինքդ քեզանից՝ դա տեոորի սիստեմով Կոնվենտը ստորացնելու և ուղնշացնելու ցանկությունն է»<sup>193</sup>: Հետևաբար, նա ոչ միայն սահմանազատում, այլև ուղղակիորեն դատապարտում էր տեոորի այն կիրառումը, որը, հակառակ նրան, արվել էր հունիսի 10-ի օրենքից:

Կոնվենտում հունիսի 10-ի օրենքի դավար, վատ նախանշաններ պարունակող քննարկումից հետո ընդհուպ մինչև թերմիդորի 8-ր Հանրապետության այդ բարձրագույն մարմնի նիստերում Ռոբեսպիերն արդեն ելույթ չէր ունենում: Հուլիսի սկզբից նա դադարեց հաճախել Հասարակական փրկության կոմիտեի նիստերին՝ նրա մեծամասնության հետ երևան եկած տարա-

ձայնությունների պատճառով: Այն մի քանի թղթերը, որոնք նա ստորագրել է այդ ժամանակ, ըստ երևույթին բերում էին տուն, Սենտ-Օնորե փողոց: Ռոբեսպիերի անունը դեռևս մնում էր Հանրապետության վերնաձևակատին. նրա թշնամիները դիտավորությամբ այդ անունը նախադրել էին շափազանցության հասնող խոշոր տառերով և ամենուրեք, ուր միայն կարելի էր, ընդգծում էին նրա առաջարկությունը, իսկ Ռոբեսպիերն արդեն իրականում մի կողմ էր քաշվել, արդեն ուղղություն չէր տալիս պետական մեքենայի ընթացքին և ավելի ու ավելի շատ էր խուլստալիս նույնիսկ առօրյա պրակտիկ գործերին մասնակցելուց:

Նշանակում է արդյոք, որ Ռոբեսպիերն արդեն մինչև թերմիդորը կորցրել էր ամեն մի ազդեցություն, զրկվել որևէ աշակցությունից, դարձել ժամանակավրիպում:

Ո՛չ, իհարկե:

Ժողովուրդն իր անսխալ բնազդով գուշակում էր Անկաշառի մտադրությունների անաղարտությունն ու ազնվությունը: Նրա անշահախնդրությունը, նրա համոզվածությունը իր իրավացիության մեջ դեպի իրեն էին ձգում հասարակ մարդկանց: Ինչ էլ որ քշվչային շարակամները, նրա հեղինակությունը ժողովրդի մեջ բավականին մեծ էր:

Ֆրանսիական ժողովրդի աչքում, ամբողջ երկրի, ամբողջ Եվրոպայի աչքում Ռոբեսպիերը բուն իսկ հեղափոխության մարմնացումն էր: Կամբոնը, նրա անհաշտ հակառակորդներից մեկը, ցավով էր խոստովանում, որ նրանք, ովքեր ուզում էին լուկ տապալել Ռոբեսպիերին, իրականում «սպանեցին հանրապետությունը»<sup>194</sup>:

Յակոբինյան հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան և նրա առաջնորդ Ռոբեսպիերը օգտվում էին սանկյուլոտների, պլեբյուսիան աշակցությունից: Ծիշտ է, յակոբինյան կառավարության քաղաքականությունը իրեն հատուկ հակասականության պատճառով հաճախ էր դիպչում աշխատավորների շքավոր խավերի տնտեսական և քաղաքական շահերին: Այդ բանը դժգոհություն էր ծնում ընչազուրկ խավերի մի մասի մոտ: Փարիզի որոշ դեմոկրատական սեկցիաների տատանումները թերմիդորի 9-ի գիշերը, թերմիդորյան հեղաշրջման ժամանակավոր հավանության առաջացման պատճառ դարձան իր ժամանակի այնպիսի առաջավոր մարդկանց կողմից, ինչպիսին էր Գրակըս Բաբյոֆը: Բայց պատահական չէր, որ Փարիզի կո-

մունան (որը գասակարգային տեսակետից ներկայացնում էր այն նույն պլերեյական խավերը, ինչը և մինչև 1794 թվականի գարունը) և մայրաքաղաքի մի շարք սեկցիաներ ոտքի ելան «օրինական» Կոնվենտի դեմ, ի պաշտպանություն Ռոբեսպիերի և նրա բարեկամների: Պատահական չէ, որ Գրակոս Բարյոֆը ևս, շատ շուտ զոջալով իր սխալ դիրքորոշումը թերմիդորի օրերին, 1796 թվականին խոստովանում էր իր թույլ տված սխալը և Ռոբեսպիերին ու Սեն-ժյուստին անվանում իր նախորդներ<sup>105</sup>:

Ռոբեսպիերի ողբերգությունն այն էր, որ ազրատ մարդիկ և նա ինքն էլ, նրանց պարագլուխը, հակառակ իրենց մտադրությունների ու ցանկությունների, իրականում աշխատում և մարտնչում էին ոչ թե հանուն մարդկանց ընդհանուր երջանկության ու բարօրության, ինչպես որ ակնկալում էին նրանք, այլ հարուստների օգտին, և որ հասել էր ժամը, երբ հարուստները որոշեցին իշխանությունը վերցնել իրենց ձեռքը:

Մոտավորապես հունիսի վերջին, հուլիսին, Ռոբեսպիերի համար եկավ մտքի պայծառացման ժամանակը: Նա սկսեց հասկանալ, որ ընդհանուր երջանկության, առաքինության և արդարության հանրապետության ներդաշնակ համակարգի արագ ձեռքբերման այն հեռանկարը, որ նա քանիցս պատկերել էր իր հայրենակիցներին, որ այդ հրապուրիչ, սխրագործությունների ոգեկրող հեռանկարը ավելի ու ավելի է հետաձգվում: Թշնամիները, չար ուժերը անհամեմատ գորեղ դուրս եկան, քան նա սպասում էր: Արդեն որքա՞ն թշնամիներ են սպանվել, բայց սպանվածներն էլ, ինչպես շար ոգիներ, հարություն են առնում, խառնվում ապրողների հետ և խայթում Հանրապետությանը իրենց մահացու խայթոցներով:

Մաքսիմիլիանն օրըստօրև ավելի պարզորոշ, ավելի հըստակորեն էր հասկանում՝ ամեն ինչ այնպես չի գնում, ինչպես սպասում էին, ինչպես ցանկանում էին, ինչպես հույս ունեին: Նրան անվանում էին դիկտատոր, հանրապետության բախտը տնօրինող անհատ, որը հոնքերի մի շարժումով որոշում էր երկրի, քաղաքների, հազարավոր մարդկանց ապագան: Սեն-ժյուստը նրան ցույց էր տալիս թղթեր, որոնք ստացվում էին Հասարակական փրկության կոմիտեի ուստիկանության բյուրոյում: Աստված իմ: Ինչեր ասես, որ չէին խոսում դիկտատորի անսահման իշխանության մասին: Վաղիցն ու Ամարը, Հասարակական անվտանգության կոմիտեի գրեթե բոլոր անդամները,

չք, լայնորեն տարածում էին գաղտնի գործակալների տեղեկությունները, որոնք պարունակում էին ամեն բան, ինչ կամենաք՝ հայհոյանք, դրուպրտություն, հերյուրանք, լուսանք Հանրապետությունում իշխող «Լեոպոլտների» դեմ:

«Եռապանակ»-ը: «Գիկատտորներ»-ը: Դա չար ծաղր է: Ռոբեսպիերն այժմ ամելի պարզորոշ էր գիտակցում իր անզորությունը, նա ոչինչ, կատարելապես ոչինչ չէր կարող փոխել իրադարձությունների ընթացքի մեջ: Նրան անվանում են «դիկտատոր», «բռնակալ», «ինքնակալ», իսկ նա սոսկ տաշեղ է, որին օվկիանոսի հզոր ալիքները դեսուգեն են շարտում: Աննշմաբելի, սավերում թաքնված առավել հզոր ուժերն են ուղղություն տալիս իրերի ընթացքին: Որտե՞ղ են նրանք, ովքե՞ր են նրանք: Նրանք չեն երևում, բայց նրանք ամենուր են: Հասարակական փրկության կոմիտեի բոլոր հրամանները, բոլոր կարգադրությունները նպատակին չեն հասնում: Գրանք խճճում է քարացածության, գաղտնի սաբոտաժի, թաքուն դիմադրության թանձր ափովը: Ոչ որ շի առարկում, ոչ որ շի վիճարկում. խոսքով բոլորը համաձայն են, հավանություն են տալիս: Իսկ գործով: Ռեալ իրականության մեջ, գործնականում ամեն ինչ այլ կերպ է ընթանում...

Ե՞րբ սկսվեց այդ: Առաջին անգամ այն զգացողությունը, որ լծակներն այլևս չեն ենթարկվում ձեռքի շարժումներին, եկավ գարնանը, այն ժամանակ, երբ նրանք՝ Կոմիտեն, Ռոբեսպիերը, Սեն-ժյուստը, բախվեցին գաղտնի սաբոտաժին, մանր առարկություններին, արհեստականորեն ստեղծված դժվարություններին, բաշխուկին, գործնականում վանտոզյան դեկրետների իրականացմանը խանգարող մեկը մյուսի վրա դիզված արգելքներին: Բայց այն ժամանակ զա կարելի էր բացատրել: Մա որոշակի քաղաքականությանը՝ հեղափոխական կառավարության հավասարապաշտական քաղաքականությանը ցույց տրված դիմադրություն էր, և նա, Մաքսիմիլիանը, և Սեն-ժյուստը պարզորոշ հասկանում էին այդ բանը: Խոշոր բուրժուանները, սեփականատերերը, հարուստ մարդիկ չէին կամենում հողը հանձնել շունետներին: Նրանք ընդհանրապես դեմ էին հավասարական քաղաքականությանը: Ինչո՞ւ իրենք իրենց բոլոր չճալաքեն հարստությունը: Ինչո՞ւ չբազմապատկեն իրենց եկամուտները:

Իհարկե, այն ժամանակ արդեն ակնհայտ էր, որ շատերը Կոնվենտում, կառավարական ապարատում, Յակոբինյան ակումբում նույնպես, ավա՛ղ, դիմադրում են վանտոզյան դեկրետների գործնական իրականացմանը: Սա դեռ այն ժամանակ արվում էր հաղարավոր նախազգուշական միջոցներով, զգուշավորությամբ շուրջը նայելով, աննկատելի, գաղտագողի. այն ժամանակ դեռ բոլորն էլ վախենում էին Հասարակական փրկության կոմիտեի երկաթե ձեռքից:

Պայքարը էքերականների և դանտոնականների դեմ, 1794 թվականի գարնան քաղաքական դատավարությունները մոռանալ տվեցին մնացած ամեն ինչ: Վանտոզյան օրենսդրության մասին աստիճանաբար սկսեցին մոռանալ:

Իսկ հետո, արդեն ամռանը, երբ բոլոր հակառակորդները տապալված էին, բոլոր թշնամիները ոչնչացված, բոլոր «գեմ» ձայները լռեցին, բոլորը՝ Կոնվենտում, Փարիզի կոմունայում, Յակոբինյան ակումբում «կողմ» քվեարկեցին, պաշտպանեցին ու հավանություն տվեցին Կոմիտեի քաղաքականությանը, այն ժամանակ նորից իր մասին հիշեցրեց գաղտնի դիմադրության այդ անտեսանելի, թաքնված ուժը:

Կասկած չէր կարող լինել: Ամենից վատը ինքն իրեն խաբելն է, շրջապատն անտեսելը, կողքիդ տեղի ունեցածը չնկատելը: Կոլլո դ'էրբուան կարող է իրեն և մյուսներին մխիթարել բարձրագույն անապարժությունը հարյուրավոր անգամ կրկնվող այն պնդումներով, թե հեղափոխությունը հաղթանակ հաղթանակի հետևից է տանում: Այն ժամանակից ի վեր, երբ նա խուչս տվեց Ամիրալի դաշույնից և դարձավ գրեթե նահատակ, հանուն ազատության, ամեն ինչ նրան պատկերանում էր վարդագույն լույսի տակ:

Իհյուրը: Ռազմաճակատներում Հանրապետության զինվորները իսկապես հաղթանակներ են տանում. ո՞վ կհամարձակվի վիճարկել դա: Մի՞թե ինտերվենտների բանակները չեն նահանջում: Ֆլերյուսից հետո ամբողջ աշխարհը պետք է ճանաչեր Հանրապետության բանակների հզորությունը: Արդ պատերազմական նախաձեռնությունը հիմնավորապես խլել են հեղափոխության դինված ուժերը, և ոչ թե ինտերվենտները, արդ հայրենասերների բանակներն են ամենուր որոշում ռազմական գործողությունների հետագա ընթացքը:

Բայց մի՞թե ռազմաճակատներում ձեռք բերված այդ հաղ-

թանակների լույսի տակ ցավալի չէ գիտակցել դրուժյան վատթարացումը երկրի ներսում. «Պետություն ծաղկման մասին դատում են ոչ այնքան նրա արտաքին հաջողություններով, որքան նրա երջանիկ ներքին դրուժյամբ: Եթե հանցախմբերն անպատկառ են, եթե անմեղությունը սարսուռ է, նշանակում է հանրապետությունը ամուր հիմքերի վրա չի դրված»: Ռոբեսպիերը սա ասում էր Յակոբինյան ակումբում 1794 թ. հուլիսի 1-ին արտասանած ճառում:

Ֆլերյուսի մոտ ձեռք բերված մեծ հաղթանակը չկուրացրեց նրան: Կասկածի ենթակա չէ, և սա, ըստ երևույթին, ամենագլխավորն է, որ հանրապետական առաքինության թշնամիների, հեղափոխական կառավարության հակառակորդների թիվը ոչ թե պակասում, այլ ավելանում է: Նրանք աճում են ինչպես սնկերն անձրևից հետո. նրանք հայտնվում են ամենուր: Ռոտեյլի՞ց են նրանք հայտնվում:

Ովքե՞ր են դրանք, այդ ամենազոր թշնամիները, որոնք հայրենասերների համար խոչընդոտ են ստեղծում դեպի 93 թվականի սահմանադրությամբ հռչակված ընդհանուր երջանկության հանրապետություն տանող ճանապարհին: Այդ ժամանակվա Ռոբեսպիերը հաճախ է խոսում նրանց մասին, օգտվելով վերացական-էթիկական տերմիններից: Նա խոսում է շար ուժերի, արատի, հանցագործության, խարդավանքի մասին, նա խոսում է «հասարակական շահերին հակադիր բոլոր կործանարար կրքերից, բոլոր խոցված ինքնասիրություններից կազմված վտանգավոր կոալիցիայի» մասին<sup>96</sup>: Բարոյաէթիկական կատեգորիաների այս լայն օգտագործումը լիովին համապատասխանում է XVIII դարի հասարակական մտածողության ոգուն: Բայց այն չի կարող ոչ խափանել, ոչ էլ առափել ևս թարցնել Ռոբեսպիերի մտքի ներթափանցման խորությունը այն պայքարի էություն մեջ, որը 1794 թվականի ամռանը ցնցեց Հանրապետությունը:

Իհարկե, Ռոբեսպիերը չէր կարող դատել մեր օրերի հասկացություններով: Բայց չի կարելի շաղչել այն բանից, թե նա որքան ճիշտ, որքան ճշմարտությունը մոտ է բնորոշել այն ուժերին, որոնք հանդես էին գալիս որպես հեղափոխության գլխավոր հակառակորդներ: Ովքե՞ր են նրանք, հայրենասերների այդ վտանգավոր թշնամիները: Ռոբեսպիերը պատասխանում է. դա հեղափոխությանը թշնամի բոլոր ուժերի բլոկն է:

Նա իր բառապաշարում չունի ավելի ուշ ժամանակների այս տերմինը՝ «բլոկ», բայց նա այդ հաջողությունը փոխարինում է այլ, գերազանց բնորոշումով՝ «բոլոր հանցախմբերի լիգա»: Յակոբինյան ակումբում հուլիսի 5-ին արտասանած ճառում նա ասում է. «Բոլոր հանցախմբերի լիգան ամենուր անց է կացնում միևնույն սրտամբ»<sup>197</sup>։ Գա խաղաղության ու կեղծիքի, հեղափոխությանն իր նվիրվածության կեղծավոր հավաստիացումների սխառն է, որը մեծազորք ֆրանկերի հետևում թարցնում է ստոր գրպարտանքը, կեղտոտ խարդավանքը, ուխտագրում անվանարկությունները, եղբայրասպան կրթերի բորբոքումը:

Բռնակալների ծառաները, Բրիտների, Էրեբների, Դանտոների հետևորդները ոչ մի հանցագործության առջև կանգ չէին առնում: Ենթանք ձգտում էին արձակել Ազգային կոնվենտը, ոչնչացնել այն կաշառքի միջոցով... Նրանք փորձում էին այլաների հասարակական բարոյականությունը և խնայել արդարության ու հայրենիքի նկատմամբ ազնիվ սիրո զգացմունքները, Հանրապետությունից վնդդելով ատող դատադրությունը, արխությունն ու մարդասիրությունը... Վերջապես, գրգռությունները, դավաճանությունը, հրդեհները, թունավորումները, աթիկիզմը, կաշառակերությունը, սովը, սպանությունները՝ նրանք շալկում էին բոլոր հանցագործությունները: Նրանք մտնում է մեկ անգամ էլ սպանություն, վերստին սպանություն և հետո դարձյալ սպանություն:

Եվ թշնամիների հանցագործությունների՝ իր խտացված եռանդով այս հիանալի մեղադրական թվարկումը Ռոբեսպիերն ավարտում է անսպասելի, հեղափոխական հարստությունը լի եղբայրացությամբ. «Դեհ, ուրախանանք ու շնորհակալ լինենք երկնքից, մենք բավական լավ ծառայեցինք հայրենիքին, որպեսզի մեզ արժանի համարեն բանակարության դաշույններին»<sup>198</sup>:

Բայց մենք փոքր-ինչ շեղվեցինք: Բոլոր հանցախմբերի այս միացյալ լիգայում կա մի առաջատար, ուղղություն տվող ուժ: Ռոբեսպիերն այն հստակորեն դանազանում և ուղղակի մատնացույց էր անում դրան:

Յակոբինյան ակումբում հուլիսի 1-ին արտասանած ճառում, որը տողորված էր ցավով ու տագնապով, ճառ, որն ամբողջ ճայնով ազդարարում էր հեղափոխության վրա կախված անեղ վտանգը, Ռոբեսպիերը ավելց այն խոռվարար խմբավորման անունը, որը միավորում և համախմբում է Հանրապետությանը

թշնամի բոլոր ուժերին: Գա «Հանդուրժողականների հանցախումբն էր»: «Հանդուրժողականների հանցախումբը խանդել է ուրիշ հանցախմբերի հետ, նա դրանց պատվարն է, դրանց նեցուկը... Այդ հանցախումբը, որն ավելացել է բոլոր մյուս հանցախմբերի հաղվին, մի օղակով միավորում է բոլորին, ովքեր հեղափոխության սկզբից դավադրություններ էին կազմակերպում: Նա այժմ գործի է դնում այն նույն միջոցները, որոնք ինչ-որ ժամանակ օգտագործում էին Բրիտները, Դանտոները, Էրեբները, Շարոները և նույնքան ուրիշ շարագործներ»<sup>199</sup>:

«Հանդուրժողականներ» կամ «չափավորներ». սա, ինչպես հայտնի է, դանաժանականներին տրված մականունն է: Ռոբեսպիերը մեծ խորաթափանցով զրսևորեց, խայտաբղետ ու տարբերակալ բլոկի մեջ ճանաչելով դանտոնականների տախանքներին որպես առաջատար ուժ: Այս բանը նրա համար զգվար էր այնքանով, որ առաջին պլանում որպես նրա թշնամիներ հանդես էին գալիս ամենեին ոչ թե դանտոնականները, այլ դանտոնականների հակառակորդները՝ ապագա «ձախ թերմիտորականները»՝ Բիլլո Վարենը, Կոլլո դ'Էրբուան, Վադիեն և ուրիշներ: «Հանդուրժողականները», դանտոնականները այդ ժամանակի, Դանտոնի ու Դեմուլենի մահապատժից հետո, արդեն ականավոր առաջնորդներ չունեին: Բայց նրանց գերն ու նշանակությունը որոշվում էր նրանով, որ նրանք նոր, շահագիտական բուրժուազիայի բաղադրական ներկայացուցչություն էին, որը պիտավորում էր բուրժուական հակահեղափոխությունը:

Յակոբինյան դիկտատուրայի վրա հարձակվող ուժերի վերլուծության մեջ Ռոբեսպիերին պակասում են միայն դասակարգային բնորոշումները: Բայց նա այդ խայտաբղետ խառնակույտում այնպես հիշտ, այնպես անվերել է ի հայտ բերում առաջատար հարվածային շոկատը, որ թվում է, թե ուր որ է այդ դասակարգային բնորոշումները կպոկվեն նրա գրչից: Նա «Հանդուրժողականներին» այդ հանցախումբն անվանում է հակահեղափոխական և ընդգծում, որ նրա հզորությունն արդեն սպառնալից է դարձել հեղափոխության համար: «Ես այսօր ելույթ չէի ունենա այդ հանցախմբի դեմ, եթե նա չդառնար այդքան զորեղ, որը փորձում է արգելքներ դնել կառավարության գործողություններին»<sup>200</sup>:

Այսպիսով, այդքան զոհերից ու ջանքերից հետո, այդքան փալկուն հաղթանակներից հետո, այն բանից հետո, երբ խոր-

տակվեցին ու անգոյութեան վերածվեցին բոլոր գործը հակա-  
տակորդները, որոնք փորձում էին արգելակել հեղափոխությունը  
(Պանտոնը, Կամիլ Գեմուլենը, Գելակրուան), այս ամենից հե-  
տո արյամբ հագեցված Ֆրանսիայի հողը կծածկվի տատաս-  
կափշով, և ամեն տեսակ տականքներ, գողեր ու մարդասպան-  
ներ, Ֆուշեններն ու Տալիենները թունավոր դաշույն կրարձարաց-  
նեն յակորբինյան Հանրապետության վրա:

Ռոբեսպիերի բնավորության մեջ Համլետից ոչինչ չկար՝ ոչ  
կամքը թուլացնող կասկածներ, ոչ տանջալից վարանումներ:  
Նա չէր բացականչի «Էմ խեղճ Յորիկ: Սա գիտեի նրան, Հո-  
րացիո...»: Նա առանց շրջվելու անցնում էր ընկերների և թշնա-  
միների գերեզմանների մոտով: Նա գործողության մարդ էր:  
Ճիշտ է, պատանեկության տարիներից մինչև իր զարմանալի  
բախտի վերջին օրերը Ռոբեսպիերը հավատարիմ էր մնում զբլ-  
խավոր երազանքին՝ ոսկեդարի, առաքինի աշխարհի, հավասա-  
րության, արդարության մասին երազանքին:

Նա մինչև վերջ մնում էր ժան-ժակի հավատարիմ հետևորդն  
ու աշակերտը և մեծ փրկիստփայից անմիջապես հետո կիսում  
էր նրա գրեթե միամիտ, կիսամանկական անշեշ հավատն առա-  
վել արդարացի, լավագույն հասարակարգի նկատմամբ, որը մոտ  
է, հնարավոր, հասանելի նույն շափով, ինչ շափով մարդը մոտ  
է նրան շորս կողմից շրջապատող հավերժական, գեղեցիկ, կա-  
նաչ բնությանը: Բայց ի տարբերություն մինչև վերջին օրերը  
երազող իր ուսուցչի, Մաքսիմիլիանը, որ ներկայացնում էր  
այլ, նոր սերունդը, արդեն չէր բավարարվում երազներով,  
երազները նա վերածում էր սրբնթաց, հաստատական, անզբո-  
ւալի եռանդով լի գործողության:

Մաքսիմիլիան Ռոբեսպիերի զլխավորած Հասարակական  
փրկության կոմիտեի տեղորդման էլ հենց յակորբինյան ղեկա-  
վարների ձգտումն էր ամենակարճ ճանապարհով հասնել ինչ-որ  
շատ մոտիկ գտնվող հավերժ կանաչ բնության ձայններին նման-  
վող, մարդու «բնական իրավունքների» վրա հիմնված հավա-  
սարության և արդարության, երջանկության աշխարհին:

Միայն թե հարկավոր է ճանապարհ հարթել դեպի այդ լա-  
վագույն աշխարհը, երկաթե ձեռքով վերացնել երջանկության  
ճանապարհի վրա բոլոր կանգնածներին: Ռոբեսպիերի լայնորեն  
հայտնի դարձած, բոլոր նրանց, ովքեր պատճառներ ունեին վա-  
խենալու, այդպիսի վախ ներշնչող «հարկավոր է, որ պատիժը

լինի հանցագործության արագությանը», այս խոսքերն էլ հենց՝  
արտահայտում էին ժողովրդի համար դեպի երջանկություն տա-  
նող ուղի հարթելու անզսպելի ցանկության դրամատիկական-  
էությունը:

Ռոբեսպիերն այդպիսին մնաց և իր կարճատև կյանքի վեր-  
ջին շաբաթներին: Առաջվա նման նրան հնարավոր չէր ոչ ահա-  
բեկել, ոչ շեղել ուղուց: Պրերիալի 7-ին ելույթ ունենալով Կոն-  
վենտում և ցասմամբ մերկացնելով «փառամուլների, բանասար-  
կունների, շաղկարատների, շառլատանների, աճյարարների...  
իտրոպիսների, օտարերկրյա գործակալների, հակահեղափոխա-  
կանների, երկերեսանիների խառնամբոխը, որը կանգնած էր  
Ֆրանսիական ժողովրդի և նրա ներկայացուցիչների միջև այն-  
հաղվով, որ խաբեն մեկին և զրպարտեն մյուսներին...», Ռո-  
բեսպիերը հանգիստ ավելացրեց. «Ասելով այս խոսքերը, ես  
դաշույններ եմ սրում իմ դեմ, բայց ես հենց դրա համար էլ  
ասում եմ դրանք»:

Մահվանն այժմ նա վերաբերվում էր էլ ավելի մեծ քա-  
մահրական անտարբերությամբ, քան թե առաջ. նա վաղուց էր  
արդեն ընտելացել բռնի վախճանի անխուսափելիության մտքի  
հետ: «Մեր հաշիվների մեջ չէր էլ մտել երկարատև կյանքի  
առավելությունը», — դառը հեղնանքով ասում էր նա պրերիալի  
7-ին<sup>201</sup>: Այստեղից էր գալիս նրա ապշեցուցիչ անվեհերությունը,  
որը սահմակեցուցիչ վախ էր ներշնչում նրա հակառակորդնե-  
րին: «Թունակալների և նրանց ծառաների իշխանությունից դուրս  
է ինձ համարձակությունից զրկելը»<sup>202</sup>, — արգահատանքով նե-  
տեց նա հակառակորդներին իր վերջին ելույթներից մեկում:

Ռոբեսպիերն այն մարդկանցից չէր, որոնց ինչ-որ մի Ֆու-  
շե կամ Բարրաս, կամ արյուն տենչացող շնագայլերից էլի-  
ինչ-որ մեկը կարողանար հանկարծակիի բերել: Նրա սրատես-  
հայացքը ուշադիր հետևում էր հակառակորդների զարտուղի  
խուսավարումներին և ստորգետնյա ականապատումներին: Նա  
առանց դժվարության կռահեց Ֆուշեի կեղտոտ խաղը, որ կեղ-  
ծավորաբար հաշտություն էր փնտրում Անկաշառի հետ, և հա-  
սավ նրա վտարմանը Յակոբինյան ակումբից: Ռոբեսպիերի և  
Սեն-ժյուստի տրամագրության տակ տեղեկություններ կային  
ավելի ու ավելի լայնորեն ծավալվող դավադրության, դրա մասնա-  
կիցների, ղեկավարների, նրանց գաղտնի գործողությունների ու-  
պլանների մասին: Նա գիտեր, որ աստիճանաբար այդ դավա-

գրութեան մեջ էին ներքաշվում դանտոնականները և էրեթա-  
կանները «տականքները», Կոնվենտի՝ ինչ-որ բանից վիրավոր-  
ված և արժանի պատժից զգուշացող դեպուտատները, «ճահ-  
ճի» միշտ լսող դեպուտատները, որոնք ուղղակի կամ կողմնա-  
կիորեն կապված էին նորահարուստների, գաղտնի սպեկուլ-  
յանտների և առևտրականների հետ, որ գավազրութեան թելերը  
գնում էին ընդհատակ՝ զեպի ժիրոնդիստները:

## XII

1794 թվականի ամառը, ինչպես գրեթե բոլոր ժամանակա-  
կիցներն ու հուշակի պագիրներն են պնդում, տոթ էր ու շուք  
վաղ առավոտից գոլորշի էր բարձրանում, երկինքն անամպ էր,  
և միայն կեսօրին մոտ ամպեր հավաքվեցին: Թվում էր, թե  
շուտով ամպրոպ կայայթի, բայց աստիճանաբար ամպերը ցրվում  
էին, երկինքը բացվում էր, և թարմացնող ու բարեբեր անձրևը,  
որին սպասում էին բնությունն ու մարդիկ, այդպես էլ չէր  
ագալիս:

Այս բոլոր վերջին ամիսներին Ռոբեսպիերը վատ էր քնում:  
Ցերեկները ինչ-որ գործեր նրան հնարավորություն չէին տալիս  
խորհել, կենտրոնանալ: Երեկոյան կողմ նա իրեն ծայրաստի-  
ճան խոնջացած էր զգում: Հենց որ մթնում էր, նա անմիջա-  
պես քնում էր: Բայց թունը երկար չէր, և կեսգիշերին նա արթ-  
նանում էր: Հենց այդ ժամանակ էլ նրան այցելում էին մտքեր,  
որոնց համար ցերեկը ազատ ժամանակ չէր մնում: Նա հագնե-  
րվում էր ինչպես միշտ խնամքով, փոքր-ինչ հնաձև: Արտաքին  
կերպարանքով նա մնում էր որպես հին աշխարհի մարդ՝ դի-  
մափոշեծածկ կեղծամ, գուլպաներ, լավ արդուկված ժուպա-  
վենակապ պարոն դը Ռոբեսպիեր: Բրոուն անունով իր հսկա-  
յական շան հետ, որին Ռոբեսպիերը մի տեսակ առանձնապես  
կապվել էր այս վերջին ամիսներին, նա գիշերային զբոսանքներ  
էր կատարում Փարիզում:

Նմանակո՞ւմ էր նա իր ուսուցիչ ժան-ժակ Ռուսոյին: Այս-  
չափ անբարենպաստ պայմաններում կրկնո՞ւմ էր «միայնակ  
երազողի զբոսանքները»: Դժվար է այդ մասին առել: Գիշերա-  
յին Փարիզը ամայի էր, բայց հենց այդը նշմարվում էր, մսի  
կրպակների և հացի խանութների փակ դռների առջև երկար  
հերթեր էին գոյանում, ամեն ոք աշխատում էր որքան կարելի է

շուտ գալ, որովհետև պարենը չէր բավարարում, և այն հաս-  
նում էր միայն նրանց, ովքեր բոլորից մոտ էին կանգնած փակ  
դռներին: Առավոտյան ժամը 8-ին մտավաճառը բացում էր դու-  
ռը, միսը բաց թողնում հաստատված սահմանափակ նորմանե-  
րով: Մեկ ժամից մսի կրպակը դատարկվում էր: Կառավարու-  
թյան ոչ մի օրենք կայուն գնեթի, պարենի վաճառքի պարտա-  
դիր նորմաների մասին չէր կարող Փարիզ՝ ապահովել անհրա-  
ժեշտ շափերով: Մարդիկ վատ էին ապրում:

Ռոբեսպիերը, շրջագայելով իր շան հետ, երբեմն մոտենում  
էր այդ հերթերին, կանգնում էր ինչ-որ տեղ «պոչի» (այս տեր-  
մինն արդեն այն ժամանակ ի հայտ էր եկել և հայտնի էր մայ-  
րաքաղաքի բնակիչներին) վերջում և սկսում էր գրուցել շրջա-  
պատի մարդկանց հետ: Բոլորն անիծում էին հեղափոխական  
կառավարութեանը, որ չկարողացավ բնակչությանն ապահովել  
անհրաժեշտ քանակությամբ պարենով, զանգատվում էին դա-  
ժան ճակատագրից, հայհոյում «այդ Մաքսիմիլիան Ռոբես-  
պիերին», նրան վերագրելով իրենց բաժին ընկած բոլոր գրժ-  
բախտությունները: Մաքսիմիլիանը լսում էր նրանց ուշադիր,  
երբեմն հարցեր էր տալիս, բայց վեճի մեջ չէր մտնում:

Նա Բրոունի հետ, որը մի քալլ հետ չէր մնում իր տիրո-  
ջից, քայլում էր ամայի գետեզերքով, նոր կամքով անցնում աջ  
կողմը, երբեմն նստում ինչ-որ տեղ Տյուլիբի անմարդաբնակ  
զբոսայգում, որտեղ ճովողել էին սկսում արթնացող թռչուն-  
ները, և ստեպ-ստեպ անցուղարձ էին անում սիրահարները:  
Ամայի այգու նստարանին, կծկված վաղորդյան բարեբեր, բայց  
կարճատև զովութունից, նա մտորում էր այն մասին, թե ինչ  
է սպասում երկրին առաջիկայում:

Պատմաբանը իրավունք չունի հորինել, հնարամտել այն  
մտքերը, որոնց մասին չեն մնացել ո՛չ գրառումներ, ո՛չ հու-  
շարձաններ: Ինչի՞ մասին էր խորհում Մաքսիմիլիան Ռոբեսպիերն  
իր կյանքի այդ վերջին ամսին՝ գիշերային մարդազուրկ կամ  
արթնացող Փարիզի փողոցներում երկարատև զբոսանքների ժա-  
մանակ: Այն, ինչի մասին մտածում էր նա, այն երկխոսու-  
թյունը, լուսկյաց, ներքին երկխոսությունը, որ նա վարում էր  
ինքն իր հետ, անհայտ մնաց սերունդներին:

Հյուան Դյուպլեի տանը Մաքսիմիլիանի բացակայությունն  
խսկույն նկատեցին: Նրա սիրեցյալը՝ Էլիզաբեթ Դյուպլեն,  
որին դեռ համարում էին նրա հարսնացուն, անհանգստանում էր

իր նշանածի համար Գա տարօրինակ սեր էր, սեր, որի համար ժամանակ չէր մնում: Երբ էլիզաբեթը Մաքսիմիլիանին հարցնում էր, թե վերջապես երբ են նրանք ապրելու միասին, երբ է ստեղծվելու ընտանեկան օջախ, այն, ինչի մասին երազում է կինը, ձգտելով դարերով հաստատված, ավանդական, երկար տարիների համար սահմանված ամուսնության, Մաքսիմիլիանը պատասխանում էր. «Սպասիր մի քիչ, շատ կարճ ժամանակ, հեղափոխությունը շուտով կհաղթի»: Եվ նա սպասում էր, սպասում թեկուզև այն պատճառով, որ ոչ մի այլ որոշում չունեի, ուրիշ ոչինչ չէր կարող առաջարկել նրան, որին ինքը պաշտում էր: Էլիզաբեթը միայն մշտապես անհանգստանում էր, և հեռավոր, աշխատելով մնալ աննկատ, հետևում էր նրան:

Առավոտյան կողմ Մաքսիմիլիանը վերադառնում էր: Նա հողնում էր այդ երկարատև գիշերային դրասանքից և կարճ ժամանակով նորից քնում էր: Բրտունը պառկում էր նրա սաքերի մոտ, ականջ դնելով դրսից եկող ձայներին:

Պատմական գրականության մեջ վաղուց ի վեր վիճում են այն մասին, թե ինչով էր բացատրվում Ռոբեսպիերի այդ տարօրինակ վարքագիծը նրա կյանքի վերջին երկու ամիսներին և հատկապես թերմիդորի ճակատագրական օրերին ու գիշերներին: Ինչո՞ւ էր նա հապաղում, ինչո՞ւ նա պատշաճից չէր մերկացնում սուրը, մահացու հարված չէր հասցնում: Ի՞նչ էր կանգնած այդ դանդաղկոտության, այդ վարանումների, գործողությունների այդ դժվար բացատրելի կաշկանդվածության հետևում:

Ցավոք, վեճերը գլխավորապես թերմիդորի 8—9-ին Ռոբեսպիերի գործողությունների մասին էին, որոնք չին հետազոտվել դրանց հետ սերտորեն կապված նախորդ վեց շաբաթների հետ:

Ալֆոնս Օլարր և նրանից անմիջապես հետո Պարիզեն հակված էին թերմիդորի 9-ի օրերին Ռոբեսպիերի անվճռականության գլխավոր պատճառը տեսնել լեգալության նկատմամբ նրա ակնածանքի, օրինականության առջև նրա խոնարհվելու մեջ: Գտնվելով Կոնվենտի մեծամասնության և կոմիտեների հետ կոնֆլիկտի մեջ, Ռոբեսպիերը կորցրեց իրավական հենարանը, սահմանադրական հիմքերը՝ պայթարը շարունակելու համար<sup>203</sup>:

Մատիեզը առարկում էր այդ բացատրության դեմ: Նա հեշտությանը շախչախեց այդ տրամաբանական հորինվածքը ժողովրդական ապստամբությունների, 1789 թվականի հուլիսի 14-ի, 1792 թվականի օգոստոսի 10-ի, 1793 թվականի մայիսի 31—հունիսի 2-ի նկատմամբ Ռոբեսպիերի վերաբերմունքի մասին պարզ հիշեցումով: Դժվար չէր նրան այդ օրինակներով ապացուցել, որ Ռոբեսպիերը բոլորովին էլ օրինապահ, լեգալության ստրուկը չէր: Նա հերքեց Օլարրի և Պարիզի մեկնակերպը նաև թերմիդորի 9-ից 10-ի գիշերվա վճռական ժամերին Ռոբեսպիերի վարքագծի փաստական պատմության խիստ համոզիչ ուղղումով<sup>204</sup>: Մատիեզն ապացուցեց, որ Ռոբեսպիերն իր կյանքի վերջին ժամերին էլ մնաց նույնը, ինչ եղել էր՝ ոտքից գլուխ հեղափոխական:

Բայց փայլուն կերպով հերքելով Օլարրի մեկնակերպը Ռոբեսպիերի մասին որպես օրինապահի, լեգալության կողմնակցի, Մատիեզն անսպասելիորեն հանգում է իր կողմից հերքված այդ նույն կոնցեպցիային: Ռոբեսպիերի թույլ աված սխալներն ու վրիպումները թերմիդորի 8—9-ին նա բացատրում էր նրանով, որ Անկաշառը սխալվում էր քաղաքական գրության գնահատականի հարցում: Նա հնարավոր չէր համարում կոալիցիա իր հակառակորդների՝ Լեոան տեոթրիստների և «ճահճի» շափավորների միջև, որոնք մինչև օրս գնում էին նրա հետևից: Մատիեզի կարծիքով Ռոբեսպիերը «պահպանում էր հավատը Կոնվենտի նկատմամբ, և նրա մտքով անգամ չէր անցնում, որ նա այլևս չի կարող բարձրանալ այդ ամբիոն, ուր նրա պերճախոտությունը բազմիցս փայլուն հաջողություն էր ունեցել, նա չէր պատկերացնում, որ նրա ձայնը կարող է խլացվել նախագահի զանգով...»<sup>205</sup>:

Բայց ֆրանսիական հեղափոխության ականավոր գիտակի այս կարծիքի հետ անհնարին է համաձայնվել: Պրերիալի 24-ից մինչև թերմիդորի 8-ը, այսինքն մեկուկես ամսվա ընթացքում, Ռոբեսպիերը ոչ մի անգամ ելույթ չի ունեցել Կոնվենտում: Ինչո՞ւ: Նա հիվանդ է եղել: Նա ոչ մի տեղ հանդես չի՝ եկել ընդհանրապես: Փաստերն այդ բանը հերքում են: Այդ նույն ժամանակ Ռոբեսպիերը բազմիցս հանդես է եկել Յակոբինյան ակումբում: Հետևաբար, նա լիովին գիտակցաբար և կանխամտածված խուսափում էր մի լսարանից և դիմում մեկ այլ լսարանի: Եթե հիշեցնենք Կոնվենտի վարանումներն ու ան-

խրախուսական լուծվումը հունիսի 10-ի և 12-ի նրա ելույթներին ժամանակ, ապա պատասխանը թելադրվում է ինքնաբերաբար: Նա այլևս վստահություն չէր տածում Կոնվենտի մեծամասնության նկատմամբ: Նա չէր սխալվում իր դեմ հասունացող դավադրության գնահատականի հարցում:

Նա լսում էր թշնամիների նախազգուշացնող ձայները: Իրեն Կոնվենտի դեպուտատ անվանող անանուն հեղինակը անթվա-կիր նամակում սպառնալից տոնով հարցնում էր Ռոբեսպիերին. «Բայց դու կարո՞ղ ես նախատեսել, դու կարո՞ղ ես խուսափել իմ կամ քսաներկու նույնպիսի մարդկանց, ինչպես ես, ձեռքի հարվածից, որոնք ալելի վճռական են Բրուտոսներից և Սցևու-ներից»:

Նրան էին հասնում և բարեկամների նախազգուշացումները: Հայրենի Արբանյակ Բյուխսարը, նրա պատանեկության ընկերը, գրում էր. «Մեկ ամսվա ընթացքում, այն ժամանակից ի վեր, ինչ գրում եմ քեզ, ինձ թվում է, որ դու քնած ես, Մաքսիմիլիան, և թույլ ես տալիս, որ սպանեն հայրենասերներին»<sup>206</sup>:

Մաքսիմիլիանը քնած չէր, նա ամեն ինչ տեսնում ու լսում էր: Բայց նա չէր գործում:

Գործողության այդ մարզը, երկաթե կամքի ու անզսպելի եռանդի տեր այդ մարզը կորցրել էր իրեն հատուկ գործունեության ոգին: Նա չէր գործում այն պատճառով, որովհետև հասկացել էր՝ հեղափոխությունը, որի հետ էր կապել նա իր բախտը, այլևս չի ենթարկվում արդարության, խզճի ձայնին, ժողովրդի բարօրության մասին հոգատարությանը: Հավասարության կուսակցության առաջնորդը, ինչպես նրան անվանում էր Բուոնա-րոտին<sup>207</sup>, սկսում էր համոզվել, որ այդքան զոհերից հետո հաղթանակում են ոչ թե հավասարությունն ու առաքինությունը, այլ հանցագործությունները, արատները, հարստությունը: Իսկ չէ՞ որ նա յակոբինյանների հաղթանակի առաջին օրերին գրեց. «Մեր թշնամիները արատավոր մարդիկ են և հարուստները»<sup>208</sup>, Եվ ահա այժմ, հունիսի 2-ի փառահեղ ժողովրդական ապստամբությունից մեկ տարի հետո, այդ թշնամիները պատրաստվում են տանել հաղթանակը:

Անզգայացման այն վիճակը, որի մեջ էր գտնվում Ռոբեսպիերն իր կյանքի վերջին շաբաթներին, հեղափոխության խոր, անբուժելի ճգնաժամի ծնունդ էր. այդ վիճակը յուրապես

արտացոլումն էր այն անզգայացման, որ ապրում էր հեղափոխությունն իր կործանումից առաջ:

Հուլիսի 5-ին Յակոբինյան ակումբում ունեցած իր ելույթում Ռոբեսպիերն ասում էր. «Եթե յակոբինյանների ամբիոնը որոշ ժամանակվանից լռել է, ապա ոչ այն պատճառով, որ նրան ոչինչ չէր մնում ասելու. նրանց պահպանած խոր լուծ-թյունը լեթարգիական քնի հետևանք է, որը թույլ չի տալիս աչք բացել հայրենիքին սպառնացող վտանգների հանդեպ»<sup>209</sup>:

Հեղափոխությունը լեթարգիայի մեջ է եղել, ասում էր Ռոբեսպիերը: Նույն զգացումն է ճաշակել նրա բարեկամ և համախոհ Սեն-ժյուստը, որը գրում էր մտավորապես այդ նույն ժամանակ. «Հեղափոխությունը սառցակալվել է, նրա բոլոր սկզբունքները թուլացել են, մնացել են միայն կարմիր գլխարկները բանասարկության գլուխներին»<sup>210</sup>:

Ռոբեսպիերը դեռ երբեմն հավատ է արտահայտում արդարության սկզբունքների հաղթանակի նկատմամբ, բայց այդ միտքն արդեն ձեռք է բերում միանգամայն այլ նշանակություն, քան առաջ: Նախկինում նա վստահությամբ էր խոսում հեղափոխության մեծ իդեալների մոտալուտ հաղթանակի մասին: Այժմ նա հնարավոր է համարում հեղափոխության մեծ սկզբունքների վերջնական հաղթանակը կամ այն դիտում է որպես այլընտրական: «Պատերազմ հայտարարել հանցագործությանը՝ ճանապարհ է դեպի գերեզման և անմահություն, նպաստել հանցագործությանը՝ ճանապարհ է դեպի զահ և կառափնաբան», — ասում էր նա պրերիալի սկզբին<sup>211</sup>, երբ թշնամիներին հաղթելու հույսը դեռ կորսված չէր:

Հետագայում նրա մտքերն ընդունեցին բացահայտ հոռետեսական բնույթ. «Մեզ համար ալելի լավ կլիներ վերադառնալ անտառները, քան վիճել մեծարանքների, հեղինակության, հարստության պատճառով. այս պայքարից դուրս կզան միայն բռնակալներն ու ստրուկները»<sup>212</sup>:

Յեքմիդորի 8-ին (հուլիսի 26-ին) Կոնվենտի լիալիցուն դա-լիճում Ռոբեսպիերը բարձրացավ ամբիոն: Բոլորն էին զգում, դեռ ալելիին, գիտեին, որ այդ ելույթով վճռական ճակատամարտ է սկսվում յակոբինյան Հանրապետության և նրա թշնամիների միջև:

Բայց Ռոբեսպիերին չէր պատկանում այդ ճակատամարտի կախածոնությունը: Նա չէր ընտրել իր ելույթի տեղն ու ժա-

մանակը: նա պետք է հանդես գար, որովհետև Կոնվենտը, Գլուբու-Կրանսեի բողոքի համաձայն, որոշեց, որ կոմիտեները պետք է գեկույց ներկայացնեն Ռոբեսպիերի գործողությունների մասին<sup>21</sup>: Նրա հաշտվելը Կոնվենտի ամբիոնի մաս, ուր նրան չէին տեսել գրեթե մեկ ամիս, որոշ շափով հարկադրական էր:

Պատմաբանները, վերլուծելով թերմիդորի 8—9-ի իրադարձությունները, մեծ ուշադրություն են դարձրել մենամարտի ընթացքում Ռոբեսպիերի թույլ տված սխալներին. նրա մեղադրանքներն անձնավորված չէին, նա ոչ մեկի անունը չտվեց և գրանով իսկ Կոնվենտի բոլոր ղեկառնողներին ստիպեց միավորվել իր գեմ: նա անվճարական էր, հարձակողական տակտիկա չվարեց, նա իր գեկույցումը չհամաձայնեցրեց Սեն-ժյուստի և Կառտոնի հետ, չհեռանց իր հակառակորդների գործողություններին և այլն<sup>22</sup>:

Հնարավոր է, որ այս ըմբռնումների մեջ և ճշմարտության բաժին կա: Բայց Ռոբեսպիերի վերջին կուլյթների ուշագիտությունասիրությունը համոզում է, որ նա մտադիր չէր թերմիդորի 8—9-ին վճռական ճակատամարտ տալ հակառակորդներին:

«Չկարծեք, որ ես այստեղ եմ եկել, որպեսզի ինչ-որ մեղադրանքներ ներկայացնեմ. ինձ կանում է ավելի կարևոր հոգս, և ես ինձ վրա օրինների պարտականությունները չեմ վերցնում: Գոյություն ունեն այնքան անսպասելիորեն սպառնացող վտանգներ, որ այդ հարցը սոսկ Երկրորդական նշանակություն ունի»<sup>23</sup>: Այսպես էր խոսում Ռոբեսպիերն իր ճառի սկզբում:

Արդյոք սա տակտիկական հնար էր, այն հաշվով, որպեսզի բխցնի իր հակառակորդների զգոնությունը և նվաճի Կոնվենտի անդամների վստահությունը: Հազիվ թե:

Բավական է Կոնվենտում թերմիդորի 8-ին Ռոբեսպիերի արտասանած ճառը համեմատել պրերիալի 22-ին և 24-ին արտասանած նրա կուլյթների հետ, որպեսզի տեսնենք, թե որքան խիստ են նրանք տարբերվում միմյանցից: Պրերիալին արտասանած ճառերը կոնկրետ են, նպատակասլաց, դրանց ամբողջ բովանդակությունը ենթարկված է միանգամայն պարզ խնդիրների, որոնք իր առջև էր դնում դրանց հեղինակը: Թերմիդորի 8-ի ճառում այդ նպատակասլացությունը բացակայում է. երբեմն նույնիսկ դառնում է անհասկանալի, թե, իսկն ասած, ինչ է ուզում հռետորը: Այստեղ պետք է կոահումներ կատարել: Եվ

բայտ երևույթին, երբ նա ասում է, որ կան ավելի կարևոր հարցեր, քան մեղավորներին մեղադրելը, նա նկատի ունի գլխավոր հարցը՝ Հանրապետության ապագան, հեղափոխության ճակատագիրը:

Եթե որևէ բանի հետ համեմատելու լինենք թերմիդորի 8-ի ճառը, ապա միայն 1789 թվականին Ռոբեսպիերի արտասանած ճառերի հետ: Նույն խոր համոզվածությունն իր իրավասցիությունը, նույն անտարբերությունն այն բանի նկատմամբ, թե ինչպես կընդունվի ճառն ունկնդիրների կողմից: 89 թվականի կուլյթների նման Ռոբեսպիերը թերմիդորի 8-ին իր ունկնդիրների գլխավերևով դիմում էր ուրիշ լսարանի: Ո՞ւմ: Ֆրանսիական ժողովրդին: Զավակներին: Ապագա սերունդներին:

Գուցե:

Դա ճառ էր հեղափոխության գլխին կախված մեծագույն վտանգի մասին: «Միչ նշանակություն ունի թագավորների զինված արբանյակների նահանջը մեր բանակների առջև, եթե մենք նահանջում ենք հասարակական ազատությանը կործանող արասների առջև: Ինչ նշանակություն ունի մեզ համար հաղթանակը թագավորների նկատմամբ, եթե մենք պարտված ենք արասներից, որոնք մեզ կհասցնեն բռնապետության»<sup>24</sup>:

Նա մարդ էր ամենին հասակ բոլոր կրքերով ու թերություններով, և նա չէր կարող իր մասին շատել. «երանք ինձ բռնակալ են համարում: Եթե ես լինեի օլդախին, ապա նրանք կսողաչին իմ ոտքերի առջև, ես նրանց վրա սակի շաղ կտաչի, ես նրանց իրավունք կվերապահեի կատարել ամեն տեսակ հանցազորություններ, և նրանք շնորհապարտ կլինեին ինձ»: Նրա ճառը հագեցված էր սղեթություններով, նա խոսում էր գրեթե մարգարեաբար. «բռնապետության են հասնում խորագլխների օգնությամբ. ինչի՞ են հասնում նրանք, ովքեր պայքարում են նրանց դեմ: Գերեզմանի ու անմահության»<sup>25</sup>:

Ռոբեսպիերը նախազգուշացնում էր Հանրապետությանը սպառնացող վտանգավոր զավադրություն մասին: Նրա հեղինակությունը դեռ այնքան մեծ էր, նա դեռ էլի ալեպիսի վճռական ազդեցություն էր պահպանում, որ դաշիճում ներկա դտերվող շատ շատերի սրտերում խուճապ ու վախ սերմանած այդ ահարկու ճառն ընդունվեց որոտալից ծափահարություններով:

Բայց ոչ մի որոշում չկայացվեց, բացի այն, որ ճառը պետք է սպագրվեր: Ըտոր կոմունաներին ուղարկելու վերաբերյալ

Կոնվենտի ընդունած առաջարկութիւնը Բիլլո-Վարենի, Բենտո-բոլի, Շառլիեի առարկութիւններից հետո հանվեց: Ռոբեսպիե-րին առաջարկեցին տալ այն դեպուտատների անունները, որոնց նա մեղադրում էր: Նա հրաժարվեց: Նա ոչ մի սրողում էլ չառաջարկեց:

Սրեկոյան նա այդ նույն ճառը կարդաց Յակոբինյան ակումբում: Արդյոք այն սկզբնապես յակոբինյաններին չէ՞ր նախատեսված: Համենայն դեպս, ինչպես երևում է ճառի տեքստից, այն հասցեագրված էր հիմնականում յակոբինյաններին, քան Կոնվենտի դեպուտատներին:

Ի տարբերություն Կոնվենտի, որտեղ ճառը ծափահարութիւններից հետո հանդիպեց առարկութիւն, Յակոբինյան ակումբում այն ցնծութեամբ ընդունվեց: Կարծիք կա, թե իբր Ռոբեսպիեին այդ ճառն անվանել է մահաազգի կտակ: Յակոբինյանները հոտնկալա ծափահարում էին Անկաշառին: «Ես քեզ հետ միասին մինչև վերջ կխմեմ խնդամոլին», — բացականչեց նշանավոր Դավիթը: Բիլլո-Վարենին և Կոլլո դ'Էրբուային, որոնք փորձում էին առարկել, քշեցին ամբիոնից և հրելով դուրս պեղ-ցին փողոց:

Արդյոք Ռոբեսպիեի պատրաստված էր պայքարի, որը պետք է վաղը վերսկսվեր: Այդ բանը հաստատող ոչինչ չկա:

Ռոբեսպիեի վերադարձով Սենտ-Սնորի փողոց, Դյուպլեի տունը, ուր և քնեց մինչև առավոտ: «Այդ քունը նրա կյանքն արժեցավ»<sup>216</sup>, — գրել է Լուի Բարտուն: Բայց դա պատմաբանի շփոթանքներից մեկն էր միայն: Ռոբեսպիեի գործողութիւնների ամբողջ ընթացքը և նույնիսկ այդ մանրամասնութիւնը համոզում է, որ նա այդ օրերին վճռական ճակատամարտ չէր փնտրում, որ նա խուսափում էր դրանից, որ նրա մտքերն զբաղված էին այլ բաներով:

Ինչի՞ մասին էր մտածում նա: Ապագայի՞: Վաղվա օրվա՞: Կյանքի ու մահվան: Մահվան ու անմահութեան: Միգուցե հուլիսյան երեկոյի թանձրացող մթնշաղում աննշմարելի, դեռևս անսահմանորեն հեռավոր թվացող և այնուամենայնիվ անխուսափելիորեն զալիք առավոտի գույների, երանգների մասին:

Մենք դա երբեք չենք իմանա:

Ռոբեսպիեի քնած էր, շարժանալով, վերջին գիշերը թերմիդորի 9-ից առաջ, և Բրոունը ննջում էր նրա ոտքերի մոտ, քնի մեջ շարժելով ականջները, որսալով միմիայն իրեն հասնող

խնչ-որ տազնապալից ձայներ: Իսկ դավադիրներն ամբողջ գիշեր խորհրդակցում և մշակում էին գործողութիւնների պլան: Ինչպես շնագայլեր, որոնք պոչերն իրենց են քաշում լսելով առուծի ձայնը, այդ դեռևս երեկ հոխորտացող անպատկանները Ռոբեսպիեի ճառից հետո վախից զլուխներն էին կորցրել: Բարբառը, Ֆրերոնը, Տալիենը, Ռովերը և նրանց հանցակիցները՝ նրանցից յուրաքանչյուրը պետք է պատասխան տար այնքան հանցագործութիւնների համար, որ անհաղթահարելի կենդանական վախից նրանց գողն էր բռնել: Նրանք արդեն տեսնում էին իրենց զլխավերևում բարձրացած գանակը: Բայց նրանք ժամանակ ունեին, գլուխները նրանց ուսերից դեռ չէր գլորվում: Նույնիսկ նրանց հրեշավոր շարագործութիւնների ու հանցագործութիւնների սև ցուցակը դեռ հրապարակված չէր: Վաղը դա կանի Սեն-ժյուստը (դրանում ոչ մի կասկած չկար, չէ որ նա ամեն ինչ պիտի) և այնժամ նրանց արդեն ոչինչ չի փրկի...

Ուրեմն... Հարկավոր էր գործել:

Ըստ երևույթի, առաջին գարշելի հիշեցումը սին շաղակրատների վախկոտութիւնն ու անգործութիւն մասին եկել է զբոսից, կնոջից: Թերեզա Կաբարյուսը Փարիզի կանանց բանտից կարողացել է Տալիենին ուղարկել մի երկտող: Այն կարճատև էր ու ալյարանակալ «Ես երազ եմ տեսել», այսպես էր սկզբվում երկտողը: Թերեզան շարագրում էր այդ տարօրինակ երազի բովանդակութիւնը: Նա երազում տեսել է, որ վաղը իրեն կախաղան են բարձրացնում, բայց եթե աշխարհում լինեին ոչ թե լալկան փսխքոտներ, այլ իսկական աղամարդիկ, ապա ամեն ինչ դեռ կարելի կլիներ շուտ տալ:

Մտածորսպես այսպիսին էր այդ տարօրինակ, դիտավորյալ վիրավորական երկտողի բովանդակութիւնը\*: Միգուցե նա առաջինն է նրանց գործողութիւնն զրգել: Գողերը, մարգասպանները, գանձագողերը, շորթողները, կաշառակերները, կողոպտիչները, դիակապոտները, որոնք կարողութիւն էին դիզել իրենց զօճերին կողոպտելու հաշվին, չէ՞ որ նրանք դեռևս (միգուցե վերջին անգամ) մնում էին պարտված ժողովրդի ներկայացուցիչների, Ազգային կոնվենտի դեպուտատների կոչումով: Հանրապետութիւնում դրանից ավելի բարձր կոչում չկար: Էլ ինչպես չփորձել օգտագործել այդ հաղթամղով խաղը: Իսկ

\* Այդ երկտողը հրապարակել է Ուլբրը:

խաղը գնում էր գլուխների վրա: Պարտվողները պետք է պարտքը վճարեին իրենց գլխով:

Նրանք կարողացան ազատվել իրենց կաթվածահարած վախից: Լինելով բազմափորձ մարդասպաններ, նրանք մահացու վտանգի ժամին կարողանում էին գործել: Հայտնի չէ, թե որտեղից ջրի երես ելած շխտական կամ պատասխաններից խուսափող Ֆուշեն կծիկներ էր կապկպում, անընդարձ թելերով միացնում, թվում է թե տարբեր, ինքնուրույն, միմյանց հետ ոչնչով չկապված գործողություններ:

Կրակատար համաձայնություն էր հաստատված նրանց հետ, ում անվանում էին ձախեր՝ Կոլլո դ'Էրբուայի, Բիլլո-Վարենի, Վադիեի, Ամարի հետ: Նրանց թծնում էին, նրանց առջև հաճույանում էին, նրանց պատրաստակամությամբ առաջ էին թողնում՝ առաջին տեղը:

Պահպանելով անհրաժեշտ զգուշություն, կարողացան ընդհանուր լեզու գտնել, կամ ասենք ավելի զգուշ, փոխըմբռնման մտերմություն հաստատել այնպիսի մարդկանց հետ, ինչպիսիք են Կոնվենտի ազդեցիկ դեպուտատներ Գարնոն, Բարբերը, Կամբոնը:

Այժմ դավադիրները որոնում էին ճակատամարտի շարունակությունը:

Այն վերսկսվեց թերմիդորի 9-ի (հուլիսի 27) առավոտյան Կոնվենտի նիստերի լիսի-լեցուն դահլիճում: Հուլիսի այդ վերջին օրերին Փարիզում խիստ շոգ եղանակ էր: Առավոտից գոլորշիներ էին բարձրանում, տոթ էր: Եվ այնուամենայնիվ, շնայած ճնշող տոթին, նիստերի դահլիճը, վերնասրահները լիքն էին լուելյայն սպասող մարդկանցով:

Ամբիոն բարձրացավ Սեն-ժյուստը, հանգիստ, հավասարակշռված: Նա զեկուցումն սկսեց սառը, զուսպ տոնով: Նա այս ամբիոնն է բարձրացել դավադիրների դիմակները պատռելու, նրանց բոլոր հանցագործությունները բացահայտելու համար...

Նախագահում էր Կոլլո դ'Էրբուան: Նա գիշերային գաղտնագործությունների մասնակիցն էր ու թաքուն հասունացող դավադրության հանցակիցը: Որպես նախկին գերասան և շատ ողբերգությունների ու դրամաների հեղինակ, որոնք այդպես էլ չպահպանվեցին թատերական խաղացանկերում, նա չէր կարող հաղթահարել փառասիրական հպարտությունն այն խկպպես որ վճռական դերի մասին, որ պատմությունը նրա վրա գրեց այդ

օրը: Կոլլո դ'Էրբուան դեռ այն ժամանակ չգիտեր, թե իր համար ինչ ընթացք կստանա այդ դարերով հիշվող հուլիսյան մտախառն պատ առավոտը, և նա ջանում էր առաջին անգամ մեծ դեր ստանալուց արթեցած դերասանի անբուսանալի ողևորությունը:

Նա Սեն-ժյուստին արգելեց արտասանել վճռական խոսքերը: Գործելով ըստ նախօրոք կազմված, հանգամանորեն նախապատրաստված սլանի, դահլիճում իրենց ստեղծած աներևակայելի իրարանցման ու ազմուկի իրադրության մեջ, դավադիրները ամբիոնի մոտ փոխարինում էին միմյանց: Սեն-ժյուստին զրկելով զեկուցումը շարունակելու հնարավորությունից, շարաշահելով նախագահի իրավունքները, Կոլլո դ'Էրբուան ամբիոնը տրամադրեց Բիլլո-Վարենին, որին փոխարինեց Տալիենը: Ուղեից գլուխ ցողված իր ոչնչացրած մարդկանց արյան ցայտուկներով, մերկացված գանձագողության, կաշառակերության, կողոպուտների մեջ, Յակոբինյան ակումբից արդեն հեռացված այս հանցագործն սկսեց խոսել ոչ թե իր հանցագործությունների մասին, այլ շինծու սրամտությամբ «վրդովվել» Ռոբեսպիերի և Սեն-ժյուստի բռնակալությունից, նրանց հակավածությունից դեպի տեղորոք: Գավադիրները շտապում էին իրենց հանցագործությունները բարդել հեղափոխական կառավարության ղեկավարների վրա: Զուր էր Ռոբեսպիերը փորձում խոսք վերցնել:

— Վերջին անգամ, մարդասպանների նախագահ, ես խոսք եմ պահանջում, — բացականչեց Ռոբեսպիերը, դիմելով Կոլլո դ'Էրբուային: Բայց վերջինս նրա ձայնը խլացրեց զանգով: Գիշերային հանցակիցները ամենից առաջ պայմանավորվել էին ոչ մի դեպքում խոսք չտալ ոչ Սեն-ժյուստին, ոչ Ռոբեսպիերին:

Սեն-ժյուստը առաջվա նման մնում էր ամբիոնի մոտ: Զևոր օրենքով նրան հատկացված խոսքը այդպես էլ չէր արտասանվել, նրա պատրաստած զեկուցումը այդպես էլ չէր կարդացվել: Նա ձեռքերով տրորում էր իր գրած թղթերը: Ինչո՞ւ նա այդքան հեշտությամբ, առանց վեճի թույլ տվեց այդ գարշելի Տալիենին անպատկառորեն բռնատիրել նրա՝ Սեն-ժյուստի իրավունքները: Միգուցե նա սպասում էր, որ իրեն և՛ս հերթ կհասնի: Բայց ո՞ւմ է պետք այդ համբերությունը:

Մենք հրեք այդ հարցերի պատասխանը չենք ստանալ: Մաղբական, արհամարհական ժպիտով, որ թափառում էր նրա շուրթերին, Սեն-ժյուստը հետևում էր այս մանրագին նախա-

պատրիարքական ներկայացմանը, ցածրորակ խեղդատակութեամբ, որի մեջ անսխալականորեն կարելի էր գուշակել յուրաքանչյուր հաջորդ գործողությունը: Ամբիոնի մոտ միմյանց փոխադրինող Բիլլո-Վարենը, Վադինն, Բարերը, խոսելով ոչ բարեօրինական, այդպես էլ չէին համարձակվում արտասանել գլխավորը՝ դրա համար նրանք բավարար քաջություն չունեին: Եվ միայն այն ժամանակ, երբ ինչ-որ մի շնչին, բոլորին անհայտ կուշի ինչ-որ տեղ վերևից, գուցեև վերնասրահից, բղավեց Ռոբեսպիերին ձեռքակալելու մասին, դահլիճը մի ակնթարթ քարացավ: Լուսթուն տիրեց: Հետո դավադիրները աղմկոտ բղավեցներով, ծափահարություններով, անընդհատ աճող քառսի և խառնաշփոթության իրադրության մեջ բուռն կերպով պաշտպանեցին կուշիին: Զէ որ հենց դա էլ նրանց գլխավոր նպատակն էր:

Հետագայում Կոլլո դ'երբուան պնդում էր, որ Կոնվենտը քվեարկել է այդ առաջարկության օգտին: Միգուցե դա այդպես էլ եղել է, իսկ գուցե և ոչ: «Մոնիտորի» նշանավոր 311-ը, որ առաջինը ներկայացրեց թերմիդորի իրադարձությունների պատմությունը, չի պարզաբանում այդ մանրամասնությունները: Ժերար Վալտերը հետագայում փորձեց «Մոնիտորի» վկայությունները համեմատել «Կուրիե դ'Էգալիտեի» և ուրիշ սկզբնաղբյուրների հետ<sup>219</sup>, բայց նա ամենևին էլ առաջինը չէր, ով կամենում էր առավել լիակատարությամբ վերականգնել նշանավոր պատմական իրադարձությունների պատկերը: Սակայն այդ իրադարձությունների մեջ դրանից հետո էլ շատ անճշտություններ, հակասական բաներ ու անորոշություններ են մնում: Իսկ այդ մանրամասնություններն արդյոք էական նշանակություն ունենա՞ն:

Բացի այդ էլ հարկավոր է որպես ինչ-որ լիովին արժանահավատ բան ընդունել այն, որ Կոնվենտի անդամների զգալի մեծամասնությունը կազմող «ճահիճը», որ միշտ գնում էր նրանց հետևից, ովքեր ավելի ուժեղ էին, «ճահիճը», որ դեռ երեկ ծափահարում էր Ռոբեսպիերին, թերմիդորի 9-ին կատարված ամեն ինչից հետո անցավ նրա թշնամիների կողմը և, երբ հարկ էր լինում, թեթև սրտով քվեարկում էր նրա դեմ:

Այդ օրը հիմնական, Կոնվենտի անդամների վարքագիծը որոշող զգացումը վախի զգացումն էր. վախը միավորում և համախմբում էր ամբողջ հակառոբեսպիերական մեծամասնությունը, որն այնպես պարզորոշ ձևավորվել էր դահլիճում: Մարդ-

կային գլուխների վրա կատարվող այդ խաղի մեջ ինչ-որ մի կուշի առաջարկությունն այդքան միահամուռ հավանության արժանացավ ամենից առաջ այն պատճառով, որ դա նշանակում էր, թե կրկնենն ոչ թե նրանց, ոչ թե հանցագործների, նրանց հանցակիցների, ոչ թե այդ ամբողջ ավազակաորջի գլուխները, ավազակաորջ, որ դողում է այն բանի համար, որ ատիպված է լինելու պատասխան տալ բոլոր շարագործությունների ու հանցագործությունների համար, այլ նրանց մեղադրողների գլուխները:

Դավադիրները ծափահարում էին, բարձրաձայն ինչ-որ բան քացականչում: Նրանք չէին կարողանում թաքցնել ամբողջովին իրենց համակած ուրախությունը այն բանի համար, որ նրանց հաջողվել էր այդքան անհավանական դժվարին, գրեթե անիրականալի թվացող այդ գործողությունը: Ցնծության մեջ էին նրանք՝ ժողահանները, որոնք գրավել էին նավը և կառավարան սուղարկել նրանց, ովքեր իրենց տրամադրության տակ նրանց հանցագործությունների անհերքելի ապացույցներ ունեին:

Ռոբեսպիեր կրտսերը՝ Օգյուստենը հայտարարեց, որ, համաձիտ եղբոր առաջինություններին, պատրաստ է արժանանալ նրա բախտին: «Ես պահանջում եմ մեղադրական դեկրետ»: Այս պահանջը իսկույննեթ բավարարվեց: Որոշում ընդունվեց Սեն-Փյուստին, Կուտոնին, Լեբաին ձեռքակալելու մասին: Ավելի առաջ գեկրետավորվել էր նաև Անրիոյի և Հեղափոխական տրիբունալի նախագահ Դյումի ձեռքակալումը:

«Հանրապետությունը կործանվեց: Վրա հասավ ավազակների թագավորությունը», — ասաց Ռոբեսպիերը, իջնելով դեպի Կոնվենտի վանդակը:

Երեկոյան ժամը վեցն էր: Նախագահողը հայտարարեց ընդմիջում մինչև ժամը չորսը:

Բայց այն ժամին, երբ դավադիրները վերածվեցին Հանրապետության ճակատագիրը տնօրինողների, նրա ղեկավարների, ժողավրդի կամքը մեկնաբանողների, երբ շթաքցնելով հրճվանքը, առատ ընթրիքի պահին արբեցուցիչ գինու գավաթներով աղմուկով տոնում էին իրենց հաղթանակը, նրանց տոնախրմբությունը և ցնծության այդ ժամին կատարվեց անսպասելի:

Ամենից առաջ պարզվեց, որ ձեռքակալվածներին, որոնց հակատագրի տնօրենը Հասարակական փրկության կոմիտեն էր, ամենևին էլ հեշտ չէր բանտարկել: Ռոբեսպիերին ուղարկե-

ցին Լյուքսեմբուրգ բանտը, բայց նրա պետը, իմանալով, թե ում են իր մոտ ուղարկել որպես բանտարկյալ, հրաժարվեց ընդունել նրան: Ռոբեսպիերին բա՛նտ նետել: Այդ բանին նա իր համաձայնությունը երբեք չի տա: Ստիպված եղան Ռոբեսպիերին տանել ոստիկանության շենքը: Այնտեղ նրան ընդունեցին, բայց երկրպագության և մեծագույն հարգանքի բոլոր վկայություններով: Համանման մի բան կատարվեց և՛ Կուտոնի, և՛ Սեն-ժյուստի, և Լեբաի հետ:

Բայց գլխավորը դա չէր: Փարիզի ժողովուրդը, մայրաքաղաքի սանկյուլոտները, պեթեյական թաղամասերի հասարակ մարդիկ, զինվորները, հրետանավորները ոտքի էլան ի պաշտպանություն Ռոբեսպիերի և նրա ընկերների, երբ նրանց լուրերը հասան կատարվածի մասին: Փարիզի կոմունան, Յակոբինյան ակումբը, մի շարք սեկյուրաներ ապօրինի հայտարարեցին Կոնվենտի անվան տակ թաքնված դավադիրների գործողությունները և ժողովրդին ապստամբության կոչեցին: Ժողովուրդը ազատեց հեղափոխության առաջնորդներին, որոնք գտնվում էին տարբեր կալանավայրերում, և նրանց մեկ առ մեկ տարբեր ժամանակահատվածում տեղափոխեց քաղաքապետարանի շենքը՝ Փարիզի կոմունայի նստավայրը:

Դա ժողովրդական ապստամբություն էր, որ ծագել էր տարերայնորեն, առանց ղեկավարների, առանց գործողությունների որևիցե պլանի, ասենք այն չէր էլ կարող լինել, քանի որ առաջացել էր ինքնաբերաբար:

Այդ բեկումնային իրադարձությունների բուն ընթացքի մեջ շատ հակասական, անորոշ, հանելուկային հարցեր են մնում, թեև հետազոտողները վաղուց արդեն փորձել են պատկերը վերականգնել սկզբնաղբյուրներով: Տողերիս հեղինակի տրամադրության տակ է գտնվում թերմիդորի 9-ի իրադարձություններին վերաբերող մեծ քանակությամբ զանազան փաստագրական նյութերի ֆոտոպատճեններ, որոնք քաղված են Փարիզի Ազգային արխիվի համապատասխան գործերից<sup>200</sup>: Սակայն այդ փաստաթղթերի ուսումնասիրությունը ոչ թե նվազեցնում, այլ ավելացնում է տարակուսելի, զժվար լուծելի հարցերի թիվը:

Թերմիդորի 9-ի ամբողջ երեկոյի ընթացքում կշեռքի նծարք տատանվում էր, թեքվելով մերթ այտ, մերթ մյուս կողմը:

Կար ժամանակ, երբ թվում էր, թե ծանրությունը թեքվում է հօգուտ ապստամբ ժողովրդի: Անրիոն, որին սկզբում բանտար-

կել էին ծանգարմենքը, ազատվեց Կոֆինհայի կողմից և սկսեց արագորեն հավաքել զինված ուժեր: Հրետանավորները, Ազգային զվարդիան խոովարարների դեմ հանդես եկան Կոնվենտում: Մագմական գերազանցությունը բացահայտորեն ժողովրդի կողմն էր: Եղավ մի պահ, երբ խոովարարները գտան, որ իրենց գործը տանուլ է տրված: Երեկոյան նիստի ժամանակ լիակատար լիազորություններ ստացած Բարրասին հաղորդեցին, որ Կոֆինհայը խոշոր զինված ուժերի գլուխ անցած շարժվում է Կոնվենտի վրա: Կոֆինհայն իսկապես, հենվելով հավատարիմ զորքերի վրա, չհանդիպելով դիմադրության, արագորեն առաջ էր շարժվում: Բայց վերջին պահին փոխանակ ձերբակալելու արդեն փախուստի պատրաստվող խոովարարներին, նա շրջվեց դեպի Հասարակական փրկության կոմիտե, զրավեց այն, բայց, այնտեղ չգտնելով ոչ Ամարին, ոչ Վադիեին, սկսեց փնտրել նրանց, իսկ հետո զորքերին հրամայեց վերադառնալ Քաղաքապետարանի հրապարակ:

Թույլ արվեցին բազմաթիվ սխալներ, կուպիտ վրիպումներ, իսկ որ զլխավորն է՝ կորչում էր ժամանակը: Յլերիո-Լեսկոն և Պեյանը քաղաքապետարանի շենքի հոյակապ, բարձր ծեփակերտ առաստաղներով վերնասրահներում վստահ էին զգում իրենց և ժամանակ վատնում ժողովրդին ուղղված կոչերի կազմման վրա: Բայց պատմության այդ վճռական ժամերին հարկավոր էին ոչ թե կոչեր, ոչ թե խոսքեր, այլ գործողություններ: Հազարավոր, բուցեև տասնյակ հազարավոր մարդիկ՝ զինվորներ, հրետանավորներ հրանոթների հետ միասին, ազգային զվարդիականներ, սանկյուլոտներ, բանվորներ էին կանգնած քաղաքապետարանի առջև գտնվող հրապարակում: Նրանք սպասում էին գործողության դիմելու հրամանների:

Դավադիրները ժամանակ չկորցրեցին: Նրանք շատ լավ հասկանում էին, որ նորից բախտախաղի են դնում իրենց ապագան: Քաթնվելով Կոնվենտի անվան տակ, նրանք անցկացրին մի որոշում, որը Ռոբեսպիերին ու նրա ընկերներին հայտարարում էր օրենքից դուրս: Այս ավագակային քայլը նրանց ազատում էր հեղափոխական կառավարության ղեկավարներին դատելու անհրաժեշտությունից՝ այն բանից, ինչից վախենում էին ամենից շատ: Նրանց համար ամենաապրտափելին այն էր, որ Ռոբեսպիերը և Սեն-ժյուստը կարող են խոսել և պատմել ճշմարտությունն իրենց մասին:

Նրանք իրենց էմիտարներին ուղարկում էին Փարիզի բուրժուազական սեկցիաները, իրենց հավատարիմ բուրժուազականները:

Մտավորապես երկոյան ժամը տասնմեկին քաղաքապետարանի դահլիճում հավաքվեցին Մաքսիմիլիան Ռոբեսպիերներա կրտսեր եղբայրը, Սեն-ժյուստը, Լեբան, Անրիոն, Մյուսներից ավելի ուշ բերվեց Կուտոնը: Հեղափոխական առաջնորդները վերստին ազատության մեջ էին, բուրժուազականները շրջանում, և հրապարակում նրանց պաշտպանում էր ժողովուրդը:

Կարող էր թվալ, որ կշեռքի նժարը շեշտակիորեն տեղափոխվեց և որ համաշխարհային պատմությունը պատրաստ է կատարել ամենապիսապառույտ թեթուշիներից մեկը:

Ռոբեսպիերը, հավանաբար, որոշ ժամանակ մի տեսակ անզգայնացման մեջ էր: Բայց երբ տեսավ, որ ժողովուրդն անսխալ բնագոյով հասկացավ, թե ում կողմն է ճշմարտությունը, նա մտավ պաշարի մեջ, նա պատրաստ էր ամեն ինչ սկսել նորից:

Գրում էին, թե իբր վերջին ժամերին Ռոբեսպիերին տանջում էին կասկածները իր գործողությունների լեզուլության, օրինականության առթիվ: Մտտեզն անհերքելիորեն ապացուցեց այդ պնդումների անհիմն լինելը<sup>221</sup>: Մի քանի հեղափոխական առաջնորդներ, որոնց օրենքից դուրս էր հայտարարել Կոնվենտը և որոնց ազատել էր ապստամբած ժողովուրդը, նրանք էին ներկայացնում հեղափոխությունը նրա վերջին ժամերին, այլ ոչ թե «օրինական» Կոնվենտը: Երբ հարկավոր էր ստորագրել բանակին ուղղված կոչը, հարց առաջացավ, թե ում անունից պետք է ստորագրել այն: «Կոնվենտի անունից», միթե նա ոչ միշտ է այնտեղ, ուր մենք ենք», — բացականչեց Կուտոնը: «Ոչ, — պատասխանեց Ռոբեսպիերը կարճ մտորումից հետո, — ավելի լավ կլինի՝ Ֆրանսիական ժողովրդի անունից»: Իրենց կյանքի վերջին ժամերին նրանք մնացին նույնը, ինչ եղել էին՝ մեծ հեղափոխականներ, որոնք ազատ էին ամեն տեսակ ձևական-իրավական դոգմաներից, Ֆրանսիական ժողովրդի անունը բարձր էին դասում ամենահեղինակավոր սահմանադրական հիմնարկություններից:

Բայց արդեն ուշ էր: Դավաճանության հետևանքով հակահեղափոխական զորքերի զորամասերից մեկը թափանցեց քաղաքապետարանի շենքը և ներխուժեց այն դահլիճը, որտեղ հեղա-

փոխության առաջնորդները նիստ էին գումարել: Ժանդարմ Մերդան ատրճանակի կրակոցով փշրեց Ռոբեսպիերի ծնատուր: Կարելի՞ էր շարունակել դիմադրությունը: Հստ երևույթին այն անիմաստ էր դառնում: Հենց այդպես էլ այդ բանը հասկանալի էր դահլիճում գտնվողներին: Լեբան ինքնասպան եղավ: Կրտսեր Ռոբեսպիերը դուրս նետվեց պատուհանից, բայց չզոհվեց, այլ միայն ջախջախվեց: Ամեն ինչ վերջացավ:

Միայն Սեն-ժյուստն էր մտազբաղ, անմասնակից, անտարբեր: Նրա հայացքը պատահականորեն ընկավ քաղաքապետարանի հոյակապ դահլիճներից մեկը զարդարող մարմարյա տախտակի վրա փորագրված Մարգու իրավունքների ղեկավարացիայի ոսկետառ տեքստի վրա: Կարդալով նրա առաջին տողերը (նա անգիր գիտեր և մնացած հաջորդ տողերը), նա արտասանեց նույնքան մտազբաղ. «Իսկ չէ՞ որ այնուամենայնիվ այդ ես եմ ստեղծել...»

Բոլորին տարան: Քաղաքապետարանի դահլիճները դատարկվեցին: Ուշ գիշերին պայթեց վաղուց մտնեցող ամպրոպը:

Հաջորդ օրը առանց դատի Ռոբեսպիերը և նրա ընկերները, կենդանի թե մեռած, ընդամենը քսաներկու մարդ, գլխատվեցին Գրեկ հրապարակում: Թերմիդորի 11-ին, ևս մեկ օր անց, նույնպես առանց դատի ու դատաստանի մահապատժի ենթարկվեցին ևս յոթանասունմեկ մարդ: Նրանց մեղադրում էին այն բանում, որ նրանք Ռոբեսպիերի շրջապատի մարդիկ էին:

Ամեն ինչ ավարտված էր: Հանրապետությունը պարտված էր: Վարագույրն իջավ: Հռոմեական ողբերգությունն ավարտվեց:

Այժմ սկսվում էր նոր ներկայացում, սկսվում էր նոր պիես՝ զործամոլների, սպեկուլյանտների, գանձազողների, ավազակների, մարդասպանների, պոռնիկների, զբամանեկների, ուրիշի միլիոններ որսողների տիրապետության ճգճիմ, սովորական պատմությունը, նրանց, ովքեր վերածվել էին բարձրաստիճան պարոնների, գլխավորում էին նոր հասարակությունը և նույնիսկ փորձում էին երբեմն բարոյախոսության ինչ-որ դասեր հրամցել:

Ահա և մեր պատմությունը մոտենում է ավարտին: Քող նե-  
րի ինձ ընթերցողը, եթե փոխանակ տալու եզրակացություն,  
անելու հիմնավորված և խնամքով փաստարկված հետևություն-  
ներ, որոնք հանրագումարի բերին պատմական այն պրոցես-  
ները, որոնց մասին խոսվում էր զրքում, ես ինձ թույլ եմ տա-  
լիս վկայակոչել որոշ խիստ անձնական հիշողություններ:

Ես ծնվել ու մեծացել եմ Լենինգրադում: Այնտեղ են թաղ-  
ված իմ մայրը, պապը, իմ նախապապը: Ու թեև արդեն շատ  
տասնամյակներ ես չեմ ապրում այն քաղաքում, որտեղ ծնվել  
եմ, ես շարունակում եմ զգալ իմ ազգակցական կապերը նրա  
հետ և ժամանակ առ ժամանակ վերադառնում եմ «սրտաշար-  
ժություն չափ իմ ծանոթ» քաղաքը, որտեղ ամեն ինչ ինձ հիշեց-  
նում է վաղուց անցած զնացած մանկության ու պատանեկու-  
թյան մասին:

Ինչպես և ավագ սերնդի շատ մարդիկ, Լենինգրադցիներ, ես,  
ժամանելով այս քաղաքը, ապրում եմ հյուրանոցում, և իմ հա-  
մարի հեռախոսը լուռ է. այս քաղաքում ոչ ոք չի մնացել իմ  
հարազատներից, իմ մտերիմներից, չեն պահպանվել և այն գե-  
րեզմանատները, որտեղ թաղված են իմ ծնողները, իմ նախնի-  
ները: Ամեն անգամ, երբ ես գալիս եմ հարազատ վայրերը,  
դնում եմ Պիսկարևյան գերեզմանատուն և երկար ժամանակ  
կանգնում եմ, նայելով անանուն երկար գերեզմանների հուշար-  
ձաններին, որոնց վրա նշված են սոսկ տարիները՝ 1941, 1942,  
1943, 1944: Այս տապանաքարերի տակ էլ հենց պանկած են  
քուրը նրանք, ում հետ կապված էին իմ մանկական տարիները,  
իմ ճակատագիրը:

Լինելով Լենինգրադում, ես թափառում եմ իմ հեռավոր  
մանկության ու պատանեկության փողոցներով: Եվ այստեղ,  
անցնելով այս տասնամյակների ընթացքում չփոխված ինձ լավ  
ժանոթ քարե տների կողքով, ես մտովի վերադառնում եմ դեպի  
անցած տարիները, դեպի ընդմիջու հեռացած ժամանակները:

Երբ ես գտնվում եմ Լենինգրադում, տարօրինակ բան է՝  
հիշողությունն ինձ վերադարձնում է դեպի հեղափոխության  
առաջին տարիները: 1918 թվականի օգոստոսին, Մեծ Հոկտեմ-  
բերի հաղթանակից մի քանի ամիս անց, Մոսկվայի Ալեք-

սանդրոլյան այգում, որ գտնվում է Կրեմլի պատերի մոտ, անդի-  
ունեցավ մեծ հանդիսություն: Ի կատարումն Վ. Ի. Լենինի ստո-  
րագրած ժողովրդական կոմիսարների կորհրդի՝ անցյալի ակա-  
նավոր հեղափոխական գործիչներին հուշարձաններ հիմնելու  
մասին ղեկընտի, այստեղ հանդիսավորությամբ բացվեց Ֆրան-  
սիական մեծ հեղափոխության առաջնորդ Մաքսիմիլիան Ռո-  
բեսպիլերի հուշարձանը:

Ֆրանսիական մեծ հեղափոխության գործի հուշարձանը  
առաջիններից մեկն էր երիտասարդ Սովետական Հանրապե-  
տության մայրաքաղաքում դրված հուշարձաններից: Սովետա-  
կան իշխանության այն առաջին ամիսներին, երբ արդեն սկըս-  
վել էր քաղաքացիական պատերազմը, երբ Հանրապետությունը  
հացի, վաճառիչի, մետաղի, զենքի սուր կարիք էր զգում, թըշ-  
նամիների դեմ կռվող ժողովուրդը ոչ բրոնզ ուներ, ոչ մարմար՝  
այդ ազնիվ նյութերից մեծ յակոբինյանին հուշարձան կերտե-  
լու համար: Դարերին հանձնելիք կոթող կանգնեցնելու ժամանակ  
էլ չկար:

Անցավ մի քանի տարի, և Ռոբեսպիլերի՝ անկալուն նյութից  
պատրաստված քանդակապատկերն սկսեց քայքայվել: Անցավ  
կարճ ժամանակ, և հուշարձանը ավերվեց: Այսօր արդեն չես  
գտնի ոչ հուշարձանը, ոչ էլ այն տեղը, որտեղ այն կանգնած էր:  
Մոսկվայի Ալեքսանդրովյան այգում դրված Ռոբեսպիլերի այդ  
առաջին, այդքան անհարապև հուշարձանի մասին ես հիշում եմ  
ամեն անգամ, երբ լինում եմ Լենինգրադում: Եվ ահա թե ինչու:

Ես արդեն ասացի այն մասին, որ գալով իմ մանկության ու  
պատանեկության քաղաքը, ես քայլում եմ այն տեղերով, որոնք  
առանձնապես թանկ են ինձ համար: Եթե դուք այսօր գաք Լե-  
նինգրադ՝ ռուսական հեղափոխության օրրանը, եթե դուք Լի-  
տվենի պողոտայով անցնեք մինչև վերջ, մինչև Նևայի գրանիտե  
ափերը և շրջվեք դեպի աջ, կապուչու արծնապակու վրա կտես-  
նեք մի մեծ, աչքի ընկնող ցուցանակ. «Ռոբեսպիլերի գետափ»:

Ռոբեսպիլերի գետափ... Այս անվանումը նրան տրվեց հեղա-  
փոխության առաջին օրերին, Հոկտեմբերյան զինված ապստամ-  
բությունից անմիջապես հետո. այն պահպանվել է և մեր օրե-  
րում:

Ամեն անգամ, երբ ես գալիս եմ իմ քաղաքը, ես քայլում եմ  
Ռոբեսպիլերի գետափով, Նևայի գրանիտե ափերի երկարու-  
թյամբ: Այդ ճանապարհը Դուք էլ կարող եք անցնել, ընթերցող:

Դրա համար Դուք շեք աստուա: Եվ եթե Ռոբեսպիերի գետափից Դուք ուղիղ նայեք Նևայի լայնութիւնը, ապա նրա հակառակ ափին Դուք կտեսնեք Վլադիմիր Իլլիչ Լենինի՝ գրահագնացքի վրա ձեռքը առաջ պարզած քանդակապատկերի հստակ ուրվագծերը:

Նայեցե՛ք ցուցանակի այս կապույտ արծնապական՝ «Ռոբեսպիերի գետափ» և հեռվում, Նևայի այն կողմում վեր հանող Լենինի հուշարձանին:

Եվ հեղափոխական քաղաքում քարի ու մետաղի վրա դրոշմված այդ զարմանալի զուգորդման, այդքան միմյանցից տարբերվող դարաշրջանների լուռ անվանականի մեջ Դուք կլսեք պատմութեան ձայնը, կզգաք ժամանակների կենդանի կապը, սկիզբը և ծայրերը, որոնք անտեսանելի թելերով հեռավոր XVIII դարը և նրա հերոսներին կապում են XX դարում ծնված նոր աշխարհի հետ:

## ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

<sup>1</sup> *Bernardin de Saint-Pierre*. La vie et les ouvrages de J. J. Rousseau. Paris, 1907.

<sup>2</sup> *Rousseau*. Oeuvres complètes, présentations et notes de M. Lappo-leraye, t. I. Paris, 1967 (*այսուհետև*— Rousseau, t. I), p. 499.

<sup>3</sup> Руссо Жан-Жак. Избр. соч. в трех томах, т. III. М., 1961, с. 571, 575.

<sup>4</sup> *Meynier A.* Jean-Jacques Rousseau révolutionnaire. P. (s. d.), p. 18.

<sup>5</sup> Шяллер Фридрих. Собр. соч. т. I. М., 1955, с. 111 (перевод Л. Мея).

<sup>6</sup> Տողատակի ժանիթագրութիւններն այստեղ և հետո տրվում են, իմ կարծիքով, ըստ լավագույն հրատարակութիւններից մեկի՝ *Rousseau J.—J. Les confessions*. Introduction par P. Van Tieghem, t. I, II. Paris, 1956 (*այսուհետև*— Conf.).

<sup>7</sup> Correspondance générale de J. J. Rousseau. Collectionnée par T. Dufour (*այսուհետև*— Corr. gén.), t. I. Paris, 1924, p. 380—384.

<sup>8</sup> Верцман И. Е. Жан-Жак Руссо. М., 1958, с. 22.

<sup>9</sup> Державин К. Н. Руссо и руссоизм.— История французской литературы, т. I, М.-Л., 1946, с. 760.

<sup>10</sup> Corr. Gén., t. 3, p. 41—42.

<sup>11</sup> Роллан Ромен, Собр. соч., т. 14. М., 1958, с. 609.

<sup>12</sup> Руссо Жан-Жак. Избр. соч., т. I, с. 310—311 (перевод В. В. Левика).

<sup>13</sup> Նույն տեղը, էջ 311.

<sup>14</sup> Նույն տեղը, էջ 315, 318 (*Թարգմ. Ա. Ս. Գոլեմբայի*):

<sup>15</sup> Руссо Жан-Жак. Избр. соч., т. III, с. 13.

<sup>16</sup> *Fickert A.* Montesquiens und Rousseaus Einfluss auf den vor-mälischen Liberalismus. Leipzig, 1914.

<sup>17</sup> Ск'о Поршнев Б. Ф. Жан Мелье и народные истоки его мировоззрения. М., 1955; *նույնի՝* Мелье М., 1964.

<sup>18</sup> Ռուսոյին նվիրված ընդարձակ գրականութեան մեջ, կալվինիստական և կաթոլիկական եկեղեցու նկատմամբ նրա վերաբերմունքին շափաղանց մեծ

աշարակցութեան է նվիրուի (Cordier L. Jean-Jacques Rousseau und der Calvinismus. Jangesalza, 1915; Gaberd J. P. Calvin et Rousseau. Genève, 1878; Grimsley A. Rousseau and the religions Quest. Oxford, 1968 etc).

- <sup>19</sup> Rousseau, t. I, p. 213.
- <sup>20</sup> Ibid., p. 175.
- <sup>21</sup> Руссо Ж.-Ж. Избр. соч., т. III, с. 103.
- <sup>22</sup> Sk'u H. De Saussure. Rousseau et ses manuscrits des Confessions. Paris, 1958.
- <sup>23</sup> Mémoires du marquis d'Argenson. Paris, 1825, p. 203.
- <sup>24</sup> Gazotte P. Le siècle de Louis XV. Paris, 1953, p. 12.
- <sup>25</sup> Lafae P. Louis XV ou la victoire de l'unité monarchique. Paris, 1952; Levron J. Louis le bien-aimé. Paris, 1965; Mousnier R. La France de Louis XV.— «Histoire de France», t. 2. Paris, 1968, p. 3—70.
- <sup>26</sup> Levron J. Op. cit., p. 95.
- <sup>27</sup> Histoire économique et sociale de la France. t. II. Paris, 1970, p. 55—84.
- <sup>28</sup> Le prix du froment en France 1726—1815. Paris, 1970, p. 9—10.
- <sup>29</sup> Levron J. Op. cit., p. 155.
- <sup>30</sup> Mémoires du marquis d'Argenson, p. 322.
- <sup>31</sup> Ibid., p. 323.
- <sup>32</sup> Ibid., p. 92.
- <sup>33</sup> Sk'u Гордон Л. С. Тема «благородного разбойника» Мандрена в идейной жизни предреволюционной Франции.— «Век Просвещения». Сб. статей. М. 1970, с. 60—82.
- <sup>34</sup> Mémoires du marquis d'Argenson, p. 83.
- <sup>35</sup> Քաղվածքն րոս' Рокен Ф. Движение общественной мысли Франции в XVIII в. Пер. с франц. СПб., 1902, с. 123.
- <sup>36</sup> Corr. Gén., t. I, № 85, 86, 89, 90.
- <sup>37</sup> Ibid., № 92, այս նամակի իսկութիւնը վերցվել է կասկածի առիկ
- <sup>38</sup> Ibid., № 98.
- <sup>39</sup> Sk'u Руссо Ж.-Ж. Избр. соч., т. I, с. 178—213.
- <sup>40</sup> Առաջին անգամ այն հրատարակվել է Ռուսոյի մահվանից հետո արդեն, 1782 թ.: Ռուսերեն առաջին անգամ տպագրվել է ժան-ժակ Ռուսոյի Ընտիր երկերում, հ. 1, էջ 415—434:
- <sup>41</sup> Corr. Gén., t. I, p. 266.
- <sup>42</sup> Руссо Ж.-Ж. Избр. соч., т. II, с. 203.
- <sup>43</sup> Руссо Ж.-Ж. Избр. соч., т. I, с. 334.
- <sup>44</sup> Corr. Gén., t. I, № 55, 103, t. II, № 173, 205.
- <sup>45</sup> Rousseau, t. I.
- <sup>46</sup> Руссо Ж.-Ж. Избр. соч., т. I, с. 326, (перевод М. М. Замаховской).
- <sup>47</sup> Նույն տեղը, էջ 325:
- <sup>48</sup> Верцман И. Е. Жан-Жак Руссо мыслитель и художник. Вступительная статья к Избранным сочинениям Ж.-Ж. Руссо, т. I, с. 29.

<sup>49</sup> Руссо Ж.-Ж. Избр. соч., т. II, с. 188—189.

<sup>50</sup> Նույն տեղը, էջ 202—203:

<sup>51</sup> Карамзин Н. М. Избр. соч., т. I, М., 1964, с. 279.

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

<sup>1</sup> De Loménie Louis. Les Mirabeau nouvelles études sur la société française au XVIII siècle, t. 1—2. Paris, 1878 (Շատ դր Լոմենիի կողմից լրացված երկրորդ հրատարակությունը լույս է ընծայվել հինգ հատորով 1889—1891 թթ. նույնպես Փարիզում): Լոմենիի գրեթե հարյուրամյա վաղեմութուն ունեցող աշխատությունները մնում են իբրև լավագույն, զասական աշխատությունները Միրաբոյի մասին:

<sup>2</sup> Sk'u Волгин В. П. Развитие общественной мысли во Франции в XVIII веке. М., 1958.

<sup>3</sup> Théorie des impôts (1760); Philosophie rurale (1764); Lettres sur le commerce de grains (1768).

<sup>4</sup> Քաղվածքն րոս' Rousse Ed. Mirabeau. Paris, 1908, p. 55.

<sup>5</sup> Rousse Ed. Mirabeau, p. 57.

<sup>6</sup> De Loménie L. Op. cit., t. II, p. 435—501.

<sup>7</sup> Essai sur le despotisme. Londres, 1776.

<sup>8</sup> The Shains of Slavery... London, 1774.

<sup>9</sup> De Loménie L. Op. cit. t. III.

<sup>10</sup> Essai sur le despotisme. Oeuvres de Mirabeau, t. I.

<sup>11</sup> Les chaines de l'esclavage... par J. P. Marat, l'Ami du peuple. Paris (1793), p. 192—209.

<sup>12</sup> Soboul A. La civilisation et la Révolution française, v. I. (La crise de l'ancien régime). Paris, 1972.

<sup>13</sup> De Loménie L. Op. cit., t. II, p. 558—658.

<sup>14</sup> De Loménie L. Op. cit., t. III, p. 139—160.

<sup>15</sup> Barhou L. Mirabeau. Paris, 1913.

<sup>16</sup> Rousse Ed. Mirabeau. 2 éd. Paris, 1986.

<sup>17</sup> Valentin Antonina. Mirabeau avant la Révolution. Paris, 1946.

<sup>18</sup> Manceron Anne et Claude. Mirabeau, l'homme à la vie brûlée. Paris, 1969.

<sup>19</sup> Dauphin-Meunier. La vie intime de Mirabeau. Paris, s. d.

<sup>20</sup> De Loménie L. Op. cit., t. III, p. 192—193.

<sup>21</sup> Sk'u Oeuvres de Mirabeau. Paris, Brissot-Thivars, 1821, t. 6—8 (Lettres à Sophie); Oeuvres de Mirabeau, précédées d'une notice sur sa vie et ses ouvrages par M. Mérielhou..., t. 4—6 (Lettres à Sophie). Paris, 1835 և այլն:

<sup>22</sup> Sk'u Mirabeau. Oeuvres, t. 6. Lettres écrites du Dongon de Vincennes... Paris, 1821; Lettres inédites de Mirabeau et extraits de mémoires..., publ. par F. Vitry. Paris, 1806.

<sup>23</sup> Essai sur le despotisme. Londres, 1776. անանուն աշխատության

հեղինակի հարցը պարզված է ըստ՝ *Barbier. Dictionnaire des ouvrages anonymes*. t. 2, col. 249. 1792 թ. լույս տեսած (հետմահու) հրատարակության վրա հեղինակի անվան հետ մեկտեղ նշված է, որ այն (Paris, 1792) հրատարակությունն է:

- <sup>24</sup> *St'a* Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 26, ч. I, с. 38.  
<sup>25</sup> *Valentin Antonina*. Op. cit.  
<sup>26</sup> *Faure E.* La disgrâce de Turgot. Paris, 1971.  
<sup>27</sup> *De Lamartine A.* Histoire des girondins, t. I, Paris, 1884.  
<sup>28</sup> Lettres d'amour de Mirabeau précédées d'une étude sur Mirabeau par Mario Proth. Paris, s. a., p. 31.  
<sup>29</sup> *De Montigni Lucas*. Mémoires de Mirabeau, t. I—V.  
<sup>30</sup> *Mirabeau H. G.* De la monarchie prussienne sous Frédéric le Grand, t. I—VI. Londres, 1788. *Մարբուր «Կապիտալիզմ» բաղմինը վերաբերյալ և Միլարդի աշխատությունը՝ բարձր գնահատելով այն:*  
<sup>31</sup> *Jaurès J.* Histoire socialiste de la Révolution française, t. I. Paris, 1969, p. 135—136.  
<sup>32</sup> *Քաղվածքն ըստ՝ Soboul A.* 1789— l'an I de la liberté. Paris, 1973, p. 55.  
<sup>33</sup> *Родлан Ромен*, Собр. соч., т. 13, М., 1958, с. 289.  
<sup>34</sup> *Jaurès J.* Op. cit., t I, p. 136.  
<sup>35</sup> *Робеспьер М.* Избр. произведения в трех томах, т. I. М., 1965, с. 92.  
<sup>36</sup> *Mirabeau*, Oeuvres, t. I.  
<sup>37</sup> *Ibidem*.  
<sup>38</sup> *Робеспьер М.* նշվ. աշխ., հ. 1, էջ 94.  
<sup>39</sup> *Mirabeau*, Oeuvres, t. I, p. 151—152.  
<sup>40</sup> *Ibid.*, p. 152—153.  
<sup>41</sup> *St'a* Марат Ж.-П. Избр. произв., т. III. М., 1956.  
<sup>42</sup> *Mirabeau* Oeuvres, t. I.  
<sup>43</sup> Литературное наследие декабристов. Л., 1975, с. 104.  
<sup>44</sup> *Базанов В. Г.* Владимир Федосеевич Раевский. Л.-М., 1949, с. 91; *Орлов М. Ф.* Капитуляция Парижа, Политические сочинения. Письма. М., 1963, с. 292.  
<sup>45</sup> Литературное наследие декабристов, с. 105, 106.  
<sup>46</sup> *Штрамге М. М.* Русское общество и французская революция. М., 1956, с. 76.  
<sup>47</sup> Литературное наследие декабристов, с. 96.  
<sup>48</sup> *Герцен А. И.* Соч., т. 9. М., 1958, с. 225.  
<sup>49</sup> «L'Ami du peuple», № 163, 16. VII. 1790.  
<sup>50</sup> *Քաղվածքն ըստ՝ Delsaux H.* Condorcet journaliste. Paris, 1931, p. 111.  
<sup>51</sup> *Mirabeau*, Oeuvres, t. I.  
<sup>52</sup> Archives Nationales, 284 Ap 8, dr. 4, *Միլարդի պարզությունը Միլարդի հետ, 1789, 1790:*

<sup>53</sup> *Dumont Etienne.* Souvenirs sur Mirabeau... Paris, 1951, p. 135—138.

<sup>54</sup> *St'a* Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 23, с. 756.

<sup>55</sup> *Байрон Дж.* Дневники. Письма, М., 1963, с. 58, 61.

#### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

- <sup>1</sup> *Герцен А. И.* Соч., т. 3, М., 1956, с. 330.  
<sup>2</sup> *St'a* Person. Chants républicains et poésies patriotiques. An III, այս ժամին է և պրոֆ. Կ. Պ. Գորբուլյուրովու հատուկ ձեռագիր աշխատությունը:  
<sup>3</sup> *Քաղվածքն ըստ՝ Блан Лун.* История французской революции 1789 года, т. XI, СПб., 1909, с. 225.  
<sup>4</sup> *Courtois E.* Rapport fait au nom de la commission chargée de l'examen des papiers trouvés chez Robespierre et ses complices. Paris, 1794.  
<sup>5</sup> *Duperron L.* Vie secrète, politique et curieuse de Maximilien Robespierre, suivi de plusieurs anecdotes sur cette conspiration sans pareille. Paris, an 2 de la République; *Montjoie Ch. F. L.* Histoire de la conjuration de Maximilien Robespierre. Paris, 1796; *Merlin de Thionville* à ses collègues. Portrait de Robespierre; *Lecointre L.* Robespierre peint par lui-même. Paris, s. a.  
<sup>6</sup> *Буонарротти Ф.* Заговор во имя равенства, именуемый заговором Бабефа, т. II, М., 1948, с. 72.  
<sup>7</sup> *Billaud-Varenne J. N.* Mémoire inédit sur 9 thermidor.— «Revue historique de la Révolution française». Paris, 1910, p. 57—74, 161—175, 321—336; Trois lettres inédites de Voulland sur la crise de Thermidor.— «Annales historiques de la Révolution française». Paris, 1927, № 19, p. 67—77; Mémoires de E. Barère, membre de la Constituante, de la Convention, du Comité de Salut public et de la Chambre des Représentants, publiés par H. Camot et David (d'Anger), t. 1—2. Bruxelles, 1842.  
<sup>8</sup> *St'a* Буонарротти Ф. Заговор во имя равенства, т. II, с. 107.  
<sup>9</sup> *Levasseur R.* Mémoires, t. IV. Paris, 1831, p. 108.  
<sup>10</sup> *Barère B.* Mémoires, t. 2, p. 210, 211.  
<sup>11</sup> *Ibid.*, p. 219—220.  
<sup>12</sup> *Ibid.*, p. 178—214.  
<sup>13</sup> *Mathiez A.* Le rôle de Barère et de Vadier au 9 thermidor jugé par Buonarrotti.— «Annales révolutionnaires», 1511, t. IV, p. 96—102; *Վերահրատարակված է ժողովածուսով՝ Mathiez A.* Autour de Robespierre, Paris, 1926, p. 235—242.  
<sup>14</sup> *Mathiez A.* Autour de Robespierre, p. 238.  
<sup>15</sup> *Mathiez A.* Babeuf et Robespierre.— «Annales révolutionnaires», mai 1917, տե՛ս նաև՝ *Mathiez A.* Etudes sur Robespierre. Paris, 1958, p. 237—250.

- <sup>16</sup> *Mathiez A.* Autour de Robespierre, p. 247.
- <sup>17</sup> Pages choisies de Babeuf recueillies, commentées, annotées par M. Dommanget. Paris, 1935, p. 161—224.
- <sup>18</sup> *Sb'u «Le Tribun du peuple», № 40, 5 ventôse l'an IV (24. II. 1796); mb'u bakh' № 29, 34.*
- <sup>19</sup> *Sb'u Буонарроти Ф.* Заговор во имя равенства, т. I, с. 84—87, 108—112, 137—140, 154—163, 216, 348—349; *mb'u bakh' Далия В. М.* Люди и идеи. М., 1970.
- <sup>20</sup> *Espinas A.* La philosophie sociale du XVIII siècle et la Révolution. Paris, 1898, p. 257—258.
- <sup>21</sup> *Sb'u Յ. Էնդերիս Կամաղր Վ. Աղերին:* —Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 37, с. 267.
- <sup>22</sup> *Буонарроти Ф.* Заговор во имя равенства, т. I, с. 141, 87.
- <sup>23</sup> *Robiquet P.* Buonarroti et la secte des Égaux d'après les documents inédits Paris, 1910, p. 178, 203.
- <sup>24</sup> *Буонарроти Ф.* Заговор во имя равенства, т. I, с. 141.
- <sup>25</sup> *Առյն տեղը, էջ 160:*
- <sup>26</sup> *Sb'u Advielle V.* Histoire de Grachus Babeuf et du babouvisme, t. 1—2. Paris, 1884.
- <sup>27</sup> *Mathiez A.* Etudes sur Robespierre, p. 237.
- <sup>28</sup> *Sb'u Щеголев П.* Заговор Бабефа. Л., 1927, *mb'u «Труды первой всесоюзной конференции историков-марксистов», т. II, М., 1930, с. 158—201.*
- <sup>29</sup> *Волгин В. П.* Движение «равных» и их социальные идеи. Вступительная статья к работе: *Буонарроти Ф.* Заговор во имя равенства, т. I, с. 28.
- <sup>30</sup> *Առյն տեղը, էջ 22—23:*
- <sup>31</sup> *Маркс К. и Энгельс Ф.* Соч., т. 2, с. 589.
- <sup>32</sup> *Քաղվածքն ըստ' Espinas A.* La philosophie sociale du XVIII siècle et la Révolution, p. 257—258.
- <sup>33</sup> *Sb'u Sieyès E. S.* Oeuvres politiques, t. 1—2. Paris, 1796.
- <sup>34</sup> *Bonald L. G.* Pensées sur divers sujets et discours politiques, t. 1—2, Paris, 1817; *Chateaubriand F. A.* Oeuvres complètes, t. 2—3. Paris, 1836—1837.
- <sup>35</sup> *De Staël A. L. G.* Considérations sur les principaux événements de la Révolution française, t. I—III. Paris, 1818; *Mignet P.* Histoire de la Révolution française depuis 1789 jusqu'en 1814, t. 1—2. Paris, 1824; *Thiers A.* Histoire de la Révolution française, t. 1—6. Paris, 1823—1827.
- <sup>36</sup> *De Staël A. L. G.* Considérations..., t. II, p. 140—142.
- <sup>37</sup> *Миные Ф.* История французской революции. Пер. с франц. СПб., 1906, с. 187, 203.
- <sup>38</sup> *De Lamartine A.* Histoire des girondins, t. I—VIII. Paris, 1848 (*Հետազոտում քաղվածքներ ենք բերում ըստ 1884 թ. հրատարակության*);
- <sup>39</sup> *Ibid.*, t. IV, p. 353.

<sup>40</sup> *De Lamartine A.* Critique de l'histoire des girondins par l'auteur des girondins lui-même à quinze ans de distance (octobre 1861). *Հրատարակած է որպես հավելված' de Lamartine A.* Histoire des girondins, t. IV, p. 544.

<sup>41</sup> *Michelet J.* Histoire de la Révolution française, t. 1—7. Paris, 1847—1853; *Quinet E.*, La Révolution, t. 1—3. Paris, 1877; *Carlyle T.* The French Révolution. London, 1838.

<sup>42</sup> *Taine H.* Les origines de la France contemporaine. La Révolution, t. 1—3. Paris, 1878—1899.

<sup>43</sup> *Quinet E.* La révolution t. II, p. 219—220.

<sup>44</sup> *Sb'u Маркс К. и Энгельс Ф.* Соч., т. 7, с. 29.

<sup>45</sup> *Առյն տեղը:*

<sup>46</sup> *Անիս Վ. Բ. ճիժ, հ. 38, էջ 458:*

<sup>47</sup> *Buonarroti Ph.* Conspiration pour l'Égalité dite de Babouf, suivie du procès auquel elle donna lieu, et des pièces justificatives... 1828. *Sb'u այս հրատ. ակադ. Վ. Պ. Վարդինի խմբագրությունը, Մ., 1948:* *Levasseur R.* Mémoires, t. 1—4. Paris, 1829—1831.

<sup>48</sup> *Sb'u Маркс К. и Энгельс Ф.* Соч., т. III, М.-Л., 1929, с. 599—611.

<sup>49</sup> *Buchez Ph. et Roux P. C.* Histoire parlementaire de la Révolution française, ou journal des Assemblées nationales depuis 1789 jusqu'en 1815, t. 1—35. Paris, 1834—1838.

<sup>50</sup> *Blanc L.* Histoire de la Révolution française, t. 1—12. Paris, 1847—1862.

<sup>51</sup> *Sb'u Վ. Բ. Անիսի տված գնահատականը Առյն Քլանին. ճիժ, հ. 31, էջ 152—156, 382—383, 578—580; հ. 32, էջ 383—386, 423—427:*

<sup>52</sup> *Sb'u Маркс К. и Энгельс Ф.* Соч., т. 8, с. 119 и сл.

<sup>53</sup> *Անիս Վ. Բ. ճիժ, հ. 32, էջ 427:*

<sup>54</sup> *Hamel E.* Histoire de Robespierre d'après des papiers de famille, des sources originales et des documents entièrement inédits, t. I—III. Paris, 1865—1867; *Bougeart A.* Jean Paul Marat, ami du peuple, t. 1—2. Paris, 1865; *Hamel E.* Histoire de Saint-Just député à la Convention nationale, t. 1—2. Bruxelles, 1860.

<sup>55</sup> *Mathiez A.* Notes inédites de Blanqui sur Robespierre.— «Annales historiques de la Révolution française», 1928, № 28, p. 307—318.

<sup>56</sup> *Гейне Г.* Полн. собр. соч., т. 6. М.-Л., 1936, с. 49.

<sup>57</sup> *Tridon G.* La Commune de Paris en 1793. Les hébertistes. Bruxelles, 1871 (*ստադիոն հրատարակությունը լույս է տեսել 1864 թ.*). *Avenel G.* Anacharsis Cloots, l'orateur de genre humain, t. 1—2. Paris, 1865.

<sup>58</sup> *Sb'u Кропоткин П.* Собр. соч., т. II. (Великая французская революция 1789—1793). М., 1919.

<sup>59</sup> *Bernard M.* Dix ans de prison au Mont-Saint-Michel et la citadelle de Doullens. Paris, 1851.

<sup>60</sup> *Hamel E.* Histoire de Robespierre, t. I, p. I—XV.

<sup>61</sup> *Панасъ И. И.* Литературные воспоминания. М., 1950, с. 242—243.

<sup>62</sup> *Sb'u «Русская старина», 1901, № 9, с. 483—484.*

63. *Séu* Панаев И. И. *Նշման աշխ.*, էջ 414—415.
64. *Նույն տեղը*, էջ 243:
65. «Литературное наследство», т. 56. М., 1950, с. 80.
66. Герцен А. И. Соч., т. 9, М., 1956, с. 227.
67. *Séu* «Литературное наследство», т. 56, с. 80; Т. Н. Грановский и его переписка, т. II. М., 1987, с. 439—440.
68. *Քաղաքների բռն*՝ Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 2, с. 595.
69. *Séu* Ерофеев Н. А. Исторические взгляды чартиста О'Брайена.— «Из истории социально-политических идей». Сб. статей к 75-летию академика В. П. Волгина. М., 1955, с. 452—465; *Օ'Брайենի հոդվածը* «National reformer» *թերթում*, 11. III. 1837; *Dolléans E.* Le chartisme, t. I. Paris, 1912, p. 78; *O' Brien J. B.* The Life and Character of Maximilien Robespierre. London, 1837.
70. *Séu* Петефи Шандор. Собр. соч., т. I, М., 1952, с. 194—195; т. IV, с. 183.
71. Lettres et documents pour servir à l'histoire de Joachim Murat, t. I. Paris, 1908, p. 458.
72. *Büchner G.* Werke und Briefe. Wiesbaden, 1958.
73. *Séu* Կ. Գուցկովի, Գ. Լատրեի և այլոց աշխատությունները:
74. Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 2, с. 589.
75. *Aubertin Ch.* L'Esprit public du dix-huitième siècle, 2 éd. Paris, 1873, p. 340—341.
76. *Séu* ազգի մտերաման այդ ժամանակվա դաշափարական շարժումների մասին՝ Волгин В. П. Развитие общественной мысли во Франции в XVIII веке. М., 1958; *Bertaut J.* La vie littéraire en France au XVIII siècle. Paris, 1954; *Mornet D.* Les origines intellectuelles de la Révolution française. 4 éd. Paris, 1947; *Sagnac Ph.* La formation de la société française moderne, t. 2. Paris, 1947.
77. *Grimm Fr. M.* Correspondance littéraire, philosophique et critique de Grimm et de Diderot depuis 1753..., t. II. Paris, 1829, p. 81.
78. «Annales historiques de la Révolution Française», 1958, № 2.
79. *Մարտիի իրանի մանկության ու պատանեկության մասին տե՛ս Robespierre Ch.* Mémoires sur ses deux frères. Paris, 1834 (պահանջում է ընկալաբանական մոտեցում); *Paris J.—A.* La jeunesse de Robespierre. Arras, 1870, (այսուհետև— Oeuvres complètes).
80. Oeuvres complètes de Robespierre, t. I (Robespierre à Arras). Paris, 1912, p. 211—212.
81. *Դանց սկիզբը դրե՛ն անվավեր հուշագրությունները՝* Mémoires authentiques de Maximilien de Robespierre, t. 1—2. Paris, 1830.
82. *Hamel E.* Histoire de Robespierre..., t. I. Paris, 1865, p. 22.
83. *Robespierre M.* Plalidoyers pour le sieur de Vissery de Bois-Vallé.— Oeuvres complètes, t. II, p. 136—170, 171—202.
84. Oeuvres complètes, t. I.
85. *Roquain F.* L'esprit révolutionnaire avant la Révolution. Paris, 1878, chap. XII.

86. A la nation artésienne sur la nécessité de réformer les Etats d'Artois. Arras, 1789.

87. *Կոմունների կամ համայնքների են սկսում անվանել երրորդ դասի այն դեպուտատների նիստերը, որոնք լցանկացան օգտագործել խիստ անցանկալի «երրորդ դաս» տերմինը:*

88. Переписка Робеспьера. Л., 1929, с. 48.

89. *Դա ֆ. Միշների կարծիքն է:* (Переписка Робеспьера, с. 46).

90. Переписка Робеспьера, с. 50, 51.

91. *Bouloiseau Marc.* Robespierre. Paris, 1961, p. 18.

92. Переписка Робеспьера, с. 51—53.

93. Oeuvres complètes, t. VI, p. 39—70.

94. Переписка Робеспьера, с. 57.

95. *Séu* Ռոբեսպիերի ելույթները Ազգային ժողովում 1789 թ., հոկտեմբերի 21-ին, 1790 թ. փետրվարի 9-ին, փետրվարի 22-ին և այլք:

96. Oeuvres complètes, t. VI, p. 238.

97. Ibid., p. 240.

98. Ibid., p. 126.

99. *Ճառ Քաղաքների վեոտի դեմ* (Ibid., p. 88).

100. Oeuvres complètes, t. VI, p. 131.

101. «L'Ami du peuple», № 149, 30. VI. 1790.

102. *Bouloiseau M.* Robespierre. p. 19.

103. *Ճառ Ազգային ժողովում 1789 թ. հոկտեմբերի 5-ին— «Mercure de France»*, 17. X. 1789; Oeuvres complètes, t. VI, p. 181—182.

104. *Robespierre M.* Discours à l'Assemblée nationale sur la nécessité de révoquer les decrets qui attachent l'exercice des droits du citoyen à la contribution du marc d'argent... Paris, 1791. *Ժողովի՝ Ռոբեսպիերին Քշեամի մեծամասնությունը նրան շնորհեց արտասանել այդ ճառը: Ռոբեսպիերը կարողացավ այն ապագրել, որը մեծ տպավորություն գործեց ժամանակակիցների վրա:*

105. Oeuvres complètes, t. VII, p. 165.

106. Ibid., p. 166.

107. *Séu* Ռոբեսպիերի ելույթները Սահմանադիր ժողովում 1790 թ. դեկտեմբերի 5-ին և 1791 թ. ապրիլի 27-ին.— Oeuvres complètes, t. VII, p. 610; t. VII, p. 259, 261—267.

108. 1789 թ. սեպտեմբերի 12-ի ճառը— Oeuvres complètes, t. VI, p. 78; 1789 թ. նոյեմբերի 18-ի ճառը— Ibid., p. 140.

109. Переписка Робеспьера, с. 86; *Soboul A.* Saint-Just. Introduction à Saint-Just. Discours et Rapports. Paris, 1957, p. 12.

110. Переписка Робеспьера, с. 92.

111. Oeuvres complètes de Robespierre, t. III. Correspondance... prep. par G. Michon. Paris, 1936; Supplément. Paris, 1941.

112. *Séu* ազգի մտերաման. Французская буржуазная революция 1789—1794 гг. Под ред. Волгина В. П. и Тарле Е. В. М.—Л., 1941; Манфред А. З. Великая французская буржуазная революция. М.,

1956, րմ. VI; Mathiez A. Le club de Cordeliers pendant la crise de Varenne. Paris, 1910; suppl. Paris, 1913; Sagnac Ph. L'état des esprits en France à l'époque de la fuite à Varennes.— «Revue d'histoire moderne et contemporaine», 1909, t. 12.

<sup>113</sup> Oeuvres complètes, t. VII, p. 518—523. Այս ճառը ապագրվել է մի շարք ձախ քերթերում. «L'Ami du peuple», № 515, 9.VII.1791; «Les Révolutions de France et de Brabant», t. VII, № 82 և այլն:

<sup>114</sup> «L'Ami du peuple», № 374, 17.II.1791; № 497, 22.VI.1791; № 500 et 501, 25 et 26. VI. 1791.

<sup>115</sup> Oeuvres complètes, t. VI, p. 228—240, 272 (1790 թ. փետրվարի 9, 22-ի, մարտի 4-ի ճաները):

<sup>116</sup> Buchez et Roux. Histoire parlementaire de la Révolution française, vol. I—XXXV. Paris, 1834—1838, vol. VII, p. 193—195.

<sup>117</sup> Տե՛ս օրինակ, Petition présentée à l'Assemblée nationale, le 18 décembre 1791, par les citoyens du bataillon de la section du Faubourg-Monmartre. Paris (1791).

<sup>118</sup> Oeuvres complètes, t. VIII. Discours (3 partie). Paris, 1953, p. 39—42, 47—67. (1791 թ. դեկտեմբերի 18-ի ճառը; Այդ ճառը հրատարակվել է առանձին գրքույկով):

<sup>119</sup> Ibid., p. 132—152, 157—184.

<sup>120</sup> Ibid., p. 47.

<sup>121</sup> Ibid., p. 132—152. (Ցակորինյան ակումբում 1792 թ. հունվարի 25-ի ճառը):

<sup>122</sup> La Société des Jacobins. Recueil des documents..., réd. et introd. par A. Aulard. t. II. Paris, 1889, p. 513.

<sup>123</sup> «L'Ami du peuple», № 627, 12. IV. 1792; № 628, 13. IV. 1792.

<sup>124</sup> Oeuvres complètes, t. IV, որը պարունակում է այդ հրատարակության լրիվ հոմալիկները:

<sup>125</sup> Տե՛ս Chuquet A. Les guerres de la Révolution, t. I. Paris, 1934 (առաջին հատ. 1886); Mathiez A. La victoire en l'an II. Paris, 1916.

<sup>126</sup> Տե՛ս Марат Ж. П. Избранные произведения, т. III, с. 263 և այլն:

<sup>127</sup> Oeuvres complètes, t. VIII, p. 378—383, 388—389, 427—428.

<sup>128</sup> Ibidem; «Défenseur de la Constitution», № 10; «Oeuvres complètes», t. IV, p. 307.

<sup>129</sup> Ibidem.

<sup>130</sup> Oeuvres complètes, t. IV, p. 317—334.

<sup>131</sup> Переписка Робеспьера. с. 135.

<sup>132</sup> Oeuvres complètes, t. VIII, p. 427—428.

<sup>133</sup> Oeuvres complètes, t. IV, p. 357.

<sup>134</sup> Ibid., p. 350.

<sup>135</sup> «L'Ami du peuple», № 648, 3. V. 1792.

<sup>136</sup> Քաղվածքն ըստ՝ Bouloiseau M. Robespierre, p. 27.

<sup>137</sup> Oeuvres complètes, t. IX, p. 79—100.

<sup>138</sup> Ibid., p. 89.

<sup>139</sup> Ibid., p. 129.

<sup>140</sup> Տե՛ս Ռոբեսպիերի ելույթները Կոնվենտում 1792 թ. դեկտեմբերի 4-ին (Oeuvres complètes, t. IX, p. 137—140); դեկտեմբերի 19-ին (Ibid., p. 172—175); դեկտեմբերի 28-ին (Ibid., p. 183—200); 1793 թ. հունվարի 15-ին (Ibid., p. 227); հունվարի 16-ին (Ibid., p. 228—229); փետրվարի 17, 18 և 19-ին (Ibid., p. 230—231, 237—240, 243—244); Մարտի ելույթը տե՛ս «Journal de la République française», № 65, 66, 82, 85, 99, 100, 101; Saint-Just. Discours et rapports. Paris, 1957, p. 62—69.

<sup>141</sup> «Частотворения мартена» տե՛ս Захер Я. М. Движение «бешеных». М., 1962, ինչպես և այդ հեղինակի մի շարք հոդվածները; տե՛ս նաև Markov Walter. Robespieristen und Jacqueroûtins— «M. Robespierre». Berlin, 1958.

<sup>142</sup> Mathiez A. La vie chère et le mouvement social sous la terreur. Paris, 1927 (ռուսերեն թարգմանությունը 1928 թ.); տե՛ս նաև Соболев А. Первая республика. Пер. с франц. М., 1974.

<sup>143</sup> Քաղվածքն ըստ՝ Bouloiseau M. Robespierre, p. 69.

<sup>144</sup> Oeuvres complètes, t. IX, p. 361, 363—366, 367. Կոնվենտում ապրիլի 10-ին արտասահած ճառում Ռոբեսպիերը Բրիսսոլի հետ միասին մեղադրեց նաև Գաղին, Վերնիոյին, ժանսոնին և ժիրոնդիստական մյուս պարագուխներին (Ibid., p. 376—399).

<sup>145</sup> Տե՛ս Մասնավորապես նրա ճառերն ուղղված Բրիսսոլի և Գաղինի դեմ լակոբիների մոտ 1792 թ. ապրիլի 27-ին (Oeuvres complètes, t. VIII, p. 304—318), ճառը Կոնվենտում 1792 թ. հոկտեմբերի 29-ին (Ibid., t. IX, p. 62—67), 1792 թ. նոյեմբերի 5-ին (Ibid., t. IX, p. 79—100), 1792 թ. դեկտեմբերի 19-ին (Ibid., t. IX, p. 172—175), ճառը Ցակորինյան ակումբում 1793 թ. մարտի 13-ին և ապրիլի 12-ին (Ibid., t. IX, p. 32—36, 419—421), ճառերը Կոնվենտում 1793 թ. մարտի 27-ին և 29-ին (Ibid., t. IX, p. 333—338, 324—340):

<sup>146</sup> Oeuvres complètes, t. IX, p. 487—488.

<sup>147</sup> Տե՛ս նրա ելույթները Ցակորինյան ակումբում 1793 թ. ապրիլի 3-ին. Oeuvres complètes, t. IX, p. 357—359, 526, 537:

<sup>148</sup> Քաղվածքն ըստ՝ Матъез А. Французская революция, т. III. М., 1930, с. 13, 14.

<sup>149</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 18:

<sup>150</sup> Տե՛ս նրա ճառերը Կոնվենտում 1793 թ. ապրիլի 24-ին և մայիսի 10-ին:

<sup>151</sup> Oeuvres complètes, t. IX, p. 459—470; Discours de M. Robespierre sur la Constitution. Paris (1793).

<sup>152</sup> Oeuvres complètes, t. IX, p. 454—472. (Մարտի և քաղաքացու իրավունքների ղեկավարացիայի նախագծի տեքստը); Hamel E. Histoire de Robespierre, t. II p. 635—688, որտեղ նշված են նախագծի տարբերակները:

<sup>153</sup> Oeuvres complètes, t. IX, p. 488.

<sup>154</sup> Ibidem.

<sup>155</sup> Robespierre M. Sur les principes du Gouvernement révolution-

- tionnaire.—Textes choisis, préf. et commentaire par J. Poperen, t. III. Paris, 1958, p. 99.
- <sup>165</sup> Ibidem. (ամբողջ ճանի տեքստը՝ էջ 98—109):
- <sup>166</sup> Robespierre M. Sur les principes de morale politique...— Textes choisis, t. III, p. 111.
- <sup>167</sup> Robespierre M. Sur les principes du gouvernement révolutionnaire.— Textes choisis, t. III, p. 99.
- <sup>168</sup> Ibid., p. 108.
- <sup>169</sup> Ibid., p. 118.
- <sup>170</sup> Ibidem.
- <sup>171</sup> Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 20, с. 267.
- <sup>172</sup> Այդ բանն իր ժամանակ արդարացիորեն նշել են և՛ Մատյեզը (Etudes sur Robespierre. Paris, 1958, p. 45) և՛ Ս. Օլարը («Ораторы революции», т. I, с. 331).
- <sup>173</sup> Пушкин А. С. Полн. собр. соч., т. VII, М., 1958, с. 356.
- <sup>174</sup> Robespierre M. Sur les principes de morale politique.— Textes choisis, t. III, p. 113.
- <sup>175</sup> Robespierre M. Oeuvres... avec une historique des notes et de commentaires par Laponneraye..., t. 3. Paris, 1840, p. 672.
- <sup>176</sup> Oeuvres complètes, t. IX, p. 463—469, վրչակական տեքստում մտցրվեցին որոշ փոփոխություններ, որոնք, սակայն, ձխախտեցին նրա հիմնական սկզբունքները:
- <sup>177</sup> Saint-Just. Discours et rapports, p. 145.
- <sup>178</sup> Տե՛ս Soboul A. Les Institutions républicaines de Saint-Just, d'après les manuscrits de la Bibliothèque nationale.— «Annales historiques de la Révolution française», 1948, p. 193 et suite.
- <sup>179</sup> Կնիս Վ. Ի. ժլժ, հ. 15, էջ 278—279:
- <sup>180</sup> Կնիս Վ. Ի. ժլժ, հ. 33, էջ 246:
- <sup>181</sup> Mathiez A. Les notes contre les Dantonistes.— «Etudes sur Robespierre». Paris, 1958, p. 138.
- <sup>182</sup> Ibidem.
- <sup>183</sup> Robespierre M. Sur les principes de morale politique.— Textes choisis, t. III, p. 122—123.
- <sup>184</sup> Матъез А. Французская революция, т. III, с. 142.
- <sup>185</sup> Lefebvre G. Questions agraires au temps de la terreur, p. 5.
- <sup>186</sup> Robespierre M. Sur les rapports des idées religieuses et morales avec les principes républicains et sur les fêtes nationales. Paris, an II; Buchez et Roux. Ibidem, t. XXXII, p. 353—381; Hamel E. Histoire de Robespierre, t. III, p. 540—541.
- <sup>187</sup> Walter Gérard. Robespierre, t. I, Paris, éd. définitive, 1961, p. 429.
- <sup>188</sup> Robespierre M. Sur les rapports des idées religieuses et morales...— Textes choisis, t. III, p. 156.
- <sup>189</sup> Ibid., p. 156—159.
- <sup>190</sup> Ibid., p. 155—180.

- <sup>191</sup> Robespierre M. Oeuvres... par Laponneraye, t. 3, p. 655.
- <sup>192</sup> Ibid., p. 661.
- <sup>193</sup> Ibid., p. 660—672.
- <sup>194</sup> Матъез А. Французская революция, т. III, с. 195.
- <sup>195</sup> Տե՛ս Адо А. В. Крестьянское движение во Франции во время Великой буржуазной революции конца XVIII века. М., 1971.
- <sup>196</sup> Furet F. et Richet D. La Révolution, v. 1—2. Paris, 1965.
- <sup>197</sup> Робеспьер М. Избранные произведения, т. III, с. 36.
- <sup>198</sup> Robespierre M. Oeuvres, t. IX—X.
- <sup>199</sup> Տե՛ս Лукин Н. М. Избранные труды, т. I. М., 1960, с. 230—340.
- <sup>200</sup> Տե՛ս Procès instruit et jugé au Tribunal révolutionnaire contre Hébert et consorts... P. an II; կան և այլ դատավարության դատական հաշվետվության տպագիր տարբերակներ:
- <sup>201</sup> Робеспьер М. Избранные произведения, т. III, с. 144—145.
- <sup>202</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 138—195:
- <sup>203</sup> Նույն տեղը, էջ 203: Ռոբեսպիերը դրան անդրադարձավ նաև հուլիսի 5-ի ելույթի հետագա մասերում:
- <sup>204</sup> Քաղվածքն ըստ՝ Bouloiseau M. Robespierre, p. 121.
- <sup>205</sup> Տե՛ս Բոդանին լուղված Բարյոնի արդեն մեղքերված նամակը՝ Es-pinas A. La Philosophie sociale du XVIII siècle et la Révolution. Paris, 1898, p. 257—288:
- <sup>206</sup> Robespierre M. Oeuvres, t. X.
- <sup>207</sup> Робеспьер М. նշված աշխ. հ. 3, էջ 200:
- <sup>208</sup> Նույն տեղը, էջ 183:
- <sup>209</sup> Նույն տեղը, էջ 196—197:
- <sup>210</sup> Նույն տեղը, էջ 196:
- <sup>211</sup> Նույն տեղը, էջ 183:
- <sup>212</sup> Նույն տեղը, էջ 199 (Յակոբինյան ակումբում 1794 թ հունիսի 1-ի ճամբը):
- <sup>213</sup> Տե՛ս Олар А. Политическая история французской революции. Пер. с франц., М., 1938, с. 601—605; Pariset G. La Révolution, p. 242.
- <sup>214</sup> Mathiez A. Robespierre à la Commune le 9 Thermidor.— «Etudes sur Robespierre», p. 185—213.
- <sup>215</sup> Ibid., p. 210.
- <sup>216</sup> Քաղվածքն ըստ՝ Mathiez A. La politique de Robespierre et le 9 Thermidor expliqués par Buonarroti.— «Etudes sur Robespierre», p. 268, 279.
- <sup>217</sup> Буонарротти Ф. Заговор во имя равенства, т. I, с. 87, 160.
- <sup>218</sup> Քաղվածքն ըստ՝ Mathiez A. Etudes sur Robespierre, p. 270
- <sup>219</sup> Робеспьер М. նշված աշխ. հ. 3, էջ 202:
- <sup>220</sup> Saint-Just Oeuvres complètes, t. II, Paris, 1908, p. 508.
- <sup>221</sup> Робеспьер М. նշված աշխ. հ. 3, էջ 184:
- <sup>222</sup> Նույն տեղը:
- <sup>223</sup> «Discours prononcé par M. Robespierre à la Convention nationale dans la séance du 8 Thermidor de l'an II».

ԺԱՆ-ԺԱԿ ՌՈՒՅՈՅԻ  
ՎԵՐՋԻՆ ԺԱՄԸ\*

I

Փանդաղ անցուզարձ անելով ՚ին պարտեզի արահաններով, նա անընդհատ մտածում էր, մտածում այն մասին, թե ինչու, չանուն ինչի են նրանք իր դեմ աչդպիսի դատան, աննաչու պաշքար մղում: Իսկ ինչ են ուզում նրանք: Երբ մտածում էր իր ուսուցիչների, իր հակառակորդների մասին, նա միշտ մտովի արտասանում էր «նրանք»: Բայց ովքե՞ր են «նրանք», որտեղի՞ց էին ձևավորվել այդ թշնամական, շարագործ «նրանք»:

Հավանաբար նա դռնում էր, որ «նրանք»՝ երեկի և սնապարծ պարոնների ամբողջ աշխարհն է, արքունիքի բոլոր այդ մեքենավոր անձինք, բարձրաստիճան և հարուստ մարդիկ, որոնք իրվել են մանրասրտիկ մրցակցություն, դաշտնի շարամիս թշնամանքի, թարուն դավերի, վրիժառու պլանների մեջ, այդ ամբողջ մրցանակոցը, ոչ, նույնիսկ ոչ մրջնանոց (մրջյունները դեռ աշխատում են), պարզուպես միմյանց հռչակող փոքրիկ, շար կակների կեղտոտ կույտը:

Զգիտես ինչու, միտմամանակ նա ավելի հաճախ էր ՚իշում իրեն ամբար-տավան պահող, հիմար տիկին զը լա Պուպլինիերին՝ միլիոնատեր գլխավոր կապալառուի կնոջը և զուքս Ռիշելիեի սիրուհուն: Վաղուց անցած զնացած տարիների այդ ՚իշողություններն անսպասելիորեն վերականգնանանում էին: Աստված իմ, ինչ աստիճան հիմար ու ոչնչութան են կանայք: Կնոջը՝ բնության այդ զեզեցիկ արտաժին իր ողջ նմաչից զրկելու և նրան հիմար սագի վերածելու համար պետք է զարձնել տիկին զը լա Պուպլինիեր: Իսկ չէ որ այդ տիկինն իրեն համարում էր արվեստասեր, երգահան Ռամոնի սիրելի աշակերտուհին և անասարկելի տանով, իր ուսուցիչ փոխառած տունով, նա կտրուկ դատողություններ էր արտահայտում այս կամ այն կրոնական ֆրագի մասին: Բայց զե ի՞նչ էր հասկանում նա զրոնից: Ընդհանրապես ի՞նչ էր հասկանում նա երաժշտությունից: Միակ բանը, որ նա կարողանում էր անել՝ իր խարդախամիտ ամուսնու օգուտները հաշվելն էր:

Այո, իսկ ինչու՞ են, այնուամենայնիվ, այլպես կատաղաբար, այլպես անհանդուրժելիորեն չէր սիրում նրան՝ Ժան-ժակին: Զէ որ վերջինս երբեք

\* Չլուիս Ա. Զ. Մանֆրեդի կողմից նախապատրաստվող «Ժան-ժակ Ռուսո» գրքից:

214 *Séa, opřinակ* Матвез А. Французская революция. т. III, с. 194.  
215 *Robespierre M.* Discours et rapports, publ. par Ch. Veilay, p. 384.  
216 *Ibid.*, p. 422.  
217 *Ibid.*, p. 336—397.  
218 *Barthou Louis.* Le Neuf thermidor. Paris, 1926, p. 81.  
219 «Moniteur», № 311; *G. Walter.* Robespierre, v. I. Paris, 1961, p. 462—463.  
220 Archives Nationales, F7.  
221 *Matiez A.* Robespierre à la Commune le 9/thermidor.— «Etudes sur Robespierre», p. 184—213; *Մլուրսնի, Ժակուայի, և Չլուիակի համընկնող շուցմունքները բերել է Մատյեզը (Ibid., №. 207—208).*

Նրան անբարեբաղձարի, որիւ մի աշխարհի բան չէր ասել, ինչը նրան կարող էր վիրավորել:

Ոչ, ժան-ժակը գիտեր, իհարկե, թե բանն ինչու՞ն է: Այդ չափազանց ինքնավստահ տիկինը, ինքնավստահ այն պատճառով, որ նրա ամուսինը անհաշիվ հարուստ էր, համանին նշանավոր էր ու ազդեցիկ, իրի ուսուցիչը՝ ամենանշանավոր երաժիշտ, նրա՝ ժան-ժակի աշերտում, նրա հայացքում անսահման ատելություն էր կարգում իր նկատմամբ. Ռուսն չէր կարողանում թաքցնել այդ, և տիկինը չէր ներում նրան: Ախր մարի սագեղը նույնպես, չհասկանալով բառեր, կարողանում են Ֆշշալ:

Ասենք, ասոված տիկին զը շա Պոպոլինիերի հետ: Զի որ կզա այգպիսի մի անսպասելի բնահաստիցում՝ հիշելու այդ հիմար կնոջը, որին նա չէր տեսել մտա երևուսն տարի:

«Նրանք» ոչ միայն հարուստներն էին, որխստոկրասները, պալատական վերնախավը «Նրանք» — նաև նրա երկկիա բարեկամներն էին, նախկին համախոհները: «Նրանք» թվում էին ն՝ ձեր Վոլտերը, սրը նրա նկատմամբ անշիշեղի շարություն էր տաժում, ոչ, ոչ թե շարություն, այլ ատելություն, և Գենի Գիգորն՝ վաղեմի ու բարի ընկերը, մտերիմ բարեկամը, Գիգորն, որին նա ամբողջ Փարիզը կտրելով էր այցի գնում Վենետիկ դռակի, հրճվելով առաջիկա հանդիսմամբ՝ համարելով այն սրպես իր կյանքի ամենաերջանիկ օր, և՛ փորթիկ, նախանձուտ ու շար Մեյլիտր Գրիմը՝ նախկինում նույնպես մտերիմ ընկերը, և՛ տիկին ղ՝ չայկինն, և՛ բարսն Հուրիսը, և՛ Բորզը, որին նա երբեմնի այնպես էր հավատում, և էլի ուրիշ քանի քանիսը:

Բուրբ, բուրբ բարեկամները վերածվեցին թշնամիների:

Բայց ի վերջո ի՞նչ էր կատարվել: Ինչպե՞ս պատահեց: Ինչպե՞ս բարեկամները թշնամիներ դարձան:

Միգուցե միայն ժան-ժակն ի՞նչն էր ամեն ինչում մեղավոր: Միգուցե ի՞նչն էր ինչ-որ բանում անիրավացի: Ինչ-որ կերպ վիրավորել էր նրանք: Զի՞ր լսել նրանց ազարացի ու բարի խորհուրդները:

Ոչ, այս ամենը հարյուրավոր անգամներ է կշռադատվել ու սուսվել: Ոչինչ չկար իրեն նախատելու: Նա իր նախկին բարեկամների առջև մեղավոր չի զգում: Անգամ շարություն լուրի նրանց նկատմամբ: Ահա Վոլտերը նրա նկատմամբ սև, անհաղորդ շարություն է տաժում, իսկ ժան-ժակն այդպիսի զգացում չունի նրա հանդեպ: Կամ գրող է, կամ բանաստեղծ: Ժան-ժակը ինքն է ինչ-որ ժամանակ նրա մտա սովորել: Նա երբևք չէր մոռանում, որ Վոլտերը իրենից մեծ է 18 տարով, և նրա նկատմամբ իր մեջ ոչ շարություն, ոչ էլ նույնիսկ թշնամանք կա: Ափսոս միայն, որ այդ խելացի մարդը իր տաղանդը մանրացնում էր ինչ-որ դիպի-բիզի բաների, խաբուսիկ, շքեղության: Ասենք, ասոված նրա հետ: Նա արդեն ավելի քան 80 տարեկան է, շուտով վաչցելի մահը, մահը բուրբին կաչցելի՝ Վոլտերին, իրեն՝ ժան-ժակին, Գիգորյին, նույնիսկ այն հիմար Գրիմին, մահը բուրբին հավասարեցնում է:

Նա հաճախ էր նստում նստարանին. այժմ նրա համար դժվարացել էր երկար քայլելը, ոչ, սիրտը չէր հիվանդ՝ պարզապես նա հոգնում էր:

Նա ակնք էր դնում, թե ինչպես են խշշում տերևները և ինչպես է թռչունակը, որի ձայնը նա դժվարանում էր որոշել, աներևույթ, ինչ-որ տեղ թփերի մեջ, համառորեն, անխոնջաբար ինչ-որ բան ճովողով՝ ծի՛վ-ծի՛վ, ծի՛վ-ծի՛վ, ծի՛վ-ծի՛վ, ծի՛վ-ծի՛վ:

Ասոված իմ, որբա՛ն գեղեցիկ, որբա՛ն վեհասքանչ է հավերժական, երբեք չվեռնող բնությունը:

Նա երկար-երկար կարող էր նստել պարտեզի նստարանին: Ո՞վ է հաշվում ժամանակը: Գուցե մեկ ժամ, գուցե երեք, միևնույնը չէ՞: Նա ունկնդրում էր այդ ծանոթ և միշտ նոր ձայների՝ խշշացող տերևների սիմֆոնիային, թռչունների այլաձայն երգին: Միգուցե նրան նույնիսկ թվում էր (ոչ, հավանաբար, նա ինքն է դա հնարել), նույնիսկ նա լսում էր, թե ինչպես է մեղմիկ-մեղմիկ, գրեթե անաղմուկ, ասես փաթաթված բամբակով կամ, հավանորեն, մառտուով, անում խոտը:

Առանձնացած երգող ծիփների ու լորենիների սաղարթների, թռչունների ուրախ, այլաձայն երգերի, ատանձնացած հողի կանաչապատ հյուսիսի հետ՝ նա իրեն այնչի լավ, ավելի հանգիստ, նույնիսկ ավելի վստահ էր զգում. նա իր տանն էր:

Երբեմն փայտիկով սվազի վրա դեռելով ինչ-որ բան, այդ ձեր մարդը հանկարծ սկսում էր կամացուկ ծիծաղել:

Ոչ, ոչ, ժան-ժակ, դու էրջոտ ես վարվել, դու բուրբից իմաստուն դուրս եկար: Նրանց շահողվեց թեզ հրապուրելով քաշել սարքված թակարդների մեջ, դու սարկեցիր նրանց ձեռքից:

Ահա նա նստել ու լսում է, թե ինչպես է ճղճում ծաղրահավը և համառորեն, ասես որե՛մ մեկին համոզելով, կրկնում է կոննեխների միևնույն կարճ ֆրազը. իսկ թխ, այնտեղ, ինչ-որ տեղ թե՛ հեղում հին, արդեն փառ՝ կնդկին է թխիխիկացնում փայտիթիկը: Նա զանազանում էր թռչունների ձայները, նա գիտեր գրանց բուրբին՝ չէ որ դրան նրա բարեկամներն էին: Եվ նա լավ գիտեր, թե էրբ են մեծ, կապուտ եղևիները վրա, լծի վրայով անցնող փորթիկ կամրջից ոչ հեռու, թռչել սկսում բարակ, բաց դեղնավուն թաղանթները և խոխոյն դուրս են գալիս, ինչպես ձագուկները բնից, փափուկ բաց-բաց կանաչ ասեղիկների ճյուղիկ-խրճիկները: Հետո դրանք կվերածվեն սովորական պինդ գորշ կանաչավուն ասեղների, բայց այդ ամենը կլինի ավելի ուշ, հետո... Հիմա դարուն է՝ մայիս, ու եղևնու տերևները, ասեղիկները, այդպես արագ բարձրացող խոտը՝ ամեն ինչ վերակենդանանում է:

Ոչ, նա կարողացավ շրջանցել իր զեմ լաված բուրբ ծուղակները: Եվ նա կարողացավ մեռլ իր ամենահավատարիմ բարեկամների՝ դեպի արևը վեր ձգվող խոտիկների, այս հասարակ դաշտային ծաղիկների՝ տարապիկների, բնախոտերի, խաստուտիկների, թռչունների դաշտային, սաղարթների ընդհատում աղմուկի հետ:

Նա լուռ քմծիծաղ էր տալիս: Հավանաբար մարկիզ զը ժիրարդենը, որ հեղվից աննկատելի հեռուում էր նշանավոր հյուրին, որի հանձարի առջև նա խոնարհվում էր, տեսնելով, թե ինչպես է ուսուցիչը ինչ-որ բանի վրա ժպտում, երջանիկ էր զգում իրեն:

Իսկ ժան-ժակն իսկապես բերկրանքից ծիծաղում էր: Կյանքը հետևում էր մնացի. նա արգեն 66 տարեկան էր. շա՞տ է դա, թե՛ քիչ: Հավանաբար շատ: Ժիշտ է, Վոլտերը 84 տարեկան է, և նա դեռ մարտնչում է, աքլորանում:

Ռուսն չէր խաբվում, ոչ, հարկավոր է նայել ճշմարտության աշերթին, կյանքն ավարտին էր մտանում: Վաղանցուկ տարիների մեջ շատ բան կար՝ և լավ, և վատ: Հավանաբար վատն ավելի շատ էր, քան լավը, և ժան-ժակը կարող էր ասել, ինչպես կալսը Վեսպասիանոսի պրետորիականներին պետք. «Յո-

Քանապուս տարի ես անց եմ կացրել երկրի վրա, իսկ ապրել եմ միայն յոթը»։  
Բայց, միգուցե, դա էլ ճիշտ չէ։ Արդյոք հնարավոր են քանակական չափում-  
ներ երջանկությանն ռուբլյունը բնորոշելու համար։

«Միայնակ երազողի գրասանքներին՝ նախավերջին, իններորդ գրասանքում  
ժան-ժակը գրում էր. «Երջանկությունը անփոփոխ վիճակ է, ոչ ստեղծված այս  
աշխարհի մարզու համար։ Ամեն ինչ երկրի վրա անընդհատ հոսում է, որը ոչ  
մի բանի թույլ չի տալիս ընդունել մշտական ձև։ Ամեն ինչ փոխվում է մեր  
շուրջը։ Մենք փոխվում ենք ինքներս, և ոչ ոք չի կարող վստահ լինել, որ վաղը  
սիրելու է նույնը, ինչ սիրում է այսօր։ Այդ պատճառով երջանկության մասին  
մեր մտքերն այս աշխարհում դառնում են ցնորք»։

Բայց այդ նույն երկի անավարտ մնացած վերջին՝ «Միայնակ երազողի  
գրույանքները» գլխում ժան-ժակը հակառակ ասվածին, հիշելով տիկինը  
Վարանսին, իր պատանեկության հետագուր երջանիկ ժամանակների մասին, այն  
վիճակ մասին, որին նա բոլորից շատ է սիրել, գրում էր. «Ձի անցնում մի օր,  
որ ես հիացմունքով ու խանդադրանքով չհիշեմ իմ կյանքի այդ անկրկնելի  
ու կարճ ժամանակը, երբ ես ամեն ինչում ինքս ինձ հեռ էի, անխառն ու ան-  
արգել, և որի մասին իսկապես կարող եմ ասել, որ ես այն ժամանակ սպ-  
րել եմ...»։

Ո՞րն է, ուրեմն, ավելի կարևոր, ավելի ծանրակշիռ՝ երջանկության կար-  
ձատե, անկրկնելի ժամանակը, թե՞ արեւից զտրվ երկարատև տարիները։

Այժմ նա ավելի հաճախ էր հայացք գցում անցած ուզու վրա։ Նա շատ է  
սխալվել։ Խաբված շատ հույսեր են եղել։ Եվ նա հաճախ է մի կողմ հեռա-  
ցել, շեղվել ճիշտ ճանապարհից։ Բայց այնուամենայնիվ նա չի հանձնվել աշ-  
խարհի որենսգրիներին, նրանք չեն ստիպել նրան գնալու իրենց ճանապարհով։  
Նրանք շատ էին ուզում այդ, իսկ նա հեռանում էր։ Ամեն անգամ ազատվում  
էր դրանց թախարհներից։ Հակառակ նրանց բոլոր շանքերի, բոլոր խորաման-  
կությունների նա, ժան-ժակը, այնուամենայնիվ գնում էր իր ճանապարհով։  
—Trotz alledem,— կարծեմ այդպես են ասում գերմանացիները։

Եվ շնայած նրա բերանը փակելու կամ տներով քաղցր արխաներ երգել  
ստիպելու բոլոր շանքերին, նա այդուհանդերձ կարողացավ ասել այն, ինչ  
ուզում էր։ Ոչ ամեն ինչ, իհարկե, և անգամ, միգուցե, ոչ ամենազիջավորը։  
Բայց այնուամենայնիվ նա հասցրեց ասել այն, ինչ պետք էր որ մարդիկ  
չսեխն։

Եզրի ավելի համեստ, ժան-ժակ։ Պետք չէ ամեն ինչ շափազանցել։ Դու  
մարդարեւ չես, մեսիս չես, դո՛ւ չես թողնելու հուշամատյան։ Դու հասցրեցիր  
զրել մի քանի գիրք, որոնք հանույթով էին կարդում. «Նոր էլոիզը», «Շաա-  
րակական դաշինքը»։ Ուրեմն դրանք ինչ-որ քանով պետքական էին։ «Նոր էլո-  
իզը» կարգում էին ազատներն, կանայք նույնիսկ արտասովում էին... Իսկ «Շա-  
արակական դաշինքը», ճշմարիտն ասած, քչերն են կարդացել։ Այդ գիրքը  
պետք էր ուրիշ կերպ գրել՝ ոչ այդպես շոր, ավելի ազատ, ավելի թեթև, այն-  
պես, որ կանայք նույնպես կարողանային կարգալ այն։

Նա կուզենար այժմ վերստին կարգալ այդ հետավոր գրքերը։ Դրանք  
գրվել են 15—16 տարի առաջ։ Որքա՞ն հեշտ էր գրվում այն ժամանակ...

Գլխում աննպաստի հիշողություններ էին փայտաշակում։ Վաղ պատանե-  
կության ժամանակ, թախառամների տարիներին պատահեց այնպես, որ հարկ  
եղավ մի քանի օր ապրել միայնակ ծեր նկարչի տանը։ Դա մի փոքրիկ գյու-  
ղակ էր լեռան վրա, Կլերմոն-ձեբրանի մոտ, կարծես Կրուսյեում, նա արգեն  
ստույգ չէր հիշում։ Այնտեղ կային ինչ-որ բուժիչ աղբյուրներ, և կույրերը,  
հաշմանդամները, տկար ծերունիները, զարհուրելի պատավ կանայք, հիվանդ-  
ներն ու անդամալույծները, առավտները գալիս էին խմելու այդ հրաշագործ  
ջուրը. նրանք հույս ունեին, որ այն իրենց կապաքինի։

Նկարիչը չէր սիրում այդ անդամալույծներին ու հիվանդներին հավանա-  
բար այն պատճառով, որ վախենում էր նմանվել նրանց. նա երբեք չէր  
գնում բուժիչ աղբյուրների մոտ։ Իր մեծ ու ամալի տանը նա ապրում էր  
ինքնամիտի ու մեկուսի։ Ամբողջ օրը նա կանգնում էր կտավի առջև և վերձ-  
նում այն, ինչ հետո հեռի իրեն դուր չէր գալիս. երկկայան վերադառնալով արհես-  
տա՞ոց, նա երկար գիտում էր օրվա արդյունքը և հետո վրձնի վճռական հար-  
վածներով ջնջում բոլորը։

Ժան-ժակը նրա մոտ գրադվում էր տնտեսության մասին նա բարձրացրեց ու  
ամրացրեց թերված ցանկապատը, փայտ կտորեց, բանջարանցում՝ կարտո-  
ֆիլ, դադար փորեց հանեց. նույնիսկ աղբառ անբնասանիք ծերունու տնտեսու-  
թյունում միշտ աշխատանք կատարվի։

Բայց երբ եկավ հրաժեշտի ժամը, և ժան-ժակը առավոտյան կողմ փոր-  
ձեց հեռանալ, ծերունին նրան խնդրեց մնալ մինչև երեկո. մինչև արեւ մայր  
մտնելը։

Ո՞ր ուներ շտապելու պատանին. որն անօթեան էր, ձեռքերը գրպանները  
խաթած դանդաղ թափառում էր գյուղական ճանապարհներով ու երգեր սուլում։  
Մեկ օր շուտ կամ մեկ օր ուշ անցնել հարևան գյուղը, եթե ոչ նպատակ կա,  
ու էլ հոգա՞ արդյոք միևնույնը չէ՞։

Ժան-ժակին դուր էր գալիս այդ նիհար, գունատ, նոսր, սպիտակ մա-  
զերը միշտ խնամքով հերարածան սանրած ծերունին, որի գեռ բոլորովին  
երխտասարդ մոխրագույն աչքերն ունեին արագ, թափանցող, կարելի է նույ-  
նիսկ ասել, ինչ-որ կատաղի հայացք, իսկ հագին հետաձալ սև լայն ժապավե-  
նակալով սեղթուլը ծածկում էր գեխտի պակասությունները։ Այդ լուակացը  
անժպտողն ծեր նկարչի մեջ ինչ-որ կարևոր, նշանակալից բան կար։ Ժան-  
ժակը անառարկելիորեն համաձայնեց։

Երկկայան, երբ արևն սկսեց մայր մտնել, նկարիչը, էլ ավելի հանդիսա-  
վոր ու վեհաշուք, քան երբեք, ձեռքով նշան արեց հետևել իրեն։

Նրանք լռուցացող, թեք աստիճաններով բարձրացան դատարկ, անբնակ,  
պատահական, ակնհայտորեն անբավարար կահույքով աղտոտ կահավորված  
երկրորդ հարկի և այնտեղից էլ ավելի թեք, նեղիկ աստիճաններով՝ ձեղնա-  
հարկ կամ ձեղնասենյալ։ Հավատարապես այն կարելի էր անվանել և այս-  
պես, և այնպես։

Դա մի բարձիթչի արված, անբնակ տեղ էր՝ լեկո-լեցուն ինչ-որ հնոտի-  
քով՝ քայքայված ոսկեղեժ շրջանակներով, ապակիներով, շարված մարմարի  
կտորտանքով, հին, լուբացած ներկերից խալտաճամուկ ներկապանակներով։

1 Руссо Жан-Жак. Избр. соч., т. III, с. 650.

2 Նույն տեղը, էջ 662։

աւարտադի տակ, անկուններում, ամենուրեք ձգվում էին սարդուսաթի թե-  
ւորը Պատուհանը նեղ էր, բայց տեղադրված էր բարձր, և այդ իրիկնաժամբ  
մայր մտնող արևի ճառագայթներն ընկնում էին ձեղնահարկի ամենախորքերը:  
Այնտեղ, ամենահեռավոր պատի մոտ, նկարակալի վրա կտավով ծածկված  
ինչ-որ բան էր դրված:

Նկարիչը ժան-ժակին բերեց պատուհանի մոտ, խոտորին հրամայեց.—  
Կանգնե՛ք՝ Տեղից չշարժվե՛ք.— և նրա վրա նետեց մի երկար հայացք՝  
ուշադիր, գնահատող (ըստ երևույթին նա ստուգում էր, թե չի՞ սխալվել եկ-  
վորի հարցում)։ Հետո դանդաղ, ծանրաբարո անցավ ամբողջ ձեղնահարկով  
մեկ ու մտռոնջավ նկարակալին:

— Voilà.— ասաց նա խիստ ձայնով ու ծածկոցը պոկեց նկարի վրայից:  
Դա կնոջ դիմանկար էր— բուրբուխի երիտասարդ, ոչ ավելի, քան 20—22  
տարեկան մի կնոջ դիմանկար: Նույնիսկ ավելի ճիշտ կլինեք ասել, դա կնոջ  
դեմքի պատկերում էր: Բայց մոխրավարդագույն ֆոնի վրա, խոշոր պլանով, ասես  
ստանձնանալով կտավից, ձեռք էր նայում երիտասարդ կնոջ դեմքը՝ երկզված  
ժնոտի տակ հանգուցված կապույտ գլխաշորով: Առաջին հայացքից նույնիսկ  
կարող էր թվալ, որ դա կուսակրոն կնոջ դիմանկար է: Գեմքը կիսահակ էր.  
պեղաբան շահել կենց նայում էր վարից վեր. նա կարծես տիրում էր ձեռք,  
ընդգրկում այդ խորունկ, առիներող հայացքով: Պիրի ձգված անպաճուճ  
գլխաշորի տակից դուրս էին պրծել գանգուր, անհնազանդ թուխ մազերը. ոչ  
պարտեոց կար, ոչ ուսեր, ոչինչ չկար. միայն ներքև հակված կնոջ գլուխ և  
ասես խեթ-խեթ նայող աչքեր:

Ամենաապշեցուցիչը, իսկույն ձեռք գերողը, գրեթե անհավանական՝ հան-  
ձարի վրձնով գունված մշանձուհու հակված գլխի և ասես թե հայացքի խոր-  
քից եկող մի քիչ, հազիվ նկատելի կկոցված մոխրականաչավուն աչքերի ներ-  
դաշնակութունն է: Գլխի այդ հնազանդ թեքություն, ասես կլանող, ուղիղ ձեռք  
ուղղված հայացքի մեջ այնքան կյանք էր, այնքան գրավիչ, խոստումնալից,  
առիներող բան, այնքան արտաքին սրբություն և պայթուկչիչ, թաքուն մեղ-  
տակցություն, որ մայր մտնող արևի ճառագայթներից լուսավորված այդ հա-  
յացքից, այդ կանացի դեմքից չէր կարելի բաժանվել:

Ժան-ժակը ցնցված էր. արվեստի աչքերնեկի, գրեթե կախարհական  
ուժը ոչ ոքի անտարբեր չէր թողել: Այն պահում էր դիմանկարին: Ժան-ժակը  
զովաբանում էր բառեր գտնել:

— Իմ ուսուցիչ,— վերջապես ասաց նա (մինչև այժմ նկարչին նա ան-  
վանում էր «Մեսյո»),— իմ ուսուցիչ, դուք ստեղծել եք արվեստի ամենամեծ  
ստեղծագործությունը, որ երբևէ տեսել եմ ես, դուք հանձար եք:

— Voilà.— դարձյալ ասաց նկարիչը, և հուզմունքից մեղմացած նրա  
ձայնի մեջ արցունքներ զգացվեցին:

— Voilà.— կրկնեց նա երրորդ անգամ: Գուք տեսա՞ր: Դո՞ւ ես եմ նկա-  
րել...

— Ա՛խ, պետք էր լսել, թե ինչպես ասվեցին այդ բառերը: Այդ երեք  
բառի մեջ այնքան հպարտություն կար, այնքան երջանկություն: Ահա տեսե՛ք,  
թե ինչ կարող է արարել մարդը, երբ նա հասու է մեծ արվեստի գազանիք-  
ներին: Մոտավորապես այսպիսին էր այդ սակավաթիվ բառերի իմաստը:

Նկարիչը լռեց: Այո, այո, դրանք նրա կյանքի ամենաերջանիկ րոպեներն  
էին, հուզվող երջանիկ րոպեներ, և նա դժվարությամբ էր հաղթահարում  
հուզմունքը:

— Տարին մեկ անգամ, այս ժամանակ, երբ այստեղ են թափանցում  
արևի ճառագայթները, ես գալիս եմ, որովհետև ես չեմ այս դիմանկարին: Բայց  
հա ստացվել է, ճիշտ չէ՞: Ահա բոլորը, ինչ մնում է ինձնից.— նա վերստին  
լռեց.— Ե՞վ սա արել է նույն վրձինը.— լրացրեց նա դառնադեմ,— որն այսօր  
արդեն չի կարող ոչ մի տանելի բան ստեղծել:

Այդ ժամանակվանից գրեթե կես դար է անցել: Աստված իմ, որքան վա-  
ղուց էր այդ «Ինչպե՞ս կարելի էր մոռանալ այդ Այդ ամբողջ երկար ու ձիգ  
տարիների ընթացքում ժան-ժակը չի հիշել ոչ պատանեկության տարիներին  
հրան ցնցող կնոջ դիմանկարը, ոչ էլ նրա հանձարեղ արարչին՝ ծեր նկարչին,  
մեծ նկարչին, որ մահացել էր մենակ ու անհայտ:

Ինչպե՞ս կարող էր պատահել, որ երկար տասնամյակների ընթացքում նա  
ոչ մի անգամ չհիշեց այդ հանձարեղ արարչին, մեծ վարպետին, որն ապրում  
էր անհայտության մեջ, հիշողության մեջ չի պահել նույնիսկ նրա անունը  
(եթե միայն իմանար այն), նրա մասին չի պատմել ժամանակակիցներին:  
Ինչպե՞ս կատարվեց դա:

Իսկ ահա այստեղ, երմենոսվիում, 1778 թվականի շարնանը նա մշտա-  
պես հիշում է այդ կանացի սաղեսուցիչ դեմքը, որ շնորհակալ ամբողջ կյանքում,  
միտք-ինչ կկոցած աչքերը և այդ հայացքը վերից վար, որ երբեք չէր կարելի  
մոռանալ, մարդկային հանձարի գարմանահարաչ, անկրկնելի ստեղծագործու-  
թյունը:

«Դա ես եմ արել».— այն ժամանակ ասաց ծեր նկարիչը, և նա երջա-  
նիկ էր: Ե՞վ իրոք, մի՞թե սա բարձրագույն երջանկություն չէ՞ մեծ կտավի վրա  
հանձարի վրձնով ստեղծել արվեստի ամենահանգիստագործություն:

Իսկ դու, ժան-ժակ, կարո՞ղ ես դու էլ նույնն ասել՝ «այդ ես եմ արել» և  
հաշտվել նույն, հպարտության ու երջանկության կոկորդ խելզող զգացմունքը:  
Ոչ, արդարամիտ եզիր ինքզ թո առն՝ դու չես ստեղծել արվեստի նույնքան  
մեծ, հրաշալի, անանցուցիկ ստեղծագործություն:

Իսկ այդ անժպտաբեմ ծեր, անպաճուճ նկարիչը, որն արարել էր Ռա-  
ֆայելի, Վելասկեսի, Վան Դելիի կտավներին շիրջոջ ստեղծագործություն, մե-  
տավ անհայտության մեջ, և ոչ ոք երբեք չի իմանա նրա անունը: Իսկ ան-  
կրկնելի կոնացի դիմանկարը: Որտե՞ղ է այն: Ի՞նչ վիճակում է: Հավանաբար,  
ընկած է ինչ-որ մեկի ձեղնահարկում փոշոտված, թուրջ ու փայլափ և հնուտի-  
քի մեջ, և որևէ մեկի անխիղճ, դաժան ձեռքերը կշարունակեն այն անկյունից ան-  
կյուն, մինչև որ նետեն արդակույտի մեջ:

Իսկ թո գրեթե, ժան-ժակ, հրատարակում են ամբողջ աշխարհում, թարգ-  
մանում են բոլոր լեզուներով... Իսկ դու ոչ մտք էլ չիղղում, ոչ «Ծյուղական  
կախարհում», ոչ մի բանում չես բարձրացել վարպետության այն անհասանելի  
մտկարողակին, մինչև արվեստի այն գագաթները, որին հասել էր բոլորին ան-  
հայտ, անանուն մեծ նկարիչը:

Ուրեմն ո՞րն է ստեղծագործություն երջանկությունը:  
Թանքորեն հեղեղելով ձեռնափայտին, նա շանդաղ քայլում էր պարտեզի

ժառուղիներում և անընդհատ մտածում այնքան դժվար լուծելի այդ հարցերի մասին:

Այո, այո, ամեն ինչ հեշտ էր և հեշտ չէր:

Ահա նա, ժան-ժակ Ռուսոն, գրողը, որի անունը հայտնի է ամբողջ աշխարհում, որի յուրաքանչյուր խոսքն ուշադրություն են ունեկորում, հեռացավ քաղաքից, երեկվա բարեկամներից, որոնք հետապնդում էին նրան թշնամանքով, մեկուսացավ էրմեննովիում, թուրինների, խոտերի ու ծառերի՝ անկեղծ բարեկամների շրջապատում... Թվում էր, թե այլևս ցանկանալու ոչինչ չկա:

Իսկ նա չի կարող ապրել առանց մարդկանց. նա փոխավ նրանցից, փախավ ապականված աշխարհից, սինթրոնների խմբակցությունից, մրցակցող մխարան խմբերից և խառնակալամբերից, դադարի դավերից, խաբեությունից, աւելությունից, մանրախնդիր Եփեսոսից, վրիժառու խարդավանքից, ուխտագրծությունից: Եվ ի՞նչ, երբ շարաթ նա ներծծում էր փթթող սաղարթների արեցուցիչ հոտը ու երանություն էր վայելում, իսկ հետո՞ւ: Հիմա նա ավելի ու ավելի հաճախ է դալիս պարտեզի ցանկապարտի մոտ և հեռվից նախանձով նայում, թե ինչպես են փոքրիկ աղջնակները բացականչություններով, վրձնլուծ խաղում, ինչպես են կանայք, թևերը վեր բշտած, արհեստական լճակի ստոր շրտմ կարմրած, կոպիտ ձեռքերով պարզաշրտմ սպիտակեղենը, ինչպես է ծանրաբարո սեկզզեուս կյուրեն զոտոգաբար գնում իր հոտերից մեկի մոտ և արդեն կիսաձայն ինչ-որ բան է արտասանում, հավանաբար պատրաստելով դամբանական ճառ... Ժան-ժակը չի կարող ապրել առանց մարդկանց. Հասարակության մարդը տխրում էր առանց նրանց, մտովի նա միշտ մնում էր մարդկանց հետ:

Ի՞նչ անել, ուրեմն:

Այո, ժան-ժակ, դու չկարողացար ցայտունորեն պատկերել կյանքը, նրա շունչը, նրա զույնները, նրա բուրմունքը, ինչպես դա կարողացավ անել անսունուն մեծ նկարիչը կանացի ու մեծ դիմանկարում: Դեհ, ինչ արած, յուրաքանչյուր ոք անում է այն, ինչ ավելի մոտ է իրեն: Նշգրտենք կաղնի չէ: Դու արեցիր այն, ինչ համապատասխանում էր քո խառնվածքին, քո բնությունը: Դու գնում էիր քո ճամպարհով՝ հոտանքին հակառակ և դու հավատարիմ էիր ճշմարտությանը: Դու մարդկանց ցույց ավելցիր, թե ինչպես անարդարացի, ինչպես անհատար է այս աշխարհը: Ուրեմն պետք է ձգտել այն դարձնելու ավելի լավը:

Ահա, ըստ էության, և բոլորը: Պետք չէ ոչինչ ավելացնել: Կյանքը մոտենում է վախճանին, և անցածին այլևս ոչինչ չես կարող ավելացնել: Միայն թե պետք էր այլ կերպ գրել՝ պետք էր գրել ավելի հասարակ, ավելի պարզ, ավելի խիստ:

Ժան-ժակը դեհատում էր ճշգրիտ բանաձևերը: Միտքը միշտ պետք է պարզ արտահայտվի՝ բուրնով, որոնք չի կարելի ու փոխարինել, ու էլ տեղերը փոխել: Նույնիսկ այժմ, երբ դրվում է դժվարություն, նա գեռես աշխատում է միտքը մարմնավորել ճշգրիտ, պարզորոշ բանաձևի մեջ: Ահա նորևս գրեց. «Ուժ և ազատություն՝ ահա թե ինչն է մարդուն դարձնում զեղեցիկ»: Միտքն արտահայտված է պարզ ու ստույգ, ինչպես մաթեմատիկական բանաձև: Այդպես պետք է գրել: Եվ այնուամենայնիվ «Հասարակական դաշինքը» ծանրաբեռնված է բանաձևերով. չէ որ գրականագետը պետք է իմա-

նա ու միայն մաթեմատիկայի, այլ և երաժշտության օրենքները: Իսկ «Հասարակական դաշինքում» երաժշտությունը թիչ է. այդ տրակտատը շափաղանց քանական է:

Ափսոս, որ այդ բանը նա ուշ հասկացավ, եթե ժամանակ և ուժեր մնային, հնարավոր կլիներ նույն մտքերն արտահայտել այլ կերպ. միգուցե նա կհասցներ՝ գրել վաղուց, դեռևս վեներիկում մտադրված «Փաղաքական օրենքները»: Ոչ, հազիվ թե: Արդեն արևը մայր է մտնում:

Եվ այնուամենայնիվ դիմավորը նա հասցրեց ասել, նա կարողացավ բացատրել, ապացուցել, նա կարողացավ իր հայտնաբերությունը դարձնել համընդհանուր կարծիք. ու, պետք է ավելի դուրս անել՝ շտտերի կարծիքը, որ առանց ազատության, առանց համասարության չի կարելի ապրել:

Մեր հորեզրայր Բեքնարը դա երբեք չէր հասկանում: Նա, ժան-ժակն էլ ասալը այդ բանը չգիտեր: Իսկ չէ որ ամեն ինչ այնպես պարզ է: Պետք է ապրել ավելի հասարակ, ավելի լավ, պետք է ապրել բնական օրենքներով, ավելի մոտ լինել բնությանը: Ինչո՞ւ և շիկահավը երգում: Այն պատճառով, որ նա ազատ է: Վերադարձրեք մարդկանց ազատությունը, աշխարհը կսուղեկ այնպես, որպեսզի չլինեն ուշ հարուստներ, ու այդ ամբարտաժան բարձր դասը ու տիկինը դր լա Պոպյինիեր, ու դուքս Ռիչլիխ, որպեսզի բոլոր լինեն հավասար ու ազատ, և աշխարհը կդառնա զեղեցիկ, ինչպես այս բարձր, մութ կուպուտակ երկիրը:

Ըստ էության որքան պարզ է այս ամենը: Իհարկե, արիստ, որ նա՞ ժան-ժակը արդեն չի տեսնի, թե ինչպես կսկսի այլանդակվել, կսկսի փլուզվել, քայքայվել այս ծեր, լար, մուսյլ ուղիարհը:

Այնուամենայնիվ, ժան-ժակ, դու կյանքն ապրել ևս ու որպես կույր խուրդ, ու էլ հիմար խիտուց. դու նախացար, դու կուսեցիր, թե ուր է հոտում լուսնային հեղեղը:

Իհարկե, եթե այս ամենը տեսներ սեփական աչքերով... Միգուցե...

Բայց ու, ժան-ժակը գիտե՞ ինքը չի ապրի մի գարուն ևս: Էհ, հետո՞ ինչ վերջ, ամեն ինչին վերջ է գալիս: Ժան-ժակը չի լինի: Թող այդպես լինի. նա արեց այն ամենը, ինչ կարող էր: Իսկ կյանքը կշարունակվի:

Արդյոք նա խորհե՞լ է ապագա աշխարհի մտախն: Նոր, արդարացի, բնական իրավունքի վրա հիմնված հասարակության մասին, որը փոխարինելու կգա շարակամների, երեկյանների ու հարուստների պակասավոր աշխարհին:

Այո, իհարկե, այդ մասին նա միշտ մտածում էր: Եվ ո՞վ չի դաջցել օդում տարածվող այդ նախամարտայային շրջանի քամիները, վերահաս փոփոխությունների մտապուտար: Եվ այնուամենայնիվ, էրմեննովիում, այդ վերջին գարնանը նա արդեն զգում էր վախճանի շունչը, և նրա մտքերն ավելի հաճախ ուղղված էին լինում անցյալին, քան թե սպուդային:

Այո, ապա ինչո՞ւ երեկվա բարեկամները վերածվեցին թշնամիների: Ամենից առաջ այն պատճառով, որ նա չգնաց նրանց ճանապարհով, որ նա չկամեցավ հետևել նրանց:

Ահա այդ փոքրիկ, ամբարտաճանությունը լեցուն Մելիսիր Գրիմը: Նա ամբողջովին պայտում է ինքնագոհությունից, նա քայլում է մուսյլ, ծանր ու մեծ, ինչպես փզվում հնդկահավ: Նրա համար ամենակարևորն այն է, որ նա ու

Քն պարզապես Գրիմն է, այլ monsieur baron de Grimm:— պարոն բարոն զը Գրիմը:

Այ, եթէ ժան-ժակը նույնպես սկսեր թրև դալ ազնվական պարոնների ընդունարաններում, եթէ նա սիրահաներ բարձրաստիճան անձանց սիրուհիներին, երբ նա բոլոր միջոցներով՝ բնանքով, սիրաշահելով, ճարտարամիտ բուրգոսարային դիվանագիտությամբ սկսեր իր համար պարզներ, կոչումներ, աստիճաններ ձեռք գցել, այն ժամանակ, իհարկե, Մելիսթր Գրիմը կմնար Ռուսոյի սրտակից բարեկամը:

Վուտերը չէր կարող ներել, որ ժան-ժակը գիտեր, թե ինչպես է ինքը՝ ձեր, ամբողջ աշխարհում փառաբանված գրողը շահում այդ փոքրիկ տիկին դ՛էտիոյի բարեհաճությունը, ինչպես էր նրան հաճոյանում, ինչ-որ ոտանավորներ, մազրիգաներ գրում: Իսկ ինչո՞ւ ինչի՞ համար էին դրանք: Այդ հաճոսակատարությունը, այդ ստորագրությունը աշխարհի գործերի առջև՝ դա նրանց բոլորի արյան մեջ էր: Ինչպե՞ս էր այն ժամանակ 1752 թվականին, Գիզոնի (այդ շրջանում նրանք բարեկամներ էին) համոզում, որպեսզի ժան-ժակը ներայանար թագավորի նշանակած ունկնդրությանը, օգտվեր նրան ընձեռնվող բարեբարություններից: Վուտերը նույնպես շատ կուղևնար այդ բանը: Վուտերը պատրաստ էր մնալու նրա բարեկամը, եթե նա, ժան-ժակը, նույն կերպ հաճատարություն աներ թագավորական սիրուհիներին, ինչպես դա անում էին Վուտերը, Գրիմը, բոլոր նրանք:

Մտաբերը թալում էին մի իրողությունից մյուսը: Փոքրիկ դ՛էտիոյը, մարկիզուհի զը Գրիմուհու, նա այնտեղնայնիվ մյուսներից ավելի լավն էր. նա գո՞ն ինչ-որ բան հասկանում էր արվեստից:

Cette petite bourgeoisie  
D'une manière grivoise...  
(Այդ փոքրիկ բուրժուազիան  
իր անպատկառ շարժումով...)

Աստված գիտե, թե ինչու էր նա վերհիշում հին հեղինական երգերի այս տողերը:

Այս ամենը եղել է վաղուց, շատ վաղուց, ավելի քան երեսուն տարի առաջ: Այն ժամանակ դեռ չէին հավատում, որ այս աշխարհը կխորտակվի: Իսկ այժմ, 75 թվականի հուլիսից հետո, Տյուրգոյի հրաժարականից հետո, բուրժուաներն են գաղտնի, բուրժուաներն են հասկանում:

Արդեն հառակ է առել, արդեն կյանք է մտել նոր ընձյուղը, երկուստարգաների նոր, ուրիշ սերունդ: Նրանք նման չեն իրենց նախորդներին: Նորերն ամեն ինչ գիտեն, ամեն ինչ հասկանում են, նրանք կարդացել են փիլոսոփայական գայրոցի բոլոր աշխատությունները, Ռուսոյի բոլոր երկերը. նրանք ժան-ժակին ուսուցիչ են անվանում, բայց նրանց համար քիչ են դադարախաղերը, մշտութունը. նրանք ձգտում են գործադրության: Դրանք գործադրության մարդիկ են. նրանք լի են այս աշխարհում ամեն ինչ շուտ տալու վճռականությամբ:

ժան-ժակի հիշողության մեջ հատկապես մեաց այդ երկուստարգաներից մեկը. կարծես, նա Սորբոնի իրավաբանական ֆակուլտետի ուսանող էր, իսկ ծնվել էր Արբուսում: Նա Փարիզից էրմենտվել էր եկել ստորով: Գառակ բան

չէ՛ ախր դա երկար Զանապարհ է, իսկ նրա կերպարանքից, կոստյումից, իրեն պահելու շարժումներից հոգնածության ոչ մի նշան չէր երևում, կարծես նա հենց նոր է դուրս թռել կառքից: Դա խնամքով, նույնիսկ պճնագեղորեն հասկերգված երիտասարդ էր, դիմափոշեծածկ, խոսքուպած կեղծամով, գրեթե պճնամուր նա խառում էր ցածրաձայն, շատ հասակ առողանություն, հանգիստ ու վտահա նա գիտեր Ռուսոյի երկերը, միջոցե, ավելի լավ, քան ինքը՝ ժան-ժակը. նույն անշտապ, վտահա շարժումով նա «Հասարակական դաշինքի» հեղինակին բացատրում էր, թե ինչում է տեսնում այդ երկի հեղափոխական մեծ նշանակությունը:

ժան-ժակի մեջ այն տպավորությունն էր մնացել, որ Սորբոնի համալսարանի այդ դեռևս բոլորովին պատանի, վաշխազու, իր պաշտպանած հայացքների իրավացիության մեջ անսասան վստահությամբ առնչյուն ուսանողին անհնար է շեղել դիրքերից. նա անխոցելի էր. նա պաշտպանված էր վստահության զրահով, նետերը պետք է նրանից հետ թռչեին: ժան-ժակի պատանեկության տարիներին այդպիսի երիտասարդներ զեռ բոլորովին չկային՝ դա կյանք մշտնոջ նոր սերնդի պատվիրակն էր:

ժան-ժակին ամենից շատ ապշեցնում էին իր մոտ եկած երիտասարդի աչքերը: Մոխրագույն, ոչ մեծ, հավաճ արար մի փոքր կարճատես այսեր: Բայց սրտապաշտ աչքեր: Այո, այո, ահա թե ինչու նա այդպես հիշողության մեջ պահեց արքայի այդ պատանուն: Պողպատյա հայացք: Ավելի ճիշտ սրտապաշտ անկուն աչքերի քաղաքավարի, հարգալից, բարյացակամ հայացք: Շրտում էր: ժան-ժակը լափազանց երկար էր նստել պարտեզի նստարանին: Ո՞վ թերեզան, հավանաբար, արդեն անհանգստանում է...

Նա բարձրացավ տեղից, բարձրացավ ու բարձրացավ դանդաղ, բավականությամբ Կերծեցով ծաղիկո խոտերի, խոնավ տերևների անկրկնելի բույրը, գարնան հմայիչ, անմեղեկի թարմությամբ առնչյուն բույրմուրը և, հենվելով ձեռնափայտին, դանդաղ, ձերուկներին հասուկ ձևով կանչ առնելով, գնաց դեպի սուս:

II

Ամուսն ետուն շրջանն էր: Սկսվում էր հուլիսը, և նրա առաջին օրերին բնության փթթումը թվում է թե հասել էր գեներթին: Բարձր, հյուսիսի, խիտ խոտը հագեցած էր այնպիսի ծայրահեղ կանաչ գույնով, հողի կանաչ հյուսիսի այնպիսի արբեցնող թուրմով, որ զգացվում էր, թե սա վերջին սահմանն է: ժամանակն ասես կանգ էր առել: Հունիսի վերջի հուլիսի սկզբի այն կարճատես ժամանակն էր, երբ ցերեկը, լիակատար հողթանակ տանելով գիշերվանկատամբ, մի տեսակ ուժասպառ նվաճած հողթանակից, կանգ է առնում, արդեն նա լի կարող հարձակվել գիշերվա վրա, բայց դեռ մի կերպ պահում է զրպված տարածությունը. մամառակի հաշվարկը չի փոխվում: Դա աշխարհի կեսօրն է:

ժան-ժակը, ինչպես միշտ, առավոտյան ժամը 10-ին դուրս եկավ գրոսանքի: Հիմա նա քայլում էր դանդաղ, հենվելով ձեռնափայտին, և նրան թվում էր, որ այդ ամուսնը, էրմենտվելի ամուսնը, նա ավելի դանդաղ է քայլում, քան առաջ, և քայլելը նրա համար օրավուր ավելի ու ավելի էր դժվարանում:

ցր զով արծաթված կանաչ ճյուղերը վերջին բարակ թիկն է, որ կապում է այս հետաքոտ աշխարհի հետ:

Մտքերը խառնվում էին: Ո՛չ, ժան-ժակ, աշխարհը չի՝ հեռանում, այդ դու ես հեռանում հավերժ նորոգվող աշխարհից: Ա՛յ, որ նա գրականագետ էր, և մահվան դեմ հանդիման, ինքն իր հետ առանձնացած, նա չհետամոտեց անպայման խճճվել բառերի մեջ. պետք է սեփական բառերն արտահայտելու պարզ ու ճիշտ:

Իր վրա գործադրած ջանքերը թեթևություն բերեցին նրան, նա մնում էր նույն անշարժ դիրքում, երկաթե ձեռքով գամված նստարանի թիկնակին, լայն բացված հաշիկով, ընդհատվող շնչառությամբ, հակասող քրտինքի մեջ, մահվան կիզմից հաղթված մի խղճալի, թույլ մարդ:

Բայց նա կարողացավ շուկել մտքի սխալ ընթացքը. դիմացի՛ր, ժան-ժակ, մարդը պետք է միշտ մարդ մնա: Նա զգուշորեն շունչ քաշեց: Միտքը սեղմող երկաթե ձեռքը դանդաղ ավելի ու ավելի էր վեր բարձրանում. այն մտանում էր կոկորդիս: Բայց ժան-ժակը մի տեսակ հանգիստ զգաց:

Նա եռյնիսկ մի ակնթարթ հանդիմանք փակել կոպերը, և անսպասելիորեն ինչ-որ տեղից այդպես թվաց, իր կողքին հայտնվեց երաժշտությունը: Դա ինչ-որ շատ կամացուկ, խլացված, մեղմ երաժշտություն էր: Որտեղից՞ էր գալիս այն: Փնթոջ երաժշտություն, հեռավոր պատանեկության տարիների քընթառ, պարզունակ մի երգ: Նա մտածեց այն մասին, որ ամեն ինչից առաջ, ամենանակզորում, ինքը երաժիշտ էր: Հետո նա մտածեց Քերեզայի մասին, այն մասին, թե ինչպես նա կարտասվի, երբ ինքն այլևս տուն չի գտ: Նա Քերեզայի մասին մտածում էր նույնպես, ինչ-որ մի շատ հեռավոր երևույթի մասին: Այդ հիմարիկ Քերեզան ոչինչ չէր կարողանում հասկանալ: Բայց նա ուղիղ իր աշքերի մեջ էր նայում նվիրված, դյուրահավատ և վախվորած հայացքով, այնպես, ինչպես աշքերի մեջ վարող են նայել միայն շնեքը՝ լուսասփյուռն, անթարթ աշքերի նվիրված, բարի հայացքով:

Նա ակնեջ էր դնում: Երաժշտությունը նվազում էր ինչ-որ տեղ շատ մտախիվ, կողքին, ավելի ճիշտ՝ իր թիկունքում: Դու շատ ցածրաձայն, զժվարչանահանվող, ասես ինչ-որ բանով փաթկաթված կամ որևէ մեկի կողմից խլացվող քնթուջ երաժշտություն էր: Նա նույնիսկ ուզեց հետ շրջվել, որպեսզի տեսնի, թե որտեղից են գալիս ձայները: Բայց նա գիտեր, որ դա չի կարելի, որ լույս մի սխալ շարժում, և երկաթե ձեռքը վայրկենաբար տեղնուտեղը մի հարվածով կսպանի:

Այս վերջին րոպեներին (նա արդեն գիտեր, որ րոպեների հաշիվ է դնում) ժան-ժակը վերստին պարզ մտքի զարմանալի պարզություն, ներքին հավաքվածություն, ոգու կայտառություն: Նա կիսամեռ էր, նա զգում էր, թե ինչպես ավելի ու ավելի է վեր բարձրանում երկաթե ձեռքի մահացու սեղմումը: Նա չէր կարողանում շարժվել: Բայց նա գիտեր, որ բանի դեռ ինքը հայացքը չի հեռացնում նշդարենու բացկանալովուն տերևներից՝ դրանց ներքին երանգներով, ցողի արծաթալույս կաթիլներով, համաչափ, հավասար ստասփյունով, մահն անզոր է իր առաջ:

Ամբողջ կյանքում նա լուղացել է հոսանքին հակառակ, զնացել է իր հանապարհով, և մահը չէ, այդ, սև մահը չէ, որ պիտի ստիպեր նրան զլուխ խուսարհել իր առաջ:

Նա երկարաձգում էր այդ անխուսափելիորեն իրեն մտանցող վախճանքը այն պատճառով, որ վախենում էր դրանից (գրողի տեղ էլ չէր դնում), այլ թյն, որ նա ուզում էր, նրան շատ կարևոր էր թվում ինչ-որ բան մինչև վերջը կշարժատել, զրե՛ ու վերջացնել:

Այո, հենց այդպես: Նա ուզում էր էլի կշարժատել պարզության մասին: Իր կյանքի, գրողի երկարատև ճանապարհի վերջում նա հասկացավ. իր ամբողջ հակայական նշանակությունը նրա առջև բացվել է պարզության, սեփական մտքերը պարզ ու համառոտ արտահայտելու կարևորությունը: Ահա թե նա նախկինում ինչին չի կարողացել հասու լինել, ինչն է նրան պակասել:

Ինչպե՛ս փոխել այս աշխարհը դեպի լավը: Այս փշացած, անարգարացի, հասարակությանը ինչպե՛ս բարձրացնել անսպական բնության մակարդակին: Մի՛թե հավասարության մասին նույն մտքերը, ազատության նույն գաղափարները չէր կարելի արտահայտել ավելի հասարակ, կարճառոտ, պարզ ու անհերքելի բառերով, ինչպես սաղարթների ղավեթ ստասփյունը:

Նա զգում էր, թե ինչպես է երկաթե ձեռքը ավելի ու ավելի մոտենում կոկորդիս: Ո՛չ, հիմա արդեն ուշ է, ժան-ժակ, և արդեն ոչինչ չի կարելի ու փոխել, ոչ էլ նույնիսկ ասել:

Գե՛հ, էլ ինչ: (Մղկտուն, ճնշող ցավը դնալով անում էր, բայց նա դեռ շարունակում էր հաղթահարել այն: Նա ուղիղ նայում էր իր առջև, նշդարենու բաց կանաչավուն տերևների, և, թանի դեռ նա տեսնում էր դրանք, իր հայացքը չէր հեռացնում դրանցից՝ մահը նահանջում էր):

Այո, բայց նա գրականագետ է (նա չէր սիրում «գրող» բառը և իր մասին ասում էր je suis un litterateur — գրականագետ), և սովորական մահը, առօրեական, ժամծմված մահը չի կարող, չպետք է խախտի նրա մտքերը: Այո, իսկ էլ ինչի՞ մասին էր մտածում նա: Քերեզայի մասի՞ն: Հավասարության՞ մասին: Պարզության՞ մասին:

Այնպես որե՛մն՝ պարզության մասին: Գրականագետի աշխատանքի մեջ իր մտքերը պարզ արտահայտելու արվեստը զույգ թե ամենազխալվորն է:

Նա զգում էր, թե ինչպես է թուլանում: Բայց նա միշտ, ամբողջ կյանքում զնացել է ալիքի դեմ, հակառակ, և այժմ, կր զգում էր, թե ինչպես է մոտենում անգոյություն ամեն ինչ խորտակող սև ալիքը, կամքի ջանքերով ափսոսում էր իրեն բարձրանալ: Նրա վրա, շտեմնել, շնկատել այն, նա ուզում էր մինչև վերջ կշարժատել ինչ-որ գլխավոր բան պարզության մեծ արվեստի մասին: Նա այդպես էլ չէր կարողանում հիշել՝ իսկ ի՞նչն էր գլխավորը:

Միտքն ու կոկորդը ճնշող, սեղմող ցավը սաստկանում էր: Բայց նա չէր հանձնվում: Այո, այո, պետք է շատ պարզ արտահայտել մտքերը: Այնպես, ինչպես թուլաններն են կրգում: Միայն բառերով, բառերով, բանաստեղծություններով...

Ինչ-որ մի հեռու-հեռավոր տեղից հայտնվեցին (իսկ միգուցե նա դրանք հենց հիմա՝ հորինեց) այս սողերը:

Բայց ո՞ր են թուլանները,  
Նրանք արդեն վաղուց են թռել,  
Եվ ես չեմ կարող նրանց վերադարձնել...

Կամացուկ, շշուկով նա կրկնեց այդ տողերը, մի փոքր սպասեց և հետո վերստին կրկնեց վերջին տողը: Այո, այժմ նա հավատացած էր, որ այդ տողերը առաջ նա չփիտեի: Նա դրանք, այդ երեք պարզունակ տողերը հորինեց վերջին պահին, վերջին ակնթարթին: Ավելին անել նա այլևս չէր կարող: Ինչ արած, այդ տողերում էլ անբռնազրոսիկ բան կա: Եվ նա ժպտաց...

Ահա և բոլորը:

Մենուժյան երկար տարիների ընթացքում Ժան-Փակը վարժվել էր խոսել ինքն իր հետ, և նույնպես ցածրաձայն նա արտասանեց հետաժոր մանկութունից հայտնված բառերը. «Eh bien, mon petit...» (Ո՛րեհ, որեմն ի՞նչ, իմ փոքրիկ...):

Ստեփանի ջանքերի գործադրելով նա ստիպեց իրեն ուղղվել նստարանի վրա: Այժմ նա նստել էր ուղիղ, հանգստացած, վստահ: Նա բարձրացրեց գլուխը նրա դեմ՝ մարդու համար, հաղթանակող, ծաղկող բնության դեմ հանդիման վայել չէր նստարանին պատկել պարտված, փոխված: Հեռվից նույնիսկ կարող է թվալ, որ ուժեղ, դեղձցիկ, դեռ ոչ այնքան ծեփ անցվորը անփույթ ու վստահ նստել է նստարանին և, հպարտորեն բարձրացնելով սպիտակահեր գլուխը, երկար նայում է ստվերոտ ծառուղիների խորքը, որպեսզի մի ակնթարթ անց վեր կենա ու շարունակի հետաժոր ճանապարհը:

Բայց այն նույն պահին, երբ Ժան-Փակն ուղղվեց, զգաց, թե ինչպես պողպատե մամլակը, ոչ, երկաթե ձեռքը սեղմեց կոկորդը, և նա դժվարությամբ դուրս մղեց շունչը:

Վերջին անգամ նա հաշտեց նետեց բարձր կապուտակ երկնքին և նշարենու բացկանաչավուն նրբին, սոսափող տերևներին:

Ու նա փակեց աչքերը: Եվ իսկույն փակ կոպերի տակ հորդեցին սև ալիքները, ջրասույզ անելով ամեն ինչ, դա սևության ողողումն էր, և միայն ինչ-որ տեղ անկյուններում դեռ պոլություն ունեին լուսավոր նարնջագույն բծերը՝ արևի վերջին ցուլերը, բայց դրանք էլ ավելի ու ավելի նվազեցին, խամրեցին, մարեցին:

Իսկ երաժշտությունը նվազում էր հազիվ լսելի ձայնով:

Հետո դա էլ լռեց:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ասազարան	3
Հեղինակի կողմից	20
ԳՂՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԽՈՍԱՍԱՐԳ ՌԱՍԱՆ	26
ԳՂՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ ՄԻՐԱՔԱ	113
ԳՂՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ ՄԱՔԻՄԻԼԻԱՆ ՌԵՔՆԱԳԻՆԵՐ	301
Մանրագրություններ	501
Հավելված	515
Ռուսոյի վերջին ժամը	515

ՄԱՆՖՐԵԴ ԱԼԲԵՐՏ ՋԱԽԱՐԻ

ԵՐԵՔ ԴԻՄԱՆԿԱՐ

Ֆրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանի

МАНФРЕД АЛЬБЕРТ ЗАХАРОВИЧ

ТРИ ПОРТРЕТА

эпохи Великой французской революции

(На армянском языке)

Խմբագրիչներ՝ Մ. Բ. Միխայելյան, Է. Վ. Գևորգյան  
Կրտսեր խմբագիր՝ Գ. Ռ. Կեյսեյան  
Նկարիչ՝ Հ. Ա. Մամյան  
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան  
Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան  
Վերատպուող սրբագրիչ՝ Ս. Վ. Խաչատրյան

ИБ 5006

Հանձնված է շարվածքի 01.11.1987 թ.:

Ստորագրված է տպագրության 9.02.1988 թ.:

Ֆորմատ՝ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Քուղթ տպ. № 1: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»:

Տպագրություն՝ բարձր: 27,93 պալմ. տպագր. մամ., 27,21 հրատ. մամ.:

Տպարանակ՝ 15000: Պատվեր՝ 963: Գինը՝ 2 ռ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28:

Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի տեսերի

գործերի պետական կոմիտեի № 6 տարան, Երևան, Քումանյան 23/1:

Типография № 6 Госкомитета Арм. ССР по делам издательств,

полиграфии и книжной торговли. Ереван, ул. Туманяна, 23/1.